

Խ. ԱԲԵԼՅԱՆ


ՀԱՅՈՅ ՀԻՆ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ











ՀԱՅՈՑ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՎԵՑ ՀԱՅՁՐՈՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
Մ. ԱՔԵԼՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՄԱՆՈՒԿ ԱՐԵՂՅԱՆ

ԾԱՌԻ ԳՎԱԾՆ 1951 թ.

ՀԱՅՈՑ ՀԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ

(XI—XIX ԳԱՐԻ 30-ԱԿԱՆ Թ.Թ.)



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1946

Տպագրվում է Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի

Նախագահության որոշմամբ:

ՀՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի պրեզիդենտ՝

ակադեմիկոս Վ. Օրբելի

ԽՍՀՄ ԳՐԱԴԱՐԱՆ

Խ ո ռ է Ց Պ ա ր զ ա յ ա Ց ի

Հանձնաժողովի Մամուլային

Արամ Ղ ա թ ա յ ա Ն յ ա Ց ի

ИСТОРИЯ АРМЯНСКОЙ ЛИТЕРАТУРЫ В 6-и ТОМАХ

Т. II

М. Х. Абагян

ИСТОРИЯ ДРЕВНЕАРМЯНСКОЙ ЛИТЕРАТУРЫ

Книга вторая

Издание АН Арм. ССР, Ереван, 1946 г.

(На армянском языке)



ՄԱՆՈՒԿ ԱՐԵՂԹԱՆ
(1885—1944)

Գործիկական Մեծ Գրադարան



Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

1940 թվականի աշնանը Մանուկ Աբեղյանը իր համաձայնությունը տվեց ՍՍՌԽ Գիտությունների Ակադեմիայի Հայկական ֆիլիալի Գրականություն և Հեղվի Ինստիտուտին դրելու հայ հին գրականության պատմությունը:

Այս աշխատության առաջին հատորը, որտեղ հայ գրականության պատմությունը հասնում է մինչև Գրիգոր Նարեկացին, այսինքն 10-րդ դարը, հետագայում գիտնականը ավարտել է—ինչպես այդ նրեում է հատորի առաջաբանի թվագրումից—1942 թ. ապրիլին:

Նույն թվականի կեսերից Աբեղյանը սկսեց աշխատել երկրորդ հատորի վրա, որ պիտի ընգրկեր հայ գրականության պատմությունը 11-րդ դարից մինչև 19-րդ դարի առաջին տասնամյակների զրաբար գրականությունը: Երկրորդ հատորի վրա Աբեղյանը աշխատեց՝ կարճատև ընդմիջումներով՝ մինչև իր մահը, բայց ցավոք չավարտեց այն, կարողացավ մշակել միայն մինչև 14-րդ դարի վերջը, այն է՝ Առաքել Սյունեցին:

Սկզբնական շրջանում Ինստիտուտը ենթադրում էր՝ ռուսագործելով «Աբեղյանի աշխատությունը Աբեղյանի հրատարակված հոդվածները 19-րդ դարի զրաբար գրականության մասին, եղած բացը (15—18-րդ դարեր) լրացնել այլ հեղինակի շարադրանքով:

Սակայն, ժամանակի ընթացքում պարզվեց, որ Աբեղյանի արխիվում պահպանվել են Գեորգյան ճեմարանում նրա կարգացած՝ հայ հին գրականության պատմության հենց այդ պակասող շրջանին վերաբերող դասախոսությունների սևագրությունները: Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ այդ սևագրությունները իրենց շարադրանքով ու արժեքով տեսակետներով՝ կարող են մշակված մասի թնկուղ համառոտ շարունակությունը հանդիսանալ, որով էլ ապահովվում էր հատորի հեղինակային միասնությունը:

Այսպիսով, Մանուկ Աբեղյանի «Հայոց հին գրականության պատմության» առաջին հատորը բաղկացած է հետևյալ նրեք հիմնական մասերից. ա) մշակված մաս, որ աժնից ընդարձակն է և ընդգրկում է, ինչպես ասվեց, 11—14-րդ դարերը, բ) սևագիր մաս, որ ընդգրկում է 15—18-րդ դարերը, և գ) ավարտված մաս («Արարատում»), որ ընդգրկում է 19-րդ դարի առաջին տասնամյակները: Վերջին երկու մասերը հատորում անվանված են «Լրացում»—տարբերելու համար առաջին մասից:

Մի քանի խոսք այս բաղադրիչ մասերից յուրաքանչյուրի վերաբերյալ:

1. Մ. Արեղյանի «Հայոց հին գրականության պատմություն» երկրորդ հատորի մշակված մասի ձեռագիրը պարփակված է 19 տետրակի մեջ, որոնք համարակալված են—**Խացառություն** 18-րդ տետրակի—իր իսկ Արեղյանի ձեռագրի Մ. Արեղյանը համարակալել է նաև էջերը, ըստ որում իր ձեռագրի համարակալումը նա հասցենում է մինչև 16-րդ տետրակի վերջը, այն է՝ 1051-րդ էջը. 17 և 18-րդ տետրակներն էջերը համարակալված են արդեն Մ. Արեղյանի որպես, նկարիչ Մհեր Արեղյանի ձեռագրի, ինչպես և վերջինիս ձեռագրի է համարակալված վերը հիշված 18-րդ տետրակը։ Այս երկու տետրակները պարփակում են ձեռագրի 1052—1183 էջերը։ Ինչ վերաբերում է 19-րդ տետրակին, ապա նրա համարակալումը նորից արված է Մ. Արեղյանի ձեռագրի, բայց ոչ իբրև 18-րդ, այլ 16-րդ տետրակի շարունակություն և ընդգրկում է 1052—1060 էջերը. այս երեսներն թացատրությունը կտրվի սույն առաջաբանի երրորդ կետում։

Մ. Արեղյանի ձեռագիր տետրակները սովորական աշակերտական ձեռ-րակներ են, որոնց մի քանի հատի միացումից ստացվում էր սովոր մի տետրակ։

Այս հատորը նախորդի պես ունի «Հավելվածներ» բաժին, Առաջին լրա-հավելվածը նշված են իբրև հավելվածներ Մ. Արեղյանի կողմից և մասում են սույն մշակված մասի մեջ։

2. Իր ձեռագրի 19-րդ տետրակում—որը, ինչպես հայտնի կդառնա քիչ հետո, գրված է 16-րդ տետրակից անմիջապես հետո—Մ. Արեղյանը 1059-րդ թերթի երկրորդ էջի վրա ունի հետևյալ նշումը իր անելիքի մասին.

Գրելիք (14—17-րդ դարեր)

I. Եկեղեցական գրականության վերջույն և արեմուտը չովհան Որոտնեցի, Առաքել Բաղիշեցի, Առաքել Սյունեցի և ուրիշներ։

II. Վիպական գրականություն։

III. Քնարերգուներ. Մկրտիչ Նաղաշ, Քլկուրանցի, Աղթամարցի և ուրիշները։

IV. Գուսանական երգեր—հայրեններ։

Վերջում շարան— գրականության նորոգումը 17—19-րդ դարերում։

Հետագայում, երբ Արեղյանը ավարտում է սույն «գրելիքի» առաջին կե-տը՝ բացառությամբ Բաղիշեցու, 18-րդ տետրակի վերջին, 1183-րդ թերթի երկրորդ էջի վրա նա նորից նշում է իր անելիքը.

Շարունակություն—Առաքել Բաղիշեցի.

Ձեռման Մանուկի «Իրավնալը».

Տաղաոցություն

1. Մկրտիչ Նաղաշ

2. Քլկուրանցի

3. Գր. Աղթամարցի

4. Անանաններ

Գուսանական երգեր։

Այդ երկու նշումներից կարելի է եզրակացնել, որ Մ. Աբեղյանը հստակ պատկերացում ուներ իր անելիքի մասին. նշումների առանձին կետերը տեղ-տեղ ուարժերվում են իրարից միմիայն ձևակերպումով, բայց ոչ բովանդակությամբ:

Սակայն, այդ պերելիքը, ինչպես հայտնի է, հիմնականում գրելիք էլ մնաց. 1183-րդ էջով ավարտվող Առաքել Սյունեցին Աբեղյանի «Հայոց հին գրականութիւն» պատմությանն երկրորդ հատորի վերջին, հեղինակի կողմից մշակված թեման էր:

Երրելիքս-ից կարելի է եզրակացնել, որ Առաքել Սյունեցուն պիտի հետևեր Առաքել Բագրեշեցին, որը մեզ հայտնի 19-րդ տետրակում բացակայում է:

Բարեբախտաբար, Մ. Աբեղյանի թղթերի մեջ գտնվեց մի ձեռագիր տետրակ, որի առաջին 8 էջը ունի «Անանուն տաղեր» վերնագիրը, իսկ դրանց հետևող 6 էջը՝ «Առաքել Բագրեշեցի» Տետրակի ընդհանուր վերնագիրն է՝ «Նյութեր հայոց հին գրականության», որ և դրսևված է շապկի վրա: Թե՛ տետրակից և թե՛ գրքից բովանդակությունից ու ձևից կարելի է հաստատապես ասել, որ դա Մ. Աբեղյանի վերջին շրջանի գրածներից է և որ այն բաղադրիչ մի մասը պիտի դառնար «Առաքել Բագրեշեցի» գլխի:

Նկատի ունենալով այն, որ Առաքել Բագրեշեցին Հայոց հին գրականության պատմության կարևոր օղակներից մեկն է, առանց որի պակասավոր կլինեիր այդ պատմության շարադրանքը, նպատակահարմար համարվեց հիշյալ հատվածը—թեև այն չի ընդգրկում Բագրեշեցու ամբողջական գիմանկարը—տեղավորել ընդհանուր հյուսվածքի մեջ:

3. Կոստանդին Երզնկացու բաժինը, բաղկացած 15 պարագրաֆից ու մի հավելվածից (սեհհանամայի ձևական ազդեցությունը), ավարտվում է 16-րդ տետրակում, նրա վերջին, 1051-րդ էջի վրա, ըստ որում հավելվածը մտցված է հետագայում. կակառակ Աբեղյանի սովորության՝ տետրակների շապկինները դեմ նետել համ էլ կենտրոնացնել նրանց վերջում՝ հավելվածը մնացել է չարփակված իր շապկում:

«Հայոց հին գրականության պատմության» երկրորդ հատորի 19-րդ տետրակը բովանդակում է միայն մի պարագրաֆ, որի վերնագիրն է՝ «Վերածնության գրականության առաջին էտապը», թիվ 16, որ հետագայում մատիտով քնշված է ու դարձված 1:

Թե՛ այս՝ 16 թվից և թե՛ պարագրաֆի ամփոփող բովանդակությունից կարելի է եզրակացնել, որ այն, ըստ սկզբնական հղացման, պետք է լիներ Կոստանդին Երզնկացու ստեղծագործությունը քննարկող գլխի (որը, ինչպես մեզ արդեն հայտնի է՝ համաձայն վերջնական ձևավորման՝ 15 պարագրաֆից էր բաղկացած) վերջին, հավելվածին նախորդող 16-րդ պարագրաֆը:

Փոխելով իր միտքը, Մ. Աբեղյանը հանել է այս 16 պարագրաֆը 16-րդ տետրակից, նրա փոխարեն գրել հավելվածը, էջերը համարակալել, ապա չարունակել համարակալումը 16-րդ պարագրաֆի էջերի վրա՝ հասցենելով այն 1052-ից՝ 1060-ի:

Այդպիսով, գաբա և գալիս, որ 16-րդ տետրակի անմիջական շարունակ-

կությունն է 19-րդ տետրակը: Ապա ո՛ր մնացին այդ դեղքում 17 և 18-րդ տետրակները:

16-րդ պարագրաֆը, այսինքն՝ «Վերածնության գրականության առաջին էտապը» ամբարտվում է հետևյալ պարբերությամբ. «Բարերախտաբար գրի առնված մնացել են զուսանակյան տարրերները, որոնք մեր քնարերգության գոհար պարզեին են: Սրանց մասին էլ կտեսնենք այս գործի շարունակության մեջ»:

Հետագայում Մ. Արեղյանը մատիտով երկու խաչ է դրել այս պարբերության վերջին, ու նախորդ թերթի (1059) երկրորդ էջում, կրկնելով երկու խաչը, նույնպես մատիտով ավելացրել. «Բայց նախ քան այդ, մի հայացք ձգենք մեր եկեղեցական գրականության վրա»:

17 և 18-րդ տետրակները պարփակում են հենց եկեղեցական գրականության այդ տեսությունը: Ինչպես մեզ հայտնի է, 18-րդ տետրակի համարը Արեղյանի ձեռքով չի գրված, բայց դրա փոխարեն նախորդ տետրակի հոսմեական XVII-ը դրոշմված է Արեղյանի իսկ ձեռքով: Պարզ է, որնմն, որ Մ. Արեղյանը երկրորդ անգամ փոխել է իր մտադրությունը՝ «Վերածնության գրականության առաջին էտապը» հատվածի տեղի նկատմամբ ու որոշել լղենել այն ոչ թիայն «Երեսուցի» նրզնկացիա գլխում, այլև նրանից անմիջապես հետո, այսինքն՝ նրա և եկեղեցական գրականության տեսության արանջում»:

Արդ՝ ո՛ր դեմը այդ պարագրաֆը: Արեղյանը 16 թիվը փոխելով մատիտով 1-ի, ապա նույնպես մատիտով ընդհանուր վերնագիր «Տաղասացություն» (շապկի վրա՝ «Տաղասացներ») և ենթավերնագիր՝ «Ընդհանուր տեսություն» տալով, պարզ է, որ մտադրություն ուներ լրացնելու այդ նորաստեղծ գլուխը նոր պարագրաֆներով, բայց թի ուր պիտի զետեղեր այս ամենը՝ չէր որոշել ու իր տարակուսանքները նա նշել է-- դարձյալ մատիտով--հենց վերնագրի կից հետևյալ բառերով. «Դեմը վիպական ճերթվածներից առաջ?? հետո?»:

Այդ տարակուսանքները Մ. Արեղյանը, որքան մեզ հայտնի է, չլուծեց: Վիպական ճերթվածների մասին, որ ըստ նրա հղացման պիտի հետևեր եկեղեցական գրականությանը, նա չգրեց: «Տաղասացություն» գլուխն էլ մնաց նույնությամբ՝ լուկ մեզ հայտնի «Վերածնության գրականության առաջին էտապը» պարագրաֆով:

Ինչելով այս ամենից, այլև նկատի ունենալով, որ նշված պարագրաֆը տեղի տեսակետից թիանգամայն համապատասխանում է Մ. Արեղյանի սկզբնական մտադրությանը՝ Ինստիտուտը որոշեց թողնել այն «Երեսուցի» նրզնկացիա գլխում իբրև այդ գլուխը և նրան նախորդող գլուխները հարմարակուշ հատված:

Հիշված 16-րդ պարագրաֆը ներկա հատորի մեջ նշված է 17-րդ համարով, որովհետև Մ. Արեղյանը հետագայում՝ այդ պարագրաֆը գրելուց հետո, 15-րդ պարագրաֆի վերջին հատվածը առանձնացրել ու դարձրել է 16-րդ պարագրաֆ հետևյալ վերնագրով՝ «Պարսկական բանաստեղծության ձևական ազդեցությունը և լափածո բանաստեղծության կատարումը»: Այս նոր վերնագրի տակ մատիտով Արեղյանը նշել է՝ «Թիպոգրաֆ տաղասացություն», դնելով

կողքին երկու հարցական, որով և արտահայտել է իր տարակուսանքը այս հատվածի տեղադրության առթիվ:

4. Ներկա հատորի Ա. դուխը, որ կրում է «Էներածնության գրականություն» ընդհանուր վերնագիրը ու «Ելանքի ու աշխարհայեցության» փոփոխություն» ենթավերնագիրը, իբրև դասախոսություն, 1943 թ. հունվարի 18-ին, «Ելանքի և աշխարհայեցության փոփոխություն» 10-րդ դարի վերջերում և 11-րդ դարի սկզբներում իբրև հիմք հայտը գրականության վերածնության շրջանի» խորագրի տակ, կարդացված է ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի Հայկական ֆիլիալում:

Նույնը, առանց դասախոսության ժամանակ արված «ակավաթիվ քաղաքությունների և հավելումների, տպագրված է ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի Հայկական ֆիլիալի «Տեղեկագրի» մեջ (1943, № 1, էջ 39—52):

Նկատի ունենալով, որ հատորի համար գրվածի և «Տեղեկագրում» տպվածի մեջ էական փոփոխություններ չկան, տալիս ենք առաջինը:

5. Ներկա հատորի «Էնովհաննես Սարկավազ վարդապետ» գլուխը, որ քաղկեացուցիչ մասն է «Նոր մտավոր հոսանքի առաջին փուլերը գրականության մեջ» բաժնի, իբրև առանձին հատված տպված է Հայկ. Գիտ. Ակադեմիայի «Տեղեկագրի» մեջ (1944, № 1—2, էջ 31—60):

Հիշյալ գլուխը Մ. Աբեղյանը, «Տեղեկագրին» տպագրության հանձնելուց առաջ, ենթարկել է զգալի փոփոխության թե՛ ըստ բովանդակություն և թե՛ ըստ կառուցվածքի: Նա հարստացրել է իր գործը մի շարք նոր և կարևոր նյութերով, խմբագրել ու բնդրվել է եզրակացություն-ընդհանրացումները. փոխել մի երկու հատվածի վերնագրերն ու կառուցվածքը, վերջից ավելացրել մի նոր հատված՝ «Ճշգրտում գեպի թուլություն և առցիտնալիզմ և դրա ազդեցությունը գրականության մեջ» և այլն:

Այս ամենի հետևանքով աշխատանքն ընդհանրապես դարձել է ավելի մշակուն ու կատարյալ:

Նկատի ունենալով Հիշյալ հանգամանքը, Խնտիտուտը նպատակահարմար գտավ ներկա հատորում տալ ոչ թե այս հատորի համար Արեղյանի փոքրից նախապես գրված «Էնովհաննես Սարկավազ վարդապետ» գլուխը՝ «Սարկավազ վարդապետի կենսագրության չուրջը վերտառությամբ հավելվածով, այլ վերջինիս հիմնովին վերամշակված վարիանսը իր նույնանուն հավելվածով տպված «Տեղեկագրի» մեջ:

Կարևոր ենք համարում հիշելու նաև, որ այստեղ իբրև բնագիր օգտագործվում է՝ մեզ զբաղեցնող աշխատության «Տեղեկագրից» կատարված այդ արտատպության հեղինակի զրադարանում պահպանված այն օրինակը, որի վրա նրա ձեռքով կատարված են մի շարք նոր, ուշագրավ լրացումներ և ուղղումներ:

6. «Գրելիքի» երկրորդ կետը «Էլիպական գրականություն» բաժնին է, որը նույն «գրելիքի» երկրորդ վարիանտում կոչված է «Շարման Մանուկի սիրավեպը» (տե՛ս երկրորդ կետը):

Մահը խանգարեց հեղինակին ի թիվս մի շարք այլ բաժինների գրելու նաև Շարման Մանուկի սիրավեպի մասին:

Շարմանի վեպի տրձակ և չափածո տարբերակները կարելի է գտնել

միջնադարյան մի շարք հայ գրչագրերում: Այդ վեպի ընտիր վարիանտներից մեկը (շափածո) «Պատմություն Պարմանի Աստանի» վերնագրի տակ, հանդերձ Ֆրանսերեն թարգմանությամբ, հրատարակված է Փարիզի «Անահիտ» ժամագրում (1904, №№ 3—11 և 1905, №№ 2, 4—9) եվրոպացի հայագետ Պր. Մաքլերի կողմից:¹

Մ. Արեղյանի կարծիքով, որ նա արտահայտել է Խնտիտուտի և Մտանադարանի մի ցանի աշխատակիցների, Պարմանի վեպը ծագումով հայկական շխնհով հանդերձ (դա հավանորեն ընդհանուր արևելյան մի սյուժետ է), ստեղծագործական արժանատի մշակման է ենթարկվել հայ իրականության մեջ: Նա գտնում էր, որ հիշյալ վեպը իր զեղարվեստական արժանիքների շնորհիվ հանդիսանում է միջնադարյան հայ գրականության ուշագրավ հուշարձաններից մեկը, որը հատկապես աչքի է ընկնում իր կենդանի պատմելիությամբ, ժողովրդական պարզ լեզվով և ոճով, սահուն-երաժշտական ուսանավորով:

Այս նկատառումով էլ, ահա, Արեղյանը անհրաժեշտ էր համարում՝ Պարմանի վեպը մտցնել հայոց գրականության պատմության մեջ:

ԻՐԿԻՐՈՐԴ՝ ՍԵՆՏԻՐ ՄԱՍ

7. Մ. Արեղյանի «Հայոց հին գրականության պատմություն» երկրորդ հատորի այս մասը կազմված է հեղինակի՝ Գեորգյան ճամարանում 1899—1900 թվականներին և հետագայում կարդացած դասախոսությունների շարադրանքից (տես՝ «Արարատ», 1908, էջ 890 և ՄՍՍՄ Գիտությունների Ակադեմիայի Հայկական ֆիլիալի «Տեղեկագիր», 1941, № 5—6, էջ 85):

Օգտագործված ձեռագիրը ամփոփված է երկու տարբեր շապիկների մեջ, ըստ որում առաջին շապիկի մեջ գտնվում են հատորի «Տաղասացություն» բաժնի նյութերը, երկրորդի մեջ՝ «Պատմագրություն» և «Երգիչներ» (Մայաթնովա) բաժինների նյութերը:

Առաջին շապիկն ունի 68 համարակալված և մեկ չհամարակալված սովորական տետրակի լափի թերթեր, երկրորդը 48+23 թերթեր, ըստ որում

¹ Վեպի համառոտ բովանդակությունը հետևյալն է: Աստիտանի Ջարմանյան թագավորը ձերբառնում և սպանում է մի արա զավակ, որին կոչում է Պարմանի Աստան անունով: Մեծանշան՝ Պարմանն աչքի է ընկնում իր զեղարվեստով, իմաստությունով և քաջությամբ: Պարսից թագավորի գլուխը Շահնշահաբեկինը լսելով Պարմանի հաճախելու անհեղձ Նրան, ձերբառնում է և հորից զրգանի, երկու աչքում ձողայու ալյուրով Նրան: Պարսից Նշահաբեկ փաշան լնդի Փայզը փորձում է զոհել Պարմանին, սակայն վերջինս ապահով է Նրան: Այդ բանի համար Պարմանը բանտարկվում է պարսից թագավորի կողմից, բայց յուսով իր համատարիմ ընկեր Փայսի Զեյնեբով հա ապստամբ է բանտից և սիրած Շահնշահաբեկին հետ հայրենիք վերադառնալով, առանձնապես Պարմանի անց, մեռնում է Պարմանի հորը, և նա գտնում է Աստիտանի թագավոր Պարմանը կատաղի կոխված և մյուս Շահնշահաբեկինի վերադարձնելու հիմն պարսից թագավորի հետ և պարսկական ժամանակ Նրան: Շուտով Պարմանն անհետանում է մի արա զավակ (Շահնշահաբեկին), որը մեծանշանով դառնում է հար Նրան զեղարվեստ, իմաստուն և քաջ մարդ: Լազի-զեկ եղբայրի ռաբի գլխով 60 տարի ապրելուց հետո, մեռնում է Պարմանը: Նրա տեղը Աստիտանի թագավոր է դառնում Երգին՝ Շահնշահաբեկին:

վերջինը սկսվում է 8-րդ թերթից (որի ատյունն էլը լինված է ու ներկայաց-
նում է շարունակությունն այլ շարադրանքի) և վերջանում 31-ով:

Առաջին շապիկը ունի «Բանաստեղծներ. աշխարհիկ Հոսանք. 15—18-րդ
դար» վերնագիրը և մի շարք նշումներ կատարվելից անհրաժեշտ լրացումնե-
րի վերաբերյալ («Հեղինակների անուններ, դրքերի վերնագրեր և էջեր»): Նրկ-
րորդը վերնագրված է՝ «Առաջիկ պատմագիր. Զաքարիա սարկավազ. Աբրա-
համ Կրետացի»:

Հրատարակության պատրաստելով նշված նյութերը, Խոսեփոստը կա-
տարել է հետևյալը.

ա. Հանված կամ կրճատված են անմշակ մասերը և բնագիրը ծանրա-
բեռնող մեջբերումները, առանձնապես Հովհաննես Թլկուրանցու, Զաքարիա
Սարկավազի և Սյամթ-Նովայի բաժիններում:

բ. Համապատասխան ուղղնադրությունների հիման վրա՝ ստուգված և
ճշգրտված են հեղինակի կողմից արված բոլոր մեջբերումները:

գ. Տեքստը լրացված է մի շարք մեջբերումներով (գլխավորապես «Առա-
քել Դավրիթեցի» գլխում), որոնց էջերը ցույց են արված Արեղյանի կողմից:

դ. Ձեռագրի լուսանյութներում եղած կարևոր նշումները՝ վերնագրեր,
դիտողություններ, բառեր, անուններ և այլն արված են տողատակի ծանո-
թությունների մեջ:

ե. Մոռացություններ կամ դրի վրիպմամբ բաց թողված բառերը վերա-
կանգնված են ըստակուսի փակագծերի մեջ. նույնպիսի փակագծերի մեջ են
տրված աղճատ տեքստը հասկանալի դարձնելու համար արված օժանդակի
խմբագրական լրացումները:

Յ. Հայոց հին գրականության 4-րդ շրջանի բովանդակությունն ու վեր-
ջինիս համապատասխան վերնագրումը եղել է Մ. Արեղյանի մատուցումների
առարկան երկար ժամանակահատվածում, շարունակ ենթակա լինելով վերա-
փոխման և խմբագրման:

Իր համարանական դասախոսությունների ձեռագիր տեսարաններում այն
անվանված է «Վերածնունդ» և նոր գրաբար մատենագրությունն, որ հե-
ռադյալում մատրիտով խմբագրվել է՝ «Հին լեզվի, ոգու վերածնունդ» և նոր
գրաբար մատենագրություն»՝ լուսանցքում արված հետևյալ ծանոթությամբ.
«Վերածնունդ» ոչ նվրդական գրականության իմաստով, այլ վերականգն-
անցումն (անագիր մասի առաջին տետրակ, էջ 1):

Տարիներ անց իր «Համառոտություն հայ ժողովրդական վեպի և հին
գրականության պատմության» ապակեեթիպ աշխատության մեջ (Նրեան,
1923), որ նույնությամբ արտատպվել է ՍՍՌԽ Գիտ. Ակադեմիայի Հայկա-
կան ֆիլիալի «Տեղեկագրի» 1941 թ. № 5—6 «Վերածնունդ» հայոց հին
գրականության մեջ՝ վերնագրի տակ, Արեղյանը նույն շրջանը անվանել է
«Հին, կրոնա-եկեղեցականի վերածնունդ» և նոր գրաբար գրականությունն
(«Տեղեկագիր», էջ 106):

Նշված հոգվածի ներածական մասում, որ զբված է նոր, արտատպության
կապակցությամբ, Արեղյանը առյուծ է հետևյալ ձևակերպումը. «Եկեղեցական
գրականության վերածնունդ», նոր գրաբար և աշխարհիկ գրականություն-
ներն (ն. ա., էջ 86):

Վերջապես, իր սգորելիքս-ում (1943—44 թ. թ.), Արեղյանը տվյալ շրջանը գտյում է Երասկանուժյան Նորողումը 17—18-րդ դարերումս (ս17—18-րդ դարերն ասելով Արեղյանը հասկացել է 1600—1830 ժամանակահատվածը, ինչպես այդ նշված է մի քանի տեղ սևագրում):

Ինստիտուտը գերադասեց պահել վերջին ձևակերպումը:

Այս շրջանի սկզբնական մասի սենրածությունն վերնագիրը տրված է մեր կողմից:

9. Երեւելիքն երկրորդ վարկանտում ճառասացությունն բաժնում իբրեւ շորրորդ գլուխ նշված է Անանուններն թիման:

Ինչպես ասված է առաջարանիս երկրորդ կետում, Արեղյանի թղթերի մեջ գտնվեց մի ձեռագիր տետրակ, որի առաջին մասը ունի Անանուն տաղերն վերնագիրը, իսկ երկրորդը՝ Բաղիշեցին:

Փանի որ տվյալ նյութը ամտրտված և վերջնական մշակման ենթարկված չէ հեղինակի կողմից, այն տրվում է հավելվածների բաժնում (5-րդ հավելված):

10. Երեւելիքն մեջ հաստատուն և Եվրպական զրականությունն ու թմա-րերգուններն բաժիններին միանգամայն համասար տեղ է զրավում Երուսաղեմ-կան երգեր—Հայրեններն բաժինը:

Գուսանական երգերի մասին, ինչպես հայտնի է, Մ. Արեղյանը ունի ընդարձակ մի հետազոտություն, որ տպագրվել է ԵՄԽՀ Պետական Համա-լսարանի գիտական տեղեկագրումս (ՄԽԶ 2—3, 4 և 6, 1927—30 թ. թ.), ա-զատ հրատարակվել ասանձին (1931):

Իր այս հետազոտության մեջ Մ. Արեղյանը ժխտում է Քուլակ Նահապե-տի հեղինակ լինելը նրան՝ Տեկանցի (ԵՂայերգ, Թիֆլիս, 1882) ու հետադա-յում մի շարք այլ բանասերների կողմից վերագրված սիրո երգերի նկա-մամբ և ընդունում այդ երգերը իբրեւ գուսանական ժողովրդական, անանուն երգեր: Միաժամանակ Մ. Արեղյանը ասում է, որ 16-րդ դարի սկզբին, իսկապես, գոյություն է ունեցել Քուլակ Նահապետ անունով աշուղ, որին, սակայն, պատկանել են միանգամայն այլ տիպի ու բովանդակության երգեր:

Իր հետազոտության ամփոփումը, իբրեւ սենրածությունն, Մ. Արեղյանը հետագայում զետեղել է 1940 թ. ՍՍՌՄ-ի Գիտությունների Ակադեմիայի Հայկական ֆիլիալի Գրականության և լեզվի Ինստիտուտի Հրատարակու-թյամբ լույս տեսած իր Երուսաղեմական ժողովրդական տաղերն ժողովածուի մեջ: Մի տարի անց, 1941 թ. Եվրամանությունը հայոց հին գրականության մեջը հոդվածում Մ. Արեղյանը կրկնեց իր այդ տեսակետը (ԵՏեղեկագիր ՍՍՌՄ Գիտ. Ակադեմիայի Հայկական ֆիլիալին, 1941, Մ 5—6, էջ 103, ծանոթու-թյուն):

Մ. Արեղյանը մինչև կյանքի վերջը չփոխեց իր տեսակետը Քուլակ Նա-հապետի մասին: Պարզ է միանգամայն, որ Լթի նրան վիճակվեւ իրագործել իր միտքը՝ ԵՂայոց հին գրականության պատմությանն 2-րդ հատորում հա-տուկ գլուխ նվիրել գուսանական տաղերին, ապա այս նա պիտի աներ միտն-գամայն համատարիմ իր 1931 թ. հրատարակած հետազոտության սկզբունց-ներին:

Այդ իսկ պատճառով, Ինստիտուտը, ցանկանալով գաղափար տալ ըն-

թիւրցողին հիշուլ շղորմած գլխի մասին, բարձր համարից հաճելիւթնեքում գետեղել՝ որոշ հապաղումներով՝ վերև հիշված անհրաժեշտութեան (6-րդ հա-վելված)։

Ինչ վերաբերում է այդ հատորի մեջ զետեղված ժողովուրդական նահապետա-գլխին (որ մասնում է Մ. Արեղյանի 1899—1900 թ. թ. կտրագրած դասախո-սութիւնների ցիկլի մեջ), ապա գեո ալստեղ առաջադրված են՝ լրիվ կամ սաղմնային վիճակում՝ այն բոլոր քնդիտները, որ բնորոշ են 1931 թ. հեղի-նակի հրատարակած շէխ գումանական ժողովրդական երգերը հետազոտու-թյան համար։

Ընդ իսկապես. իր դասախոսութիւնների մեջ Մ. Արեղյանը՝

ա. Նշում է Քուլակի և Ակնա ժողովրդական երգերի, հետևապես՝ հայ-րենների և անտուինների անշուքութեան.

բ. Պնդում է, որ հայրենների առանձնահատկութիւնը պետք է որոնել նրանց տաղաչափական առանձնահատկութեան, համակապե հայկական լի-նելու մեջ.

գ. Հայտարարելով մի կողմից, որ հայրենների ամբողջութեան մեջ պա-կասում է անհատական բնույթը և որ, մյուս կողմից, նրանք ոչ թե մի հե-ղինակի, այլ մի քանի հեղինակների վերամշակումներ են— Մ. Արեղյանը ջրանով իսկ սկսում է ժխտել այդ երգերի պատկանելիութիւնը Քուլակ նա-հապետին։

Քուլակի մասին Մ. Արեղյանի ունեցած տեսակետի կազմավորման ուղին սկզբնական էտապի համար հետաքրքրական է այն, որ նա իր դասա-խոսութիւններում մի տեղ հայրենները դեռ իսկական ժողովրդական երգեր չի համարում, այլ ժողովրդական՝ մշակութիւն կրած գրագետների կողմից։

Հետագայում այս մտքին Մ. Արեղյանը անդրադառնում է միայն հա-րեւոյցի որին, 1923 թ. ձեռագրի իրավունքով հրատարակած Վաճառու-թիւն հայ ժողովրդական վեպի և հին գրականութեան պատմութեան աշխա-տանքի մեջ տակնով, որ սղրանք [հայրենները] ժողովրդական երգեր են, միայն առանձնապես մշակութիւն կրած (էջ 63)։ Նույնը նա կրկնում է հայկական վերածնութեան մասին 1941 թ. հրատարակած մեզ հայտնի իր հոգվածում (էջ 103), որ հիմնականում արտատպութիւն է Վաճառու-թիւն-ից։

Իսկ շէխ գումանական ժողովրդական երգերը-ում նա վճռականապես հայտարարում է, որ հայրենները Երեւանացի աւանդված տաղեր են եղել և մեկ ժամանակի ու մեկ անհատի ստեղծագործութիւն չեն, այլ. ընդհակա-ռակն, դրանց վրա այնպառել են բազմաթիւ օերուղներ, և դրանք փոփոխու-թիւն, վերամշակութիւն ու վարդաքում կրել են բնականաբար, երգիչների քերական, երգելու ժամանակ, այն էլ դարերի ընթացքում (էջ 115, տե՛ս նաև էջ 62)։

11. ՍՍՏՄ Գիտութիւնների Ակադեմիայի Հայկական ֆիլիալի ճեղքկա-գրիչ 1941 թ. № 5—6-ում (էջ 85—106) զետեղված է Մ. Արեղյանի Վերա-ծնութիւնը հայոց հին գրականութեան մեջը հոգվածը։

Այս հոգվածում Արեղյանը նախ համառոտ խոսում է հայ գրականութեան պերիպեթիզմի և վերածնութեան մասին ընդհանրապես, ապա բերում է

երկու ընդարձակ հատված՝ «Փրիզոր նարեկացի և ճգնաժողովան ողբերգությունը» և «Գրականության աշխարհականացումը 11-րդից 17-րդ դար» իր «Համառոտություն հայ ժողովրդական վեպի և հին գրականության պատմության» ապակենտրոն աշխատանքից (Երևան, 1923) և «Փրիզոր նարեկացի ուսումնասիրությունից», տպված «Ազգագրական հանդես»-ում, 1916 թ.:

Նկատի ունենալով, որ նախ՝ վերածնության խնդիրները հավասար մշակվածություն մը չեն ներկայացրած տվյալ հատորում (մինչև 14-րդ դար և 14-րդ դարից հետո), և երկրորդ՝ այս հոդվածում միևնույն խնդիրները տրված են խտացած և ամփոփ, Խնտիտուտը որոշեց այն տալ հավելվածների բաժնում (7-րդ հավելված)՝ անհրաժեշտ հապավումներով:

ԵՐՐՈՐԴ՝ ՏՊԱԳՐՎԱԾ ՄԱՍ

12. Մ. Արեղյանի «Հայոց հին գրականության պատմության» այս մասը կազմված է «Արարատ» ամսագրում հեղինակի տպագրած «Ուրվագծեր 19-րդ դարու հայոց գրականության պատմությունից» հոդվածաշարից՝ 1908 թ., էջ 890—904 և 1103—1115, 1909 թ., էջ 257—270, 321—334, 417—438 և 721—733:

Հրատարակության պատրաստելով նշված հոդվածաշարը, որ հաստատված զետեղված է 19-րդ դարի սկզբի գրաբար գրականությունը՝ վերադասված, Խնտիտուտը կատարել է հետևյալը.

ա. Հանված է «Հայոց»-ում Արեղյանի գլուխը, իբրև նոր գրականության վերաբերող թեմա:

բ. Հոդվածաշարի «Մեր նոր գրականության սկիզբը» գլուխը դրված է իբրև ներածություն 4-րդ շրջանի:

գ. Հոդվածաշարը բաժանված է համապատասխան գլուխների և ենթագլուխների, որոնց տրված են վերնագրեր:

Սույն հաստորին վերաբերող բանասիրական բոլոր աշխատանքները կատարել են ընկ. ընկ. Խորեն Սարգսյանը և Արամ Ղանալանյանը: Մեագիր մասի տեքստը արտագրել է ընկ. Արփիկ Խաչանյանը: Ամբողջ հատորի տեքստը համեմատել և ճշտել է ընկ. Ռուբեն Տոնյանը:

Հանգուցյալ գիտնականի ընտանիքը, հանձին նրա որդի Մհեր Արեղյանի, թե՛ այս և թե՛ մասամբ նախորդ հատորի պատրաստման ու տպագրման ընթացքում ցույց է արվել անհրաժեշտ աջակցություն, որի համար և Խնտիտուտը հայտնում է շնորհակալություն:

Մ. ԱՐԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԵՐՐՈՐԴ ՇՐՋԱՆ

ՎԵՐԱԾՆՈՒԹՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԿՅԱՆՔԻ ԵՎ ԱՇԽԱՐՀԱՅԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

1. Վերածննդային.—Հայոց հին գրականության երրորդ շրջանը (11—17-րդ դար) արտահայտություն է գլխավորապես հայկական վերածննդային, Արդարև զեռ շարունակվում են հին գրական անունները՝ մեկնություն, ճառ, հագեոր երգ և այլն, բայց այնպիսի տարրը հետզհետե ավելի է մտնում եկեղեցականի ստեղծած գրականության մեջ՝ առաջ են գալիս գրական նոր թեմաներ և նոր անուններ, նոր լեզվով հորինված, մինչև որ լինում է մեր գրականության աշխարհականացումը։ Առանձնապես բանաստեղծությունը բոլորովին փոխվում է իր բովանդակությամբ ու ձևով, և մեր հին քնարերգությունը ձեռք է բերում գրեթե բոլոր կարևոր թեմաները։ Այս փոփոխությունը հասնանք էր կյանքի և աշխարհայեցության փոփոխության։ Մինչդեռ քրիստոնյա աշխարհի ուրիշ կողմերում դեռ քնդհանրապես իշխում էր թանձր միջնադարը, 11-րդ դարի առաջին կեսին աղանձ մեր կյանքի ու մտածողության մեջ մտել էր մի հեղաշրջում, որով կրոնա-ճշգրտավորական ուղին առկավ առ առկավ տեղի էր տալիս մի ուրիշ ոգու գիմարմաց, և առաջ էր գալիս ինքնուրույն վերածննդային,¹ որից չէր կարող չազդվել և հազնորակներ։

Թե երբ է եղել այդ փոփոխության և մեր հայկական վերածննդյան սկիզբը, այդ դժվար է որոշել։ Ոչ մի գրական նոր հոսանք,—ինչպես և ուրիշ մտավոր, կուլտուրական երևույթներ,—մի քանի տարում չի սկսվում և երևան գալիս որոշ գծադրված կերպով։ Ինչպես Անանիա Շիրակացին գրում է, ամեն բնական երևույթի «լինելությունն է սկիզբն ապականության, և ապականությունն զորձեալ անդրէն է սկիզբն լինելության»։ Այս դիալեկտիկական, ըստ Շիրակացու, բանաստեղծական հակադրություններից է ուսումնական երևույթը՝ անգիտությունը՝ հարկավ, իր ֆունկցիոնալ կատարելուց հետո կամ, ինչպես սովորաբար ասում ենք, բարգավաճելուց հետո։ Նորի սկիզբը հենց այդ հնի մեջ է, նույնիսկ նրա

¹ Տե՛ս այս շրջանի գրականության մասին՝ Մ. Ա. Ե. Գ. Ն. ի «Համաստեղության հայ ժողովրդական վեպի և հին գրականության պատմություն», զոստից Ներսիսի Ժողովրդական Համալսարանի 1931—32 ձևով. առաջին, Ներսիս, 1933 թ. Առկանիակ՝ հետադրելի բովանդակությամբ։ Այլ է Մ. Ա. Ե. Գ. Ն. ի «Վերածննդային հայոց հին գրականության մեջ», ՍՍՏՄ Գիտականության Մեծագիտական Հայկական ֆիլիալի «Տեղեկագիր» 1935 թ. 5—6 (10—11), Ներսիս, 1941 թ.։ Այլ է առանձին արձանագրություն

բարգավաճության մեջ, Հին կրոնա-եկեղեցական ուղղության և վառական
կյանքի ամենափայլուն ժամանակը մեզնում եղել է 10-րդ դարի երկրորդ
կեսին և 11-րդ դարի սկիզբներին, երբ դա ցայտուն կերպով արտահայտ-
վել է եկեղեցական ճարտարապետությամբ և Փրիզոր Նորակացու գրական
երկերով: Բայց հենց այդ ժամանակներում, 10-րդ դարի վերջերին և 11-րդի
առաջին տասնամյակներին, է սկիզբը հնի ազդեցությունների, այսինքն՝
քայքայման, որ և սկիզբն է նորի բացահայտ գլխելություն, նոր մասովոր
հասանքի, որ դադարազ պրոցեսով զարգանում էր առկապին շատ զորեղ կրո-
նա-եկեղեցականի կողքին, և որի արդյունքն է մեր վերածնությունը գրա-
կանությունը: Ուստի թեև Փրիզոր Նորակացին իր էությունով առանձնում
է նախորդ գրական շրջանին, բայց նրա երկերի մեջ արդեն, ինչպես տեսել
ենք, երևում են վերածնության ազդեցությունը: Նույնը նաև Անանու Ջրուցա-
գրի մի քանի գրությունների մեջ, որ նույնպես տեսել ենք:

Այս վերածնությունն սերմինն առնված է արևմտյան եվրոպական
գրականությունից. ուստի նախ մի քանի խոսք այն մասին, թե ինչ են
հասկանում վերածնությունն ասելով՝ եվրոպական գրականություն մեջ,
Այդպես, այդ տեսնով կոչվում են Արևմտյան Եվրոպայի և առանձնապես
Իտալիայի վաղ-բուսմանական (քաղաքացական) կուլտուրան 14—16-րդ
դարերում: Այդ ժամանակ արդեն գլխավոր հասարակական դեր էր կառ-
ուում բարձրացած նոր դասակարգը—բուրժուազիան (քաղաքացիությունը),
որի դասակարգային շահերն և իդեալների արտահայտությունն էին դառ-
նում գիտությունը, արվեստն ու գրականությունը: Կուլտուրայի կենտրոն
էին քաղաքները: Առևտրական կապիտալով փորժամացած քաղաքացիները,
հակադրվելով ֆեոդալին և եկեղեցականին, ճոխ կյանք էին վարում առ-
քայադաս առ քաղաքներում շինված շքեղ բնակարաններում, ազնիվ հա-
զախներով, թանկագին կարասիքով, ընտիր անոթներով, աշխատելով
ձեռք բերել ամեն վայելք խնջույքներով, երաժշտությամբ, և այլն:

Այս նոր դասակարգի կուլտուրայի առաջին հատկանիշն է դպրոցի և
գրականության աշխարհականացումը՝ հակառակ հոգևորական սքոլաստիկայի
ձգտում է լինում ուսումնասիրելու բնությունը, բնագիտություն, մա-
թեմատիկա, իրավաբանություն, ևախներեն լեզուն դեռ երկուր մնում է
իբրև ընդհանուր միջազգային լեզու գիտություն, փիլիսոփայություն և
այլի համար. բայց առաջնում է պահանջ գրելու մի այնպիսի լեզվով, որ
հասկանալի ոչ միայն գիտնականները, այլև ուրիշները: Ուստի ծագում
են հասկանալի լեզվով ազգային գրականությունները, ազգային գրական
լեզուները:

Նախորդ դարերում անհատականությունը ոչնչացած էր, անհատն իրա-
վունք չուներ եկեղեցուց անկախ մտածելու: Վերածնության ժամանակ
սկսում են տեսնել մարդու մեջ անձի ազատության գաղափարը: Առաջ են
գալիս մարդիկ, որոնք համարձակվում են եկեղեցու պես չմտածել:

Այդ ժամանակներում ավելի մոտից ծանոթանում և ուսումնասիրում
են անտիկ, այսինքն՝ հին հունական և լատինական արվեստը, գրականու-
թյունն ու փիլիսոփայությունը: Ծնվում է սեր անտիկ գրականության
ընտիր ձևերի և ձգտում կյանքի և սոցիալազդեցության մեջ հարուստ

առաջին անգամից աշխարհիկ կուլտուրային։ Այդ են համարել այս նոր կուլտուրայի հիմնական հասկանքները, ուստի և ծագել է վերածնունդը։ Երբևէ անտիկ կուլտուրայի վերածնունդը ընդհանրապես միջնադարյան ճգնաժամական և ազդաստիպական կուլտուրայի։ Իբրև միջնադարը եղել է միակերպ անկման շրջան, չի բովանդակել ոչ մի ներքին դարձացում, և անտիկ կուլտուրայի ազդեցության մեր վերածնունդ են գիտությունը, փիլիսոփայությունը, արվեստները ու գրականությունը։ Ձմերթիվով անտիկ կուլտուրայի զորեղ ազդեցությունը՝ պեղել է ընդունել, սակայն, որ վերածնունդը իրենց բազմաթիվ են ներքին օժերի վրա հիմնված անընդհատ դարձացման, և դրա արժանքները զանվում են ավելի ևս հին ժամանակներում։ Վերածնունդյան վաղ շրջանի սկիզբն եղել է միջնադարյան բարեկալուքի ժամանակ։ Այսպես՝ վերածնունդը են անհուն Գառնի (1365—1321 թ.) և մի քանի ուրիշների մեջ՝ Զալցբուրգի նրանց բարեկալության և միաբնակության։ Նույնը երևում է գալիս նաև Պրոպանսի արքայազուհիների և զերմանական միանգնագրերի երգերի մեջ, որոնք նախակարողներն են վերածնունդյան։ Այս բանաստեղծության ու պարզային մեջ ստեղծվում են նոր գրական ձևեր և անսովոր, որոնց մի մասը փոխառություն են անտիկ գրականությունից։ Գրանցից են, որինսակ, Գառնի և Աստվածային կոմեդիան, հայկազուր սոսնանները Պատրիստի (1304—1374 թ.), նովելները Բոկակաչի (1313—1375 թ.), էպիգրամատ, սատիրա, և այլն։

Հայոց գրականությունը, ինչպես և արվեստն ընդհանրապես, հարկավոր է անվանել չի եղել յուրաքանչյուրի, առանձնապես արևելյան գրական հոսանքներից։ Բայց 10-րդ դարում գծվում է անհնելի մեղմություն, արվեստի ու գրականության այսպիսի մեծ ծանրություն և ազդեցություն, որի հետևանքով կերպարանափոխվեց մեր եկեղեցա-ֆեոդալական գրականությունը։ Անուշառառաքին գիտությունների հին թարգմանությունները բարձրովին մոռացության արված չեն եղել, բայց նրանց ուսումնառելը 10-րդ դարից առաջ խամբած է եղել։ Նույնիսկ Անանիա Շիրակացու երկերն այլևս ուսումնասիրության առարկա չեն եղել։ Գրիգոր Մազիստրոսը մի նամակով Արշարունի Պետրոս Երեզկունին (1019—1059 թ.) խնդրում է իրեն ուղարկել Շիրակացու մի գիրքը, զորը մեծ Գրիգորին անուանեն, և որն են այժմ ի տան տեղումնան, զոր նախ քան զքեզ իրթնացեալ և թագին ընդ գրուսնաւ Ժանկէին։¹ Այսպիսով առաջին հիշում է Շիրակացու գանգառը, թե մեր ազգն անհոգ է գիտություն վերաբերմամբ։ Հետո նա ինքն էլ իր կողմից արանջում է, թե իբրև ժամանակ անփոքի եղելու այսպիսի դարձանություններ և հանգեցւած, թե ի մոռացումն այսպիսի մասնի ոչ միայն՝ եղև անկանել, այլև բազմաթիվ, քանզի Արամեան սեռի հաղաթուրքն և անամաք ընունքն և խառնապարանոց բարս ոչ սատրակայի յայսոսին կըրթուրինս յարատևական հաւանել, կամ եթէ ոչ փոքի, որք աղետականին հասին բախտի, մեծարու լինել և խուզել զխոհմական արհեստս ի գալոց քաղաքացական [= արքայական] արարանին, որպէս մեծ Փալատնսն այն

¹ Գրիգոր Մազիստրոսի թղթերը, ի լույս ընծայեց Գ. Կառախանյան, Աղեհանապատ, 1910, Բ. Թուրք, էջ 81։

և որքայից տալիսիք: Իսկը՝ Մ. Խորենացու դանդախի նման, Մի անգամ որ տալիսի վերաբերմունք է եղել դեպի արաքներն գերաւթյունները, ընդհանուրաւ չի կարելի մեր վաղ վերածնութեան ծագման համար անսխի փրկիսօփայութեան և յլի ազդեցութեանը անսնել, Վերածնութեան ինքը, 11-րդ դարի առաջին աստիճանները սկսած, թերեւս մասամբ նաև քրիստոնէական ազդեցութեամբ, նորոգում է հին թարգմանութեանները ուսումնասիրութեանը և զորթեցնում է, ինչպես հետո կ'եսնենք, առանձին սեր ու հակում դեպի հին հունական փրկիսօփայութեանն ու գիտութեանը, իսկ մեր հայկական վերածնութեան ինքնուրույն է: Դա ազգային կուլտուրայի ու գրականութեան շարունակական զարգացման մի իրակութեան է, որոյնը հայկական քաղաքային կյանքի բարգաւաճման, գրականացման և ներքին ուժերի այն անախտական շարժման, որ առաջ էր եկել հարյուրամյա խաղաղութեան միջոցին: Եթե վերածնութեան ժամանակ է անվանվում այստեղ մեր գրականութեան այս վերափոխումն շրջանը, որովհետև այդ ժամանակ վերածնվել է հեթանոսական դոքերի բուն աշխարհիկ ոգին և աշխարհայեցութեանը՝ հակառակ կրոնա-եկեղեցականի, և որովհետև այդ շրջանի գրականութեան համկութեաններն ընդհանրապես նույնն են, ինչ որ եվրոպական վերածնութեան գրականութեանը: Դա զբաղւորողն հայ քաղաքացութեան, հայ բուրժուազիայի գրականութեանն է:

2. Փաղաքներ և քաղաքացեղացի կյանքն ու կուլտուրան:—Հին դարերից ի վեր հայտնի են եղել Հայաստանում մի շարք քաղաքներ—Արտաշատ, Վաղարշապատ, Վան, Դվին, Խլաթ և ուրիշները: Նրկարառն խաղաղ շինարարութեան դարաշրջանում (10—11-րդ դարերում) արագ բարձրանում է ժողովրդական անասնութեանը, երկրի բնակչութեանն աճում է. շինվում են բազմաթիվ գյուղեր, քաղաքացիներ ու գյուղաքաղաքներ, որոնք հնագնաց դասում են ավելի ու ավելի մարդաշատ: Վաղարշապատ աստիճանաբար և աստիճանաբար քաղաքացեղացիութեամբ և բնակչութեամբ, գրում է Ստեփանոս Տարանեցիքը՝ և որ բարգաւաճած քաղաքներից՝ մեր պատմագիրների հիշատակութեամբ՝ աչքի են ընկնում՝ Անի, Կարս, Արշն, Դվին, որոնց մեջ՝ առանձնապես Անին, որի մասին ավելի պատմագրական տեղեկութեաններ ունենք և ավելի ծանօթութեաններ շնորհիվ պեղումների: Անին մի շատ նշանավոր արդարն է այդ շրջանի մեծ քաղաքների: Նա եղել է ոչ միայն բերդ և մայրաքաղաք, այլև շահաստան, աստիճանական, արդարաւորապէս ու կուլտուրական մեծ կենտրոն թե՛ հայկական և թե՛ նաև օտար իշխանութեանների օրով 11—15-րդ դարը: Այլադղինների ձեռքն անցնելուց հետո՝ այդ քաղաքի ներքին կյանքը ընկնում է փոփոխ. 11—14-րդ դարերում Անին չի դառնում կարգաւոր իբրև հայկական քաղաք: Բայց միտմամբ

1 Ստեփանոս Տարանեցիք, Առաջին Գումարին տեղեկութեան, Ս. Գեղարքար, 1888, էջ 161.

2 И. Орбели, Развалины Ани. История. Современное состояние. Раскопки. С.-Петербург. 1911. Նույնի նայելն թարգմանութեանը. «Անի» ավերակները. Գումարութեան. Այժմյան վիճակ. Գեղարքար: Հովելմաններով և ծանօթութեաններով. Վաղարշապատ, 1911.

Н. Я. Марр, Ани. Книжная история города и раскопки на месте городища, Москва, 1934.

նակ և նա, եկապ ունենալով Առաջավոր Արևելքի մահմեդական երկիրներին քաղաքային կյանքի ընդհանուր զարգացման հետ՝ առատություն միջոցներով ընդունել է հարևան ժողովուրդների առեգծագործության հարուստ արդյունքները¹ և դարձել միջազգային մեծ քաղաք իր բազմազգ բնակչությամբ։

Գտնվելով մեծ առևտրական ճանապարհի վրա՝ Անիին Բագրատունիների օրով արդեն բարձրացել է իր շահառատանով։ Այդ ժամանակ են շինվել և նրա նշանավոր հզոր պարիսպները, ամրացված բազմաթիվ աշտարակներով։ Ոչ միայն Անիի, այլև Կուրսի, Արծնի և ուրիշ քաղաքների վրայով էին անցնում տարանցիկ առևտրական մեծ ճանապարհի ճյուղերը։ Ուստի և նրանք ևս դարձել են վաճառաշահ կենտրոններ և՛ ներքին, և՛ արտաքին առևտրի, և՛ աղբյուրների փոխանակության համար։ Արտաքին առևտուրը լինում էր և՛ Արևելքի, և՛ Արևմուտքի հետ։ Վժով և ցամաք երկներ և առատանայր կրելի ուժով զգուրություն իւրա, — ասում է Ա. Լաստիվերացին իր հայրենի Արծն քաղաքի համար, «որ հոյակապ և ակնաւոր էր ամենայն աշխարհում»²։ Մովսիսն առևտուրն անում էին Տրապիզոնի վրայով։ Նույն հեղինակը (էջ 91) Կուրսի համար գրում է, թե «Յանկասկաթի կէին, հարստացնալք ընդհուրթեամբ ի ծովէ և ի ցամաքէ մարտեալա։ Բարգաւաճում էին և երկրի արտադրող ուժերը։ Ժողովում էր արդյունագործությունը։ Արտահանում էին նաև երկրի արդյունաբերական, ինչպես և երկրագործական ապրանքներն ու բնական բերքերը։ Գրանք ևս կազմում էին մեծ եկամուտների կարևոր աղբյուրներ։ Գյուղատնտեսությունը պարտադրում էին քաղաքների արվարձաններում, պարիսպներից դուրս, — ուր և ապրում էին սովորաբար նաև արհեստավորները, — այլև գյուղերում, մեծամեծների կալվածներում։

Բնականաբար առաջ էր գալիս գրամական տնտեսությունը։ զրամը մի նոր առաված էր դարձել։ Մարդիկ մեծն առավել շահի հետքի էին ընկնում ճարպի հզև արծաթախրութիւն քան զաստուածախրութիւն, և մամոնայն՝ քան զՔրիստոսս։ զրում է Լաստիվերացին (էջ 79)։ 10-րդ դարից արդեն նյութական կարողությունը ոսկին, երկրի հարստությունները, կալվածներ և ուրիշ անշարժ կալեր, կենտրոնանում էին առանձին վաճառական տնտեսների ձեռքին. առաջ էին գալիս կապիտալիստներ, որոնք կազմում էին մի նոր դասակարգ։ Իր դարի համար մի տիպիկ կապիտալիստ է եղել, մի փայլուն ներկայացուցիչ իր դասի, Տիգրան Հոնենց, 12-րդ դարի վերջում և 13-րդի սկիզբներում, տեղ չափազանց մեծ հարստության թե դրամով և թե անշարժ գույքերով³։

Այսպիսով ֆեոդալական շրջանի երկու իշխող դասերի՝ ազնվականություն և եկեղեցականություն իրենց անտեսալիս, ապա և մտավորապես բարձրանում և դիրք էր ձեռք բերում նոր դասակարգը — հարուստ քաղա-

¹ Н. Орбели. Развалины Ани, էջ 4 և հ.ա., 19, 35 և այլն.

² Գրամություն Արիստակեսի վարդապետի Լաստիվերացու. թիվ-ին, 1913, էջ 76.

³ Նրա շատ մեծ հարստության մասին գաղափար կառելի է կազմել նրա ինքուրդ-մթիվ ընծաներից, որ մեկ է իր շինած վանքին 1213 թ., և որ փորագրել է մեկն արձանագրության մեջ։ Այս մասին տեսե՛ք Н. Марр, Ани, էջ 33 և հ.ա.:

քացութիւնը, որ նույնիսկ մըցում էր ֆեոդալների հետ: Սոցիալ-քաղա-
 քական կառուցվածքի, հասարակական գոյութեան վրա փոփոխում է և հասա-
 րակական պայմաններ, իրավունքի հասկացութիւնը, ապա և գաղափարա-
 խոսութիւնը կրօնի, ժողովրդաբարոյականութան, արվեստի ու գրականու-
 թյան վերաբերյալ՝ նախորդ շրջանի գաղափարախոսութիւնը հակադիր:
 Հետզհետեւ իշխանութիւնը և ժողովուրդը միմեկին ֆեոդալներից
 անցնում է խաղաղ ճանապարհով: Սակայն վրաս է գնահատուիլ հոսանք
 ընդդէմ ֆեոդալական հասարակարգի: Անիւմ, հավանորեն և այլ քա-
 ղաքներում, բառով և գործով քաղաքային ինքնավար կյանք, քաղաքային
 ինքնավարութիւն, քաղաքային ավագների գլխավորութիւնով և օրենս-
 դրական իշխանութիւնով քաղաքի սահմաններում:¹ Աւագների խորհուրդը
 վարում էր քաղաքի բոլոր գործերը: Դրա ձեռագլուխն էին տալիս
 չկան տեղեկութիւններ, համեմատյալ դեպ՝ դադարութիւն է ունեցել Անիում
 Շեղդդի-գնդի, վրացի կուսակալների և Զաքարյանների որովհետեւ
 Եվ ար
 գլխավորն է՝ Անու կյանքը կանանց սոցիալական հովանաւորներն էր տղա-
 մարդկանց հետ: Անեցի կանայք անարգել ունեին տղամարդկանց քաղա-
 քացական իրավունքները:² Նրանք էլ հերոսաբար պայքարեցին են իրենց
 քաղաքն ընդդէմ թշնամիների, ինչպէս 1124 թ. Այծյալն (Այծեմի) անու-
 նով քաղաքացուին, որ բռնադատեցին ստացեալ սիրտ, քաղաքի պարսպի վրա
 դիմադրել է պաշարողներին, բառ ոչինչ համարեալ զիջողութեան նախնի
 վերադարձին արտաքուստ: Այծեմիկն իհարկեմ մենակ չի եղել կանանցից,
 հուսակալութիւնը հարստութիւնը գործադրում էր ամենից առաջ քաղա-
 քային շինարարութիւն վրա: քաղաքները ոչ միայն պարսպներով ամ-
 րացվում էին արտաքուստ թշնամիներից պաշտպանվելու համար, այլև գոր-
 դարվում էին բազմաթիվ հայտնապէս եկեղեցիներով ու պալատներով,
 Ա. Լուսիններից էին՝ անպարսպ Արմն քաղաքի համար գրում է. «վաճառ-
 կանք սորա փառաւորք, ավանտականք՝ եկեղեցւոյ շինողք և դարձաբնէս:
 Ոչ միայն աղամարդիկ, այլև կանայք մասնակից էին լինում շինարարու-
 թյան գործին, նույնիսկ քաղաքի աշտարակների Անվանում է մարդկանց
 ճաշակն ու պահանջը. ձգտում էին ամեն ինչ, և՛ եկեղեցիները, և՛ աշտար-
 ակի շէնքերը, նույնիսկ պարսպներն ու աշտարակները, գեղեցկացնել օրեւ
 կերպ: Եկեղեցիները դարձաւում էին շքանշաններով, ֆրեսկոներով ու նկար-
 ներով: Զարգարաններով պահվում էին և իշխանական պալատներն և
 այլ շինութիւնների ֆասադները:³

Մյուս կողմից քաղաքներում ստեղծվում են բարեկեցիկ կյանքի պայ-
 մաններ: Անիւմ, անշուշտ նաև մյուս վաճառաւոր քաղաքներում, շինվում
 են քարվանսարաններ, որոնք անհրաժեշտ էին գրքից եկած տուրքակա-

¹ Н. Марр, АНН, էջ 35.

² Н. Орбели, Развалины, էջ 80.

³ Н. Марр, АНН, էջ 42.

⁴ Սահման էլ Անեցւոյ Լուսինացի ի գրքի պատմագրաց, Վարդգես, 1898, էջ 126 և հա.

⁵ Ս. Լուս., Պատմութիւն, էջ 78 և հա.

⁶ Н. Орбели, Развалины, էջ 30—31.

ներին օթնանելու համար, կռուցվում են քարե տառնյակ գեղեցիկ կո-
 մուրջներ Արուստայի վրա: Անց են կացվում, նույնիսկ 10-րդ դարից
 սկսած, ջրուղիներ հեռավոր աղբյուրներից ջրաքերն ջուր մատակարարելու
 համար: Անիի պեղումներով երևան են եկել նաև քարաքված փողոցներ և
 նույնիսկ մայթերի հետքեր, աղքատ անտեղների հետ և մեծ տուն, որ
 ունեցել է հոյակապ պուրտով՝ զանազան քանդակներով: Միջնաբերդի ապա-
 րանքը հոծ է եղել հարուստ զարդարանքներով, մի դռնից համարձակ
 ներքի նկարներ՝ բուսական շրջանակների մեջ, Մի ուրիշ դռնից համարձակ
 նկարված են եղել պատերազմական կամ որսորդական տեսարաններ:
 որմերը, բացի նկարներից, թանձր ոսկեղոծված են եղել: Խոստաղն
 ունեցել է երկբաշտիկաձև ձևերի քանդակները: Ձի պակասել և բազմ-
 նիքը, իր նախասնյակով, ավազանով, առք և սառն ջրի խողովակներով,
 և այլն: Ինչպես երևում է, Անին ունեցել է բարեկեցիկ կյանքի համար
 անհրաժեշտ շատ բազանքներ: Ըստ Տիգրան Հոնենցի արձանագրության՝
 ի թիվս բազմաթիվ ընծաների՝ նա իր շինած վանքին նվիրել է նաև եր-
 կու բաղանիք, Այսպես բարեշն են եղել նաև մյուս վաճառաշահ մեծ
 քաղաքները: Ե՛ւ իբրև ավն մի պատուական լուսազեղ պաշտոնի համար
 փայլել քաղաք մեր ի մէջ մանայն քաղաքացի, ամենևին գեղեցիկ, ըս-
 տորովին դարդարուն, աչպես է գրում Ա. Լաստիվերացին Արմին համար:¹

Փարթավ քաղաքացիներն իրենց առնին կյանքը, նիստն ու կացը
 և հանգերաններն և հարձարեցնում էին իրենց հարստութիւնը: Հագնւած
 էին դիպիկ, մետաքսի պատմահաններ և, ինչպես պեղումներից հայտա-
 բերվել է, մետաքսի ամբողջ հագուստներ՝ ոսկեթել տանդաղորդութեամբ:
 Երևի կոստյաք էին բանեցնում պեղումների ժամանակ գտնված երեսի ջուղը՝
 մետաքսով և ոսկեթելով նույնը կտրած (գուլաբ-թիւով կտրած), մետաքսե
 ժողովն զոտին, աղաբանջաններն ու մատանիները: Ամեն ինչ ճոխ ու
 պերճ էր: Ա. Լաստիվերացին՝ գովելով իր հայրենի Արմն քաղաքը, նրա
 վաճառականներին՝ գրում է. «Բարեացն առատութեամբ լի էր, ամենայն
 ինչ ըստ մասի էր սորա. և նման իմն էր նորահարմն կնոջ, որ գեղոյն
 վայելչութեամբ և զարդուցն պաշտոնութեամբ՝ ցանկալի գոլ ամենեցուն: Դիչ
 հետո նա, ժողովների խոսքերով, ժառանգութեամբ և կանանց բանար-
 տավանութեամբ, նրանց զգոտորինսն ընդ երկիր զքարշնչն [երկայն
 զդանցները գետնաքարշ տանելը], զգինդան, և զմատանիոն զաղաբանջան-
 սըն, զզոզէսն [= թելի աղաբանջան տրմուկից վերել], և զմեհիւանդան,
 [= մանյակ, ոսկե վզնոց, օղ], և զայն ամենայն, նրանց ռոսկի զարդերը»,
 «ռոսկի կամարները [քամարները], «պատվական հանգերանները: Նախպես
 չգեղութեամբ են եղել և տնային կահ-կարասիքը, զորքերը, բազմոցները,
 վարձույրները: Բանեցնում էին արժաթե ընտիր անոթներ, հախճապեղյա
 և ճենապակյա ամաններ՝ հարուստ բազմազան նկարներով, հալաղավոր
 զարդարուն զանազան գույներով և ցալաուն ֆիգուրներով: Դրանք շին-

¹ Մ. Օրբելու, РАЗВЛЕЧЕНИЯ, էջ 41 և հ.ս.

² Ա. Լաստիվերացի, էջ 79:

³ Անգ, էջ 79-81.

ված են եղել Անիում, թթեն հիմք չկա այդ առարկաների ծագումը բացասապես Անիից համարելը¹։ Մուսուլմանական ճաշակը հետզհետե տվելի մեծ չափով թափանցել է Անիի քաղաքացիներին բնակարանները և երևան է գալիս անոթների ձևերի ու զարդանկարների վրա²։ Այս անոթների մի մասն, անշուշտ, զրախց են բերված եղել։

Մահմեդականների ազդեցությամբ, և ովելի՝ իբրև բնական հետևանք կյանքի զարգացման, փորժամ քաղաքացության մեջ սկսում է ընկնել 10-րդ դարի կրոնական խառակեցությունը։ Այդ մաքբիկը թեպետ և զեռ կրոնասեր ու բարեպաշտ էին, բայց իրական կյանքն ու աշխարհը նրանց համար ստանում էին արժեք։ Մի կողմից՝ նրանք ժամ էին գնում, բարեպաշտական պորձեր կատարում, մյուս կողմից՝ ճոխ աւ հանգիստ ապրելով պարիսպներից ներս, գորգարուն պալատներում, յըջադատված ճարտարվեստի և գեղարվեստի պաճուճանքներով, սիրում էին ուրախ-զվարթ կյանք, ժամն վաշխլություն։ Միայն հեշտութեան և փոփկութեան սպասենք, — գրում է Ա. Լաստիվերցին (էջ 167) և՛ Անիի և՛ ուրիշ քաղաքների համար։ Ուրիշ տեղ (էջ 56) նույն պատմագիրը Հայոց աշխարհի համար գրում է. «Ուրախական երգոց և բանից միայն լինէին հանգեալ»։

Մասթհոս Ուսուլյեյին գրում է. «Զինի մահուանն Աշոտայ [= Գագիկ թագավորի սրգի և Հովհաննես թագավորի եղբայր Աշոտի, Գագիկ Բ.-ի հոր] թուլամորթեան զորքն Հայոց և տանցին զսրուհատ պատերազմի, մոխն ընդ լծով ձուռայութեան ազգին Հուսոց, նստան ի գինարբուսն, սիրեցին զբարբուտ [= լայնափոր նվազորան մի] և զերզս զուսանալն³։ Ներսես Շնորհալիւն 12-րդ դարի կեսերին «հեղինոյ ողբն» մեջ գրում է. թե խնջույքներով էին դադովում, երգ ու երաժշտությամբ ուրախություն տնում։ Մի դար հետո՝ Մմբատ Սպարապետը 11-րդ դարի համար սասում է, թե «թուլացան և աղարուցին զպատերազմ, և սիրեցին զդինի և զգուսանն»⁴։

Այսպիսի զվարթ կյանքի, կերուխումի, ուրախ ժամանցի համար բնականաբար զարգանում էին գոստանների ուրախության և սիրո երգերը, որ ամենահին դարերից ի վեր սիրված են եղել մեր ազնվականներից և աշխատել զվաճեցնում էին հարուստ քաղաքացիներին։ Այդ երգերի մասին, որոնք մեր վերանորոթյան նախալուսավորման են, մանրամասն կխոսվի առանձին իր տեղում։

Աշխարհիկ շքեղությունն ու պերճությունը մտնում էր նաև եպիսկոպոսների բնակարաններն ու կաթողիկոսարանը, որ ոչնչով էտ չէր Ձևւում պալատներից։ Այնտեղ էլ արծաթը հարգի էր դարձել և անարատ բարե-

¹ И. Орбели, Развалины, էջ 40 և հա.

² Н. Марр, Аш, էջ 36, 43.

³ Մմբ. Ուսուլ. Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1886, էջ 78.

⁴ Մմբատայ Սպարապետի Պատմութիւն, Մոսկով, 1856, էջ 27։ Գիլիկեայի հայ ազնվականների մասին ևս Մարկո Պոլոյի ուղեգրության (1271—1295 թ.) մեջ կարգում ենք. «էին սրերում աշտեղի ազնվականները քաղաքի մարտիկ էին և կատարում էին զինքի հերոսական գործեր. բայց ներկայումս սգորմելի բարձրներ են և ոչ մեք բարձր չունեն, բացի հարձակուց. որով նշանավոր են»։ Աղբյուրներ Հայաստանի և Անգի-Վիկասի Պատմության, Ուղեգրության ներքև, հատար Ա. (1283—1282) Երևան, 1882, էջ 44.

պաշտութիւնը պակասում էր: Եթե վաճառականներն առատութիւն հետ նաեւ վաշխառութեամբ էին պարագում, հոգեւորականութեան մեջ էլ զարգանում էր կաշառակերութիւնը: Երբեմն և ի քահանայից երկիւղ և ընարութիւն սրբութեան: Նեղին և մղին մերձեանալ ի սեղանն... և զայն ի ձեռն արծաթոյ, գրում է Ա. Լասարի վերացին (էջ 80):

Մեծ հարստութիւն էին դիզում եպիսկոպոսները: Պետրոս Արշարունի, մականվամբ Գեորգեարծ, կաթողիկոսը (1019—1059 թ.), որ խառնվել է և քաղաքական գործերի և բարի համբավ չի թողել, ունեցել է մեծ հարստութիւն: Մինչէր կազմութիւն հայրենեաց՝ տուեալ ի թագաւորացն Հայոց՝ հինգ հարիւր գեղ անուանի և մեծանիստ և շահաւէտ ընտիր ընտիր, նոյնպէս և եպիսկոպոս հինգ հարիւր փառաւոր և զաւաստեանս ի վերայ եօթն հարիւր թիմի: Համապաղ երկոտառն եպիսկոպոս և չորս վարդապետ ի տանն հայրապետին և վաթսուն երէց ի կրօնաւարաց, և յաշխարհականաց՝ հինգ հարիւր: Եւ չէր նուաաս թիւն հայրապետութեանն քան զթագաւորութեանն Հայոց: Նաեւ զարգարանք եկեղեցեացն և տանն հայրապետութեանն քաղում և անհամար և հրաշքի մեծութեամբ (= հորըստութեամբ) լցեալ: Չնայելով որ նա մեծ կալվածատեր է եղել, անձամբ ունեցել է ունեւոր բազմաթիւ հայրենական գյուղեր, որոնց հետ նաեւ Մուրմասի բերդավանի նման նշոնավոր կալվածքը, չի քաջվել ըստ ժամանակի ողու նաև արծաթասեր լինելու և մեծ գանձեր ձեռք բերելու: «Քանզի յոյժ սիրող էր զանձուց Պետրոս, որ և քաղումք վասն յայն եպերէին զնա»¹: Կաթողիկոսի իշխանութեան ներքո գտնվող 500 գաւառատեւսու չա եպիսկոպոսների մի մասն արծաթաբերութեան և հարստութեան կուտակելու վերաբերմամբ հետեւելիս են եղել իրենց վեհին: Երբ սելջուկյան թուրքերն առնում են անպարկապ Արձնը, ճշգրտավոր և քաղամբոյ քաղաքն Հայոց, կոտորում ու կողոպտում են: Այլ զոսկոյ և զարծաթոյ և զդիպակաց աւելորդ է ասել, — գրում է Մաթեոս Ուսեյանցին՝ խոսելով մեծ կողոպտութի մասին,² և շարունակում: «Բայց զայս քաղում անգամ չտեսլ է մեր ի քաղմաց յազազ քորեպիսկոպոսին» [— գաւառատեւսու] որ ասէին Դաւթուկ, եթէ զգոնձառուսն նորա Արքիհիմն էաւ և քառասուն ուղտ րարձան զգանձառանն նորա: ութ հարիւր վեցհի [տեւեք լուծ, վեց եղ լծած արօք] եզանց հլանէին ի տանն նորան: Ահ իր կաթողիկոսին արժանի գամառատեւսու ի եպիսկոպոսը: Անշուշտ չափազանցութիւն կո, բայց այս էլ ձագել է նրա հարստութեան մեծութեանից:

Ժամանակի բարոյական անկման մասին, ըստ եկեղեցու հայացքի, պարզ գողտփար է առլիս հետեւյալ ավանդութիւնը: 1022 թ. խաղաղութիւն է արեգակը: միտմամանակ և երկրաշարժ է լինում: Նույնը կրկնվում է և 1036 թ.: Հովհաննէս Սմբատ թագավորը և Պետրոս կաթողիկոսը մի քանի իշխանների, որոնց թվում և Գրիգոր Մագիստրոսին, ուղարկում են Սեանի՝

¹ Մ — թ է — ո Ուսեյանցի. Ժամանկագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 153 և հա.

² Կ. Գաւառատեւս, Տեւ Պետրոս Ա. Գեորգեարծ, Վաղարշապատ, 1897, էջ 18,

³ Ա. Լասար, Պատմ., էջ 80.

⁴ Մ — թ. Ուսեյանցի. Ժամանկագրութիւն, էջ 103:

իր սրբությամբ հայակմբ Հովհաննես Կոզեռն վարդապետի մոտ՝ նրանից իմանալու, թե ինչի՞ նշան է այդ երևույթը։ Վարդապետը հայտնում է, թե դա նշան է, որ սատանան արձակվել է կապանքից։ ապա նա հին մարգարեական եղանակով նկարագրում է իրական դրությունը՝ ասելով, «եւ ահա յայսմհետէ ոչ ոք կարասցէ կու հաստատուն ի հուստս Բրիստոսի ե ի պատուիրանսն Աստուծոյ՝ ոչ հայրագիտ ե ոչ վարդապետ, ոչ եղիսկոպոս ե ոչ քահանայ, ոչ արեղայ ե ոչ կրօնաւոր, ոչ իշխան ե ոչ ժաղովուրդ, իշխանք յարենան ի գոզս ե յաւազակս ե յափշտակողս, դատաւորք ի կաշառս ե յանիրու դատաստանս, կրօնաւորք թողուն զանապատս ե զմնաստանս ե յաշխարհի զբաղմունս գեղերին ե շրջին ընդ փողոցս ե ի մէջ կանանց, աստե՛ն զազօթս ե թողուն զկարգս կրօնաւորութեան իւրեանց, սիրեն զվարս աշխարհի ե զհեա երթան զովեաթից մարդկան, որոհալով որոհին գգիւսկեմ երգօ [=սիրտ երգերը]... Այլ ե իշխանք պիղծե մեծախախա յանդգնակ ե մոլորեալ... ժիշտ ե հանապաղ ի դիտարուսն գեղերին վասն սիրոյ ե ցանկութեան չար ե պիղծ խաթին։ Հայրագիտք ե եպիսկոպոսունք ե քահանայք ե կրօնաւորք արծաթաւք ասալի քան աստուածաւէրք։ Նույնը կրկնում է նա երկրորդ անգամին. «եւ ահա յայսմհետէ բազում հերձաւածք մտանին յեկեղեցի... Յաղագս արծաթոյն թողուն ի բաց զհաւան... վասն զի մեղաստէրք ե ցանկացողք լինելոց են չար ճանապարհին... Աստուրգը ե իշխանք լինելոց են կաշառասէրք ե ստախոսք ե սուտերդմունք ե ի ձեռս կաշառացն թիւրին զպատաստանս իրաւանցն աղքատին... իշխանք ե դատաւորք պոռնկասէրք... ե ասեցողք լինին սուրբ մովսէսութեան ե փակին ընդ պոռնկութեամբ ախտին... մեծարեն զմտանիշան ե զգողան, յափշտակեն անիրաւաբար զաշխատողաց գինչսըն... Յաղագս արծաթսիրութեան [աստուրգաց] տան ձեռնագրութիւնը դուռն անարժանից ե զամենայն պղծեալսն ամեն ի կարգ քահանայութեան... ե զանարատն դարձուցանեն ի քահանայութենէ առ ի չունելոյ արծաթ... բազումք ի քահանայից ե ի կրօնաւորաց լինելոց են ցանկասէրք, խաթից փափագողք, որոհալով որոհեն զերգս գիւակեան... յգիտանա ասաջնորդք աշխարհի արծաթսիրութեամբ...»¹։ Հովհաննես Կոզեռն վարդապետի խոսքերով պատկերացված է ոչ միայն 11-րդ, այլև 12-րդ դարի դրոշմայինը։

3. Թմնդրակեցցոց ոգովըր։—Աշխարհիկ կյանքի ու ձգտումների այնպիսի վերակեր միջոցին բնականաբար ամենից առաջ սկսում է դարգանալ վերածնության էական կողմը—եկեղեցուց անկախ, ազատ մտեփողությունը։ Ձերարեւում է պայքարը նոր գաղափարախոսության համար՝ ընդդեմ նախորդ շրջանի դադարաբախտության, որի պաշտպան էին իշխողները—եկեղեցիքն ե ոգևորականությունը։ Այդ հանդես է գալիս, ինչպես սովորաբար՝ աղանդավորությամբ, որի միջոցով Հայաստանում մվելի վաղ քան նվթողալում ձեւավորվել է ընդդիմադիր, հետագ ոգին։ Հայաստանը եղել է մի ակուբ աղանդավորական անընդհատ շարժման համար՝ մերթ գաղանի, մերթ հայտնի, նույնիսկ ապստամբության վերածվելով։ Հայոց գրականության

¹ Եւ ա թ է ա ռ ա հ ա յ ե ճ ի, Ժամանակագրութիւն, Վարդապետ, 1898, էջ 83—88, 96—74.

սկզբում հենց՝ համադիպում ենք բարբառաբանուս (խակապես բարբառաբանուս) աղանդին Հայաստանի արևմտյան կողմերում, Ապա մեր աշխարհում գործել են նաև Մարկիոնի աղանդին, ժանիքեոսթյան, մեդնեոսթյան (մեսալյան աղանդ), Վեալոց աղանդին և ուրիշների հեռուդիները՝ Այսպեղ չախի, հարկավ, դանազան անուններով երևացող աղանդների մասին մանրամասն խոսելու Դրանցից առանձնապես,—բայց համառոտակի, որքան որ մեր ինդրին հարկավոր է,—հիշելու է երկուսը—Պավլիկյան և Թոնդրակեցոց աղանդները, որոնք երկուսն էլ հայկական հողի վրա են ծագել:

Պավլիկյանները տարածված են եղել Հայաստանում 8-րդ դարի սկիզբներին, նրանց դեմ կռվել են Հովհան Օձնեցու ժամանակ և՛ ճառերով, և՛ հեկեղեցական կանոններով: Այդ աղանդը 9-րդ դարում բացարձակ ծավալվում է գլխավորապես Փոքր Հայաստանում: Չնայելով կրթի հալածանքներին՝ աղանդավորներն այնքան զորանում են, որ նույն դարի կեսերին մի մեծ ունույցիոն շարժում են առաջ բերում, նրանք զենի ձևերն ապրումատուրում են բիզանդական կառավարության դեմ, պահանջելով կրանական և քաղաքական ադառաթյուն: Նրանց ուժն այնքան մեծ էր, որ կայսրությանը դիմադրում են 25 տարի շարունակ, մինչև որ 973 թ. հաղթվում են կայսերական զորքերից և կոտորվում: Նրանց կենտրոնը, Տեփրիկե քաղաքն ավերվում է, և նրանց մնացորդները ցրվում են: Հետագայում նրանք փոխադրվում են Թրակիա: Ինչպես սովորաբար ընդունում են, այս աղանդի աղեցնությունը մեծ է եղել ոչ միայն սլավոնական, այլև ընդհանրապես եվրոպական աղանդների կազմակերպման վրա: Այս աղանդն իր քաղաքած սկզբունքներով մերթ նույնացրել են մեդնեոսթյան հետ, մերթ՝ մոսեցերել են մանիքեոսթյան, կամ Մարկիոնի աղանդին: Այդ նրանից է առաջացել, որ երբեմն դանազան աղանդավորներ, ինչպես գրում է Հովհան Օձնեցին, հարում են իրար՝ հեկեղեցու դեմ մի ընդհանուր կռիվ մղելու համար:

Պավլիկյանների պարավելուց հետո՝ աղանդավորությունը չի մեանում Հայաստանում: Շատ չանցած՝ դարձյալ հայկական հողի վրա, հայ կյանքից ծնունդ է առնում մի նորը, Թոնդրակեցոց աղանդը, որ համարում են Պավլիկյանների հաջորդը: Ըստ Մոսեֆանոս Տեոդեսիոս՝ Հովհաննես Դրասխանակեացի կաթողիկոսի (897—928 թ.) օրով, այն խառն ժամանակներում, հանդես է եկել, իբրև այդ աղանդի հիմնադիր, Սմրատ անունով մեկը Վեակառակ ամենայն ճշիստունական կարգաց: Այս նոր աղանդը շատ նմանություններ ունի Պավլիկյան աղանդի հետ. նրա շուրջը խորված պիտի լինեն Պավլիկյանների մնացորդները Հայաստանում, և երեկ նույն հին աղանդն է նոր անունով երևան եկած: Աղանդի կենտրոնն եղել է Ապահանիք գավառում Թոնդրակ գյուղը, ուր նստում էր աղանդապետը, քրից և աղանդի անունը: Բայց նրա հյուսիսը՝ նայելով տեղերին՝ կոչվել են նաև Կոչեցի, Թուլալեցի:

Թոնդրակեցի կամ Թոնդրակյան աղանդավորները տարածվում են

¹ Տե՛ս առաջ աշխատության Ա հատր, Ե-թիւերըգ Կոճիքում:

² Die Paulikianer im Byzantinischen Kaiserreiche und verwandte ketzerische Erscheinungen in Armenien, von Karapet Ter-Mkertischian, Leipzig, 1893, Այսպեղ էջ 83—91, Die Thondrakter.

ազելի Մեծ Հայաստանի հյուսիս-արևմտյան¹ կողմերում և 11-րդ դարի առաջին տասնամյակում արդեն բացարձակ կերպով բանի գործողութիւններին են դիմում։ Այդ ժամանակներում նրանց կողմէ և անցնում մինչև անգամ Հարքի եպիսկոպոսը և եկեղեցուն հակառակ կարգադրութիւններ անում։ Մարդիս կաթողիկոսը (992—1019 թ.) ստիպված է լինում միջոցներ ձեռք առնել այդ եպիսկոպոսի դեմ և պատմել նրան։ Աղանդավորների թիվը, սակայն, շարունակում է աճել, Մանանդի գավառում նրանց հարում են արեղաներ, ինչպես և դառաւորն ազնվական կանայք և աղամարդիկ։ Նրանք քանդում են իրենց գյուղերի եկեղեցիները, խորտակում են անդաստաններում կանգնած խաչքարերը։ Բայց երբ այդ աղանդավորները 1011 թ. փչրում են Պարխար լեւների հյուսիսի մեկի վրա կանգնած մի հայտնի խաչքար, ապա ազնվի է բարձրանում, գավառի եպիսկոպոսն այրւում, ազնւում է նրանց գյուղերը։ Բանը հասնում է դատավորին, որ, հասկանալի է, պահում է ոչ թե աղանդավորների, այլ եկեղեցու կողմը²։ Թոնդրակեցիները, սակայն, շարունակ անում ու ծավալում են և սպառնալից են դառնում։ Հիշված դեպքից մի 40 ամբի հետո, 1051 կամ 1052 թ., նրանց դեմ ելնում է Գրիգոր Մագիստրոս Պաշտպանի իշխանը, որ բիզանդական կայսրութեան կուսակալն էր Միջագետքի վրա, և որի իշխանութեան տակ էին նաև Հայաստանի այն կողմերը, ուր գտնվում էին այդ աղանդավորները։ Նա զենքի ուժով ճշդումների է գրծում, ազնւում է Թոնդրակ գյուղը և աղանդավորներին վտարում է իր իշխանութեան սահմաններից։ Բայց աղանդը չի ոչնչանում, այլ դադարի շարունակում է հարաւելլ և հասնում է մինչև 19-րդ դարը³։ Այս աղանդավորներն ևս, ինչպես ընդունում են, անցել են Թրակիա և ազդել եվրոպական աղանդների կազմութեան վրա։ Նրանց ազդեցութիւնը երևում է ի միջի այլոց նաև Արիգյան կամ Արիգացոյ աղանդի վրա, որ 11—13-րդ դարերում ասարածվում էր Հարավային Թրակիայում։ Ուստի և այդ Թոնդրակեցոյ աղանդը, ինչպես և Պաշտպանութեանը, կարեւորութեան ունի ընդհանուր միջազգային տեսակետով ևս։

Ի՞նչ է եղել Թոնդրակեցոյ ուսմունքը։ Շատ բան, հարկավ, դեռ կենդանի զարգացման մեջ է եղել բերանացի քաղողով և ավանդութեամբ։ Նրանցից ոչ մի գրվածք չի մնացել։ Մեր ձեռքը հասել են միայն հակառակորդների գրածները⁴, որոնց մեջ ամեն լուստանք թափում են նրանց գրիւթին։ Բայց և այնպես բավական ճանաչութեան ենք ստանում այդ աղան-

¹ Յես՝ Պատմութիւն Արիստակեսի վարդապետի Լուսնի վերապահ, գլուխներ ԻԹ և ԻԳ, էջ 148—163։

² ՎՓԲԸ, Գ ամբի՝ 1890, հակաեկեղեցի Համբ, էջ 91—130՝ Թոնդրակեցիները մեր օրերում։ Ա. Աբրեգյանի։

³ Գրանց են՝ ա) Գրիգոր Նարեկացու «Թուղթը», որ ազդած է Բաբեղ Սարգսյանի «Առաքելութեան Մանրեմ-Պաշտպանութեանը» աղանդին և Գր. Նարեկացու Թուղթը, Վեհաթիկ, 1893։ այնպես թյուր վերլուծ. էջ 106—117։ Սույնը ազգաբնակից է նաև Վեհաթիկ «Պաշտպանութեան» մեջ 1898 թ., էջ 69—84, 118—119։ բ) Գր. Մագիստրոսի Յե և ՅԸ թղթերը, տես՝ Եր. Մագիստրոսի թղթերը։ Գ. Կասախյանցի հրատ., Ալեքսանդրապոլ, 1910, էջ 148—168, գ) Ա. Բ. Լուսնի վերապահ, Պատմ. վերաբերում հիշված գլուխները

գովորենք ընդդիմադիր գաղափարախոսութեան վարդապետութեան մասին նրանք կատարելապէս չէին մերժում քրիստոնեութիւնը, այլ ժխտում էին եկեղեցու բոլոր կարգերը, Ձէին ընդունում Քրիստոսին իբրև առաված ազանապակեան ինքն իրեն քրիստոս էր անվանում, Մերժում էին Ս. Գրքերը, Երբեք ուրիշ զոյաւթիւնը, Կանգնեալ կյանքը, մեռելների հարութիւնը, հոգու անմահութիւնը և այլն, Մերժում էին եկեղեցու նվիրապետութիւնը (հինբարեկամ), քահանայական կարգը, ձեռնադրութիւնը, ըստ նրանց ազանապակեան Սմբատի,—գրում է Գրեգոր Մագիստրոսը (էջ. 154),—եւ այլ ինչ է այդ, բայց վասն խաբելոյ ժողովրդեանն»:

Մերժում էին նաև եկեղեցու խորհուրդները՝ մկրտութիւն, հաղորդութիւն, խոստովանութիւն, ապաշխարութիւն և այլն, Խաբանում էին ամեն պաշտամունք, եկեղեցական արարողութիւնները և ռովորույթները—հիրակի օրը, ձնադրութիւնը ծաղրում էին և ոչինչ էին համարում քահանայի զգեստը, պատարագը, քահանայութիւնները և այլն, Ձէին հարգում և նաւյնիսկ ոճշացնում էին եկեղեցիները, խաչերը, խաչքարերը, որոնցով զարդարված էին Կանգնելու լեռները, արհամարհում էին սրբերին, տիրութեամբ և այլն, Անգոսնում էին, արհամարհում, աշխարհում էին ամուսնութեան կարգը, Գրեգոր Նաբեկացին նրանց ուրիշ ժխտումների հետ հեշում է և զգաւակին ամուսնութեան անգոսնութիւն... զպսակն անգոսնեն, և զոր սիրով մերձենան առ յիրեարս, կատարեալ սէր համարին և յԱստուծայ, և հանդի Քրիստոսի, թէ Աստուծո՞ւ էր է, և զսիրով միաւորին կամի և ոչ զպսակն (էջ 110 և հա.), Աւն և կնոջ այսպիսի մերձավորութիւնը ժամանակակիցները բնականաբար համարել են, ինչպես գրում է Գր. Նաբեկացին, «մեզնեական անխախտ պղծութիւն»։ «Եւ այս ինչ են անօրէնութիւնը չարագործացն այնոցիկ,—գրում է Գր. Մագիստրոսը,—ոչ պահեցեաց... և ոչ խորութիւնք արանց և կանանց և ոչ ընտանեաց, թէպէտ և ոչ յայտնապէս համարակին և ոչ պատուեն և ոչ զմի ինչ ոչ յաստուծայնոց և ոչ յեղեցոց. այլ զամենայն ծաղր աւնեն՝ գինն և գնոր օրէնս»։ Այս հեղինակը՝ նրանց կենարանն անվանում է Շեռավանք, «Եւ բնակեալք էին Բ Շեռավանսն այն քաղաքին զորոնք կրօնաւորաց և կանանց քաղաքին բողբոջ» (էջ 152)։ Արիւսական Լատիններացին եւ այս ազանգովորութիւնն անվանում է «մեզնեայ կրօնք», ասելով թե «պոռնկական մոլեղին խելը» օրէն է նոցին փարախիւն, և թե պոռնկութիւն են անում լատինապէս, ոչ անծալ զմառ քարեան մերձավորութիւնն»։ Եվ վերջն այս պատճառներն ավելացնում է. «բայց զնոց մեզնի զգործն անպաշտօն համարեցաք ընդ զրով արկանել, քանզի կարի ազանգի է»։ Այդ ազանգովորների համար մեղքը նույնպէս զոյութիւնն չունենք, ուստի մեղքի պատիժ և ապաշխարութիւնն էլ չկար։

Ճգնափորական կյանքին և եկեղեցուն հակառակ մի վարդապետութիւն էր Թոնդրակեցոց ուսումը, ծայրահեղութեան հասած մի բողոք վառական ու ճգնափորական կյանքի, եկեղեցական իշխանութեան, եկեղեցականագրերի ու գաղափարների դեմ, որոնք, ինչպէս տեսնել ենք, չափազանցութեան էին հասած 10-րդ դարում և 11-րդի առաջին տասնամյակներում։ Դա հակաեկեղեցական մի մեծ շարժում էր, Թե ինչից էր ծագում և զար-

դանում զա, մեզ այդ չեն բացառում ժամանակակից գրողները: Բայց պարզ է այդ: Դա եղել է նախ՝ ճաղացածության փաթեթով զորացման և աշխարհիկ կյանքին հակվելու հետևանքը: Ապա՝ հեղեղեցականության վատ բարձրը, հոգեբանականներից շատերի զեղծումները, կեղծավորությանը, հեղեղեցական իշխանության ճնշումները, բուռն վերաբերմունքը դեպի ազատ մտածողությունը, այս ամենը դրդել էին զբաղվել հոգեբանական հակառակ զիրք բռնելու և մի վերջնական՝ շատ տարբեր, որոշվել չէին կարող հրաժարվել իրենց բնական խելքից և հաշտվել հեղեղեցու ճարտգների հետ, սկսում էին կախվել հեղեղեցու դեմ, ձգտելով հեղեղեցին հիմնովին վերանորոգության—սեփոքարացիայի ենթարկելու, շատ ավելի վաղ ժամ Լուսբերի և ուրիշների գործողությունը: Պատահական չէ, որ Արիստակես Լաստիվերացին շատ զովում է թոնդրակեցոց ազանդին հարած եղբիսկոպոսի ու ժահաններին իշխանի նախկին մեծ բարեպաշտությանը: Ինչպես էլ Պատմագիրը բացատրի, թե նրանք ուրիշներին խաբելու համար կեղծավորություն մեծ բարեպաշտ եղել, այդ ընդունելի չէ: Իրողությունն այն է, որ նրանք սկզբում, իրող, շերմեանալով հավատացող են եղել և հետո միայն անցել են թոնդրակեցոց կողմը: Ինչն էր ստիպում, օրինակ, որ այն նշանավոր Վերվեռ իշխանը հրաժարվեր հեղեղեցուց, նա, որ իր կալվածքում նույնիսկ կրոնաստան էր շինել, «ճշմարտ եղբորս ժողովելու ի նմա, և ընդարձակ սահման»՝ անկարգ առնելը զկեանս նոցա: Եր ամեն ատրի մեծ պատիւ այդ կրոնավորների մոտ էր գնում և և հանդիսակից լինելը նոցա՝ մինչև յաւուրս մեծի պատեքին, և բազում այլ գործաբարեաց ցուցանելը ի սոցա սպասոււորութիւն: Նաև յաղջառասնութիւնս և ի ժահանայից հնազանդութիւնս՝ ժամ զբազումս յառաջագետն ցուցանիւք:—Ինչն էր ստիպում այդ հայտնի իշխանին,—որից ակնածում էր զատավարը,—ինչպես և Հարժի աղեղեցիկ եղբիսկոպոսին, ոչ միայն հրաժարվել հեղեղեցուց, այլև բոլորովին հակառակ գնալ: Նրանք անպայման փորձով տեսել էին գոյութիւն ունեցող կեղծիքները, զգնել էին զբանջից, և այդ թելադրել էր նրանց մտնելու հակառակ բանակի մեջ և ձգտելու հեղեղեցու վերանորոգության: Բայց նրանց զապփաթը չէր կարող հայերի մեջ իրականանալ այն դարում, քանի որ հեղեղեցին ու նրա պայապան իշխանությունը ու բիշոփական կայսրությունը զեւ շատ զորեղ էին, իսկ այդ հետսող ու ժխտող ազանդը մի ուղղուցիւն ընդդիմադրութիւն էր իշխող դասակարգի դեմ, մի դասակարգային պայքար, որ անխաղաղ ընթիւնջ անել աշխատեին իշխողները:

4. Գողթափորայանութիւնի գաղափարն իսկապէս ընդհանրական ընդդիմադիր վարդապետութեան դրածական կողմը, ինչպես ասվեց վերևում, մեզ չեն հաղորդել նրանց հակառակորդ հեղինակները, բայց հասկանալի է այդ և չէլիմական հերետիկոսական գողթափորն այն է, որ երկրին է աստվելութիւն տրվում, ժամ երկնքին: Այդ նշանակում է, որ բնութիւնը, իրական կյանքին աստվելութիւն պիտի տրվեր: Կայանութեան կրօնի փոխանակ պիտի իշխեր ռացիոնալիզմը: Հոգին եւ պիտի մղվեր մարմնի առաջ, իրավագուրկ մարմինն ու բնութիւնը ստանալին իրենց իրա-

1 Արիստ. Լաստիվերացի. Պատմութիւն, էջ 142—146, 148—149.

վունքը, և գրականութունն աշխարհականանալով՝ կապվեր գլխավորապես իրական կյանքի, երկրի և մարմնի հետ: Վերածնությունն այս դադափաբը, սակայն, չէր կարող իր ամբողջությամբ արագ շնորհազանալ գրականության մեջ 11-րդ դարի առաջին կեսին, երբ դեռ շատ զորեղ էր կրոնական ոգին, և ծանրածան ճնշող էր եկեղեցու իշխանությունը, և գրականութունը դեռ գտնվում էր գլխավորապես հոգևորականների ձեռին: Գրավոր դպրության մեջ զարգացումը, սկսվելով եկեղեցու տեսակետով անփաս դադափաբներից, կատարվում էր շատ դանդաղ տեմպերով, և ոչ միակերպ հասարակական ընթացքով, և ոչ էլ ժնրնդհատ, ջանքի որ 12-րդ երկրորդ կեսը այդ դարերում ենթարկվում էր պարբերական ցնցումների: Բայց այնուամենայնիվ սկսված առաջնորդությունն այսպես կամ այնպես շարունակվում է, մինչև որ վերջինից զրականության մեջ էլ երկրավորին տրվում է առավելություն: Եվ մեք գրականության այս շրջանը հասաքքեր է նոր պաղապարտությունն առաժնայաբար զարգացման ընթացքով: Խնդիրն այստեղ գրավոր դպրության մասին է և ոչ գուշանական երգերի և ժողովրդական բանաստեղծության, որոնք սկզբից ի վեր աշխարհիկ բնավորութուն են ունեցել:

ՆՈՐ ՄՏԱՎՈՐ ՇՈՍԱՆՔԻ ԱՌԱՋԻՆ ՓՈԻԼԵՐԸ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ԳՐԻԳՈՐ ՄԱԳԻՍՏՐՈՍ ՊԱՆՆԱՎՈՒՄԸ

1. Լուսավորւթյան և ուսման ծավալումը:—Գրականության աշխարհականացումը պիտի լիներ մենից առաջ քաղաքներում ապրող աշխարհականների ձեռով: Եվ իսկապես, վաղ մերթնությունն շրջանում աշխարհականների մտավոր վիճակը բարձրանում էր, նրանք ևս սկսում էին ուսում առնել և գիտությունը ու գրականությանը պարագել, միտածանակ և հովանավորել ուսումնականներին: 10-րդ դարից ի վեր հանդես եկող Պաննավունի տոհմի մարդիկը հայտնի են դարձել ոչ միայն շինարարությամբ ու ռազմական գործերով, այլև իրենց ուսումնասիրությամբ: Նրանք ջանացել են ուսուցանել զմանկունսն¹ ևս ուսում են ափել և մասնակ Գրիգոր Պաննավունուն: Ուսումնասեր են եղել և Բագրատունիները, իմաստուն կամ իմաստասեր է հիշվում Լովհանեսն Սմբատ թագավորը: Նրա ժամանակից գիտությանը հայտնի է եղել Անիի Սարգիս վարդապետը, Գրիգոր Մագիստրոսի բարեկամներից մեկը, որին այդ Պաննավունի իշխանը իր մի նամակի մեջ² գիտնում է գրելով՝ սեզոր հոնտոր և աստուածային աշխարհ... Միշտ կարեւոր էր կամ բանի ջուռ և գրի, ջանգի հզոր ևս ի պուսեփկոսականն մտածնացութեան: Եւ սիրելի է ինչ, — ափելացնում է նա, — ոչ այլ ինչ, եթէ աշխարհի լսել ինչ կամ տեսնել³:

¹ Գր. Մագիստրոսի թղթերը, ԺԱ, էջ 48 և հա.

² Անգ. ԺԺ, էջ 87.

³ «Տեսնեմքոն նշանակում է զկատարելություն»: այդ բառը Բիզանդիայում գործածվում էր իբրեւ տեղադր զլուսն իմաստասիրաց կամ հեռուորաց նշանակությամբ, նշանաբան էր ևս գիտական վարդապետի հիշատակարանը, որ նա մտնել է մի զբոսի մեջ. «Յոմի, բուս էր ևս թուգանն. ՆՂ [— 480 + 581 = 1061], վճարեցաւ ի մարդկանէ արքայն Կայսր»:

Անիի արքունիքում եղել է գրադարան. նույնը կար և կաթողիկոսարանում: Իբրև ուսումնասիր և գիտուն հիշվում է նաև Պազիրի Բ-ը, որի համար Մոսթեսո Ուռույցյցին գրում է. «Այր հզոր էր յիմաստասիրական ջոկան և անյողթ ի պատասխանին»¹ Այսպես նաև և Վանանդի Արասյան Պազիրի Զազովորը: Այս վերջինիս մի նամակ է գրել Պրիզոր Մագիստրոսը՝ հանձնարարելով նրան ախեթիս Գրիգոր Հնձաքի (Հինձք վանք և գյուղ Պարինի մոտ) կրոնավորին: «Գրիգորանուանեալ ախեթիս,—գրում է նա,— իմացի ստուգել արքայութիւն քո, զի այր հմուտ է աստուածեղէն դաւանութեան մերոյ բախտի, նաև հնում և արտաքին գրոց յոյժ տեղեակ: Նւրդոյ տեղացեալ զփափագանս իւր լնուլ պատարուն ընթերցմամբ, զի այնու ոչ երբէք շատանայ: Նւ կամիմ զի և զո արքունիս քոյոյ քարգանսական (արքայական) ապարանի աւելայացեալ արտոցի քիզ ճնկարեմ, զի մի բնական Արքանագեան և Արամեան զպրութիւնս՝ ի բազմաց սատարեալ՝ ի մոտացումն անկցի:.. Զի տեսանեմք զքեզ ի հոմերական տաղան վերտառեալ շափաբերական և ստանաւորս հաղնեղական կարկատեալ. զի և զա (Պրիզոր Հնձաքի) յայնստիկ յարդարեալս (Թուղթ Խ, էջ 97). հնշանակե՛ալս Պազիրի Զազովորը ևզել է իմաստասիր, միաժամանակ և ուսանավորներ է հորինելիս եղել: Նա հովանավորել է գիտականներին և ունեցել է ճեմարան, այսինքն փրկսփայլական զպրոց, ուր սովորեցնում էին կրոնականի նաև և արտաքին գիտութիւններ: Այդպիսի ուսումնաւորներն վերանաւորուած ոգով առաջին պահանջն էր, որ պայծառ արտահայտւէին է գտել յանձին Պրիզոր Մագիստրոսի:

2. Կննտագրությամը:—Պրիզոր Նարեկացին իր հանճարով ունեւր բնության զգացումը, բայց իր երկով նա հանվբբա չի դարձել անմիջական հանդիմանի համար: Գուցե և եղել են նրան հետևորդներ, ժամանակակից կամ քիչ ուշ հանդես եկող բանաստեղծներ, բայց այդպիսիների գրվածքներ երևան չեն եկել: Վերամշակության առաջին պոետիկոսը, միայն ոչ մեր հին մեծ բանաստեղծի բնագավառում, դա Պանավորնի Պրիզոր Մագիստրոսն է. Պրիզոր Նարեկացու շատ կրտսեր ժամանակակիցը, որից Պանավորնի թղթեր և մի քանի շափածո երկեր՝ նա մի հետաքրքիր դեմք է. մի հայանի իշխան, որ շատ հմուտ է եկեղեցական գրականությանը, սիրող և պաշապան է հանդիսացել Հայոց եկեղեցու, կրոնասեր է, բայց իր ժամանակի համեմատ՝ ազատամիտ ու լուսամիտ մի բողոքական անձ: Նրա մեջ մարմնացել է իր ժամանակի վերամշակության մաքի մի կողմը—չբավականանալ միայն կրոնականով և եկեղեցական զպրոցով, վերանորոգել և

մեծիմաստ մեղմանելու: Գաի ևս Սարգիս վարդապետ զգեցա զայս յարգանակն տան զանան աւելալ ի յանկեալ միւս, անայցելու Թափոսեալ Թաւուր յաւելին և զբիթէլս լսալ լսելեալ: Իսկ իմ հայեցեալ իւնամով ի գրաճեղիմ, և բոս սովորական մեր ախարակաց զյարուսն բացեալ՝ ի բունս բերկեր: (—Երեկէի՞ն) և ու զտաւգեալ յընկերացն կար կորուստ մեծին առ ինքն կարկանդակ: Զոր ապա առեալ իմ ընդ ին տարայ՝ հանեալ ի բանդէն, Գոր. Զաբբահալ և ալ, Մոսկովադարան Հայկական Թարգմանութեան տնիսեաց (գոր Գ—ԺԳ), Վենետիկ, 1869, էջ 456:

¹ Մ — Բ. Ուսու, Ժամանակագր, Վաղարշապատ, 1898, էջ 161.

² Պրիզոր Մագիստրոսի թղթերը, բնագրերն առաջաբանով և ծանոթութեաններով առաջին անգամ ի լույս բերուեց Գ. Կոստանյանց, Աղիճառնիքադու, 1910.

գորգացնել հայերի մէջ հին հունական գիտութիւնը, ուսումնասիրել մաթեմատիկա, երկրաչափութիւն, բժշկութիւն, ծանոթանալ հին հունական գրականութեանը և ընդհանրապէս բազմակողմանի գիտանքներ ձեռք բերել:

Այս նշանավոր անձը որդին էր Վասակ Պալատիւնու, ծնված մոտ 990 թ.: Նա մեծացել է Անի քաղաքում, Պալատիւնիների պալատում. վաղեմիով նաև խնամքն իր հորեղբայր Վահրամ Պալատիւնու, որ Անիի թագավորութեան վերջին շրջանում մեծ դեր է կատարել իրրև սպարապետ և ութսունամյա հասակում 1047 թ. մարտի մէջ ընկել է քաջաբար, Նրա մահը ողբում է Գրիգոր Մագիստրոսը իր մի թղթի մէջ (ԺԱ. էջ 30 և հաւ.): հիշելով, թե ինչպես նա իրեն սիրել է, Մեր այս հեղինակն ուսումնառել է Անիում, հասացել է Ս. Գրգին և եկեղեցական հայրերի գրվածքներին: Բայց որ կարևորն է ժամանակի ողու տեսակետով՝ նա պատանեկան հասակից արդեն պարտքել է նաև արտաքին գիտութիւններով, ուսումնասիրելով փիլիսոփայութիւն և այլն: Միաժամանակ նա վարժել է գինվորական արհեստին, որ շատ անհրաժեշտ էր այն դարում:

Թուրքական հրոսակներն արդեն մտել էին Հայաստան: 1021 թ. Գեղումը կոչված մի ցեղ Ատրպատականի կողմից հարձակվում է կենտրոնական Հայաստանի վրա, հասնում Գլին և ապառապ սպիռելով մասնաւոր Քլին ամրոցին, որ Գրիգորի հայրական կալվածն էր: Վասակը Քլինու պահպանութիւնը թողնելով իր որդուն՝ ինքն իր մարտիկներով ելնում է ապառապավորների դեմ, ջարդում, հալածում է նրանց, Հաղթութիւնից հետո նա Սեբեկեյ (Արաքի) լեռան ստորոտում՝ հոգնած ջնում է քարերի սովորում. ջնած անգը մեկն սպանում է նրան: Հոր մահից հետո, հայրական ընդարձակ կալվածները, որ Նիզ քաղաքից հասնում էին մինչև Գեղամա լճի և Ագատ գետի հովիտները և այլուր, անցնում են Գրիգորին: Նա էլ, ինչպես վարժել էր իր հայրը, առանձին ուշադրութիւն է դարձնում վաճառքի շինարարութեանը Քլինում, Կեչառիսում (Մաղաձորում) և ուրիշ անդերում:

Գրիգոր Մագիստրոսը մյուս Պալատիւնիների հետ պաշտպան է կանգնում Անիի թագավորութեան և Գագիկ Բ-ի գահակալութեան, նա իր գործերով օգնում է Գագիկին ճակատ մղելու թուրքերի դեմ և ջարդելու նրանց 1042—1043 թ., բայց շուտով զժողութիւն է ընկնում այդ երկուսի միջև, և նա հալածվում է թագավորից, ինչպես ինքը գրում է, կրելով բռնա, կապանք ու զրկանքներ և մինչև անգամ մահվան սպառնալիցներ (Թուրք ԿԱ, էջ 139 և հա.): Հետո թագավորը զոջւում կամենում է հաղթել նրա հետ, բայց հաժանորեն գլուխ չի գալիս հաղաութիւնը, և Գրիգորը հետանում է Տաթև:

Հայանի է, որ Հովհաննես Սմբատ թագավորը Անի իր կալվածներով հռակում է բիզանդացոց կայսրին: Երբ Գագիկ Բ-ը գնում է Կոստանդնուպոլիս այդ կռակի խնդիրը կարգավարելու, Գրիգորն ևս 1045 թ. գնում

1 Մ = Թ Հ ա ու հ ա յ ե թ ի, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 11 և հաւ.:

է անտեղ, հոստալով, թե գուցե իր այցելությամբ օգնի Գաղիկին. բայց նա ոչինչ անել չի կարողանում: Վերըն հասնաւ, եթէ ոչ էն թողլոց զԳաղիկ ի տեղի իւր,—գրում է ժամանակակից Արիստակէս Լասարիփեղոսին,—յոռաջ կ'ացնաւ առ զքանալին Բջնոյ ցթապարն, և զամենմայն զիւր հայրենի ժառանգութիւնն, և մեծարեալ ի նմանէ՝ առնաւ զօլտաւր մագիստրոսութեան, և զանդիս ընակութեան ի սահման Միջագետաց գետոյ և ցաղաքս, գրով և ոսկի ժառանգաւ յաղգէ յաղգ մինչև յաւիտեանս:¹

Ինքը Գրիգոր Մագիստրոսը Պետրոսի Կաթողիկոսին ուղղած մի թղթի մեջ (Գ, էջ 123) իր այդ արարքն անվանում է «անտեղի մոռնութիւն», այսպէս գրելով. «Արդ ճկ դու, մի գերակատարդ իմաստից, ահա զիմայ անտեղի մոռնութեանս, յորս անկայ փորձութիւն տուել քան զգոռօթականն, յորս ոչ բարեբշնիկ գոյ նմա եւսա հանդէս. բայտ որում որ ի գոհնիկս պատմի տաակեալ՝ արտուտի զգուշութիւն. երկնի յատորս կործանիլ, և նա անկեալ տորոտ յորսայտ, զոտն ի վերայ յերկին շանայ կորկուտել, զի մի երկին յերկիր անկցի խափուցեալ ի պարսաւ առեալ ոմանց թէ՛ Որձի մղէ ծնգօք ծառանաս, ծօրիկ, ցո ծովդ խելօք: Պատասխանեալ հուշասաց. Որքան կորեմ, զայն առնեմ: Արդ իմ մղէ ծնգօքն է... Սակայն յուսելով ի Տէր և հաւատարմով իբրեւ անտուտ խոստմանց, յարեայ ահապարեալ քաջագոտի գտեալ՝ ի սեղանական հասուցի հայրենի, զոր ի բազմաց վաճառեալ և ծախեալ, և այժմ հայածակուն լեալ փախչի՞մք: Տէր արասցէ դառաստանս: Գրիգոր Մագիստրոսն, ուրեմն, չի կարողանում գեղն առնել հայոց թագավորության անկման: Թեպետ և նա մի րոպե հավատում է խոստանքներին, հաժանաբեւ, բիզանդական կողմից, և այս ժոպին նուշիակ իմաց աւուր համար շատով մարդ է ուղարկում հայրենիք: Բայց վերջինս արդեն վաճառված էր շատերից, եվ ոչ միայն այդ. նա ընկնում է «փորձության» մեջ. նա ևս ենթակա է լինում նույն վիճակին, ինչ որ հայ իշխաններից շատերը: Նա ևս ստիպված է լինում իր ծախված հայրենի երկրից դուրս Թալուս Այգ ժոպին նա խորին արամությամբ հիշում է իր Թղթի մեջ:

Նա 1048 թ. ուրիշներ ճետ արեւելք է ուղարկվում Թուրքերի դեմ երկրի սահմանները պաշտպանելու, և կարգվում է Միջագետքի—հեռո նաեւ Վասպուրականի, Բերկրի, Արենջի, Մանգլիքաի ու Տարոնի—կառավարիչ գաւթս («կիտան և դուկ») կամ ըզեշխ կոչումով: Նրա «մագիստրոս» պատվանունը ոչ թե մի գիտական տատրճան էր այն ժամանակ, ինչպէս այժմ, այլ Բիզանդական կայսրության մի պալատական տիտղոս էր ռազմական գծով: Գրիգոր Մագիստրոսն, ինչպէս իր Թղթերից երևում է, շատ բարեկարգություններ է արել իրեն հանձնած մարզերում, բայց միշտ ցանկացել է թողնել իր վարչական գործը և միայն գրականութամբ զբաղվել: Կայսրը, սակայն, չի արձակել նրան իր պաշտոնից: Իր ըզեշխության ժամանակ նա հաճախ եղել է Տարոնի ս. Կարապետի վանքում, ուր նրա համար կանգնած են եղել ապարանք և զղարց: Նա վախճանվել է 1058 կամ 1069 թ.:

3. Ուսմամ Ծրագիրն բայտ Գրիգոր Մագիստրոսի և Որս քարգմանու-

¹ Արիստ. Լասար. Գաղութիւն, Թիֆլիս, 1918, էջ 62

ԻՅԱՌՅԻՐ:— Բայց որ աշխարհակառկաների մեջ առանձնապես փայլում է այդ Գաղաթմաշի իշխոնը, մեր վաղ վերածնունթյան շրջանի լավագույն ներկայացուցիչը, իսկական լուսավորական գործիչ, նա ոչ միայն ուրիշ-ներին հորգորել է գիտաթյամբ պարզելու և պարզից ունենալու, այլև ինքը շաբաթակ մերով և տխունջ հետևել է զրան՝ նշանաբան ունենալով «պատարուն ընթերցմամբ», «գիտաթյամբ լուսավորել գանձնա: Նա ունեցել է իր պարզը, նամակների մեջ գիտում է աշակերտներին խրատներ տալով նրանց, հույսերի հանգիստներով (գլխ հեղզս ուսանց յաշակերտացն, որք ուսանին գիտաստափրութիւն»): Կամ անկեղծ ուրախանալով նրանց առաջագիտութեան համար:

սխիւքաղարակեմ կարենակերտութեան բարորոյմանց և դատադոժեանցն, Ուրեմն չորս կարգի ուսում, որոնցից երրորդն են Պրիս-տատեխնուր: Բայց այդ, այսպես ասած, բարձրագույն շրջանի դասընթացն է: Գրանից տառը հարկավար է ուրիշ բաներ սովորել:

Նախապես քան դաստիարակ կրթեցելովք ներկուս վերնաուսթեմբ զհիմ և զնոր կտակարար, և առատելով արժանութիւնս ի բազում և զանազան աւելիս եղեալ զորքանութեամբ արաայայտել հաւանիք, և ի խոյզ ելանել շեքմագոյն և քաջողակտն խոհակնութեամբ և արամարանական հասուածոց հոմեքակեմ և պղատումեկան նախասականին և այլոցմ քոյր արեհետից և մտեհից, Զի յամենայն իմաստասէրն խոստովան լինի զգիտութիւն և ուր-ցեալ զանգիտութիւն մանաւանդ ըստ կարողութեան բառիցմ արեհետից՝ քուտեակ, երաժշտակեմ, երկրաշափակեմ, աստեղարաշխակեմ: Այս էլ, ուրեմն, առաջին շրջանի դասընթացն է: Ուսումը պետք է սկսել Ս. Գրքի ընթերցանութեամբ և առատելով արժանութեամբ, ապա հոմեքակտն ու զգու-տունական և այլ գրքերի հաւանութից հետո ճշորս արհեստներն՝ թվա-բանութեամբ, երաժշտութեամբ, երկրաշափակութեամբ և աստղարաշխութեամբ, և նոր անցնել երկրորդ աստիճանի ուսման, որ է՝ քերականութեամբ և մյուսները:

Այս միեւնոյն խնդրի մասին նա խոսում է և ուրիշ տեղանքեր. այս-պես, օրինակ, Բ Թղթի մեջ, էջ 8 և հա. ասում է, թե ովքեր առաջուց այդ ուսումը չեն աւել, նրանք չեն կարող սովորել բառաւածարանութեան, այսինքն փոխադարձութեան բարձրագույն ուսումը: Վրանգի պարտ է նախ ի բնութանականէն [= ֆիզիկայից] յուսացնականն [= մաթեմատիկայի] ամբարանել և առաւելաւ աստուածականն [= փոխադարձութեամբ և աստուածու-մանին]... Նւ Պրատն իսկ զգոյացուցանէ այսպէս յիւրումն աստուածա-բանութեանն՝ Անեղկրաշափական ոք մք ներմանեացէ զայստիկ ասելով: Գի մք ոք անկատար ի քուտիցն ենթակայէ [= քուտիցն արհեստից] մտցէ ի լսարանն, քանզի բնատրեալ էր հրաշալին այն միայն աստուածաբանութեան զարարելը:

Գրիգոր Մագիստրոսն ուսման ծրագրի մեջ դնում է, ինչպես տեսանք, և բառապելով արժանութիւնս: Հայերեն բառապելը բառը նշանակում է և՛ գրույց աստուածների ու զիցազների մասին, և՛ աստիճանաբար սովորական իմաստով: Գրիգոր Մագիստրոսն այդ երկու նշանակութեամբ էլ հասկանում է այդ բառը: Անաստիանիւրի համար նա իբրեւ աղբյուր գրում է՝ «Ի բա-զում և զանազան աւելիս եղելոյն: Ուրեմն դրանք պետք էր վարժութեան հա-մար քաղել ամեն տեղից, ուր կային այգիսխիւները, ոչ միայն գրքերից, այլև ժողովրդական ավանդութեանից: Նվ ինքը Մագիստրոսն աշտարի է եղել թե չի գահեհիկա պատմված ուսանելին, ինչպես վերևում բերված ծոխ ասանէ, և և թե այլ բանաշարական երկերին, ինչպես և Արամայիս Պր-թիկ (Արամայիսն) չի գահեհիկա աւանդեալ հանրածանոթ խոսքը, որ ծա-ղում է դիւն Վիպասանքից (Թուղթ ԼԳ, էջ 87, «Ո՛ր տայր ինչ գծախ ծխանի...»):

Ուսումը լինում էր հայերեն, հարկավոր էր սենենալ հայերեն լեզվով

գրքեր. Գրո համար կային հին թարգմանությանները, ինչպես՝ Ուրմախի-
նասի առակները, որ հիշում է Մադիսարոսը (ՄԸ, էջ 133), Կար և Անանիոս
Շիրակացու «Մեծ Գննիկոնը», «յորում մթերեալ են,—ասում է նա,—ազորք
աստուածային և ենթակայացեալ ամենայն արհեստի մակացութեան և
նախադասեալ է թուականութեանն և երաժշտականութեանն... երկբաշա-
փութեանն և աստեղաբաշխութեանն... և զկնի այսոցիկ յարմանեալք ար-
հեստք և մակացութիւնք, մասնադրութիւնք, և գրէ եթէ ամենայն բոլոր
վարժումն հոնտարական» (էջ 8)։

Գրիգոր Մադիսարոսն ինքն էլ աշխատել է ուսումնասերներին հոր-
մարություն ընձեռել սովորելու. նա արել է հին Գերականի մեկնությունը,
որով հետագայ դարերում ուսուցիչները սովորեցրել են աշակերտներին. նա
իւր ձերության հասակում, Միջագետքում վարած մեծ պաշտոնի օրերում
էլ շարունակել է թարգմանության գործը. «Ոչ եմք երբէք դադարեալ ի
թարգմանութենէ ևս. բազում մասեանս, զորս ոչ եմք դաեալ ի մեր լեզուս՝
զերկուս մասեանս Պատմոսի, զՏիմէոսի արամաբանութեանն և զՓեղոֆի...
և զայլս բազումս յիմաստասիրացն... և զերկրաշափականն զԵկիղոսին
սկսայ թարգմանել. և եթէ տակաւին կամեսցի Տէր երկարաւալ մեզ ի
կենցաղուսս, բազում հոգս յանձին կալեալ զմնացեալսն բոլոր՝ Յունաց և
Ասորոց թարգմանել ոչ դանդաղեցայց։ Եւ կորօրիմք ընդ մերձ իւր մեզ
զգնականութեան այսպիսում իրողութեանց» (Թուղթ ԻԱ, էջ 66), զրում է
նա իւր բարեկամ Սարգիս վարդապետին, որի մօտին հիշատակությունն եղավ
վերահաս։

4. «Թիքբերս».—Գրիգոր Մադիսարոսի Թղթերն ունեն վերնագիրներ,
որոնք ծագում են համաժողովի կամ հեղինակից, կամ նրան մօտիկ մարդ-
կանցից, քանի որ վերնագիրները գնդակներն իմացել են, թե ինչ առթիվ են
գրված և հւստ են ուղղված այս կամ այն Թուղթը. Գրության բովանդակու-
թյունից միայն երբեմն չի իմացվում այդ Հեղինակը գիտության մարդ է.
նրա այդ գործերն ումենից առաջ ունեն իւր ժամանակի համար գիտական,
մասնավորապես պատմա-հասարակաւան արժեք։ Այստեղ կարեւոր չէ դրանց
բովանդակությունը մի առ մի թվել, այլ այսքանը միայնդ որի առիդ, որ
այդ գրությունները հաճախ վերաբերում են գիտության և ուսման, ալլի
են ընդարձակ ծանոթություններով, որոնք արգասիք են գրողի երկարամյա
բազմակողմանի ընթերցանության։ Կան նաև կենցաղական բովանդակու-
թյամբ Թղթեր։ Սրանց մեջ նույնպէս հեղինակը հանդես է բերում իւր հա-
րուստ գիտանքները զանազան նյութերի մասին, երբեմն այնպիսի մանրա-
մասնություններով, որ հիացնում է ընթերցողին։

Նրա Թղթերով մեր գրականության մեջ մտել է մի նոր գրական տե-
սակ—Օսմականի ասածը։ Արդարև հայտնի են մեզնում «Գիրք Թղթոց»
ժողովածուի մեջ եղածները, բայց դրանք պաշտոնական պրություններ են
որեւէ խնդրի առթիվ. մինչդեռ Մադիսարոսի Թղթերը մասնավոր նամակներ
են, որոնց նամանքը չեն պահված կամ երևան չեն եկած մեր գրականության
նախորդ լըջանից։

Նա ունի գրելու իւր հասուկ եղանակը. Պետրոս կաթողիկոսին ուղղած
մի նամակի սկզբում (Ա, էջ 3) գրում է. «Թէպէտ և ըստ գեղեցիկ խնդրոյ

քում լուսավորւածն, պետականի բոլոր սրբազանից և զմեռն առաջնական, պարտ վարկանիս երկարագոյն նարագոյն բանն իմաստասիրել ծառայի քում, որով զտարճանաս իբրզոյս ի վերայ ողջոյ, սակայն սիրելի է ինձ միշտ կարճատեղ հասանելը՝ Վասն զի զբոլորն մասն միակի—սպարակի գրավանդակն պարտ է զսպարակի նեղեցն թէպէտե մասն զայլ, եւ իմաստասիրն մի բան բաւական է զբիւրս բերել զկնի հետեւարքս: Կաթողիկոսն, ուրեմն, պատշաճ է համարել, որ Մագիստրոսն ավելի երկար ժամատասիրիս նորագույն բաները, բայց նրա համար սիրելի է եղել կարճատեղ գրելը: Վասն զի,—ասում է նա,—ինչպէս մի հոտ ուղիղ գիծը ցոյց է աւելիս ուղղանկյան [քառակուսու] բոլոր ամբողջութիւնը, նախպէս և հասկացողի համար մի խոսքը կարող է եսելից իբրեւ հետեւութիւն շատ խոսքեր բերել: Ահա նրա հորինելու հիմնական ձևը—կարճատեղ գրել, մի որն է զիսական կամ ալլ օրինակով բացատրել տաժը, Կարճատեղ թողնել ընթերցողին լրացնելու: Բայց նա երբեմն բովանդակ երկար և ընդարձակ էլ է գրում:

Հետաքրքիր է վերնում ընդգծված ժամատասիրիս բանը, որ այս գիտուն հեղինակը սովորաբար զգրածում է իբր զբաններ իրականութեան համար: Դա համապատասխան է հռչակներին ֆիլոսոֆիոյ բային, որ նշանակում է՝ սեր ունենալ գեղի իմաստութեանը կամ գիտելիքները: Գիտութեան գործողութիւն, գիտութեամբ պարտելի, իբր գիտանքները կիրառելի, ստանձնատեսութեան անելի, եւ Մագիստրոսը միշտ ժամատասիրում է: Կարճատեղ գրելիս թե ընդարձակ՝ նա միշտ երևան է բերում իբր բարձրագոյն ծանոթութեանը: Այդ բանի փոխանակ նա զգրածում է նաև պոետիկական (փե, էջ 50). «Երեկ զկանչեցն իմաստասիրիս քեզ ... շատեցեալ ... Այժմ գիտնորոցս կամիմք քեզ պոետիկոսել: Եւ բերում է զանազան մասնագիրներին անգիւլութեանը խնամքի մասին:

Ամենից շատ սիրում է նա հին հունական առասպելները, գիցարաբնութեանը: Դրանց կիրառութեամբ նա նախնակ գերազանցում է կեզնդապական կոլոված գրական դպրոցի հեղինակներին, Հիշում է զդրանց սովորաբար կարճատեղ, երբեմն ավանդականով: Այսպիսի գեղեցիկում մեզ համար այժմ երբեմն անհասկանալի են մնում նրա գործերը, երբ չգիտենք այդ առասպելներին բովանդակութեանը, կամ հին առավանդների բնորոշ գծերը: Նույնպէս անշուշտ եղել են զբանք նաև Մագիստրոսի ժամանակակից հեղինակներին շատերի համար, բայց ոչ այն անձերին, որոնց ուղղել է նա իր նամակները: Նրանք պէտք է մի բան հասկնային իրենց թղթակցի գրածներին, թե չէ՝ նրա կողմից զգրված կլինեին ծիծաղելի գրութեան մեջ:

Բերենք զբո համար իբրեւ օրինակ սկզբի մասը ԻՐ Թղթի, որի վերնագիրն է. «Ան վարդապետն Սարգիս առաջնորդ աշխարհի Սեանայ, քանզի գրեալ էր Գագիկ առ վարդապետս այս, եթե եկեսցես առ իս և ի մասին զրոց պարտակեցուցա: Գագիկը, զո Գագիկ Բն է շատ երիտասարդ և գահազուրկ ժամանակ, քանի որ Մագիստրոսն իբր նամակի մեջ նրան բանալի է անվանում և նամակի սկզբում գրում է. «եկալ հասալ մեզ մաս մեր առաջվա եղած [եբերեմի] արքայից ուղարկված ժողովը, որին նա ուղարկել էր քեզ մոտ: Բերենք սակայն բնագիրը. «եկն եկա առ մեզ յգեալն ի մերայ նախուսան ելոյ արքայէ, զոր առաջեալ առ քեզ, սրբա-

դանդ և գերակաւար բոլոր ճեմարանի Արամեան ազգին և քրիստոսական կրօնիւք և կուսական բարբիտնիւ սաղարթացեալ, որ և ինձ յոյժ ըզմալի և յոյս բարեապ, Այլ մեր յոյժ երկիւղի եղեալ՝ տապ տաղնապի տարակուսանաց հասանէր, յորժամ գտանէս համբաւոյ հրոսակք նախընթացից ազգեցին մեզ, ոչ ուղղախոսելով զԳորոտնս Գրիգորն մեզ ծանուցին, զոր մեր երկկիւղի կտակածանաց եղեալ նախուրոյն այն կապտողի և յեղուզակի, ասեմ՝ զհարկ կրկին մասնեաց Տէր գտունս Մամիկոնեան և ձեռս նորայ։ Եւ ահա կարծիս կասկածանաց մեզ եղեալ յԱշոշյատայ դից զհրացանական դիւռեան յարձակման, զուցէ սահպարտամետականին խզեալ կապտաց, կամ եթէ իդձք կիւսոյ հմայից գիրթութեան՝ իբրու առ ի շաղոթի յարուցանեն զՄամուէյ, կամ շուայտական շիղարացն յարս շամանդազեալ շահանան ի վերայ մեր։

Մինչ յայժմ կար զարեւոտման, վտանալ վտանոք և ողորտագինեալ անարի նիդակոց, պատախտի յուզական շիկորական որակեալ, ուշ եղեալ առ նախընթացն Ամլածին և ի մերն Պարթև՝ օգնականութեան կարօտեալ։ Իսկ յայժմ եղեալ հանգիսի, ասեմ զԳրիգորն եղեալ առ Գորոտն, և ի Դիոնիսեայ զմայրեալ, ասորորակ կայծակացեալ հրադիմական կարծրութեամբ, և զթեալ Գորոտն զայթակղեալ, զողակտորեալ զԳրիգորն։ Սակայն ծանոյց մեզ զճոյշ օղջութիւն, և զաւետեացն ձիւր զմտ շնորհելով, վերջնանուանի՝ առ քույր առաքեցաք սրբութիւն։ Եւ այս աջացան զոհնորէն և անկոյի կարկառուն բան կատակական (էջ 66 և հտն)։ Այստեղ կտն աղնարկներ և հայոց պատմութիւնից, և՛ Ս. Գրքից, և՛ հունական զիցարանութիւնից։ Որպեսզի ընթերցողը հասկանա յայդ զկատակական խոսքը և հոճույք սառնա դրանից, նա պետք է գիտենա, թե՛ ի՞նչ է եղել Գրիգորն (իսկապես Գրիգորն, Սյունիքի իշխանը, Վահան Մամիկոնյանի հակառակորդը, որ անցել էր պարսիկների կողմը և մարտերից մեկի մեջ սպանվել)։ Նա պետք է տեղեկութիւն ունենա Աշոշյատի առաջնների, Սահպարտեանների, վհուկի միջոցով Մամուէյի հարուցման առասպելի մասին ըստ Ս. Գրքի, այլ և շիղարանների (առանձին ոգիներ են) մասին։ Նա պետք է իմանա, թե՛ ի՞նչ են հախընթաց Ամլածինը (Ս. Կարապետ Հովհաննես Մկրտչն Ամլուղի), ժմեր Պարթեւը (Գրիգոր Լուսավորիչ), և Դիոնիսոսը (գինու առավածը, Վիտինիսեայ զմայրեալ = հարբած)։ Սարգիս վարդապետը հայաց պատմութիւն և Ս. Գրքի վերաբերյալ աղնարկներն անշուշտ շատ լավ գիտեր։ Բայց նա անպայման ծանութիւն Սյունի և Դիոնիսոս (— Բազոս) աստուծու մասին։ Նա մի հայտնի գիտնական է եղել, Մագիստրոսը նրան անվանում է զգերակաւար բոլոր ճեմարանի Արամեան ազգին, ժմակացու բոլոր մակապութեան (— անդամկ մեծն գիտութիւն), և Գագիկը հրավիրել էր նրան միասին գրականութիւնը պարագելու։

Թղթի զվարճարանական առաջարանից հետո՝ Մագիստրոսը ծագում է Գագիկին ըստ երևութիւն նրա հոմար, որ նա կնոջից բաժանվել է ուղեցել զբա մերոյն Պարթևին (այդ մասը մութն է)։ Եւ ապա մի մեղոյն բժշկական տեսութիւն է տնում նա կնատեսիւն մասին՝ հիշելով հայն բժիշկներ Հիպոկրատեսին ու Սիսալիոսին, և զարձայլ հունական զիցարանութիւնից Պառնաս սարն և մի առասպել Դիոնիսոսի և Ապոլոնի վերաբերյալ։

Վերջում նա ցանկութիւն է հայտնում, որ Սարգիս վարդապետն իր

ուղեորութեան ժամանակ նախ հանդիպի իրեն՝ Մագիսարոսին, որպեսզի,—
ասում է նա,— բառ միմեանս զգեղեցիկ հակառակութիւնսն ճեղքեմք իմաս-
տասիրելու: Այդ արդեն կնշանակի, ըստ հին հունական փիլիսոփայութեան,
շխման իրարմարման հակադրութիւնը, որ է զգիմարման—արամա-
թոսութեան վարելով վիճաբանել երկու միմյանց հակառակ պնդումներէ
շուրջը: Մեր բարոյաբանութեանն բառը, որ այժմ ստացել է շրջակա
բառի իմաստը (շրջակա—հնուն թարգմանել են բրանկանն բառով),
հին ժամանակ ունեցել է զգիմարմանի վերանշարժումը դրված նշանակութեանը:
Ինչպես երևում է, Մագիսարոսի և նրա ժամանակի գիտնականները համար
սիրելի է եղել արամաթոսութեանը, որ նա հիշում է իր նամակների
մէջ, Օրինակ՝ ՄԳ (էջ 124) Թուղթը (Ան երաժիշտն Դանիէլ) սկսում է
այսպէս. «Ձեռքս ածի զՊորփրէութիւնս, զորմէ յիշատակեալ մեր յետն-
դեանն արամաթոսութեանն, և գիտեմք, զի տարակուսանս իմ սակաւ
տաղի մեր սփռեցաւ: Եվ հետո պատմում Պորփրէութիւնսի առաջաւելը»:

Մագիսարոսը չի մտածել զրաւան դրծ կատարել, այնպէս զրել, որ
իր թղթերը գրական-զեղարվեստական արժեք ունենան: Նա գրում է մեծ
մասամբ անսեթեթեթ և անպաճույճ, Գեղեցիկ հորինելու միակ ոճական եղա-
նակը, որով ազդել է ձգտում նա, է՝ համանշխորի կուսակցութեան բաղաձայ-
նութեամբ—բաղաձայնների հանդիսութեանը: Բայց և այնպէս նա կարողու-
նում է իր նշանքը սովորաբար հետաքրքիր դարձնել՝ ճարտարութեամբ համե-
մելով այն՝ նմանութեաններով, գրույցներով, առաջաւելներով և ասակ-
ներով: Առանց զրան էլ՝ թղթերի մեծ մասը գրավիչ ու զեղեցիկ են: Այդ
առաւելագոյն նրանից է բխում, որ այդ փոքր երկերը մասնավոր նամակներ
են. զրոյն իր անձը չի թաքցնում երբեք: Նա ինքն անմիջականորեն շատ
կարկառուն, կենդանի ու եռանդուն հանդես է գալիս իր հայացքներով ու
զարգացումներով, իր կարծիքներով ու զգացումներով առ այն անձերը, որոնց
ուղղում է իր խոսքը, կամ վերաբերմամբ այն անձերի և նշանների, որոնց
մասին գրում է: Նա երբեմն շեղումներ է անում կամ արագ թուշում է ուրիշ
խնդիրների, բայց չի մոռանում ընդհանուր կապը: Ահապարտել նա հուսա-
դրում է իրեն կամ իր բարեկամներին. հաճախ դժուր է կամ պարսպաժուժ
ժողովում ու հեղծում, երբեմն էլ զուգահեռաբան անկոփ կարկատուն կատակական
խոսք է հորինում միայն զվարճանալու համար առանց որևէ ուրիշ նպա-
տակի:

Ուրիշ գեղարւմ (Ը, 29) նա լուսաւնք է թափում կաթոլիկոսի դեմ ըմբոս-
տացած մի եպիսկոպոսի դէմքին. «Ձերմարդ սկուռնն այն առ ուրիշ համար-
ձակելու, և յախնա առ հար գմբէնայն և զհակառակելի ինքզնի, և գիշերա-
յանու բուն առ արեւուն ի տունջեան մըցի, և շուայտացեալ շունն այն
առ տէր իւր մատչի: Եւ ապա բացատրում է, թե ինչու. «շնականն իմաստա-
սերներն այդպէս են կոչվել: Առանց ճաշկելու նա քննադատում, դիպչում
է նաև իր բարեկամ մեծերին, ինչպէս, օրինակ, այն ժամանակ հայտնի
Եփրեմ եպիսկոպոսին, որ իր գործակիցն էր Թոնդրակեցոց աղանդի վերաց-
ման ժամանակ: Նրան ուղղած մի նամակի մէջ, որի վերնագիրն է՝ «Եթե-
ղազս նոանց բուն կատակական առ Եփրեմ եպիսկոպոս Բիշուայն (ՄԸ, էջ
121), Մագիսարոսն ի միջի այլոց գրում է. «Այլ ինձ ոչ սակաւ եհաս հիա-

ցումն համարողութեանդ քո՝ երկրաշափականն համարձակելոյ մասնելդ և զմեզ շարժելոյ Ահա զորէն ճային Ուրմարանեայ կամ ասացեալն թէ ճանճն ճոխացեալ ճողողորեալ կամեցաւ զճաշակս ի ծամելեայ առիւծուն, ի քուն զնոյ գետեւ զոր, աշար անդր զագին գալարեալ, հողմահարելի ի բաց մզնալ. և ոչ ոստուցեալ թոշունն արասկայիլ, Ապա կռնեաց կեռեօքն կափել կոկորդակոյ կասեաց ընդ ժանեօքն, և ժողտեալ, զոմանս եթող կիսամահ ընդ անգունսն զերծեալք. զոր ի դատաստան մահալ Ակկարոյնեան ճանճիցն, ճննճերելով ճամեալք ճողողարանն զճաշակաց առիւծուն. զոր ոչ ընկալեալ իրաւունսն ի Կրիտալէն Կրեւացի ասէ. Ե՛մանճիկ, ի ճոխ առիւծուց ծամելիս մի մտաներ, յորժամ ի ճունս մտանէ, եթէ ոչ՝ ճմիւս, ճողճողայ, շատ ճննճերաւ ի ծանկն, ի փեթմակն, ճանճիկ, անդ ազաւ, բզզաւ և յարքունիսն մի երթարձ, Արդ՝ ի խուղն, ի խմցն, ի խճիթն, անդ սողմոսէ. Նուազել ի ճնարանսն մի ճնալիք, եթէ ոչ՝ ճանճին ալս ճմիւցձ, Ուրեմն եղիսկողոսին առկով հասկացնում է և անգամ պարզապէս գրում է, թե՛ Գո բանը չէ համարձակել թվարանությանս և երկրաշափությանս մեջ մտնելու և զիտուությանն ճնարանում նվազելու, այլ զու մարի խուց, խուզ, խրճիթ և սաղմոս ասա, եթե չես ուզում ճանճի պես ճմիւլել:

Մագիսարոսը կործեն շատ անգամ առիթ էր փնտրում՝ իր հմտությանը, իր ունեցած գիտանքները ցուցադրելով զգալի դարձնել իր գիտական առաջնությանն: Այսպէս, օրինակ, Սասունի Նշանավոր իշխան Թոռնիկ Մոսիկոնյանին (որ իր փեսան էր) գրած նամակներէ մէջ (ՀԴ—ՀԷ, էջ 212—225), Այս իշխանը խոստացած է եզել կարմրաթոյաններ ուղարկել Նրան, ըսյց ուղարկել է: Մագիսարոսն առաջին նամակով շատ ուժեղ ծագում է Նրան՝ հիշելով մի քանի աստուղիական ձկներ կամ ձկնակերպ զգումներ և ասելով, Թե ինքը քաղցած մնալով սղոսում է մեծ խնջուքի և ձկնից պատրաստած կերակուրների. «Մոպէս կամելով մեր դոյզառած կիտին, զոմանս ի յամուրս հարեալ ի վերայ Հեփեստեայ, զոմանս ի սանի Պոսիդոնիւ ամոքեալ, և զոմանս ի ստղակի արամագրական մակերդուտ ելով ելլադացի իւզովք, և զոմանս ծագեալ ի մէջ Դիւայ, պարապտեալ արմատց, քառանկիւնի և ուղղանկիւնի յարամանեալ ըմբոն, և զոմանս գծորէն կտապըս, և դաբձեալ խորատկեալս մանրագոյն պարսկական խորտիկս, և զայս ուրկացեալս ոսկէտեսակ քրքով, ուտին մոկասասար ուրկեալ և ոքսեմելի: Աւայտեքի յանհատան վարին դյատուկան յանուանէ Թուելս: Թոռնիկ Մոսիկոնյանն անցած է եղել հունագալմեության, որ չէր արգելում պաս օրերը ձուկ ուտել: Այդ ծագրելով՝ Պահլավունի իշխանն իր նամակի վերջում գրում է. «Եթե զու Մամիկոնեան, որ ամոքեան հաւանեցար Դեռոնեան ընդտրականագոյն տոմարի, մ յոք ի քէն աշտմ կտրտացէ կորգել զուղակս, զոր Պոստոս և Ովկիսոսն ոչ հանգստեմէ կերակրել: որ և զայլոց ոմանց պատրաստեալ կերակուր յափշտակել փութայք՝ զթուջոց և զգեռնոց, որպէս գիւնս և զքառաձէս և զճասանդորտ և զկրայակիրոս և զայլ զբերս 'ի բզզոց անդարդ դեռուն: Բայց զու փութա գիտացեալն առաքել, թէ ոչ՝ զկնի աշարմ նամակի ճանկոցից քեզ ճարտասուն բանիւք ճայթմունս ասասուեթան, զի ոչ քաղցրասցի ի կոկորդս քո պարարտութիւն կարմրաթոյսիդ: զի ոչ միտն զայդ, այլ և զոմանայն դեռունս և զբզգանս և զճնիս, զոր

յուրքութու ճաշակեալ է քո, տաղտկացեալ ախոնդեացի զօրէն Կոռնեայ ժայթ-
քեալ արտաքս բերցես: Վերջապես Մամիկոնյանն ուղարկուի է կարմրա-
թալաները և խնդրում է նրան ժամատասիրել յազազս ձկանց: Եվ նա
զբուսի է առաքելական ձկների կամ ձկնակերպոյնների մասին զրուցոյցնէր
Թովով ասաներկուսից ավելի: և դեռ վերջն էլ կցուսի է. «Ենայցանէ յոլովա-
ղայն ինձ մակագրել քեզ՝ ոչ զժուարին էս»:

Դարի արդեն փոխված ոգու տեսակեացի տէրի է ընկնում ԼՁ Թուզ-
թը (էջ 89), «Առ Հնձաքին Գրիգոր Տելեախս սակս որոյ էլ ի վանաց և
չուգու ի լեռան Վարազայ»: Սա այն կրօնավորն է, որի մասին խոսվեց
վերևում:

Ինչպես երևում է, նա, նախ քան Գարս ուղարկվելը, Թողել է վանքը
և գնացել Վարազա լեռը միանձնական կյանք վարելու: Մագիստրոսն այդ
առթիվ ժամատասիրում է՝ մի շարք լեռների մասին և հետո դժգունում է,
որ շատիկ Աստուծոյ փախչում են լեռները, մինչդեռ ինքը Հիսուս լինում
էր ժողովրդի մեջ, և եռչ միայն ի լեռին կարող եմք զաստուած բանն ի
մեզ ընդունել, այլ և յամենայն տեղում, —ասում է նա, և գրութունը
վերջացնում է այսպիսի մի ծաղրով առանձնական ճգնավորների. «Այլ եկն
առ մեզ նման կյանքառէ կեցեցեալսն [—գանգատական] արուսնջ տոչո-
րեալ արտի՝ յեղանց, յեղջերուաց և ի բոլոր գաղանաց, եթէ ելեալք ի դրսե-
ռէն՝ զմեզ ի մերոյն սեփականէ արտաքս հանին, իսկ Դուքայ մեզ ի լեռնա
հրամայեալ կալ. այժմ և անառատ հալածեն: Երեւի արտաքոյններից
մեկը զրեւ է այս ըսցատրութիւնը. «Հանաք և անաղ առնէ զգնացողս ի
լեռան, ասելով անբանից, թէ ի դրախտէն հանած վարանքն եկին լցուան
ի լեռինս և զմեզ պէհուղուր անեն ի քնակութիւնս մերս: Գրիգոր Նարեկա-
ցու որով մի բարեպաշտ մարդ չէր կարող շինեալսններին, այսինքն
լեռը քաշված ճգնավորներին, այլն ու ծանակ անելով՝ հավասարեցնել
վայրերի անասուններին ու գաղանքներին: Դա նոր աշխարհայեցութիւն
արտահայտութիւնն էր, —որ երևում է մինչև անգամ Թոնգրակեցիների
դեմ զօրծող Գրիգոր Պաշտօնունու Քղթի մեջ. «Բայց այդ աղանդի բարձ-
ման ժամանակ էլ նա ցույց է տալիս մեղմութիւն: «Ո՛յ զոք Պատեցաք
մարմնակն պատուհասիւք, —գրում է նա պարծանքով. —Թէպէտ և յօրէնսն
հրամայէ զվերջին պատուհասն կրել նոցա. որպէս և նախ քան զմեզ բա-
զում զօրավարք և պետք ի սաւր սուսերի մասնեցին զնոսա և անողորմա-
բար ոչ ինայեցին ի ներս և ի մանկունս, որպէս արժանն էր. նաև մեր
ճանաչապետք ի կիզումն դիմաց և ի զրաշտագուեսակերպ (ԳԷ, էջ 162):
Այսպես վարվել էր հենց Մագիստրոսի որով Սարգիս կաթողիկոսը:

5. Գրիգոր Մագիստրոսի լեզու, առանձնապես Քղթերի և միջանի
չափածոների, իրավմբ համարվել է ընդհանրապես խրթին և շատերին
անմասնելի: Այդ առաջնութիւն է առավելապես այն հատկութիւնից, որ նա
զօրեմեք է բազմաթիւ հունաբան կաթողիկոսմբ բռներ, որոնք չեն ընդ-
հանրացել մեր նոր լեզվի մեջ, աւստի այժմ մեզ համար անհասկանալի են
միւսմ: Այդպիսի բռները ձգուում են կամ հին հունարան գրողներից, կամ
Մագիստրոսի իրեն կազմածներն են ըստ հունարենի: Մեր նոր լեզուն չի
յուրացրել այդ բռները, զի դրանք գտնվում են փոխաբայական և այլ

մասնագիտական գործերի մեջ, որոնց ընթերցումն և ուսումը կարևոր չի համարվել մեր նոր դպրոցներում: Իսկ Մազիսարոսը սերունդ է հենց այդպիսի բառերի հաճախումով մեր նոր լեզուն աշխարհի լեզուների հարմարավոր բառեր, կոմ եթե չունի էլ՝ զբանց կիրառություն կարիքը չի զգում: Կան, հարկավ, և այնպիսիները, որոնք թուրքական ավելորդ են, որինով՝ մեկացումը—գիտություն, մեկացում—գիտակ, գիտացող, տեղյակ¹:

Այս հեղինակի լեզվի մթնոլորտն մի պատճառն էլ այն է, որ նա գործածում է երբեմն բառերն այնպիսի նշանակություններով, որոնք չափազանց հնացած են և զբաղեցրած լինում են, որինով՝ «տախտակ» բառը «գիրք» բառի իմաստով: Նրա զբաղմունքի մեջ կան նաև բազմաթիվ հնացած կամ զավառական բառեր, որոնք ուրիշ հեղինակների մեջ չեն պատահում, և որոնց նշանակությունը դժվար է իմանալ, որինով՝ «տախտակ», «շահանալ»: Եւրոպայում լեզուներում էլ կան շատ անսովորություններ—բազմաթիվ շրջումներ, նախգրքների ու հոլովների այնպիսի գործածություններ, որոնք հեռու են մեր կյանից հայերենից, որին վարժված ենք: Իրոք մասնավոր նախնիներ՝ երբեմն անփույթ են հորինված, ուստի կան պակաս բառեր, կիսատ մնացած խոսքեր, որոնց թերությունը, սակայն, կարող է բնագրի աղճատումից ևս առաջացած լինել: Մի կողմ թողած յուրահաճական մտածություն մեկը, որոնք իսկույն հասկանալի չեն լինում, պետք է ասել, որ Մազիսարոսի գրածները մթնոլորտը մոզում է նաև նյութի նորությունից և անհասկանալիությունից: Եվ վերջապես՝ նա հաճախ պատասխանում է ուրիշների գրություններին, որոնց բովանդակությունը մեզ անծանոթ է. ուստի Մազիսարոսի ակնարկներն այդ մասին՝ մեզ անհասկանալի են: Դիտավորյալ կերպով խրթին է գրված նրա մի թուղթը (25, էջ 258) ԱԱ հեղգս յուսումն իմաստից, որ հայանի է իր սկզբի «Գոմագուսկան» բառի անունով: Այդ արդեն առանց իր բանավիճակն առնալու հնարավոր չէ հասկանալ:

6. Գափաճ գրվածքները:²—Գրիգոր Մազիսարոսի մեծ գրվածքը ուս-

¹ Այս բառը լավ օրինակ է, թե ինչպես երբեմն հայերենին հետևելով բառեր են կոպտել. դա պետք լինի՝ մեկ—կացութիւն, մեկ—կացու (ինչպես վերա—կացու), բայց Գոմագուսկան մեկը դուրս է ընկել: Իսկ մեկ—կացութիւն կազմված է ըստ հայերենի եղբւրե՛մէ՛ք բառի (եղբւրե՛մէ՛ք—մեկ վրա. եւսէ՛մէ՛ք—կացութիւն), որ նշանակում է՝ գիտնալը, տեղեկութիւն, անախտութիւն, մի բանի վերաբերյալ գիտութիւն: Նույն կազմութեամբ սեպտեմբեր—բայց նշանակում է՝ մի բանի վրա կալ (կապել), ապա փոխաբերաբար՝ ճանաչել, գիտնալ, տեղյակ լինել: Ինչպես նաև հայերենում ժամի մի վերայ նշանակում է՝ վրան կենալ, կապել, ապա՝ հասկանալ. հասալ լինել:

² Գոմագուսկանը իր մասնակից շատ կարևոր և նշանակալից գործ է կատարել հրատարակելով Գր. Մազիսարոսի ՎՊԹԵՐԵՐ բազմաթիվ անախտութիւններով հայերէն բայց հրատարակութիւնը դեռ բավարար չէ: Պետք է ամեն մի նամակի բնագրի համար տվել մեկնութիւններ անել, մաս ռ խրթին կտարները բառարանի, ինչպես և Գր. Մազիսարոսի գրքերում զգուշ հոգնալի բառերի ու զորքմաների համար մանրամասն բառարան գնել զգուշ վերջում: Այդ անախտական այլ բնութագրերը պետք էր գնել ամեն մի էլի ներքևում, որպէսզի կարելի լինի կազմելու անձնական հոգնալի:

³ Գոմագուսկանը Գրիգորի Մազիսարոսի Գոմագուսկան, Վնեպի, 1868: Գր. Մազիսարոսի ՊՊԹԵՐԵՐ, էջ 21 և հա., 204 և հա.:

Նավորակ՝ սովորաբար կոչվում է Հեղափոխական, կազմված է 1016 առ-
դից, ինքը հեղինակն առաջադրել մեջ (Հեղափոխականության բանիցս)
պատմում է դրա ծագման մասին: Նա 1045 թ. Կոստանդնուպոլսում շատ
օրեր զանազան խնդիրների մասին գրույց է ունենում մի արար հմուտ
բանասանգձի հետ: Սա գովում է իրենց Կոստանդնուպոլսում, թե դա ոտա-
նավոր է ժիլայոգ չափադուրիքի մասին, մինչդեռ Ավետարանն այդպես
չէ: Գրիգոր Մազիստրոսը դրան առարկում է ասելով. «Տաղանթներն
Արարացուն սովորաբար վարժապետներին միայն վերաբերում է միայն
դժի. զոր դուք կափայտեցիք: Սակայն թե համարիս գոյս մարգարե-
ական տեսությունն՝ զոր Մահմեդ ըր զքառասուն ամ դրեաց, քառօրեայ
գնազրեցից լեզ. յԱզաժայ սկսեալ մինչև ցգալուստն կրկին այնժ որ ստեղծ
գնա. և մատենագրեցից առաւել ևս հրաշալի միով գծիւ՝ յողաւորեալ նուրն
զոր գովէր զնա: Իսկ նա բազում գրաւս ի մեջ եղեալ. «Թե կարացես
առնել դու զայդ, յայն ժամ լինի և ևս քրիստոնեայ: Մազիստրոսը յորո
օրվա մեջ կատարում է իր խոսքը, գրելով Հեղափոխականը, որի վերնա-
գիրն է՝ Ան Մանուկէ:

Այդ երկը մի շատ համոզող բովանդակութուն է Ս. Գրքի. վերջին
մասի մեջ (էջ 70—73) խոսում է նաև հայոց հեղեղեցական պատմության
մասին՝ Սուրբ Գրիգորից մինչև հայերեն գրերի գլուխն ու թրգմանիչները.

Կամի՛մ աստ քեզ ասել յառաջ քան զայս ըզՊարթևին,
Զսրբին մեր Գրիգորի և ըզՀայոց Լուսաւորչին,
Դադաքաւըն Պաշտօնի և ըստ ազգին Արշակունին . . .
Անդ զիս յայս առնմէ գիտեմ ազգաւ Պարթև իմ հայրենին . . .

Ամբողջը ոչ թե բանաստեղծական հղացման, այլ լոկ սառն արվեստի
արդյունք է: Եւ այն էլ շուտափույթ հորինված. Սակայն են գեղեցիկ կտոր-
ները. սրանց մեջ լավագույնն է վերջին դատաստանի զգածված նկարա-
գիրը սովորական մոտիվով.

Ի չորից հողմոց երկնից ձայն արձակէ գրարբիւլին,
նւ զայլոցն հեշտակաց քառակողմեան հրաւիրողին:
նս անկեալ կամ զոգայով, սարսափելով վասն տոնինին,
Յայնմ աւուր ահեղ մեծին և ի վերջին հրաշարակին,
Մինչ երկնքըն դաւարին և լուսաւորքըն խափանին,
Աստեղքըն շիջանին և արեգակըն խաւարին,
Լեռնքըն հուր ծախին, երկիր գողայ, վէժք երևին,
Հրեղէն կամարն որ կայ՝ երկնից վերև այն դաւարին.
Ելանէ թնդիւն հրաշից և ցուլանայ ջրի սրբէին . . .

Դատաստանի թթոռի առաջ գուլիս կանգնում են բոլոր մարդիկը՝
հարուստ և աղքատ.

Անդ ոչ բարեխոսել, ոչ մեծութիւն թէ պատկոսին . . .
Ոչ ահալ կայ, ոչ առնուլ, բանըն կապած է հետորին,
Ոչ արեւայ, ոչ թագաւոր, իշխան չկայ յայն համարին,
Ոչ հզօր, ոչ զօրաւոր, ոչ մարտական պատերազմին . . .

Ինչպես Գրիգոր Նարեկացին՝ Գրիգոր Մագիստրոսն ևս գրղուս է՝
երևակայությամբ լսելով գոտավորի խոսքը.

Արգ զայս լուեալ դողամ և սարսափեմ հոգեմբին,
Պառէ զիս արհաւիրս և տատանիմ ի տաղանին,
Եւ արգ կամ հաբեկեալ յորժամ յորեմ վախճանին,
Եւ սնու եմ զմբողած ի կենցաղումս ցաւագին,
Սուա խաբած չոր պատրանօք և մեծութեամբ որք սովորին...

Գրիգոր Մագիստրոսը չի օժտւած քերթողական տաղանով, այլ մի-
այն վաղժ ու հմուտ տաղավաճ է. ուստի և նրա ճշգրտորոշեանն ու մի
քանի ուրիշ ոտանավոր գրվածքներն արժեք ունեն միայն տաղաչափակա-
ռեսականով։ Գրիգոր Նարեկացին արդեն դարձի սկզբում իբր Ողբերգության
մեջ, հետևելով ողբասաց կտանաց, դարձածել էր հանգր. բայց առաջին ան-
գամ Գրիգոր Մագիստրոսն է ընդարձակ չափով կերտում այդ, հետևելով
արտական կափային (ոտանավորի հանդ, այլ և հանգավոր ոտանավոր),
նույնահանգ են ետրինվում քերթվածի բոլոր տողերը։ Դարձյալ՝ մեր հին
մեծ բունաստեղծի երգերի մեջ կան երկուսը, որոնք ողված են մեծ տա-
ղերով, բայց Գրիգոր Մագիստրոսն է առաջին անգամ այդ բանեցնում։ Վի-
տական գրվածքի համար և պարզօցնում հանգով։ Այդ ոտանավորը մի սո-
վորական, ամենից երկար չափն է. տողը նորժալ ձևով կադաված է 16 վան-
կից, բաժանված չորս տողով, չորս չորս վանկերով (4+4+4+4), յոժ-
բակն բարձրացող ռիթմով։ Տողերի առաջին տեղաձևերը, սակայն, մեր հին
բանաստեղծները մեծ մասամբ կադավում են 1—3 վանկերից, որոնք առանձ-
նապես շեշտվելով երկարում և եզրամասերիցում են չորս վանկի, այսպես-
օրինակ, ճշգրտորոշեանի» սկիզբը.

Մե՛ծ եմ գործօ | տառաւածային, || ըսքանչելի | նորա բանին,
Հրաշալի՛ | անպատմելին, | յամենայնի | դարձանութին,
Այն ուր նստին | յերկինս երկնից | ի բարձրութեան | սերորէին,
Լսւա՜ն՝ | ինքնամառոյց, || պարածածկեալ | անքննելին,
Լո՛յս | ինքն առաջին, || լուսոյ բերող | երկրորդ մասին։

Տողավիջի հաստան անհրաժեշտ է, բայց ոչ՝ արդամիջի մվելի հանգը,
որ մեկ մեկ, երբեմն և հաճախ, զործածում է Մագիստրոսը¹։

7. Մագիստրոս և Պետրոս Գիտաղարձ։—Մեր այս գրողը մի քերթված
ունի՝ ուղղած առ Արշարուսի Պետրոս կաթողիկոսը՝ «Եռագոտ խաչանշա-
ղաւաղանին զոր ընծայեաց տեառն Պետրոսի Հայոց կաթողիկոսի, ասո-
ցեալ խորհուրդ խոչինչ։ Սրա վերջում նա իրեն հասուկ սուր լեզվով
մանրամասն բացատրում է այս ոտանավորի կազմությունը և՛ ոտքերի, և՛
հանգերի վերաբերմամբ. ճշգրտորոշութիւնս այս... առաջ է համեմատան քաջ
նյութաւ, և սա տաղ ղիւղաղմովս չափաբեքաւ ըստ նլլինացւոցն։ Վերջը
նա ավելացնում է, թե դա «մեծի տեսութեան ունի պէտա, և որք ոչն են».

¹ Մ. Ա. Բ. Գ. Ե. Լ. Եւսեբ լուսն տաղաչափություն, Երևան, 1933, էջ 209 և հետո։

հետևեալ արամախոհութեան՝ այս մեծի լսողութեան, դոր հազիւ հազ ոք կորսացէ ներուշեղազոյն օտանել, մի այսմ հետևեացի ճեմաբանիս: Եվ ապա զիմելով կաթողիկոսին՝ կրում է: Վնի շեզ որ ձայրագոյնդ ես լոյս, և դամպաբաժնի ջնալառութեամբ պոյն առանաւ և լուսաւորես, որ շեզն հեռէին լուսափայլ շաւղաց: Ելլ ինչ յայտնի է, Վասն դի ըստ սրովբէականն գերունակութեան՝ մակղեաւական հեղուծն ի ռոտրակայաւսն առ ի ձայրագոյն արիւսյն փնեկի: օտպէս և շն ի շո հաւատացեալ հօտ: Ողջ շեր, փոխան Գրիստոսիս: Թմում է: Թն Պաշտպանին իշխանը բիղանդակն հանոյախառնթյուն է անում: Նա այդ կաթողիկոսին ուղղած թղով ինը թղթերի մեջ ևս չափազանց բարձրացնում է նրան: Ինչպես երևում է, այդ հոգեւոր պետը ոսկեփորութեամբ հետ նաև գիտուն և ուսումնասեր է եղել, դրա համար և Մարգարոսը միշտ առանձին սիրով ու հարգանքով է վերաբերվել նրան: «Որ մեծնայնի ևս բաւական, — գրում է նա մի Թղթի մեջ (Ա, 3), — և զանապառն հեղուս գիտութիւն և շնորհ: Այս կաթողիկոսը եղել է նաև հոգեւոր երգիչ: Չարահնարների ձեռագիրները նրան վերագրում են մի շարք շարականներ: «Պատրոս Գիտադարձն՝ զՀանգստեան յարեկանան, զՄարտիրոսացն, և զբաղումս ի Մանկանացն» (առագ):¹ Այս ազնուութեանն անշուշտ միայն այն ունի պատճառն, որ այդ բազմաթիվ երգերի մեջ կան նաև նրա հորինածները: Թե սրունք՝ այդ մենք այժմ չենք կարող իմանալ: Այդ կաթողիկոսը, որ բոնելով հույների կողմը՝ բարի համբավ չի թողել: Անին բիղանդացիներին հանձնելու պատճառով մեջ, այս ցոյց է տնկում իր հայրենիքից, նախ բիղանդական կուսակալների հրամանով այս ու ախ կողմ արքայելու, և ապա Կ. Պոլսում աւ Սեբաստիոյում աղբելու իբրև պատվովոր կալանավոր: Կյանքի վերջում նա դասն փորձով զգացել է իր աշխարհային մեծութեան և փարթաւութեան սնչչութեանը:

Հանգստայն շարականները մասամբ համապատասխանում են նրա այդ անձնական վիճակին, բայց չառ ընդհանուր ձևով:²

Ոսկի եղևալս անպիտանացայ,

Գնդեցկայարմար շինուածոյս քակտուծն:

Իմաստունս յիմարեցայ

Ի յալեաց մեղաց յոր ընկզմեցայ...

Կոչողն եհաս վերին կոչողին,

Կոչնաւերն ահեղ, կոչողն ահաւոր:

Դատաւորն անաչառ, զատասպանն արդար,

Հրեշտակք անողորմ դատեն զմեզաւորս:³

Ուրիշ երգի մեջ քերթաղը ննջեցյալի բերանով ասում է՝

Պակասեցայ յաղգառումէ,

Լքեալ թողի զկեանս աշխարհի:

¹ Երգիկն եղևալս Կոչող, Նշմութիւն, 1861, էջ Բ:

² Կ. Կոստանյան, ճեր Գեորգի Գեաղաբ, Վաղարշապատ, 1897, էջ 47 և հետ:

³ Երգիկն Կոչ. երգաց, էջ 684:

⁴ Երգ, էջ 690:

Գրիգոր Մագիստրոսն էլ հորինել է մի հոգևոր երգ՝ «Զորս ըստ պատկերի ճուժ ստեղծներ»¹

8. Մագիստրոսն և Վահրամ—Գրիգոր Վկայասեր:—Ալիկի կարևոր է իր որդի Վահրամին ուղղած նրա մի ոտանավոր զրվածքը (ՁԳ, էջ 234. «և ուսաց թէ եկն» . . .), որի մեջ առաջին անգամ կիրառված է մեր 14 վանկանի (4+3 (4+3) չափը, որ բավական սիրված է 19-րդ դարում և հետո:²

Այս քեզ Բէլայն հաս հանդէս և Թորգոմանքն Հոյկայ,
Անապարեա և փութակ, զի ես հաղմանն Արամեան:

Ոտանավորների վերջում հայրը դիմելով իր որդուն՝ գրում է. «Աղէ՛ առ ընթերցի՛ր զարհեստ ոտանաւորացդ. գիւցազնական է առդգ, ուր-քեալ, և տող պղպշուն, ողուն և դեպուն, եռակի վանկաք շարակայեալ . . . իբր առ մանկականսն քեզ կամեցայ յըստակ վճիա շարագրել պայտսիկ, զի մի անկարելի ուսանց թուեցեալ, արտավարկի արշաւանօք փախիցեն, այլ դիւրաւուր եղեալ թերևս լսիցեն. զի սովորեալ կաթին, կարացեն զկնի ալսր զմերս փութաքցանել բանաստեղծութիւնս, զի զկատարեալն կերակուր տացուք իբր զքաջ խոհակեր»:

Գրիգոր Մագիստրոսի դրոտավորությանն է եղել, ուրեմն, իր որդուն և սերիշներին մի օրինակ ապա, որպեսզի նրանք իրեն հետեւելով զարգացնեն մեր չափածո բանաստեղծությունը: Նրա որդի Վահրամից, սակայն, չեն մնացել չափածո երկեր: Մագիստրոսի մի գրությունից՝ «Առ վնասն Վահրամ որդին իւր»՝ իմանում ենք, որ նա իր որդուն նույնպիսի ուսում է տվել, ինչպիսին ինքն առել է պատանեկան հասակում. «Յատուկեցի կրթուանս, մինչ ասկաւին յանտիական արի հասեալ, ի տէրունեան ճեմարանին զարգանաւ . . . Առաստնութիւնս Պիթագորեան և Պլատոնական և Ստագիրացւոյն [=Արիստոտելի] իբրու զսորինս դիցեցաւ, մինչ ի տարբրս ասկաւին տարբերէիր, տինյացեալ ըզմայի քեզ արուցանել անդանդաղ . . . և փոխաբէնս հայցեմ ի քէն զաւանդութիւնն մեր օշ մոռանալ իրեք և զփոյթ սիրոյն առ Դրիստոս աստուած մեր և զլոյս ճաղգի նախնայն մերոյ ոչ չիջուցանել, զՊերթին ասեմ քոյոյ հաւուն» (ՁԳ, էջ 235 և հա.):

Հոր մահից հետո Վահրամը նշանակվում է հոր հաջորդ՝ Միլագետքի, Տարսնի և մյուս մարզերի կուսակալ: Բայց նրա մեջ կրոնական ոգին ավելի զորել էր. ուստի նա պայտոնը թողնելով՝ բաժանվում է կնիշից և դառնում կրոնավոր՝ Գրիգոր անունով: Ապա նրան՝ հակառակ իր կամքի՝ 1065 թ. ընտրվում են կաթողիկոս. բայց նա երկար չի զբաղվում կաթողիկոսական գործերով, այլ ուրիշներին թողնելով իր պաշտոնը վարել, ինքը պարագում է զբաղվում գործունեությունամբ: Նա գնալով Կ. Պոլիս, նկրպուսս և Պաղեստին՝ հավաքում և հունարենից և առորերենից հայերեն թարգմա-

¹ Անգ, էջ 455:

² Մ. Աբեղյան, Հայոց քրդի տաղանդավորներ, էջ 234 և հա.:

նում է կամ թարգմանել է տալիս հատկապես վկայաբանությանը, դրա համար կոչվում Գրիգոր Վեյտասեր։ Մինչև կյանքի վերջը (վախճ. 1105 թ.) նա շարունակում է իր սիրած գործը՝ թարգմանելով կամ թարգմանել տալով նաև հառեր ու մեկնություն։

Ենթերդ Մեսրոպ մեզ երևեալ,
Զգիրքս բազումըս թարգմանեալ,
Աս ի Յունաց և յԱսորաց
Ճառս սրբոց վերաբերեալ։

Այսպես է գրում Ներսես Շնորհալիս նրա մասին իր Եվդոսանուս-թեան մեջ 1121 թվին։

Այսպես՝ նա, Վահրամը թեպետ և բանաստեղծ չի դառնում, ինչպես կցանկաբ իր հայրը, բայց ջանացել է լրացնել մեր վկայաբանական թարգմանական գրականության թերին։ Նրանից առաջ և հետո ուրիշներն էլ աշխատել են նույն գործի վրա. թե հատկապես որ վկայաբանություններն է նա թարգմանել՝ այդ հայտնի չէ։

ԱՐԻՍՏԱԿԵՍ ԼԱՍՏԻՎԵՐՏԻ

1. Ընդեմնուր դրուքումը։—Գրիգոր Նազիկացու Ողբերգության հրատարակությանից մի քան տարի անգամ չանցած՝ սելջուկյան թուրքերը սկսում են հրոսել Հայաստան։ Նրանք քանդում, հրդեհում են ամեն ինչ։ Շուտով հայոց բազմաթիվ իշխանությունները միմյանց ետևից կործանվում են։ Նրանք փոխանակ միահամուռ ուժերով դեմ գնելու արտաքին թշնամիներին, պառակտված են մնում։ Մյուս կողմից բիզանդական կայսրերները հեռագնաց ընդարձակում են իրենց իշխանությունը Հայաստանում, արերով Վասպուրականին, Անու թագավորությանն և ուրիշ կողմերի։ Նրանք, փոխանակ հին կայսրերին հետևելով՝ երկրի պաշտպանությունը թողնելու անպակաս իշխանություններին՝ իրենց նշանակած սպարապետի գլխավորությամբ, անմիա քաղաքականությամբ դեպի արևմուտք, Փոքր Ասիա և Միջագետք են հեռացնում հայ ազնվականությունը, որ կզույգ տարին էր, երկիրը թողնում են առանց պաշտպանության սելջուկյան վայրենի հրոսակների դիմաց։ Սրանք առնում, սրի մատնում, ավերում են Արծն, Անի, Կարս, Մելիտան և այլ հարուստ ու շահաստան քաղաքները։ իրենց արշավանքները և ասպատակությունները կրկնում են պարբերաբար։ Հայաստանի բնակչությունը կոտորվելով և գերվելով ու տեղափոխվելով պակասում է։ Ոչնչանում է քաղաքացությանը, կամ ազնվականության հետ երկրից դուրս է հալածվում, ցրվում։ Հենց այդ շրջանում սկիզբն է առնում հայ ազգի երկար դարեր տևող եղբերական վիճակը՝ առաջին և ցրվել բնիկ երկրից դուրս՝ Եգիպտոսի սուր սատակեաց՝ ցրուեցան դորէն մուրական տատեղացա՝—գրում է Արիստակես Լաստիվերտին։ Բիզանդական

1 Գառնաթիւն Արիստակեսի վարդապետի Լաստիվերտի վասն անցիցն անցելոց ի յայտուսն ազգոց արց լուրջ գնաց են, Թիֆլիս, 1812.

տիրապետութիւնը և սելջուկյանների արշավանքները տակն ու վրա են տնուս Հայաստանը, և նոր քաղաքակրթութիւնը երկիրը եւ ընկնում: Երկիրը հռոմէականութիւն չի ունենում: Ազերիզում են առաւմաշական երկրի հաքաւա-
յին կողմերը և կենտրոնական մասը, ուր ծաղկում էր ուսումն ու գիտու-
թիւնը: Այստեղ կազմվում են մասնակիական իշխանութիւններ: Ազեր-
ստանքները շարունակվում են, մինչև որ Թուրքերը Արհաւան Թապավորի
օրով տիրում են Հայաստանին և դիմում գեղի Փոքր Առիւ:

Անշուշտ ոչ բոլոր վայրերը Հայաստանում միաժամանակ ենթակա են
հզել լիովին ազերիզման: Ուսումն ու գրականութիւնն ապաստան են դառնում
պակաս կուսակազմակաւ վայրերի վանքերում, հյուսիսային և արեւելյան
Հայաստանի անտառապատ, ալիքի պաշտպանված լեռների վրա, ուր մնում
են հայ իշխանութիւններ, ինչպես և հետագայը Սև լեռների անապատե-
րում, հետագայում նաև Կիլիկիայում, ուր կազմվում է մի նոր հայ իշխա-
նութիւն: Այդ վայրերում էլ ազնվականներն անընգհատ կոփքների մեջ
լինելով՝ միջոց չունեն ուսման վրա մասնակցութիւն. ուստի գրականութիւնը
մնում է դարձյալ մենաշնորհ վանականների: Իսկ սրանք պարագայում են
դավանական վեհերով, մեկնութիւններով, ներքոյներով, կամ ժողովում ու
թաղմանում են, ինչպես տեսանք, վիսայրաւնութիւններ ու ճառեր: Հայ
կյանքը չի շարունակում իր բնական շաղկապ արագ առաջ ընթանալ: Բա-
ղաւանկաւ հանգամանքներն այնպես շուտ են ապրիս ամեն շինարարական
գործ, որ աջող սկսված մտավոր շարժումն ու փոխված ոգին շուտով չեն
դարգացնում մի նոր տեսակի փայլուն գրականութիւն: Առաւմաշական
բանաստեղծութիւնը զազարում է արժեատալով գորգացուից, և մինչ
ապաստել էր, որ հոգեւոր գործի քնարերգութիւններից հետո՝ ծաղկեր վիպա-
կան բանաստեղծութիւն, բարգաւաճելու մի նոր կենսագրութիւն բանաստեղ-
ծութիւն, մենք երկար տասնամյակներում ոչինչ չենք գտնում: Ժողովրդ-
դական ու զուսանակաւ սիրո ու պարի երկը չի բարձրանում իր բնական
գրութիւններից. գոնե մինչև այժմ հայանի չեն եղել Գրիգոր աշխարհականի
կամ հոգեւորականի հորինած այգիների երկեր:

2. Պատմագրութիւնը:—Այս ողեսալի շրջանի կարևոր երկը Արիստա-
կէս Լաստիվերացու գրած Պատմութիւնն է,¹ Կենսագրական տեղեկու-
թիւններ չունենք այս հեղինակի մասին: Պետք է կարծել, թէ Լաստի-
վերաց, որակաւոր է նա, գտնվել է Կարին գավառի Արծն քաղաքի մոտերը,
քանի որ նա գրաւ համար գրում է քաղաքի մերձ,² իր գրքից իմանում
ենք, որ նա ապրել է 11-րդ դարում, զի նա իրեն աղանատես է դնում
շատ դեպքերի, ոչնչպէս, որինակ, 1026 թ. Վասիլ կայսրի դեմ ծագած
ապստամբութիւն մասին գրում է, քայս հուսանաւ գիտեմ, և ալօք իմովք
տեսիւ,³ Սմբատա լեւան վրա 1048 թ. տեղի ունեցած մեծ կռուութիւն, ապա
և Արծնի ազերիզման մասին գրում է: Զոր ալօք մերովք տեսաք և ընդ փորձ

¹ Պատմութիւն Արիստակէսի վարդապետի Լաստիվերացու վասն անցիցն անցելոց
ի յայտնեան ազգաց, 1298 շուրջ գիտեմ են, Թիֆլիս, 1912:

² Անդ, Ժ, էջ 68:

³ Անդ, Գ, էջ 13:

չարեացն անցաւ, զայն միայն զընցաքս:¹ Պատմությունը սկսում է Տաջի Դավթի կյուրապաղատի մահից հետո, երբ Վասիլ կաթարը (Բարսեղ Բ, 976—1025 թ.) իր թագավորութւան ջսպան և հինգերորդ տարում (976—25—1001 թ.) գալիս է տիրելու նրա կալվածներին, և ապա կաթարների հաջորդութւնը պահելով վերջացնում է Ռոմանոս Դիոգենես կաթարի մահով 1071 թ., հիշում է և Ալիասլանի մահը 1072 թ.:

Նրա զրջից շատ կարեւոր պատմական տեղեկութւուններ ենք ստանում Հայաստանի մասին այդ շրջանում, որի ընդհանուր դրութւնը գծագրվեց վերևում: Ուրիշ տախթներով էլ բերված են կարեւոր նշաններ այս պատմագրից: Այստեղ այսքանը միայն պետք է շեշտել, որ նա առանձնապէս մանրամասն պատմում է հույների և սելջուկյան թուրքերի գաղաւթութւնների մասին, նրանց կատարած սրածուրքութւններն ու ավերածութւնները, երկրի ամայացումը: Վերջա իբրև զպայս գիշախաննա՝ որք հանդիպին հօտի՝ որոյ ոչ գուցէ հովիւ, զի ոչ թէ իւրեանց կերօցի միայն շատանան կոտորել, այլ զամենայն ջանան, — նոյնպէս և ի Պարսից եկեալ զօրքն ոչ թէ աւարաւ յազենային, այլ անյազ քաղց մերոյ սատակմանն ունէին. զի զոր անջ անաւանէին, անհնար էր նա ի ձեռաց նոցա պրծանիլ, մեծ բարեկրօնութիւն հաշուելով զայնա:՝ Այսպէս խիստ է բնորոշում Պատմիչը նրանց գաղաւթութւնները. նրանք չեն բաժականանում, զրստ իւրեանց արիւնարբու բարուցն, մարդկանց կոտորելով, այլ սիրում են շարաչափ տանջել բոլորովին անմեղ մարդկանց: Բերենք այստեղ երկու օրինակ: ԷՄԻ՛ կթմանդամարմինսն և զհարստակոյսն յերկիր ի գունա արարեալ, և պարզեալ զձեռսն ի ցիցս վարեալ՝ ի գետինն պնդէին, և կորզեալ զմորթն հզնգամբն հանդերձ յալկոյս և յախկոյս ընդ քաղով և ընդ թիկունս մինչև ի ծայրս ձեռքին երկրորդի բռնաբար քարշեալ և հանեալ, լար աղեգտնցն առնէին: Այս գրելուց հետո՝ բացագանչում է Պատմագիրը. ԷՄԻ՛, քանի՞ դառն է պատմութիւնս, և շարունակում է գրել ուրիշ նման եղանակօրէնութւններ ի մասին. ԷՄԻ՛ զերիցանցն և զկրօնաւորացն ժըլսելիք տանին զնորանցան շարխն՝ զոր նոքա կրեցին. զորոց ի կրծիցն ի վեր քերթեալ զմորթս՝ տարեալ երեսօցն հանդերձ զգլխօցի շրջէին, և այնպիսի դառն տանջանք տանջեալ, յետո ապա սպանեւնէին. որ քան զայս զԲՆ՝ այլ ոք դառն և անհնարին տանջանս իմանայցէ. որ ի սրբոց վկայութիւնս չերևի ուրեք եղեալս:²

Բարի մտադր չի կարողանում երեակայիլ անգամ, թե այդպիսի անասելի շարճաբաններ կարելի է տալ մարդկանց: Նա չի կարողանում և այն հասկանալ, որ ժողովուրդները երկաւ տարիներով ապրեն միմյանց մօտ և շրարեկամանան իրար հետ: Իմ եթե այդպէս չի եղել, դրա պատճառը ոչ թե արդէն մեղմաբարոյ հայերն են եղել, այլ արյունառշտ խռժողութւնը, որոնք մինչև վերջը շարունակել են մեալ նույնը: Զի ոչ մի օր, կամ միտ ժամանակի հանդիպեցաք անդօրութեան կամ դիւրութեան, — գրում է նա, — այլ ամենայն ժամանակ աւուրց մերոց լի եղև խռովութեամբ և

¹ Անդ, ԺԲ, էջ 65.

² Անդ, ԺԸ, էջ 125.

³ Անդ, ԺԸ, էջ 128 և հո.:

Նեղութեամբ. և որ ըստ որէ յաւելոյր եւ ի չարչարանսն և ի տառապանսն: Եւ ոչ ոք ի նոցանէ բարեխիտ եղև տւ մեզ, Թէպէտ և բազում ամօք բնակեցան տւ մեզ. ոչ արգելաւ սրտմտութիւն նոցա որպէս իժի, և ոչ եղև յազոռն ազահութեան նոցա իրբն հրոյ. զի ամենայն խորհուրդք նոցա որ վասն մեր՝ ի չարութեան են, և բռնք նոցա՝ լի նեղութեամբ: Վասն զի ամենայն տուածորւ նորազոյն սկիզբն չարեաց ամենին. զի այն էր խորհուրդ նոցա ամենեկուն՝ մօշիւ և ապուռի զմեզ իրբն զհնացեալ ձորմս, և բռնաւ զյիշատակս մեր ի միջոյ իւրեանց, զի բնաւ մի հայեացին և տեսցեն զմեզ կենդանիս. այլ և չէին զերեզմանք մեր անհետ ի ներքոյ ստից նոցա:—Ահա տայն ևզրակացութիւնը, որին հանգում է Պատմագիրն այդ բարբարոսների բնավորութիւնն վերաբերմամբ:

Իսկ հայերի վիճակը. Մերս ծանրագոյն և տուեկագոյն է քան զամենեանսն, անթաղաւոր և անիշխան, անտէրունչ և անվերակացու՝ ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ, և սչ զոյ մի տեղի աղատաւորի գտանել մեզ. այլ նուազեալ հնազանդեալ եմք ի ներքոյ Թաղաւորութեան հիթանուսաց կալ, և զաստիճակ հարուստ գաւազանի նոցա որ ըստ որէ ընդունելու նվ այսպես մինչև Պատմութիւնն վերջին տարին, 1072 թվականը:

Պակաս բարբարոսաբար չէին վարվում և հունները: Ահա թե ինչ է գրում նա Վասիլ կայսրի հրամանով 1025 թ. կատարվածների մասին. «Թագաւորն ընդ կողմանս աշխարհին զորս առաքէ, ասպառակ արձակէ, պատուէր տայ մեծասաստ հրամանաւ՝ մի ողորմիլ ձերոյն և մի երիտասարդին, մի աղային և մի հասակաւ կատարելոյն, մի առն, և մի կնոջ, և մի ամենևին ամենայն հասակի: Եւ այսու ձեռնարկութեամբ, քանզեալ ապակունէ գաւառս երկուսասան: Յորս էր տեսանել տեսութիւն ողորմելի և բազում արատուաց արժանի. քանզի բարձրաձեղուն ապարանք արքունական տաճարաց՝ որք մեծամեծ ծախիւք և հնարագիտութեամբ ճարտարաց՝ ի սքանչանս տեսողաց և ի վայելս ուրախութեան բնակողաց շինեալ էին հրայրեացք անկեալ կործանեցան, և որք նոցին տեարքն՝ տւ նմին սրակուտոքը: Աւագ պատմութեանս, ասող չար արարուածին. զիմիդ կարացից ես աղքատս գիտութեամբ և տխմարս քան զամենեանս ընդ գրով արկունել զայն ժամու. զյեալսն, և կամ ողբալ ըստ արժանւոյն զմեր Թշուառութիւնս:»¹ Եվ այսպես հունական բանակը, որ իր գաղտնութեամբ բնավ ետ չէր մնում Թուրքերից:

8. Աշխարհայեցութիւնը:—Լաստիվերացին չափազանցութեան է հօտցրել նախորդ պատմագիրների մի սնական հատկութիւնը. չունի հաճախ ինքնուրույնութիւն: Բնականաբար նա եւ ազդված է մեր հին մտահետքերներից, բայց այդ այնքան էլ զգույն չէ: Զափազանց է Աստվածաշնչի ազդեցութիւնը: Կարելի է ասել, որ ներշնչված է մարգարեական գրքերից և երբեմն զրանցից է ասուով իր գրութիւնն ուժը: Ըրբեմն էլ նա որևէ անցք նկարագրելիս՝ բերում է Ա. Գրքից մարդիկ հատվածներ՝ հարմարեցնելով այն իր պատմած եղելութեանը և մինչև իսկ՝ ինչ որ մարգարեներն ասել են երապիցիների համար՝ համարում է նա՝ աղբի համար, և մեր ժողովրդի

¹ Ահգ, Բ, էջ 28 և հմ.:

դիւթին եկած թշուառութիւնները հասկանում է իբրև կատարուած հրեակոն մարգարէներէ կանխատեսուածութիւններ: Բայց պե՞տք չէ նրան այնքան միամիտ կարծել, թէ հին հրեակոն ժողովուրդը և նայ ազգը շփոթեր մի-մյանց հետ: Այդ իսկապէս միտք մի տարածքին ձև է, որի մեջ նա միշտ նկատի ունի ներքինը, որ է նայ ժողովրդի իրական վիճակը և աստուծու կամքը: Իբրև իր դարի զավակ ու ժողդապետ, ամեն պատմական զեպք նա համարում է աստվածային կամքի արտահայտութիւն:

Մինչ սպասում ենք, որ 11-րդ դարում երևան գար համեմատաբար ընդարձակ աշխարհայացք, հակառակն ենք գտնում: Մղկութիւններէ իրական պատճառների ջննդութիւն չկա: Մարդկանց միտքը ճնշված էր ետեւ ետեւ արագ միտ հասնող ազդանքի ծանրութիւնով: Ժամանակի ուժգոյն շարժումներէ վիճակն ստիպում էր նրանց նորից հա դառնալ, կրօնի մեջ գտնել միեւնոյնութիւն, և իրենց դժբախտ կյանքի բացատրութիւնն ու ելքը սրտնել: Առաջին հարցը, որ տալիս էին մտածողները, այս էր. ինչու են գալիս մեր գլխին այս աղետները: Հայերը, որ այնքան բարեպաշտ էին, այնքան եկեղեցիներ ու վանքեր էին շինել տառուծու փռաքի համար, ինչու են տառապում թուրքերի ձեռքին—Պատասխան գտնելը դժուար չէր՝ հին մտեհնագիրներն արդեն պատրաստել էին այն գաղափարը,—որ եղել է հին հայրների և բոլոր քրիստոնյաների մեջ,—թէ մարդիկ մեղք են գործում, և աստված նրանց պատժում է իրենց մեղքի համար: Նա, Հասարակեցեցիքն էլ, ամեն թշուառութիւն համարում է աստվածային պատիժ մեղքի համար: Բացի մեղքից՝ նրա համար էլ ուրիշ պատճառ չկա սելջուկների և հույների զապառուկութիւններէ համար: «Ճայս ամենայն յազապս աշխարիկ եղաք, զի ընթերցիք և գիտաւջիք, եթէ մեղքն եղև այս ամենախի պատճառ որ անց ընդ մեզ զի հայեցեալ ընդ մեզ՝ զարհուրեաւջիք երկնչել յերեսաց տեառն և դողալ յահէ դորութեան նորա. կանխել յառաջագոյն խոստովանութեամբ և անպաշտարարութեամբ, —ահա դժբախտ եղելութիւնների միտն պատճառն ու ելքը և իր երկի նպատակը, որ նա շնչում է իր գրքի վերջում և որ հաճախ կրկնում է նա գրքի մեջ իբրև պատգամ, խորին համոզմունքով, վճառաբար, իբրև մի մարգարէ:

Այդպէս խոսում է նա իբրև մեկնաբան և բարոյախոս վարդապետ, մեղք և ապաշխարել, մեղքը լալ փրկութեան համար: Կարծես դա հին բանաստեղծութիւն, ապաշխարութեան շարժումների և Գրիգոր Նարեկացու Ողբերգութեան իշխող զապախարն է: Բայց այդ ըստ երևութիւն միայն նուրբն է: Մեղք և ապաշխարել, նմանութիւնը միայն այսքանն է. սրտնից դնեն արդեն գալիս է նոր քզիմ: Մինչև հիմա մեղավորն էր անհատ մարդը, նա լալիս էր իր սեփական անձնական մեղքը. մինչև հիմա միտախիճ ճգնաժամներն ու նրանց արտահայտիչ բանաստեղծը ողբում էին անհատական մեղքը, Հիմա մեղավոր է ազգը, նա պետք է ապաշխարի: Անհատն ապաշխարում էր մարմինը տանջելով. դրանով նա ձգտում էր դառնալու իր հոգու փրկութիւնը, որ մահից հետո հանդերձալ կյանքում էր լինելու: Բանաստեղծը հետ միացումով: Իսկ Արիստակէս Հասարակեցեցու համար մայրիքի բան չկա. նա հեռու է միտախիճից: Այստեղ ապաշխարութիւնը քարոզվում է ամենշնչից ազատվելու և ազգի փրկութեան համար, որ

այս աշխարհումս պիտի լինի, այն էլ ոչ թե մարմինը մեռնելով, այլ բարեքերի մաքրությամբ, կյանքի բարոյական կորգովորությամբ:

Եթե միտանկ հզնավորի համար աշխարհի վրա մտածելն անգամ մեղք էր, Լուսավերացին չի մերժում աշխարհը և նույնիսկ հարստությունը հարկավոր է համարում: Բայց ամենայն հարստություն պիտի ծառայի բարի նպատակների և ձեռք բերվի արդարությամբ և իրավունքով, առանց վաշխի ու տոկոսիցի: Առաջ ալսպես էր,—գրում է նա իր հայրենի Արմն քաղաքի համար, ուստի բամենայն ինչ ըստ մտի էր սորոս: Բայց կյանքը փոխվում է. սկսում են հարստություն գրգռել միայն իրենց վայելելի համար, փառքով ասպրիտ, հոխ հազնվելու և զարգարվելու համար, ինչպես ներս ու վաճառականները զոռնում են զողերի գողակից, կաշտոտու, վաշխառու, խաբեբա, զրկող, շահիսնդեր: Նրանք հղիմունում և ամբարտապանանում են: Այսպես և բամուրն Անի և որ շուրջ զնավա զոտերը իւր՝ տառել յամբարտաւանութիւն կրթեալ՝ ընդդէմ երկնից կայքս հարկանէին, քեղաղա՝ որ զմեզս իւր ի կատարումն լրիւ իւրով ունէր:

Այդ քաղաքի բնակիչները թշնամիների գեմ հույս են դնում իրենց ամուր պարիսպների և անմատչելի աշտարակների վրա, ժողախաղով, զգի սրբութիւնն է ամբութիւն, և պարիսպ՝ ընտիր գործք աստուածպաշտութեան: Եվ ահա 1064 թ. Պարսից թագավորը բազմաթիվ սպասակներով դալիս, պաշարում է այդ քաղաքը, կոտորում է բնակիչներին: «Այլ և ի ռաբողյ անիրաւութեան ի նմա զործելոցն ասորեցու բարձրաշէն և գեղեցկայարմար ասարանքն, և եղև ամենայն բնակութիւնն իբրև հողարար: և վաշխն և նենգութիւնն որ ի նմա՝ խափանեցաւ,—գրում է Լուսավերացին և ավելացնում, «Այս է բաժին անիրաւ քաղաքաց, որ շինեն զինքեանս արեամբ ոտարաց, և ի քրտանց տնանկաց փառքամանան, և ի վաշխից և յանիրաւութեանց զտունս իւրեանց ամբոցուցանեն. և ինքեանք զմիտս իւրեանց անողորմ ունելով առ աղքատս և անանկս՝ միայն հեշտութեան և փափկութեան սպասեն, և ի գործոց աղետդութեան օչ խորշին, այլ միայն արեաւ լինին ի ցանկութեանցն, որ զնոսա ըմբռնեալ ունին:՝ Այսպես՝ թեպտ կրոնական ձևի տակ, բայց արդեն ընդործակվում է Արիստակես Լուսավերացու պատմահայացքը: Այդի ուժը իր ներքին բարոյականության մեջ է: Եթե չկա այդ ներքին աւել, ինչպես էլ նա փառքամտացած լինի, զարիսպներով և աշտարակներով ամրացած շեն քաղաքներով հարուստ, նա տնխուսափելի պիտի ընկնի, ինչպես Անին, որի համար գրում է, թե «Արկ տէր ի մէջ պահապանաց և իշխանացն երկղառակութիւն և ամիրաւանութիւն, ամբոխում և բաժանում. և անդէն թողեալ զգործ պատերազմին՝ ի փախուստ գործան: Եվ այլապես չէին կարող վարվել բարեքերի ապականության ժամանակ հեշտասեր, ցոփ ու թուլամորթ մարդիկ: Ապաշխարել, ուրեմն, ըստ Լուսավերացու՝ չի նշանակում ուրախալ աշխարհը, ուրախ ու երջանիկ կյանք չվարել, աղբել ինչպես մի հզնավոր, այլ մեծացնել ներքին բարոյական ուժը և զրանով

¹ Անդ, ԻԳ, էջ 163 և հաւ.

միայն հնաբանությունը ունենալ պատերազմելու արտաքին թշնամիների դեմ և փրկվելու։

4. Աշխարհագրություն և հայրենագրություն։—Աշխարհն արդեն ստացել էր արժեք այն աստիճանի, որ նույնիսկ այդ կրոնասեր մարդը, սղափոր պատմիչ Լաստիվերացին, խորին սիրով սիրում է այն, սիրում է իր հայրենիքի անդամանները, մշակած դաշանքը, շինանիստ ավաններն իրենց բարձրամեղուն ու մեծամեծ ցանկալի աներով, ժողովրդի բարեկից կյանքը, ուրախ-զվարթ աշխատանքը, կատարած ուրախությունները, երգերն ու պարերը, թագավորն իր փառավորությամբ, զորքերն ու կռիվները, որոնք կային մի ժամանակ և չկան այլևս։ Ուստի այժմ, ասում է նա, «յոզրս փոխեցաւ մեզ ամենայն»։ Այս աշխարհասիրությունից է, որ նա, հաճախ կրոնական ձևի տակ, բայց իսկապես մեր աշխարհիկ կյանքի գոթախառնությամբ ողբերգուն է զանուում։

«Աշխարհ՝ որ երբեմն ժամանակու իբրև զգրախոս տնկախոս առաջի իւր, կանչագեղ, տերևալից, պաղարբեր, գեղեցկաշուք և երջանիկ անցաւորացն ցուցանիր. քանզի իշխանք նստէին յիշխանական դահու զուարթահայեց դիմօք, և զգարնաւարեր ծաղկանոցաց բերեալ զմանուկին՝ վառ ի վառ զունովք առաջի կացեալք, ուրախական երգոց և բանից միայն լինէին հանդէսք. ուր և ձայնք փողոցն և ծնծղայիցն և այլ երգեցողական արուեստիցն զսողացն անձինս լի առնէին ուրախական բերկրանօք։ Անդանօր և ծերք նստէին ի հրապարակս հարկեոր և պատուական ալեօք բարգաւաճեալ. այլ և մարք զմանկունս ի զիրկս ընկալեալ, և մայրենի զթովքն աղէխարշեալ, վառն առաւ ուրախութեանցն մոսանային գտխրական ժամանակս երկանց, զօրէն աղանեաց զնորափետուր ձագօցն միշտ թաթախով։ Զինչ սասցից և զհարսանցն ի սենեկի, և զփեսայիցն յառագաստի զսիրտաբուստ բզմիցն զբորբոքումն և զանժոյժ բնութեան զհամախառնութիւն...»

Արդ այժմ թագավորն անկեալ ի պատուայ, իբրև զգերի կաշմանուր նստի ի հեռաբնակ տեղիս. այսպէս և հայրապետական աթոռն ամայացեալ ի բնակողէն՝ ցուցանի տխուր դիմօք իբրև զկին նորաբարսն՝ փնտցեալ յայրիութեան, ևնեկագօրն անաւերունչ շրջեալ ղն ի Պարս և ղն ի Յոյնս, և ղն ի Վիրս։ Սեպուհ զունդն ազատաց ելեալ ի հայրենեաց, անկեալ ի ճախութենէ, ժոնչին ուր և են իբրև զկորիւն աւիժուցն ի խշտիս իւրեանց։ Արքունական ապարանքն տերակ և անմարդի։ Մարգարեակ աշխարհն թափուր ի բնակչիւն։ Ոչ լսի ձայն ուրախութեան ի կութս այգեաց և ոչ փորեալութիւն առ կոխողս հնձանի։ Ոչ խաղան ժանկունք առաջի ծնողացն, և ոչ նստին թոռով ծերք ի հրապարակս։ Ոչ լսի ձայն հարսանեաց, և ոչ զարդարին առգասաք հարստբանինն։

Ինչպես որ գործավազութ մայրն իր մահացած որդու բարեմասնությունների գովքն անելով՝ աղիողորմ ողբում է նրա մահը և նորինորա սրտատուշոր հեծկլաում է, որովհետև սիրում է որդուն, նույնպես և այս բանառեղծ պատմիչը, եթե նա շարունակ դաժնակակիծ սրտով գովքն է անում ավերված Հայաստանի անցած կյանքի, այդ նրանից է, որ նա սիրում է այն ամենը, ինչ որ վերհիշում է։

«Ե՛հաս կատարած կենաց տանա Հայոց... աւերեցան դաւաճ և զնացին յաւար տանն Երուսաղէմը, եղին շինանիստ աւանք ընտկութիւն զազանացը»¹— ահա նրա ողբերգութեան նյութը։ Նա Հայաստանի շին և ուրախ կյանքի, շինանիստ ավանների ու բարդավաճ քաղաքների երգիչն է, միայն ոչ ցնծութեամբ ու բերկրանքով, այլ դառն վշտով ու հառաչանքով։ Ոչ թե ուրախութեամբ երգ հորինելով, այլ ողբերգութիւն, Բայց նա ոչ թե աշխարհի ու կյանքի ունայնութիւնն ու ոչնչութիւնն է երգում, ինչպես Գրիգոր Նարեկացին իր Ողբերգութեան մեջ, այլ աշխարհի, Հայոց գեղեցիկ ու շին աշխարհի ոչնչացումը։ Ունայնութեան գաղափարի նշույլ անգամ չի հրեւում նրա մեջ։ Ուրիշներն այն ավերածութիւններից հետո կարող էին հանգել յայդ զաղափարին, բայց Հասարակեցոյցին հետեւ է գրանցից։ Նա սիրում է իրական կյանքը. միայն նա ցալում ու լալիս է, չի ուզում, որ այդպես ավելի լինի, և ցանկանում է, որ աշխարհը մնա իր նախկին զրուծեան մեջ, Ահա նրա վշտի ու հեծեծանքի աղբյուրը— աշխարհասիրութիւնն ու հայրենասիրութիւնն։

Գ. Իրականութեան օրտոհույզ պատկերը։—Հասարակեցոյցին հետիւտ գրող է այն մտքով, որ նկատի ունի իրական կյանքը։ Նա իրական զրուծեան, եղելութեան հզորեալ վերադարձութիւնն է անում, լինին թշուառութեան օրերը, թե փառաւոր անցյալի ցանկալի շինարարութիւնը, այլապէս ժողովրդատնայնութիւնը, հալածանքներն ու ավանները, նրանց բնակիչներին ուրախ, բարիւից ու բարեպաշտ կենցաղը։ Այդ ամենը նա անդրադարձել է ոչ թե իբրեւ մի մեծ, մի նմանութիւն պատկերավոր արտահայտութեան համար, և ոչ թե ալլաբանորեն, այլ նպատակ ունենալով հենց իրականութեանը ցուցադրել, պատկերացնել ընթերցողի առաջ։ Եվ նա կարողացել է իբրեւ բանաստեղծ ապր մեզ այն, և ապա գեղեցիկ, պարզ ունով, Աստվածայնի կարճ ու պատշաճ օրինակներով, բայց նյութին վայելուչ եղանակով, առանց մթնութեան, առանց պերճութեան և ուռուցիկ կուտակութեան, երբեմն ազդիւնով Ս. Գրքի և հին հեղինակների արտահայտութեան ձևերից։ Այս է նրա սեփական զրուծեան ձևը։ Եթե դուրս թողնենք Ս. Գրքից բերած մեծ ու երկար ցիտատները և դատողութիւնները, նրա զրկածքը միանգամայն և՛ հաճելի է, և՛ խիստ ազդու։ Որովհետեւ նա չի հորինում ստոն և տնաբերք, այլ միշտ զգացված, որով և համակում է ընթերցողին իր զգացմանքով։ Եթե նա երբեմն մեր առաջ չի էլ բաց անում իր հեղձամղձուկ սիրտը, բայց միշտ էլ զգալի է նրա խորին վիշտն իրականութեան համար։ Եվ այս նա հաղորդում է մեզ մեծ կենդանութեամբ, հորինելով սովորաբար նկարին և նմանութիւններով, արքայ հաճախ շատ դիպուկ ու գեղեցիկ են։ Շատ բանաստեղծական և ուժեղ է, օրինակ, նրա արտահայտութիւնը, երբ նա Հայոց աշխարհի մայրացումը տալիս է աշխարհաբարձան վիճակի նմանութեամբ և մեծելութեան ու կենդանութեան հակապատկերներով։

Ե՛ւ՛յ աւարտին, վա՛յ աշխարհաւեր խորհրդոյն, յորում կործանեալ ապականեցան բնակիչք երկրի։ Զանգի գարձաւ յառաջին անգարգութիւնն

¹ Անգլ. էջ 32

ըստ աշխարհապատում բանին. «Երկիր, ասէ, էր ամայի և անպատրաստ, վասն զի մարդ չէր որ գործէր գերկիր: Զի զոր օրինակ գեղեցիկ դէմք առն՝ ի ծաղկի հասակի սիրուն և ցանկալի տեսողացն ցուցանի, իսկ յորժամ զարդարիչ հողին մտնուամբ բաժանի ի նմանէ, յառաջին պայծառ և գեղեցիկ զարդաքան հարկերի և անշուք ցուցանի տեսողացն, նաև գութն ընդ նմա հաստանի. ըստ այնմ, թէ ՎՊռաքեալ եղէ ևս որպէս մեռեալ ի օրտէ՛ ըստ նմին օրինակի գերկիր է տեսանել. զի յորժամ մարդարեակ շինու- թեամբ հարստանայ, յայնժամ երկրագործք առատութեամբ սերմամբ զոն- դատանա լնուն. որք յորժամ բուսանին, կանաչագոյ տեսեամբ զվայրան վայելչացուցանեն, և բարձրաբերձ անժամբ ի վեր ընկեղին. և յորժամ զհասկիցն զկերպարանս ի դագութունսն երեւցուցանեն, յայնժամ Թանձրա- խիս բարձրութեամբն ամպանն տեսողացն ցուցանի. և ի քաղցրաշունչ օդոյն՝ ճճի, ճճի զօրէն ծովային ալեաց. յայպէս և հետք անդէից արօ- տակնանաց ի հովիտս դալարաբեր բուսոց առ ցուրտ աղբերակամբք խալտան խողան, և երկիր իրբն զդայեակ՝ գեղեցիկ դիմօք զարդարի նոքօք, ըստ այնմ, եթէ ՎՊռաքեան դայտք, և ամենայն որ է ի նոսա:»

Իսկ այժմ զնորին հակառակն տեսանեմք. երկիր աւերակ, Թափուր ի բնակչաց. ճաղ-ճեք կործանեալք, և անդառառնք խոպանոցեալք և փշա- բերք, ահագին և գորուռերի անցաւորացն ցուցանի, նաև քաղցրաձտյն հաւուց տարժք, որք մարդասէր բարոյիք ընտանի գոլով մերային աղինս, որ քաղցրանուագ եղանակք զվայրան Աշխարհացանն, և յառաւօտինմն ճոտակոն երգովք և բարձրաձայն կարկաչիք գերկրագործան ի ճնոյն զանդադանաց իրբն խթանու. զարթուցեալ, իւրացանչիւր արուեստից պատ- բոտաբար յարդարէին. բայց այժմ չէնք աւերակք և ամայիք և անմար- գիք, և նոցա ոչ գոյր տեղի բնակութեան. զի մեր աստեղագէտն բոյն կատուցանեն, և մեր տկարք ի Թոյնոց ի նոսա ապաւինին ըստ սաղմո- սին ձայնի. և կամ ուր ծիծառն գիւր վարանից բուռնկն յարգարէ՝ աներ- կիւք սնուցանել զառ ի յինքննէ ծննալոյն:¹

Ինչպէս կարելի է նկատել, բանաստեղծական նմանություններն այս- տեղ այնքան ընդարձակ են, որ կարող են նույնիսկ անկախ նկարագիրներ դառնալ. Դրանք, անցյալն ու ներկան, զրոյի իրեն ապրտծ իրականու- թյուն անդրադարձուին են շատ պայծառ վերհիշումով: Նրա մտքից շարու- նակ անբաժան է մեռւմ այն, Թե որքան լավ և ուրախ էր առաջ, և որ- քան վատ ու տխուր՝ հետո:

Եվ նրա գրվածքի կենդանության գլխավոր գաղտնիքն այն է հենց, որ նա ապրած է իր գրածներին նյութք, և՛ երբեմն ուրախ, և՛ հետազայի տխուր իրականությունք: Հենց դրանից էլ բխում է նրա լիրիզմը— ճնարա- կանությունը, որ անպակաս է: Իներենք իրբն օրինակ մի հատված նրա ԺԱ գլխից, տեսնելու համար. Թե ինչպէս է նա հորինում պատմվածքը:

«Ի սոյն ամս բացաւ դուռն բարկութեան յերկնից ի վերայ աշխար- հիս մերոյ. և շարժեալ. զօրք բազումք ի Թուրքաստանէ, որոց երկվաք արագունք իրբն զարծուիս. և սմբակք նոցա իրբն զվէմս հաստատունք:

¹ Անգ. ԺԸ, էջ 120 և հաւ.

աղեղունը լարեալք, և սլաքեալ նետք նոցա, գոտեորեալք քաջապէս, և անլուծանելի ունելով գիւրացս կօշկաց, Եւ ելեալ ի գաւառն Վասպուրական-նի, յարձակեցան ի վերայ քրիստոնէից իբրև գայլս քաղցեալս անյազեալս ի կերակրոյ. և եկեալ մինչև ի գաւառն Բասեան, և մինչև ի դաստակերտն մեծ, որ կայի Վաղարշաւան, քանդեալ ապականեցին գաւառս քսան և չորս սրով և չորով և զերուքիւսմար, Ողորմազին և բազմալ սարոց և արտասուտց արժանի է պատմութիւնս. Որք իբրև զառիւծս ընթացան, և իբրև կորիւն թախեալց անողորմաբար արկին զգիականս բազմաց զէջ զազանաց և թըռչ-նոց՝ երկնից. և կամէին այնու ձեռնարկութեամբ զալ ի քաղաքն Կարնոյ, Բայց որ հովու եզ սահման՝ ասելով՝ «Յայդ վայր հեկացես, և այլ մի ևս յաւելուցուս, այլ անդրէն ի քեզ խորանակեացին ալիք քոս, նա արկ գիւ-ւար թանձրաման առաջի նոցա, և արգել զնոսս յընթացից իւրեանց»:

Թ. Հայրիմոսիքաւոյն ողբերգությունը—Այս սգավոր պատմիչը մի ուրուշն տեղ է բռնում մեր պատմագիրների շարքի մէջ: Նա իսկապէս քնարերգու բանաստեղծ է. բայց որել է պատմութեան և գրել է ոչ թե որն է ուրիշի խնդրով կամ պատգներով, ինչպես նախորդ պատմագիրներն աստատարակ, այլ ինքնաբերաբար, իր տանջված սրտի զգացումները գեղե-լու պահանջից զրգոված: Դրա համար և նա շատ բան անես է արել իր պատմութեան մէջ առնելու: Աղբերով դառն ու դժնդակ ժամանակներում և լինելով շատ բաների անանատես և անձամբ բերդ փորձ չարեացն անցած, նրա փափուկ ու դժուար սիրտը չի գիտնում իր տեսածներին ու լսած-ներին: Նա չի կարողանում պաղարշապատի վերիցիւ այն ավերներն ու կոտորածները, որ արել են հույներն ու թուրքերը. սգում ու ողբում է, իր սրտի խորքից հեծեծալով ու թառանջելով իր գծաթա հայրենիքի ու ժողովրդի համար, երբեմն նույնիսկ, ինչպես տեսնուք, ազսթում է նրանց համար: Եվ նա այդ ոչին անում է ոչ իբրև մի միասին հզնափոր աշխարհից կտրվել կտրողանալու համար, այլ իբրև մի հայրենասեր, որ սիրում է աշխարհը, Հայոց աշխարհը, Յոված որում նա շարունակ ընդհատում է պատմութեանը և արտասովորից ողբեր է նորինում հեղանը նրա համար ողբն է: Եղբյւթյունների պատմութեանը հաճախ նրա համար է անում, որ ընթերցողին հասկանալի դարձնի իր ողբի նյութը: Եվ այսպես վարվում է նա գիտակցաբար, առանց խորշելու, նպատակ դրած իրեն: Նրա «Նախագահ»-ն անգամ ոչ թե «առաջաբան» է, այլ մի ողբագին երգ է.

Ժամանեցին մեզ աւուրք չորչորանաց,

Եւ գտին զմեզ նեղութիւնք աննարինք.

Քանզի լցեալ չափ մեղաց մերոց,

Եւ ել աղաղակ մեր առաջի աստուծոյ. . .

Որոյ ազգաւ աղքատաբանաց

Օտարացոցին զմեզ ի բնականութենէս մերմէ,

Եւ դարձան փառք մեր յապականութիւն:

Շունէ ի մեզ ոչ մնաց,

¹ Անդ, ԻԵ, էջ 168.

Եւ կորեաք ի հառման յուսոյ մերոյ,
 Զօրացաւ մահ եւ եկույ,
 Եւ դժուիք շատ տեսի ոչ կամեցան,
 Ամենեցուն յարձակեցան ի մեզ ձեռք,
 Եւ յանգման յաւաքս մեր ժամանակ ոչ ծանեաւ
 ԶՏաղորդս պատուհասին վճարմամբ անցելոց,
 Յաջորդք ի հաջորդաց փոխանակեցին,
 Եւ նուազեաց արդիւն առժառիչ շնչոյ կենդանութեան,
 Կասառառունք յաշխարհի ի պանդխտութեան իւրեանց
 Պանդխտեցան երկրորդ անգամ եւ եղև վառարանգիք...
 ... Զարթեան պատերազմունք ի չորից կողմանց.
 Յաբեկից սուր, յարեմոյց սղախումբ,
 Ի հիւսիսոյ հուր, եւ ի հարաւոյ մահ,
 Բարձան ուրախութիւնք յերկրէ,
 Լոեցին ձայնք քնարաց.
 Լոեցին բոմբիւնք թըմրկաց,
 Բարձրացան աղաղակք յալեաց,

Այսպէս ողբերգելոց հետո կցում է. «Եւ այսուքիկ այսքան, Բայց ժամ է մեզ ի դուռն պատմութեանս ընթանալ, եւ աստի սկիզբն առնել, որպէս զի դիւրեման լիցի մեզ բանօռ, տյախնքն՝ հասկանալի լինի, թե ինչու ինքը հենց սկզբում ողբում է։ Ուրիշ անգամ՝ կոտորածներէ մասին գրելուց հետո բացագանչում է. «Ո՛վ քանի՜ դառն է պատմութիւնս եւ ողբոց արժանիք, եւ իսկույն, ողբալ սկսելուց առաջ, ավելացնում է. «Այլ թերեւ ոք մեղադիր լինիցի մեզ, թէ մինչև ցերեզ զվշտաց եւ զնեղութեանց արկանես առաջի մեր գրոյցս։ Աղա իրեն արդարացնում է, թե եղած ու կատարված բաներ է պատմում, որպէս զի ամենեցուն՝ որք լսիցեն՝ շորժեցից արատասու, թէ ճրքան դառն ժամանակի հանդիպեցաք. կործական եղև մեզ այս կեանքըս... Աշխարհ՝ ամենայն ի խաղաղութեան բնակէ, եւ մեք գերիք եւ կալաւորութեք, սրկոտորք եւ անաւերք եւ յընչից կողոպտածք։ Եվ անմիջապէս սկսում է իր ողբը Հայաստանի քաղաքական եւ կուլուրական անկման համար։

Ողբեր հորինել են եւ մեր նախորդ պատմագիրները, բայց փոքր ձեւովով, ավելի ճարտասանական զուտ քնարականությամբ. մինչ Լասարիվերտցու երկի մէջ իսկական բուռն լիրիզմ կա, հորդաբուռ բռնկում եւ անմիջական արտահայտութիւն սրտակեղ սորմօքի։

Այսպիսի ողբերն, ինչքան էլ ազդու են, հաճախ կրկնվելով դանդաղեցնում են պատմութեան ընթացքը եւ հոգնեցնող ու նույնիսկ ձանձրալի կարող են լինել իրենց միակերպությամբ, բայց միայն այն ժամանակ, երբ այս բանաստեղծի երկը կորչում են պատմական եղելութիւններ քաղելու համար։ Թեպետ եւ պատմութեան համար էլ դրանք ունեն իրենց նշանակութիւնը, —նա աղպիսի ողբերի մեջ եւ առիթ է կայանքի գծեր, կա-

¹ Անգ, ԺԵ, էջ 111 եւ հաւ.

ընտր մանրամասնություններ, որոնցով կարողանում ենք կենդանի պատկերացնել կատարված բարբարոսությունները և երկրի ընդհանուր դրությունը,—բայց և այնպես դրանց արժեքն ավելի բանաստեղծական է: Մենք դրանց մեջ անհունում ենք սրտի կսկիծն այն դժբախտ օրերի հայրենասեր մարդու, որ երբ պատմում է թուրքերի ու հույների դորժած խժժությունների մասին, ինքնաբուխ արտասուքով լցված, հաճախ բանաստեղծություն է հորինում տրժակ լեզվով և դառն ու աղիորդում հառաջելով լալիս է իջ հայրենիքի կործանված սիւսեր, կուլտուրական և քաղաքական կյանքի անկումը, քաղաքների ու ավանների ավերումը, և երգում է այնպես խորը ու անկեղծ ու հուշիչ, որ խորին վշտով համակում է ընթերցողին: Եվ նրա այդ արտաբերելի երգը երկու պատկերով, սիւսավոր և ուրախ անցյալի և իր ժամանակի անփառունակ ու տխուր վիճակի, դուրս շարունակ նմանողության աղբյուր է դարձել: Եվ այսպես Հայոց թագավորությունների անկումից հետո, Հայաստանում սելջուկյան թուրքերի տիրապետությունը դեռ չհաստատված, սկսվում է հայրենասիրական ոգրերգությունը Արիստակես Հասարկերացու երկով:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԱՐԿԱՎԱԴ ՎԱՐԴԱՊԵՏ

1. Կենսագրություն:—Մեր վերածնության նոր մասվոր հասանքի առջին արտահայտիչներից մեկն է և Հովհաննես (Յովհաննէս) Սարկավադ Վարդապետը: Այս համրավաժող դրոզի կենսագրության համար, ցավով, սակավ տեղեկություններ ունինք, և եղանակն էլ մասամբ դեռ չեն ստուգված: Այս մասին՝ հատուրի վերջում Վարկավադ Վարդապետի կենսագրության շուրջը վերնադրով հավելվածի մեջ, Նա վախճանվել է 1120 թվականին: ծննդյան տարեթիվը հայտնի չէ: Որովհետև նա մեռնելիս եղել է շատ ծեր, առավել 80—85 տարեկան, հետևաբար ծնված պիտի լինի մոտավորապես 1045—1060 թվականներին, հավանորեն ավելի ևս վաղ: Հա՛ Վարդան Արեւիցու՝ նա Փառխոս դավառից էր, թի քահանայական ազգէ: Արցախի այս գավառը մի ժամանակ եղել էր մի հայկական փոքրիկ քաղաքական կենտրոն, որ ունեցել էր իր առանձին թագավորները: Կարսի Արաս թագավորի (984—990 թ.) մայրն, ըստ Ստեփանոս Տարնեցու,¹ Փառխոսի թագավորների քույրն էր, բարեպաշտուհի ի բարեպաշտ ծնողաց: 1003 թ. շիրմանքն Փառխոսայ, որ ի Հոյկապահան ազանց բաւալ մինչև ցմենեքերիմ և ցիբիդոր՝ սպառեցան մահուամբ: Զորոց աշխարհն բաժանեալ հակառակութեամբ ի միջի իւրեանց արքայն Հայոց Գագիկ և Փաշայուն ամիրտն Գանձակայ: Գանձակի ամիրտն նվաճել է քանդակաբար արեււլյան դաշտային մասը, իսկ Հայոց թագավորին անցել են Վայոց Զորից դեպի հյուսիս-արեւելք ընկած լեռնային գավառները: Եւ տիրեաց նա [Գա-

¹ Մեծին Վարդանայ Գամութիւն տեղեքեւան, Մաշկո, 1863, էջ 189.

² Ստեփանոսի Տարնեցու, Գամութիւն տեղեքեւան, Ս. Պետերբուրգ, 1888, էջ 198, 250, 253.

գրել¹ յուրով բերդից և զաւտոաց ի սահմանացն Վայոց ձորոյ: Յաշնոյ և Փոռոսոսոյ:՝

Թե որքան է տեսել տայ բաժանումը, այդ հայտնի չէ: Բայց դրանով ոչ միայն չի մարել ազգային տեղաբնակչան զազափարն ու ոգին այն կողմերում, ուր կային միշտ տեղական հայ իշխաններ, այլ, ընդհակառակն, ազնիւ ևս վառ ու բոլորք է մնացել հանգստի աշխարհների ռոմանթիզմին: Բացի այդ՝ շարունակ զարգացել է այնտեղ եկեղեցական մշակութիւնը, ինչ որ ձեռողներն միջոցով անպայման դորեզ ազդեցութիւն է գործել մասնակ Հովհաննեսի կրթութիւն և բնավորութիւն վրա, եթե միայն ստույգ լինի Վարդանի հաղորդումը, թե նա Փոռոսոս գավառից էր: Այնչա՛նք՝ զրուսմ է, թե ինքն իսկ Սարկավազն էր խոսքովը... զրվածքի մը մեջ՝ ասում է իր մասին. «Ի նախնեաց բարեպաշտից և յիմաստուն ձեռողաց բուսեալ, որք սնուցին զիս օրինօք հոգւոյն կենաց՝ տոնել քան ըստ բնութեան տաճիւք խնամս յառ մանկուսս: Երովք յառաջնունն հասակին դաստիարակեալ՝ յոյս տայի քաջութեանս:՝ Հովհաննեսի ձեռողներն, ուրեմն, տաճնէին խնամքով սնուցել և զաստիարակել են իրենց որդուն, ներշնչելով նրան բարեպաշտութիւն և գիտութիւն, տեղայման և հայրենիքի ու հայ ժողովրդի սեր: Նա մանուկ հասակից արդեն իր բնատուր շնորհքով հույսեր է տվել իր ապագայի համար: Ուսումը կատարելագործելու նպատակով, անշուշտ ձեռողներ յորդումով, նա մտել է Հաղբատի վանքը:

Հովհաննեսի մանկութիւն և պատանեկութիւն տարիներին Հայաստանի ամենազմբախտ ժամանակն էր, Հայկական իշխանութուններն իրար ետևովից ընկնում էին, և երկիրը մատնվում էր ավերմունքի: Բայց Հայաստանի հյուսիս-արևելյան կողմերը, ուր տիրում էին հայ թագավորներ և իշխաններ, ապա և Վրաց թագավորները, ընդհանրապես զեռ խաղաղ էին մնում: Կենտրոնական Հայաստանում վանքերը հետզհետե խափանվում էին. ուսումն ու գիտութիւնն ևս ավերվող քաղաքներից փախչելով՝ ապաստանում էին երկրի համեմատաբար ապահով վայրերում, լեռնային ամրւր և խուլ անկյուններում: Այստեղ դարձյալ վանքերն էին դառնում գրականութիւն մշակող: Ստանիի ու Հաղբատի վանքերը, որոնք հիմնված էին 10-րդ դարում, վաշխելով Հայոց Բագրատունի թագավորների, հետագայում նաև Վրաց թագավորների առանձին խնամքը, նվերներով հարստացել ու դարձել էին ոչ միայն բազմաթիվ կրոնավորների եղբայրանոցներ, այլ միաժամանակ նաև լուսավորութիւն կենտրոններ իրենց անվանի գրագետ վարդապետներով: Սկզբում Ստանիի վանքն է հռչակվում իր դպրոցով և գիտուն վարդապետներով, որոնցից Անանիա Ստանիեցիին նշանավոր է հանդիսացել իր գրական երկերով:՝ Ստանիից հետո սկսում է բարձրանալ Հաղբատի վանքը:

¹ Անդ, էջ 256.

² Յուլիէզ հայրենեաց Հայոց, Դ. Մ. Այնճըն, Ի. Ետար, Վենետիկ, 1870, էջ 264.

³ Այս ցեղատը բերում է և Զաքարիայանը Վայկ. հին զգր. գտած: Մէլ, աղբյուրը ցույց տալով տեղի տեղ մը՝ առաջ բռնելով ըստ հին վերնախոս սովորութիւն: Հետքեր է իմանալ, թե Սարկավազ Վարդապետ իր որ զրվածքի մէջ է գրել այն:

⁴ Հաղբատ և Ստանիի վանքերը (957—1800). Ն. Ս. (Նրզիւնդ Ս. Տեր-Միքայել) «Աղբատ» ամսագիր, էջ 371—372, 336—344.

Տուղբիլ և Ալփասաւան սուլթանների վայրագութեաններն արգելք չեն լինում, որ մեր պատանին Հովհաննէսը Հաղբաթի (գուցե և Սանահնի) վանքի խաղաղ անկյունում ուսմամբ պարագներ և զարգացնելու իր ընդունակութեանն ենք։ Նա այնտեղ խորը հմտանում է իր ժամանակի ոչ միայն եկեղեցական, այլև արտաքին գիտութեաններին, ինչպես և ճարտասանութեան ու ցերթողութեան, և դառնում է մի շատ գովելի անձ իր ձեռք բերած ուսումով։ Նա մնում է նույն վանքում իրրեկ կրօնավոր և իր անխնայ գործունեութեամբ ու հոգակով բարձրացնում է իր վանքի տնունը։

Երեւի, ինչպես կարծում են, Հովհաննէսը վաղ տարիքում ստացել է սարկավագութեան եկեղեցական աստիճանը, և երեւի երկար իրրեկ սարկավագ է մնացել, ուստի և «Սարկավագ» հորջորջը մնացել է նրա վրա իրրեկ սովորական անուն։ Նա բնակատեղի անկողնի նաև ժամանակի գիտական աստիճանը՝ վարդապետութեան, որով և սովորաբար կոչվում է «Սարկավագ վարդապետ»։ Նրան անվանում են նաև՝ «Ժամաստան»։ «Մեծ Սոփեստան» Հաղբաթայի։ Նրա գերեզմանը, որ ջրօժի մնում է Հաղբաթի վանքում, ունի այս աստղանագիւրը։ «Աճանս այս՝ սեմական է՝ Սոփեստոսի Սարկավագին։ Այս «սոփեստոս» բառն առնվում է, հարկով, իր հին հաւանական լավագույն իմաստով՝ իրրեկ իմաստուն, գիտուն, գիտնական, այլև ճարտասան, ճարտասանութեան ու փիլիսոփայութեան ուսուցիչ։ Նա իր բանաստեղծութեան մեջ, որի մասին ներքևում կխոսվի, ինքն իրեն անվանում է «կիսակատար իմաստակ», այսինքն կիսակատար սոփեստան։ Շատ պարզ է, որ այս «Ժամաստան» ուսումնասիրել է նաև իմաստասիրութեան։ Թե այսպիսի բովանդակութեամբ երկեր էլ հարկնել է նա, թե չէ, այդ չգիտենք։ Նրա մահից անոտ հարաւար ասելի հետո ծնված, շատ տեղեկութեանների գիտակ պատմագիրը՝ Նրա մասին գրում է. «Յայտ իմաստուն էր այլև և աստուածային շնորհօք պարգաւաւ, որքա ընդն ամենայն իմաստասիրական ոգով, որդէս գործերով Աստուածաբանի, և այդ գեղջուկը։ «Մեծ իմաստուն գիտութեամբ քան զայլովս և հանճարեղն յամենայնի՝ մտաւարաւստն մեծաննէս, Սարկավագ կոչեցեալ, մեր այն վարդապետներից է, որ երբեք չի գոհացել իր իմացածով, այլ հարաւան աշխատելով ձգտել է նորանոր գիտածներ ձեռք բերելու Եվ իզուր չէ, որ նրա աշակերտ Սամուել Անիցին, ասումը նրա տնունը ապուր, պարզապես կոչում է նրան «վարդապետ մեծ», «Ժամաստանը», «Ժամաստանը» աստուածային, իսկ ավելի ուշ՝ Կրակոս Գանձակեցին մի տեղ նրան հիշում է լոկ «Աշխատասերն մեղանունով։ Նա ինքն էլ ներքևում վերլուծված իր բանաստեղծութեան մեջ իր մասին գրում է, թե ուսման ու գիտութեան համար շատ աստիճաններ գերեք ցերեկ զգեցել ու տեցել է։ Վերջերս այսպարեքված մի հին հիշատակարան՝ Նրա մասին գրում է.

² Այսինքն՝ հովհաննէսը կյանքի մուտքի շտապէս, շեմակն է, որի վրայով պիտի անցնել Կոնստանդնուպոլիս մեջ մտնելու համար։

³ Պատմութեան Հայաստանի հիշատակարանի Գանձակեցւոյ, Թիֆլիս, 1909, էջ 104 և հետո։

⁴ Տես Երեւանի Պետ. Համալսարանի գիտական աշխատութեաններ, հատ. X[II], Երեւան, 1940, էջ 470—481. Ար. Մովսիսյանի «Հայագիր պարոյրի ձագուսը և նրա հետագայ զննարկը» հոգւածի մեջ։

«Սա ի մանկական տնտի տիտց մինչև ցվերջին որոշումն հոգւոյն յերկրորդն [յերկրէն?] ոչ երբեք չնգնալ ոսայթաքեցոյց երբեք զուշ ոգւոյն ի նպատակէ ընթերցման. ուսանելոյ և ուսուցանելոյ, գրելոյ և ընթերցելոյ, հրակելոյ և աղօթելոյ, դաիւ և զգիշեր արաքոյ ամենայն դառաղանաց և վայրաքաղ իրաց»:

Կիրակոս Գանձակեցին (էջ 107 և հա.) պատմում է նրա ընթերցասիրութեան մասին հետեյալ գրուելով. «Այնպէս փոյթ էր այլն յուսումն, զի պատահեաց յաւուր միում գնալ նմա յայրն, ուր գրեանն էին, և այլք ընդ նմա: Իբրև ելին՝ որ ընդ նմայն էին, և փակեցին զգուան, նա թաքոյց զանձն ի ներքս, այսպէս գիտելով նոցա՝ եթէ նախ ել նա: Իբրև անցին աւուրք բազումք ի վերայ, դարձեալ գնացին յայրն ի պէաս ինչ, տեսին զնա և սքանչացան: Հարցանէին գնա, թէ՛ մի՞րպէս ապրեցար առանց կերակրոյ և ըմպելոյ: Սէ նա եցոյց նոցա զգրեանն, զոր ընթերցեալ էր, և «Այս է, ասէ, իմ կերակուր և ըմպելի, զոր կերայ և արբի գաւուրս զայստոսկա»:

Այսպիսի անդուռ աշխատանքով նա դառնում է բազմակողմանի հմտութեամբ յուններէ տեր, մեծ գիտնական, փիլիսոփա մատենագիր, տաժարագետ, պատմագիր, ճարտասան հնդկական կրօնական ներբողիների, միաթամանակ և բնական գիտութեաններով պարագլուղ ու բանաստեղծ: Նրա գիտնականութեան յայտնականագործը մեծանում է և նրա իմաստութեան համարավր և նյութ զաւանում գրուելներէ, նա մենակ չէր. միաթամանակ կային և ուրիշ գիտնական վարդապետներ—նրա ընկերները: Նրանցից հիշվում են՝ Ալովկա որդի Դավիթ, Թոքակերի որդի Գրիգոր. բայց Սարկավագ Վարդապետն ամենից բարձր էր: Այս երեքն էլ, ասում է Կիրակոս Գանձակեցին, «էին յաշխարհէն Գանձակայ: Եվ ապա (էջ 107) բերում է, երեի Գանձակում լսած, հետեյալ գրուելով. «Դէպ եղև զի յաւուր միում նստէին երեքեան արքս սքանչելի, եկն անդ ոմն շինական այր մի և ասէ ցնոսա. «Երանել որ գիտէ ի մատանագոյն իցէն: Զայս իբրև ծաղրական ասաց, Պատասխանի ետ Թոքակերի որդին և ասէ. «Սա ասեմ քեզ. մինչդեռ էաք ի մերում աշխարհին, ես կարող էի և կարող. իսկ Սարկավագս՝ կտրել միայն գիտէր: Իսկ այժմ սա կտրէ և կտրէ, և բազում նկարս յաւելու ի վերայ: Զայս ասակաբար վասն իմաստութեան նորա ասաց»:

Նա իր շնորհքն ու մեծ պատրաստութեանն ամուլ չի թողնում. բացի այն, որ աշխատասիրում է շատ զբաղեցնել, այլև անտարբեր և անհոգացող չի մնում ժամանակի հրատապ խնդիրների վերաբերմամբ: «Սա զբաղմաց փափաքելին, և ճշ ձեւեղաս, զհաստատ և զանշարժ սոսմարն կարգեաց Հայոց՝ փոխանակ շարժականին և անհաստատոյն. արար և միաբանութիւն ամենայն ազգաց տօմարի ընդ Հայոցն:՝ Հայկական տօմարի այս կարգավորութեանը Սարկավագ Վարդապետի նշանավոր գործերից մեկն է: Հայոց թվականը, որ սահմանված էր Մովսէս կաթողիկոսի օրով, սկսվում է 552 տարեթվից և շարժական էր: Տարին հաշվում էին միշտ միայն 365 օր: Նաևանջ տարի չկար, որ չորս տարին մի օր ավելի հաշվեին, և տարին

ունենար 306 օր, Տոմարի այս թերութիւնը շփոթութիւնների տեղիք էր տալիս: Արդ՝ Սարկավազ Վարդապետի ձեռով 1084 թվականից ընդունվում է անշտրժ տոմարը՝ նահանջ տարով: Բացի այդ՝ տարեգրութեւ կամ նամուսարդի մեկը, որ տարիների ընթացքում հուլիսի 11-ից դեպի եւս շարժվելով՝ 1084 թ. ընկնում էր փետրվարի 20-ին, բայտ բարեկամացողքի մշտեթ տոմարի՝ նշանակվում է օգոստոսի 11-ին¹:

Սարկավազ Վարդապետի հոգացողութիւնն առարկա են դառնում ժամանակի համար կարեւոր ուրիշ խնդիրներ եւս: Այսպես, օրինակ, նա բանասիրական աշխատանքներ է անում, պարզելով և դուրսբերելով դարձնելով հին իմաստասիրական գրվածքները, աշխատելով ձեռք բերել ստույգ օրինակներ ոչ միայն արաբերէն կոչված երկերի, այլև կրօնականների համար՝ սողոմոսների թարգմանութիւնը փոփոխութիւնն է ենթարկված եղել կամ ազդեցութեւ, կամ այլևայլ թարգմանութիւններով: Այդ գրութիւնը շփոթութիւնն առիթ է ապրիս եղել Սարկավազ Վարդապետը դառնալով առաջինը՝ համար՝ Հաղթատի վանքի գրանցողը որոնելով դառնում է հին թարգմանիչների գրած մի Սողոմոսաւում և արտագրել տալով տարգմտւած Հայաստանի բոլոր կողմերը, որպեսզի ամեն տեղ միատեսակութիւն լինի այդ երգերի նկատմամբ: Եւ ուրիշ այսպիսի հոգացողութիւններ:

Նրա գործերից ամենակարեւորը, սակայն, եղել է այն, որ նա իբրև վարդապետ միշտ հոմար է եղել ուսուցանելու. սիրով գրովոր պատասխանել է ուրիշների տված հարցերին և, որ գլխավորն է, ուսուցչութիւն է արել և պատրաստել է բազմաթիվ աշակերտներ, որոնց մի քանիսի գրական աշխատութիւնները դեռ մնում են: Նա իր այս ժաշկան աշխատանքով մեծապէս է Հաղթատի դպրոցի անունը և, կարելի է ասել, որ ինքը պատճառ է դարձել այդ վանքի գիտական և ուսումնական փոռովոր համբալի: Նա ուսուցել է և Անի քաղաքում. վերնում հիշված հետաքրքիր ձեռագրի մեջ՝ Սարկավազ Վարդապետի համար պատկերավոր ձևով գրված է նաև հետեւվայլը. «Որ իբրև գիտաստուն մեղու՝ բարձեւ յաշխամս մասց գեղեկս յերանդոց գունոց հոռոց և համոց՝ բերէր ի քաղաք իւր և տեղի օննդեամ ի քաղաքամայր Ունի, և լի տունէր գտունն ի փորթամութենէ անտի... Եւ ուրիշ բան ըրողեւ զմանկունս զերեւա. խնամրեալոր և տխրեւի սիրով ուսուցանէր զխրթին և զխորին իրաւ: Այս դպրոցում նա ուսուցել է նաև քերականութիւն, թվաբանութիւն և այլ առարկաներ:

Այսպիսի բազմակողմանի ու բեղմնավոր գործունեութիւնն համար՝ ինքն, այս մեծ վարդապետը, վայելել է մեծ հարգանք ամենքից, Այս Վարդապետն սուրբ,—ինչպես կոչում է նրան Սամուել Անեցի,—իրև կրօնավոր ևս հայանի է եղել իր բարեւոք քաղաքավարութեւմ—կենցաղավարութեւմ: Նույնիսկ զրույցներ են պատմել նրա սրբութեւն մասին², «Գեղերի յոյժ սիրէր դառ թագաւորն Վրաց Դաւիթ... այնքան զի մինչ լսէր

¹ Օրժանյան Սողոմոս արքեպիսկոպոս, «Ազգագրամա», Գնդառնգ-Նապոլի, 1915, էջ 569—574, 1806—1809.

² Դ. Ալիշան, Յուլիէ հայրենեաց Հայք, համար Թ, Վնենիկ, 1870, էջ 288 և հետ.

³ Տեա նորազ ծանոթութիւնը.

⁴ Գիր Գանձ, Գոմ. Հայոց, էջ 108 և հետ.

զգույնաւ նորա, յստն յառնէր ընդ առաջ նորա, և խոնարհեցուցեալ զգլուխն՝ խնդրէր ի նմանէ օրհնութիւնս,¹

2. Արկիբք: — Բազմաթիւ և ըստ բովանդակութեան բազմազան են եղել Ստրկովուգ Վարդապետի գրական գործերը, որոնք մեծ մասամբ չեն ազատագրված, մասամբ երեսն չեն եկել, կան ախպիսիներն էլ, որոնցից հետովաներն են միայն հայանի, Նա հորինել է ներողականներ, մեկնութիւն, ճառեր, ազգեր, շարականներ, ազոթքներ, առմարական աշխատութիւններ, խրատներ (Բժան խրատաւ առ ուսումնասէրս), արեղբորագրական և ուրիշ ընագրական գրվածքներ, փրիսոփայական, բարոյագրական երկեր և այլն² Շատ ցավով է կորուսաւ նա հորինած Պատմութեան (ըստ երևույթին՝ երկու գիրք), որ հիշատակում են հետագա գրողները, և որից հետովաներ է մեջ բերում Սոմաեւ Անեցիւն³ Նա գրած է եղել Սելջուկների պատմութիւնը սկզբից սկսած: Տուգրիւի վերջին տարիներում, ինչպես և Ալիսուլանի ու Մելիքշաւի օրով կատարված զեղջերին նա ժամանակակից է եղել, Մեկ հասած հետովաների մեջ ցոլանում է նա վերաբերմունքն իր պատմած եղիւթիւններին և նա ճարտար ու բովանդակաւից շարադրութիւնը՝ պարզ, մշակված և արվեստավոր, միանգամայն և ազնիւ սնով: Ավելորդ չի լինի այստեղ բերել այն կտորը, որով նա բնութագրում է Մելիքշաւին՝ «Իբրև առնոյր զփառս իշխանութեան րարբրապոյն Մելիքշաւ պինի հօրն մահուան՝ Ալիսուլան կոչեցելոյն, մեծապէս կարգօք յօրինէր զթագաւորութեան ըստ տնուանն արդարեւ եղեալ արքայ արքայից: Ոչ հասեալ հօրն րարաց և կամաց, այլ յաւէա մանաւանդ զընդգէման ախորժակ: Մինչ զի մահաւան եղեալ զնորայսն րարէր զիմացմունս, իբրև եղեալ հակառակ խղաղութեան և կենաց մարդկան՝ արեւմտ և զրկմամբ խոնարհեալ: Ինչ ինքն իմաստաբար քաղ-ցածմարութեան կարգօք պատրասէր զամենայն: Արդ՝ խոհմն այն և արի ճան զյուրովս ի թագաւորաց և ճան դամենեանն որ առ մեռօ՝ ոչ այնքան ասնէր հոգ՝ որքան արդարութեամբ առ ամենայն վարիւ: զի մի ոք լիցի արաում ի զրկելոց, և հպարտ՝ ի գոռոզաց, էր և ազատաբարոյ և մեծախորհուրդ. այլ և աստի ժամնայն արժանի թագաւորութեան: Ընդ որսմ հեղութիւն ի քաղցրութիւն բարուցն լծակցեալ՝ ասնէր սիրելի ամենեցուն. զոր միայն կոչեցից թագաւոր և փաթաւ: Սա ի դոյզն ժամանակի փոքր ինչ նուազ զբոլորս հնազանդէր տիեզերս, զորս այլք ի թագաւորաց ի բազում ժամանակս և կամ հչ բնու: Բայց հչ այնքան պատեհեալաւ և բանութեամբ, որքան սիրով և քաղցրութեամբ: Զի թէ սակաւ ժամանակաւ այնքան զօրեաց, կարծեմ թէ և ոչ նւարդէ կարէր ոչ աւել

¹ Անդ, էջ 106:

² Ղ. Մ. Ա. ի 2 և 3, Յուլիկէ հայրենեաց հայաց, հասար Բ, Վենետիկ, 1870, էջ 278—307, Ստրկովուգ Սոփեաւէ, էջ 299—300:

³ Զ. Զ. Զ. հ. 2 և 1 և 2, Հայկ. Էն. զար. պատմ., Վենետիկ, 1857, էջ 609—610:

⁴ Ս. 4 1 և 2, Էնգլանդի Ստրկովուգի գրութիւնները, Էնգլանդի Ամսթերդամ, Վենետիկ, 1828, էջ 118—120, 233—247, Անդ, էջ 27—30՝ Էնգլանդի Ստրկովուգի կոմպոզի. Նույն Էնգլանդի:

⁵ Սոմաեւի ճատնայի Անեցիւյ Հաւաքմունք ի զբոց պատմաբանաց, Վաղարշապատ, 1893, էջ 97 և հա., 119 և հա.:

մութաս արքայութեան նորո, եթէ յարվեալ էին կենաց նորո ժամանակը: նոր մահից հետո, —ասում է, —առաջագոյնի հոգ խաղաղութիւն ամենայն ազգաց . . . Ըն այսպէս բարեքն ի բաց վնասեցուն ընդ խղճան կենաց թաղաւորին, որոյ երկը և աշխատութիւնք թաղաւորական ուրոյն, և շան և զգուտն՝ հասարակաց ամենեցուն, մեծամեծն և ընտրելիքն, ժամանակը պատգամականն ասեմ զկեանս, և զանկարծաս և զանհաւատական:

Այս մեծ նշանակի գրական գեղեցիկ լիովին կողարգլի, երբ նոր բոլոր երկերը, ինչ որ մնացել է, կհավաքվեն և իսկական դիտական եղանակով կհրատարակվեն ու բազմակրթանի կուսակցութիւնը: Այն ժամանակ մենք կտեսնենք նոր հայացքները, թե ինչպես նա իր յուսովոր մաքով հաճախ բարձր է կանգնած եղել միջնադարյան թանձրամած խավորից, մի խաղաղակիր ու սրնոց ուրի, ձգտող իրերը բնական ձևով բացատրելու, մաքառող ընդդէմ անհավատքի կամ, ինչպես ինքը գրում է, ճշտաստեղծական, սառնթյուն, «հիմարներէ կարեքներէ»: Այնչա՛նք՝ նոր գրվածքներէ, — ցավով գործարկ տառն հայտնելու, թե նորա «ք երկերից, — բերում է երկու ցիւտում՝ սանկով, թե ինքը Սարկավազ Վարդապետն ուսումնական բաներ հավաքելու և գրելու համար հայտնադն աշխատելու է, թե «Ամենեկն բազմամասն ապրա է զսլ ձեռնարկողին ալս, ալ միայն սրբոց և աստուածաշունչ գրոց, ալ և արտաշնոց, Ուրեմն պետք է տիրապետել ժամանակի ամբողջ գիտությունը, բայց այդքանն էլ զեւ բազմական չէ. նա պահանջում է նաև փորձող ստեղծել գիտցածը. «Դարձեալ թէ և սրբոց [կրօնական և արտաքին գիտություններով] կերթ և վարժ, առանց փորձի՝ կարեքն հաւատարմանով ոչ կարասցեն. և փորձն՝ հաստատուն և աներկբայ... վրէժի ալ է պարտ միայն հնազանդակ [ահի բաների խմբող] լինել, ալ և ինքնաբաւ [— ինքն իրեն բազմական, ուրիշի անկարող] ըստ շնորհոցն աստուծոյ: Ահա թե Սարկավազ Վարդապետը որպիսի արժեք է աւելի փորձին: «Առանց աշակերտի նարից գրող կամ խոսող գիտնոց խելքը՝ մեղադրելով կ'անուանէ. «Եւ և հաճախ՝ անհանձնարիցն, — ավելացնում է մեր բազմաճառաւ բնաստեղծ-բանասերը և շարունակում, «Արդ անտարակաւ սարբը կրնանք ըսել որ Սարկավազ Վարդապետ շատ մեծ արդյունք ունեցեալ աշակերտի ջանքով և գործերով, սրբոց բովանդակութիւնն է՝ ըլլալն իր ժամանակին և երկրին մեջ՝ նորոգող ուսմանց և ընտիր ախրժակ մացող ինչ որ ժն դարուն մեջ սկստն Եվրոպացիք՝ ինքը մեծասաներորդին սկսեր էր, կամ թե իրեն ժամանակակից պարոտական ըսվածներուն հետ: Այս ընտրողութիւնը շատ ճիշտ է: Արդարև Բաղբատունի թագավորներէ օրով բողեն, Անիում, ինչպիսի տեսել ենք, մեծ ձգտում և ջանք կար գիտութիւնը նորոգելու հայերի մեջ և այդ ձգտման ու ջանքի ներկայացուցիչն էր Գրիգոր Մարտիրոսը, բայց իսկական կատարողը, զուի բերողը եղել է Սարկավազ Վարդապետը: Նա շարունակել է Անի քաղաքի գործը, անպայման նաև այս քաղաքի ազգեցութեամբ, քանի որ նա ամենայն հավանականութեամբ վաղ մանկութիւն ժամանակ, ծնողների հետ տեղափոխվել է Անի, այնտեղ մեծացել ու սնվել և այնտեղ ուսումն և գիտութիւն ամբարել իր գլխում:

Հուսովորչի, հեռագրական սենով և կիրթ հանճարով յօրինուածն:՝ Որ Սաբ-
կավազ Վարդապետը հաս, Ներքողյան ու շարական հորինել է հայկական
դաժմական անձերի վրա, կարելի է ասել, որ զբանցով հիշեցնելով հայ
անցյալը՝ նա ցանկացել է խորհուսել սրտաբեկ մարդկանց, ի պատիվ
Հինհայանց սպան հոգեւոր երգի՝ մեջ նա գրում է. «Հեղձմար արեան սրբոց
քոց հասարակաց գեկեղեցւոյ քոյ ցրուեալ մանկունքս ժողովեալ յարախու-
թիւն, ըզվարտաեալ առամուրթեամբ և արտաուսաց յարգահոս ըզգիմար
փրկութեան մերոյ պարզեաց բալիւճա՛ր: Նա խնդրում է, ուրեմն, սր առա-
ված հայ եկեղեցու ցրված մանուկներին, արամությամբ և հարգահոս ար-
տասուքով վարտապաններին (իրենց տեղից, երկրից ըզված, ցիրուցան
եղաններին) ժողովի ուրախությամբ և փրկի: Երկրից հայ ժողովրդին հա-
վաքելու այս տենչն ու ձգտումն հաւ դառնում է մի նվիրական իղձ ու
ազօթք և շատ վաղ, Լուսինիկեացու կրտսեր ժամանակների, Սաբկավազ
Վարդապետի ձեռով մանում մեր ժամերգության մեջ: Այդպեղ պէս չկա
քաղաքական անկախության խնդիր, այլ միայն անուղանքից ազատվելու
և Հայաստանում մնալու մի իղձ է այդ:

Սաբկավազ Վարդապետի այս ազօթքը շատ փոքր, իր ձեռով շատ հա-
սարակ ու հետեակ բան է. բայց իր բովանդակությամբ մեծ ու վսեմ է և
անկեղծորեն բխած լինելով իրականությունից, խորն ազդու է մանավանդ
երբ իր գեղցր եղանակով՝ երգվում էր եկեղեցում առաւոյալ հավաա-
ցյալներից, առանձնապէս Նրանցից, սր դեռ երկար դարեր զգում էին
իրենց վարաւած լինելը և աչքերը կարողով դարձնում էին գեպի իրենց
բնիկ երկիրը՝ Լուստան:

Այսպէս՝ մեր բանաստեղծութեանը, կրանական զգացումից և հայրե-
նասիրական ոգրից հետո, գտնում է արդեն իր կարեւր և մեծ թեմաներից
մեկը, որ այնքա կրտսերան չէ: Ճիշտ է, դա ասելը զեռ շատ աւելի է, բայց
դա այնքա ոչ չէ, այլ մի նոր բովանդակությամբ ու նոր ոգով մի երգ
է, դարձյալ հայրենասիրական: Եվ այսպիսի դարգացումը բնական էր. խիստ
կրտսերանից մի անգամով թռիչք չէր կարելի տնել գեպի մաքուր աշխա-
րակումը, աշխարհիկ կենցաղն ու սերը, քանի որ բանաստեղծները զեռ հա-
ղհարական էին, իսկ հայրենասիրությունը նաև սրանցն էր: Այսպիսի հայ-
րենասիրական թեման միաժամանակ և այն դարի պահանջն էր: Եվ քանի
որ հայ ժողովրդի վիճակը նույնն է մնացել 11-րդ դարից մինչև առ ի
20-րդ դարի առաջին երկու տասնամյակները, քանի որ կրկնվել են կոռու-
թանքներն և ժողովրդի վատարանգումը, ուստի և այդպիսի թեմայով երգը,
առաջած ազօթքը, հարատևել և կրկնվել է մինչև 19-րդ դարում և գեալը,
սիմ սիրելի գաւազնունքս կը թափառեն օտար աշխարհ...: Եվ հայը, որ-
դեակէ իմ սիրելիէ...: ԵՄեր հայրենիք զիս կու կանչէ...: ԵՄինչ իմ
սրգիք, ով գիտե... օտար աշխարհ հաճում ենն, ահա 18-րդ դարի երկրորդ

¹ Վրտանյաութեան հուշ: ինչպէ՛ս նաև Ներքողական զանգաց ի ու Հուստաբէլն և
ի Թաբաթանիւ և Աղօթմամառայն հրատարակել են ի Վենետիկ ի շարա Հայկական Ու-
սիկեաց 1853 թ.: Չարբը, Հայկ. գրք. պատմ., Բ, էջ 618, 3-րդ տ. 1853, այլ էջ 618:

² Շարական հաղթք, էջ 2-րդին, 1861, էջ Բ. Եղանակն է Վարդապետ Սա-
կավազի գլխահանգ 7-8 մանկունք՝ զՊայծառացար տարւոյ: 88 ու էջ 881:

կեսին սերված երգերն ընդհանուր կողմը: Դա իր բովանդակությամբ մի
ամբողջ գրական տեսակ է: Եւ իր սկիզբն առնում է Սարգսի վարդապետի
այն ըստ երևույթին անշան հոգեւոր երգից:

4. Եւ իմ իմաստութեամբ: Արվեստի ծագումն Ոսր տեսությունը:—Սար-
գսի վարդապետի բանաստեղծություններից *Քուս* է միայն մեկը՝ Եւսն
իմաստութեան ի պատճառս զբաւանաց առ ձագն սր զգոթանացաւ նորա
հուսկդէր քաղցրաւայն որ կոչի սարիկ: ¹ Այս մեծ (188 երկայն տողերով)
քերթվածն իր մեծով ու բովանդակությամբ մի նշանակալից նորություն է
մեր հին գրականության մեջ: Եթե դա պատահամար փրկված չլիներ կա-
1. Հայ գաղութն ասորական Մեղեքեղայումս իրրև հայկական մշակույթի վայր։—Մինչ Հայաստանի հյուսիսում Հովհաննես Սարկավազ վարդապետը խոնարհվել էր արքան դեպ իր արևմուտք, և Մատթեոս Ուռույթյան Միջագետքում աշխատում էր իր ժամանակագրության վրա, նույն միջոցին Հայաստանից դուրս, Մովսէս Բարեգում, 1121 թ. իր առաջին բանաստեղծական գործն էր անում ջատագույն ներսես Պալավուհին՝ հորինելով իր «Վիպասանութիւնն աշխատությունն»։ Հույների և սելջուկյան թուրքերի ձեռքից 11-րդ դարում հայերը դիմում էին դեպի արևմուտք։ Բազմաթիվ հայ իշխաններ իրենց մարզկանցով, հաճախ իրենց ժողովրդի բազմությամբ, մայր երկրից դուրս ցաղվելով կամ քշվելով՝ տեղավորվում էին Փոքր Ասիայում, Կիլիկիայում՝ Տավրոսյան լեռների վրա, Միջագետքում, այլև Ասորիքում՝ Եփրատ գետից արևմուտք։ Նրանք կազմել էին այդ կողմերում անկախ կամ կիսանկախ փոքր իշխանություններ, երբեմն էլ անունով սխալ կամ թաքնվելով Բիզանդիային՝ իրենց անկախությունը պահում էին կազմելով մի կողմից՝ թուրքերի դեմ, մյուս կողմից՝ հույն իշխողների։ Այսպիսի տարազերմիկ վաթառականներից մեկն էր հղել և ներսեսի պապը, մի Պալավուհին իշխան, Գրեգոր Մարգարոս Պալավուհուն չորրորդ դասեր մոմսինը։ Նրա որդիներից մեկն էր Ադիբաա Պալավուհին, ներսեսի հայրը։ Նա տերն էր Մովսէ կամ Մովկոյվան փոքրիկ բերդի կամ գղեկի, որ գտնվում էր Տյուք գավառում, Անտիոքի երկրի մեջ, Մարաշից (—Գերմանիկից) դեպի արևելք և Ախթալից դեպի հյուսիս-արևմուտք, Սև լեռան շղթայի հյուսիսից մեկի մեջ, մի բրգան ջրամույր ու ջրակարկառ դադաթի վրա, ունեն կողմից սեղապում։¹

Աշխարհականների հետ զաղթում էին նաև կրոնավորներն ու վարդապետները, որոնք տեղավորվում էին նորադին վանքերում, գլխավորապես Սև լեռան վրա։ Այսպես կոչվում էին Կիլիկիայի և Ասորիքի միջև հարավից դեպի հյուսիս ձգվող Ամանոս լեռնաշղթան, այնպիսի ևս սրտ դեպի հյուսիս-

¹ Բարեգում Է. Վ. Կիլիկիայի, Մովսէ. Մովս-Տյուք և Համ-Կլայ, Վիեննա, 1904.

Հեռ. Գ. Մ. Ալի-Մե, Շնարհ-Է և պարագայ իւր, Վիեննայի, 1878, էջ 90 և հաջ. 131, 139, 310.

Բ. Կյուլեսթյանը ժամբաժան ուսումնասիրել և որոշել է Մովսէ բերդի և Տյուք գավառի տեղը։ Նա նրապատմիկի աղաղբությունից բերել է նաև Մատթեոս Ուռույթյան ժամանակագրությանը Գրեգոր ներքի հետևյալ վկայությունը. «Եայրմ ամի (1181—1189) Տէրն Անտիոք... էլանէր յԱրքայս երկիրն, և ի բերդն Կաթողիկոսի, որ կայի Մովսէ Արքայս անվան տակ նա հասկացել է Ալեքս Ա Կարբ Բիզանդիայ (1081—1118)»։ Բայց պարզապես աղետում է դա։ Ուշիշ անաղագիտների մեջ, ըստ էնթազմի աղաղբության, է Երեմիքն Տյուքը։—Մի ժամանակ սխալմամբ կարելի են, թև Մովսէ Յովսէյան լեռների մեջ, Մովսէ աշխարհում, Խորբերդից հասցով գտնված լեռն է։

արեւելք և արեւելք թեքվող այն ճյուղերը, որոնք խառնվում էին Կիլիկիայի հյուսիսային կողմերով դեպի արեւելք պարզված Տավրոս մեծ լեռնաշղթայի ճյուղերի հետ:

Այս լեռան ընդարձակ թևերի վրա՝ բնական մաքուր լեռնա-
զավթած էին հույն և ռուսերի կրոնավորներ ու ճգնավորներ, Գրիգոր Վկայա-
սերի ջանքերով հիմնվում են այնտեղ և հայկական վանքեր: Ասորիքի այս
մասում, — Կիլիկիայից արևելք, Տավրոսից հարավ և Եփրատից արևմուտք
և հյուսիս-արևմուտք, — Եփրատացիքը կոչված աշխարհում (հին հիմագեն
թողավորութեան երկրում, որի մայրաքաղաքն էր Սամասա), Վիլջեր-
կայքում, ինչպես անվանում է ներսես Շնորհալիս այդ կողմերը, 11-րդ
դարի վերջերին և 12-րդի առաջին երկու տասնամյակներում կար, ինչպես
տեսանք, Գող Վասիլի հայկական մեծ իշխանությունը, որի կենտրոնն էր
Փեսուն՝ քաղաքը Եփրատին մոտիկ: Կային այնտեղ նաև մի քանի սլավոն
հայկական մասն իշխանություններ: Այս Վիլջերկայքն ահա իր վանքերով
ու հայկական իշխանություններով՝ գտնվում է հայկական կուլտուրայի
համար մի նոր վայր, որի փայլուն ներկայացուցիչներն են հանդիսացել
Գրիգոր ու ներսես եղբայրները 12-րդ դարում, իսկ 13-րդ դարում՝ Վար-
դան Արցնկյեհն:

Գրիգոր Մագիստրոսի որդի Վահրամ-Գրիգոր Վկայասեր կաթողիկոսն
իր կյանքի վերջին տարիներն անց է կացրել այդ կաթողիկոսական
որոնք վայելում էին Գող Վասիլ ազդեցիկ իշխանի հովանավորությամբ:
Ներսես Շնորհալիս իր Վիպասանություն մեջ՝ այդ կաթողիկոսի համար
գրում է, թե Եզրազուսից վերագտնալիս՝ նա

Ջովհաննոց դանց արարեալ,
Մինչ ի Տաւրոս լեռոնս հասեալ,
Անդ ուր սըրբացըն բնակք եղեալ...
Ի վայելուչ յայն վայր եկեալ
Հովսէպեանին զգօնացեալ,
Ի Սեաւ մըթին լեռան անուանեալ,
Ուր են հազիք լուսաւորեալ...

Այնտեղ նա սչ միայն կրոնավորական կյանք էր վարում, այլև գրա-
կանությունը պարտադրում:

Ջրամի սիրողընց հաւաքեալ
Եւ առ ինքեան բնակեցուցեալ.
Զգիւրս Հոգւոյն միշտ ընթերցեալ
Եւ ընդ նոսին յար խօսակցեալ:

¹ Բազմից հյուսիսային Վաղարշապատի մեջ, էջ 28, 71 և այլն, Նույնպես և Մ. Օրբանյան, Արցախական, էջ 1220. Գր. 610 Փեսուն քաղաքը Նույնպեղի են Պենե-
նիի հետ, որ գտնվում է Եփրատի վրա Եփրատի, Գրիգոր Նրեքը, ռուսեր, հուսիս Կիլիկի-
է այդ երկրում իբրև առանձին քաղաքներ. Փեսուն, Պենե, Ռադան, Համալիլ ու Փեսուն,
Պենե, Ռադան. — Փեսուն Պենե, Ռադան (Ուսույթի, էջ 270, 272, 295): Այդ յուր քա-
ղաքները կամ բնակիչներ էլ Եփրատի վրա կամ մոտ են եղել՝ ռուսեր արգած կարգով հյուսիս-
այն կարգով:

Հետո նա տեղափոխվում է Քեսուռն և Կարմիր Վանքը, որ Քեսուռնի մոտ էր:

Ի Մէջերկրեայ անպատ փոխեալ,
Որ նփրառայ մերձ առակացեալ
Քաղաք Քեսուն իմ անուանեալ,
Յոր հուպ է վանք Կարմիր կոչեալ:¹

Գոյ Վասիլ իշխանն ու իր ժողովրդը պատվասիրում աւ հանձնանում են նրան՝ զբափսփմամբ ձերբառածեալն:

2. Ներքոնքի սուռումն ու կրքությունը:—Գրիգոր Վկայասերն իր ձեռի առկ մեծացնում ու կրթում էր իր քեռորդի Աղիբառ Պաշլավունու Գրիգոր որդուն, վաղ մանկությանից, կամ ինչպես Ներսես Շնորհալին գրում է,

Որ ի ստենէ զոլով հասեալ,
Ան համանուն հօրըն վարժեալ:

Հետո նա Գրիգորի հետ պահում ու խնամում էր նույնպես և նրա եղբայր Ներսեսին, որ ծնված էր շուրջ 1101 թ. և Գրիգորից մոտ վեց կամ յոթը տարով փոքր էր:² Ներսես Լամբրոնացին³ գրում է, թե Գրիգոր Վկայասերը Ներսեսին էլ շատ վաղ տարիքից առնում է կրոնավորության համար:

Տէր Գրիգորիս որ երկրորդ է,
Ի պատուական սուրբ իւր պարմէ
Ձայս հաբաղատ եղբայրս ընտրէ
Ի յըստընդեայ փոքր հասակէ,
Ի միանձանց սրբրաց կոչէ:
Գաստարաղ ուսման կտրգէ,
Ներսէս գանուն նախնայն կոչէ:

Բայց այդ երեխաները երկուսը չեն վայելում նրա խնամքը. նա վախճանվում է 1105 թ.: Մանկի տառիչ նա Անի քաղաքից իր մոտ է կանչում իր քեռորդի Բարսեղ կաթողիկոսին, — որ իր հայրական կողմից էլ Պաշլավունի էր և կաթողիկոսի աթոռակիցն էր արևելքում, — և նրան է հանձնում այն երեխաներին, որ լավ կրթի ու գաստարաղի նրանց, որպեսզի մեծ եղբայրը՝ Գրիգորը հետո կաթողիկոս դառնա: Վկայասերի մահից հետո Բարսեղ կաթողիկոսը սիրով կատարում է նրա կառկը: Նա մեռում է Գոյ Վասիլի իշխանության մեջ և նստում է Շուշր անապատում:

Ի յանապատ իմըն բնակեալ՝
Ի մէջ լեռանց՝ Շուշր անապատեալ:

¹ Ներսիս Շնորհալույ Բանք լափու, Վենետիկ, 1830, էջ 246 և հալ.

² Մաղաթեա Օրժանյան, Մաղաթագրություն, Կոստանդնուպոլիս, 1913, էջ 1899, պարագրաֆ 981 պրում է. Վեջ կաթողիկոս եղբորմե 5 կամ 6 տարեկան պարմի. — որով յաջի 1100-ին Պաշլավ կոտ Մովս պաշկին մեջն: Ուրիշները նրան 1203 թ. են մեղմե զնում:

³ Եղևատ Ներսիսեան. Ներսիս Լամբրոնացույ. — ան՝ Վրաթ ընդաներական Ներսիս Շնորհալույ, լիմբոնի, 1865, էջ 461—497, բերված կտրք էլ 478:

Այն ժամանակ իր ուսումնական վարդապետներով նշանավոր է եղել Քեսանի մոտ Կարմիր վանքը, որի տաճարին էր իր գիտությամբ հսկակված Սանտիմոս Մանուկ կոչված եպիսկոպոսը: Պատմում են, որ սա. Մեծ Հայաստանում արդեն քահանա ձեռնադրված, քարոզելիս է եղել: Այնտեղից գնացել է Քեսանի Կարմիր վանքը և այստեղ էլ տասնութ տարեկան հասակում սկսել է եկեղեցու բնից քարոզել և վարդապետել ձերուների վարդապետների թույլտվությամբ: Ուրիշները Բարսեղ կաթողիկոսին գանգառվել են այդ առթիվ: Կաթողիկոսը կարգադրության տնկույց տալ լսել է նրա քարոզը, շատ համանել է, ոչ միայն թույլ է տվել, որ այդ նորահասակ երիտասարդը շարունակի վարդապետել, այլև իր մատանին ու գոգնիքը նվիրել է նրան և եպիսկոպոս ձեռնադրելով նրան՝ կարգել է տալիս որ Կարմիր վանքի և Գող Վասիլի իշխանության իր գիտությամբ և սրբապատիվ վարքով հայտնի այս վարդապետ-եպիսկոպոսին է ահա հանձնում Բարսեղ կաթողիկոսը Դրիզոր և Ներսես Պակավունի եղբայրների կրթությանն ու դաստիարակությունը:

Քեսանի Կարմիր վանքը դառնում է մի նոր վարդապետարան. երկու եղբայրների հետ ուսանում են և ուրիշները, որոնցից են Սարգիս Շնորհալի, Իգնատիոս Շնորհալի, Բարսեղ Շնորհալի,¹ Վեմքիսի մականունին կրկնումը նշանավորապես աշակերտներուն վրա՝ մասնակցություն տալով, թե այդ կոչումը որոշիչ պատվանուն մը եղած է Շուղրի կամ Քեսանի Կարմիր վանքի տաշակերտության մեջ. ինչպես քերթող պատվանունը Սյունյաց դպրոցին և իմաստասեր պատվանունը Արագածոտնի դպրոցին հասկացալ մակդիր տանին պես գործածվեցան:² Այդ Վեմքիսիներից, ինչպես և Ներսես Շնորհալուց Թեոֆանիս են մեկնություններ, իրենց վարդապետ Սանտիմոս Մանուկից, սակայն, չի Թեոֆանիս ոչ մի գրական երկ:

Կարմիր վանքում Ներսեսն առել է եկեղեցական ուսումը, որ հետո էլ նա կատարելագործել և ընդարձակել է անգույ ջանքով: Նրա ուսած առար-

¹ Դ. Ալեքան, Շնորհալի և պարզալ իւր, Վենետիկ, 1873, էջ 49 և հաջ.

² Զարգուհան, Հայկական ինչ դպրության պատմության, Վենետիկ, 1887, էջ 610 և հաջ., էջ 643—648.

³ Մ. Օրմաշյան, Ազգապատմ., հասանելիություն, 1912, էջ 1336 և հաջ. 917. Օրմաշյանն ու Զարգուհանը Շուղրի վանքն և Կարմիր վանքը սխալմամբ նույնացնում են իրար հետ, զրեւմ.՝ Վեմքը անպատին Կարմիր վանքն (Զարգ.), Վեմքի կամ Շուղրի Կարմիր վանքն Վեմքի կամ Քեսանի Կարմիր վանքն (Օրմաշյան): Այդ երկուսը տարբեր վանքեր են: Ներսես Շնորհալին Վեմքիսիսի վանքում քերթած աղբյուրի մեջ գրում է, թե Դրիզոր Վեմքիսիսը քերթվեց Շուղր անվանված մի անապատում [«վանքում»] լեռների մեջ: Հետո նա գրում է Բարսեղ կաթողիկոսի թագման համար. «Զոր և յուխանիս [«վանքում»] նախապես ի Շուղր անունը նախադասությամբ» և թույլեցին վեմքում հիշված Շուղր անունով վանքում: Իսկ Կարմիր վանքը, ինչպես վերոհիշված քերթած աղբյուրից կարելի է տեսնել, է Քեսանի մոտ Ուսումնական (էջ 336 և հաջ.) գրում է, թե վերագործված Բարսեղ կաթողիկոսն «նա տանել զինքն ի վանքն իւր որ կոչի Շուղր», «մեկուսիս ի թագմում ի Շուղրն» Ապա անմիջապես պատմում է նա, թե ժողով են տնում զի Կարմիր վանքն մերթ ի Քեսան դուռն և կաթողիկոս են ձեռնադրում Գրիգոր Պակավունին: Ուրիշ տեղ (էջ 300) նա Գրիգոր Վեմքիսիսի համար գրում է, թե Վեմքիսիսն է Կարմիր վանքն մերթ ի Քեսան: Նույնպես և Գող Վասիլի համար տալով է, թե Վեմքիսիսն է Կարմիր վանքն (էջ 384):

կաներն եղել են՝ Ս. Գիրք, սուրբ հայրերի գրվածքներ, եկեղեցու և օրերի պատմութիւններ, դավաճարախնայուն, հայկական մտենագրութիւն ու թարգմանութիւններ թէ եկեղեցական և թէ արաբէն գիտութիւններ. հմտացել է եկեղեցական կանոններին ու կարգերին, սովորել է եկեղեցական երաժշտութիւն ու տոմարագիտութիւն, վայելել շարագրութիւն գրաբար լեզվով, այլն վայելագործութիւն թի զանազան կերպս:

Նա ունեցել է գեղեցիկ ձեռք և նույնիսկ ծերութիւն օրերին, ազատ ժամանակին, արտագրել է գրքեր, որոնց մի քանիսը հասել են մեզ. ներսնս Լամբրոսացի՝ գրում է.

Ներսէս պատուով գիր հոխացաւ,

Այլ ի գրծոյ ոչ կտանցաւ,

Ձեռացն երկօք վաստակեցաւ,

Գիրքս գրելի միշտ ճիշեցաւ.

Որպէս հօրանս ուրուց ցուցաւ

Գեղեցկագիր գիրքն կորգաւ:

Ուսումնասիր լինելով, նա շատ ցանկացել է բարձրանալ իբրև գիտնական. բայց ժամանակի շփոթ գրութիւնը թույլ չի ափել նրան հասնել իր նպատակին: Արտաքին գիտութիւնների ուսման պակասը նա զգացել է դեռ իր գրական գործունեութիւնն սկսելու: Եվ պատահութիւն զերջում նա ինքն իրեն անվանում է «համարակ նուաստացեալ», իսկ նախերգանքի մեջ՝ հայտնելով իր «անկարութիւնն» և «ագիտութիւնը», գրում է.

Ձի հրահանգից վարժարանի

Ձեմ ասկաին ներկուս բանի,

Յաթենականն քաղաքի

Ձանձն իմաստիք ոչ կըրթցի.

Ուր լըսարանն Պատանի,

Եւ չափ ոտիւք Հոմերոսի.

Ուր սառսագողն Արիստոսի,

Տասըն բանիւ գրողն էի.

Ուր հոյլք ամէն հրեշտորի,

Ժողովարան հարառանի,

Ներհըմութիւն քերականի,

Բայի քերականն քերթագի.

Ձորըս գիտել նախ պատշաճի,

Եւ աստ ապա Առնաբեկի.

Եւ զի յինէն այս է հեռի,

Տարաբերիմ յամենայնի՝

Եթէ գիւրդ սկսեանիցի

Եւ կամ որպէս վճարեսցի:

Ոչ միայն Սն լուսն վառքերում, այլև Հայաստանի քաղաքներում կար այլևս հին հունական գիտութիւնն ու փիլիսոփայութիւնն ուսումը, որ

1 Թուղթ Բագրատունի Ներսէսի Մեթուլայ, էջ 270:

այնպեա Եղոյ կերպով վերսկսվել էր ավելի քան հարյուր տարի առաջ, և որի ուսումնա այնպեա լայն ծրագրում էր Գրիգոր Մագիստրոսը: ՎՊԻՐ մեր վարժարանը՝ ի թագաւորական պարտաստեալ հրամանացն, բացազանչում էր ներսեւը իր Ֆերուքյան տարիներին:¹

Ազգային քաղաքական իշխանության հետ՝ այդ ևս վերացել էին, Տնում էին վանքերը:

Յ. Գրիգոր և Ներսես եղբայրները Մովսէ և Հոսովյոյ բերդերում:—Ներսեսը դեռ Կարմիր վանքում աշակերտ էր, որ նրա հայրն՝ Ապիրատը նահապար ապանվում է իր բերդի պաշտպանության ժամանակ: Շուտով նա զրկվում է նաև իր «հոգևոր հորից»՝ Բարսեղ կաթողիկոսից: Կարմիր վանքում ժողով է լինում, և կաթողիկոս է ընտրվում 1113 թ. իր եղբայր Գրիգորը տասնութ կամ ասնիսը տարեկան հասակում: Նա է հոգում իր ընտանիքի մասին, ինչպեա գրում է Ներսեսն իր Վիպասանության մեջ.

Ձիւրաքանչիւրըս սնորհնեալ,
Եւ ըստ բախտի կարգաւորեալ.
Ձեզբարս ինքեան հաղաթեալ՝
Յիշխանական դահ յառաջեալ.
Վասիլ անուն վեհ երևեալ,
Եւ Ձորավար համապատուեալ.
Եւ Մարիամ քոյր անուանեալ,
Որ յաշխարհի կարգըս մըտեալ:

Կրտսեր Ներսեսը Տնում է իր կաթողիկոս եղբոր մոտ և շարունակում է իր ուսումը. երբ արբուճելն է հասնում, քահանա է ձեռնադրվում, հետո՝ նաև եպիսկոպոս: Կաթողիկոսը նստում էր կամ Կարմիր վանքում կամ Շուգրի վանքում, բայց Գոյ Վասիլի մահից հետո Ուռհայի կոմսին Եղոյում է տրեւ Քեսուէի իշխանությանը, և Գրիգոր Պաշտպանին 1116 թ. իր աթոռը փոխադրում է իր հայրենական Մովսէ բերդը: Ժամանակի քաղաքական դրությունը շատ անկայուն էր: Քաշակիւնները հետզհետեւ բռնաճալով՝ հայերի ձեռքի հասնում են նրանց բերդերը Ասորիքում ու Միջագետքում: Սեւրիկյան թուրքերն էլ արևելքից արշավում էին դեպի այդ կողմերը: Կոր նաև Փոքր Ասիայում հաստատված սելջուկների մի էյուղը, Իկոնիայի սուլթանությունը (1074—1294 թ.), որ կոչվում էր Հոռոմ, Հոռոմ (Ռոստ) և կենտրոն ունէր Իկոնիոն քաղաքը Կիլիկիայից արևմուտք. դա էլ ձգտում էր Թրանսյուս այդ երկրամասին: Մի չորրորդ կողմից Նիզիտոսի իշխողներն էին խուճում դեպի Ասորիք: Այսպեղ շարունակ տեղի էին ունենում ընդհարումներ, բերդերի և երկրամասերի հափշտակություններ ու խառնակություններ: Մովսէ փոքրիկ բերդն ևս անապահով էր: Ուստի կաթողիկոսը մի լատին իշխողից դնում է Հոռոմիւ կոչված բերդը, որ ավելի ամուր էր (Նիզիտոսի մի փոխ թղթադարի հաղաթեալն էր կոչվում, Այնթապից դեպի Եյուսիս-արևելք, Նիզիտայից արևմուտք): Կաթողիկոսարանը 1150 թ. փոխադրվում է այդ բերդը:

¹ Թուրք ընդհանրական Ներսէս Ներսէսը, Ելմիսին, 1883, էջ 150, «Պատմական առաջին թղթի... Մանուէլն»:

Ներսեսը 1151 թ. գրված իր «Բան հաւատոյ» երկի «Յիշատակարանի» մէջ՝ պատմում է Իկոնիայի սուլթանի արշավանքի և Եթոռը Հոռակլա փոխա-
գրելու մասին և գեղեցիկ նկարագրում է այդ բերքը.

Արդ յայապիտում ժամանակի
Դառն և դրժնեայ և շնրարի,
Յարւում բնակեմք յայսմ ամրոցի
Ի գետապատ քարանձաւի,
Ի յնփրատայ պարագրելի,
Որ յԱդենայ քառորդ հոսի,
Յելից կուսէ հեղիկ շարժի,
Ի միւս փոքուէ մըտիւք պատի.
Ինքս ամբարձեալ իբր ըզկըզդի,
Յայնաց ձուկուց ոչ երկրնչի.
Ի մարզկանէ ոչ զարեւարի.
Ջի է հնարից անյաղթելի.
Ջոր տնօրինիչն ամենայնի
Տեղ պարտաստեաց աղաւթնի
Սուրբ ոթոռայս ըսքանչելի.
Ի բարկութեան ժամանակի
Յորում նեղիմք յանօրինաց
Ի յարաւքին չար գողանաց,
Եւ ոչ նուազ ի դրժնեաց
Ի սուտանուն քրիստոնէաց:

Ներսեսը, որ միշտ անբաժան էր իր եղբորից և նրան օգնում էր իր
պաշտօնական գործերի մէջ, մինչև կյանքի վերջը կենում է այդ բերդում,
ուստի կոչվում է նաև Ներսես Կլայեցի: Գրիգոր Պալլադունին ձեռնաթյա-
նագրումով 1166 թ. հրաժարվում է Եթոռակալութանից, և Ներսեսն
ընտրվում է կաթողիկոս: Երեք ամսից հետո վախճանվում է Գրիգորը, իսկ
Ներսեսն ապրում է մինչև 1175 թ.:

4. Երկու եղբայրների գրադամ վառտակը:--Այս եղբայրները մեր եկեղե-
ցական պատմության գլխավոր գեմքերից են. նրանք ցույց են տվել մեծ
գարնունեության: Երկուսն էլ պարագել են նաև գրականությամբ, ավելի
Ներսեսը:

Ներսես Լամբրոնացին՝ գրում է, թե Գրիգորը գրադարան է կազմել,
իսկ Ներսեսը ընթերցանությամբ է պարագել:

Ջգիրքս ցըրուեալս ի մի անէր,
Սքօք զաթոռն արմատացնէր,
Կցորդ բարեաց զեղբայրն ունէր,
Որ յիմաստից վարժ մըտեալ էր,

¹ Ներսէսի Շնորհալույ Բանք չափու, Վենետիկ, 1880, էջ 328 և 329.

² Քաղթ Գեղեցեալի Ներսէսի Շնորհալույ, Եջմշտին, 1885, էջ 476.

Միշտ ընթերցմանը պարտադէր
Եւ հայր խորին բանից լինէր:

Ուրիշ տեղ էլ¹ Լամբրոնացին գրում է Ներսէսի համար, թե նա շէր
յընթերցումը պարտադէր:

Գրիգորն իբրեւ կաթողիկոս քաջալերող է հանդիսացել վարդապետներին
զանազան երկեր հորինելու. այսպէս, օրինակ, Սամուել Անեցին նրա
հանձնարարութեամբ գրել է իր Ժամանակագրութիւնը, Ներսէս Շնորհալիս
հորինել է իր մի քանի երկերը, Նա, հետեւելով Գրիգոր Վկայասերին՝ ինքը
Թարգմանել է և ուրիշներին Թարգմանել է տվել վկայարանութիւններ և
կարգադրել է: Որ սրբերի նախատանկներին հկեղեցում կարգադրեն
նրանց վարձերը, Կիրակոս Գանձակեցին² գրում է. «Եթէ սքանչելի հայրա-
պետն Գրիգորիս անն ի գործ արկեալ շինեաց եկեղեցի հրաշազան գմբե-
թայարկ ի նոյն բերդի. և սկսաւ Թարգմանութիւն առնել յաստուածային
գրոց, և բազում պէրս եւ Թարգմանել ի հայ լեզու, զորն ինքեամբք և զորն
ի անս այլոց: Այդպիսի աշխատութիւններ ի համար նրան կոչել են Գրի-
գոր Փոքր Վկայասեր, Նա հեղինակ է նաև մի քանի ինքնագիր հոգևոր
երգերի,³ որոնք հօրինված են սովորական մատիվներով: Նրանն են և Լուսա-
վորչի մեղեդին՝ «Ի յիս արևու առև և ջրօրհնեցի տաղը Հիսուսի
մկրտութեան մասին: Վերջինս մեր կրօնական գեղեցիկ երգերից մեկն է»⁴:

Ո՛վ զարմանալի խորհուրդ այս մեծ յայտնեալ,

Արարիչն Աստուած ի Յարգանան եկեալ...

Յարգանան լուսալ փախտական դառնայր,

Վտակ աւ վտակ պատգամաւոր լինէր:

Գնա, մի գարհալիքի, քո արարիչն եմ ես,

Եկեալ միտքիմ և լուսնամ դմեղս...

Գրիգորից ասելի է սեր ու հարգանք և ժողովրդականութիւն վայելել
Ներսէսը թե՛ մահից առաջ և թե՛ հետո: Նա հայոց եկեղեցու մեծ հայրերիցն
է, խնամակալ բարձրագոյնի բնատուր ձերքով օժտված բանաստեղծ-երա-
ժիշտ, շնորհալի մի անձ ոչ միայն իր բարձրագոյն գրական ընդունակու-
թեամբ, այլև իր կայանքով: Ուստի և նրա անվան հետ անբաժան մնացել է
Ընտրեալի մականունը, Նա շատ բեղմնավոր է եղել իր գրական վաստակ-
ներով և առանձնապէս իր շափածո քերթվածներով ու երգերով: զրանց
համար և նա կոչվել է նաև Որգալ, ինչպէս ինքն էլ իրեն անվանում է
իր մեծ քերթվածների հիշատակաբանների վերնագրներում:⁵ Մերութեան
օրերին անգամ նա չի դադարել բանաստեղծելուց:

¹ Անգ. էջ 470.

² Պատմութիւն հայոց արարեալ Գրիգորի վարդապետի Գանձակեցու, Թեֆլէս, 1900, էջ 103.

³ Շարակաւ Լազար Երզնգ, Էջմիածին, 1881, էջ Բ., էջ 18, 188 Վերգոր Վկայասեր՝
հղբարն Պատմութիւն [Երզնգ] զՊատմութեան անհատն և զՄեծաւորին:

⁴ Պարիշի է գանել Աղեք. Միթթարանցի խորհրդած Տաղեր ու խորհրդած ժողով-
ածի մէջ, Արեւստեղծարար, 1900, էջ 21.

⁵ Ներսէս Շնորհալի Բանք շափու, էջ 180, 181.

1. Հայացքը բամազաբնայան վրա:—Ներսէս Շնորհալին արվատի ու զբոնանալիս իրա նախնիքն է ամենիցն ապա ձեռնիս և զիշտակալիս—
ուսուցանան տեսնեմքերով: Այդ հայտնում է նա իր մի քանի երկերի մեջ: Յոսքի զնորհքն, — ասում է նա, — միտեսնակ չի տրված մարդկանց.¹

...Շնորհն ոչ միակի,

Այլ ի բազմաբն բաժանի.

Ոմանց տայ (աստված) շնորհ մեկին բանի,

Զի հանրական լուր ոգտեսցի.

Այլոց իմաստ ետեռնի ճառի,

Զի զարթուցէ զնրեհալ հոգի:

Ոմանց տայ բան՝ որ ոչ չափի,

Բայց զարտար և ըստ կարգի:

Այլոց զնորհէ բանըս տողի,

Զի և այնու միտքն բանի:

Քանզի բնութիւն մեր է յայտնի,

Արագայագ և ձանձրայի,

Վասն այսորիկ տայ նա լեզուի

Զյոքնասեռեան ազգս բանի:

Ըստ յայտնի և նա նրկարեցի

Զնորտազական բանս ի քարաբի:

Ի զարթուսթիւն բանաբի

Ու բարեմիտ ընթերցողի:

«Յիշատակարան երգչի բանի»²

Ոճի նկատմամբ, ուրեմն, խոսքը լինում է պարզ (ամենին բանն), որ ամենքը հեշտ հասկանում են, և խրթին (եհեռնիկ ճառն), որ զգալար հասկանալի է: Այս տեսակն էլ, ըստ ն. Շնորհալու, հարկավոր է. թմբած հագինքը զբանով սթաղկում են, քանի որ մուծ զգալածները հասկանալու համար մտքի լարում է պահանջվում: Բայց ինքը մեր բանաստեղծը մի երկու տառ միայն ունի մուծ ոճով, ինչպես է, օրինակ, «Ե՛ս սուրբ քառասուններն»³ Նա սիրում և կիրառում է ընդհանրապես շատ հեշտ ու թեթեւ և դուրըրժանելի խոսքը: Այսպես հորինելն այնուհետև նրա մեծ ազդեցութեամբ հաստատվում է մեր բանաստեղծութեան մեջ, և այլապես էլ չէր կարող լինել, քանի որ արվատի գեղեցկութունն արդեն տեսնում էին բնականին հետևելու մեջ: Այդպես շարունակելով իր միտքը պարզելու ասում է, թե մարդիկ կան, որ սուրբ ոչ-չափածո, ազդու և կարգավորալ արժանի խոսքի շնորհ. ուրիշներին էլ՝ սասանավորի ձեռք է արված: Ուսումնորով խոսքն ավելի գեղեցկանում է ու ավայելանում է ու զգալաւոր է գոռնում, բայց այդ երկու տեսակն էլ հարկավոր են. որովհետև ձանձ-

¹ Անգ. էջ 184 և հմ.

² Անգ. էջ 184.

³ Անգ. էջ 184 և հմ.

բալի չլինելու համար՝ բազմազանություն է պետք։ Այդ երկու տեսակի էլ նպաստակը մեկ է և գործնական, այն է՝ օգտակարությունը, մարդկանց ստեղծի բացումը, դարգացումը։ Ինքը Ներսես Շնորհալիւն ունի ուսանալու շնորհ։ Նա չափածո է հորինել իր բազմաթիվ երկերը, բացի պաշտանական թղթերից և մի քանի աղոթքներից։

2. Տաղաչափապետ արվեստի զարգացումը։—Հետևելով իր շնորհքին ու հայացքին ուսանալու զարգացումը, մեր այս բանաստեղծը մշակել է հայոց լեզվի առաջադասութիւնը։ Ուստի նախ տեսնենք նրա վաստակի այս կողմը, որով նա շատ ազդել է իր ժամանակակիցների վրա։

Ներսես Լամբրոնացին նրա զովեստի մեջ՝ գրում է.

Հոսերակա՛ն տաղից չափող,
Ուսանաւոր տառից գլխող,
Ի հոգևորսն ըզնոյն տուող,
Որով ըզսիրտս կործր նրմող։

Ներսես Շնորհալու ռիթմական զգացումը, ինչպես իր գրածներից արևում է, շատ մեծ է. նրա ուսանալուները խիստ երաժշտական են։ Այդ պատճառով նա քիչ է բանեցրել մեր հին կրօնական բանաստեղծության ուսանալուներն ազատ ուղերով և ազատ անդամներով,¹ այլ գերադասություն է տվել պարզ ոտքերին, այսինքն տնթերի տակաբերին։ Նրա ամենից ավելի սիրած ուսանալուն է յամբական երկանդամ 8-վանկանին, կազմված երկու յամբական բարդ ոտքերից, որոնց մեջ առաջին ոտքերը կարող են և անշեշտ լինել։ Տաղերի, ինչպես և ուրիշ հոգևոր երգերի մեջ, սակայն, առաջին անգամը նա մեկ մեկ կազմում է երեք վանկերից, որոնք առանձնապես շեշտվելով՝ երկարում են և հավասարվում չորս վանկի։ Այսպես է վարվում նա յամբական հառնդամ 12-վանկանի և յամբական քառանդամ 16-վանկանի ուսանալուների մեջ ևս²։ Մեծ ջերթվածների մեջ, սակայն, նա սովորաբար պակաս վանկեր չի թողնում և պահանջում է, որ ընթերցողն էլ այնպես կարդա, որ ուսանալուի չափն տնթերի երեք վանկի, ոչ ավելի և ոչ պակաս։

Արդ առնկալ բանս դուզնաքեայ,
Եւ վերծանեալ ըստ խմատնոց,
Ոչ առաւել և ոչ նուաղ,
Այլ ի յոտին բերեալ չափոց։

Շնորհալու գործածած չափերը խիստ բազմազան են։ Մի քանի չափական ձևեր նա այնպես դարգացրել է և ռիթմիկ դարձրել, որ օրինակելի են մնացել և մեր հին գրականութիւնից նույնիսկ նորին նա անցել։ Կարելի է ասել, որ հաջորդներն իսկապես նրա փորձերն են միայն դարձադրել, շատ քիչ բան փոխելով։ Կան նրա չափածո ձևերից, հարկավ, և

¹ Թուզթ ընդհանրական Ներսիսի Շնորհալույ, էջ 464-ին, 1895, էջ 464.

² Եւ Մ. Աբեղյան, Հայոց լեզվի առաջադասութիւն, Երևան, 1923, էջ 380 և հետ, 361 և հետ։

³ Անդ, էջ 198—200.

այնպիսիները, որոնք չեն ընդհանրացել՝ Ռուսաւովորների բողոքով տեսանելով, առկայի, ոչ բոլորը նոր ստեղծանքներն են. դրանցից մի քանիսը գտնուել ենք Փրիզոր նարեկացու և Գրիգոր Մագիստրոսի տաղերի մեջ, եւ նաև Վերդան Հայկազն անուանով մեկի հորինած «Տաղ գերեզմանական վասն փոխման երանալու և սուրբ կաթողիկոսին Հայոց Փրիզորի Վկայասերին»։ Հեղինակը, ինչպես իր գրածից ենթադրուել են, ժամանակակից եղած պիտի լինի Վկայասերին¹։ Այդ բողոքը գրաբար-խոսն աշխարհիկ լեզվով է, ութվանկանի ստանաւորով, միակերպ էին հանգով, շատ նման ներսես Շնորհաւու գրածներին։

12-րդ դարի սկզբից ազգն ժամանակի խոսակցական լեզուն և բերանացի աշխարհիկ բանաստեղծութեան ոտանավորը մուտք են գտնել գրականութեան մեջ, այդ ժամանակի սիրո երգերից, սակայն, բան չի հասել մեզ, որ կարողանայինք որոշել, թե ինչն է կազմուել Շնորհաւու իրեն տալու-գտնուելու գլուխը։ Բայց այն համազմանքը, որ մասնաւոր հասակից ի վեր վանքերում աղբած այդ մեծ կրօնավորը չի խորշիլ նմանելու սիրո երգերի մեկին և նրանց ոտանավորով հորինել է ոչ միայն տաղեր, ինչպես Փրիզոր նարեկացին, այլև կրօնական բովանդակութեամբ մեծ բանաստեղծութեաններ. այդ միայն ցույց է տալիս, որ վերածնութեան թարմ ոգին թափանցել էր նաև վանքերի խուցերը, բայց ոչ ամեն վանականի. Շատերը ներսես Շնորհաւու պես ազատախոհ չեն եղել և բանփակ բերանով զարսպել են նրա աղբը, և Շնորհաւին ստիպուած է եղել ուրիշներին հեղինակավորութեամբ պաշտպանելու իր նորմուծութիւնը։ Այսպես՝ «Բան հաւատոյ մեծ քերթով» Յիշատակաբանին մեջ² 1151 թ. նա գրուել է.

Եւ զի ոտիւք է պարզակոն,
Եւ ոչ բանիւ անշափական,
Մի յայս լեզուաւ պարսաւական
Բարբառեսցի անփակ բերան,
Քանզի բողոքս նախ վարեցան
Այսպէս յիմաստ տառաւածական,
Ձի բարբառին բանի բնութեան
Տոցեն տուու բան գովութեան,
Որպէս Գաթնան սողոստաբան,
Եւ Սողոմոն տառաւորան.
Մեծըն Փրիզոր տառաւածաբան,
Եւ սուրբ Եփրեմ տարակոն։

Հետագիւծ վանականներն այդ երկի մեծ համար ամբիշի ևս պաշարակել են մեր բանաստեղծին, որ նա ստիպուած է եղել հետևյալ տարին, 1152 թ., «Ողբերգութիւն» մեծ քերթովով վերջում («Յիշատակաբան երգողի բանիս»)՝ դարձյալ պաշտպանելու իրեն.

¹ «Բողոքով», 1873, 254. Ձ ա ը ի հ ա ն ա լ ա ն. Հին գրութեան պատմութեան, 1887, էջ 190 և հաջ.։

² Բանք շափու, էջ 283.

³ Ան, էջ 108 և հաջ.

Եւ մի ի յայս ոք խառնայ,
Թէ չափաւոր բանիւ է սոյ,
Եւ արաւելին կարծի նըմայ.
Որպէս և զերդն Ափրոդիտեայ,
Զի եթէ սուտն որ ձեւանայ,
Սովաւ այնքան գեղեցկանայ,
Գանձ արգելեւ վայելանայ
Չյմարտութեան բանս որ ի սմայ.
Նրդոյն հանգոյն Սողոմոնի,
Սա, որ նրդոց հրգ անսւտնի...
Եւ կամ Դաւթեանն Սողոմոսի...
Եւ այլ բազմոց՝ որ են յայտնի,
Որք վարեցան չափով բանի...

Այս երկու մեծ գուռ կրօնական երկերը, որոնք հորինված են սիրո հրգերի չափով Թ-վանկանի առդերով, նաև հանգավոր տներով են, ինչպես հեղինակն ինքն անվանում է, «տաճար յանդակուն», այսինքն՝ «մեն երկու նույնահանգ առդերը միասին ըստ բովանդակության կազմել են մի միութիւն, մի «տուն» (բերք)»։ Այսպես հորինվել են, ուրեմն, հնումն ահիւ հրգերը։ Մի անգամ որ այդպիսի ոտանավորով և հանգերով խոսքն «վելի» գեղեցիկ ու վայելուչ է դառնում, ներսես Շնորհալին, իր «Իթմա-կան զգացումով ու ճաշակով, չէր կարող չկիրարկել այդ արվեստը միայն նրա համար, որ Ափրոդիտայան հրգերն էլ այդպես են հորինելիս եղել։ Այսպիսով աշխարհիկ հրգերի չափերի գործածութիւնը նրա մեծ հեղինակութեամբ ընդհանրացել է «մեն տետկի կրօնական բանաստեղծութիւն-ների համար ևս։ Նույնը պետք է ասել և ոտանավորների հանգի նկատ-մամբ։

Արդ-ուր Գրիգոր Նարեկացին և Գրիգոր Մաղիսարոսը գործածել են աշխարհիկ չափերից մի քանիսը, բայց Նարեկացին գեւ զբել է անհանգ ոտանավորներ։ Ողբերգութեան մեջ միայն մի երկու տեղ նա, ինչպես ինքն ասում է, «նմանելով ողբասացների բանաստեղծութեանը՝ հանգեր է կազմել։ Մեր այդ կրօնական մեծ բանաստեղծի հոշակը հավանորեն գեւ այնքան ծավալված չի եղել 12-րդ դարի տաղին կեսին, որքան հասագա-յում. ուստի նրա առդերի ոտանավորը չի ունեցել հետևողներ «մեն տետկի կրօնական ջերթվածների նկատմամբ, մասնավորապէս որ նրա քանա-ստեղծական հմտքը հիմնված է եղել ոչ թե տաղերի վրա, այլ Ողբերգու-թեան», որ անհանգ է և կարող էր նաև «անչափական» համարվել։ Գրիգոր Մաղիսարոսն առդն հանգը բանեցրել է կրօնական բովանդակութեամբ «Հապարտոտեան» գրվածքի մեջ, բայց նրա զարեղ պատահական բան լի-նելով՝ ընդունելութիւն չի գտել։ Հայ կրօնական բանաստեղծութիւնն անհանգ է միայն մինչև ներսես Շնորհալին, որի երկերից շատերը, «առանձնական առդերը, նույնպես անհանգ են, բայց և այնպես նա քանա-տարեկան հասակից արդեն» սիրում է բանեցնել հանգերը, հաւկապեա մեծ ցերթվածների մեջ։

Հանգի գործածութիւնն այն դարում թե Արևելքում և թե Արևմուտքում շատ միակերպ էր. նույն հանգը սովորաբար անցնում է ամբողջ քեթիվածի մէջ սկզբից մինչև վերջը. Երբեմն հազարավոր առդերի վերջում կրկնվում են նույն հնչյունները, և փոխանակ փողոցայնու մարդու լսելիքը՝ շուտով հոգնեցնում են այն և առաւելաւ դարձնում երկի ընթերցումը. Ծնորհային իր ընտիր հաշկով՝ չէր կարող չգլուխ ալի, և նա մի քանի տեղ հանգերի փոփոխութիւն է տեսնում կամ առդեր տեսնող թողնում՝ այսպէս բացատրելով այն.¹

Ո՛հ մի տառիւ վերջ յանգական,

Ջի մի ծուլից լուր ձանրանան.

Այլ խաբար փոփոխական,

Ջի ընթերցողք ոչ ձանձրանան.

Այս փոփոխութիւնը, ցավօք, երբեմն այնքան շատ թվով առդերից հետո է լինում, որ գրեթե անդգուլի է մնում. ժամանակի պահանջն այդպէս էր, և այդ համարվում էր արվեստի կառարելութիւնն հանուր ազգերի բանաստեղծութիւն մեջ, Ծնորհային, սակայն, ունի նաև բովանկան թվով երգեր, որոնց մեջ ամեն տուն իր առանձին հանգն ունի, և երբեմն նա նույնիսկ սող ընդ մեջ տեսնող օտանաւորներ է հորինում. Եվ նա հանգերի այսպիսի կիրառութիւնն նկատածը ևս անպայման ազդել է իր հաջորդներին առաջնափական արվեստի վրա:

Նրա բանաստեղծութիւնն մեջ շատ սիրված է նաև ձայրակապը կամ գլխակապը (ակոսախի), կամ այբբենական կարգով Ա—Բ և կամ շուտ աված՝ Բ—Ա, Նա հաւատի կապում է այսպիսի գլխակապեր Վերսուսի բանս էն, Վրան Ներսուսի, Վերսուսի է այս երգը, ՎՏէր Ներսուսի է սառ և այլն: Այսպիսի գլխակապերը կարենա դիտւովորյալ կերպով են գործածված՝ հեղինակի անունը պահելու համար. Երբեմն երկատող աների առդերից առաջինն սկսվում է Ա—Բ կամ Բ—Ա առաւերից մեկով, և երկուստոյն էլ վերջանում են աների սկզբի առաւով՝ կապելով հանգեր կամ թե լոկ բաղաձայնութիւն, կամ առձայնութիւն, օրինակ.

Առաւանակէն հոգւոյն ի սմա

Խաղաղութեան անուն արքայ...

Երբեմն առաւ վերաբերի,

Ձմարդիկ յերկրնը մակազն...²

Թրմբրեալ զհոգիս տունէ զլուարք,

Այս չանկանելի դասն որդապք.

Ժամանակեայ զկենցաղս յոյժ

Ասէ, զանկեալսն ի սմա անրոյժ.

Իբրև երազ խոր գիշերի,

Կամ պղպղջակ ինչ կաթառծի:³

¹ Անշ, էջ 383.

² Երևում է, որ Ծնորհայն ժամանակ արգեն է և Ե տառերը միտպես են արտասանվել, և նա ին խորքում բառերի վերջում է տառի փոխանակ և գրելուց.

³ Անշ, էջ 386. Յես և էջ 386 և հան, «Անգղազարմութիւն առաւից յիշատակի», որոնց աները սկսված են Բ—Ա առաւերով:

Այսպիսի սկսվածքները առողմերը կհետ հանգիստություն կազմե-
լով՝ տներին տալիս են ըստ ձևի ևս մարդկության: Երբ առանձին տների
Բոլոր տողերն սկսվում են նույն ժամերով և տողերը կտրվեն են, նույն
հնչյունների կրկնությունը տողերի սկզբում՝ թողնում է ռիթմական հուն-
գիտություն—բազմաժանրությի, կամ առձանայնությի աղավորություն:՝ Դրա-
նով ևս զգալի է լինում տողերի, ինչպես և տների մարդկությունը, երբ
վերջիններս փառաթիվ տողերից են կազմված: Այսպես հորինված են
և. Շնորհալու. նշանավոր Վառուա լուսոյ և Վեյսարի մանալան երգերը,
ինչպես և մի քանի ուրիշները: Բերնից իբրև օրինակ հետևյալները.

Առաւօտ լուսոյ,

Արեգակն արդար,

Առ իս լոյս ծագեան:

Աշխարհ մանալան,

Առ իս նայեցեալ՝

Ախտակից լերուք:

Բանալ ըզբերթանս,

Բարբառիւմ լեզուսաւ,

Բողբոջն գանձնէս:

Գող կղէ մեղաց,

Դրոտոյ կորչատեան,

Դուք ինձ փորեցի:

3. Հոգեվոր երգեր ու տաղեր և քերեր.—Որչափ բազմազան են Ներ-
սես Շնորհալու բանեցրած առաջափական ձևերը, նաև նշափ աչքի է ընկ-
նում նրա ստեղծագործությունը նաև իր այլևայլ զբաղման տեսակներով: Այս
նկատմամբ ես նա շատ բան, հարկավ, ժառանգել է նախորդներից, ինչպես
են՝ տաղեր ու դանձեր. հոգևոր երգեր-շառ-կաններ, հոգևորաւ աղոթքներ
(«Հաւատով խոստովանիմ»), թղթեր և այլն. բայց նա մեր զբաղմունքային
մեջ մացրել է նաև նոր զբաղման տեսակներ և հին տեսակները զարգացրել
է: Այսպես, օրինակ, նրա չափածո թղթերի մեջ՝ ներքին մտերմական
զգացումով աչքի է ընկնում իր եղբորորդի Ապիրատին ի հոստանդուն-
ալիս ուղղած նամակը, որի մեջ նկարագրում է իր այդ առհմիկի զինա-
վարական անգիտությունները, ցանկանում է նրա գալուստն ի Հոսմիլ
ամրոցը և տալիս է նրան խրատներ:

Այնպիսի կարևոր են Շնորհալու բազմաթիվ հոգևոր երգերը, որոնցով
նա խիստ ճշգրտացրել է հայոց եկեղեցու ժամերգությունը:՝ Դրանց մեջ

1 «Հանգիստության, հանգի և առանձին ընդհանրապես» տեսել Մ. Արեգյանի
«Հայոց լեզվի առաջափաթյուն», Երևան, 1933, էջ 808—813.

2 Բանը չափու, էջ 803—816.

3 Երանկան, էջ 1, 1881, էջ 8 և հա. «Մուսրի Ներսէս [Երգեաց] զվառ ձայնի Առա-
ջադրելի հարցն, զհոգևոր գաղափարն չառ զտաճերուն, զվարդավորի զերկու. զտաճերուն
և զՓոխման զերկու. զտաճերուն, զԵրանկան Դմ հարցն, զՄարգարէից Դմ հարցն. զԵրան-
կապետացն, զԵրանկան Վարդանանց, զՀանգիստացն, և զԱյսօր տեսան, զՆարգազն, զԱ-

կան և շատ գեղեցիկները և տխրախները, որ մի մասնակ սիրված և մոռացվողականացած են եղել: Բերնը ժայռն երկու տուն Վարդանանց շտականից:¹ Երի գլխակապն է՝ շներսեսի երգ: Ամեն մի տունը նվիրված է Ավարաբլի հակառակորդի մեջ ընկած այն հերոսներից մեկի հիշատակին, որոնց տնունները հայանի են պատմութուններից. բաժանակցի մոտացության չի տվել նաև 1086 տնունուն համիկ քաղերին:

Նորահայն պատկառը և դարգուհի տառքիեաց,
Վասնցոր գինու հոգւոյն արիարար ընդդէմ մահու,
Վարդան, քաջ նահատակ, որ վանեցեր ըզթըշնամին,
Վարդազունյն արեամբը ջով պըսակեցեր զեկեղեցի:
Երկնուոր թագաւորին զինու յաղթեալ պատերազմին,
Խոհական իմաստութեամբ խոհեմացեալ անհոռապէս,
Խորէ՛ն խորհըրդական և ծանուցեալ անուն բարի,
Խաչուոյն վրկայ եղեալ հեղմամբ արեան պըսակեցաւ:

Բազմաթիվ են ներսես Շնորհալու բարդորակները, այն հասնավորները, որ նա կցել է համեմ իր ուրիշ աշխատութիւններին վերջից: Ավելի ևս մեծ թվով են նրա տաղերը,² որոնք գրված են տերունական, ինչպես և որբերի տոներին երգելու համար: Դրանք հորինված են խիստ բազմադան չափերով, Հեռաքըջի է, որ «Աւանանց ապը նույն մեով է, ինչ որ հին գուսանական հայրենները»³ հեռագայում մեր բանաստեղծներն «Աւանուսը՛ն երգում են ինչպես մի որբ երգ:

Բարբառ աւանանց մայնի
Դարբիէլ գաչէր սըրբուհւոյն.
«Աւ քեզ առաքիմ, մաքուր,
Պատրաստել տեղի տէրունւոյն:
Նըւազ ցընծութեան երգեմք.
Ուրախ լճր. բերկրեալդ, տէր ընդ քեզ»:

Շատ թարմ և ուժեղ են հնչում նրա մի քանի տաղերը, ինչպես, օրինակ, Հսիսիսիայան կույսերի համար երգածները:⁴ Սրանց նյութը ընտանաբար Ազաթանդեղոսի Պատմության հետևողությամբ է. բայց քերթողը սեփական երևակայությամբ նորոգած է այն: Մի քանի բառերով ու կարճ խոսքերով կատարված է Հսիսիսիայի գովքն ու գեղեցկության նկարագրերն արագ ու եռանդուն և ութմիկ տողերով: Բանաստեղծը գիտն ուղղակի խոսքերով և գիմուսներով աշխուժացնել պատմվածքի ընթացքը: Նա այս հին գրական տեսակը կատարելության է հասցրել:

տառած անեղն, զԱրարչեանն, զԱրեգալի շարականն, զՕրհնեմք զքեզն. զՆայեաց որբոցն,
և զԻջն հայրեմքն: և ըստ սմանց՝ զսուրբ Յովնայի և ուրտ է ասացեալու Այլ և «Աւանան անեղն: Բանց շտփու», էջ 323 և 324:

¹ Շարական, էջ 571 և հմն.:

² «Բանց շտփու», էջ 365—476:

³ Անգ. էջ 365 և հմն.:

⁴ Անգ. էջ 465—476:

Երջանի՜կ, հոգիահրաշ
 Կոյսըն մաքուր սուրբ Նոթիսիմէ.
 Լոյս ձագեցաւ ի Լափինէ
 Լայոց Մեծաց յարեմբէ:
 Կուսակա՛ն փողըն գոչէր,
 Տայր տւեալս սուրբ Գրիգորի.
 «Փռեթա, Ել ի վերապէշ,
 Լուսաւորիչ Լայստանիս...
 Մովային զուշան ծաղիկ-
 Բուսեալ ի տանըս Թորգոմի...
 Ի վայելուչ զեղ պատկերին
 Յիմարեցան աղջըն Լային.
 Պետք է իշխանք առ հառաքակ
 Եկին ի դուռն Լընձանին...

Հոթիսիմի վրա տնապետայան ոտքերով հորինած մի ուրիշ տողի տմեն
 աների վերջում կրկնում է նույն աղբը և տնում է նույն բաղաձայնների
 հանգիստութունն. օրինակ՝

Միրասուննդ սիրամարգ սրբորդի,
 Նըբրափայլ ոսկէթել տարփայլի,
 Եռապակ իւղազլուխ ցանկալի.
 Լընձամկ հրաշագեղ, Հոթիսիմէ՛:

4. Նոր զրեկամ տեսեկները—Բաղձաթիվ են Ներսեսի նոր զրեկան
 տեսեկները: Բայց մի տեղամ որ նա, ինչպես տեսանք, գործնական հա-
 յացքով է առաջնորդվել իր չափածո ստեղծագործությունների մեջ, ուստի
 նրա այս աշխատությունների մեջ ևս կան այնպիսիները, որոնք գեղեցիկ
 ռատնավորներով, հաճախ նաև փայլուն ոճով հորինված լինելով հանդերձ՝
 պրոդայիկ գործեր են: Բնականաբար այստեղ երկար կանգ չենք առնի նրա
 այդպիսի գրվածքների վրա, որոնք հորինված են ուսուցական կամ այլ
 նպատակներով: Մի բանաստեղծի որևէ զրեկան երկի արժեքը, սակայն,
 պետք է չափել ոչ միայն դրա գեղարվեստականությանը և իբրև արտա-
 հայտություն իր ժամանակի ոգու, այլև այնու, թե դա ճշման և որպիսի
 զրեկան-կուլտուրական ազդեցություն է թողել հետագայի վրա: Այս վեր-
 ջին տեսեկետով շատ բախտավոր են եղել Շնորհալու տեղամ նոր զրեկան
 տեսեկները:

Այդպիսիներից է ամենից առաջ նրա երիտասարդական տարիքում
 գրած «Վիպառանությունը»: Դր հիշվեց վերևում: Նպատակն է, ինչպես
 հեղինակը գրել է նախաբանի մեջ, արտահայտել երախտագիտություն առ
 նախնիները:

1 Բանք չափաւ, էջ 493 և հաճ. «Շաբարութիւն համերական վիպառանութեամբ
 տակա Լայկազանցի սեւի և Արշակունեացի գործի ի սկզբանց մինչև ի վերջն, առաւու-
 րեալ Ներսէսի եղբոր կաթաղիսի Լայոց յիւրեկան նախնիս ի համարեութեան ելով արեալ:

Պարսակաւն է հօր որդի
Հառուցանել վարձըս ձեռքի,
Եւ անդրադարձ փոխարինի
Բազում երկանցըն պառչաճի:

Մովսէս Խորենացուն հետեւելով՝ նա ստանալորով պատմել է Հայկազն
և Արշակունի տոհմերի մասին. շատ քիչ է կանգ առել Բագրատունիների
համբար: Երկար գրել է Գրիգոր Լուսավորչի և Պաշլավունիների՝ Գրիգոր
Մագիստրոսի, Գրիգոր Վկայասերի, Բարսեղ կաթողիկոսի, իր հզօւյր Գրի-
գոր կաթողիկոսի, իր հօր և եղբայրների և իրեն մասին:

Այս գրվածքը բանասանդական արժեատի տեսակետից ընդհանրապես
մի հետեւի բան է. բայց մի գյուտ կա մեջը: Դա տույին չափածո պատ-
մական քերթվածն է մեր գրականության մեջ, Բացի տահմասիրությունից,
ինչպէս և աստվածաբանական միտումից, որ երեւում է նախաբանի մեջ,
երկտասարդ ներսեան արդեն ցույց է աւելիս նաև քերմ հայրենասիրական
ոգի: Զի տանում հույներին,

Որք այժմ ըզմեզ դոն ողորտեալ,
Հանթագաւորքըս պարսաւեալ:

Առանձին սրամտությամբ խոսում է մահմեդական աստիկների (աւար-
ներ) և ավելի ևս նրանց կրօնին հետեւող իր ժամանակակից այլ ողբերի
մասին:

Արեանարբուք զազանացեալ,
Ձագիր գործովք անասնացեալ ...
Ձանկերս մեր ըզչորացեալ,
Ձոր էր նախնի ազգաց ծըծեալ,
Վիշապօրէն սոցա կըլեալ,
Եւ առիճուց նրման մանրեալ:
Ձի ի համար թիւ ոչ անկեալ
Անպարտ արեանցըն գոր հեղեալ,
Կամ ճառայիցն անդին գերեալ,
Եւ կամ յայանին որ վաճառեալ,
Կամ ըզգայիցն յափըյտակեալ,
Որք ընդ ձեռաժր նոցին անկեալ,
Որոց այնքան ազգատացեալ,
Որպէս յերկաթ գալով՝ պընդեալ,
Թողից ըզչորըն մեծ տալ
Ձհողաց կորուսաւն գործեցեալ,
Ի հաւատոցն ուրացուցեալ,
Եւ չոր գործովք ապականեալ...
Ի յաշխարհէ ծնընդեան հիւալ,
Ի հայրենեաց տարամերժեալ,
Ոնրկիք օտար պանդըխտացեալ,

Մինչ զի ըզմերքն մոռացեալ,
Զաշխարհս մեր օտարք կերեալ,
Մեր առաջի աշաց տեսեալ¹,

Այս Վիպասանութունքն իր կողմէն և լեզվի պարզությամբ շատ սիրելի է եղել և հետագայում, նախնական նմանողության օրինակ է դարձել, հիշիկիտի հայոց Լեւոն Գ. թագավորը 160 տարի հետո Վահրամ Բաբազն կոչված վարդապետին շարունակել է ալել այն, սկսած թուրքերի հարձակումից և վերջին Գագիկ Բագրատունի թագավորից մինչև մոտ 1275 թիվը, Գրված է Ռուբինյան աթոռապետության մասին միևնույն ձևով և նույնիսկ նույն բեւառ հանգով, ինչպես Շնորհալու գործը² :

Մի ուրիշ նոր գրական տեսակ է չափածո ներբողյանը, Հին ներբողյանների ու հասերի մեջ սրտյ կտարներ ոչ միայն պերճախոսական բնավորություն ունեն, այլև երբեմն իրենց սիրվածով մոռենում են չափածո խոսքին և անգամ չափածո քանաստեղծություն կարող են համարվել: Այդ բավարարութուն չի ալել ներսես Շնորհալուն. նա ոտանավորով քանաստեղծաբար հորինել է ս. Խաչի ամբողջ ներբողյանը, նույնքան բառերով Գովիթ Անկաղթի անունով հայանի ներբողյանից³, օրի և հաւաքաստեղծուն է արել, Գրա վերջին մասը Զեմ հավատով ասված մի մեծ օրհներգություն է, քանաստեղծի սիրած ութվանկանի աղերով ու փոփոխ հանգերով:

Ուսանավորով է հորինված և «Մաղթանց առ սուրբ հրեշտակն»,⁴ որ կա հրեշտակների մասին «Գովեստ ներբողական» գրվածքից հետո, Իսկ այս երկը ներսեսը 1162 թ. գրել է իր եղբայր Գրիգորիս կաթողիկոսի խնդրով, հասնելով Գրիգորիոս Աթոռապետի «Երկուցս երկնայնոյն ցաահանայապետութեան» (—հիերոլիտի), օր հայերեն թարգմանել է Սահփանոս Սյունեցի Գերթաղը հաւանքան լեզվով: Ուստի Շնորհալու ոճը, նրա ազդեցությամբ, այս գրվածքի մեջ մութ է, բառի բարձր և արուեստական է: Նա խոսում է հրեշտակների կամ զվարթունքների մասն մի գասի կատարած գերի ու պաշտոնի մասին:

Ներսեսն առաջադրել միշտ պատրաստ է եղել ոչ միայն իր եղբայր, այլև արեւել խնդրով իրեն զինող ուրիշներին սիրով պատասխանելու և հաճախ իրեն արված հարցերին իր մեծ հմտությամբ լուծում տալու նա ունի նաև մի ցերթված՝ «Երկուցս երկնից և դարդուց նորա բարախաբար ի զիմաց նորին ի չափ եկեղատասնիցն պարզեալ սոխի ի խնդրոյ առն բժշկ-

¹ Անգ. էջ 559 և հաւ.

² Dulaurier, Historiens Arméniens, էջ 498. Յն և Զարբանույան, Հայկ. գրք. պատմ., էջ 701.

³ «Թանց չափու», էջ 220—268, «Ներբողեան կենսառա ուրբ Խաչին առ ի զգրք հօրն մեզմէ Գաւթէ Անյաղթ փելիտփայէ սոսցաւ. Ուսանաւոր չափով առաջօր եղաւ. Վեսան ներսէի ներբողեան կենսառա ուրբ Խաչին»:

⁴ Անգ. էջ 267 և հաւ.

⁵ Այլիւն. Շնորհալի և պարագայ իւր, էջ 278 և հաւ. Զարբանույան, Գառն, Հին պարսկերէն, էջ 633. Զարբանույան, Մոսկովապետն հայկ. թարգմտութեան, էջ 288 և հաւ.

կապեալի և աստեղագիտի Միխիթարյան¹ Գերթվածը բարաբանաբար, այսինքն ղեկավարաբար է հորինված. խոստով է ինքը հրկինքը իր կողմից առաջին դեմքով իբրև անձնավորված էակ.

Իմ եղական գլուզ ընուկթին և սկզզրնական,
Ծանեղէն ձգեալ կամար անդուգական,
Անջրդեղեմով զշուրսըն վերին և ներքնական...
Բուրմակ եմ կիսագունդ որդէս խորան,
Բնուկեմ մը կայուն, անձամբ շարժուն անկայական,
Հիմն և աւարա եմ գոյացութեանցս այս նիւթական.
Անդունդը ի խոր, բարձունք ի վեր, մինչ վերանում:

Ամբողջը 12-վանկանի մի մեծ դրվածք է. որի մեջ նկարագրված է հրկինքն ըստ ժամանակի հասկացութեան՝ արեգակ, լուսին, յոթն մոլորակներ, տասներկու կենդանակերպեր և այլն, առանձին խորհրդածութիւններով, ինչպէս նաեւ նյութի մասին գրել են նաեւ դարում նաեւ բիզանդացիների մեջ, Հայոց գրականութեան մեջ այդ մի նոր գրական տեսակ է մի նոր թեմայով, ոչ լիովին կրօնական բովանդակութեան, և առաջ է բերել նմանողների հետագայում: Շնորհալու այդ գերթվածի մեջ պակասում է բանաստեղծական թախիճը, բայց այն հաճելի է իր ընտիր ու հայտնավոր ոճով և սահուն ու ախթիկ հառնավորով: Գրվածքի վերջում կա մի այլուցորակ այս վերնագրով՝ «Նորին ալիւսի տաղը ի խնդրոյ անուան նախագիծ տաւից տանց, Ամեն տան (երկատողի) սկզբի տառերը կազմում են այս զիսակաղը» Միխիթար բժիշկ, ընկալ ի ներսէսէ դայա բուն:

Այս բժիշկ Միխիթարը,² Շնորհալու բարեկամը, եղել է նաեւ «աստեղագէտ» է, երևի, իբրև «այնպիսին» նա մեր ճիշդագիտ խնդրել է առաջադրութեամբ գրել հրկինքի մասին: Նրանից չի ձուլում աստղաբաշխական գրվածք, բայց կա մի կարևոր բժշկական գործ, որ նա անվանել է «Ջերմանց միխիթարութիւն», զի սա միխիթարէ բժիշկն ուսմամբ, իսկ զհիւանդն առողջութեամբ: Իր ժամանակի այս նշանավոր անձը, ինչպէս իր գրքի առաջաբանի մեջ ինքը հայտնում է, եղել է Հեր (այժմյան Խոյ) քաղաքից: «Ի մանկութենէ սիրող եղէ, ասում է, ի մաստութեան և բժշկական արուեստից, և վարժեցալ ի դպրութիւն արարացաց, պարսից և հնչնացաց: Իր գիրքը գրել է 1184 թ. հորդորանքով Շնորհալու հաշորդ Գրիգոր Պահլավունի Տղա մականվանված կաթողիկոսի, որին զովում է նա ասելով՝ «մեծնին սիրող ի մաստութեան և հմուտ: Գիրքը նա հորինել է քաղվածորեն և թարգմանաբար արար, պարսիկ և հայ բժիշկների գրվածքներից: Առաջաբանը դարբար է, իսկ բուն նյութը ժամանակի խոսակցական լեզվով. «Եւ արարի զսա գեղջունկ և արձակ բարբառով, զի ղիւրհաս լիցի մանայն ընթերցողաց, աւ ի յիշատակել զմեզ: Միխիթար Հերացին գրած

¹ Ահ, էջ 279 և հա.

² Ղ. Ալիշան, Շնորհ. և պար., էջ 257 և հա., «Հանգեւ ամսորայ», Ղիկնեա, 1888, հոկտեմբեր:

³ Միխիթարյան բժշկական ներքալ Ջերմանց միխիթարութիւն, Ղիկնեա, 1888:

է նաև Վլասն Զարանց և յառկութեանց նոցա և բժշկութիւն նոցա, և ուրիշ բժշկական աշխատություններ ևս, որոնցից քաղվածներ կան հետագայ բժշկներէի գրվածներէ մեջ. բայց բուն երկերը երևան չեն եկել: Առհասարակ բժշկական ուսումն և արվեստը հնուց սերված է եղել հայերի մեջ. Մխրթմանից և՛ առաջ, և՛ հետո եղել են յառ բժշկներ: Նրանցից առանձնապես հիշելի են Ստեփանոս (բժշկ Ահարոնի տոհմից) 13-րդ դարու, հայանի գիտնական մի բժշկ 15-րդ դարու՝ Ամիր Դովլաթ Ամասիացին, ինչպես և Ասուր Սեբաստացին 17-րդ դարու: Առաջնորդելով իր վերևում բացառիկ թեւակեանով, թէ բանագործութեան նպատակն է ուսուցանել և հասնավորը գլխավորել է գործնում գրվածքը, Ներսէս Շնորհալին գրել է և երկու շարք չափածո խրատներ, և որպէսզի ավելի զվարճալի լինի, այդ փոքր երկերը հորինել է ի ի գիտաց տարեներից տառից, այսինքն այբուբենի կողմից.¹ Դրանք ունեն վերացական բնույթ, բայց շատ հաճելի են հեղինակին հատուկ սահուն, երբեմն և պատկերավոր ոճով: Շարքերից մեկը՝ «ճորտ ուսումնականաց մանկանց»՝ կազմված է մեր տառերի թվով քառյակներից: Դա ինչպէս մի մանկավարժական գրվածք է, որով թէ այբբենն է կարգով սովորեցնում, թէ միտմամանակ բարոյակրթական խրատներ է տալիս մանուկներին: Առանձնապէս աչքի է ընկնում և այն, որ նա հորդորւմ է սիրել ուսումն ու գիտությունը:

Այսպէս, վերջաբանի մեջ տուած է.

Եկ բեր, մանուկ, գունկըն քո յիւ,
Լուր և անսա իմում բանիս . . .
Միրեմ գուսումն, որով պատուիս
Ի յերկնայնոցն և ի յերկրիս:

Բուն քառյակների մեջ էլ հաճախ նա կրկնում է նույնը. օրինակ՝

Գիմըն գանձէ լեզ բիւր բարի,
Դրելով զիմաստս ի տախտակի,
Զնա արկ ի քոյդ պարանոցի,
Որ պատուական է քան դուկի:

Գեւ 19-րդ դարի առաջին հիսնամյակին էլ, ինչպէս Շնորհալու ժամանակ, վարժապետները տախտակի վրա գրում էին աշակերտների դասերը և կախում նրանց վզերից:

Դոյն դուն բանայ լեզ գիտութեան
Ըզառնաբին իմաստութեան.
Բախեա և մուտ արիութեամբ,
Մի աղաքայ մար հեղգութեամբ,
Զայն դարթուցանէ ըզքեզ, մանուկ,
Զայնիւ հրնյամբ որպէս թըմբուկ.
Մի յուսմանէ լինիր աղաուկ,

¹ Բանք չափու, էջ 335—336.

Ձի մի առա վա՛յ անձինդ յառուկ:
Ժեմ ժուժկալ լինել, ասէ, յուսու՞նն,
Թէ՛ն աղաւկ առնուա յարքունն.
Հայնաց յսակին, որ ի քրայու՞նն,
Ձի ձեռնելով անու գո՛ղքունն.

Այսպէս և ուրիշ ցառականքի մեջ, Բաբոյակըթական խրատները սովորական բովանդակութիւն ունեն, երբեմն և կրօնական—հետեանալ շարունակութիւնից, վառ մարդկանցից, սուս խաղերով չղքողվել, նմանել իմաստուններին, լսել ծնողներին և վարդապետին (ուսուցչին), հետևող լինել իմաստուններին, չլինել ծուլ, հաբա, լինել վտանահր, խոնարհ, հնազանդ լինել ձերերին և նմանները:

Պէ՛ն պատուիրէ պարկեշտ լինել,
Մի գորովայնդ խը՛նդել,
Մի ըզզինի բը՛նա սիրել,
Մի տարածա՛մ դրերանդ յանել:

Խրատների մյուս շարքը գրված է ությակներով՝ «Բան ներառական ի խրատ ոգւոց համախիթ ի գիմաց մերոյն տառից տանց յիւրաքանչիւքսն քառից», այսինքն տմեն խրատ կազմված է չորս անից (երկու տողը մի տուն): Խրատներն ուղղված են ամեն մարդու՝ և՛ մանուկներին, և՛ երիտասարդներին, և՛ ձերերին, բայց ոչ գիտուն մարդկանց, «Սա ոչ գիտնոց՝ այլ աղայապէս մանկանց առաւ նուսխայապէս», գրու՛մ է հեղինակը, Ունին ընդհանուր բաբոյակըթական բովանդակութիւն—որինակ.

Բենըն բանից, ասէ, չաբաց
Սանձնա գլխեզուդ վառն ընկերաց.
Ի բերանոյ քո հան ի բաց
Ձխոսս աղտեղիս նախատանաց:
Նաե ի բան բաժբառանաց՝
Դէբ պահապան քոյոց չըրթանց...
Մայն ծանուցանէ յոյժ ծանրագոյն.
Ձբան երգման ուրանալոյն...
Չայն չաբ ասէ զազահութիւն,
Ձի շատ մեղաց է ձնելութիւն,
Ձի ի նմանէ է աղատութիւն,
Նա է աւար և գերութիւն.
Սնաթ սկսեալ է գողութիւն,
Ծա անիրաւ զատողութիւն.
Ի յայտմանէ վաշխառութիւն,
Ծա ըզմիմեանս տաելութիւն:

Խրատներ է առլիս և աշխարհի մեծամեծներին՝ չլինել անբարոտվան, այլ քաղցր ու հեզ, խոնարհ, և շատ նմանները, Կոն նաև կրօնական բովանդակութիւնով խրատներ, այլև կյանքի անցավոր լինելու մասին.

Կեանքն կենաց զանցաւորէ
 Կրկին գրեմբք քաղաք մաէ.
 Ընդ մին մտեա մերկ յարգանդէ,
 Ընդ միւսն ելցես մերկ յաշխարհէ:
 Արդ զԲնչ օգտին դու ի շահէ
 Ի քաղաքիս այս վաճառէ,
 Յորժամ ի գրաւնսն կողոպտէ
 Մահն, որ կենաց թըշնամին է:

Քաղաքովին նույն ձևով, ինչ խրատական քառյակները, հորինված է և Վրան հաւատոյ վասն անեղին և եղելոց բարոնաբար ի գիժաց հայկական տառից չափաբերմամբ ողբալի: Դա մի փոքր գրվածք է, սկզբի քառյակներին նյութը դաժանաբանական է, հետո շատ էական կեանքով համառոտ դրված է Ս. Գրքի բովանդակությունը, սկսած աշխարհի ստեղծումից մինչև Գրիստոսի երկրորդ գալուստը: Բանաստեղծական արժեք չունի. հորինված է լոկ գործնական նպատակի համար:

Վերջապես՝ վերևում հիշված Աղիբաթի խնդրով, Հոսովյուրում 1151 թ. Շնորհալիքն գրել է իբ մի ուրիշ աշխատությունը, դարձյալ Վրան հաւատոյ, որ նվիրել է ի հիշատակ իր ծնազններին՝ եղբայրներին: Դա Ավետարանի անգլոգ և արագ ռեզի համառոտ պատմությունն է մոտ 1500 ութվականի աղբերով, հանդերի փոփոխմամբ:

Փոքր բանիս կտրն ի կարճոյ
 Միայն ըզմիտսնն ցուցելոյ,
 Ընթերցողաց վերնանելոյ
 Արագ մըտացն հասելոյ:

Սկզբում գրված է եկեղեցու գովանությունն աստվածության և երկու ընդթյուն մասին: Այս գործը, որ առանձին բանաստեղծական արժեք չունի, իր ժամանակին անպայման շատ հաճելի միջոց է եղել Ավետարանի պատմությունը սովորելու համար: Դա առաջին փորձն է մեծսիական հորինելու, բայց իրեն՝ հեղինակին, երևի, չի բավարարել:

5. «Առաքել» — Խանկուղիով:— Մեր Շնորհալի բանաստեղծը ոչ միայն մեկին գրելու հակումն է ունեցել, այլև հակառակ չի եղել իր խոսած լեզվով, անգամ ընթանակն առնով շարադրելուն: Նա գրականության մեջ մըտցրել է մի նոր տեսակ և՛՝ «Առաքել վասն ուրախութեան մարդկան»:¹ «Առաքել» բառն այստեղ չափաի հասկանալ տրդի իմաստով, այլ իրեն հանելուկներն: Տպագրած են 120 բանական, որոնց մեջ կան և ժամանակի խոսակցական լեզվով գրված: Ինչպես փողովդակն հանելուկների, նույնպես և առականներին նպատակն է ոչ այնքան մարդկանց ուրախացնել, որքան զվարճալի եղանակով սովորեցնել և սրամտության գորգացնել, զիտել տալ բնականությունը, զանազան իրեր և այլն:

¹ Բանք չափու, էջ 313 և հետո:

² Բանք չափու, էջ 167—227, Վրան հաւատոյ համառոտ արձգի չափոյն:

³ Բանք չափու, էջ 260 և հետո:

Դրանց նյութը կիսով վերաբերում է կրօնական բաների և անձերի, ինչպես են՝ Թերզա, միակեց, դրախտ, աղաշխարհաց, աստուած, կանթեղ, Արեւ և Կայան, Արրուհամ, Ադամ, Դավիթ, Ղովա և այլն. նաև հայոց պատմությանից՝ Վարդգես, Տորք, Տրդատ, Հեաթըրքեր են ավելի այն բազմաթիվ բաներից, որոնց, ինչպես ժողովրդական հանելուկները, հորինված են կենդանիների, պառնիկների, տարվա շրջա եղանակների և այլ ոչ կրօնական բաների մասին, օրինակ՝ ձյուն, երկինք, արեգակ, լուսին, անձրև, աշիւթ, ծառ, կենթ, ճրագ, նուռ, զգուս, խիւր, խաղող, խնձոր, ասնձ, ընկույզ, ցորեն, շրագ, ագուս, այծ, աղվես, արջ, էշ, կառու, կրիա, շուն, խոզ, մաքի, ուղտ, ջորի, սագ, սիրամարգ, կաքավ, արսուտ, քզեղ, մեղու, մրջիմ, գինի, գիրք, դանակ, դուռն, աշտարակ, աղեղ, սուր, սանդր, և այլն:

Շնորհալիքն այս նոր գրական աեսակը յուրացրել է անշուշտ ժողովրդական բանահյուսությանից. նրա հանելուկների մի մասի նյութն էլ ասնորված է ժողովրդականից: Այսպես, օրինակ, մահմեդական շեյխի (մանա-հոր) և կաթոլիկ ֆրերի (եղերոր՝ կրօնավոր իմաստով) նմանեցրած արջի հանելուկի վերջին տողն առնված է ժողովրդական առածից, թե՛ «Արջի աշքը մերու տանձին է»:

Շըրուկ մի կայր գետ ըզֆըրեր.

Ու ինք խաւ ի վեր մուշտակ ունէր,

Խաղալը, քոյուլ՝ կենայր ու յաւնէր,

Ու հետ ասնձին դայերն անէր:

Ամպրոպ ու կայծակի հրեղեն և անձրևաբեր աստուծուն—Վահագնին ըստ մեր ժողովրդական հավատալիքների՝ վոխանակել է Եղիա մարգարեն, և վերջինս՝ Եղիան հանելուկի մեջ նկարագրված է հիշված աստվածության գծերով.

Տղայն չուտէր բայց միտքն հուր,

Մեծին ագուսըն տայր աղուր.

Հեծեալ հրեղէն ձի ու գնայ սուր,

Ի ինքն ի յառայայն հուէ մեղ ջուր:

Ինչպես էլ ժողովրդական աարը երևում է մի քանի բաներից մեջ, քայց սրանք էլ, ինչպես և մյուսները, իբրև գրական երկեր Շնորհալու իրեն առեղծածն են: Նա ժողովրդական հանելուկների աեսակն ընդարձակելով վերածել է նույնանուն գրադարանների (մեկն ությակ է), և անպակաս ու

¹ Տղված է՝ քաջուլ կենայր, աղուս հա քոյուլ կենայր: Զ. Անուշանի «Մի-մասական բանաբանի» մեջ քաջուլ բառի համար դրված է բանաստեղծութիւն, Դա աղաւաւաւ է քաջուլ բառի Տեա Թ. Անուշանու անայց բառ ու բան, Վարդգէ, 1918, էջ 676 և 674, «Երմուտեղի, քոյուլի—շնորի, կառուների և այլն, իբր վայր ձգելով, թովակելով խաղալը: Գործ է ածուս և մարդոց համար. «Թագապարի հերն ու մերը խաղալին ու իբր քոյուլ-քին» (Գոռայան): Տեա և Զ. Անուշանի «Ծավառական բանաբան», Թիֆլի, 1918, էջ 1180. «Գոյուլ կիմուլ, քոյուլի, քոյուլի—շան զղզղիկը, իբրուս հետ զղզղիկի. շնորք քոյուլուս են, գեռին ասողներ, և այլն»:

հակիրճ ոճով, բայց դիպուկ այլիմաց նմանություններով նկարագրել տա-
ների մի քանի բնորոշ կողմերը և առաջ բերել իսկական փառքիկ բանաստեղ-
ծություններ՝ ինչպիսիք իրականությամբ, Այսպիսով մոռովբղանալու բան-
հյուսություն այդ հասարակ տեսակն ստացել է որոշ գեղեցկություն և ունի
մի առանձին համեղություն ու զրավչություն, մասնավորապես երբ հորինված է
խոսված լեզվով, Բերենք մի քանի օրինակ, Հենց սկզբում դրված հանելու-
կի մեջ կենդանի տեսնում ենք սևավոր արեղային՝ առանձնացած աղո-
թելիս.

Մէկիկ հաւուկ մի կայր փոքրիկ,
'Ի ի դուլին ունէր սևուկ թեպրիկ.
Երթայր նըստէր ինքըն լըռիկ,
Ազօթք առնէր խիստ սըպըրկիկ:

Ահա և քարայրջիկ խեղճուկ ցածր, որ իր մարմնով ծառայում է և՛
քրճաղգեստներին, և՛ դիմարբուներին, և՛ ամենօրին.

Յամէն շըրջի ինքն ի քարեր,
Ունի ծախու մաղէ քըրծեր,
Գինոյ ունի աղուոր արկեր,
'Ի օմէր ձըրի դանկի կոթեր:

Ձանասեր մըջումնիքի երկայնաձիգ կարավանները նմանցրած են խո-
բասուն գնացող բեռնակիր էշերի կարավաններին.

Կարի տեսայ ես շատ կարուսն,
Որ կու իջնայր ի խորասուն.
Իշուին բոկիկ էր ու անփալուն,
Մէկիկ հասիկ բառան ու գան:

Գեղեցիկ է կանաչազգեստ մանուկ գարունն իր աղուական խաշները
հոտերով և բազմաթիվ դեր ձիերով. և ընդհանրապես՝ «սոթագին քարան-
ձու» Հոսմկայի և շրջակա երկրի այրող աշունը, որ ցամաքեցրել է գետի
ջուրը, խանձել ու հնձել է դաշտի խոտը՝ զրկելով ձիուն և էշին:

Թագուոր տըղայ աղուոր տեսակ,
Չամէն հագնի կանաչ դիպուկ.
Խաշինք ունի անթիւ բանակ,
Շատ գէր ձիան որ ռ ու մատուկ:
Մանուկ մի կայր զօրեղ հրեղէն,
Խըմեց հառոյց զջուրն ի գեական.
Ձիուն 'ւ իշուն տրար նո քէն,
Հընձեց վերոյց զխոտն ի դաշտէն:

Ո՛րքան իրական է նկարագրված աշխարհ կերակրող ցրաղացն իբր
ցրառնում (շրտուն) տառապող անվով (փառ), շող աված ալյուրով ու չախ-
չախով.

Մինն ի յանդունդս տառապէր,
Մինն ի յերեսըն թըքանէր:

Գրչեւոյն ծափըս հարկանէր,
Լզկենարարըն մեզ բերէր:

Ո՛վ կնամարձակվի բռնակալի երեսին բան ասել, բայց մի զորմանալի
բան կա թուշուհի մագիլներումս, և նա ցտակաւ է բռնակալի երեսի վրա:

Եկ դու միւս դիր, սիրելի,
Իբք մի ասեմ զարմանալի.
Մէկ մի ունի մագիլք հաւի,
Վազէ յերես բռնակալի:
(Սանդը)

Ինչքան էլ հանելուկների նվառ տեսակն է մշակել մեր բանաստեղծը,
նա չի մոռացել անցավոր մարդ էտկի հեղեղունի բախտը և որ «աշխարհը
հյուրանոց է, մարդիկը հյուր են. կուգան ու կերթան», այն էլ ինչպէս
կերթան...

Պանդուկ մի կայր վերայ երկրի
Ի յանցաւոր ճանապարհի.
Որ անծանօթքն ի նմա գային,
Եւ ծանօթքըն գընային:
Մինչ հիւրըն գայլ՝ մեծարէին,
Եւ մինչ գընայր՝ կողողտէին,
Ոչ թէ մասն ինչ իրս առնուին,
Այլ զբովանդակն խըլէին:

«ՅԻՍՈՒՍ ՈՐԴԻ»

1. Դարերի լեզվագետները և ոգրերգուրդները:—Հիշված բոլոր նախ անակի
երկերը թեպետ ունեն գեղեցիկ հառվածներ, բայց իրենց նյութով տրոհեն
հնարավորութիւն չեն տվել բանաստեղծին ոչ երևակայութեան թռչնների
գործելու և ոչ էլ ներսողովելու իր հոգու խորքերը և քրքրելու իր զգո-
ցունքները: Կարծես Շնորհալիս երկար որոնումներ է արել՝ դրա համար մի
հարմար նյութ գտնելու և գտել է ամբողջ Ս. Գրքը: Աւստի վերևում հիշ-
ված բնական հաստոյա երկից հետո, արեւ նյութն Ավետարանի պատմութիւնն
է, 1152 թ. հորինել է մի իսկական բանաստեղծական գործ՝ «Ողբերգու-
թիւն վիշապանական ի յառից սրբոց», որ սովորաբար անվանվում է ըստ
սկզբի բառերի «ՅԻՍՈՒՍ ՈՐԴԻ»: Ամբողջ վերնագրին է՝ «Տեսան ներսիս
նուէր մաղթանաց ներշնչական տաղիւ տուողին բանից, ըղձումն ազօթից
ներանձնական հոգւոց զարթուցելոց մտօք ի թմբութենէ կրից յիշատա-
կաւ. անցելումն իրի ներկայի և ապագայի, ողբումն հեծութեան սրտի, խօսք
ընդ աստուծոյն: Այս ցիտառից հենց կարելի է տեսնել, որ Շնորհալիս այս
երկի համար ազդվել է Գրիգոր Նարեկացու Ողբերգութեան Մառախից,
Մյուս կողմից նա հետևել է նաև Գրիգոր Մագիստրոսի «Հաղաթողութիւն»:
Ինչպես վերջինիս մեջ որոնումովորով արված է Աստվածային բովանդակու-

¹ Բանք յափու, էջ 7—155:

թյունը, նույնպես և Շնորհալու երկի վիպական կողմն առնված է Ս. Գրքից և նույնիսկ ամբողջ երկը, չորս հազար տող (հերկհազարեան տամբ յանգական), հորինված է նույն ժին՝ հանգով, ինչպես «Հաղաբարությանը»։ Բացի Հին և Նոր Կառկաթանների պատմությանից՝ վերջը նա հիշում է նաև քրիստոնեություն համար աշխատող հայրապետներին ու նաւատակներին, ձգնովորներին ու չարավորվածներին և վիպերգը հասցնում է մինչև Քրիստոսի երկրորդ գալուստը—աշխարհիս վախճանը, վերջին գաղափարն ու հավիտենական կյանքն ըստ քրիստոնեական հավատալիքի։ Դա բովանդակում է, ուրեմն, այսպես ասած, դարերի լեզենդաները, մարդկային պատմության անցյալը, ներկան և ապագան։ Բայց դա լուրջ վիպական աշխատություն չէ, այլ ժառանգական և քնարական ջերթված է կամ, ինչպես հեղինակը բնութայն է, «ողբերգութիւն վիպասական»։ Մի կողմով պատմվածք է, մյուս կողմով՝ մի սրտաբուխ երգ։ Եվ այս կողմից արդեն նա նմանել է Գրիգոր Նարեկացուն։ Այս նմանություններով հանդերձ՝ նա հորինել է մի օրիգինալ—խակտիպ, յուրատեղծ ընտիր երկ, որի մեջ անձնական—լրերից ընդունված է կարևոր տեղը։ Բանաստեղծը կամ «Ենդագը», ինչպես ինքն անվանում է հեղինակն այդ երկի հիշատակարանի մեջ,¹—իր վրա է դարձնում ըստ Ս. Գրքի և՛ մեղավորների, և՛ արդարների արարքները, հարկով, իրեն չհամարելով արդար։

Սկիզբն ի հօրէն մեր նախնական
Մինչ ի վերջին գորուս վախճան,
Հղբան և զգործ համանդամայն
Աս իս փոխել գիտաական...¹

Ամբողջ դրվածքի մեջ շարունակ իշխում է բանաստեղծի իր դեմքը, որ հեռությամբ դիմում է ասածուն։

Հնդ առուածոյ դէմ յանդիման
Խօսակցելով անձն անարժան։

Այդ «Խօսքն ընդ առուածոյս իսկապես մի «աղօթական բան» է, բազմազան ազդեցների մի շարք, որոնց յուրաքանչյուրի մեջ երևան է զալիս «Ենդագի» զգացումների մի դիմ, հոգեկան վիճակի մի կողմ։ Նայելով պատմած իրողություններին՝ երբեմն նա զգում է և խոստովանում իր արարքը, երբեմն որեւէ խնդրվածք է անում՝ «իդա աղօթից», և այդ ամենի ժամանակ, ինչպես Գրիգոր Նարեկացին, շարունակ իրեն անարժան ու մեղավոր է պոռնում։ Մարդկային զանազան վիճակներ յատկապես ջերթների մեջ՝ «ասածու հեռ խոսքը», այս է կազմում հրկի նպատակը և էական տարրը, ամբողջի ընդհանուր պոռնը, որով և հրկի միությունը։

Գրեթե անընդհատ կապակցությամբ ամիսով պատմվածքի մեջ իրար հաջորդում են անձերն և իրողություններն և ապա համապատասխան քնարերգությունն ու խորհրդածությունները։ Երբեմն այդ երկուսն իրար կից են մեջ բերվում, ինչպես, օրինակ, զրույցը կարճատևակ մաքսավոր Զա-

¹ «Միշտական» հրատարակչի, էջ 180

քանոր ժամին, որ Հիսուսին տեսնելու համար բարձրանում է ժամաթղե-
նին (էջ 118)։

2. Արտահայտությամբ մեր Գրիգոր Նարեկացու ձեռքի հետ համեմա-
տությամբ, Հայտարարությամբ Կղզեցւոյնը սին վրա։—Ներսես Շնորհաւու
այս երկի համար, ինչպէս Գրիգոր Նարեկացու «Ողբերգութեան», իշխող է
առաջած, որից բխում է և երկուսի բանաստեղծութեանը։ Ներկուսն ևս
իրենց բանին, այսինքն բանաստեղծութեան համար նույն նպատակն են
դնում թէ իրենց իրենց համար և թէ ընթերցողներին (էջ 168)։

Եւ որք ինն և կամ յետ իմ
Այսու բանիւ քեզ պաշտին,
Համարեսցես միշտ ընդ նստին
Զիս ըզնեբաէս մաղթել սովին։
Եւ առ հոգիս իմ յաւանդին
Եւ ի մարմինս իմ առաքանին
Բարեաց ազգումն ի քէն լիցին։
Եւ ցընծացելուք կայսրեսցին։

Այսպէս ուրիշ նման կողմեր երկուսի մեջ ևս։

Ինչպէս բերված համեմատներից կարելի է նկատել, Ներսես Շնորհա-
ւու այս բանաստեղծութեան մեջ ողբերգը մեղմ է, թուր ու քնքուշ,
ամենայն ինչ հանդարտ է ու փափուկ։ Ոչ վերամբարձ սլացք ու թռիչք,
ոչ սրտի տրուք ու ճննճերում և ոչ առնորդ ու կրակոտ զոյնում։ Այստեղ
չենք գտնում հուստատառական ճիշդ ու ազդեղ, որով ինքն իրեն կարա-
տում և ոչնչացնում է Գրիգոր Նարեկացին ողբալիս։ Ներսես Շնորհաւու
մաս ևս զգացումների զեղումն անկեղծ է, մեծ է կրօնական զոյնման հոտ-
աղբ, բայց, ինչպէս սովորաբար, նա չափավորութեան սահմանից չի անց-
նում։ Ներկուսի մեջ ևս կատարելագոյն նույն զգացումներն են, միայն
արատաշատութեան թափով ու ձևով տարբեր։ Բայց Շնորհաւուն նման է մի
բարեկիրթ մարդու, որ իրեն պահել գիտե, մինչպէս Նարեկացին հիշեցնում
է։ մի բնական մարդ, որի ներքինն անզուսպ է և որ անմիջականորեն,
սեռանց զաշխուռ արատաշատում է իր բնկումները և հեղեղալով արատա-
շուտ, նա համեմատվում է մի աղաւթ հեղեղի, որ գրգռանք առնով՝ ալիք
ալիքի ետևից քշում է առաջ, և որի մեջն ընկնողը ստանջալից տառվում է
երկար երկար, առանց հասնելու եզրին, մինչպէս Շնորհաւուն նման է մի
սկսնակի, վճիռ աղբերակի, որ հանդարտ սահում է կարկաշտով, և որի
խաղաղ տիրն նստած՝ մարդ սաղվում է խորհրդածութեան մեջ՝ աշխարհիս
մասին։ Բայց այսպիսի գանազանութեամբ հանդերձ՝ Շնորհաւու այս երկը
պակաս ազդու չէ, ջան Նարեկացունը. դա մի հեծութեան, մի հառաչ է,
մեղմ ու հեղիկ, և ոչ հեծիլառանց ու թռուռն, բուռն ու սաստիկ։

Ինչից է առաջանել երկուսի այս ռեալիստիկ գանազանութեանը։—Անշուշտ,
երկու բանաստեղծների խառնվածքի բնավորութեան տարբերութեանց,
մեկինք առաջ ու բնկող, մյուսինը՝ անուշ ու հանդիսաւ։ Բայց կա և հա-
ստարկութեանը, որի արատաշատին են դառնում իսկական բանաստեղծ-
ները, ոչ միայն իրենց գործի բովանդակությամբ, այլև ձևով, ոճով։ Նը-

կուսի էլ այս կրոնական գրականությանը հարադրել են յուրաքանչյուրն իր ժամանակի հոգևորական դասի պատկերը, առանձնապես կրոնավորությանն ու ճգնավորությանը: Արդ՝ Նարեկացու Ողբերգության գրքվեալը ուղիղ հարյուր հիսուն տարի հետո է ստեղծել Շնորհալին իր երկը, իսկ այգլան երկար ժամանակի ընթացքում շատ բան էր փոխվել: Վերանայության հեղաշրջող հասանքը բավական գործել էր արգեն, ազգել, էին դրա համար և հայաստանի ու հայ ժողովրդի քայքայի վայրկվերումները, մահմեդական այլազգիների եզերական տիրապետությանները, ահաբեկող երերուն վիճակը և նմանները: Այդ ամենի հետևանքով արգեն շատ փոխվել էր նաև կրոնավորության ոգին: Գրիգոր Նարեկացու օրով, ինչպես նկարագրված է այնպիսի ժամանակի Մանգիկ հատորի մեջ, կրոնավորությանն ու ճգնավորությանը չափազանցության էր հասած թե՛ ներքուստ մարդկանց բորբոքված երևակայությամբ և թե՛ արտաքինապես իր արտահայտության սուր ու բիրտ, հիսուն ձևերով—մերկ ու բակասն Կալ, կամ գրգռված երգերով, բազմաբայա անսովոր պահանջով և այլ և այլ միջոցներով տանջել մարմինները, ամեն տեսակ արտաքին ուժից ու բուռն ցուցադրության մերկող հոգիների և միտքիական ցավազար ձգտումների—մեղադրել ինքն իրեն, սաստիկ ապշոթաբեր, լալ, արտասովել և նույնիսկ ինքն իրեն ծեծել և այլն: Այսպիսիները հոգով ու մարմնով անհանգիստ գերի էին ապշոթաբերության բռնակով օստիկ և համոզված էին, թե մեղքերի ծոցն ընկած՝ ալիկոծվում են կուսակցված ալիքների մեջ և շարունակ ավելի ու ավելի խիստ միջոցների դիմելով՝ աշխատում էին միայնացի գերազանցել ինքնառանձնությանը: Նրանց հարկավոր էր իրենց հոգեկան պարօր վիճակի համապատասխան զգայացունց ապշոթաբերական արտահայտության, զորեղ ու բուռն խոսք, ձևի չափազանցում, ասպնդանիք զօրաւորը վիրաց անբժշկականաց, դեղք աղաղականք ցուռն անտեսականաց, սրտեղի այդպիսի պրերգը կարգալով, դրա վրա ազդելով, ավելի ևս լային ու կոծկեն իրենց: Թեթևը, մեղմը, հանդարտը, միակերպը նրանց հաճելի չէին լինել և չէին էլ ազդել ու բավարարել, ճանի որ կյանքի մեջ կրուս էին նույնը ծանրաթանկի միջոցով հոգևորական ինքնազգացումները, նույնպես և նրա պահանջած և նրա արտահայտիչ բանաստեղծությանը, ոչ միայն բովանդակությամբ, այլև ուժից գոյաներով և բազմադիմի խուսերն ճշող ձևերով, մեկը մյուսին ուժեղ պատկերներով, հորդանից ոճով:

Այսպես չէր կարող լինել Շնորհալու ժամանակ, երբ կրոնավորությանը, այսպես առած, աշխարհիկ էր դարձած, և լուկ ձև էր մեծ մասամբ, ինչպես կանանկնք ներքնում, երբ խոսք կլինի Շնորհալու ճշգրտանրական աշխատության մասին: Կային, հարկավ, նաև դեռ մեծ փոքրամասնականք, բայց ապաշխարության հորդ եռանդը պակասած էր, կրոնավորության բարձրացած, հորձանահոս հեղեղը նստած էր, աղադրությանը պարզված, թափը թուլացած: Չկար այլևս բորբոքված ուղեղների երկնաթափ միտքիցիվը, արտաքին ցուցադրությանը, Խոհական բարեպաշտ կրոնավորը, ապաշխարողը, դարձած էր ներանձնավոր, իր մեջ, իր հոգու մեջ քաշված համեստ ու զուսպ վանական, սրբասեր, պարզ ու մաքուր կյանքով, բայց բնավ ոչ ինքնառանձն ճգնավոր, ոչ կամավոր նեղության կրող,

շարժարժող, Զկար կրօնական հարթածությանն իր արածքին ծանր ու կեղեքիչ ձևերով, Բազմական էր միայն, որ բարեպաշտը, իր մեջ ամփոփում, ջերմ 'հավատով գիմեր սաստնան, Այս տիպի կրօնավորների լավագույն ներկայացուցիչն է եղել ինքը Շնորհալին. ոչ միայն իր աղբահամստ միակերպ կյանքով, այլև իր Ողբերգության թե բովանդակությամբ և թե ոճով, որ համապատասխան է իր և իրա նմանների ներքինին: Ամեն ինչ շափավոր, մեղմ, փոփոկ, հանգաբար. և ստանալուն էլ միակերպ, բայց սահուն ու սիրուն:

3. Վերջին դատատուրը.— Շնորհալին այս երկի մեջ ունի մեծազայտուն հոգեմտքներ եւ: Վերջին դատաստանի նկարագրի մեջ, որ մեր հին բանաստեղծների սիրած նյութերից մեկն է, ինչպես և մեղավորների պատիժների թվարկության ժամանակ, մեր այս հեղաբարձը քերթողի երեսակայությունը մեծ թափ ու թռիչք է առնում: Նա սաստիկ զգածված է: Բերենք մի քանի կտոր՝ կրճատումներով.

Յորժամ տարերքըս դըղըղդին,
Հաստառութիւնքն սաստնին,
Իբր ըզծովու կուակք կուտին
Ի յեսանդանն կթառային.
Հայնառարած դողայ գետին,
Ի թանձրութեանց հիմանց շարժին.
Մի ըզմայ հեռ խափանին,
Գտնաւ յերկուցն տառանին,
Լերինք հիմարքք գորհուրին,
Եւ ուզանկի բախմաբ թընդին,
Գործր բնութիւնք վիժաց հալին,
Եւ ամենայն նիւթք հըրդեհին:

Լռություն է լինում. կես-գիշերին հանկոթակի գոչում է Գորբիելի փողը, և զոդները սլանում են իրենց տեղերից, ուր պահված էին, Գերեզմանները բացվում են, փառած մարմինները նորագվում են, նույնիսկ ծովի ձկների ու ցամաքի գաղանների կերածները, Հողիները միանում են մարմիններին, և մարգիկ բոլորը դառնում են երեսնամյա. ոչ ծեր կա, ոչ մանուկ, ոչ արու, ոչ էգ և այլն: Բացվում է տալանը, նստում է դատավորը, Թագավորում են աղքատները, քաղցածները, զրկվածները: Պատժվում են զրկողները, զաղբրը, աղանդները, պատնիհները:

Պատժվում են և խաբար վաճառականները, նենգավոր արհեստավորները, աղքատներին ուղիղ չգտաղ դատավորները, և շատ ուրիշները: Պարզևներ են սաստնում արժանավորները—տոռքյալներ, մարդաբններ և այլն:

Ներսես Շնորհալին իր այս Ողբերգությամբ հանդիսանում է երկբարդ և վերջին նշանավոր եկեղեցական բանաստեղծն իբրև արտահայտիչ, ինչպես ասվեց, որդեն մեղմացած, բայց իսկական բարեպաշտ կրօնավորության—ներանձնավոր վաճառականութան: Նրա այդ երկն իր խորաթափանց տեղեկության համար, որ ճշարտագույն էական պայծառն է, զա-

սիրելի է հղել հետագա սերունդներին, Սաղմոսի հետ միասին հայկական ազագրության հենց սկիզբներում, 1665 թ. արժանացել է ազգելու, և ախուհեան հաջորդ երկու դարում նորից ազագրվել է ավելի քան ինն ահաբաժմի Մեն է հղել այդ դրքի ազգեցությունը, համայն ու պահանջը, Գաբրի շաբաձակ գրա վրա ոչ միայն աղոթել և և արտասվել, դա հղել է ոչ միայն պարծր սրտերը հրմուղը, ինչպես գրում է Ներսես Լամբրոսացին, այլև դրանով աւելի են Աստվածաշնչի պատմությունն ու եկեղեցու դավանությունը և բարոյական խրատներն են առել, որովհետև բանաստեղծը չի մոռանում, որ ինքն իր հայրենով հոգևոր դաստիարակ է, Վենետիկի և արդարև գերբնախոր, միանգամայն և իսկաշնորհ և բազմաշնորհ գրված մը, այսպես է բնորոշում այդ երկը բազմահմուտ բանասեր ու բանաստեղծ վարդապետը¹։

«ՈՂՐ ԵՒԵՍԻԻՍ»

1. Քերթվածի իրական պատմական մյուսը և ծագումը։—Իսկական բանաստեղծական հղացմամբ և արվեստով գլուխ բերված մի մեծ ջանքահանքերթված է Շնորհալու այս երկը², նրա գլուխ-գործոցը, Դրա նյութը ոչ կրոնական է և ոչ կրոնավորներին է վերաբերում, այլ աշխարհիկ է, Բայց զա մի արևելյան արտադրան հեղաթ էլ չէ, աստից ժամանակյան, ահագնական և ազգային գուհի, որի մեջ գեղեցիկ չափածո բանաստեղծություններ լավագին եղանակով պատմված լինելը կարցրած սիրուհու մասին, ու սիրահար հերոսը, մենակ կամ հավատարիմ ընկերի հետ, երեսը իր սիրածին սրտնելու և բազմաթիվ բնական կամ անբնական արկածներից հետո՝ գտներ նրան, Մեր այս կրոնավոր բանաստեղծը հետո է աշխարհիկ սիրուց, նրա այս քերթվածի նյութը պատմական է, դրա մեջ վիպերգված է հեղինակի իրեն որով կատարված մի պատմական եղելություն, Նա երգել է, ինչպես ինքը գրում է, պիտի եղել, մեր ժամանակ գիտելուց, Այն դարում ամենամեծ նորությունն էր այդ—բանաստեղծությունն Լորինի ժամանակակից քաղաքական դեպքերի վրա, Բայց միանգամայն այդ երկն իր մեջ լայնորեն անզրադարձրած ունի հեղինակին ժամանակակից իրականությունը, հասարակական և ազգային իրական կյանքի պատկերը, լի է հայրենասիրական ոգևորություն, հարուստ և փայլուն նկարագրներով, լինի խաղաղ և բարձր կյանքի, բնության ու չեն քաղաքների, թե քաղաքային կոսմոսների, որ քրիստոնյաներն ինքնապաշտպանության համար մղում են այլազգիների դեմ, և թե վերջիններիս գործած վայրագությունների, Եվ այս մանրի վրա ընդարձակ ծավալով սփռված են հեղինակի հույզերն ու խոհերը, նրա զգայուն սրտի մորմոցն ու կակիթը, նրա հույսերն ու անհանգիստ, որ միայն իրենը չեն, այլ նաև իր ժամանակի քրիստոնեությունն ընդհանրապես և հայկությունը ժամանակորագետ։

Ինչ է այս քերթվածի գործողությունն հիմք կազմող պատմական

¹ Ղ. Ալիշան, Շնորհալու և պարագայ իւր, Վահագնի, 1673, էջ 272.

² Ողբ Նիսիսի, յարհնալ տեսն Ներսիսի Նյայեցի, Տփլիս, 1880, ի պաշտոնի Ներսիսեան պարոյի չափը։

գեպարը, Հին Նյանավոր Եդեսիա քաղաքն իր շրջակա գյուղերով ազատ էր Պաղեսի թուրքական տիրապետութիւնէնց. 11-րդ դարի վերջերին ամենեղ կռոււածքիչ էր Թորոս անուանով մի հայ, որ այդ դարի վերջում սիրով ընդունում է խաչակիրներին: Նրանց, սակայն, չուտով սպանում են նրան, և Եդեսիան իր գովաւսով Մնում է նրանց ձեռին իբրեւ առանձին կոմսութիւն: Հետզհետեւ անարի են դառնում իշխող ֆրանկները և զեն կշանք վաւրում: Եդեսիայի վերջին կոմսը՝ Չեսլին անուանով, առեւանգելով մի հայ իշխանի զուսարը, սնում է նփրատ դետի մշուս կողմէ՝ իր զվարճութիւնն անելու: Քաղաքը Մնում է առանց հզոր պաշտպանութիւն: Այդ իմանալով Հուկոյի կամ Բերիայի ամիրան՝ Ջանգի, որ տիրել էր գրեթե ամբողջ Միջագետքին և Ասորիքին, շատ զորքով արագ արշավում: պաշարում է Եդեսիան: Քաղաքացիները մի ամիս քաջութեամբ պաշտպանվում են, բայց դրսից շատանալով սպասած օգնութիւնը, վերջը թուլանում են բազմաթիւ թշնամիներէ տուկով կոտորածի, կողոպուտի և գերութիւն մատնում: Քրիստոնյաներին մեծ սուգ է պատճառում այդ: Լուրը հասնում է Արամայան Եվրոպա, և պատրաստվում են նոր խաչակրաց արշավանքի: Այս է կատարված գեպար:

Ներսէսի Շահան կամ Զորավար եղբոր արդին, պատանի Ապիրատը, պաշարման ժամանակ եղել է Եդեսիայում և ամենեղից ազատվելով գնացել է Մովսէ Կաթանգլայն քաղաքի ավերումը: Ուրիշ փոխառակներ էլ անշուշտ հասած կլինեն նույն զղեկը և պատմած նույն աղետալի եղելութիւն մտին: Շնորհալին ահա այդ գեպքի տգովորութիւն տակ և Ապիրատի խնդրով հյուսել է իր Վիզըն:

Շնորհալին այդ երկը հարինել է ըստ երևութին 1145 կամ 1146 թ., խաչակրաց երկրորդ արշավանքից առաջ, երբ Ապիրատը, թեւ արդեն զինավարժ ձիովոր, բայց զեւ մամուկ տղայ է եղել: Այս Ապիրատին (որ հետագայում, 1195 թ. դարձել է կաթողիկոս՝ Գրիգոր Ապիրատ անուանով) նա ուղղել է, ինչպես տեսանք, վերելում հիշված ռաւնավոր նամակը և ընդարձակ թան հաւատարմաւորութիւնը: Արդ՝ իր պատանի տոնակի խնդրով և նրա ու նրա նման տախտակներին և ոչ թեւ զգիւմներին համար հորինել է մեր քերթողն այդ Վիզըն, որ այսպիսի ծագում ու նշանակ ունենալով հանդերձ՝ նրա գրական վատասկների պատկն է, հոռոգով ոգլած մի գեղեցիկ քերթված:

2. Դիւանաւորութիւնը:—Բաւառաւորն իր այս գրվածքն անվանում է Բաւառաւորութիւն: Եդեսիան առնված է գիմաւաւարար իբրեւ օրգեկորութիւն օրգեւորի կին կամ տարկին, որ օղբում է իր զլիւին եկած մեծ աղետը: Նա սկզբում ողբակից է հրովիւրում համայն քրիստոնյա ուղարհը:

Ողբացէ՛ք, եկեղեցիք,

Հարստնք վերին առաքատի,

Գորք և եղբարք իմ սիրելիք,

Որք յընդհանուր կողմ աշխարհի.

Քաղաքք և գիւղք առհասարակ,

Ա՛զգք և աղինք որ էք յերկրի,

Հաւատացեալը Քրիստոսի,
'Ի երկըրպագուք նորին խաչի...

Դիմում է քրիստոնեական նշանավոր կենտրոններին՝ Երուսաղեմ, Հռոմ, Կոստանդնուպոլիս, Ալեքսանդրիա, Անտիոք, բանաստեղծորեն բնորոշելով նրանց կատարած զեբեբը։ Ապա խոսքն ուղղում է Մեծ Հայքին, Հայոց եկեղեցուն, առանձնապես Վաղարշապատ և Անի քաղաքներին, և սուստիկ ողբալուց հետո պատմում է իր, Եգեսիայի, անցյալ փառավոր վիճակը և արաբացիներինց կրած թշվառությունը։

Այս նյութը մեր բանաստեղծը վիպերգել է մեծ հմտությամբ իբրև մի գիտակ անձ, որ արդեն իշխում է իր կատարելության հասած արվեստին՝ երևան բերելով բացազատության թեթև ճոխություն և փայլուն դրամատիկ։ Որ նա խոսում է ոչ իր կողմից, այլ անձնավորված Եգեսիայի, այդ հենց մի ամալիսի գյուտ է, որ ամբողջ երկին տալիս է մեծ կենդանություն։ Նա հազվադեպ մոռանում է դիմառնությունը և գրում է իր կողմից, այսպես, օրինակ, էջ 54 և հա. 14 տողերի մեջ. «Բայց դի հնար ոչ լինիցի... Մի ըստ միովն գրել բանի... Զի այս անկար շաբաբորդին», և այլն։ Կան հատվածներ և տողեր ևս, որ չեն հարմարվում մի ողբերգու կնոջ, Բայց գիմառնությունը, այդ ճարտասանական ձևն, բնդհանրապես զեղեցկացրել է Շնորհալու երկը։ Կարգալիս, մեծագույն մասամբ, մոռացվում է բարոնոսությունը, և մեզ թվում է, թե իրոք մի մանկակորույս, գորովագութ որբնվայրի թշվառ կին է խոսողն ու կոծողը, Եգեսիայի տիրուհին, որ լավով պատմում է իր գլխին եկածները, Եվ այդ կենդանի մարդկային էակի դառն ցաֆն և աղեկտուր արտասուքը համակում է մեզ ի գութ և ի խանդադրոտանք։

Լացէ՛ք, լացէ՛ք բարձր ձայնիւ,
Զիս ողբացէ՛ք կողկողակի՝
Եգեսիա՝ Ուրհայ քաղաք,
Որգեկորոյս ոլբ և ալբի,
Կանչեմ առ ձեզ ձայն կանացի,
Կականալիբ 'ւ ողորմելի,
Քոյս ի գըլխոյ մերկանալով՝
Զիմ պատահեմ ծածկոյթ դարդի.
Փետտեմ ըզվարս իմ ցանկալի,
Խրցեմ ըզհերս անխնայելի.
Քարամբ ծնծեմ կուրձըս սըրտի,
Բաղբեմ գերեսս իմ յապտակի.
Նըստիմ ի սուգ ի տան մըթին,
Որպէս օրէն է սըգաւորի.
Եւ փոխանակ որդան զգեսաի՝
Սև ըզգեհում գոյն արխարալի.
Հեղում արտօսք անշափելի,
Յորդ և տոտա՝ նըման գետի.
Քանզի առակ էգէ յերկրի.

Տիեզերաց նախասերի.

Եւ տնցաւորք հասնապարհի

Վնայ ի վերայ ասնն վայրի:

(Ըջ 31 և հան.)

8. Էսկիանց կողմը:— Պաշարման, կոտորածի և կողոպուտի ենթարկվել են աչ միայն Ողեսիան, այլև հայկական քաղաքները—Անի, Կարսը և մյուսները, այն-էլ մի քանի անգամ. Ողեսիան Անի քաղաքի ավերակ և կատորածը պատմելուց հետո՝ ասում է նրան (էջ 19).

Վասն այսորիկ, ով եղկելի,

Որ ես ներհունն այս ամենի,

Ի քոյն յայնժամ խիստ աղետի

Ծանիր և զիմս ողորմելի...

Բանգի նրման յոյժ անասնի

Իմըս քոյին հասնալ չորի:

Դեղքերը և աղետալից վիճակը շատ կողմերով նույն և նման են եղել ավելի քան մի դարից ի վեր 13-րդ դարի կեսից առաջ. Ուստի Շնորհալին ի դեմս Ողեսիայի երգել է իսկապես նաև Հայաստանի այդ իրականաթյունը. նա իր եռանդն ստացել է թե՛ Ողեսիայի ավերման ցավից և թե՛, և ավելի ևս, Հայաստանի:

Դժբախտաբար այդ ողբերգական զգացումները հաբառակա են և հետագա մի մեծ շարք դարերում, որովհետև հաճախակի ավերմունքն է եղել Հայաստանի հակառակորդը. Ուստի Շնորհալու ստեղծագործության արժեքն ավելի ընդարձակվել է. եվ նրա բարոյականության բանը, հեղինակի մասնականակից կյանքի երգը, միաժամանակ և մեր ժողովրդի դարավոր վերքերի առաջին բանաստեղծական ողբն է. «հայրենասերի ողբը», առաջին «վերք Հայաստանին»: Մյուս կողմից՝ այս գեղեցիկ քերթվածի մեջ հանգես է բերված մի ուրիշ մեծ խնդիր ևս—քրիստոնյա և մահմեդական ժողովուրդների, քրիստոնեության և մահմեդականության հակադրությունը. Դա միմյանց հետ նրանց վարած կռիվ առաջին բանաստեղծական արտահայտությունն է. Այս է կազմում քերթվածի էությունը—քրիստոնեության և մահմեդականության հակամարտություն և հայրենասիրական ողբերգություն այլազգեբերից կրած ավերմունքի հիման վրա:

Արիստակես Հաստիվերացին, Հայաստանի լավ օրերի այդ ակնառեսք, որգե՛ն ժո՛րմաբան էր Հայաստանի տնկման, շեն երկրի ավերման համար և, ինչպես տեսել ենք, երբեմն իսկական քնարական արձակ բանաստեղծություն էր հորինում: Մեր հին պատմադրությունների մեջ էլ պակաս չի եղել հայրենասիրական ողբաբան զգացման զեղումը: Բայց այդ ամենն արձակ են և, բացի Հաստիվերացու գրածից, ավելի հոեոքական, քան մաքուր քնարական—բանաստեղծական: Նախորդ շրջանում մեր բանաստեղծություն մեջ, աչ էլ անգամ Գրիգոր Նարեկացու մաս, չենք գտնում հայրենասիրական նվազը: Ներսես Շնորհալու այս մեծ «Ողբի» 1070 երկատուղ աների մեջ առաջին անգամ լսում ենք մի չափածո և հանդավար

սրտահույզ քնարերգութիւնն, Բանաստեղծը մերթ սրաի կսկիծից բուռն
հիշեր է արձակում թշնամիներէ դեմ, մերթ մեղմ և անուշ, բայց խորին
արամուսնութեամբ լցված, հառաչում է Հայաստանի համար. որոնում է նրա
անցած հին փառքը, որ այլևս չկա: Ամբողջի մէջ տեսնում ենք մի անկեղծ
կարոտալի վիշտ ու թախիծ վաղուց հեռացած ու կորած քաղաքական ազա-
տութեան համար. տեսնանք՝ ունենալու տան հին երկիրը, որ էր բնական
փթթեալ ծաղկիչ, եղբայրացած ի գոյն վարդիչ, երանելի ու ցանկալի
ամենքի համար: Մի երկիր, որ վայելում էր ուրախ կյանք, երգ ու երաժշ-
տութիւն, ամենալից սեղաններ, բարեկամական զվարճութիւններ, Ռուր է
այս ամենը,—հարցնում է բանաստեղծը, դիմելով իրեն Հայոց աշխարհին:

Բայց հարցանեմ, ո՞վ բողոքայի,

Բանիւ խընդրեմ պատասխանի.

Այժմ արդ ձեր է թագ ըստ զարդի,

Եւ կամ պըսակըն հրաշտլի:

Ռուր զարդարանքըն դըշտոյի,

Հարսին որդւոյ թագաւորի.

Ռուր պաճաճանք հարսնարանի,

Կամ ոսկեհուս վերջաւորի:

է՛ր չէ փեսայն ի խորանի,

Կամ փեռուէրքն ի տաճարի.

Ռուր են մանկուսքն առաքառոթի,

Ձի ոչ հընչեն զերգըս Դաւթի.

Ձիւրդ լըռեալ ոչ հականեն

Ձփողըն հընչող տաքստնացի.

Ռուր պարարակ եղնամոլի.

Ձիւրդ ի քեզ ոչ զենանի.

Կամ ժալըսուկքըն բաժակին,

Ձի ոչ բաշխեն զանոյ՜ դինին.

Ռուր բարեկամք զուարճակից...

Ուր քաղցըրաճայն երաժշտի,

Կամ գեղգեղութիւն եղանակի...

Արդ ձեր գահոյք թագաւորի

Վաղարշապատ ըստ քաղաքի,

Կամ նախարարքըն արքայի,

Արարատեանըդ գաւառի.

Ռուր են իշխանք որք առաջին,

Կամ զինակիրք որք են վերջին.

Ռուր զօրակունքն յապարիզի,

Կամ լեզէոնքն ի ճակատի.

Ռուր մեծամեծքն ի բազմոցի,

Կամ ձեր սեղանն ամենալի:

Ռուր են ազատքն ի տաճարի,

Կամ տեսնորդիքն ի ծովկոցի:

Ահա բարձաւ այս վաղագոյն,

Թոյժ հեռացաւ որ չեբեի.
Անուշը և երազը էին յայտնի,
Արդ ծածկեցաւ ի գորթը մի.
Այլ փոխանակ այս ամենի՝
Թոյժ հակառակըն տեսանի.
Քանզի նըստիս որք և այլի,
Տըխուր գիծօք գեթ ի սըգի:

Ահա Հայաստանի փոռալուռ տնայալն ու թշուա ներկան Շնորհալու
օրով: Նա էլ ճիշտ նույն վիճակին է եղել և է՛ր, ինչպես Եղեսիան: Պակաս
դժբախտ չի եղել և Անի ժայռաքաղաքը, որ ձեռք ձեռք էր անցնում
Գրիգոր Պահլավունին, Շնորհալու եղբայրը, ժողովրդ է եղել և նույնիսկ
բանակցութեան է սկսել Անիի իշխողների հետ՝ կաթողիկոսաբանը Մովս
սէսից փոխադրելու Հայաստան—Անի, բայց այս քաղաքի անկայուն
դրութեանը հենց պատճառ էր դառնել թողնելու այդ միտքը: Կարելի չէր
երգել Եղեսիայի վիճակը և անտես անել հայոց քաղաքներից այդ մենի
բախտը, որ հետզհետե դեպի անկումն էր գնում գոնե ռզգային հայացքով:
Եվ Շնորհալին Եղեսիային ողբակից է հրավիրում ասանձնապես նաև Անի
քաղաքը:

Բայց և ըզքեզ յայս հրաւիրեմ,
Արեւելեան քաղաքդ Անի.
Կցե՞րդ լեւր դու իմոյս ձայնի.
Եւ ըսփոփե՛չ տարակուսի.
Քանզի երբեմն և դու էիր
Վայելչական հաբոն ի քողի.
Մերձաւորաց յոյժ ցանկալի.
Հեռաւորաց փափագելի:

Այդ սրտալի սիրուն նկարագրից հետո՝ բանաստեղծը վերհանում է
եկեղեցու տնցյալ վիճակն Անիում և շարունակում.

Սուրն տնողորժ տնօրինի,
Որ ժեր տրեանն է ի սովի.
Որ չէ յագեալ և ոչ յագի
Մինչև ի դալ կատարանի,
Նոյն նա եհաս ուրեմն ի քեզ,
Որպէս յիս յայս ժամանակի,
Հընձնաց զորայն յանդատանի,
Կանաչաւոր ի հասակի.
Ջայղին իւրեաց տրմառաքի,
Մերկեաց յոսոցն ըզձիթենի.
Իհեզ զարիւն սըբբոց յերկրի,
Հոսեաց նըման ջրոց գետի.
Արար գիւկն տնթուելի,
Անթաղ մահաւ գէշ գողտնի.

Գահանայիցըն Գրիստոսի
 Արեմո՛ր ներկեաց զեկեղեցի-
 Մարկաւագաց քրիստոնէի
 Մարմինըն անկեալ մէջ փողոցի,
 Եւ այլ բազումք որ աչ թուի,
 Եւ է՝ ասելոյ անկարելի,
 Որ քեզ հասին յայնմ վայրի,
 Բոլոր ամեն մասունք չորի՝¹
 Եւ արարին ըզքեզ զերի,
 Գան ըզՄարիս այլ աւելի:

Այդ ամեն չորիքները կրած լինելու համար՝ Անին հրովերժոււմ է արամակից լինելու:

Արդ ժողովեալ զյըստերըս քո,
 Վասն իմ ի լաց նիսա՛ւ ի օրդի,
 Կոչեա մայնիւ կականելի,
 Շարժեա ի յոգս զամէն հոգի,
 Զի զովացուսն այրման սըրտի
 Ոչ է այլ ինչ, քան այս լինի . . .

Ներսէս Շնորհալու այս ախուր սղարեզոյ՝ Վաղարշապտան ու Անի քաղաքը դառնում են Հայաստանի անցյալ մեծութեան սիմբոլներ, որ տնուկեան երգվում են և ուրիշներին, Նույնիսկ սգովոր ՎՄԿՅ Հայաստանի 3 կոչված հայտնի նկարի գաղափարը 19-րդ դարում ամնված է Ողբի 3 այս տողերին, որոնցով Շնորհալին պատկերացրել է ավեր Հայաստանը, Վերադառնալու և այլրի, արեւելի զիմօք՝ զերթ ի օրդի 3:

4. Իրաւամբութեամբ երազարիչ Յերբողիմ—Շարունակենք անանկ այս բանաստեղծութեան ուրիշ կողմերը, Նախ՝ թի ինչպես է նկարագրված նդեւիտ քաղաքը՝ նրա բնական զեղեցկութեամբ յուսնները, պարտաւ հոգի, ջրերն ու բուսականութեամբ յուսնը, հարստութեամբ յուսնները, շենքերն ու մաքրութեամբ յուսնը և շենք ու բերկրաւից կյանքը և յըջկա ավանները:

Եւ մայր էի բազմորդութեան,
 Անթիւ քենայ զուստար և որդի,
 Զորս մայրաքաղաքի զեղեցի,
 Յըստեանց իմաց զկաթն արուցի-
 Գեղեցկաւոր յօրինեցի,
 Վայելապէս զարգարեցի:
 Գանդի երկիր պարտաւ էի,
 Աղբիւր կաթին յորդ ըզղեւի-
 Աւտաւոր նրժման վայրի,
 Ի՛նչ այլ զերագոյն որպէս թուէի,
 Զուր կենդանի յինէն բըզեւէր,

¹ Տղված է Երաբի. ուղղում եմ ըստ իմաստին՝ Երաբի

Զուարթ ձողիկ բոյս յօրինէր.
 Գետոց նըման վըռակ հասէր,
 Ըզբուր-ստանն արբուցանէր.
 Ծափն ի միջի իմ ծածանէր,
 Քաղցրիկ օգովըն ձիծաղէր.
 Զօղակեղութիւն աըզմին մաքրէր,
 Ըզհր-զարակսըն զարդարէր.
 Բազմագունի աունկ յօրինէր,
 Որպէս ըզբախտըն որ յնդհմ էր.
 Սաղարթաբեր ձառով ծաղկէր,
 Առառ-գոյն շղաղակէա էր.
 Տերևախիւ հեղիկ շարժէր,
 Հոս անմահից յիւրմէ բուրէր.
 Նարդոս, քըրքում ինձ ընձիւղէր,
 Վարդ, ժանուշակ վերաբերէր:

Նախօրից շրջանում չենք գտնում այսպիսի բանաստեղծական նկարագիր, որի մեջ արտաքին բնութիւնը երգված լինելու ոչ թե պատկերների կամ նմանութիւնների համար, կամ այլաբանորեն իբրև սիմբոլիկ պատկեր, այլ առկա է կերպով, բնութիւնն ինքն իրեն երգի նյութ. հո Գրիգոր Նարեկացու Վարդավառի տաղըն, որի մեջ արդեն զգացվում է վերածննդի շունչը, թեպէս այդ էլ զարձայն կրօնական նպատակ ու դիւանա ունի. Արդարև մեր կլասիկ պոետագիրները, ավելի Մովսէս Խորենացին, պոետվածքի ընթացքում ունեն գործողութիւնն վայրերի մի քանի գեղեցիկ տեղագրական կարճ նկարագիրներ, բայց ոչ ռաւանավոր և այնպէս մաքուր բանաստեղծական, բազմակողմանի և հեղինակի զգացմունքով ազդարարված, ինչպէս է Շնորհալուց վերևում գրվածը. Սրանով մի նոր և ավելի գեղեցիկ ձևով վերածննդում է մեր կլասիկների երկերի այդ երկրորդական կողմը. Այստեղ, Վարդի մեջ Շնորհալին մեղմ և անուշ, բայց և զուսնեղ ու նկարեն ռճով, երկնագլուխ է ամաւրանը. Ընթերցողն զուրմ է բնութիւնն և քաղաքի նուրբ և ակնհայտ գեղեցկութիւնը, կարողանում է երևակայել քաղաքն իր դիրքով ու բարե-մասնութիւններով, իր շրջակայքով, և նրա ժայռն զարթոնութիւնը. Եվ այդ կառարկած է մերթ չքեղ նմանութիւններով, մերթ մի երկու նկարչական բառով միայն, երբեմն անմոռանալի հստակ ու հոսուն առդերով.

Ծափն ի միջի իմ ծածանէր,
 Քաղցրիկ օգովըն ձիծաղէր...
 Տերևախիւ հեղիկ շարժէր,
 Հոս անմահից յիւրմէ բուրէր...
 Առաւօտուն ցօղն իջնէր,
 Ոսկենըման ճառանչ փայլէր...

Շնորհալու արվեստի հրապուշտ մեծ է և այնու, որ նրա նկարագիրը ազդարարված է հեղինակի հույզով. նա բնութիւնը չի պատկերահանում ստույն և անտարբեր ձևով, Իսկուշին զգացվում է, որ նա սիրում է ամեն ինչ, որ

ինքը ներդրում է՝ Բայց միաժամանակ այդ բոլոր պայծառ պերճույթան վրա ջանքած է մի սև տխրություն, մի մահուկ թախիճ, որ և համակում է մեզ, Այդ ամենն անցյալ է, և պատմվում է անցյալ ժամանակով։ Այս է՝ բանաստեղծի շնորհալիությունը, որ բայերի անցյալ ժամանակով միայն՝ զգույն է առիտ այն, որ հետո ավելի մանրամասն պիտի պատմի, այն, որ այդ

Բարիքն ամեն ըսպաւեցան,
Եւ ցոյցբութիւնքն դառնացան։

Ճ. Բարբառօտակամ ռազմակամ զործողութիւնների ռեալիստակամ պատկերը.— Պակաս ճարտարությամբ չի վերահանել մեր բանաստեղծն իրականության այս դառն երեսն ևս—նրեւիտայի կործանումը, Բազալի պաշտարում, մարտերով պաշտպանութիւն և առում ու կոտորած, այդ շատ սովորական կրկնված երևույթ էր այն դարերի ցոյցապահան կյանքի մէջ, Գրեթե բոլորովին նման ձևով, ըստ Արիստակէս Լասարիվերտցու, եղել է և Անի քաղաքի մահուամբ նրեւիտայի դեպքից ութսուն տարի առաջ, 1084 թ.։ Ներսէս Շնորհալին եթէ անձամբ ենթակա չի եղել այդպիսի ռազմական վայրագ զործողության, անշուշտ հաճախ լսել է ոչ միայն նրեւիտայի, այլև աւերիչ բերդերի մասին, նա իր «Վիպասանության» մէջ պատմում է, որ իսմայէլացիները (—աւարները) արևելքից սփռվելով հասնում, պաշարում են իր հոր Մովսէս բերդը, Նրա հայրն և ամբողջանները քաջությամբ պաշտպանվում են, թշնամիները չեն կարողանում առնել բերդը, բայց հայրը աշտարակի վրա նստահար է լինում։ Նա իր մահից առաջ վրեժն առնում է նեան արձակողից և մեռնում է գրաբից ժահուամբ։ Այս դեպքը երիտասարդ բանաստեղծն իր առաջին երկի մէջ արդեն բաժանական մանրամասն պատմել է։ Նույնն ավելի ևս ընդարձակ և արդեն հասուն արվեստով եղբւրբըրում է նա նրեւիտայի համար, նա մեծ ժողովրդով և բանաստեղծական կենդանի հյուսվածքով ու կորզովորյալ շարքությամբ արձանագրել է միջնադարյան բարբարոսական ռազմական զործողութիւններին ընդարձակ ռեալիստական պատկերը։ Սկզբում զեն համեմատաբար հանդիսա պատմում է նրեւիտայի իշխանության հետզհետե թուլացումը չլիակա մահմեդականներից—հազարացիներից (—աւարներից)։ Երբ հասնում է բուն դեպքին, նա դառնաճանկ է տեսնում յայտնի առ մարդագիտ գաղափարներ և թանձր գույներով նկարում է թշնամիների արարքները։ Գործողութիւնն ամբողջ դառնում է մի ուժեղ պիտանիւկա, շարունակ փոփոխվող մի նկար։ Մեր աչքի առաջ շարժվում են մերթ դրսից հարձակվողները, մերթ ներսի պաշտպանվողները կամ թէ միաժամանակ երկու կողմերն ևս, և մերթ հնչում է նրանց քաջալերական խօսքն ու ճառը կամ մենք տեսնում ենք միաժամանակ թշնամիների ձանր դրութիւնը և այլազգիների եղբնադարձութիւնները։ Եվ այս ամենը վիպերգված է մեծ վարպետությամբ, շատ եռանդուն ու ցայտուն, չի դառնակակիճ կամ բարկացալու զգացումով։ Բայց միշտ Շնորհալուն հատուկ վճիռ ունի, Բանի առաջ է դնում վիպվածքը, ավելի խոտ

¹ Բանք լուսու, էջ 553 և հաւ.

լեզու է բանեցնում նա. դի մվելի և մվելի է զրգովում թշնամիների ոճեր-
ներով, մինչև հասնում է վերջը սոսկալի անեծքների:

Պաշապանվող քաջերն և աբիները ժողովվում են միասին, երգվում
են չլսել թշնամիներին և մինչև վերջը մարանչել, նրանք քաջալերում են
միմյանց նախնի քաջերին հիշեցնելով, Հոգևորականներն էլ խրախուսում
են մարտիկներին: Ապաստում են զբոց՝ Անտիոքից ոգնության. ուստի հա-
կոռ-կորդը շապում է: Վերջապես թշնամիները պարիսպը մի տեղ կոր-
ծանում և մուտք են բաց անում: Մասանօր սիրտ իմ էլմլիք, — ասում է
պաամոզ աբին:

Երկամունքըս պարերն,
Թաւ հարկանի որովայնիս.
Միւք և հագիս իմ այլայլին,
Մինչդեռ յիշեմ զօրն ահագին,
Եւ դառաւօրն մըթագին:

Բայց քաջարիները չեն վաճառում ու փոխում. այլ հարձակվելով
մարտնչում են, պարսպի ընկած տեղը վերականգնում: Փահանջներն ան-
գամ սրերով կովում են, իսկ եպիսկոպոսները խրախուսում:

Հապա եղբւրք սիրելիք,
Մի դաբհուրիք, առնայնէին.
Ձմառն ընտրեցէ՛ք դուք քաջութեան,
Որ քան ըզկեանս է գովելին...

Մյուս կողմից թշնամու զորացուխն է աշխատում քաջալերել իր
զորականներին պարզներ խոստանալով և սղառնալիքներ ապով: Ձմառն
նախադրում էր իր զորքի հագին. նա լավ դիտեր քաջալերության վերջին
միջոցը: Եւ երբ տեսնում է, որ չեն կարողանում հաղթել, մվերի է մատ-
նում քաղաքը: Թշնամին քաջության է ցուցաբերում մվերի համար:

Մի ամիս զիմադրելուց հետո՝ նոգնում են. պարիսպը մի այլ տեղ
առանց պահապանի է մնում: Թշնամիներից ոմանք բարձրանում են այն-
տեղ: Փաղաքի ժողովուրդն այն տեսնելով զարհուրում է և սկսում է գու-
ժելով փախչել: Թշնամի խուժանը մտնում է քաղաքը:

Սուսերամերկըք լինէին
Մեջ քաղաքին յարձակէին,
Եւ ժողովոցըն բազմութիւն
Մի ըզմիայ հեա կասէին.
Անդ առ-ջի ընթանային,
Մինչև ի դաւնրս դըղեկին:
Իսկ մարդագէտ չորս դադանին
Ըզաւրասուրըն քամէին,
Եւ որդէս գայլք ի հօս զառանց՝
Ի մէջ նոցունց անկանէին...

Կատարվում է սոսկալի արյունահեղ կոտորած: Ժողովուրդը գլխակո-

բույս դիմում է դեղի դղյակը (Ներքի բերդը, ինչպես կոչել են Անիում)։
դռները փակ են. իրար վրա են կուտակվում դռների մուս։ Մբառնմ լիկ
աեսարան է բացվում, որ և շատ աղեկորը նկարագրում է բանաստեղծը։
Մարդկային թշվառութունը շատ մեծ է։ Կարելի չէ տեսնել հուզվելու
կարգալ նրա մեծ արվեստով հյուսված այդ հատվածի տողերը (էջ 48 և
հան.)։ որ իրականութան անլիստորեն զծված շնչերի աղակերն է։ մի
իրականութուն, որ հաճախ է անդի ունեցել։ Դրանք նկարագիր լինելով
հանգրձ՝ և՛ ողբ են, և՛ ցավի ճիչեր։ Մի կողմում՝ անսեղ մարդիկ—կին,
ծեր, երեխա. հայր ու որդի, մայր ու դուստր։ զարհուրադին տաղանդի ու
խուճաղի են մատնված, հեղձածդձուկ են լինում իրար վրա զիզված, ախ-
պես որ

Որպէս ի գետ կամ ի ծովի,
Վերայ գըլիոցն յողային.

Մյուս կողմում՝ մի վայրագ պատկեր. այլազգիների բազմութունները
հանգրձա սրտով և՛ կոտորում են, և՛ գեղեցիկներին ի գերութուն ընտրում,
իսկ սղաճվածներին ու գերիններին կոչապաում, մերկացնում, Կաղուտ-կու-
ղաղում և՛ անհուսում, և՛ եկեղեցիներում։ Սեղանները կործանում են, խա-
չերն ու պատկերները օտնառակ ապխտ։

Իսկ ինչպես է տեսնում իր հաղթանակը ինքը Ջանդի ամիրան։ Նա
երգվում է չմտաւել զգնելի մարդկանց. սրանք անձնատուր են լինում. բայց
նա երգնաղանցությամբ կոտորում է նրանց։ Այդ ինքն իր մեծամեծներով
և Մահմեդի պաշտոնյաներով, այսինքն հոգևորականներով նստում է եկե-
ղեցիներին մեկի սեղանում, հարճեր է նստեցնում նույն տեղում և երգով
դինարբուք է անում։ Նստյա անասակ շվալաութունները կատարում են և
ուրիշ եկեղեցիներում։

Գործ գարշաթեան անդ զործէին,
Ջոր ուսուցեալ էր Մէհմէտին.
Ջոր և խոսիլն է աղտեղի,
Լըսելըն դորշ՝ սըրբասիրին.

Եկեղեցիներին մի քանիսն էլ, ասում է, գործնում են ուղտերի և
էշերի տուն. մի քանիսի մեջ էլ քնակվում իրենք, որոնք վառթաք, քան
զանրանին, եղբայրացնում է բանաստեղծը։ Գերիններ են միմյանց բաշխում
և գեղեցիկներին ընտրելով ուղտերկում Խորասան՝ մեծ սուլթանին, ինչպես
և խալիֆային։

6. Մտեմիդաղաթյան և քիստոմեաթյան կալի հիմնական պատ-
մուր, մեղք։ Նար հալաթք։ Սրիքալաթյան։—Արեստակես Կասաթկիաթին
գարմանում էր, որ սելյուկյան թուրքերը, տարիներ շարունակ հայերի հեռ
իբրև դրացի աղբելով, դարձյալ շարունակ չորութուն են խորհում հայերի
համար։ Շատ տարիներ հետո նորահասակ երիտասարդ Ներսես իր առա-
ջին աշխատության մեջ այսպես է ընդթաղրում այդ այլազգիներին.

Արեանարրուք գազանացեալ,
Ջադիր գործովք անասնացեալ...

Յուրն անողորմ անօրինի,
Որ մեր արեանս է ի սովի,
Որ չէ յագեալ, և ոչ յագի
Մինչև ի զալ կատարածի:

Մահմեդականների և քրիստոնյաների կռիվը, ուրեմն, անվերջ պիտի լինի: Դրա հիմնական պատճառը նրանց տարբեր կրոնական հասկացութեան մեջ է զանուակ Շնորհալին: Այս բացատրութիւնը շատ բնական էր այն դարերում: Բայց ինչպէս տուժողը պիտի քրիստոնյաները, հայերը լինեն: Այս հարցի նկատմամբ մեկնաբան Շնորհալին, ցավով, հին մեկնաբաններից դենը չի անցնում: Երբ նա Զանգի ամիրայի համար դրում է, թե «Պարէնը քննելի պայլա [=գալ] քրիստոնեայս» որ կային, ապա անմիջապէս ավելացնում է հետեւյալը (էջ 69) .

Ոչ գիտեալ զայս յիմարին,
'Ի ոչ ըզմըտաւ անել կուրին,
Թէ ոչ ուսով իւրոյ բաղկին,
Կամ զարութեամբ իւր պիղծ գընդին
Մասնեալ ի սուր 'ւ ի գեբութիւն
Եղև Ուսոյ յառնուլ նորին.
Այլ իմ մեղացքն քաղմութիւն,
Եւ յաճախել զործոց չարին.
Մտանեաց ի ձեռս անօրինին...

Եթե այսօրն յիշենք և սրտ ետեից անմիջապէս շարունակվեր 78-րդ էջի ութերորդ տողին՝ «Արդ մի պարծիր, ով անըզգամ», ապա այդ և՛ բնական, և՛ պիղծելի կլիներ: Բնական կլիներ, որովհետեւ թեպէտ այն դարերում կար մեծածնութեան ոգու, նոր մտավոր հոսանքի ազդեցութիւնը, բայց հինը գեռ բուրդովին չէր բացաւել և չէր զաղտել զոյութեան անհնաւուց, մանավանդ կրոնական աշխարհայացքի այնպիսի կարեւոր մասը, որպիսին էր՝ աղեաները համարել ստեղծածային արարիչ մեղքերի համար: Ուստի կարելի չէր, որ Շնորհալու նման մի խիստ բարեպաշտ և մեկնաբան եպիսկոպոս բովանդակութեամբ հորուստ մի ճերթված գրեր և այն զաղտաբար մեջ չբերեր: Բայց որ նա հետս երկար ու բարակ, ամբողջ 182 տողերի մեջ, Ս. Գրքից բաղամթիվ օրինակներ բերելով պաշտպանում է մեկնաբանների կարծիքը, այդ արդեն իր ստուգութեամբ և երկայնութեամբ փնտրում է երկի վայելչադուս գեղեցկութեանը. անբնական է թվում այդ լսելի մի ողբ-ցոյց կնոջից. այդպէս հորինում է ոչ թե բանաստեղծը, այլ մեկնաբանը:

Այդ կտորը, սակայն, մի ուրիշ տեսակետով կարևորութեան ունի. դրանով մենք տեսնում ենք հասարակութեան որոշ խափերի մեջ երևան եկած նոր հայացքը: Շտապարարութեան ընթացքից պարզ նկատվում է, որ այդ մեծ հաւաքածո հետո է ավելացրած: Դրան ասելիք ավուղն եղել է մի շատ հետաքրքիր նոր մտածումնալիք, այն, որ երկրայութեան ոգին արդեն գործելիս է եղել. խոհուն մարդիկ սկսած են եղել կասկածել մեկնաբանների

այդպիսի հին բացառութեան նշմարիւմ լինելու և աստուծու զոտաստանի իրավացի լինելու մասին.

Այլ զի ոմանք ընդգէմ բերին.

Եւ աստա՛նօր հակառակին.

Ասին՝ զիմրօ իրաւացին

Այս է վճիռ զաստաստանին:

Միթե բոլոր քրիստոնյաների մեջ նրանք են միայն մեղանչել, որ աստված նրանց է պատժել, — հարցնում էին մարդիկ.

Կամ թէ արդար արդեօք էին,

Որոց ի ձեռքս մատնէին,

Զանգի և իւրքն ամենեքն,

Որ ըզնոս ւարչարեցին:

Մեկնաբան բանասանդժը, հարկավ, պիտի հանգստացնէր այդպիսի հարցերով զբողոքներին, ասելով նրանց, թե աստված աստիկ պատժում է այնպիսիներին, որոնց ամենից ավելի է սիրում, և պատժում է, ինչպես և շախմատում վաճառում են, ոչ թե լավ մարդու, այլ սեռաբան վերջին մարդու և զսահման ձեռով. Զանգին և իրայիններն, ուրեմն, մի պատժող զորեք են միայն, ինչպիսին են նաև կարկուտը, խիստ եղյամբ, անչափ անձրևը, կամ անխոնավ երայտը, մարախն և դաշտերն անպակասող զգվելի մուկը, — մի հայացք և օրինակներ, որ գտնում ենք նաև մեր կլասիկ հեղինակների զրվածքների մեջ, ինչպես, օրինակ, նաև Մովսէս Խորենացու մեծ Ոգրի մեջ. Այդպիսի սղահիճները վերջն ավելի խիստ պիտի պատժվեն, — ասում է Շնորհալի:

7. ԱՅԻԾԲՈՅԵՐԻ շարանը: — Արվեստի նկատմամբ որքան անհրաժեշտ է հիշված երկար մեկնութեանը մեղքով, նույնքան պատշաճ և տեղին է շարունակութեան մեջ լսել որդեկորույս մոր բերանից թափվող սոսկալի սպանալիքն և անեծքն, ուղղված Զանգիին: Այդ մեծ հաւանքի սկզբի մասի մեջ, սր հյուսված է մեկնաբանների վերևում բերված օրինակներով, դեռ համեմատաբար հանգիստ է խոսում վշտահար տիկինը:

Հասարակութեան ներկայացուցիչ թշուառ կնոջ հոգին հետզհետե ավելի է լցվում աստեղծյամբ առաջն «արյունաբերները», և անանձնապես դեպի «Զանգին արիւնակներ», այնպես որ նա նույնիսկ եռում է կատողի վրեժխնդրութեամբ. եվ այդ ժամանակ խոսքի դյուստերն ու մեկը մյուսից ավելի չարազան պատկերները մեծ հորդութեամբ ու թափով հաջորդում են իրար, ասես թե նրա բունկած սրտի լրութեանը գուրք թափելու համար: Նրա սիրտը չի հովանում, մինչև որ Զանգին ձգում է թի հուրն անշնչ կիզողական, որ հավիտյան «այլ է իսպառ, բայց ոչ ծախէ: Այդ ժամանակ, ասում է նա,

Ուրախ լիցին արդարք ի տէր,

Մինչ հատուցման լինին դատեր.

Զի ի յարեան մեղաւորին

Հուսարցին ըզձեռս արդէս յաղբեր.
Եւ ասացէ ժարդ՝ արգարև
Գուցէ աստուած իբաւարբեր:

Այս վերջին առդերով խոսում է դարձյալ հեղինակը. նա անհարկում է վերևում հիշված երկրայօղներին, որոնք իրավացի չեն համարել աստուծու գաղափարները վճիռը:

Դժվար է այսանկ անեծքի մեծ հասկածից (էջ 78—91) ընտրությամբ առդեր մեջ բերել. բուռն և ուժեղ են դրանք զրեթի բոլորը, շատ ուղղու են և նույնիսկ ճնշող են շարաքաղձ աբաահայտությունների կոտորակությամբ:

. . . Աստուած իսպառ
Կործանեացէ՝ դեհ յաւիտեան.
Եւ խրիսցէ՝ դարձաւ ըս,
Յերկրէ հանցէ՝ կենդանակաւ.
Չարք մահնայն որք անիծան
Ի սկըզբանէ մինչ ի վախճան...
Վերագոյցեն ժոյղ գազութան...
Արդ՝ եղիցին դու հալածեալ,
Որպէս փոշի հողմով հոսեալ...
Եւ ճանապարհ քո խաւարեալ,
Թաղ և յահեակ զքեւ պաշարեալ...
Ի դուք խորին ապականեալ
Իջնա գու անդր կորուսեալ...
Սըրով արեւդ պակասեալ,
Լիցի ամենաց խոռ ցամաքեալ...
Ընդ քեզ և ազդդ կորուսեալ
Հագարացոց լիցի ջրնջեալ.
Ուղիք մեր որք, կանայք դերեալ,
Լիցին մուրողք և տառանեալ...
Ձիւն և ըզգոյս մեր վաւառեալ
Առցեն օտարք յափշտակեալ...
Ձեր յիշատակ յերկրէ բարձեալ...
Ի դառնութիւն դարձցին տարերք:
Ջըրեղեղին ելցեն գետերք.
Սեաւ ամպ մըթին կարկրաւորեր
Ջքեղ արասցէ՝ անպաղարեր:

Եվ այսպէս քաղմութիւյ անեծքների մեծ շարք, Այդ բոլորն ասվում է այն խոր համոզմունքով, թե խոսքի ուժը մեծ է, և անեծքն անպայման կազդի: Նախնական հավասքը, ըստ որի թողում էին թաթախելով և անիծում հարաբանելով, շատ մեծ է եղել մեր ժողովրդի մեջ, և հաճախ դրա արտահայտիչն է եղել մեր դրականությունը: Ըստ մեր հին «Վիպասանքի» Աբաահայտն անիծել է իր որդի Աբաավաղդին, նոր վեպով՝ Դավթը՝ Մհե-

բիւն, և այդ անեղծները, վեպերի տալով, կոտորվել են: Այդպիսի մի անեղծ է անուամբ Դավթակ Քերթոզն իր գրած դամբանականի մեջ: Դժբախտաբար այդ անեղծագործը բովանդակ էր և կոտորել նաև մեր ազգային պատմութեան նկատմամբ. իբր Մեծն Ներսեսի և ուրիշների անեղծները ծանրացել են մեր ժողովրդի գլխին: Շնորհալին ևս հովանուս է: Թե նրանց անեղծների հետևանքով առավանջ բարկացել է՝ բթռահալով զթագաւորութիւն և զիշխանութիւն [Հայոց] և յատենելով ի սուր և ի դուրութիւն [Իսլամ], և ցրուելով ըստ հրէական տոհմին ի տարկութիւն և ի ծառայութիւն ամենայն ազգաց: Թեպետ մեր բանաստեղծը հովանուս է անեղծի պարսկաւանդ, բայց չպիտի մոռանայ, որ այդ մեծ շարք անեղծները նրա իրեն կողմից չեն ստեղծու: Անշուշտ, նա համոզված էր, որ Ջանգին և մյուս շարագործներն առանց անեղծի էլ կողատմէին. նա կցանկաւ, որ ընդ որ մահմեդականները քրիստոնյա դասնան, կամ քրիստոնյաները հաթիւն, և նրանց զմարեն [— քեն] մինչ յայն կոյս անհնաւ: Բայց որ նա ճարտարակերտներին պատճառով ասեր Ջանգին իր կողմից նաև իսլամ քեն և ազգի կարուսեալ, հազարացւոյց. իբր ջընջեալ, և ուրիշ մի երկու նման տողերը, այդ ընդունելի չէ: Վերսուս սրդին քերթվածի երգողը չէր կարող չլինել ճշմարտն—մարգային և շարորդի ճշմարտութեան—մարգայնութեան, չլինել մարգասեր ու բարեգութի զեպի ամեն ոք, և անիմել անմեղներին: Բայց եթե այդպիսի մի երկու տող չեն հարմարվում մեր հեղինակի մեղմ աւ բարի հոգուն, զրանք զատ բնական են վշտաւար. որդեկորույս Որբեայրու համար, որի բերանով խոսում է և տառապան հասարակութեանը: Նա ոչ միայն Ջանգին պիտի անիմել, այլև նրա ազգ ու տակը և ասեր նրան՝ քո արժաւոր (քորը) կարվի: Շնորհալին այդ տողերն էլ առել տալով Որբեայրուն՝ ճշգրիտ հետևող է եղել իրականութեանը. այլապես թերի կլիներ իր տակնույն կերպարը:—Բայց մենք շարունակենք:

Բարկացտայ և ցատկաւանդի անեղծներից հետո բանաստեղծը հարեւում է մի գործի հակադրութեան, որ իր կողմից բաց անելով անիմելի սրտի քնքռալ խորշերը՝ պարզաբանում է նրա անեղծների հիմքը: Որդեկորույս մայրն առանձին զարմով ու զուրկութեանքով է վերաբերվում զեպի սպանված սիրտսուն դավանները. և Դերթողը դրա համար ևս գտնում է պատճառովոր ռն, ծաղկաւանդ, կոկ ու շնորհալի տողեր:

Բայց դիւք որդիք իմ սիրելիք
Ձէք ինձ մեռել, այլ կենդանիք.
Պանգի յերկրի հաւատացեալք,
Եւ ի յերկիրս պըսակիք:

Նվ նա, մայրը, խանդակաթ սիրով նկարագրում է իր դավաններին համար մի բերկրով տեսարան. նրանց հարութեանն ու երանութեան կայանն ամսմահան գրախոսում:

Յորժամ կենաց ցօղոյն արբջիք:

¹ Թուրք ընդհանրական, էլմիմի, 1885, էջ 465 և հա. «Անեղծներն» տեղում ասել:

Վաղվաղակի բուսանիջիք,
 Որոտ ընդոտ վերաբերիք...
 Որպէս ձագիկ բողբոջիցիք,
 Մազաթազիկ պաճուճիցիք,
 Մառն կենաց մերձեալ հըպիք...
 Այխառացեալ իբրև մըշակք,
 Ի առաջ օրթոյ աստ քըրանցիք,
 Յորժամ հընձէք զոր ցանեցիք,
 Յոնժամական դրախտին հանգչիք,
 Ընդ պաշար աընկոյն նըստիք,
 Յաղըբըն կենաց արըջիք...
 Անճառ լուսով լուսաւորիք,
 Եւ թագ ի գլուխ պըսակեսիք...

Նահատակվածների այդ «անճառ լուսով լուսավորվելը» պիտի լինի Թաքսիսիին միեկթաւութիւնը: Այդ էլ իրականութեան անդրադարձումն է—
 ամեն մահացածի համար մաղթել հոգու լուսավորումը,—մի շատ հին կրօնա-
 կան հավատալիք և բարօրի գիծ, որի գերապրակը հասել է մինչև մեր
 օրերը:

Յ. Քաղաքակոմ լավատեսութեամբ և լավ օրերի գեղեցիկ երազը: Աշ-
 խաբնիկ էյտմէի ծաղկմ մ և հաղթանակը քաղաքակոմութեամբ մեզ:—Քրիս-
 տոնյաների համար մի լավագոյն բախտ է պաշտօն երկրում: Նուսով ամեն
 ինչ կփութի, ասում է մեր Քերթազը որդեկորոյս կնոջ բերանով:

Ան սակաւ ինչ ժամանակ,
 Փոխէ զպըղտոր շուրն ի յըստակ.
 Եւ աայ ըմպել դառնաճաշակ
 Այնժ որ աբբոյց ինձ գըժընդակ,
 Զվերջին մըրոբըն կապուտակ
 Աբբոցանէ նըմին բաժակ,
 Իսկ ինձ պայծառ և քաղցրուտակ,
 Զանժահարուն ըմպել վիտակ,
 Ոչ թէ իմոյն միայն գիմակ,
 Զոր ինչ հատոյց ինձ ձախողակ,
 Այլ և եօթնիցըս չափ կըրկնակ
 Բարձցի ի ձոց իւր հակառակ,
 Իսկ ըզկապեալսդ որ էք ի փակ,
 Արձակեսցէ աէր ընդարձակ.
 Եւ զգերութիւնս իմ վտարակ
 Դարձուցանէ ախրէն ի յարկ.
 Մասնէ զգերիչս իմ ի յաղտակ,
 Սուր 'ւ ի դընգան ձեր փոխանակ:

Ծնորդային չափազանց լավտեսն է ապագայի համար. նա անշուշտ
 լսած է եղել երկրորդ խաչակրութեան համար նոր պատրաստութիւնը Եվ-

բողոքում։ Նա հույս մեծ ունեւր, որ պիտի դան շատ ջուտով, հաղթեն մահմե-
դականներին։ Այս հույսը նրան ոգևորութիւն է պատճառում. նա խնդա-
թյամբ ցնծում է և գեղեցիկ տողերով ու մեծ աշխատով նույնը հաղորդում
է իր ժամանակակից ընթերցողներին։

Շարժէ կըրկին դազդըն ֆրանկ,
Անհուն հեծեալ և հետեակ,
Իբր ըզձովու տընց կուտակ՝
Բորբոքելով դան խիտ և բարկ,
Ափան ծովու աւզն գունակ,
Կամ դերթ մտեղջ երկնից ի կարգ,
Լընուն գամէն երկրի յատակ,
Որպէս ըզձին տարաքտակ,
Հընչին գերթ հողմըն էիւսիսակ,
Չամպըն վարեն ըզհակտակ,
Մօքեն զոչխարհըս բովանդակ,
Թանհաւախց աւնեն դատարկ,
Չմահմեաւան ազգ հասարակ
Անունն յաւար և յասպտակ,
Գերեն զխորինըն խորաստն,
Չիւտէլ՝ աւնեն խիտ տեղակ...
ՉՄէջէ քակեն հիմն ի յատակ,
Չքարըն դորեն ըզսևարակ,
Չըզեն Կարմիր ծովուն յատակ,
Որպէս տախտ ընդ նապաստակ՝
Չհեռ մըտանեն նոցա երագ,
Կամ դերթ առիւծ զոչէ առակ,
Փախչին երէցն ահակաւակ,
Այսպէս ցընջին նոքա իսպառ
Ի սուր սուտեր՝ և ի աէդ նիզակ,
Եւ դայլն աւնեն փախըւտակունջ՝
Վարեն մինչ յայն կոյս անբընակ,
Անունն զժառայս և զազախնեայս,
Չկոնայս նոցա և ըզպաւակ,
Տիրեն ամէն երկրի ծագաց,
Եւ յընդհանուր կողմն աշխարհաց,
Թրիստունէից հանուր ազգաց
Փըրկիչ լինին յանօրինաց։

Ան թե ինչպեւ է մեր Բանաստեղծն անդրադարձրել խաչակրաց ար-
շավանքների իրականութիւնը, կարծելով թե նրանք զալիս են իրոք
արևելյան քրիստոնյաներին օգնելու և նրանց փրկելու մահմեդականների
ձեռից։ Բայց նրա լավատեսութիւնն այդքանով չի սահմանափակվում։

¹ Բարէլ, Բարէլսն են կոչում հաճախ Բազադ քաղաքը։

Հովհաննէս Սարկիսեան իր գրած աղոթքով, ինչպէս վերեւում տեսանք, խնդրում է աստուծուն, որ ցրված և արտասպանու տրտմությամբ վտարված ու ցրված ժողովուրդը ժողովվի ու բախուի թյամբ և վերկվի. նույնը Շնորհալին երևակայում է որդին շատ շուտով կատարելի, նույնիսկ ավելի շուտ քան մի տարի (ս.Ջի չէ ամով այս լինելոց), և այդ մասին բանաստեղծությամբ ավետում է.

Գուն ժողովին յամէն կողմանց,
Ուր հալածեալ են և ցրված...
Յայնժամ որդիքդ իմ հեռացած,
Որ այժմ յինէն էք բոժանած,
Գայք ի վերայ բարձեալ կառաց,
Պալարեկապ երիվարաց.
Որք ցրուեցայք յամէն կողմանց
Ձորեքտղեան տիեզերաց.
Ի դուռաց հեթանոսաց,
Նւ յաշտերաց Պարսից, Թուրքաց:

Պիտի գան ժողովին աշխարհի բոլոր կողմերից, և ինչ ուրախությամբ թյուն է արդեկորույս մօր համար. բայց այդքանը միայն չէ.

Լինի աշխարհ քրիստոնէից
Անշափ 'ւ անբաւ բարեօք լրցած:
Լինի առատ պրտուղ բազմաց,
Սերմանց 'ւ ամէն պրտադրերաց.
Մարդիկ ցընծան զուարճացած,
Յուսել յըմպելն պարբառած.
Որք վայ ասնն, վայ մեռելոց,
Նրուկ կորդան ցերեզմանաց,
Թէ է՞ր չհասիք յօրըս կենաց,
Յանգիւտ բարիս հասարակաց:

Ահա թե ինչ է տենելով երազում մեր բանաստեղծը, Հարկով, նա չի մոռանում եկեղեցու վերստին պայծառացումը, բայց էականն այդ չէ. նա մեծ կրոնասեր լինելով հանդերձ՝ չի ցարգում «Մի կու հակառակ չարին» սկզբունքը. այլ, ընդհակառակն, սիրում է քաջությունը, քաջամարտիկ կոիմն ալլաղդի թշնամիների դեմ՝ նրանցից պաշտպանվելու համար: Նա համոզված է, թե մահմեդականության և քրիստոնեության կովի մեջ պարտաթյունը մահմեդականներինը պիտի լինի: Եվ ինչ որ կտրեւոր է՝ քրիստոնյաները պիտի հաղթեն ոչ թե հին կրոնա-ճգնավորական ոգին զարգացնելու, աշխարհն ունայն համարելու և մերժելու համար, այլ ուրախ-զվարթ կյանք վարելու, լավ հոգնվելու, ուտել-խմելու և նույնիսկ պարարվելու: Շնորհայուս ստեղծագործությունն, ուրեմն, լի է կյանքի ծարավով, իբրև արաւայտություն և՛ իրեն հեղինակի, և՛ իր ժամանակի հասարակության քաղաքներ: Այսպիսով վերջ է տրվում նախնական խիստ կրոնա-ճգնավորական հայացքին մեր բանաստեղծության մեջ, միտքամանակ և սկիզբն է

զբվում մի քաղաքական գեղեցիկ հրազի—արևելյան քրիստոնյաների լավ օրեր և վերածնունդում եվրոպացիների օգնությամբ։ Բայց Շնորհալիս դեռ չուներ բուն հայրենիքի, մայր Հայաստանի անկախության, Հայոց թագավորությանը սեփական երկրում վերականգնելու երազը։ Նա պարձել է երգիչ իր շրջանի արևմտյան հայության սպասելիքների և ընդհանրապես այն ժամանակվա զրույթյան, որի մեջ ապրել է ինքը։ Միաժամանակ և նա դեռ 12-րդ դարում բանաստեղծել է խաչակրության մասին, այն՝ որ մեր շեղահատի ողբին հորինումից չորս հարյուր տարի հետո մեկտեղ իստալացի բանաստեղծ Տորկվատո Տասսոն պիտի երգեր իր Ալլաամվա Նրուսագեմա հրաշակավոր վիպական քերթվածի մեջ։ Արդարև մեր բանաստեղծի երկի նյութը խաչակրության շրջանի մի միջադեպ է միայն, գրիստոնյաների համար մի դժբախտ եղելության։ Բայց նա ոչ պակաս ուսով նկարագրել է սաղմուկան իրականության այդ փառավոր կյանքն ևս։

Եվ այսպես՝ Ներսես Շնորհալու մեծով հմուտեն կիրառվել է նրա ավագ ժամանակներից Հովհաննես Սարկավագ Վարդապետի առաջնությունը, թե բանաստեղծությունը հետևում է բնությանը, որ է՝ իրականությունը։ Դժվար է կարծել, թե նա ծանոթ չլիներ Սարկավագի աշխատություններին, դեռ այն շրջանում արևելյան և արևմտյան վարդապետները, թեև քաղաքականապես բաժանված, բայց միմյանցից կարված չէին։ Արևելքից միշտ երթևեկել են Հայոց կաթողիկոսաբանը, որի նշանավոր եպիսկոպոսն էր Ներսեսը։ Բայց եթե սա տեղյակ էլ չլիներ Սարկավագի առաջնությանը, կարող էր նրանից անկախ ևս արատհայտի լինել նույն հայացքին. ժամանակի ողու պահանջն էր այն։ Նա անդրադարձել է աշխարհիկ իրականությանը, հարկավ, ոչ բոլոր կողմերով։ Այլ այն միայն, ինչ որ չէր կարող պարսավել շեղահատ բերաններից, քանի որ այն դարում շատ բան դեռ անպաշտճ էր համարվում մի հոգևորականի համար։ Բայց ինչ սր ևս երգել է վեհ ներշնչմամբ ու ոգևորությամբ, դա մաքուր իրականությունն է առանց գերբնական ուժերի և էսկների մասնակցության, որին հավատում էին այն դարի մարդիկ, որով և լի է խաչակրության քերթող իտալացի բանաստեղծի նշանավոր երկը։ Որ մեր բանաստեղծը հեռու է այդպիսի վիպական հրաշալիքներից, դեռ մեջ հենց պեսք է անանել նոր մտավոր հոսանքի հաղթանակը։ Մեր բանաստեղծությունը 12-րդ դարի կեսին արդեն երկընթից իջել էր երկիր և դարձել կյանքի և բնության գեղեցիկ արտացոլում ոչ միայն իր ընդհանուր էությունով, այլև բովանդակության մանրամասններով, ինչպես և բնական ու պարզ մեծով, շնորհավ Պերթոլի փափուկ, տըրտմական կամ լուրջ հույզով և անուշ, սրտաշարժ շեղանկով, որոնց ստեղծողը բնավ չէր գիտում արվեստական պերճության ու փայլի, ավելորդ դրդաբանների։ Ամեն ինչ թեթև ու ճաշակավոր, անբանազուս ու կենդանի։

ԱՐՁԱԿ ԳՐԱԴԱՐԱՆՈՐԸ

1. Ատեհմարմուրյում։— Շնորհալին իր գրական երկերը հորինել է ռառնավորով. արձակ լեզվով գրել է միայն պաշտոնի վերաբերյալ գործերը։ Բայց վերջիններս էլ իրենց առաջին մեջ որոշ չափով գրական, ավելի

ևս պատճառներն որոշեց ունենալ Դրանցից ժամանակով առաջինն է Բաղնիս-
 քանութիւնը, որ նա տեսել է իր կաթողիկոս ձեռնադրելու առթիվ բազ-
 մաթիւնի տոհմի՝ Անուէի է իր նախորդի, իր կաթողիկոս Եղբոր, Գրիգոր
 Պապիւնի զօրքով՝ թշնամի չարաբար, նմանացնելով և ամ-
 բարանելով իրեն: Գիտակցելով իր նոր վեհ պաշտոնի ծանր պարտաւե-
 խութիւնը՝ զարդանակ համեստութեամբ շնչառւած է իր անարժանութեանը:
 Նկատի ունի նաև ժամանակի ծանր դրութիւնը: Բաղնիսի Եղբոր
 նախնիքն ալ յիշա տկարութիւն և ի մեծի աշխատանքի բարձրութիւն և
 ծանրութիւն, մանաւանդ ի շար և յանձնաւ բարեաց ժամանակիս, որք ոչ
 միայն յարապակիցն որք հակառակ են հաւատոյս՝ նեղեալ տապալակիմ
 ըստ մարմնոյ, և ազաւտիւն կարգ եկեղեցւոյ, այլ և առաւել քրիստոնէից-
 նաև յորոց կցորդ են կարգի մերոյ և մերոյ, որք յաղագս փառաւոյ աթոռի
 հակառակ զանալց աստուծոյ և աստուածայնոյ աթոռոյս ի սկզբանէ հայ-
 րապետութեան տեսան մերոյ մինչև ցոյցմ՝ որպէս ծանօթ է մեկնեցուն,
 և զազատեալս ի Գրիգորիէ զեկեղեցի սուրբ ընդ հարկաւ արարին նորոքի-
 նաց՝ կամաւ և հի ի հարկէն (էջ 421): Դժգոյնութիւններից մեծն այն է, որ
 հայ ժողովուրդը, ասուէի է նա, շուտ ի միտմ աշխարհի ընտանիք՝ որպէս
 այլոց ազգաց, զի գիւրդին էր շրջիլ առ նոսա առաջնորդացն և սերմանել
 զբանն, այլ բոլոր մեղաց մերոց ցրուած են ազգ մեր և ժողովուրդը ընդ
 այդոս տիեզերաց ի մէջ օտարապետ ազգաց: Նաև աթոռս սուրբ զբաւեալ
 է ի հաստատութենէ ի զանազան և յանպաշտմ վայրս օտարների ընդ հար-
 կաւ և երկիրդիւ աշխատեցի և անգնական և աննուէր ի մերասեռաց,
 որում ոչ է կար համարեալ շրջիլ և ուսուցանել, այլ թագնաբար լինել
 որպէս զփառապետսն (էջ 422): Վերջապանի մեջ նա մի ցանկութեան
 օժիտ, որ աստուած հանի փրկել զմեզ... և զքրոնցունի զամենեւեմ յաշ-
 խալսն հայրեմի... յարուցանի թողուտը արգտը: Ահա նրա ազգութիւն ու
 փառքը:

Ով սիրում է ճանաչել ֆրանկներ, այնպիսուն հանելի չի լինիլ այս առե-
 նաքանութիւնը, որ վսեմ է իր պարզութեամբ, ազգու է ոչ թե արաքիս
 ձեռով: Այլ ջերմ ներքինով, որ բխում է ջերմ սրտից: Մեկ մեկ բանեցում
 է երկար ասացվածներ, բայց ընդհանրապես շատ հասարակ, իսկապես մե-
 կին ռոմով մի հորինվածք է դա, առանց որևէ ճարտասանական ճոռով զար-
 դարանքների, կերտում է հարցումներ և շրջումներ միայն և սակավաթիվ
 պատկերավոր ձևեր: Բայց զրոնց փախանակ՝ նրա ճառն ուժեղ է արտա-
 քանութեամբ, մասնութիւն կապակցված ու կորզովորաւ ընթացով, որ
 այսպիսի խոսքերի համար անհրաժեշտ պայման է:

2. Բաղնիսի ընդհանրեցումը:—Գրա-պատմական և բանաստեղծի կեն-
 ասարդութեան կողմից ավելի արժեք ունի Շնորհաւուր այս թուղթը, որ սկզ-
 րկած է բոլոր հայերիս՝ Սկզբում հայտնում է իր կաթողիկոս ընտրվելն և

1 Թուղթ ընդհանրական ներսիս Շնորհաւուր, էջ 411—420:
 2 Ահա, էջ 1—123. Թուղթ ընդհանրական ներսիս կաթողիկոսի Հայոց առ համոզելն
 հայաստան աշխարհ: Ընդհանրաւ հաստատեցից հայկականաց զհեղից, որք յարեալս ի սեփ-
 ական աշխարհ Հայաստանայոյ բնակեալց, և որք յարեալսն ի կողմանց աստուծոյ Եղբ-
 րութեամբ, և որք ի մէջն Երեմիայ՝ ի մէջ աշխարհու ազգաց առաքելութեամբ, և որք յիւր-

կաթողիկոս եղբոր մահը. «Ինքն... Եհաս անօրինա յանձնոյթ և յառանց
ալեաց նառահանդիստն, և զմեզ եթող ի տաժանելի և յաղցաւոր կեանս ի
մէջ օձից և կորճաց և դանազան խաժանոց գողանաց, երեւելաց և անե-
րևութից, և ոչ այս ժոյշն, այլ ծանրութեան քնաւանց ի ներքոյ՝ հոգեո-
րաց և մարմնաւորաց»:

«Օձ, կարիճ ու գազանս կոչուած է նա Հոռմկլան շրջապատող աշ-
յազգի բոնակահանքիւն: Ուրիշ տեղ էլ՝ Նուշադես գրում է, թե կաթողիկոսը
մեռնելով իրեն թողել է զի ծովու աշխարհի և շուրջ եղբւրց օձից և կոր-
ճաց և վերջում հիշում է իր նեղութիւնը, ասելով, թե եկ... երբ կապտ-
մեն ձեզ եզմարմաւոր կրից մեր տաժանումն՝ զոր ունիմք ի շուրջ եղբւրցս
զմեռք: Հայտնելով, թե ինչ է իր պարտականութիւնը՝ խորապես ցավում
է, որ շրջիկ առ ամենահաւան՝ ընդ ամենայն կողմանս աշխարհի, և քարո-
զել... անկարելի է յաղագս ժամանակիս չարութեան և բազմիշխանութեան:
Եւ քաղաք թագաւորական և բազմաժողով ոչ զոյ ազգի մերում, որպէս զի
անդանոր նստելով յԱթոռ հայրապետութեան և վարդապետութեան՝ ուսու-
ցանէաք ժողովրդեան մերոյ: Շատ զժպար է եղել կաթողիկոսաւորանի,
ինչպես մեր բանաստեղծի՝ Նյութական կացութիւնը ձերութեան օրերում:
«Այլ եմք իբրև պայծառ յարստրդաց և ի շանց փախուցեալք ի քարան-
ձաւիս յայս բնակելով, — գրում է նա, — յորում ոչ և մարմնական հարկաւոր
պիտոյիւք շատացեալք ի գիւղից կամ յազարակաց, յորոց ունիմք և ոչ մի:
Նաև ոչ անդատաւն հողոյ, զի վասնակօք և աշխատութեամբ զոգէստ մեր
լնուաք, և ոչ ոգնութիւն ուստեք, որպէս արժան էր, ի թագաւորաց և յիշ-
խանաց: Զկարգաւորելով անձամբ «խրատել և ուսուցանել, ասում է նա,
բմեք իբրև ի կամաւոր բանաւ և կապանաց՝ յայս ամբողջութեան քարանձաւի
արդեւեալք՝ զրով ձեռքն մերոյ խօսիմք՝ որպէս բերանով՝ ընդ ամենահին»:

Նրա այս գրութիւնը շատ հարուստ ու բազմաբովանդակ է: Խրատ-
ների մի մասն, իհարկեւ, սովորական ընդհանուր տեղիք են, բայց շատը
շոշափելով ժամանակակից իրական կայանքի այլ և այլ կողմերը՝ տալիս են
մեզ բարձր ընդարձակ պատկեր: Սկզբում գրում է դավանաբանական
խնդիրներ և կրոնական գիտելիքների մասին, որոնք, որովհետեւ Շնոր-
հալու գրից են ելել՝ ազագու զարերի համար ևս արժեքավոր են եղել:
Ապա խոսքն ուղղում է ժողովրդի դանազան դասերին՝ կրօնավոր, վանա-
հայր, առաջնորդ, քահանա, իշխան, զինվոր, քաղաքացի, երկրագործ և
ամենից վերջը՝ կանայք: Այս ամեն ինք կարգի մարդկանց տալիս է իրենց
վիճակին համապատասխան խրատներ: Կանանց, օրինակ, պատվիրում է
պարկեշտութեամբ և բարեկամութեամբ լինել յամենայն: և առաւել քան
ոսկւով և արծաթով՝ ամօթխածութեամբ և պատկառանք գործարել զան-
ձինս: Անմիտ երթտասարդներին գոյթակցեցնելու համար ներկերով չա-
յազունել իրենց երեսի գույնը. կովատութեամբ չպարապել, հետևող չլինել

գանելու, յեղբու աշխարհաց ըստ մեղաց մեքց ցրուելք ի քաղաք՝ և ի գլուխ, ի գլուխ
և յազարակոյ:

Սեպ. էջ 148—162. «Պատմութեան ամենին քաղքոյն քաղաքին հասմոց Մա-
նակի»:

կախարդութիւնն և դեղատոմարութիւնն աղանդներին։ Այս մասին հիշում է նա իր նամակներից մեկի՝ մեջ ևս, «նշաններն պատուէր տուց.— զորում է նա թորոս քորապիսկոպոսին,— ի կախարդութենէ և ի դեղատուութենէ և յամենայն գրեական աղանդաւորութենէ ի բաց կալել։ Արժանի չնամարել քրիստոնեական թաղման ճնոյնպէս և որ զդիպի և զազապի իրս ի կերակուրս և յըմպելիս խառնեալ՝ տայ ուսել քրիստոնէի վասն դիւական սիրոյն [= սիրաբարեցնելու համար] . . . զգուշացուցէ՛ք զնոսա յամենայն ի յայսպիսի բժժագործութենէն։

Ներկազորներին ու բոլոր ժողովրդականներին խրատում է՝ չապահանգել ազգայից պոռնկութեամբ և շնաթեամբ, չհարել զինով, պորում՝ զեղխութիւն և յիմարութիւն է, որ է մայր պոռնկութեան և անիրաւութեան և վիճման և ազանդի բանից անարգանաց, յորմէ և սպանութիւնք լինին։ «Դարձեալ.—ասում է,—մի զլեզու ձեր թունէք զորմի ստատանայի ի ձեռն շար և դառն յիշոցաց, մանաւանդ որ զհաւատ և զհոգիս անարգեն, և զմկրտութիւն ուսապանին և զմկրտիչ քանանայն և զերես և զքերան։ Ապա դարձալ՝ պատվիրում է կրթել ժանուկներին և ուսում առնրանց, «Ստատեցէ՛ք շտովորեալ ի խօսա ապանդիս և ի յիշոցատուութիւնդ, Այսպես խրատում է ըստ պատշաճին նաև քաղաքացիներին, զինվորներին, իշխաններին։

Հոգևորականների բարոյական և ուսումնական վիճակն անպայման ավելի ծանոթ է եղել Շնորհալուին, և նա երկար ուսուցանում ու խրատում է նրանց. իսկ մենք նրա «Ընդհանրականով» բաժնական ծանոթանում ենք նրանց, ըստ եկեղեցական հայացքի, ընկած բարձրերին։ Տեսնենք այդ մի փառք ժանրամասն, քանի որ նրանց այդ դրութիւնը կարևոր է գրականութիւնն ապամոթիւն համար։ Գրոնտովորների կյանքի մեջ արգեն մեծ փոփոխութիւն էր կատարվել. այլևս չկար Ստեփանոս Տարանեցու նկարագրած անընչասեր և անստացված աշխարհւորացութիւնը։ Ընդհակառակն, նրանք առհասարակ արգեն բունել էին, այսպես ասած, տշխտիտկամացման և տշխտեօրիքութիւն ուղիւն։ Վաճառ, անապատ քաղվելով հանդերձ՝ կրօնավորները չէին կտրվում երկրավոր ցանկութիւններից և միշտ ետ էին նայում գեղի աշխարհը։ Հետաքրքիր է այն, որ կրօնավորութիւնն արգեն դարձած է եղել հարստացման միջոց։ «Բազումք են ի ժամանակիս կրօնաւորաց, որ յաշխարհի առանց ժառանգութեան էին, և հարկատուք իշխանաց, և ազքառք ի գոյից, և կարօք հարկաւորացն. և յորժամ զձե կրօնաւորութեան ընկալան՝ տեղք եղեն ի վանքայս բազում ժառանգութեան, և փարթամացան ստացուածովք. և ոչ միայն հարկաւոր պիտոյիցն եղեն տնկարօւ, այլև տւելորդօքն լցան, և յաշխարհի հագովք և երկօք տաժանեալք, և աստ անհոգորութեամբ և հեշտութեամբ ստուարացեալք։

Այսպես հարստանում էին նրանք, որովհետև վաճաքում աղբերով փոխում էր հասարակաց աշխատանքին մասնակցելու՝ իրենց առանձին սեփական տնտեսութիւններն ունենին և դրանցով էին պարտաւոր՝ «ի յիր-

¹ Անգ, էջ 215. «Թուղթ ի Սոմաթիա քաղաք յապագա աբեղեաց զարձի, էջ 208 և հաճ։

և առնց առանձնական դարձաւ արի և արթուն լինելով, և ի հասարակացն՝
 հեղգ և պղերզա: Վզուշացուցանեմք,—գրում է Շնորհալին,—զմշտաբա-
 զանիցդ երամս՝ յագագս նոր եղելոյ սովորութեանդ ի վանորայս ի մերում
 մամանակի, այգեզորք իւր-քանչիւր ոք լինելով ի կրօնաւարաց, որպէս ի
 քեզոյս, որ անվայելուչ է կրօնաւարական կարգին: Մեր կրօնավորներն,—
 ասում է նա,—իւրօր նախանձում են, Եթէ ի՞նչ քան զընկերս յընդարձակա-
 ցոյն տեղում ի ի պարտաւ երկրի անկիցէ այգի, և թէ՛ դիմորդ անուցանիցէ
 իմաստութեամբ զսարազոյն առնկան: Եւ փոխանակ զարուեստաւ տաքե-
 նութեան ուսանելոյ ի միմեանց՝ յայգեզորքութեան հնարս վարժին ան-
 հմուտք ի հմտագունիցն: Արժան է, ասեն, այսպիսի օրինակաւ վաստակել
 ևզամբք, և բրել ձեռամբ՝ փայտաօք և բահիւք, և հակառակ անկողն զար-
 քատաւ և զոյսս արժատաքի խել . . . Այլ և հաստանելոյն օրինակ զանա-
 քանեալ է՝ իւրաքանչիւր անկայն սեռից առ իմաստունսն յայնոսիկ, զի
 զոմանս հուպ յարմատսն, և զայսն ի բացեալ հաստենն. յոմանս սակաւ
 զուռն, և ի կէսս յուզմագոյնս թողուն, և այս ամենայն՝ որպէս զի յառա-
 խագոյնս զտղարբերեսցեն, և յուզմա զգինւոյն չափոյ անցուցանել զթիւս:
 Թողից ասել զպատուասելոյն հնարս, մի քան զմի առաւելեալ ի հանճար,
 և զգործելոյն եռանդն ջերմութեան, զի ոչ զտիւն ոմանք բաւական համա-
 րին մամանակ զօրծելոյ, այլ և զգիշերն ևս խառնեն ընդ առնջեանն: Այսպէս
 մի ամբողջ արժեատ և ուսում ազգեզորքութիւնս, որով պարտաւել
 են կրօնավորները: Շատ բնական է, որ այգիսիններ իւր ու միտքն իրենց
 անփական զօրծին է եղել: Երբ այլ և այլ տեղերից իրար հանդիպում են
 այգեաւոր կրօնավորները,—ասում է նա,—նրանք իւրօր ողջունելուց հետո՝
 ոչ թե կրօնավորական զօրծի մասին են հարցնում միմյանց, «այլ թէ յայսմ
 ամի, ի՞նչ ևզորայր, զիմորդ է պողարներութիւն քոյին անկողն: Բաւե՛լ է՝
 թէ նուազ, Եւ նա թախտեալ սրտիւ պատասխանէ՝ զինչ ասացիք, ասէ,
 զաղէասն որ պատահեցան. զի ոմանք ի ճնեաց զնոսեցան, և յոմանց եռ-
 ղիկքն թոթափեցան, և այլքն արեակէզ եղեալ ողկուզաց չորացան, և կէսք՝
 նեխութեամբ ապականեցան, և թէ զի՞նչ արարից՝ անգիտանամ զելս վասն-
 գիս եղելոյ:—Եւ ընկերն թելագիր եղեալ նմին՝ խորատ առայ, զոմանս պա-
 տուասել ի անկոցն՝ որք պողարորոյս լինին, և զայսն՝ զանազան փոր-
 ձեալ հնարիւք բաշկել ի պատահելոց կրիցն (էջ 28 և հտն.):

Այս բոլոր աշխատանքն անում էին կրօնավորները, որպեսզի շատ
 զինի ստանան և ազահութեամբ և որկորասութեամբ աղբն, և ոչ թե,
 ըստ կանոնի, բովոկանաւորն Եփրատեան կերակրով և հանդերձով:
 Նրանք նուայնիւք արեցուցութիւն էին անում: Դիմին վաճառելով էլ էին
 պարտաւում և արծաթ ամբարում, կամ թե կրօնավորին անվայել շուշի և
 մեղկ կյանքն էին վարում: Այգիսինները թողնելով ընկերակից կրօնա-
 վորներին կենակցութիւնը՝ առանձին էին բնակվում, Եւ յայտագր ևզնա-
 րական վարուց՝ որպէս միայնակեացք, այլ փոքն ազահութեան խաւի, զի
 զանձին իւրոյ աշխատութիւն ոչ հասարակաց եկեղեցւոյն, այլ իւր միայ-
 նոյ ամբարիցէ... Ձի առ բողոմս,—ավելացնում է Շնորհալին,—քան զեր-
 կիւզն աստուծոյ առաւել զօրէ ընկերակցացն ամբօրն երկիւղ, յառա դար-
 ձուցանելով զյօժարութիւն մտացն ի չոր ցանկութեանց մեղացն կատար-

մանէն: Դրանք, այդ թաքուն մեղք դորժողները, դեռ հասկանալաբար լա-
վերն են եղել: Ե՛րբ ոմանք դարձեալ յայլաբարանէր և ի մեղկ կրօնաւա-
րաց, — շարունակում է Շնորհալին, — դի . . . անձամբ իսկ ընդ աշխարհ-
կանս բնակէն ի գէւթս և ի քաղաքս և ի բանից բերանոյ դարշութիւնս և
ի գարս վառթարութեան, և յարովայնամայութիւնս անդամակառս և յար-
բեցութիւնս անսառկս, և յամենայն անկարգութեանց բերմանս՝ առաւե-
լուն քան զնոսան (էջ 26): «Դժվական երգերն էլ ոչակաս չեն եղել այդ-
պիսի կրօնավորներէ բերանից:

«Եւ քանզի ի ներթականաց ցանկութիւն զբաղումս ի կրօնաւարաց
ժամանակիս տեսնեմք ըմբռնելու, որք զթեթեանալն յայտպիսի ծանրու-
թեան հոգոց՝ գոռաբերնս վարկանիւն, ուստի, ասում է Շնորհալին, ևս մեք
սչ զնեմք օրէնս՝ այսպիսի կրօնաւարաց ամենեկին ի բաց կալ ի անկարգ-
եութենէ և յամենայն պոյից սառնալոյս: Նա լավ գիտե, որ այնպիսիներ
իրեն չեն լսելու. ուստի պատկերում է, որ նրանք զոնե իրենց եկամուտ-
ներից մաս հանեն աղքատների ու կարօտների համար, այն էլ իրենց ձե-
ռով և սչ թե մահից հետո ուրիշներէ միջոցով:

Կրօնավորների որբիշ պակասութիւններն էլ թվում է կաթողիկոսը:
Ինչպես, օրինակ, չնչին պատճառով նրանք թողնում են իրենց եղբայրա-
կիցներին ու շրջում են վանքից վանք: Հենց որ նրանց մի նկատողութիւն
են ասում իրենց անդառնալ գործերի կամ խոսքերի համար՝ գիշերը թող-
նում, փախչում են: Գողութիւն են տեսնում, քայլ և քառութիւն վասն գողու-
թեանն. ոչ լոկ բանիւ, այլ և մեծամեծ երգամար ուրացութիւն, և նման-
ները: Եվ սակավ չեն եղել սառնակները. «Յոգզի մերոյ կրօնաւարաց զլա-
ղումս տեսնեմք անբաժանալս և անխրատս և անհնազանդս աւագագունից,
և զբեթէ զրովանդակն բաց ի սակաւուց» (էջ 30):

Թաղում ենք վառաշրերի և աշխարհի եպիսկոպոս առաջնորդներ
համար զբվածները: Բերենք մի քանի բան քահանաների վերաբերյալ:
Կան քահանաներ, — ասում է, — որքնք, ինչպիս լսում ենք, «յառաւուսէ մինչե
ցժամ պատարագին ի վաճառափողոցս քաղաքին շրջին ի ասարևառութիւն
վաճառաց: Կամ հասարակաց զգեստներով և աղանդի տրեխներով ելնում
են բեմ և պատարագ անում. եկեղեցիներին պայծառութիւնս և ընդհանրա-
պես մաքրութիւնս հոգ չեն տանում, վարում են զանազան աշխարհիկ պաշ-
տոններ, և այլն: «Լսեմք զոմանց քահանայից ձեռնադրս լինել և զէնս աս-
նուլ ըստ զնուստաց, և ի խրախնանութիւնս խաղուց ձեռնադրից ընդ նո-
սին արշաւել երկվորաց և ի յորս երէցս և ի նհտաձգութիւնս և յամենայն
ինչ յայսպիսիս» (էջ 30): Վերականգնող առաջնորդ եպիսկոպոսներին էլ
պատվիրում է՝ «Ո՛ր սրբնթաց ձեռնվք շահասակել, և շամբք և բազէիւք որ-
սակաւնոց բերիլ աս երէվարիս և թռչունս, որպէս լսեմք զոմանց թէ իցենա՛ր
Դրանք եպիսկոպոս լինելով հանդերձ՝ չեն տարբերվել աշխարհական տերե-
րից, և նրանց «բանք բերանոյն» եղել են «անմատուր խեղկատակու-
թեամբ կամ աշխարհորէն դառականս կամ զանկաթութիւնս ի լեզուն յեղ-
յեղով անարգել զօք» (էջ 57):

Այսպես՝ ներսես Շնորհալու «Ընդհանրական թղթից» իմաստով ենք,
որ հոգևորական զասի հասկացութիւններն ու կենցաղի մեջ արդեն մեծ

փոփոխություն էր մտել: 12-րդ դարի կեսերին կրօնափոխությունն տնգամ
և էր դարձած: Այս փոփոխությունը կաթողիկոսը բացատրում է ժամանա-
կի թվադասությամբ, աղքատությամբ, չյաջազս ձմեռն զալով ի բարեաց՝ ժա-
մանակիս, որ նա յեղատում է հաճախ (էջ 48, 50, 52, 65): Նաև ուրիշ
թղթերի մեջ (օրինակ՝ էջ 309. «Եւ նաւագեալ բարեաց ժամանակս մեր»),
Այդպէս չէր առնել, ասում է նա. Հայաստանյայց եկեղեցիները պայծառ
էին սկզբից մինչև յաւերումն յաւարհի ի հիմնոց, Որ հին բարի ավան-
դություններին հակառակում են, զրո պատահուն ուրիշ բան չէ, գտն թէ
աղքատութիւն և ինքնօրէն անձնաւանդ կամապաշտութիւն՝ որը ոչ անսին
դառնին պայծառութիւնս, մինչ ողորմութեամբ անաւն լի էր երկիր, այլ
ի հալածանացս ծնեալ ժամանակի ընդ խրթնատեսակս նայեցան աղքատու-
թիւն, որովք կապեալ են յամենայն ուրեք ազգ մեր յաղքատութեան, որ-
պէս ընդ երկաթոյ ի ներքոյ լծոյ ծառայութեան իւրաքանչիւր ազգաց՝ ուր
և իցեն. ոյք և հորկաւոր պիտոյիցն կտրուտ են ըստ մարմնոյ, թող թէ
պայծառութեան եկեղեցւոյ ի խնդիրն (էջ 71): Շնորհալու հիմնավորումը
հիշտ է մասամբ, ինչ որ եկեղեցիներին բարեգործությանն է վերաբերում:
Թե չէ՝ կրօնական սղու թուլացումը, որ սկսված էր արդեն 11-րդ դարից,
քնակուն դարգացման հետեւանքով անաղատությամբ շարունակվել է մինչև
12-րդ դարի կեսերը և հետո մինչև 17-րդ դարը, ազդելով նաև մեր գրա-
կանության դարգացման ընթացքի վրա:

Ներսէս կաթողիկոսի այս մեծ գրությունը որքան իր բովանդակու-
թյամբ շատ կտրեւոր պատմական փաստաթուղթ է, նույնքան և արժեքավոր
մի գրական երկ է: Իբրև բանաստեղծի գործ՝ դա քնականաբար հորինված
է գեղեցիկ ձևով, հեղինակին հառուկ հոճելի ոճով: Մարդ այդ կտրուկով
և բրեւեռ հրապարակում է նրա կարգավորչաւ ու թեթև, միաժամանակ
և հաճախ պատկերավոր մտածությամբ: Նա միտքն արտահայտում է սովորա-
բար կտրեւ ասացվածներով, հասակ ու սրտալի խոսքերով, խուսափելով բա-
ռերի և քերականական ձևերի կրկնությունից: Զի մոռանում իր աստիճա-
նին պատշաճ խրատական եղանակը. զրուցում է մեղմ, հանդարտ ու ծանր.
ոչ հրամայողաբար, ոչ ինքնագով մեծամտությամբ, այլ համեստաբար,
իրեն էլ ոչ արդար համարելով: Ոչ մի շինծու խոսք չկա. հաճախ խոսում
է մեկնաբան Շնորհալին: Գործածած նմանությունները մեծ մասամբ ոչ թե
բանաստեղծական պաճուճանքի համար են, այլ միտքն օրինակներով հեշտ
հասկանալի և համադիր դարձնելու: Բայց դրանք միաժամանակ և առանձին
համ ու հոտ են ընծայում նրա խոսքին: Այսպիսի դեպքերում երբեմն,
ինչպէս ներքևում բերված հատվածների մեջ, ասացվածները բավական
ընդարձակվում են միջանկյալ խոսքերով, բայց մեծ մասամբ չեն կորցնում
իրենց հեշտ հասկանալիությունը, որովհետև հեղինակը չի մոռանում խոս-
քերի կապակցությունն ու մտածության թելը: Շատ բան, անշուշտ,
Ս. Գրքի և ուրիշ կրօնական գրվածքների իրողութեամբ և օրինակներով է հաճե-
մած, ինչ որ անհրաժեշտ էր ըստ ժամանակի պահանջի: Բայց պակաս չեն
և իր սեփական գլուխերը, բնություններ, և կենդանի իրական կյանքից
առած, միշտ շմուռնալով, որ ինքը գրում է ոչ միայն խրատելու, այլև
ուսուցանելու համար: Խոսելով, օրինակ, գրավոր աղոթքների ծագման մա-

սին՝ գրում է: «Յոռաշտգոյն ի ժամանակս... Դէնչդեռ նոր ծողկեաց դա-
րունն հաւատոյն, ամենքը յայնքեանց մտաց խօսէին զբանս աշօթից՝ ըստ
ժամուն պիտոյից... Իսկ ի ժամանակս յետինս՝ քանզի հանգերձեալ էր
ձմեռն մեղացն սառնամանեօց խստութեան ցրաւ ցուցանել զբարբառն առ
առաւելս սիրոյն, զբո համար և հոգեկէր վարդապետներն իրենց աղօթե-
ները գրելով թողել են հետնորդներին: Բայց Բնչպես են ասում քահա-
նաներն այդ հոգեբուսի աղօթքները: Դիմելով նրանց՝ պատմիրում է. «Մէ
իբր ջուր ընդ խողովակ անցանիցէք անժտաբար ընդ խորհրդական բանս
աղօթիրն...» (էջ 68):

Շնորհալիս ճանաչելով իբ ժամանակի հոգեորականներին, գիտե, որ
շատերին լեւորմելի չեն լինիլ իբ առանձնը կամ յաղագս ծուլութեան
և մեղսասիրութեան, կամ վասն արհամարհելոյ զմեօք: Այդպիսիներին
էլ, ասում է նա, «Մեք զոր հրամայեալն է մեզ՝ արասցուք, զաղակելով
որպէս զէտ ի բարձր դիտանոցը զպատուիրանս առաւելոյ ի լսելիս ձերս:
Եվ իսկույն ավելացնում է համեստաբար. «Բայց մի ոք կարծիցէ զմէնց,
թէ իբրեւ առողջս զմեզ համարելով յախտից մեղաց՝ ձեզ միայն զբժշկականս
զոյս յառուցանեմք զեզ՝ որպէս հիւանդացելոց: Այլ ծանիցէ ամենայն ոք,
դի մեք առւել ջանս զժմեռնեսեան ունիմք պէտս հոգւոց բժշկութեան: Բայց
բարէս յիմար հիւանդի է դիւարն առողջութեան զեզ, զոր մատուցանէ նմա լե-
տացեալ ոմն բժիշկ՝ ի բաց մերժել, տեսանելով զցաւս մարմնոյ նորա,—
նոյնպէս իմաստնոյ է ոչ զընտրութեան բժշկին ունել փոյթ, թէ առողջ է և
կամ հիւանդ, այլ զգեղին քննել զօգտակարութիւն, եթէ առողջութիւն իցէ,
եթէ քնասակար: Արդ՝ և զուք մի վասն մեր աւարժանութեան և ի հոգե-
վորսն պակասութեան՝ զօգտակար զեզս հոգւոց՝ զորս մատուցանեմք ձեզ՝
տրհամարհիցէք և ոչ ընդօնիցիք» (էջ 21):

Նկատի ունենալով, որ իսկական բարեպաշտ կրօնավորները,— և կային
դեռ բազմական թվով այդպիսիներն ևս,— զուցե իրենից նեղանան մտածելով,
թե իրենք խրատների կարոտ չեն, առաստում է նրանց. «Թէպէտ և... չուրիք
ինչ պէտս կարեաց՝ մերոյ ցուցնաքեալ բանից, այլ որպէս ծառայե՝ որք
զհասարակական կերակուր հրաման առնուն ի տէրանց բաշխել ճշ միայն
քաղցելոց, այլ և յապեցելոցն շնորհին,— նոյնպէս և մեք: Զի ընդհանուր
ծառայակցոց մերոց՝ հրամայեցաք ի տեսնէ՝ առաջ զրանին կերակուր,
հասարակաբար պարտիմք մատակարարել՝ փարթամաց գիտութեամբ և աղ-
քատոց ի պիտութենէ, զօրաւորաց ասպետութեամբ և տկարագոյնիցն
յառաքինութենէ» (էջ 23):

Բերնէք նրա՝ երկար պարբերութիւններով և բարդ ասացմանքներով
գրված պրոպոյից իբրեւ օրինակ և հետեյալ գեղեցիկ հատվածը. «Ան առաջ-
նորդս սրբոց ուխտից վանականացն՝ վանահայրերին ուղղած
գլխի սկիզբը: Նա մարդուս երկու աչքերի նմանութեամբ խրատում է նրանց,
թե լավ առաջնորդ լինելու համար՝ նրանք պետք է և՛ գիտութեամբ ունե-
նան, և՛ ասպետութեամբ գործեն:»

«Փոքր ինչ և առաջնորդացող ի յերկինս ճանապարհորդելոցն [— կրո-
նավորներին առաջնորդներին] տոցուք ծառայակցաբար զհոգեկարական և

դաստուածային բանին կերակուր, որք աչաց ունիք զործ և սպասաւորու-
թիւն մարմնոյ եկեղեցւոյ:

Զի դժ օրինակ աչք առաջնորդին անձին յամենայն շարժումն՝ ի լու-
ւազոյնսն կտի ի վատթարագոյնս, ըստ այսմ նմանութեան և ոչ առաջ-
նորդէ՝ առաջնորդելոցն, եւ որպէս բիրք աչացն, եթէ մաքուրք լինիցին ի
յախտից ինչ ի ներքս անկելոց, սրառեսութեամբն անմոլար առաջնորդէ
անձին յուղիդ հասապարն. իսկ եթէ շամոնգաղք մթինք զերակնն լուսոյ՝
որ ի գլխոյ անտի յայնս իջանն՝ խոռն անտեսութեամբն, սխալէ՝ և ընդ
ինքեան ի խորխորատ մահու գրաւոր անձն իւր արկանէ, — ըստ այսմ օրի-
նակի և առաջնորդք եկեղեցւոյ:

Որ ոք երկոցումք աչոք լուսաւորեալ իցէ, այսինքն՝ դիտութեամբ
աստուածաշունչ զորոց, և առաքինաւոր զործովք՝ ամբնութեամբ և սրբու-
թեամբ և ամենայն արգարութեամբ, զոր պատուիրանք աստուծոյ ուսու-
ցանն, այնպիսին որպէս անձին իւրոյ, սոյնպէս և համօրէն եղբայրու-
թեանն բարւոք առաջնորդէ յաստուածայինսն:

Իսկ որ զմի յաչացն բնց ունիցի, և միւսովն կափուցեալ իցէ, այսին-
քն՝ որ կամ դիտութիւն առանց զործոց առաքինութեան, և կամ առա-
քինութիւն առանց դիտութեան ունիցի, թերի է ի բարեաց և ոչ կատա-
րեալ. քանզի միակտեսեց նմանի այնպիսին, Զի թէպէտ և որ դիտաստու-
թիւնն ունիցի՝ գիտէ զշաւիզս արդարութեան ճանապարհին ուսուցանել
բանիւ, այլ ինքեանն չէ զնալովն ընդ նոյն՝ զործով, ոչ կտրէ հաւանեցու-
ցանել գայլս գնալ. նոյնպէս և այն՝ որ սրբութեամբ վարուք իցէ միայն՝
առանց դիտութեան զորոց, թէպէտ և անձամբ իւրով գնայ ընդ ճանապարհ
զրինացն աստուծոյ, բայց զի այլոց՝ որպէս արժան է՝ չէ զիտէ իմաստու-
թեամբ առաջնորդել, վասն այնորիկ բազում անկարգութիւնս մտանէ յե-
կեղեցի:

Իսկ այնոքիկ՝ որ զերկոսեան տեսարանս աչաց խաւարեալս ունիցին
ի լուսոյ, այսինքն՝ զի են սղէաք աստուածային դիտութեանց, և են պղերգ
յամենայն զարծա արդարութեան, մանաւանդ թէ՝ և հակառակօքն լցեալք,
և յանդգնին առ զանձինս յառաջնորդութիւն եկեղեցւոյ. (որ և զբաղմամ
տեսանեմք յայնպիսեաց ի մերումս թշուառացեալ ժամանակի՝ ձեռնամուխ
եղեալ յայսօսիկ), — լինին այնպիսիքն ըստ տէրունական առակին, կայր
կուրբ յորժամ առաջնորդէ՝, առէ, երկօքին ի խորխորատ անկանին. որք
նչ յաստուծոյ, այլ ի ստանայէ շարժեալք՝ դիմեն յառաջնորդութիւնն
յայն՝ ի կորուստ ինքեանց և առաջնորդելոցն (էջ 48 և հտն.)

3. Ուրիշ գրութեալներ: — Ներսէս Շնորհաւուց Տնօմ են և բազմաթիւ ու-
րիշ թղթեր, գրութիւններ, որ նա ուղղել է այլ և այլ անձերի, երբեմն
իւրեւ պատասխան նրանց ալմա հարցերի, նամակներ լինի կան նաև
մասնավոր, անձնական բովանդակութիւնն ունեցողներ, բայց այդ գրու-
թիւնները մեծ մասամբ վերաբերում են դավանական և այլ կրօնա-
կան խնդիրներ, որոնցով հետաքրքրվել են ժամանակակիցները: Ուստի նա
երբեմն գրանց մեջ գիծում է նաև մեկնութիւն, մտաւիճանք որ նա լսմ
ձանութ և վարժ էր մեկնութիւն, քանի որ գրած ունեւ նաև Մատթեոսի
Ավետարանի մեկնութիւնը: Այդ գրութիւնները իրեն պատմական փա-

առթղթեր կարեւոր են գլխավորապէս հայոց եկեղեցու պատմութեան համար, բայց երբեմն էլ ձեռով բարձրանում են և ստանում զրաւան արժեք իբրեւ պերճախոսութեան: Այդպիսիներն այժմ են ընկնում իրենց զօրեղ արժանաւորութեամբ, բերձած գեղեցիկ օրինակներով և զանազան ճարտասանական ձևերի գործածութեամբ, աւելի հակաճառութեամբ և աւարկութեամբ, մի քանի գեղեցիկ նաեւ ծագողով ու հեղինակութեամբ:

Պատմութեան համար առանձին նշանակութեան ունեն ասի թղթերը, որոնք վերաբերում են այսպեւ կոչված «Միութեան խնդրին», այսինքն՝ հայեկան և հունական եկեղեցիների միացման խնդրին, որ հարուցվել էր մի կողմից՝ հայոց կաթողիկոսի և մյուս կողմից՝ Բիզանդիայի Կիւստանուի կայսրի միջև: Միութեանը դուռն չի եկել Ներսեսի մակման պատճառով: Այդ թերթերից ակնկալում ենք Ներսեսի խոհմի, քաղաքացեւ և զգուշ բնավորութեանը, անհուն ենք, թե ինչպեւ նա պաշտպան է հայոց եկեղեցու պատվին, թաքցվորի հետ խոսում է և պահանջում է եկեղեցիների վերաբերմամբ խոսել ինչպեւ հավասարը հավասարի հետ (էջ 189): Նա չի կամենում միութեանը դուռն բերել մենակ ինքն անձամբ, առանց հայոց եկեղեցական ժողովի, որ պատրաստվում էր անելու, ինքը պաշտպան է հայեկան եկեղեցական մի քանի նեւերի, սովորութեանների միայն նրա համար, որ չզրգուի դրանց վարժված ժողովրդին, թե չէ պատրաստ է նույնիսկ գիշոր լինելու, սեւ ասի, — ասիականութեամբ է նա, — յազգաւ աստուածային սիրոյն հազարամեթեան և 4 չի իբր ի մարտութեան է պահանջով ի ճշմարտութեանն (էջ 231): Այստեղ արդեն լսում ենք Ներսեսի այսպեւ ասած՝ աղաժառմարութեան ձայնը: Այդ ևս ծագած էր անշուշտ նոր մտածոր հոսանքի ազդեցութեամբ, բայց այդ մասին զործոն էր նաև հույների մեջ ցրված հայ ժողովրդին հունական կրօնական հալածանքներից ազատելու ներքին դիտումը:¹

4. Գրիգոր Տղա:—Ներսես Շնորհաւուցը հետո կաթողիկոս է դարձել (1178—1193 թ.) նրա վասիլի եղբոր որդին՝ Գրիգոր Պալատիկոսին, «Տղայ» մականունով: Նա մնվել, կրթվել և ուսում է առել կաթողիկոսարանում և համարներն այնպեւ էլ մանուկ հասակում կոչվել է այդ մականունով: Նա էլ փափաղում է եկեղեցիների միութեանն առաջ բերել, նկատի ունենալով, որ այդու կթեթեան հունական տերութեան մեջ՝ ժողովը հայերի վիճակը, բայց հաստատ պահելով ճշմարիտ հայութեանը: Այս մտքով շարունակում է նա բանակցութեանները միութեան մասին հույների և հայ հեղինակաւորների հետ: 1179 թ. ժողով է գումարում Հռոմկայանում, բայց Մանուել կայսրը մեհնում է, և միութեանը դուռն չի գալիս: Գրիգոր Տղայից ֆեուս են մի քանի թղթեր,² որոնք գրված են հմտութեամբ, երբեմն

¹ Ընդհանրական, էջ 4, 1895. Միութեան խնդրի համար փոխանակված բարե թղթերը և Ներսեսի և ուրիշների էջ 118—230, 410—457. Ներսեսի մյուս թղթերն ու գրութեանները՝ էջ 285—411.

² Անգ. էջ 449, 457.

³ Անգ. էջ 230 և հուն. 230 և հուն. 262 և հուն. 423 և հուն. Վերջինս՝ «Պատմութեանի վարդապետացն Հայոց հիւսիսային կաթողիկոսի կա յաւ»՝ Գրիգորի կաթողիկոսի Տղայ կաթողիկոսի համակալին, Վենետիկ, 1865, էջ 53—90. Այստեղ նաև «Պատմութեանի թղթայն վարդապետին Գրիգորի Տուսեղաւոյն», էջ 8—23. Գրիգոր Տուսեղաւոյն երկու թղթերն ա

և սուր ոճով. բայց շուենն առանձին գրական նշանակություն և կարևոր են եկեղեցական պատմության համար:

Նրանից մեռւմ է և մի հոտանավորով գրվածք: 1187 թ. մահմեդականները Սալահադինի ձեռով նորից տիրում են Երուսաղեմին. կործանվում է խաչակիրների հիմնած թագավորությունը: Այս դեպքն աղքատ է ի միջի այլոց և հայոց կաթողիկոսի վրա, և նա հորինում է ժամն ողբերգական վասն առման Երուսաղեմի: Այն գրված է ներսես Շնորհալու շնորհալույ Ողբի նմանողությամբ բարաւնարար, ութավանկ տողերով և շինչ հանգով (1395 առդ): Մոտում է անձնավորված Երուսաղեմ քաղաքը, սկզբում դիմելով նշանավոր քրիստոնեական քաղաքներին, թվելով իր սրբավայրերը և ողբալով իր աղետները: Հի է բացառաբնություններով, կրկնություններով և, ինչպես հաճախ վարվել են մեր գրողները, բնապարտիկ ակնարկներով Հին Կառավարանի մեջ պատմված դեպքերին: Չունի այն կենդանությունը, պատկերների փայլն և մտածության ու զգացմունքի խորությունը, ինչ որ Շնորհալու քերթվածքը: Արժեքավոր է միայն պատմության համար իր հաղորդած հետուստ պատմական իրողություններով և Պաղեստինում աղբորդ Փրանկների բարձրների, սովորույթների ու հաստատությունների նկարագրով:

ՆԵՐՍԵՍ ԼԱՐԲՐՈՆԱՑԻ

1. Կենսագրությունը:— Ինչպես «Մեջերկրայք» նկարագրի միջև, նույնպես և Կիլիկիոն Ամանոսից արևմուտք՝ շատ հին ժամանակներից ծանոթ էր հայերին, որոնք առևտրական հարաբերություն ունեին այն կողմերի հետ: 11-րդ դարում Հայաստանի քաղաքական տղտանքի հետեւանքով՝ շատ հայ իշխաններ իրենց ժողովրդով տեղավորվում են նաև Կիլիկիայում, որ բիզանդական իշխանության ներքո էր, որ և իր ծովափնյա դիրքով մի հարմարավոր վայր էր Արևմտյան Աֆրիկայի հետ հաղորդակցություն պահելու համար: Հայությունը հետզհետե թվով աճում է այնտեղ և տնտեսական զորանալով դառնում է աղքեցիկ: Հայ իշխանները սկզբում բիզանդական կուսակալների պաշտոն են վարում, հետո տիրանում են որոշ բերդերի բիզանդական գերիշխանության տակ. ապա ձգտում են նաև քաղաքական անկախ իշխանություն կազմելու: Բագրատունի Գագիկ Բ. թագավորի մոտիկ ազգական Ռուբենը 1080 թ. հիմնում է Կիլիկիայում անկախ հայկական իշխանություն, որ 12-րդ դարի վերջում դառնում է թագավորություն ընդարձակ սահմաններով և հարստում է մինչև 1375 թ.: Այս նոր Հայաստանը ծովային մեծ առևտրական հարաբերություն ուներ Աֆրիկայի հետ և բարեկամական կապեր՝ մոտիկ խաչակիր իշխանությունների հետ, միաժամանակ և չէր կարված Մեծ և Փոքր Հայաստանների հետ հաղորդակցությունից. նա շուտով ծաղկում ու բարձրանում է և քաղաքա-

Գրեգոր Տղա՝ առաջին անգամ 1203, էջ 321 և հետ. իսկ «Թուրք վարդապետ» նույն Կիլիկիայի կազմանց... առ... աէր Գրեգորիոս առաջինը, էջ 4, էջ 426 և հետ.

¹ Բնագիրը Փրանկների Թագավանության հետ աղված է Պաղեստ. Dulaurier, Recueil des Historiens des Croisades, Historiens Arméniens.

կանադես, և՛ անտեսադես, հանդիսանում է մի նոր կուլտուրական վայր իր բազմաթիվ նորաշեն վանքերով: Գրականաբխյան մեջ աչքի ընկնող ներկայացուցիչը 12-րդ դարում է ներսես Լամբրոնացին:

Լամբրոնացու մեծ պապը, Օշին անունով մի աշնվական, Գանձակի կողմերից 1073 թ. աղագոսեմում է հիվիկիա, ուր կուսակալ էր նրա ծանոթ ու բարեկամ Աղլաբիդ Աբդուլահի իշխանը: Սա առիթ է Օշինին Լամբրոն ամրոց բերդը Տորոսյան լեռների մեջ՝ Օշինը և նրա որդին՝ Հեթում Թումանյան և նրա կուսակալան ծառայության մեջ և դռնում են այն կողմերի հայտնի իշխանները: Այդ Հեթումի դուստրները մեկի հետ ամուսնանում է ներսես Ծնորհալու մեծ եղբայրը՝ Վասիլ: Հետագայում Հեթումի որդին՝ Օշին անունով՝ Ծնորհալուց թաքուն կին է առնում Ծնորհալու կրտսեր եղբոր՝ Շահանի, նույն և Զորավարի Շահանգուխտ դուստրը: Այս Օշինի և Շահանգուխտի դավան է Սմբատը, աղագոսի ներսեսը, որ ծնվել է 1163 թ., վախճանվել 1198 թ.: Սաղաթ ժամանակ ծանր հիվանդացել է նա, և ծնողներն ուխտել են իրենց որդուն, Լեթ առողջանալ, նվիրել եկեղեցու ծառայությանը: Ուստի մահուկ հասակից նա կրոնական կրթություն և ուսում է առել Սկևռա վանքում, որ շինել էր իր հայրը, և հետո՝ ներսես Ծնորհալու մոտ կաթողիկոսաբանում: Այստեղ նա սովորել է նաև հույն, ասորի, լատիներեն լեզուները: Ծնորհալին նրան ավել է կուսակալան լատինացի կաթող՝ մկրտության՝ Սմբատ անունը փոխելով ի ներսես, և հետո, երբ նա դեռ քսաներկու տարեկան երիտասարդ էր, Գրիգոր Տղայից ձեռնադրվել է եպիսկոպոս և նշանակվել Տուրսոնի, Լամբրոնի և Սկևռա վանքի առաջնորդ:

Մեծանալով Ծնորհալու ձեռք տակ՝ ներսես Լամբրոնացին սիրում է ուսումնի և գիտությունը, և վաղ երիտասարդական տարիքից արդեն անխոնջ պարագում է գրականությանը՝ անելով թարգմանություններ և հորինելով մեկնություններ և այլ կրոնական երկեր: Բացի այդ՝ աղղվելով ներսես Ծնորհալուց՝ նա սերա փարում է եկեղեցիներին միութան խնդրին: այդ նկատմամբ հետևում է իր մեծ ուսուցչի, հետո և Գրիգոր Տղայի ուղղությունն ու հայացքին: Չափազանց ցավում է, որ միութան գործն անկատար է Մեսցի: Միերել է և միանձնական կյանք՝ իդեալ ունենալով Գրիգոր Նարեկացուն:

«Ուսումնասիրելով օտարներին մեջ տիրող եկեղեցական կարգ ու սարքը, և բազմաթիվ հայերի մեջ ախրացած անկարգություններին հետ, որոնք հետևանք էին քաղաքական անախտանքի ու վարատական կացության, Լամբրոնացին սկսում է սիրահարվել ուրիշների մոտ տեսանքին¹ և ինքնազուրկ ինչ-ինչ փոփոխություններ և նորություններ է մտցնում եկեղեցու կարգերի մեջ: Արևելյան վարդապետները զգուհում են նրա ընթացքից և այդ սառին հայտնում են հիվիկիա Լևոն Բ.-ին, որ արևելքիներին հաճելի լինելու համար հոգարում է Լամբրոնացուն հեռացնել իր մոտից: Այս հանդամանքներն անհառախ են ընթացել Լամբրոնացուն հարինելու իր նշանա-

¹ Մ. Օրմանյան, Աղագոսում, հասանելիություն, 1912, էջ 1479 և հաճ. 1878 և հաճ.:

վար Առեկտարանութունը և գրելու Լեոնին ուղղած թուղթը՝ Առեկտարանութունը, ըստ վերնագրին, խոսված է «Յառաջանալու մասին և ի արեգիկական ժողովի ճարտանքին, որ տեղի է ունեցել 1107-ին»։ Դա «Ժողովրդի խելագրին ի նպատակ հասնելուն և պերճաբան հորդորական է», «ազգային գործերի ջանադարութամբ», Լեոնին ուղղած թուղթը գրված է լի զայրույթով իր հակառակորդներին դեմ. «արեկտարանութունը և ախմարը և անկարգը և յիմար բանից շաղկառառչքը»։ Անարկելով Գրիգոր Տուսեարդուն և Գորայրեցուն՝ գրում է. «Ե՛ք Ձերոյդեա զերկուց տարնց, որք իբրև գնունս լիբըս հաջին՝ զվժիս հաճեա, որք վառն զԱնեցի տրեխուն ի գնառնաց և յարմարամուրթնէ յարբեցութենէ ի կաթողիկոսութիւն ցարչելոյ՝ զմեզ նախառնէ» (էջ 282)։ Անեցի՛ն, Անի քաղաքի Բարսեղ եպիսկոպոսն է։ Եվ այսպիսի նախապահան խիստ խոսքերով նա տնարգում է իր արեկտարան հակառակորդներին։ Ենդեցեցական պատմութեան համար կարևոր այդ երկու պատմականները և թիւ մի կազմից՝ վաղեմագրեր են ժամանակի բարձրի համար, մյուս կազմից՝ ճշգրիտ բնութագրում են իրեն՝ Ներսէս Լամբրոնացուն իբրև համարձակ, ըստն հետադառ, բայց և կրքոտ ու հուզվող, առքաւոր ու բանկվող մի մարդու, որ իրեն զապէլ չգիտէ։ Բայց դրանք միաժամանակ և լավ աղագոսւոյց են նրա հետաքրքրական շնորհքին։

2. Համբարձումն Ներքաղաքը.— Ն. Համբարձումեցու ճարտասանութունն ավելի ևս փայլուն է նրա Հոգեպաշտան և Համբարձման ներքաղաքների մեջ¹, որոնցով նա հանդիսանում է ազգանպաստի հետադարձ, լավագույն ներկայացուցիչը մեր հազար պերճախոսութեան. ուստի և այսպէս մանրամասն, հարկավ, մեծ կրեատուհներով, տեսնենք նրա Համբարձման ներքաղաքը, քանի որ մեր հին գրականութեան այս տեսակի երկերից ոչ մեկի վրա առանձնապէս կանգ չենք առել։ Նա բնականաբար կիրառում է ամեն տեսակի ճարտասանական մեքէ՝ զիմում, քաղաքաբանութուն, մայնարկութուն, հարցում, նմանութուն, կրկնութուն և այլն։ Դրանք նա բանեցնում է վարպետքն, ոե՛ր պետպետութեանը։ Կրկնութուններով էլ, օրինակ, նրա ասացվածը սչ թիւ թուումում է, «ապա ու մանկուքի գառնում, այլ, ընդհակառակն, գորտնում և գրավչութուն է ստանում։ Ամենն ասում է նա վայելուչ դարձվածներով, ոչ սակավ բանաստեղծական պոետիկներով, հորդ ու ծաղկուն, բայց պարզ ու մեկին ոճով, առանց կուտակարանութեան, հետոս միջնութունից և բարդ ու պարբերական ասացվածներից։ Ծերտները հաճախ ետեւեւան կազմում է երկ-երկու խոսքից, ինչպէս երկատող աները բանաստեղծութեան մեջ, գրանով որոշ շափակունութուն և կշռական դաշնակալութունում ասող բերելով։ Բայց Համբարձումեցու ներքաղաքնի գեղեցկութունը

¹ Յղագրված Վինետիկ, 1805, Վենիցի մատենագիրքը՝ չաքնի մեջ «Գրիգոր Պաթղիկոս Յայ, Ներսէս Համբարձումեցի, Նախ՝ Գրիգորի կաթողիկոսի Յայ կոչեցելոյ նամակակն», էջ 8—90. հետո՝ Վնեցեայի Համբարձումեցու Յարսեղ եպիսկոպոսի տանաբանութիւն», էջ 28—205, Թուղթ, էջ 207—248. Մուգ, էջ 240—286.

² Էջ 240—280, «Բարեբանութիւն ներքաղաքնի գաղութեամբ ի Համբարձումեցի տեսնել Յիսուսի Քրիստոսի յերկնու», էջ 280—386, «Ներքաղաքնի տեսնել ի հրաշափառ գալուստ Հովսէփի սրբոյն».

միայն արտահայտական ձևերի մեջ չէ, այլ ավելի ևս նրա ներքինի, ճաշի տարողի կառուցվածքի և լիբրդի մեջ:

Ազգրից հենց նա իր ճանաբանին պատշաճ մի շարք գիտական գրա-վում է ժամավոր սահմանափակումները և զարթոցնում նրանց հետաքրքրությունը՝ կենդանի հաղորդակցության սահմանում իր և նրանց միջև, ինչ որ հարկավոր է մահի ճառագործի: «Ենեմ այսօր, հիմա ոչ չա-խաչ, եկեղեցի հեթանոսաց, ի պատիւ յիշատակի փեսային քո Քրիստոսի խորհրդոց: Այսպես է սկսում նա այդ ճառը և ապա շարունակում: «Պարեցէ՛ք, ձզ մանկանք առաքաւտի, այսօր ուրախութեամբ, դի հաւատարեցաւ սիրա ձեր ի հանգէս փառաց նորա մեծութեան: Զուարճացեալ խրախոյս խնդա-լթեան հարէք ի մէջ առեալիս, դասապետը դասուց հանդիսի ժողովոյս: Քանզի տես այսօր լրումն փափաքանաց ձերոց յերկինս երկնից կառուցեալ մարցաւս Ո՛վ արեամբ փրկեալ մարիե դասիցն՝ սեպհական ժողովուրդը... այսօր եկեալք բարձրացիք սլացեալ ընդ նմին թեօք հաւատաց ի փառ երկնաւորս, յոր մտեալ նստաւ ընդ ալմէ հոր, աւաւաւաչեալ և ճանապարհ մահնեցան ձեզ: Ապա իրեն դաւանում՝ առաւ է. «Այլ ինչ, որ դատարա-մաւթիւնս ընթացեալ՝ պաշտպան կացի աւաւոր մեծի, ձզ առյր հաւասա-րել խորհրդոյս և զամենեանս զձեզ սխրացուցանել՝ իմաստութեամբ աշնե-լոյս: Հետո մի մի կարճ ասացվածներով հիշեցնելով հրեշտակների երգա-կցումը քանչեւի փառքի տոնին, առաջադիւնքի պշտ սքանչացումը և մար-դարների օրհնութեան երգերը՝ բացառանում է. «Ո՛վ դուք եկեղեցւոյ մանկանք, բարձեալ զձայնս քաղցր եղանակաւ՝ սողմաւ սասցէք սաստեօյ մերում, սողմաւ առցէք թագաւորին մերոյ, սողմաւ առցէք:»

Անպայման մեծ է եղել շերմ հաղթանակ և անկեղծ սկսնդութեամբ զմեծ այս խառքերի ազդեցութեանը հաղթանալիների վրա: Բայց այդ չի բովարարել ճառագործին. ուստի իսկույն հասնում է նա՝ «Այլ տանդ, դի հեղուցիւն մեր ծանրացեալ ի գրադմանէ մարմնոյ՝ հաւանել հրամանիս վերջացաւ, և զճաշակ համեղ դիտութեան՝ շառնել տնին երգուք օրհնա-լթեամբ՝ յաւաքաւ: Քանզի որդէս մարմնոյ ոչ է մի տեսանելի գաղտնացիչ իւր համագումա՝ և ճաշակելն, այսպէս ոչ է հաւասար լսել զբանս սաստեօյ, և ոչ խաղաղական հանճարովի արտել. դի այսու պարտիւս բերկրի, և ախաւ երբէք ոչ միթիթի: Շարահանակեալ զարդացնել տառն՝ բերում է մի ուրիշ նամանակութեան, թի մարդուս կյանքի համար բովանդակելիներ մի տեսակ կերակուր, բայց նրա մարմինն տրված են զանազան պատգանք և կերակուրներ, որպեսզի յարաքանչյուս բի էլ համ ու հաւան տանի և զվար-ճանաւ: Այսպէս և նրա հազուն տրված են մեկից ավելի կերակուրներ — զա-նազան սաստեօյի տաներ, իրենց առանձին խորհուրդներով և անուշա-հոտ բուրմամբ, որպեսզի նրանցով զվարճացի իր ժամավոր գիտութեան-ները:

Եվ անմիջապէս կարծիք ձայնով կանչում է Սառանային, իբրև ամե-նամեծ թշնամուս: «Ո՛ւր ես, անգեղջիգ ի շարիս բանասարկու. Քւր դու, զըր-պարաքի դառալու: Եկ այժմ կլաց մեզ առնութիւ, ՚ի իբր գոթիւնը, այլ իբր գիշնամիս և այլն: Եվ այսպէս շարունակում է մի մեծ շարք խառքեր, արանցով Սառանայի ակարութեանն ու պարտութեանն է մեջ բերում:

ամաչեցնելով ու խայտառակելով նրան, և փոռովորում է համբարձուձը, միշտ ախպես ճառելով, որ կարձես Սատանան կողքին կանգնած լինելը, նվաճում է հավատում է դրան և հավատացում է իր աւնկնդիրներին, Հավատում է, որ՝ ինչպես հին դուռը, երգմանցւոցի՛նքը սատում է ինչ շար ոգիներին, ինքն էլ իր այդ խոսքերով դուրս է քշել Սատանային, Ուստի իր ճառի այս նախարանի վերջում ապւլացնում է. «Զայսօրիկ առ բանասերկու թշնամին ի դէպ էր մեզ ի սկզբունս բարբաւի, և զմախանջ յաչադոյն ի մոզովայս մեր ամօթով արտաքս վարել և ապա զհոգևոր սեղանս բարեկամաց սփռել և դամենեսեան կերակրել»:

«Լոզմոր սեղանի», այսինքն ճառի կենտրոնական մասի նյութն է, «(1) Թէ զի՛նչ հարկ աստուծոյ իջմանն ի յերկիր, (2) կամ այսօր՝ ուր է՛նք ի յերկինս՝ փառք համարեմանն: Այս խնդիրներից առաջինն է փրկագործության խորհուրդը, փրկիչ Հիսուսն իրր և մարդ հաղթել է մեղքին. մարդս հետևելով նրան՝ նույնպես պիտի հաղթի մեղքին և վերագտնում իր առաջին հայրենիքը. «Պարտաւորքս սրբեալք առ սատուած դարձցուք»: Այս խորհուրդը համառոտակի, թեթև, աշխույժ ոճով բացատրելուց հետո՝ անցնում է երկրորդին՝ Համբարձմանը, որ ճառի բնարանն է: Նոր Կտակարանի փոքրիկ պատմութիւնն և ապաղուփոյունն ընդարձակում է՝ ստեղծելով մի վիպական երկ պատկերների ու տեսարանների ընթացիկների և խոսքերի մանրամասնութիւններով, միշտ աշխատելով ազդելու ժամավորների երևակայութեան և զգացմունքների վրա: Նվաճող երեւիւմ է նրա մեծ շնորհքը:

Հիսուս իր աշակերանների հետ Զիթնայաց լեռան վրա է և այնտեղից սկսում է երկինք վերանալ. «Ե՛ի վայրն՝ ուր ուսան զճառս նորին թշնամեաց. և ուր լուսան զրանս շարչաբանացն և երկնան, ծանալցեալ զփոռուր համբարձուի՛ն՝ բերկրեցան: Ի լեռան՝ ուր տեսին զնա յազօթս տարակուսանօք, անտի անխն զնա սլացեալ ընդ ամպս լուսեղէն փառք... Ի կեդրոնեան ձորայն՝ ուստի աարան զնա ի խաչ սուսերօք, ի նմանէ ամբամառ ի կոսս քրփրէից նուրբ հոգոցն թնօք»:

Հանդես է գալիս ամենից առաջ Հիսուսի մայրը. «Մայրն՝ ուր խոցեցաւ յայնժամ ի նախատանացն սայրասուր սլոքօք, այժմ տեսանէ զորդին իւր թագաւոր պննեալ պսակօք... Վասն այսորիկ ցնծայր, հրճուէր, և այսպիսի ինչ ի բարձրանալն սրբայն զկնի բարբառ արձակէր»:

— Այսօր սիրտ իմ հաստատեցաւ, և բերան իմ յարձակեցաւ ի վերայ թշնամեաց, ով անդրանիկ իմ և տէր, որ կափուցեալ աստուծէր ի քո յանճառն խոնարհութիւնէ: Այսօր բարձրացուցեր զգլուխ մօր քոյ փառք, որդի իմ և աստուած, որ լուսթեմը կրտնայր ի բարձրանալն զկուսութիւն իմ յուրթի բժժանօք: Այսօր պայծառացուցեր զգէմս իմ՝ նշույից հետոց արինդ ճոռագայթիւք, որ ի ժամ շարչաբանաց քոց զպեցաւ սուգ՝ մթին ստուերօք...»:

Ապա Մարիամը գիմում է առաջաւանների դասին, որ հազարակից լինեն իր ցնծութեանը:

1 Վերևում հիշված «Հնարի մասնագրք», էջ 255 և հմ. 1

—Ո՛վ Պետրէ, ընդէ՞ր լռես. ահա հրեշտակէ ակուժր առեալ եղանակէն շուրջ զվարդադեառաւն քո զօրհնութիւնս. ժո զգուշոյս քո, և խառնեալ ի պարս նոցա, երգակցեալ, տալով օրհնութիւն այնմ՝ որ օրհնեաց զերկիր զալսանամբ իւրով, և պայծառացոյց զերկինս ընթացիւք իւրովք... Օգո՛ ահա արտափայլէ ի փոռաց նորա, և երկինք խոնարհի ընդ ոտիւք նորա, և բարապաւնք նորին բանան զգրուես մաից նորա. դուք մինչև ցժր վայր պղուցեալ՝ կամիք տեսանել զընթացս նորա:

Բայց Հիսուսի տշակերտների ուշքն ուրիշ բանով է տարված. Հաբու-թյունից հետո փոխվել է նրանց վերաբերմունքն առ իրենց ուսուցիչը. «Նա աշուհհետն սկսան յայլ դէմս կերպարանաց պատել տեսուն և վարդապետին առնել. ի նայելն ընդ նա զարհուրէին, յիշելով զթեմաքոյեալ սե-րովրէն... Ի խոսելն պատկառէին... Սէրն բորբոքեցաւ ի սիրտ նոցա նո-րողողէս... յայս կոյս յայն կոյս ընթանային ամօթխածութեամբ և հայ-էին ի գէմս նորա անյաղ փափագմամբ...» Այսպիսի հոգեկան վիճակի մեջ էին նրանք. երբ Հիսուս ձեռները բարձրացնելով՝ օրհնեց նրանց, «և անդէն փռութեամբ սկսեալ սկսաւ վերանել յերկինս: Իսկ նոքա սրտաթափ յուսակտուր խոնարհեալ, զերկիր համբուրեալ՝ շնորհ ունելով օրհնու-թեանն, յարուցեալ փութապէս և երազ պղուցեալ նայէին ընդ երկինս յերթայն նորա»:

Նրանք հոգնում են զեղի վեր պշնած նայելոց: Ահա տեսարանի մեջ շտժում է մտնում. գալիս են երկու բարեկամ հրեշտակներ՝ նրանց սփո-փիլու և զեղ երկինք նայելը զաղարեցնելու: Ասում են.

—Արք զալիւնացիք, այժմ դի՛ կայք հայեցեալ ընդ երկինս անշքե-տութեամբ ամպովը որոշեալք ի սիրելոյս: Այս Յիսուս որ վերացաւ ի ձէնց՝ սոյնպէս զարձեալ եկեսցէ. Արք զարձիք սպասեցէք սորա կրկին գալտեսն...:

Աշակերտները հաղցնում են.

—Եւ զի՞նչ յիցուք աշակերտքս յանկարծ բոժանեալք ի վարդապետէն... Մեզ զի՞նչ առայք միելթար, ո՞վ գուարթունք, ի արտութեան և ի ցնծու-թեան միջի վարանեալ աշակերտացս. ցնծութիւն՝ զի տեսաք զնա յայնպի-սի փառս ճոխացեալ, և սրտմութիւն զի սառն ի նմանէ եղաք աստ անացեալ:

Հրեշտակներն ասում են.

—Արք զայլեացիք, մի՛ հիանայք, ցնծացէք, զի գոյ համբարձեալս ի յերկիր, և պատէ զամենեանան զձեզ ի նորոգութիւն յարութեանն հա-շտպէս...:

Ո՞վ ճառախոսը հրեշտակի բերանով նկարագրում է մի ուրիշ տեսա-րան. նա ունկնդիրների երևակայութեան առաջ բանում է աշխարհի վերջը, երբ Հիսուս փառքով կիջնի երկնքից երկիր, նրա հետ բոլոր հրեշտակները, մարդիկ էլ զերեզմաններից ամպերի վրա ընդ առաջ կթռչեն:

Դարձյալ փոխվում է տեսարանը. հրեշտակները նորից զառնում են համբարձմանը:

—Ահա դուք տեսաք,—ասում են նրանք,—թե ինչպէս սլացաւ նա, և թեթե-ջայլելով ոգերի վրա՝ սքանչելապէս բարձրացաւ ու ձեր մարմնակն ու-

գերից Եմանկից ներքեի մոզով: Այժմ բացեց ձեր մատվոր աչքերը և դեպի երկինք հասցեց՝ «ուսանել խորհուրդս անդառնալով»:

Ի՞նչ է դա.—Այդ հասկանալու համար՝ դնենք այստեղ հեռավոր քրիստոնեական զբաղմունքները: Հին հայացքով մեզիցից զերիս, անասունի երկնքից դնելը, էր երկնային դրուսթյունների կամ զվարթանների վայելը: Ներսես Շնորհալու ըստ Դիոնիսիոս Արիստոպոսոսի գրած մի աշխատությունից, որի մասին խոսվեց վերևում, իմացվում է, որ նրանց այդ երկնայինները, բաժանվում են ինը դասերի, որոնց մեկն երեքը կազմում են մի կարգի Բարձրագույն կարգի մեջ են՝ Օլեոլոքեններ, Փերոլոքեններ և Աթոններ: հետո գալիս են՝ Տերուսթյուններ, Զարուսթյուններ և Իշխանություններ: Իսկ առաքիլ կարգի մեջ են՝ Պետություններ, Հրեշտակապետներ և Հրեշտակներ: Այս երկնային շրջանները ըստին էլ ընդհանուր անունով կոչվում են Զարուսթյուններ կամ Զվարթաններ կամ Հրեշտակներ: Բայց շրջանակն կոչվում են աստվածաբար իններորդ դասի զվարթանները միայն, և ներսեսը Համբարձուցում այս հասկ մեջ շրջանակն բացում միայն այդ նշանակությամբ է գործածված: Նրանք, լինելով վերին երկնքի մեծացած մասում, երկրին ավելի մոտ են և երևում են մարդկանց, նույնպես երբեմն նաև հրեշտակապետները, ասանձապես Գարբիել և Միքայել:

Դառնանք Համբարձուցում հա՛խ:

Նրանք, հրեշտակները, մարդկանց վերահացուներն են, տեղյակ են մարդկային գործերին, աստի գիտելին, թե՛ ճվ է երկինք համբարձողը: Վերին կարգի երկնայինները մոտ են աստվածին, որի կամքը և նրանք հաղորդում են ցածի կարգերին: Բայց նրանք հետև լինելով երկրից, չգիտեին, թե՛ ճվ է վեր համբարձողը: Ուստի իններորդ դասի հրեշտակներն այդ մասին անհեկություն են առլիս վերիններին. «ցանցի աստուած ի ստորնայնոցս ի վեր ելանէս, ասում է Հիսուսի աշակերտների հետ խոսող հրեշտակը, որ ինքն էլ ստորիններից էր: Հիսուս, սերմն, ամբողջալիս նախ հանդիպում է իններորդ դասին—հրեշտակներին, հետո հետզհետե բարձրանում է դեպի վերին դասերը, մինչև հասնում է շուրջ աստվածին և նստում նրա աջ կողմը: Ներսեսը Համբարձուցում հասկ այս մասը հարկնված է ահա այս վերինային դասակարգության և այս քրիստոնեական զբաղմունքների վրա: պատմվում է Հիսուսի համբարձման գործողությունը, նրա ընթացքն երկնայինների դասակարգության—հիերարխիայի միջով:

Նրա Հիսուս հասավ իններորդ դասի հրեշտակներին, նրանք, որավհետև դիտեին, թե՛ ճվ է համբարձողը, ցնծությամբ եկան նրան ընդ առաջ,—ասում է պատմող հրեշտակը և շարունակում, թե՛

«Ոմանք զգրուսն աստուածային համբարձում, և սմանք զթագաւորէն հարցանեն ասանել: Ներքինքս անուանեն զնա թագաւոր փառաց և վերինքս տարակաւին, թէ՛ ճվ է սա թագաւոր փառաց, որ ընդ երկինս ճանապարհ ի յերկրէ առանց օգնականի ինքնիշխանութեամբն հարգեաց: Գորելչեանքն աղաղակէին. «Տէր զորութեամբ իւրով, տէր կարգ ի պատերազմիս. և Միքայելեանքն հիւանան. և «ԶԺարգ կարմիրս անի հանգերձ զի զոյնս արեան և մարմնոյս... Նրանք բողոքում են Հիսուսին և աղաղակում:

—Տէ՛ր ամենակալ, մինչև թրբ ոչ ոգորմիս վերինս նբուսադէմի, և քաղաքացն դրախտին, ուստի որաւքս քեզցեր զերի զընտկի՛նս զԱշտմ...
Հիսուս մխիթարական խոսքերով պատասխանում է.

—Փրկեաց զնոսա բազուկ իմ, և սրամուսթիւն իմ միայն զդէմ կալուս
Հրեշտակներն ու հրեշտակապետները լսելով, որ մարգկային ազգը փրկում է, ցնծում ու հրճուում են և ուղեկցելով համբարեալ արքային՝ ձայն են տալիս վերիններին, որ շտապեն ճանապարհ բանալն.

—Եվ մինչդեռ հրեշտակներն ու հրեշտակապետները և սերովբեներն ու քերովբեները խոսում էին միմյանց հետ, — շարունակում է պատմող հրեշտակը դասնալով դեպի աշակերտները, — Ինչը Հիսուս, որ հրեշտակների գիմարից էր զնույմ, առաջ անցնելով այսպես պատասխանեց վերին զասերին.

—Եւ եւ որ խափմ զարգարութիւն և իրաւանս փրկութեան. ես եւ որ իրաւամբք և արգարութեամբ յաղթեցի և կոխեմ զթշնամին հակառակամբա՝ արարի. ես եւ որ զգերեալ ազգ մարգկան փրկեցի, և զարձալ զյոյս նոցին յերկինս ուղեցի. ես եւ որ զթշնամութիւն ի մարմին իմ սպանի, և խաղաղութիւն յերկինս և յերկրի արարի.

Վերին զասերը հարցնում և ասում են.

—Եւ զի՞ կարմիր են, ասեն, պատմուհան քո և հանգերն քո՝ իբրև պնծանահորի լիսյ հնձանի կոխելոյ... Արդ զի արարեր քոյս ամենայն առաւածադէս՝ հաւատածք, մարմնոյ հանգերն արկնսս ընդէ՛ր զգեցեալ ես ի վերայ աստուածութեանդ փառաց, և բոսարառիղ պանդգ զնոյն պոհուհեալ... Եւ զի կարելի է սքանչելի դարձ յերկրի անմարմնոց գորութեանց՝ հաւատածք. բայց զուս ահա ակեր պատմուհանդ վանեցեր պնծածին մարան՝ հիւսնածք, և զյեզանակ բազմապատիկ իմաստից քոց ուսանել ըղձանածք. յայտնեա ի յիստութեանց և պետութեանց երկնայնոց պնդող արուեստի քոյ իմաստս, աստուած մեր և անքո:

Հիսուս պատասխանում է.

—Ոչ թէ որպէս գուք կարծէք, ասէ, աստուածային զորութեամբ իմ, զի երկնաւորք, ի գլուխ անեալ զմարգկան փրկութիւն ուղեցի. և ոչ թէ կուք և երիվորք հրեշտակաց ինձ ի մարաս պաշապանեցին... այլ փրկեաց միայն բազուկ իմ, և սրամութիւն արգարութեան մարմնոյս իմոյ միայնակ աւանդին կացեալ ընդդէմ՝ կոխեաց զթշնամինս: Միայն ի լեռան պէսպէս փորձութեանցն յաղթեցի... Միայն ընդ մաքսաւարսն ճաշակեցի... Միայն ի խաչին շարչարանս գիմեցի... Զէն ոչ առի ձեռս զհրեզն մեր ուր, այլ ակեր մարմին... և այսպէս պատերազմեալ յաղթեցի այստերհի: Վասն այսորիկ արգարութեամբ իմով և կամուար մահաւոր զմեղաց մարգկան զմուրհակն պատասցի. և այժմ ելանեմ նստել ընդ աջմէ՛ հոր, բարեխոս և քահանայ հոռին իմոյ, զոր պատուական արեամբ իմով զնեցի:

Այս որ լոււմ են հրեշտակների գնդերը, — շարունակում է պատմող հրեշտակը, — զարմանում են, որ նա իբրև ակար մարդ հաղթել է սատանային: Սկսած ապա նոր եղանակաւ պարզա նմին վերերգել, և զմարդիկ ի կցորդութիւն օրհնեղութեանն խրեանց ժողովել:

—Մասին հարէ՞ք, տսնն, անգղէ հեթանոսաց, համաձայն քաղցր երգոցս հրեշտակաց, և աղաղակեցէ՞ք ընդ մեզ փառաց թաղաւորիս ի մայն ցնծութեան զգովութիւն օրհնութեան... Ահա մասնէ՛ քահանայապետս առ աստուած պատարագաւան հաշտութեան... և առնէ ինդրութեան վասն ձեր փրկութեան. «Հա՛յր, կտմիմ զի ուր հոս եմ ի ծայրագոյն զանոյս... մտցէ եկեղեցի իմ տնտանի զփռոս զոր օտացայ... Հայր, զորս ետուր ինձ զինք տրեան մոզովորդ սեպհական, սիրեցի ի չափ սիրոյ ջոյ ընդ միածնիս հաճութեան, և րարեիօտեմ ամեն զմոռո ի պատիւ փառաց իմ հաւատարմեան: Ուրեմն մարդկային ազգի փրկությունը կամ նրա բարձրացումն, աստվածային դառնալը:

Այստեղ վերջանում է երկու հրեշտակների խոսքը: Անմիջապես հետևւում է ճառի վերջաբանը, որի մեջ ճառախոսն արտահայտում է իր սեփական զգացումները՝ խոսքն ուղղելով նորից եկեղեցուն, այսինքն քրիստոնյա ունկնդիրներին, և հորդորելով նրանց, որ հետևեն Հիսուսին. «Ո՛վ մեծի շնորհիս,—բացօգնչում է նա,—ով անճառ երախտեացս, որում արժանի դասար, եկեղեցի, ի համբառնալ Քրիստոսի... Ա՛րք ի բաց զջօղ սեպհական երկրաւոր սահեցման... Խորիսի ջոյ յերկնս, զու ընդէ՛ր ի ստորինս կորուսաս... Աստի օ՛ն հրաւիրեցօր զնա ի յերկրէ յերկինս, յապականութենէ յանապականութիւն, ի միջոյ կարճաց ի հրեշտակաց դասակցութիւն: Դարձիւր յունայնութեանց և կացս գոտս քո յուղիղ աղօթառայն զի... արժանի լիցուք յեռ ելիցն աստի՛ երկնային տանն օթեանցն...»:

Այսպես՝ ներսես Լամբրոնացին իր ներքոյայնի բուն մասի մեջ զվերթ եղանակով նկարագրիներ է անում, բեմ հանում գործող անձեր և նրանց խոսել տալիս միմյանց հետ: Հիսուսի մայրը, Պետրոս առաքեալը, մյուսները, ինքը Հիսուս, հրեշտակներն իրենց դասերով փոխ առ փոխ երևան են գալիս ունկնդրի աչքի առաջ, հարցումներով զիմում իրար, պատասխանում, հիացմունք հայտնում, խոսում մեծ ցնծութեամբ ու հովատով: Տեսարանները հեռզհեռե փոխվում են, ամեն ինչ շարժվում է, կարծես՝ մի վեպ է պատմվում դրամատիկ ձևով. ամբողջը կազմում է մի մեծ գործողութիւն, որոգ ու եռանդուն ընթացքով: Ճատախոսը սկզբից մինչև վերջը մեծ ավյունով ու սրտի զեղումով բանաստեղծում է ինչպես մի քերթող, վառում է ունկնդիր ժամավորների երևակայութիւնը, նրանց տեսնել է առիթ իր պատմածը և յսել է առիթս գործող անձերի խոսքերը: Ահա թե ինչ է նրա արվեստի բնորոշ կողմը—ազգել ժամավորների երևակայութիւն վրա, առաջ բերել ոգևորութիւն ու ցնծութիւն առնել առթիւ, Այժմ իսկ՝ կարդալիս մարդ գրավվում է, հաճույք ստանում նրա վեպի, ազնիւի ու խայծառ խոսքից, մեր մեաց այդ գեղեկազմ աղամարդի կենդանի բեմաստեղութիւնը լսող հավատացյալներն այն դարում: Բայց ներսես Լամբրոնացին հետամուտ է ոչ միայն ազգելու և հավատը մեծացնելու, այլև կրոնի ուսում տալու: Այս նկատմամբ էլ նրա ճառը շատ հարուստ է, բովանդակալից, նվա սովորեցնում է քրիստոնեական գիտնադիրութիւնը հաճախ Ս. Գրքի բաժերով ու խոսքերով ոչ միայն պատմելով, նկարագրելով, ուրիշներին խոսեցնելով, այլև նույնիսկ մեկնելով, բայց այնպես նուրբ ու թեթև եղանակով, որ չի զգացվում, թե մեկնում է:

Համբրոնացու այս երկի վրա դիտմամբ ավելի երկար կանգ առանք, զի դա մեր ընտիր ճառերից մեկն է, միանգամայն և մի ալայժառ օրինակ է. թե ինչպես, այս գրական տեսակը երեքն է նույն հին կրոնական ներբողյանը, բայց փոխվել է ձևի և ամբողջ հորինվածքի զեղեցկությամբ: Այդ բխում է ոչ միայն հեղինակի տաղանդից, այլև ընդհանուր նորոգիչ ոգուց: Ներբողյանի կամ ճառի այս զեղազուտ վերամեղմ էլ մի արատահայտություն է նոր մտավոր հոսանքի. իսկ Համբրոնացու այս ճառը, և իսկ նման թեմաներով հին ճառերը:

8. Ուրիշ արշտարարություններ:—Ինչպես վերևում ասվեց, մեր այս հեղինակը շատ վաղ հասակից սկսել է շարագրել և անդուլ ջանքերով գրել է բազմաթիվ երկեր:՝ Նրանից մնացել են բացի արդեն հիշվածներին՝ նաև ուրիշ թղթեր ու ճառեր, շատ մեկնություններ, այլև չափածո գրվածքներ— շարականներ և ուրիշներ, որոնք մեծ մասամբ կրոնական բովանդակությամբ ունենալ: Նրա հորինած հոգևոր երգերը չունին բանաստեղծական արժեք. համարձական շարականների մեջ, օրինակ, նույն ճիստոնեական գրուցաբանությամբ և հեղինակությամբ սառն և անաղակալ. բայց դժվար թե ամբողջ կանոնը՝ մեր այս հեղինակի գործը լինի: Փոքր ինչ եռանդուն և իմաստավոր է ճառի կանոնի հայանի օրհնությունը:³

Այսօր յարեաւ ի մեռելոց

Փեսայն անմահ և Երկնաւոր,

Գեղ աւետիք խընդութեան,

Հաւան ի յերկրէ եկեղեցի:

Օրհնեալ ի ձայն ցընծութեան

Ջոտառած քո, Սիւն:

Այսօր անճառ լոյսն ի լուսոյ

Լուսաւորեաց զմանկունքս քո...

Այսօր խաւարն անգիտութեան

Հալածեցաւ երբեմն լուսովն:

Նւ ճիգ ծագեաց լոյս գիտութեան...

Ն. Համբրոնացու ամենամեծ ոտանավոր գրվածքն է՝ «Գովեստ ներբողական պատմադրական բանիւ յազգս վարուց մեծի Հայրապետին տեսն ներսիսի հիւյսեցւոյ հայոց կաթողիկոսին»⁴ Այս 937 տողից կազմված չափածոն հորինված է ներսես Շնորհալու հեանդությամբ ութավանկ տողերով. հանգքը փոխվում են մեծ հաղածներին հետո: Դա մի պոեմա, մի լեզված է բառի սկզբնական նշանակությամբ իբրև արվեստով բովանդակի գործ, կամ ինչպես ընդհանրապես կոչվում են ոտանավորով հորինված երկերը, մասնավոր երբ մի որոշ երկայնություն ունին և վիզուս են արև:

³ Բազմաթիվ մեկնություններ, երեք թուղթ, հինգ ճառ և այլն, 86 և 2-ը հաշվում, Հայկ հին պարսկյան, էջ 654—660.

⁴ Շարական, էջ 1-ից, 1861, էջ 9. և հաշվ.

⁵ Այդ, էջ 263.

⁶ Տղաբերված է ի թուղթ ընդհանրական... ներսիսի Շնորհալու, էջ 1-ից, 1865 թ. էջ 461—467.

դեպք: Այդպեղ պատժուած է Շնորհալու: Կենսագրութեան ժառին: Բայց դա
մի քնարական, լիբրիկական ցերթոված է, ցանի որ դրա մէջ որոտահայտված
են նաև հեղինակի զգացումները առ Շնորհալին: Նա ոչ միայն պատմում է,
այլև գտնում, ներբողում է: Այսպես լինելով հանդերձ՝ նրա այս մեծ երկը,
ինչքան էլ ուսանողորով է հորինված, չունի առանձին գրական արժեք,
որովհետև չի արտահայտված բանաստեղծական ներշնչումով, կենդանի
պատկերավորութեամբ: Որքան նա ջերմ, բուռն մի հետաքրքիր է հանդիսանում
իր ճաշերի մէջ, այնքան պող ու թուշ է իրեն ցերթող: Գուցե այդպես
է ժամօրէն և այն պատճառով, որ նա անվարժ է եղել ուսանողներ
հյուանդու:

...Ձմերն յընարելոց ալօց տեսի,
Գովել բանիւքս բողձացի:
Այլ զի անվարժ ի չափ առդի,
Ուսանաւոր տառից կարդի,
Բերթողական մեծ արհեստի
Ձեզեալ ներհուն ըստ արժանի...

Սիւ այսպես վերացական ժառութեամբ է հորինել նա այս «Գովեսան»
ընդհանրապես: Չափադանց ներբողում, մեծացնում է Շնորհալուն, բնու-
թագրելով նրան՝ իրեն տեր բողում աւ բովմալան բարեմանութեան-
ների: Այդ ժամանակ մեկ մեկ նա զիմում է սովորական ձեերի:

Բանիւքն աղբիւք յարդ հոսեցաւ,
Ծիծաղապէս ձաւալեցաւ,
Որնչ ընդ աշխարհս ծովացաւ,
Նա արբուցիչ ժարգիւն գըտաւ:

Հետեյալ տղերքը սակավթիվ գեղեցիկներին են.

Մտղիւալ աղինք մեք փըթթեցան,
Սրանդ երանդ դաւնով ներկան,
Ի նա գաբունա ուրախացան,
Շքեղ փառօք ճախ փայլեցան:
Մարգարեանք և խաղ ցընծան,
Յարոց անուշ հառ բարեցան...

Նպաստին եղել է իրեն շնորհալու և աշակերտ գովելով պատմել
Շնորհալու ժառին, նրա վարքն ու արարքը:

Շարժեալ ստիպել հարկ տեսնի
Ըղջ-բողբոսի իմըս բանի՝
Նիւթ գովեստի տալ յաղաւնի
Հօբն որ արժան վարուց պատուի:

Այսպես է սկսում նա իր երկը, և քիչ հետո գրում է.

Բանդի բողում հոգի բողձալ
Տեղեկանալ դայս յարակայ,

ման առ դատաւորս քաղաքաց՝ յիւրեանց յօրինացն զառ թողուլ վնասին։
Եւ եկեալ ոսոթք յեկեղեցին՝ հարցանէին աւրէնս ի քահանայից և ի քահա-
նայապետաց. ոչ ունէին գիրս, որով ընտրեսցեն գիշաւանս. զոր և այլոց
ազգաց անասնէին՝ քրիստոնէից և մարիամնաց տոյսինքն հոռմայեցոց, հել-
լենացոց, ասորոց, եգիպտացոց, տաւրեցոց, պարսից և այժմու իշխողացս
թուրքաց, ի խնդիր եկին ապա առ հայրապետս ի Հայաստանեայց՝ ար-
թուշ, կղերիկոսք և աշխարհականք, խեթկեալք յայլոց ազգաց և նախա-
նեալք զարաւաքն։ Եւ խուզեալ ընդ նա մեր՝ յարկեղս զորոց կաթուղիկոսա-
րանին՝ ոչ գտաք աւրէն։ Բայց միայն զկանոնականս, որ ի սուրբ հորցն
ժողովելոց էր գրեալ. և որ ի նոյն յարեցաւ ի նոցանէ կանոնս զգուշաւորս
եկեղեցւոյ, իսկ քաղաքի տօրեմո ոչ գտաւ ի մէջ Հայոց, ոչ յեկեղեցիս և ոչ
առ իշխանս։ Եւ կորի վշտացեալ հայրապետն՝ խնդրի ասնէր առ այլ ազգս
և պատահեալ անդ յասորոց թէնդոս անուն կիրթ յիմաստութեան քահա-
նայ, յայտնեաց անունս զի զոյր առ ինքն այս համաստաւ տարինագրու-
թիւնս, և հրաման առեալ ինձ աստուգեալ իւր ձեռնասուռն որդւոյ Ներսէսի՝
յեղաշրջեցաւ ի հայս, նմին յիշատակ բարի, և զկնի եկելոցդ ուղղութիւն
ընթացից։ Յեա որոյ ապա և ի հեղինացւոց տարբի թորգմանութիւն մով-
սիական տարինացդ և Լէոնի և Կոստանդնայ տարինացդ, ի նմանէ թորգ-
մանեցի և զգիցնութեամբ տօրեմէդ. և քննայեցի որոց սիրենն վարիւ սովա-
ւ և հաւոյ դատնիւ աստուծոյ, և կառավարիչք քաղաքաց և դատաւաց։

Ներսէս Լամբրոնացին այս հիշատակարանի մէջ շատ լավ բնորոշել է,
թէ ժամանակի ինչդիսի կորիցից են ձագել քաղցածութեան օրհնանքի ժո-
ղովածուները, որ մինչ այդ չեն եղել հայերի մէջ։ Բայց այդ միանգամայն
և Կիլիկիայի լայն զանազան զանազան էր և վերածնունդի շրջանի նոր
մտավոր հոսանքի արդյունքը, ճիշտ նույն ժամանակներում, մի ութ-ինը
աւարի առաջ, 1186 թ. սկսել էր կազմել և Մխիթար Գոշն իր «Դատաս-
տանագիրքը» հյուսիս-արևելյան Հայաստանում՝ և այս ոչ թէ մանկապ-
կանների ազգեցութեամբ, այլ օրինագիրք ունենալու պահանջից։ Բայց,
ինչպես երևում է, Մխիթար Գոշն գործը գեո հայտնի և աւարածված չի
ևզել, գուցե և գեո չափարտված։

ԱՌԱՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՄԽԻԹԱՐ ԳՈՇ

1. Հյուսիս-արևելյան Հայաստանի արդարապես մտանկապական բնորոշու-
թյունից — Մելիսեդյան տերութեան մէջ 11-րդ դարի վերջերից սկսվում են
ներքին խռովութիւններ. առաջ են գալիս կենտրոնից անջատված անկախ
իշխանութիւններ թէ Հայաստանում և թէ այլ երկրներում։ Վրաստանը,
որ համեմատաբար զերծ էր Կոստանդնուպոլսի թուրքերի գերեզման մեծ ավերածութեանցից,
կորուզանում է շուտով զորհում. նրա թագավորներն օգտվելով թշնամի-
ների ներքին գաղութիւններից՝ իրենց երկիրը մաքրում են նրանց բռնա-
կալութիւններից։

Գեորգի Գ. Թագավորի օրով հանդես է գալիս Զաքարյան կամ շեր-

կայնաբաղուկն (վրացերեն՝ Մխարգրձելի) անունով հայտնի հայ իշխանական տոհմը, որ հաստատվելով Ջորադեհում՝ խնամացել էր այնտեղի Բագրատունի թագավորների հետ և որի սերունդներն իրենց արձանագրությանը մինչ իրենց համարում էին ձագուսով Բագրատունի՝ Եղգզե Բագրատունեանն։ Այդ տոհմից Սարգիս անունով մեկը, իբրև ժամանակի հայասի մի աղառնյալ, 1161 թ. դառնում է Անուկ կառավարիչ, իսկ 1174-ին՝ կառավարիչի տեղակալ։ Նա նշանավոր է դառնում ավելի ևս թաժար Թադևոս (1184—1210 թ. թ.) որով, Սարգիսը կաթվում է Վրաց Թագավորության տիր-սպասալար, այսինքն՝ սպարապետ։ Մի ասարի հետո նա մեռնում է։

Սարգիս որդիները վայելում են Թաժար Թագուհու շնորհքը և կառուցում Վրաստանում ամենաբարձր պաշտոնները, նրանցից Ջաքարեն դառնում է իր հորից հետո՝ ամիր-սպասալար, իսկ Իվանեն՝ աթոքիկ, այսինքն հաղարապետ։ Այդ երկու եղբայրներն ևս շատ նշանավոր են հանդիսանում և մեծացնում Թաժարի Թագավորության սահմաններն ու փառքը։

Ջաքարյանների մեծ աջողությունները անդի էին ունենում այն ժամանակ, երբ Լևոն Բ-ն ընդարձակել էր իր երկրի սահմանները՝ Կիլիկիայից դուրս նվաճումներ անելով և ձգտելով դեպի Մեծ Հայաստան։ Թվում էր, թե Ջաքարյաններն ու Լևոն թագավորը պիտի աջողին միմյանց մեռնել մեկմեկ, միևեկ եղբայրները հարձակվում են և Էուբյան (Նուբյան) իշխանության վրա, պաշարում նվաթ ջաղաքը, բայց Իվանեն անզուգուրության հետևանքով գերի է ընկնում, և ստիպված են լինում հաշտվել և քարեկամության դաշինք կնքել՝ Իվանի դուստրը կնության տալով Էուբյան մեկնեցերին։ Ջաքարյանների առաջխաղացումը կանգ է տանում Հայաստանի հարավ-արևմտյան կողմում մզիպտոսի Էուբյան հզոր տերության հետ։ Դրա փոխանակ Ջաքարեն իր արշավանքը մինչև իր մահը շարունակում է դեպի Ասորականության կողմերը։ Թե ինչպիսի կախում են ունեցել Ջաքարյանները Վրաց թագավորներից, այդ դեռ լիովին պարզված չէ։ Բայց նրանք հղել են Հայաստանի տերերը, ամեն կարգադրությաններ անելու անսահման իրավունքով։ Նրանք անվանում էին իրենց մեծին գահաված երկրքը թագավորություն, բնեցնակալ պետություն, իսկ իրենց՝ նաև թագավորա, շահինշահ։ Կիլիկիայի հայ եկեղեցականությունն ևս Ջաքարին ուղղած իր թղթի մեջ նրան կոչում է ամեն սպարապետ և շահնշահ արևելան կողմանցնա՝ Նրանք Հայաստանի դավաճաններ ոչ միայն իրենց էին ստիպում, այլև ասլիս էին իրենց ղեկավարի հայ աղնավական առկմերին, որոնք իբրև վասալներ ենթարկվում էին Ջաքարյաններին և անվանում էին նրանց իրենց թագառոնը, այսինքն տերը։ Այսպիսով վերականգնվում է և ուժեղանում Հայաստանում ֆեոդալական (ավատական) հասարակական-պետական կառուցվածքն իրեն հատուկ հիերարխական կողմով ու կախումով միմյանցից աստիճանաբար։

Իշխանության կենտրոնն էր Անի քաղաքը, որ թուրքերի տերության ժամանակ էլ պահել էր իր առևտրական մեծ քաղաքի դերը։ Կային և

¹ Կիր. Գանձ. Պատմ. Հայոց, էջ 186.

ուրիշ տակադրական կենտրոններ, նրա հայ իշխանություններ են կազմում, ավելի ևս զարգանում է տակադրը նաև Արևմուտքի հետ Կիլիկիայի միջնորդ։ Բարձրանում են ժամաակաշենքերը, որոնք ունենին ոչ միայն դրամական մեծ հարստություն, այլև զինուժներ տնելով կամ վաշխառությամբ տիրանում էին մեծ կալվածներին և աշարժ կայքերին։

Տնտեսական զարգացման հետևանքով առաջ է գալիս կուլուրական բարգաժանում և շինարարությունը քաղաքներում։ Մագնում է նաև եկեղեցական շինարարությունը։ «Շինեցան բազում վանքերայք, որ ի վաղուց ժամանակէ անաթի տւերաւ էին ի հնիցն Իսմայէլի,—գրում է Կիրակոս Գանձակեցին (էջ 165),—վերստին նորագեցան եկեղեցիք... շինեցան և նոր վանքերայք և եկեղեցիք, որ ի հնոցն չն' էին լիւլ վանքայ։ Վանառահաններն ու ֆեոդալները ոչ միայն այնպիսի շինքեր էին կառուցում, այլև նվերներ էին տալիս վանքերին ու եկեղեցիներին և ամեն կերպ հպատակում նրանց։ Այս եղանակով նրանք միջոց էին գտնում իրենց կուլտուրայի հարստության մի մասը դարձադրելու։

Ասել չի ուզել, որ ինչպես Բագրատունիների յըլանում, նույնպես և այժմ հարստությունը տանում էր նաև դեպի նախ ու փարթամ կյանքի վայելչությունը։ Բայց ինչպես այն ժամանակ, նույնպես և Զաքարյանների օրով սրված էր վայելող և այնտապի որդասկարգների հարթերը։ Բուն աղտագրող ժողովուրդը ենթակա էր անխնա կեղեցման ու չափազանցման։ Այսպիսի սոցիալական հակասության հետևանքով բնականաբար սրվում էին սոցիալական հարաբերությունները, և իրար դեմ կանգնած էին երկու անասանակ հակառակ կողմերը։ Նույն ֆեոդալական դուրթյունն ու դասակարգային ներհակադրուն էր և արևմտյան հայության մեջ ու Կիլիկիայում։ Շափարիզող այնտապի դուրթյունն ավելի ևս ծանր էր մահմեդականների իշխանության տակ մնացած ժողովուրդի համար։ Պրիզոր Տղան (1173—1193 թ. թ.) դեռ իր կաթողիկոսության առաջին տարիներում, ուրեմն Զաքարյան եղբայրների իշխանությունից առաջ, միութան խնդրի առթիվ Պրիզոր Տուսեթորդուն ի հաղթապառազան թղթի մեջ¹ գրում է. «Յմանայն Հայսց ապագց հեկեցիցիքս որ յայդ կողմանքն են, մանաւանդ թէ ի բոլոր սեւս՝ խաղաղութիւն, անդարբութիւն ևն է պարգևեալ ի վերստա։ Թաղաւոր քրիստոսասէր, և իշխանք բարեւոյաւանք, պարզեք դաւաւաք և անդոց՝ հոգևոր և մարմնաւոր հանդերձ աղտաութեամբ. և դուք կամուռ անդիտանայք և անախառնէք զբեկումն ազգիս, և ստալոց պատճառոց հրաժարէք ի զլիսոյս կուլմանէ... երբ դուք հրաժարէք, յատույ զմզ կուլեմք. զԱյլբարաւանդ եթէ զհարեցիք, եթէ զՏարոնեցիքն՝ որ նեղանալ և զդուռալ են ի հարկապահանջ բանակաւանց, և կարօտին միայն տալին պարենիս։ Այսպես է նկարագրում Պրիզոր Տղան հայերի վիճակը մի կողմից մահմեդականների, մյուս կողմից վրացական իշխանության ներքո Գեղարք Գ-ի օրով, երբ սա Անին արդեն տուել էր։ Նա քրիստոնյա տիրութան մեջ ապրող հայերի վիճակին հակադրում է առաւելալ դաւա-

¹ Պրիզորի կաթողիկոսի Տղա կուլիս Նամակնի, «Գառախանի թղթոյն վարդապետին Պրիզորի Տուսեթորդան...», Վենետիկ, 1865, էջ 67 և հա.

թյունն այն հայերի, որոնք զեռ գտնվում էին մահմեդականների մեծին, թայց հիշված հեղեղի և մարմնավոր ազատության հանքին միայն բարեպաշտան իշխաններին և հոգևարականներն ու վանականները, Սրանք էին իշխաններից ստանում ազորագրեց գաւառաց և անդրոջ: Ինչ աշխատավոր ժողովրդի անասական վիճակը ձմեր էր: Այս մասին, ինչպես սովորաբար, անուշադիր են պատմագիրները, բայց ոչ մեր այլ զրույցն հիշատակարանները, առանձնապես առականը, որ կանանքը հետո:

Որ իշխանները հովանավորում էին վանքերը, այդ միայն նրանց բարեպաշտությանից չէր բխում, այլև նրա համար էր, որ զիտությանը, ուսումն ու զբաղմունքային, ինչպես առաջ, հոգևորականներն էին մշակում գլխավորապես վանքերում: Երևելի են հանդիսանում բազմաթիվ վարդապետներ, որոնց մեջ իր կյանքով, իր ուսուցչական և գրական գործունեությանը փայլում է Մխիթարը, Գոշ (աշտարձ կաթմարում) ավելի անուշով: Եվսպես կաշէին զանազանում, ջանքի հեղադրյալ ենկին ավելի նորա, բացառում է հիբակոս Գանձակցին (էջ 208):

Նշանավոր վարդապետներից է և Հագարձին վանքի առաջնորդ Խաչատուր Տարոնցին՝ ազդեցություն հայակալ, մանապես երաժշտական արուեստի: Սա պայծառացրեց զուրբ ուրան՝ որում առաջնորդ էր ինքն, որ յառաջ ջան զգալն նորա՝ ամայի էր և խամբացեալ: Ջառ պատու էր մեծագէտ Թագաւարն Վրաց Գիորգի, հայր Թամարին: Եւ եկեղեցւոյն մեծնազորով իւրով եւ զբերկուս զհայն, զԱրաստան և զՏանձուան, և այդի մի ի Միջնաշինին... Սա երեք զիսան ի կողման յարկերից, զանաբարին եղանակն ի մարմին անն, զբարեպաշտ յիմաստան, որ ցայն մամանակ չեւ էր սփռեալ ընդ աշխարհ: Սա եկեալ գրեալ և ուսոյց՝ բողոքաց՝, Ծավոց, Կիրակոսը չի հիշում թե Խաչատուր Տարոնցին Կրակոսից էր եկել արևելք, Կրակոսից էր բերել երաժշտական խաղերը, և ինչքան են եղել զբանց հնարողները: Այդ մանանիցները շատ կիրառվում են հետագայում, բայց 18-րդ դարի վերջերից ի վեր մոռացության են արված, և այլևս հնարավոր չի եղել նրանց վերանախաջանը, որով հայանի կշիռներն մեր հագեթը երգերի հիմն եղանակները: որ խաղերով նշանակված են մեծագրերի մեջ: Խաչատուր Տարոնցին եղել է նաև երգեցող և բանաստեղծ: Նրա հորինածն է և Խորհուրդ խորին, անհատ, անսկիզբն բառերով սկսված երգը, որ ասվում է պատարագի աբարդություն սկզբում և շատ ծանոթ ու սիրված է եղել նաև իր վսեմ եղանակի համար:

2. Մխիթար Գոշի կենսագրությունը:—Այս մեծ վարդապետին մասին կենսագրական տեղեկություններ հազորում է գլխավորապես Կիրակոս Գանձակցին՝ Նա Գանձակ ջաղաքից էր: Մեղները նրան ավել են այլևս ուսումն Գրոց սրբոց: Չափազանց դառնալով նա մեծանորովել է կուսակրոն ջանալու: Տարիներ հետո ցանկանալով ավելի համուս լինել Գրոց սրբոց և առակոց խորոց՝ որ ի նոսա, աշակերտել է Հովհաննես (Յովհաննէս) Տավադցի վարդապետին, որ իր զիտությանը երևելի է եղել այն մամանակ-

1 Կիր. Գանձ. Մ. Հայ. էջ 109 և հա.

2 Անգ. էջ 105—208, և այլուր:

ները և անդեցանող շրջելով ճարտգություն տրել: Սրա, ինչպես և մի քանի ուրիշների մոտ սովորելուց հետո՝ Մխիթարն սաանում է վարդապետական աստիճան: Բայց նա չի բավականանում իր առած ուսումով, այլ գնում է արևմտյան կողմը, Սև լիճը, և չափանելով, թե ինքն արդեն վարդապետական պատիվ ունի, ուսանում է աստեղի վարդապետների մոտ և շատ ոգևոլում է նրանցից: Վերադարձին Մխիթարը հարին քաղաքում ծանոթանում է Քուրթ իշխանի հետ, որ ախտեղ էր սաարտուցեալ ի թագաւորութենէ Վրաց: Եւ շատ սիրում է Մխիթարին: Քն երբ և քանի տարի է ուսում առնում այս հեռակապով և գիտությամբ մեծիմաստա վարդապետը, այդ հայտնի չէ: Երբ վերադառնում է իր հայրենիքը, — ուսում է Կիրակոս Գանձակեցին, — նրա գիտության համբավը տարածվում է ամեն կողմ, և շատերը մողովում են նրան աշակերտելու: Բայց հետո նեղվելով մահմեդականներից՝ գնում է Պաշենի գավառը Հաթերքի իշխան Վախթանգի և նրա եղբայրների մոտ, որոնք մեծ պատվով ընդունում են նրան:

Քուրթ իշխանը Քամար թագուհու որով վերադառնում է իր հայրենի աշխարհն հայենոյ և Մահկանաբերդոյ: Թագուհին շատ մեծարում է նրան՝ առյուծ նրան նրա հայրենի տեղերը, այլև ուրիշ շատերը: Այս որիմանում է Մխիթարը, հեշելով իր հին բարեկամությունն այն իշխանի հետ՝ Հաթերքից գնում է նրա մոտ և ընակվում է Գետիկ վանքում, որ հայենո գավառում էր, Աղստե հետի վրա, գետի աջ կողմում (ոչ հեռու Դիլիջանից): Վանքի առաջնորդը, Սարկավազ անունով, որ Մխիթարի աշակերտներից էր, ուրախությամբ ընդունում է նրան: Վարդապետն ախտեղ մնում է հրկուր մամոնակ:

Սաստիկ երկրաշարժից ջրանգվում է Գետիկ վանքը: միաբանները Մխիթարի խորհրդով չեն ցրվում, այլ ի վանե Աթոբեկից խնդում են մի բերանի մայրույն տեղ, որ ամփանվում էր Ցանձուռա մոտ, և այնտեղ հիմնում են մի նոր վանք — Նոր Գետիկ: Եւ ինչ շինում են երկու փոքր եկեղեցի, հետո 1101 թ. սկսում են շինել և հինգ տարում ավարտում են մի բնակարան եկեղեցի կոթածոյ վիժօք և գեղեցկաշէն արուեստիւ, Կմբեթայարկ երկնամշման, սխրալի տեսողաց: Երևում են և եկեղեցու գավիթ գեղազարդ կոթածոյ վիժօք: Վանքի շինարարությանն օպնում են Հաթերքի տերը՝ Վախթանգ Սախենցին և իր եղբայրները, Քուրթ իշխանի որդիները և զուսաւրը՝ Արզու Սաթուն, որ Հաթերքեցի Վախթանգի կինն էր: Շատ օգնում են նաև Ջաջարեն ու Իվանեն, որոնք Քուրթ իշխանի քնոորդիներն էին: Բանալի նոցա ունէին զիշխանութիւն պաւտին, և զսուրբ վարդապետն [Մխիթար] յոյժ սիրէին. քանզի Ջաջարէ խոստովանութեամբ արդի էր նորա Կոզմոր [ուրիշ տեղ, էջ 158. Էլր հայր խոստովանութեան նմա]: Եւ ընժայեցին եկեղեցւոյն սահման ջրադարձովք լեռնէ ի լեռան, և ըով մի յԱւսանձոր և Կձօրաձոր ի նահանգին Բջնոյ և զԱղուս ի գլուխ վանացն: Երևում են մոտիկում և երկու գլուղ, այլև ուրիշ շինքեր: Այսպես Քուրթ իշխանի մերձավորներն առանձնապես՝ հոգում են Մխիթար Դոյշի վանքի համար: Նրա դուստր Արզուն ոչ միայն շատ օժանդակում է շինությանը, այլև, ասում է Կիրակոս Գանձակեցին, բարաւ և վարագորջ գեղեցիկ՝ զստեւօք իւրովք՝ ձաժկոյթ սուրբ խորանին, զարմանալի տեսողաց, ի մազոյ աշօրից կտկզագունաց, ներկեալ պէսպէս և զանազան, գործ քանդակակերպ և

նկարեալ պատկերաք, էյզրատդոյն հանուածովք, անօրինականաք Փրկչին և ալ սրբոց, որ հիացուցածէր զտեսողսնսն: և ու նուայնն անուամ է և ուրիշ եկեղեցիներն ու վանքերի համար: Այսպեա, իշխանների հովանավորությամբ զարգանում են վանքերը—այն ժամանակների կույտութեան վայրերը:

Ինչպեա վերևում ասվեց, Մխիթարի գիտնականության համբավը մեծ էր. նրա մոտ համալսում էին բազմաթիւ աշակերտներ զանազան կողմերից. ամենքը փափազում էին տեսնել նրան և սովորել նրանից: Ինչպեա ինքը Մխիթարը վարվել էր մի ժամանակ, շատ վարդապետներ ծածկում էին իրենց աստիճանը և աշակերտելով նրա մոտ՝ նորից ստանում էին վարդապետելու իրավունք: Նրա աշակերտներից ոչ անկաջներ հետապնդում հայտնի են լինում իրրև վարդապետներ: ևա մեծ հարգանք էր վայելում ոչ միայն իր աշակերտներից, այլև երկրի իշխողներից և եկեղեցականությանից: ևա հեղինակավոր էր շատ խնդիրների մեջ, որ պատարագի համար շարժական սեղան ունենալու խնդրի աթիւղ Ջաջարեն եկեղեցականների մոզով է գումարում Անիում, և Մխիթարը հիվանդության պատճառով բացակայում է, եկեղեցականներն ասում են. «Անհետք է մեզ աստեց մեծ վարդապետին տունել դոյք», այսինքն՝ ընդունել շարժական սեղանը, Իսկ երբ Մխիթարին թախանձելով բերում են, Ջաջարեն գիմավորելով նրան, ասում է. «որովհետև եկիր դու, ինձ ոչինչ է փոյթ զնոցանէ: ևա Մխիթարին ավելի բարձր է դասում, քան եկեղեցականների համագումարը: Զուայնով դրան՝ ևա չի մեծամասում, և մարդահաճություն չի անում. ևա բնավորությամբ համարձակ է և ասանց քաղվելու մեղադիր է լինում Ջաջարին, որ իշխանարար է դռնում եկեղեցական խնդիրների մեջ: ևա հզաւոցող է իր ազգի համար. պատրաստ է որոշ կրօնական ծեսերի մեջ զիջող լինելու, միայն թե ազգային կորուստ չլինի: ևա բարի է և ներողամիտ իրեն մեղադրողների վերաբերմամբ և Ջաջարի մոտ միջնորդում և ազատում է շատերին, որ զորավարն ուզում էր իրենց տեղերից վտարել:՝

Եվ այսպեա շարունակ աշխատելով և ուսուցանելով՝ ևա 1213 թ. վախճանվում է, իր աշակերտներով ու միաբաններով ջրջապատված, և թողվում է իր շինած վանքում: Նրա ծննդան թվականը հայտնի չէ: ևա մեռել է հասնելով քի խորին ծերութիւնն, ալիսորեալ և լի աւուրքք: Եթե այսպիսի ծերությունն է 80—85 տարեկան հասակը, ապա ևա ծնված պիտի լինի շուրջ 1130 թվականին: Այս արեւելյան մեծ վարդապետը, ուրեմն, ժամանակակից է ներսես Շնորհալուսն և ներսես Լուսինոսացուն, և ինչպեա սրտնք գրականության մեջ փայլուն ներկայացուցիչներն են արեւմտյան հայության, նույնպեա և Մխիթար Գոնի իր վարդապետական ու գրական գործունէությամբ արտացոլումն է յուսախաւարենիյան հայության վիճակի 12-րդ դարում:

3. «Դատաւտեմագիրք Հայոց»:— Մխիթարի կենսագրության վերջում կիրակոսը գրում է, թե «Եթող ևա յիշատակ և արձան գերեզմանի գիրս մաախօրհս յօգուտ ուսումնասիրաց»: Եվ ևա հիշատակում է հետեյալները՝ «Համառօտ մեկնութիւն մարգարէութեանն Երեմիայի, Սուրբ ինչ կանոնք, թե ինչպեա և ինչպիսի կարգով պեաք է պատարագ անել, «Գիրք մի Ողբք

ի վերայ բնութեանս՝ ի գիմաց Ազատայ առ որդես նորա, և ի գիմաց Սաայի առ զսահեսա նորա, Վերջը մի յայտարարութիւն ուղղագիտութեան հաստատոյ ընդդէմ ամենայն հերձուածողաց՝ ի խնդրոյ մեծ զորավորին Զաքարէի և հարօր իւրոյ, և Վժռայթը խրատականքը, Գիւրկոսի հիշմաներից հետեւըքէր կլիներ Վերջը, բայց այս դեռ հայտարարված և ազգագրված չէ: Ձեռագրերի մէջ նրա անունով կան և ուրիշ երկեր, որոնցից ազգագրված են Վերջըները, Վեռնիք և Վոտոստատնագիրը Հայոցը՝ Վերջին երկուսը Մխիթար Գոշի ամենակարևոր գրական գործերն են, և այդ երկուսն ևս մասնակի որոտհայտնութիւնն են:

Հայոց հին կյանքը մինչև 13-րդ դարը կամ 11-րդ դարի վերջերը առաջ չի բերել որևէ աշխարհիկ իրավարանական աշխատութիւն. հղել են միայն եկեղեցական կանոնները: Սրանցով և ազորութիւնով ավանդական դիրքերով բովանդակել են և աշխարհիկ ֆեոդալները, մանավանդ որ, ինչպես հայտնի է, նրանք ևս մասնակցում էին եկեղեցական կանոնադիր ժողովներին: Աշխարհիկ օրենսդրութիւն չգոյութիւնը բացառվում է միայն, որ մեր գրավոր գորութիւն սկզբից ի վեր շատ դարեր գոյութիւն չի ունեցել: ազգային ինքնաւրոյն պետութիւն: Բայց դարձանալի է, որ Բագրատունյաց թագավորութիւնն որով ևս, զմեծ հաջողութեամբ խզող շինարարութիւնն գործում, չի զգացվել գրավոր օրենքների պահանջ, և առաջ չի եկել հայկական որևէ օրենսգիրք: Այս բացառվում է միայն, որ շատ վաղ վերջ արվեց ընդհանուր հայկական պետութիւնը, և կազմեցին մի շարք մանր, իրարուց աշխատութիւններ, որոնք չէին կարող ընդհանուր օրենսդրքեր հրատարակել: Այս եկեղեցին, հոգևոր իշխանութիւնը, շատ զորեղ էր իր ազգայնութիւնը մերձեցնելով: Ուստի շարունակում էին եկեղեցական կանոններով բովանդակել: Անիի թագավորութիւնն վերջին առաջնամասնակցում գեա նոր պիտի հաստատար անգլան ազգային օրենքների պահանջը, բայց վրա հասավ հայկական սոցիալ-քաղաքական կյանքի քայքայումը, երբ այլևս միջոց չկար այդ մասին խորհելու:

Այդպիսի աշխատութիւնն առաջին փորձը եղել է Ալավկա որդի Դավթի մեռով: Նրա Վանոնները կամ Վանոնական օրենսդրութիւնները որոտհայտնութիւն էին հյուսիս-արևելյան հայկական գավառների առաջին բարգաւաճմանը վրայ թագավորների հովանավորութիւնն ներքո: Այդ գրութիւնն, ինչպես ասանք, գնալով դարգանում է, և առաջանում է Զաքարայանների իշխանութիւնը Հայոց երկրի մի ընդարձակ առաջնութիւն վրոտիւս կողմից մեծանում և ուժեղանում է հայկական պետութիւնը Գլխիկայում: Երկու կողմերում էլ կազմվում են հայկական ավանական իշխանութիւններ նման սոցիալ-քաղաքական պայմաններով: անտեսապես և կուլուրապես ծաղկում են նրանք, և ձգտում են ավելի ևս բարեկարգվելու: Այդ անհմիտամանակ երկու կողմերում ևս զգացվում է անհրաժեշտ պահանջ աշխար-

¹ Մխիթարայ Գոշի Դոտոստատնագիրը Հայոց. Իրաւարանական հետազոտութիւնը հանգեւծ Ժողովութեանը Վանոն և Վարդապետ Բատամանեցի, Վարդապետ, 1880. Բարձր գնահատութիւնն արժանի մի հրատարակութիւն, ընդարձակ տեսալորանութեամբ (1-180 էջ), բարձրութիւն Ժողովութիւններով և Ժողովարանական այլ ընթերցմաներով:

հիկ օրհնեցներէլ Գեաջ էր գրավոր օրինագրքի միջոցով հիմնադրել և հաստատել ազգային պետութիւններէ մեջ արդեն գոյութիւն ունեցող իրավական դրութիւննր։ Արեւմտացում այդ, ինչպէս տեսել ենք, աշխատում է գլուխ քերել ներսես կամբոսացին կայաց կաթողիկոս Գրիգոր Տգայի հրամանով, հետագայում Սմբատ Սպարապետը, իսկ Արեւելքում՝ Միկիթա Գոշը Աղվանից Ստեփանոս կաթողիկոսի հորկազրանքով։ Բայց այդ՝ ոչ լոկ կաթողիկոսների մաքի մեռնալն էր, այլ ընդհանրապես այն ժամանակի մտավորականների, մինչև անգամ Հայաստանի այն մասերում, որոնք դանվում էին մահմեդականների մեծին։ Վերջիններին դատավորները հայերի դատը չէին անում, «այլ դիւղընդուն իրաւանց՝ առ իւրեանց օրէնսն առաքէին», գրում է ներսես կամբոսացին։ Այս էր այլապէս իշխողների կարգը։ Իսկ հայերը չաւենին դատաստանագիրքը, որով ըստ օրհնեցների լինել արդարագոյատւութիւնը, և դրանից առաջնում էին դատի ժամանակ շահանքական վերաբերմունքներ դատավորների կողմից։ Ոսկները պահանջում էին ազգային գրավոր օրհնեցներ, և քանի որ այդ չկար, եւ գոհացող գիտում էին այլապէսներին։ Այս դատարանական ծանր դրութիւնը եղել է և՛ Արեւմտացում, և՛ Արեւելքում, և այս շատ խորը գիտակցում է Միկիթա Գոշը։

Դատաստանագիրքը՝ ունի մի «նախագրութիւն», որի առջին պիտի վերնագիրն է. «Գատասխանի ախցիկ, որ բամբասն դմեզ ոչ ունել դատաստանա։ Եվ ապա նա հենց սկզբից գրում է. «Հանգերհեալ գրել զգիրս դատաստանաց, յառաջ պատասխանի ապցուք նոցա, որք բամբասն զօրէնոն Քրիստոսի, թէ դատաստան ոչ կայ ի նմա. քանզի քաղումք են որ զոգնն զայլազգիս, որպէս թէ իրաւացի դատաստան ունինա։ Միկիթայր կրօնավորի աւսկնաբանի վայել պատճառաբանությամբ արդարացնում է դատաստանագիրքը չունենալը, և հետո երկրորդ գլխի մեջ բացատրում է, թե ինչ պատճառից զրգովե՛ ինքը կամենում է «զրել դատաստան»։ Առաջին պատճառն այն է, ասում է նա, որ բողոքում անկամ լուսք բամբասնս յայլազգեաց և ի քրիստոնէից, թէ՛ բնաւին ի Քրիստոսի օրէնքս դատաստան ոչ կայա։ Եվ նա թգում է տասներկու պատճառներ, որոնցից յոթնեորդէն է. «Ձի մի վանն ոչ գոյոյ դատաստան՝ երթիցն առ այլազգիս ի դատաստանա։ Ուրեքորդ՝ տեսնեմք զի այժմ ոմանք յեպիսկոպոսաց և ի վարդապետաց և ի քանոնայից և ի զլեւուր այլաբականաց և յիշխանաց զի նշտանօք և կամուռք և աղիտութեամբ Քրիստի դուզիլ դատաստանն։ Վան որոյ սակաւուք զրոյմել կամեցաք զգիրս դատաստանի, զի լիցի ի յանդիմանութիւն այնպիսեացն և յուղղութիւն։ Նա չի մոռնում ուրիշների նախատեղան խոսքերը. իններորդ պատճառաբանության մեջ գտրւալ ասում է, թե իր գիրքը գրել է, որպեսզի «յամենայն ժամ ի մեռառեալ յիշեմք. և ցուցցուք այլոց ազգաց, թէ զրոց դատաստանու վարմք, որով ըմբերանեալք մի կարօսցն նախաեւ դմեզ»։

Մեծ վարդապետ իրեն ճշգրտ է զգացել հայկական արդարագոյատւության այլապի վատթար վիճակից. «Եի բազում ժամանակաց տարակուսեալ լինէի վասն սորին իրոց ի նախաեղն դմեզ մեքոց և օտարաց.—գրում է նա։—Այլ և հարկեաք զմեզ յայս սիրեցեալ աղակերտն Սուրբ Գրոց Պաղոս հարկեցուցիլ բանիւք, և ոչ կարացի առնուլ յանձն պատճառ ունելով զազի-

տութիւնս և դատրեցոյս ակարութիւնս: Բայց երբ Ստեփանոս կաթողիկոսը մի քանի անգամ ստիպուեմ է նրան կատարել այդ գործը, նա վերջը սկսում է այն: Վերջին ժԱ. դլխի մեջ՝ «Եկառակարան սովորաւոր հայանում է, թե Էրբ (1184 թ.) և ճւր (Դասնո անապատում և Հոռոմաշին վանքում) սկսել է գրել «Նախագրութիւն»-ը, և որպիսի նեղությամբ մասնագիտացած է դժգոհութիւնները՝ «անապատագրութիւն, զի ընդ սահման բնութեան դժգոհութիւնս ունէի բանի. և զպոստիպութիւն գործեաց գնագրութեանց, և զպղծասութիւն մասնին, յորոց գնութիւն հաւաքել ի դէպ էր բանից»:

«Նախագրութիւն» մյուս գլուխներին մեջ Միխիթարը պարզում է իր հայացքը դատաստանական խնդիրների և անձերի մասին, ինչպես են՝ դատագրութիւն, դատագրութիւն, վկաներ, երդում, օրենքների աղբյուրներ, և այլն, և վերջապես մի ժողով գլուխ (թ) դարձյալ ժամանակից միտ կազմի մասին՝ «Եւրոպայ թէ ոչ է պարտ քրիստոնէի երթալ յատենան անօրինի, զի բազում է միջոցն, որպէս այժմ ցուցանէ բանս: Եւ Միխիթարը մանրամասն թվում է հայի և ժամանակակից հասկացութիւնների տարբերութիւնները: Բայց չնայելով դրան, առում է նա, «չբարեկամ տեսնեմք այժմ, զի յարժամ ի հոգևոր դատաստանս մեր գիտեն թէ ոչ արդարանա՞ն՝ դիմեն և գնան առ ալլազգիս, զի թերևս նոցա դատաստանան յաղթեսցեն ռուսացն»: Ուրիշ տեղ (գլ. 2, էջ 28) գրում է՝ երբ դատագրութիւնն ուղիղ դատաստան չեն անում, «Եւ յալլազգիս միտք ակարացն և դիմեն առ ալլազգիս երթալ ի դատաստան»:

Բուն դատաստանագրութիւնը կազմված է երկու մասից, առաջին՝ «Նկարագրական կանոն», և երկրորդ՝ «Այլաբանական օրենք»: Թե ինչպիսի աղբյուրներից և ինչպես է օգտվել Միխիթարը իր գիրքը հարկնելիս, այդ մասին կարևոր չէ այստեղ կանգ առնել: Միայն պետք է նկատել, որ նա, ինչպես «Նախագրութիւն» մեջ հայտնում էլ է, աղբյուրների պակասութիւն է ունեցել և, ինչպես երևում է, աղբյուրները մի անգամից չի ունեցել ձեռի տակ, այլ հետզհետեւ, և այսպես էլ հետզհետեւ օգտվել է գրանցից: Ուստի նրա գրքում հոգովածների դատագրութիւն մեջ զգացվում է օրենքների խմբագրման նկատմամբ որոշ ձևական թերութիւն: Գտնով բովանդակութիւնը՝ պետք է տեսլ, որ թեև Միխիթար Գոյն օգտվել է օտար աղբյուրներից, բայց նկատելի է ունեցել և հակակից սովորութիւններն ու ազգային իրավաբանական ավանդութիւնները, և հաճախ քննադատում է իր աղբյուրների հոգովածներն և իր ահապական է առաջ քաշում: Օրինակ՝ «Միխիթարը, ինչպես պարզ երևում է նորա Դատաստանագրութից, ամենեին չէ համակրում մովսիսական խիստ և վրեժխնդիր օրենքներին, և ընտելով նոցա միջից մեղադրութիւնները՝ ինքն անդադար կամ կերպարանափոխում է նոցա և կամ թողնում է դատագրութիւնը ազատ կամքին նոցա գործածելը կամ չգործածելը: Այդ իսկ պատճառով նրա Դատաստանագրութիւնը հիմնականում ունի ազգային բնույթ ու գաղափարաբանութիւն ի հակադրութիւն նախորդ

¹ Միխիթար Գոյն Դատաստանագրութիւնը հայոց. «Մատենադարան» հրատարակչի վճարով. Բաղնիք, էջ 117.

քաղաքական արջանի ալյազգի, աշխնքն մանկողական իշխողները չաները պաշտպանող օրենքներին, իրոք մանկողական կրոնի, «զի նոքա ըստ իւրեանց կրօնիցն» առնեն զդատաստանա, պրում է Միխիթարը, Այդ ազգային-կրոնական ներհակության հետեանքով «Դատաստանողքքի բոլոր հոգվածներում կարմիր թելի նման անցնում է ազգային խարության գողափորը, ուր հայը հակադրվում է «այլազգուն», ուր իրավունքն գերակշռությունը պատկանում է հայությանը, հանձին փետուրական դասի և դրա համապատասխան չափով սեղմվում, սահմանափակվում են «այլազգիներին» իրավաբանական պաշտպանության միջոցները»¹

Մենք այստեղ, հարկավ, չպիտի խոսենք այս նշանավոր աշխատության առանձին հոդվածներին մասին, բայց կցանկանայինք մի երկու կետերել Առաջին մասի երրորդ գլխից, «Թողաքս դատաստանաց վարդապետաց», և այս նրա համար, որ «վարդապետա բառը հաճախ հիշատակվում է մեր հին գրականության մեջ, Հայոց եկեղեցու մեջ վերջին դարերում գրեթե չի գործածվում՝ «արեղա» բառը. առնելով մասնական, կրոնավոր, որ ձևակերպում էր հուսակրոն քառանգ, միամտանակ ձևականներն ստանում էր վարդապետի կոչում։ Այսպես չի եղել հնումն, երբ «վարդապետ» նշանակել է «ուսուցող», «ուսուցիչ» (դոկտոր), և այդ ժամանակ իբրև մի դիտական օրհուս, կոչում՝ առանձին ծխականատությամբ արվում էր արեղաներին։ Դրանով նրանք իրավունք էին ստանում ուսուցանելու, քարոզելու ժողովրդին, և իբրև նշան այդ կոչման՝ կարող էին ձևներին դավադան ըռնել։ Վարդապետության գիտական կոչումը առլիս էին միտել վարդապետները վարդապետացուի գիտական պատրաստությունը ճնշելուց հետո։ Արդ՝ Միխիթար Դոշն իր Դատաստանագրքի մի ընդարձակ հոդվածով (էջ 88—89) կանոնադրում է և վարդապետական կարգը. քաղենք օրանից մի քանի հետաքրքիր կետեր.

1. Հենց «կարգից» ասում է նա. «Եւ վարդապետք եղիցին ըստ իրաւանց նախակրթեալք Հին և Նոր Կտակարանաց և կանոնական հրամանաց։ Սուրբն վարդապետացուները, նախքան իրենց կոչումն ստանալը, պետք է վարժված լինեին եկեղեցական ուսումով։

2. «Յերկուց և յերեք վարդապետաց կոչեսցին ի պատիւ հրամանի, թէ և պատուի միոյ աշակերտիլ. և թէ զկամա եպիսկոպոսի և կամ ևս առաւել զայլապետի ընդ իւրեանս առնուցուն, նաև զիշխանի, բարիքը ևս պարծիցեն. ապա թէ ոչ՝ ըստ օրինացն յերկուց և յերեքն հաստատեսցիլ իսկ ի մեռչէ զկարգեալսն և զանձաք ընտրեալսն իրուունց կոցցէ դատաստանի լոկուցանել. այլ ըստ օրինացն զկարգեալսն պատոււք։ Սուրբն առնվաղն երկու և երեք վարդապետ միասին պետք է վարդապետական իրավունք առլին վարդապետացունի։

3. Երկու [որք] նախակրթեալք ի մեռչէ վարդապետէ և ամբարտաւանալք՝ յայլմէ առնուցուն պատիւ հրամանի արհամարհելով զիւրն, իրաւունք

¹ Յ. Մ. Մ. Ե. Ե. Ե. Ե. — Հին հայ իրավունքի պատմությունը, հատը Ա, Երևան, 1930, էջ 80.

ի թիւն դատաստանի՝ ի նմանէ գուսեալն երկրորդելոյ: Հետաքրքիր է հետեւ-
վալ կետը:

4. Այլ գալուստիկ ար հանգիւրձեալ իցեն կոչիլ յաշտեալն հրամանի,
զհամար ուսման դրոցն արժան է պահանջիլ, թէ ուր և կամ յուսմէ՝ դատաս
[=զգիւրս] զհարաճանչելու ընթերցու ուսմամբ. ե այս առ այնք լինի, զոր
ի բազումս շրջեալ անգիտանաճ ուսմանն. զի մի պատրեալ անկատարս
զպատիւ առեալ՝ բազում ֆութաս խակաւթեամբն զործիցենա: Ուրեմն մեծ
զգուշութիւն էին բանեցնուած, որ ազեանները շտապային վարդապետական
կոչում: Իսկ եթե պատահեն կանոններին անհամապատասխան կերպով վար-
դապետ կոչվածներ, զայնպիսիս լսեցաւ իրաւացի դատաստանաւ,
առեալ ի մեռանէ զգաւագոյն՝ ապցեն ցուպ յըջողութեան: Այսպիսիներին,
ուրեմն, պեճ էր արգելիլ քարոզութիւն անել, հան և ուրիշ կետեր վար-
դապետ կոչման մասին:

Վերջապէս պիտի յեշտել, որ Միխիթր Գոշի այս մեծ աշխատութիւնը,
իբրև միակ հայկական օրինադիրը, շատ աւարածված և գործածված է եղել
ոչ միայն Հայաստանում, այլև հայկական գաղութավայրերում՝ Հնդաստա-
նում, Պրիմորի, ինչպես և Վրաստանում, ուր մտել է Վրացական օրինա-
դրի մեջ և այստեղից իբրև նյութ ծառայել ուսական օրենսդրութեան
համար: Դրանից օգտվել է և Հեթում թագավորի եղբայր Սմբատ սպարա-
պետը իր Վեպագա դատաստանաց թագաւորաց՝ օրենսդրի համար, որ
կազմել է Կիլիկիայում: Այսքան ահա մեծ է եղել այս մեծ վարդապետի
այս մեծ երկի գործնական ու կուլտուր-պատմական նշանակութիւնը: Դրա-
նից օգտվել է և հայոց հոգեւոր իշխանութիւնն իր իրավասութեան ենթա-
կա գործերի համար վճռահատութեան ելիս:

4. Առեկնիք:—Ն. Մառը,¹—որի սիրով կատարած երկարամյա հե-
տազոտութեանն է արժանացել մեր հին զրականութեան այս էություն և որի
շնորհիվ շատ բանասիրական խնդիրներ պարզված են և աւելնք Վարդանա
առեկների մեծ խնամքով պատրաստված մի ժողովածու, —ցույց է տվել,
որ թեպետ և Նդգոսի անունը չի գտնվում հայոց հին զրականութեան
մեջ, բայց հայերը հնուց անտի ծանոթ են եղել նրա առեկներին, որոնցից
մի քանիսը հիշատակվում են մեր հին մատենագիրների մեջ, Բացի այդ՝
մոտավորապես 7-րդ դարում հայկանորեն ճարտասանութեան կամ ճերթո-
ղական արվեստի զրեքից թարգմանել են Ուլիպիտու տոսկիմիրը,² որ
Նդգոսի առեկներից են հոեոորական խմբագրութեամբ. այդ առեկ-
ները, ըստ Ն. Մառի, թվով տասն հինգ են եղել, որոնց վրա հետագայում
ավելացել են նաև ուրիշները և դարձել են քսան և երեք: Հայկանորեն
6—7-րդ դարում թարգմանվել է նաև «Բարոյախօս» (Ֆիդիուրդ) կազմած

¹ Н. Марр. Сборники притч Вардана, ч. I, исследование. СПб, 1889. Զույգի, Ժողովածույ առեկաց Վարդանայ, մասն Բ, ընդեր, ԾԳԲ ԲՅԳ. Զույգի, ч. III, Приво-
жения, СПб, 1894.

Յես և՛ Ժողովածույ առեկաց Վարդանայ. Թարգմ. է. Յ. Վ. Ցուլեան, Վիեննա,
1900, Ազգ. Մատենադարան, լճ:

² Յես՝ Н. Марр. Сборники притч Вардана, I, էջ 280, ծան. մի մեղադրի նկա-
րագրի մեջ:

գրեթէ¹ որի հեղինակը հայտնի չէ և որի մեջ խոսվում է կենդանիների բարոյացի, այսինքն բարձրորի, բնավորության մասին: Այս գրքին ծանոթ են երևում նույնիսկ մեր կլասիկ հեղինակները՝ Ազաթանգեղոս, Եզնիկ Կողբացի և Ռաբրիշեքը: Բարոյաբուսն և Եզնիկոսի առակները, Ուրադիա-նոսի անուանով, շատ սիրված են եղել նույն հայ հեղինակներին, Հաս-հաս ուրիշ առակներ ևս հիշատակում են մեր հին հեղինակները:

Գրեզոր Մոզիսաբոսը, ինչպես տեսել ենք նաժականերից մեկի մեջ, պատմիչու է դարձնելու մշակութային սովորքները և ճշգրիտացնելու և հարստացնելու հետ նաև բառապաշարը: Բայց, այսինքն՝ աշակերտներին դրել, անգիր տնել և մեկնել առաջնորդ, որ և մի շատ հարմար վարժաբույժուն է եղել տղագետ մեկնարաններ պատրաստելու համար: Առաջինների հայկական ժողովածուներ, սակայն, հայտնի չեն, իսկ ժողովրդական առակները մշակելու և նրանցից ժողովածուներ կազմելու մասին՝ մասնակցություն կորսելի չէ մինչև 11-րդ դարի կեսերը և ավելի ևս ուշ: Ժողովրդական առակները, որոնցից մի քանիսը պատահաբար մեջ են բերում հին հեղինակները, նույն բաժան են ունեցել, ինչ որ մեր հին ժողովրդական բանահյուսության ընդհանրապես: Դրա պատճառն այն է, որ գրականությանը դեռ հեղեղեցականների ձեռքն էր. իսկ հեղեղեցականը, ինչպես հայտնի է, իր կոչումով արդեն ընդունակ չէր մշակելու թեկուզ մի խոնարհ գրական տեսակ, ինչպիսին առակներն են: Դրանք մեր գրագետ հեղեղեցականի կողմից ոչ միայն արժանապիտակ են եղել իրեն գեղջկական, ուստի և անարժեք բաներ, այլև իրենց աշխարհիկ բնավորության պատճառով հալածված: Զանազան տեսակի գուշակություն անողների հետ, ինչպես են՝ «հուսմայա», «հացահմայա», «հառահարցա», մերժված և հաղորդություն անարժան են համարել նաև զորախաչը, գրառեսը, լրջողը ասել էր ասուն, հետաքրքիր, զուրկարարը, առաքելախաչը: Վերջինը վերաբերում է առաքելախոսներին. հայերեն բառը, բացի իր իսկական նշանակությունից, գործածվում է նաև իրեն առակ, ինչպես որ սույն կրկին նշանակություններն ունեն համապատասխան հունարեն mythos, լատիներեն fabula բառերը: Միևնույն Գուշ գրում է հաճախ թորառե առակը, «յանգիման է առակ» և այլն, «Ողովախոս առակներից 8-րդի խրատական մասն սկսվում է թորառե առաքելաչ»:

Այսպես, ուրեմն, հնում հալածված են եղել ինչպես զուսուները և արիշները, այնպես և առաքելախոսները, այսինքն առաքելախոսները:

Բայց և այնպես կյանքը կանգ չի առնում: Հոգևորականի համար, ինչպես տեսանք, այլևս անպատշաճ չի համարվում, թեկուզ որքի ձեռով, երգել աշխարհային կյանքի բարիքները և երկրի, առանձնապես ճաղաքների, ծաղկում ու ավերումը: Նա սկսում է հորինել նաև նոր գրական տեսակներ: Այս 12-րդ դարից սկսած՝ նա, ինչպես ուրիշ երկրներում, մշակում է նաև առակներ: Եկեղեցականի իր կոչումով ուսուցիչ էր, վարժ մեկնաբանությունների մեջ գործողովող աշխարհական ձեռք. նա մեն

¹ Տղագրված են Միևնույն Գուշ առակների հետ, «Առակ Միևնույն Գուշ, Վեհա-տիկ, 1854, հունիս, էջ 187 և հետ. «Առակ Ողովախոս»:

առասպելի մեջ էլ տեսնուած էր այլաբանութիւնն. ուստի բնական է, որ նա սիրեւի խրատական այլաբանութիւնը, նվ սիրելով այդ, հոգեւորականները վերջի ի վերջո սկսուած են ժողովել ամեն անասկի պատմականներ, որոնց տալիս են խրատական այլաբանութեան ձեւը, և որոնք մեր հին գրականութեան մեջ հայտնի են մի ընդհանուր առակ անվան տակ:

Առաջին հեղինակը, որի համար հաղորդուած են, թե գրել է առակներ, է Ներսես Շնորհալիին (1102—1173), որի համար Կիրակոս Գանձակեցին գրուած է,¹ թե «Աւար և առակս խորհրդաբար ի գրոց, դի փոխանակ առասպելաց դայն առասցեն ի գինարբանս և ի հարստիս: Շնորհալու անունով Թոքսած կան 120 «Առակը վասն ուրախութեան մարդկան: Գրածք, սակայն, ինչպէս տեսանք, ուստնավորով հանելուկներ են և ոչ առակներ:

5. Միթիթար Գոշի առնիմիրը:— Իսկական առակների առաջին ժողովողն ու խմբագրողն է Միթիթար Գոշը, Ն. Մաւր կասկածուած է, թե Գոշի անունով հայտնի առակները նրանը՝ Միթիթար Գոշինը լինեն. բայց նրա կասկածը չի հաստատուած համոզել հիմունքներով: Որ հիբրակոս Գանձակեցին.— որը ոչ թե Միթիթարի աշակերան է, ինչպես սխալմամբ գնուած է Մաւր (C. n., q. 1, էջ 66 և հտ.), այլ Վանական վարդապետի աշակերտը և Միթիթարին ոչ ժամանակակից, — որ հիբրակոսը չի հիշատակում, թե Միթիթարն առակներ է գրել, այդ, իհարկե, չի կարելի իբրև հիմք ծառայեցնել, ինչպես անուած է Ն. Մաւր, կասկածելու, թե Միթիթարն է հեղինակ նրա անունով հայտնի առակների, Գանձակեցին նպատակ չի դրել Միթիթարի բարբերկերի ցուցմը առ և ոչ նրա բոլոր երկերն էլ նա հիշուած է, ինչպէս ի միջի այլոց նա չի հիշատակուած նաև Միթիթարի «Գառաւառանգիրք»-ն ևս:

Մասի կասկածի համար, սակայն, իբրև հիմունք ծառայել է նաև այն, որ էջմիշմանի Մատ. մի ձեռագրի մեջ (№ 2238), — որ ժողովածու է դանդաղեցնելի (մասամբ ամբողջական արագրված, մասամբ հասկանալի), — ի միջի այլոց կա վերջում Միթիթար Գոշի առակների վերջին մասը՝ «Առակք սանգածկանք, որի համար իբրև հեղինակ, վերնագրի մեջ գրված է Հովհաննես Մործորեցին և որի վերջում կա հետևյալ հիշատակաբանք. «Եւ զվերջացեսա ի բարեաց գործոց զստորտած զբիշ զԹոհ ծանօթ բանի և տեղեւ Երզնկացի: Իսկ այժմ՝ Մործորեցի: Աղայնս չստանալ ի բարիս զիս, և զիսն ամենայն: Ի թվականս Փրկչին ՌԵԺԶ: Եւ զպիտակ պէտս Գրիգոր զվերջին զծող յիշել աղայնս: Նույն տեղում ներքին լուսանցքու. «Իսկ ըստ հայոց էՃԵԳ՝ աւարտ հոգ գիրքս: Ապա մի հիշատակաբան ևս, որ, ըստ Ն. Մաւր, ժողովածուն կազմողին է: Վերևուած բերված հիշատակաբանից Ն. Մաւր եզրակացնուած է, թե Մործորեցին հիշված ժողովածուն կազմողը չէ, այլ առակների արտագրողն է: Որ ժողովածուի մեջ Մործորեցին գրեմել է առակների հեղինակ, այդ իբր նրանից է, որ ժողովածուի մեջ սկզբնապես առակների համար հեղինակ հիշված չի եղել. այդ իբր նրանից է, որ Մործորեցու արտագրածը, որից օգտվել է ժողովածուն կազմողը, այդպէս է եղել Որ Մործորեցու արտագրածի մեջ հեղին-

¹ Կիր. Գանձ. Գաւ. Հայոց, Թիֆլիս, 1902, էջ 140 և հտ.

նակ հիշում է ի հղել, տյո էլ ցույց է տալիս, որ Մխիթարի անունով հայանիս առակները հին ժամանակ անանուն են հղել, Հետևաբար, հետագայում, շատ ուշ ժամանակ, արտագրողներն այդ առակները վերագրել են Մխիթարին:

Այսպիսի ենթադրություններով, սակայն, և այն հանգամանքով, որ առակների ձևագրիչները հետին դարերի են, կարելի չէ անսառնալից համարել Մխիթարի հեղինակ լինելը: Բանը ար ենթադրություն է հասնում, կարելի է շատ տեսակ-տեսակ ենթադրություններ էլ անել: Քառի որ մեր ձեռք չի հասել Մործորեցու արտագրածը, կարող ենք ենթադրել, որ դա ունեցած է հղել Մխիթարի անունը, բայց սկզբի թերթը կարող էր մաշված կամ ուղեված լինել, ուստի և հիշված ժողովածուն կողմոհն առակներն անունուն դրած լինել իր ժողովածուի մեջ: Կարող էր ժողովածուն կողմոհը, քանի որ բոլոր առակները չէր արտագրում, այլ միայն վերջին մասը, մոռացմամբ չդնել առակների հեղինակի անունը: Նա կարող էր նույնիսկ դրած լինել Մխիթար անունը, և մի արտագրող մոռանալ, կամ թե անգղա-յուլյան Մխիթարի անկ Մործորեցի գնել, և այլն և այլն: Կարելի չէ լուկ ենթադրության վրա հիմնվելով հարցական թողնել այդ առակների հեղինակի ով լինելը, կամ հետին դարերում գրականների ձեռով ավելացրած համարել Մխիթարի անունը, որ կա ավելի ցանկան ձևագրիչների վրա, թեկուզ դրանք շատ հին չլինեն:

Թե Մխիթարի անունով ցանցած առակները նրանն են, այդ ցույց է տալիս նրանց բովանդակությունը էլ, որ տառնում է մեզ այն ժամանակը, երբ հայերը գեթ քաղաքական ազատություն ունեին և մահմեդականներից ավելի ուժեղ էին զգում իրենց: Եվ այդ հենց Մխիթար Գույի ժամանակն է, 12-րդ դարի երկրորդ կեսին, երբ հայերը թե Արսենյուն և թե Արսենյուն—Կիրիլիայում շատ ավելի ուժեղ էին, քան մահմեդականները:

Կանգ առնենք մի քանի ուրիշ հանգամանքների վրա ևս: Այս առակների հեղինակը շատ հմուտ մարդ է հղել, ինչպես հղել է և Մխիթարը: Նա գիտակցաբար վերաբերվելով իր գործին՝ հարկ է համարել մեկ-մեկ ծանոթություններ տալ իր կատարած գործի և ընդհանրապես առակների մասին իրեն մի գրական տեսակի: Այդ ծանոթություններից հենց իմանում ենք, որ այդ ժողովածուն իր տեսակում ժամանակով առաջինն է մեր մեջ:

Ամենից ասա՛յ տեսնում ենք, որ առակներ ժողովելն ու գրելը դեռ անպաշտոն է համարվում. ուստի և հեղինակը բացատրում է, թե ինչու է ինքը գրել. «Թեպէտ անբարոն [անպաշտոն] ասացեալդ կործի, սակայն թանձրամտաց առակն ախորժելի երևին, որոյ աղաքաւ սակաւդ յօժարացած գրելու»¹ Այս ալ գործն ուրիշները ձաղրելի են համարում, և հեղինակը խնդրում է, որ չմարդեն իրեն, Ամեն անգամ որ մեր հեղինակները մի նոր բան են մտնում գրականության մեջ, ստիպված են կամ ապացուցել, թե թույլաբար է իրենց արածը, կամ խնդրել, որ չմարդեն իրենց: Այսպես, Կորյունը մեր գրականության սկզբում դեռ ստիպված է երկար ու բարակ ապացուցել, թե ոչ միայն թույլաբար է, այլև հարկա-

¹ Առակք Մխիթարայ Գույի, Խճ, էջ 30,

վոր է Մեծորդ Մայրոցի նման մարդկանց վորքը դրել Ներսես Շնորհալիս իր Ողորդութեան հիշատակարանում ստիպման է ապացուցել, թե կարելի է մեր այժմ սովորական դարձած ազգայնությունը, որ այն ժամանակ զարձանում էր միայն աշխարհիկ երգերի համար, բանաստեղծություն հորինել նաև հոգևոր բաների մասին: Հովհան Մամիկոնյանը ժողովրդական գրույցներից ու երգերից խմբագրելով «Տարօնոյ պատերազմը», վերջը գրում է. «Յերոժամ դարագրութիւնս զայս ընդօրինակէք ձի ինչ թուսնի ծաղր ումեք»... Նույնիսկ Մխիթար Գոշն իր «Դասաստանագրքին» համար, որ նորութիւն էր մեր գրականության մեջ, գրում է. «Եւ արդ մի ոք պարսաւեսցէ զասացեսոյս, զի թէ թխմար ոք իցէ՝ ուսցի, և թէ կատարեալ՝ զպակասն ի սմանէ ինքն լցցէ: Գերկոցունցն պատրաստ եմք սիրով ընդունել զկամանս: Ընչոյ տալես և նաւն Մխիթար Գոշն առակների համար գրում է վերջապահում, «Եւ արդ մի ոք ծաղր առնիցէ զմեզ, զի առնուլ ի սոցունց ի գրույցարութիւն և յասացուածս ի դէպ համարեցաք: Զան զոչ խորհականացն վարիլ սովորութեամբ: Եթէ հաճոյ ոմանց թուիցի, առան շնորհ. ապա թէ ոչ, թողութիւն մեզ արասցէ սիրով նորին» (էջ 153):

Մեծ գովարութեամբ ուրեմն, նույնիսկ առակի տեսակը մուտք է գործում եկեղեցականի գրականության մեջ: Դա ձագրի առարկա է: Դի դրա առաջին աշխարհիկ բնավորութիւն ունի. և եթե եկեղեցականը մշակում է այն, որովհետև թանձրամիտներին ախորժիկ է առակների առասպելը, և գրանով հեյա է սովորեցնել ու կրթել:

Մխիթար Գոշն առակների մեջ տեսնում է բնականորաբար երկու մաս. բուն պատմականք և խրատական եզրակացութիւնը:

Պատմականքը,—որ նա կոչում է Եղեղ, զաղափար, օրինակ, եղեղեղ և այլ բառերով,—ըստ Մխիթարի՝ լինում է երեք տեսակ՝ բարոյական, առասպելական և ստեղծական, Բարոյական առակները (բարոյք, բարցաքանութիւն բարիք, որից և բարոյախօսա գրքի կոչումը) առնված են կենդանիների բարքից, բնավորութիւնից կամ բույսերի հատկութիւններից և շատ քիչ ունեն կամ բնավ չունեն գործողութիւն: Առասպելական առակների մեջ պատմականք վերաբերում է կենդանիներին, երբեմն և բույսերին, իշխել գործող անձերի, իսկ ստեղծական առակներն առնված են մարդկանց կյանքից, գործող անձերը մարդիկ են:

Խրատական եզրակացութիւնը,—որ հեղինակը կոչում է՝ խրատ, Յղաթ, Յղաթարտութիւն և այլ բառերով,—երկու տեսակ է՝ աշխարհիկ և եկեղեցական. «Դիցուք և սակաւուք առակք ստեղծականք, որ նման ասացելոցն կերպարանէ զճարտարութիւնն աշխարհօրէն և եկեղեցականապէս» (Մխ. Առ. եր. 128):

Առակների երկու մասերից հոգևորական հեղինակի համար բնականորաբար ավելի կարևոր արժեք ունի այս երկրորդը, խրատական մասը, այն էլ միայն եկեղեցական մեկնութեամբ, որովհետև հեղինակը ցանկանում է, որ խոսակցութեան ժամանակ մեջ բերվեն այդպիսի մեկնութեամբ առակներ, զան աշխարհականների սովորութեամբ վերվել, այնինչն առակները յոյժ աշխարհական մեկնութեամբ պատմել: Ուստի խրատների մեջ կարևոր տեղ բռնում են հոգեշահ խրատներն ու հոգևոր առաքելութիւնները: Բայց

Մխիթարի նման մեկը չէր կարող անուշագիր Թաւ դեղի կենցաղական խրաւը, ոտորյա ընկերական հարաբերութիւնները, սոցիալական և ազգերի հարաբերութեան և նման խնդիրները կամ ճշմարտութիւնն աշխարհորէն:

Մի անգամ որ հեղինակի համար առակի մեջ էականն է առակի շեղումը: Թաւը, ուստի և հանդուրժող մշակում է ախպէս, որ կարենա թեղ բանի ճշմարտութիւնը: Կենսական՝ առակը հորինվում է ոչ իբրև ինքնուրուշ բանաստեղծական տեսակ, այլ իբրև մի ուսուցական, դիպակակական երկ, որ նպատակ ունի խորթելի ձեռք խրատել և ազդել: Դրա համար առակի առասպելն այնպէս է հորինվում, կամ փոփոխվում (հեր ուրիշ տղայուններից է առնված), որ հարմարվի բարձրագոյն մասին, կամ գործողութիւնն այնպէս կարգ է պատմվում, որ երբեմն նույնիսկ խրատական մասն ավելի մեծ թեղ է ըսնում, քան պատմվածքը: Ուստի սակավ ենք գտնում բանաստեղծական նկարչութիւնը, կենդանիների և մարդկանց ընկերութեան էական գծերի բնորոշում և ոչ էլ միշտ արող և ուժեղ գործողութիւնն ենք գտնում սեղմ ու պայծառ պատմվածքի մեջ, որ զնորոգեաւորն հորինված առկների կենդանութիւնն է կազմում: Արդարև Մխիթար Գոյն էլ սեղմ ու հակիրճ է, բայց ոչ միշտ պայծառ ու կենդանի: Սովորաբար մի երկու ընդհանուր գծեր է առնի նա և ապա խնդան անցնում է խրատին: Երբեմն էլ պատմվածքն այնքան կարգ է և ախպիսի, որ դժվարութեամբ կարելի է եղբայրացութիւն հանել, կամ համառ եղբայրացութեան շատ թույլ կապով է կապվում պատմվածքին, կամ համապատասխան չէ նրան:

Հեղինակը, սակայն, իր խրաւը բավական չափաբերով՝ դեռ գրում է. «Զուտեալ նշանակալ չափաբարդէս համեմատեցա՝ պատճառ տալով տեսողաց բանին նմանապէս զթերին լրացանել (էջ 30), Կենսական՝ Մխիթարն առակն ասողին ազատ է թողնում մեկնութեան թերին լրացնել, ճիշտ ինչպէս նա իր Դատաստանագրքի «կատարեալ» ընթերցողի համար եռ ասում է, թե՛ «զպակասն ի սմանէ ինքն լցնէ»: Այստեղ էլ, ուրեմն, առակների և Դատաստանագրքի հեղինակը նման ձևով է մտածում:

Բնականաբար պիտի սպասենք, որ Մխիթար Գոյն առկների մեջ ևս նույն հայացքն ունենա դատաստանի մասին, ինչ որ Դատաստանագրքի մեջ, Այստեղ Նախագրութեան մեջ (էջ 28) պատկերում է, թե պատմութեանը պէտք է ուղիղ դատաստան անեն և ապա (էջ 32) գրում է. «Եւ թէ ոսոթն յասնի անդ բանակոյի լինին՝ մի տայցն թոյլ, այլ սասանեցնեն... Ուստի և դատախազն, թէ ոչ վասն վիճոյ դան յասնեն... ըստ կարգի տայցն խոսել ոսոթացն: Այս երկու գագաթներ էլ, դատավորի բարդ մարդ լինելու հետ միասին, արտաբանական ենք գտնում մի առակի մեջ:

Հաւել պարս զարդ զպակեալ և իւր յինեալ. և եղև նա իւր իւր արդարն արդիւ ի դատաստան. և անդ զմիմեան նախաւելն և պարեմելն, ասարակ. ազլախուսութեամբ կրօնաւարութեամբ. և հաւել պարս զպակեալ զպատանդելից. և նախաւ զԱ կեղծաւարութեամբ. և ան պայլոց ասելոյ զվատակն, ինչ դատաստան երկուց ասում է հարցանէ զաւել, թէ ընդէ՞ր զպակեցը: Եւ նա ասէ. Շինուածու նշան ինչ ոչ անելի, և վասն այն ասէ ինչ և հարցանէ զարեւել. Դեւ էր եղեալ զար ասելու Եւ նա ասէ՝ այլ—Եւ կամ ոչ էր

հերիւ հեծան հզեալ ի վերայ միմեանց: Եւ առէ՛ հզեալ էր: Էջմաշէ՛ զորմաշտ-
նէ, նա և առաջանս ևս առաջ:

Ձգտութեամբով Եւդիգ հրամայէ առեկո գոտել, և ոչ յայտնի մեծաբանել, և կամ քրե-
ծամանն: զմիմեանց ղատախազողոց: Եւ զորմաշտ զի զոր չիցեմց հզեալ՝ առաջանէ շահահալ,
և ղիշահառն յայտնի՝ Թէ և յայտնի իցէ, չքակել: (Մի. շն. 118)

Այստեղ, ուրեմն, տեսնուած ենք: Թե ինչպէս ոսոխները՝ Համլարն ու
Տատրակը, դատաստանի են դնում արդար Արագլի մոտ: Բայց նրա առաջ
իրար նախատում են, իրար հետ միմեան են և ամեն մեկն իր արժանավո-
րութիամբ պարծենում: Դատավորն երկուսին էլ սաստում է, ապա հարց ու
փորձ անում և դատաստան կտրում:

Տեսնենք մի ուրիշ գին էլ: Դատաստանագրքի մեջ (Նախադրութիւն,
էջ 29) Միխիթարը պատվիրում է, թե «Դատաւորն մի լուիցէ զոսոխին կամ
զդատախազին բանսն միայն... Այսինքն նա մեկ կողմը միայն լսելով՝
չպիտի դատ անի: Առաջնորդից մեկի մեջ սուտ է, թե անընտրող դատող-
ները՝ լինեն թագավոր, իշխան, դատավոր, թե եկեղեցու առաջնորդ, բան-
փորձապէս դատապարտեն, այսինքն առանց քննելու դատապարտում են
նախնիսկ արտաքին տեսքից կամ համբավից (այսինքն ուրիշներից լսելով)։
և առակախօսը պատմիրում է: Թե չպետք է թի տեսլենէ կամ ի համբաւէ
դատել:» (Մի. ԺԷ. 19):

Նկատենք և հետևյալը:

Միխիթար Գոշի առաջնորդը, որոնց թիվը 190 է, խմբագրված են, ինչ-
պէս վերևում ասացինք, մի շատ հմուտ մարդու ձեռով, ինչպիսին իրոք
եղել է Միխիթարը: Դրանց համար նա օգտվել է նշույնստ առաջնորդից ու
Բարդախոսից, ինչպէս և այլ զբաղող աղբյուրներից ու ժողովրդական
առաջնորդից: Անպայման կտն և այնպիսիները, որ հեղինակի իրեն ստեղ-
ծածն են: Նա, ինչպէս երևում է, մեծ նյութ է ունեցել ձեռի տակ, բայց
ամեն ինչ որ ունեցել է, չի գործադրել, «Ջրադուստ ի գիտելեաց և յանդի-
տելեաց թողաք իբր համագորս յօրինակս և յառակս» (էջ 29), Բայց ամեն
ինչ, որ նա առել է իր ժողովածուի մեջ՝ շատ որոշ կարգով դասավորել է
ըստ նյութի, այսինքն՝ ըստ գործող անձերի, նախ՝ երկինք ու երկիր և
երկնայիններ և ապա՝ բույսեր, լեռներ, կենդանիներ ու մարդիկ: Ամբողջի
մեջ երևում է մի մտածող, կարգ ու կանոն սիրող մարդու ոգին: Այսպիսի
միակերպութիւն չուենն Վարդանա առաջնորդը, որոնք և մի մարդու գրք-
չից չեն դուրս եկած և ոչ էլ մի գարու արգասիք են:

ՎԱՐԴԱՆ ԱՅԳԵԿՑԻ ԵՎ «ԱՌՈՎԻՔ ՎԱՐԴԱՆԱՅ»

1. Վարդան Այգեկցի:—Մեր հին գրականութիւն հորատութիւններից
մեկն են կազմում և «Վարդանա առաջնորդը»: Սրանց նախահայրն է Վար-
դան Այգեկցին, որ Միխիթար Գոշից մի սերունդ կրասեր է: Միխիթարը
վախճանվել է 1213 թ. խորին ծերութիւն հասակում, իսկ Վարդանն այդ
ժամանակ արդեն աւարքագոր է եղել և անվանի՝ իր բանաստեղծական
քարոզներով: Մենք չենք և մանկան թվականը հայտնի չէ. աղբյւր է 12 և
13-րդ դարերի մեջ, Մնվել է մի բազմաանգամ ընտանիքում, հին Տլուք

զամառի Մարտի անունով մի բնակավայրում. ինքն իբրև մասին հայանում է, գրելով. «սղորմելի Վարդան որ ի Մարտիայոյ, որ է՝ ի Մարտիայոյ, Սահմարել է Կիլիկիայի Արքեպիսկոպոսի վանքում (Ասիոյ հյուսիս, մի լեռան վրա), որ մի՛ ժամանակ եղել է կաթողիկոսական աթոռանիստ: Այդ ժամանակ և մոտիկ ծանոթացել է մի քանի իշխաններին՝ այդ ժամանակահատվածում մասնավորապես, — գրում է նա:

Այնտեղ նա ոչ միայն կաթողիկոսներ է իր ուսումը, այլև մշակել է իր համար դարին համապատասխան արդյալաբանական հետազոտություններ իր թղթերից մեկում հայտնում է, թե նվեր պիտի տալ սեփական աշխատանքով ձեռք բերած միայն, որ աստուծուն բնական լինի. բայց իշխաններին այդ վիճակված չէ. «Պանդի վայել էր նա որ իշխան կամ առաջնորդ կացուցանեն յայս քաղաքի ի դառն ժամանակիս: Զի թէ մեք որ սակաւ ունիմք զկարիքն, և իշխանութիւն և կարողութիւն ոչ ունիմք, բայց փոքր ի շատեալ ասանց զրկանաց ճշ կարեմք մնալ, ապա վասն նոցա զի՛նչ ասացից, որ ունին զիշխանութիւնն և զկարողութիւնն և զբազում կարիքն և զաւելորդն և զբազում ծախքն, զոր բազում անգամ տեսայ շրջելով ի մէջ նոցա: Եւ ազաւտեալ ժամանայն որքոց թողցէ աստուած նոցա և մեզ ողորմութեամբ իւրով, քանզի մարդիկք եմք զիւրակործանալ իշխանների ստացվածքն, ուրեմն զարկանքին վրա է հիմնված. և այդ ասում է նա իբրև իրականութիւն: Ինչպես նկիւնն Հաղկիւր թագաւորի չարութեան մասին խոսելիս՝ ասում է. «Թէպէտ և աչ ունիմք հրաման բաժնասել զիշխանն, բայց և ոչ գո՞վողք կարեմք լինել այնմիկ՝ որ աստուծոյ ամբարտն լինիցի. այլ զանցա իրացն պատմեմք... ոչ բաժնասել մտօք, այլ համարութեամբ զելս իրացն տեսլով, նույնպես և Վարդանն սկզբից զնում է, թե իր ասածը բաժնասանք չէ. «Եւ զայս ասելով ոչ եթէ բաժնասանք զիշխանն, քան և մի իդի ալս. զի զրեալ է. թէ մի բաժնասանք զիշխանն մողովորեան քո: Այլ ողորմելով նոցա՝ զչարութիւնն ստատանքի ցուցանեմ ձեզ: «Ստատանքի չարութեանն իշխանների ձեռով:

Եվ տեսնել, թե նա ի՛նչ զգվանքով է վերաբերում զեպի մի իշխանի կես զահեկան չարավաստակ նվերը, որ նա ավել է ընդհանուր եղբայրութեան Արքեպիսկոպոսի վանքում: Նա գիշերը երազներ է անում և այդ մասին. «Ջուտեմքն ինքով» յորժամ ասի (նվերը մի իշխանից), տեսայ ի նմին գիշերիս, և անա լցաւ իմ քրան իմ յանկարծակի զաղբիլի աղբով, և ոչ կարէի թափել զնա ի քրանիս իմմէ. և իմ խնդրեալ անգոյթ տեղի՝ փսխեցի զնա, և զուր տարն ոչ փարատել հոտ զարշնթեան նորա ի քմաց իմոց: Այս յուսմանն ի ժամանակն եղև ի սուրբ ուխտս յԱրքեպիսկոպոսին: Եւ սուրբ իշխանին էր կէս զահեկան, զոր ետ հասարակաց եղբայրութեանն:

Որ իշխանի սուրբք բարձր եղբայրութեան՝ Վարդանն է տեսլ, այդ ցույց է աւելի, որ նա Արքեպիսկոպոսի վանքի եղբայրութեան անդամներից մեկն է եղել և, համարենք, մի ազատամտաւոր: Իր կյանքի այդ շրջանից արդեն նա եղել է կրօնավոր: Նրա հետագա կենսագրութեան մասին չկան տեղեկութիւններ. չի ստուգված նրա «Ամթիցի երէց» լինելը, և իր «Ժողովանները» կամ «Ժողով» ունենալը՝ նախ Ամիդոն, հետո՝ Տիւրքում: Եթե նա

«երեցն» էլ ևդած լինի, անշուշտ եղել է «մանկան» երեցն, այսինքն կու-
 սակարն ջահանա, թե չէ՝ նրան սովորաբար անվանում են «Վարդապետ»:
 Իբրև այսպիսին նա եղել է ջարդոյի, ոչ անդաման մի վանքում նստած.
 վարդապետները ջարդոյով շրջում էին և տեղից տեղ աշխարհականներէ
 մեջ: Մերութեան հասկում երիտասարդ կրօնավորներին ուղղած մի խո-
 սի մեջ՝ նա գրում է. «նոյնպէս և ես, իմ որդեակը, ի մանկութենէ մինչեւ
 ի ձերութիւն շրջեցայ ի մէջ աշխարհի [—աշխարհի մարդկանց] և տեսի
 բազումս զմեզս մեծածեծս, և անշուշտ յուսայ մեծկարար ի դարձողացն
 դէպքս. նաև ուսայ յաստատանդէն գրոց որոց ոչ դոյ թիւ: Մանկութեանից
 (—մերիտասարդութեանից) մինչև ձերութեան նա շրջել է, անշուշտ, իբրև
 ջարդոյի վարդապետ: Որ նա գրում է. «Անշուշտ լուս» ծածկադար ի գոր-
 ձողացն դէպքս, այդ նա մանուկ լսել է իբրև խոստովանահայր: Դրանից,
 սակայն, պետք չէ հետեցնել. թե նա ծխաւոր ջահանա է եղել. խոստովա-
 նահայր լինում էին և վարդապետները: Նա, ինչպէս ընդհանրապէս վարդա-
 պետները, աւելցել է և իր բերնիկ մասնագութեանը, այսինքն բուն,
 իսկական վիճակը, ջարդութեան թեմը «Կրօնական» երկրում, «Տիւղոյ դա-
 տաւում», կենտրոն ունենալով իր հայրենի Մարաթում: Այսպէս, այս կող-
 մերում 11-րդ դարից ի վեր կազմված էին հայկական մեծ գաղութավայ-
 րեր. «այստեղ՝ Տիւղ գաղութում էր և կաթողիկոսական Մովսէս բերդը: Բնա-
 կան է, որ Մովսէսից կաթողիկոսական աթոռի տեղափոխութեանից հետո՝
 նույն գաղութում եղել է հայկական հոգևոր իշխանութեան և պետք է եղել
 նաև մի ջարդոյի վարդապետի: Թե ինչպիսի հայ բնակչութեան է եղել
 այն գաղութում և նրա ջարդոյներն իրենց բովանդակութեամբ որպիսի
 ազդու են ունեցել տեղական ժողովրդի կյանքի հետ, այդ պարզված չէ:
 Նա մի ջարդոյի մեջ դիմում է և արանց և կանանց («Դուք՝ դուք արանց,
 «Դուք դուք կանանց») և առանձին խրատներ առին նրանց. կանանց հար-
 դարում է, որ հնազանդ լինեն և հոգաւոր, իսկ արանց՝ որ սիրեն իրենց
 կանանց և ջարդոյութեամբ խրատեն նրանց, զի նրանք կարճամիտ և տկար
 են: Բայց արանք ջարդոյական ընդհանուր տեղիներ են: Նույնպէս սովոր-
 ական է հանդիմանել կանանց, նրա համար որ զարգարվում աւ պնդում
 են, երեսները շարաւում, ունեցելին դեղ գնում, որպէսզի գեղեցկանան ի
 գայթակղութեան երիտասարդներին, կամ գեղեցկով իրենց գրկում են երեխա
 բերելու ընդհանրութեանից, և նույնը սովորեցնում ուրիշներին: Մի
 արիւշ ճառի մեջ նա դժուարի առնջանցներով սարսափեցնում է վախառու-
 ներին, մշակներին վարձը կարողներին, նրանց, որ գրկում են արեւներին,
 այրիներին աւ անանկներին կամ խաբում չափ ու կշռի մեջ, նրանց, որ
 կաթի ու զինու մեջ շուք են խառնում և տխուր ետխում: Այս ամենն էլ
 սովորական, նույնիսկ աստվածաշնչյան մոտիվներ են:

1 «Մասնագութեան» արքա զրոց իբրեւ վարդապետականութեան կարգ ի կարգ, և
 համառու միայն զբանիցն գրել սպարմելոյս Վարդանայ որ ի Մարաթում, և այժմ ի ձեռք
 Մուշք լիբին միանձնաց աւ մանկագոյն կրօնաւորս որ դոն ի կարգս կրօնաւորս-
 թեան և կամ միանձնութեան ի ձերպագրութեան: Н. Марр. Сборник пр. Варад. часть 1,
 էջ 207.

Ծթն ապա բովանդակությամբ հառերն ասվել են Տյուգուս, կարելի է դրանից հետևել, ինչպես վարվել է ն. Մառը. որ այնտեղի հայ գաղութը չի եղել մի խուլ անկյուն, այլ մի առատաբար դյուցունաբերական հարուստ կենսաբան և վարպետի այդ քաղաքներն ուղղված են հարուստ քաղաքների և վաճառականների դեմ:

Ճառերի աղյուսակի բնագրանուր բովանդակությունից կարելի չէ ենթադրել, թե դրանց համար այն շնորհալի քաղաքիչի հալածանքի է ենթարկվել և ստիպված է եղել իրեն հալածական հեռանալ կամ փախչել իր ընդի դավառից ու հայրենի Մարթա դյուցից: Դառ պատճառը թաքցված է, հավանորեն, քաղաքական հեղհեղուկ դրություն մեջ. կամ գուցե մի ծանրակշիռ հարցի շուրջը սաստիկ բնահարման մեջ աղի իշխողների հետ: Երկու տարի նա նյութական նեղության մեջ է բնակնում:

Պաղարին իշխանի համար 1212 թ. դրած ջառներկու հառ աշխատության մեջ ստույգ է. «Են այլ յոյժ՝ ծանար եղև մեզ, զի երկու մ է [ի] դրադուն աշխարհի է-ք և ոչ բնգերձուն [ընթերցումն] գրոց. քանզի բուսն է կարիք մարմնոյ յորժամ պահաւ. զի հալածական եղաք ի բնիկ ժուսնու գուրձնէ մերձէ յերկրէն Կիւրիսոյ ե ի դաւառէն Տլըոյ և եկաք յԱյդեկս, և սասունք ի բարի-ջողհաց դամենայն զորոս մեր և զպէսս մարմնոյ, իսկ ի Եիմ օսումսն յիշեալ հաւաքեցի... Հայոց ոկա [—661+551=1212], և էր թաղաւոր Հայոց Լէոն Ըսորինեան՝ ի Կիւրիսոյ...¹ Ուրիշ տեղ նա ուսն հառի համար գրու է. «Եի շորբորդ մօի դաւառեան մերոյ ի Մարթոս ի սուրբ լերինս յԱյդեկս. և եզի ի գիրս զոր գրեցի հասս իր. [—քսան և երկու] ի խնդրոյ թաղաւորազն իշխանին որ կոչի Պաղարին: Այս շորբորդ ամս է 1212 թվականը, երկու տարի էլ նեղության է կրել մինչև Այդեկում աղիվարվելը, ուրեմն նա իր հայրենի Մարթայից, Տյուգու գավառից հալածական է եղել 1206 թվականին:

Շուտ հավանական է, որ իր ծանաթ թաղաւորազն իշխան Պաղարին (Բալզլիսի) հովանավորությամբ և հաջողվել է վարդապետի գտնու ախառն Սուրբ լեռան կամ Սև լեռան վրա 12-րդ դարի վերջին քաղաքի Նիմված Այդեկ կրոնաստանի: Այստեղ էլ վարդապետ երկար, գուցե մինչև կյանքի վերջը, մինչև խորին ներություն տպել է, ուստի կոչվել է Այդեկցի: 1280 թ. նա դեռ կենդանի է և աշխատում է ըստ մի գրության:

Այստեղ այս բանապատում է կամ ըսուրք ուխտում է նա պարագել է գլխավորապես գրականությամբ, թղթակցել է շառերի հետ, գոնազան հարցերով դիմել են նրան, ինչպես Պաղարին իշխանը, Անտիոքի Միքայել եպիսկոպոսը և ուրիշները, և նա օրով պատասխանել է նրանց. դրել է հառեր, խրատներ երիտասարդ կրոնավորների համար, «Են նուստոս յամենայնի յերիս հառս կարգեցի դառն խրատուց նորոմուս կրօնաւորոց մանդազունից և սչ ծերոց: Սկզբում նա աշխատել է ուսանց գրեցերի, հիշողությամբ, Պաղարին իշխանի համար 22 հասը հորինել է «Եի ին ուսման է իշխում: զգում է նա: Նրա գրեցերը Յուցել էին Տյուգուս, Միքայել եպիս-

¹ Արտագրող զրի տպագրությունից կամ անգլագրությունից են տարբերվում միայն ներքև:

կողմի հարցմանն էլ նույնպես է պատասխանել. «Կո՛մ ես յանապատի տաս հեռի ի գրենաց և ի մեկնաց, տեսւմ է նա. Ե՛ւ առաջի աստուծոյ անսուտ ասեմ, որ չուենիմ յանապատի տաս բազում գրեանս և կամ դեմկնութիւն հինգ բանիցս, զի եզից օրինակ և գրեցից, Ապա... սկսայց կոտորել գրութեանս քո, զոր տայ սուրբ հագին, ի հին յիշատակաց և յուսմանց, բայց և յամենայն շնորհաց որ լինի և ոչ ի մեր ջանաց. քանզի խուսաբուցաւ միւսը իմ յաշխարհս և նուազեցաւ լոյս աչացս և ակարացաւ ձերուքեամբս»:

2. Վարդանի գրութեանն քննում կամ Նյութն ետպեա Յորոքյում չե:—Նա քարոզում է, թե ավելի լավ է, որ կրոնավորները կենան եղբայրանոցներում. նրանք պիտի աշխատեն և աղբեն իրենց աշխատանքով, սեփականութիւն պետք է չունենան. նրանք նվերներ պիտի ընդունեն միայն երբ կարող են աշխատել, այն էլ միայն երկրագործներից և արհեստավորներից. որովհետեւ, ինչպես վերևում տեսանք, նա անընդունելի է համարում անարդար եղանակով ձեռք բերվածը. ուստի իշխաններից պարզ և ընդունելի թույլատրում է լոկ ծայրահեղ կտրիքի դեպքում. Այս վերաբերում է, հարկավ, կրոնավորների անձնակապին. թե չէ՝ դժվար է կտրել. թե Վարդանը քարոզեր, թե վանքերը չպետք է նվեր ընդունեն, քանի որ այդ դարում և առաջ շատ սովորական էր վանքերին տալ ամեն տեսակ ընծաներ և՛ անշարժ, և՛ շարժական գույքերով: Նա քարոզում էր, որ սեփականութիւն չունենան կրոնավորներն անձամբ և ոչ վանքերը:

ներից և բազմաթիւ այլ աղբյուրներից, հանդես բերել իր բազմակողմանի
հետաւիժումը, հորինելով ոչ թե հայոց պատմութիւն, այլ «Պատմութիւն արեւ-
զերական»: Իր «Նախերգանքին» մեջ խոստով է առաջ «անսկիզբն» ու «մի և
միակ է»-ին և նրա ստեղծագործութիւն, երկնի և երկրի ու հրեշտակների,
բնութիւն և այլի մասին, ոչ միայն ըստ Ս. Գրքի, այլև «որպէս ստան
իմաստունք», այլև «ըստ Արիստոտելին», կամ «որպէս ստան գիտողք», իր
ժամանակակիցների համար, ըստ նրանց հայացքի, հետաքրքիր մի կրօնա-
գիտական տաճիկ տեսութիւն է այդ: Բուն պատմութիւնն սկսում է Ադա-
մից ու մարդկային ողորդ անելութիւնից ըստ Աստվածաշնչի, մեջք հյուս-
ւելով նաև գիտնականների ստեղծած այլապէս գրային: Բազմաթիւներ
ու բացառութիւններ, աշպէս, օրինակ, Բաբելոնի աշտարակայինութիւն
զարդարուն գրային:

«Եւ սկսան ապա շինել գաղափարակն յառաջին ամին Ռազուս»՝ ասեն,
ոսկեղէն և արծաթեղէն սարդօք, շուրջն զնելով աղիւս՝ խորովակալ հրով
զանկեալ բառով, կրով և կղրով, արձակահին խորամէջ լայնափողոց բացեալ
զառանգեալ լուստերքք: ասեն և ակուն լուստերակն զնէլ առ զառա-
հանաւքն: Անխնի վատաւկօք զամսուն և զմիտն գործէին և հողն ձեռն
առյր. և շար իմն մըջմանց՝ յամենայն կողմանց ելողաց և իջողոց այր
զայր զորհէր և կին զընկերն իւր: Եւ ոչ օք ասէր, թէ եւ շատ զործեցի
քան զքեզ, այլ թէ դու շատ զործեցեր քան զիս, զի դեռ անախա և անցաւ
ունէին զընտելիւն: Եւ մինչև ցքառասուն ամն Ռազուս ու չառին պարապ
զարեոյն՝ մինչև հասուցին յօրն անտես, յորձուքն և մղձկուան և ի ստատ-
կողն, յոր թոյսն ու զերանայ, և թէ ձկաի՝ թեւեղեղեալ անկանի: Եւ ասեն,
թէ դուսին ի յատակացն սկսեալ տարտն ընդ մէջն մինչև ի վեր և հալէր ի
շերմութեանն, և մարդիկն ջնային եւ հնարիւք անկէզ մնալ: Եւ ի կասեալ
ի գործոյն: Մինչև ինքն Տէր ողորմեալ դողար առյր տունու յանողաւ
շանիցն: Եւ գտանին զօրոյց ի տանն Ներքովթայ, և թէ նախ հրեշտակ եկն
առ Ներքովթ, որ իշխան էր և որսայր շինողացն կերակուր, և ասէ ցնա.
«Եւ ես հրեշտակ Աստուծոյ՝ կողմապես արևելից»—այպէս ասէ Տէր Աս-
տուած երկնի և երկրի, շուրջէք դողարեցէք ի գլուխ առ իս, զի ոչ կարէք.
այլ եւ եկից առ ձեզ ի ժամանակի և առց ձեզ ամառադս, սրով կարէք գոյ
և զուք առ իս: Եւ ոչ լուան հրեշտակին: Ապա ինքն տաք ցեակիցսն իւր.
«Եկայք»՝ մեք իջեալք և ըստանեսցուք զլեզուս նոցա: Եւ զի ստեղծաւածք

¹ Վարդան Արևելցու և նրան վերագրված երկերի ու նրանց աղագրութիւնների և
անագրութիւնների մասին՝ Չ. Ռ. Կյում, Զովհաննէս Վառդան և յուր զգրութիւն էջ 83—89,
Այլ 9. Զարգանու յայն, Զայի, հին գրք. Ա., էջ 738 և հաւ.

մեռաց նորա՝ ի ցամաքնէ գորհուրեալք. փախչէին առ նա. ոչ պատժեաց զնոսա. այլ հոտով դրախտին արեցոյց զնոսա, զի հանգէզ կայր դրախտին գլուխ բրգանն: Եւ այսպէս միութեալք զմայլմամբ յանճառելի բուրմանէ հասոյն՝ մոռացան զառաջին լեզուն: Եւ շաբար զնոսա վաստակ միստնգամ քակելով, այլ հոգմոյն հրամայեաց գործ, և ոչ զոք սպան ի նոցանէ՝ զի ոչ շրջեաց, այլ հոսեաց: Եւ շատ ինչ բարի եղև. մի՛ զի ծանեան մարդիկ զհարեանց տկարութիւն, և զարեան՝ զի պատճառք իմաստից և զեղեցկութեան ի խաչոր լեզուէն առաջնոյ և ի կողտաձև՝ փոփկագոյն հեղեղեալաց և սասակագոյն հոգմոյցեաց, հոնն սպառնակուն և ասորին աղէպական, պարսիկն պերճակուն և ալանն դեղեցկամէ, գութն ծաղրակուն, եզիպտացիին խառնփաձայն և հնգիկին ճճուող, և հայն ևս ամենաղարզ և համեղական. և որպէս ազգի ազգի գոյնք զեղեցկութիւն տունն և զանագանութիւնք հասակաց, այսպէս և լեզուաց զանագանութիւնք: Եւ առաջին լեզուն մնաց առ Երեբոյ, որ ոչ միաբանեցաւ ընդ այլսն: Եւ որպէս մեղքն բաժանեաց յերկու տուն զմարդիկ՝ ի Կոյնիս և ի Սեթայն, նոյնպէս և աստ երկու եղեն ազգ մարդկան՝ երբ և ՀԲ առնուաւ ըջնա:

Հետեւք ինչ է, որ. ինչպես համատացել են, թիսկըբում մեկ լեզու է եղել և հետո է առաջացել լեզուների զանազանութիւնը, նույնպես՝ թե աշխարհի վերջում պիտի լինի մի ազգ ու մի լեզու, բոլոր մարդկութիւնը մի ընդհանուր լեզու պիտի ունենա. թի յարութեան հասարակ ի յերեբոյն խօսի՞ն [ազգ մարդկան]՝: Վարդանը, սակայն, համաձայն է մի ուրիշ կարծիքի. նա անմիջապէս կցում է. բայց զայս է ասել, եթէ ցեղացեղ և բազմակարգութեւր բնութիւնս և յոգնանուն երբ պարզի և մաքրի, աւերուտ լինի՝ զլեզուս հրեշտակաց առնու, ասէ սուրբն Սգիշէ, որով ընդ աստուածն է ընդ միմեանս խօսինք. բայց այս պետք է ասել, որ երբ մեր [մարդկային] բազմացեղ, բազմակարգութեւր և բազմանուն բնութիւնը զավի ու մաքրվի, անկարող դառնա, ապա նա, — ասում է սուրբ Սգիշէն, կունենա հրեշտակների լեզուն, որով կխօսեն [մարդիկ] աստուծու և միմյանց հետ: Այսպես է հին լեզվաբանական տեսութիւնը լեզուների ծագման և վախճանի մասին:

Աշտարակաշինութիւնը հետո անում է զանազան ազգերի, այսպես ասած, համաժամանակյան պատմութիւնը մեծ համառոտութեամբ, հաճախ լուկ անունների ու ասորիների թվարկութեամբ: Կարևոր աեղ է բռնում, հարկավ, հայոց պատմութիւնը, Հայկ ու Բելից սկսած մինչև վերջը: Հայերի հետ երևան են գալիս՝ հրայներ, պարսիկներ և այլն, հետո նաև բիզանդացիք, արաբներ, թուրքեր, վրացիք, թաթարներ և ուրիշները: Քանի մոտենում է 11-րդ դարին, ավելի ու ավելի հարստանում է պատմվածքը ընդարձակ անդեկութիւններով և զառնում է ժամանակագրութիւն: Նրա հաղորդումների մեջ կան շատերը, որոնք ուրիշ աղբյուրներից հայտնի չեն և ունին պատմական նշանակութիւն: Կան և այնպիսիները, որ անձնանապես հին պատմութեան վերաբերյալ, որոնք գիտական հերյուրանքներ

¹ Երբեք կամ չեղեք է, ըստ Ս. Գրգի. Արտաշատ նահապետի նախնիներից մեկը. որի անունը, ինչպես ենթադրում են, հրայները կոչվել են նաև Եբրայեք:

են, կամ անարժեք զրույցներ, որոնց նա, իր ժամանակի այդ դիտմանը, նույնպես նստած է ընծայել:

Թաթարները սառչին հաքմակույթներն, ըստ Վարդանի, անգի են ունենում 1221 թ. Սպարսկի էր, որ այդ տարիներին սկսած նա մանրամասն պատմություն գրեց իրեն եղելու թյուրքների ժամանակակից, բայց, ցավոք, նա չի թողնում համառոտ ժամանակագրելու եղանակը: Իր այդ վարձույթն արդարացիում է ասելով, թե որովհետև 1236—1265 թ. մանրամասնորեն պատմել են Վանական վարդապետն ու Կիրակոսը, նրանց գրածները մեծք ոչ համարձակեցաք երեքնեկ կամ բազմաբանել, այլ համառոտ բերնալ միայն գլխաժամանակին նշանաւոր իրաց և գործոց յիշատակուք ի լրումն մերոյ գործածութեան՝ յուրով ժամանակուք սկսեալ և թերի թողեալ, պատկառելով ի գրողացն պատուոյ, զորս վերագոյն յիշեցաք: Մանրամասն պատմում է միայն յուր տեսակցությունը Հուլավու Էլդանի հետ: Այնուհետև հիշատակելով մի երեք դեպք, իր գործը վերջացնում է Կոստանդին կաթողիկոսի մահով, 1267 թ.: Բերենք հիշված տեսակցության կտրուկ.

«Յեւթն հարիւր երեքսոսան թուին կոչեաց զմեզ Հուլաւու Էլդանն ի ձեռն զնորհաւոր կաչեցեալ աւն փառաւորելոյ յայնմ ժամանակի յամենեցանց և աւելի յաշխարհակալացն՝ ի Բաթու կոստակալէն հիւսիսոյ, ուր չորաւն և պատուեցաւ նախ, այլ ի Հուլաւու Էլդանէն, որ աւառա իւրով՝ ծախիւք և գրաստիւք զմեզ և որք ընդ մեզ էին վարդապետք եղբարք մեր՝ Սարգիս և Գրիգոր և աւաղ երէցն Տփիսեաց աբեղէն: Եւ տեսաք զմեծն զայն ի մեծի աւուրս ամսամտի և տարեմտի իւրեանց՝ յամենան յայտ ըստ նախմտիցոց և ըստ մեզ արաց: Եւ էր նոցա տաւաղք սարախութեան իրր լաւսին մի, և կոչէին զաւուրսն զայնստիկ անուարտ՝ իրր խորհրդատուն յորս այլ զանքս՝ ազգայինք Ձանկդ դանի, առ մեծն եկեալ խորհէին, զորինչ պաշտան տեսանէին հանդերձ ամենայն աւագանսն իւրեանց, ամենեցեան նոր զգեցեալ՝ յամէն աւուր որիչ զունով փոփոխու: Անդ լինէին և ամենայն հնազանդեալքն իւրեանց շատ և երկելի նուիրօք՝ թագաւորք և սուլտանք, որդէս և ի մեր տեան թագաւորն Հայոց Հեթում և թագաւորն Վրաց Դաւիթ և բրինձն Անապոս և սուլտանք ի Գուրխի կողմանց յուրովք:— Եւ ի տեսանել զմեզ՝ ծուներ կրկնել ոչ ետուն և ոչ չորեկ ըստ սովորութեան իւրեանց, իրր թէ արքայունք Աստուծոյ միայն երկրպագեն: Դինի ետուն որհնել և ի մեր ձեռաց տեսուի: Եւ խոսք զոր ինչ հրամայեաց: առաջին այս է.—

«Կոչել եմ զքեզ, որ տեսանես զիս և ճանաչես և ի սրտաց ազոթեն վասն իմ: Եւ աւելորդ է թերևս զամենայն գրել: Շատ խօսեցաւ, և մեք տուաք պատասխանի: Եւ նստուցին զմեզ, և զինի ետուն, և շարական պաշտեցին եղբարքն որ ընդ մեզ, և Վրացիքն զիւրեանց պաշտօնն, և Ասորիք և Հոռոմք զիւրեանցն: Թայնժամ տեսին զեկեալսն յամենայն կողմանց՝ մինչ ասել Էլդանին, «Թէ զքեզ միայն եմ կոչեցեալ, զի՞նչ է այս նշանս, որ ոչ յառաջ և ոչ յետ, այլ մի աւաբք յամենայն կողմանց եկին ընդ քեզ տեսանել աւհնելի գիւս: Եւ յառաջեաց հրամայեաց ինքն. «Թուի թէ նշան է, որ Աս-

առւեծայ սիրտն լաւ է ինձն:—Ասացաք. «դեհզ այլ կալաւ զարմանք և զաւա-
ճաւք զոր դուք հրամայեցիք»:—Ապա հրամայեաց, զթէ ծածուկ բան ունիմ
աւ քեզն:

Եւ յաւուր միում արար անապատ յոյժ,— և հեւի կացուցեալ զամե-
նայն բանակն՝ և երկու բարձր միայն խօսեցաւ ընդ մեզ յերկր՝ յիւր
ժննդենէ հետէ և ի փոքէ, որ քրիստոնեայ էր՝ ասէ. «Եւ թէպէտ զայնակ
անուցանէ զսողայն, իբր ի հառակ դո՛ւ՝ զիւր մայրն սիրէ. չնեք օտար ի
սիրոյ քրիստոնէից—զոր ինչ ունիս ասելոյ՝ ասա՛ւ. և բռնեալ էր զիմ ձեռքս:
Եւ մեք ասացաք զինչ Աստուած երեւա ասել բան, զթէ որչափ ի վեր ես
դու քան զայլ մարդիկ՝ մօտ ես յԱստուած: Աստուծոյ արդար գա-
տաստանաւ է հաստատ: Ամէն ազգի տուեալ է Աստուած տէրութիւն աշ-
խարհի և փոքանայ: Մինչ ի քեզ այլաբարհաւեր են լեալ, և ազգատոց՝ ան-
ողորմ՝ ծանր շալակ են դրեալ: Նոքա հոգեք են հանեալ և լացեալ առաջի
Աստուծոյ.— Աստուած ասեալ է զիշխանութիւնն և յայլ ազգ տուեալ: Թէ
դուք այլաբարհաւն լինիք և ազգատոց ողորմած՝ ի ձեզանէ չառնու: Աս-
տուած զոր տուեալ է, թողու առ ձեզ. և զոր տալ կամի՝ դո՛ւն ալ ապա
ի քո զբան հանց մարդ կացոյ, որ յԱստուծոյ երկնչի և զմեզ սիրէ, որ
զլալով եկած առաւարեայն, որ աղերս չունի և կաշառք՝ ուրախ ի տուն
յուզարկէ և քեզ յիշեցնէ: Եւ զայլաբարհաւ ասուր հանց մարդոյ, որ յատակ
տեսանէ՝ կուրանայ ոչ՝ կաշառք. և քեզ ասէ զիրաւենս:—Եւ յայս կարգիս
շատ խօսեցաք:

Հրամայեաց թէ, «ի սրտումս զրի զքո խօսեցեալքդ.—Քնց է որ զամէն
զանն ասացեր, որ իմ սիրտս կայր, որ ինձ դուք թուաց, Աստուած խօսե-
ցեալ է ընդ քեզ, երեսեմ է քեզն:

Ասացաք թէ, «չէ՞՝ մենք մեղաւոր մարդ ենք, ապա զաստուածախօս
մարդկանց գիրքն կարդացեալ ենք, և սիրաք թաղաւորաց ի ձեռքն Աս-
տուծոյ ենք:

— «Աստուած յայանեմ է քեզ առանց զորքոյ:—

Ապա ասացաք թէ—«առաջի Աստուծոյ խօսք մի եմ յասել, որ Աս-
տուած լսէ և ապա դու, որ սուտ չկայ ի ներսս:

Հրամայեաց թէ—«ասա՛ւ:

Ասացի թէ—«զինչ քրիստոնեայ կայ և արքայունք ընդ ծով և ընդ
ցամաք՝ ամենու սիրտն հեռ քեզ լաւ են, և քեզ աղօթք են առնում:

Հրամայեաց թէ—«հաւատալ եմ որ հանց է, ապա յԱստուծոյ ճանա-
պարհն չեն արքայունքն՝ ինձ ինչ աղօթք առնեն. և թէ առնեն՝ Աստուած երբ
լսէ, մէջում արքայունքն զաստուած յերկնից յերկիրս բերէ չրերէ՝ ասացէք,
որ յաստուծոյ ճանապարհն կենան և աղօթք առնեն: Մեր եղբարքն հեռ
մեզ վատն ալն են ի կուտիլ, որ մենք զքրիստոնեայ սիրենք և քրիստո-
նէութիւն կայ ի մեր առնա. նոքա տաճկասէր են և տաճկութիւն կայ ի նոցա
առննս...— Ապա ասէ ցմեզ.—«ոչխարենի է՞ր ես զգեցեալ և ոչ ոսկիս:

Եւ իմ ասացեալ թէ—«մեք մեծ մարդ և աստիճանի տէր չենք, լուկ
աբեղայ միայն եմք:

Եւ հրամայեաց թէ—«մեծացուցանեմ զքեզ ասկի զգեսաւի, և շատ
ոսկի տամ:

Եւ մեք տեսիմք—տեսկին և հոգն մեզ մի են. մեք այլ մեծ ուղեմք, որ վայել է քո մեծութեանդ—ողորմութիւն ի վերայ աշխարհին:

Եւ հրամայեաց թէ—ամէջմա՛ք թէ՛ք կտրեմ քեզ՝ խիստ գէշ և խիստ փոքրիկ լուկ այնչափ, որ խուշակ զնես եկեղեցոյն. թէ՛ չէ եկիր՝ թո՛չ տանն, թէ՛ էլ դա՛նն մնաց տեսաւ զքեզ:—Եւ զայդ՝ զոր տառցեր, առնեմ, և մարդիկց յղարկեմ, որ տեսանեն զաշխարհս:

Իսկ երբ հրաման ուղեցաւ զնալոյ՝ այլ կոչեաց զմեզ և խօսեցաւ, և ունէր ի ձեռին բալիշ մի և երկու հանդերձ էր կտրել տուել: Յիշեցուցաւ թէ—«Էլիցան»՝ այգ քո դրանդ հատանի և հանդերձդ մաշի, մեք անհատա-նելի և անմայիլի խնդրեցաւ պարգեւ:

Եւ հրամայեաց թէ—«տառջի՛ օրն զքո խօսքդ լինեցի. —առլելի եմ զքեւ տուել՝ կտրուլ տուր, և զինչ քո սրտիդ պիտի տանի՝ զայն այլ գրել տուր: Եւ ի ստեղծութեւ և ի շահաբառին եմ յանձնել գերկերդ և զքեզ—զոր ինչ տեսնա՛ տեսնես:

Եւ մեք շնորհակալ եղաւ և ելաւք:

Այս հատվածը կարևոր է ոչ միայն իր բովանդակութեան, այլև ժամանակի խոսակցական աշխարհիկ լեզվի տեսականությամբ: Այստեղ գտնուում ենք արդեն միջին հայերենի զրեթե բոլոր ձևերը, այլև այն, որ արդեն ծագած է եղել արևելյան աղիարհաբարի ռուս վերջավորութեամբ խոնարհման ձևը, ինչպես է, օրինակ, «աղօթք են առնում», որ է «աղօթք են անում»:

4. Մաղաքիտ Արեղայի «Պատմութիւն վառն Կոզմոն Գիտողաց»: Այս հեղինակի կենսագրութեան մասին միայն այն գիտենք իր գրքից, որ նա եղել է Վանական վարդապետի աշակերտ: Հիշելով նրա մահը 1251 թ.¹ գրում է. «Փոխեցաւ ի Գրիստոս աւագ և փառաւոր վարդապետն մեր Վանական և սուգ մեծ եթող մեզ, և ոչ թէ միայն մեզ աշակերտելոցս նմա, այլ և ամենայն աշխարհիս»:² Բերված վերջին թվականն է հայոց 9 և Իձ (—720+551=1271), երբ վախճանվել են փառաւոր վարդապետն հայոց Վարդան և Կիրակոս:³ Դրանից հետո շուտով ավարտում է նա իր աշխատությունը՝ պատմելով Հեթում թագավորի (վախճ. 1270 թ.) որդի Լևոն թագավորի առաջին տարիներում տեղի ունեցած մի խարդավանական դեպքի մասին և աղոթելով նրա կյանքի ու հաղթող լինելու համար:

Գրվածքի վերջում կտրոււմ ենք. «Կատարեցաւ պատմութիւն Տաթա-րիս գործելոց ԽԻ (—44) ամաց, բայց համառօտ, և ոչ տմէնն»: Սակայն ըստ երևույթին վերադառնալով կա կամ այս, կամ ներքևում բերված 1214 թվի մեջ, Մաղաքիտն իր աշխատության սկզբում գրում է թաթարների ծագման և Զանկղանի մասին, ապա պատմում է նրանց հարձակումը Հայաստանի հյուսիս-արևելյան կողմերում ազմանից և վրաց երկիրների վրա և

¹ Մաղաքիտ Արեղայի «Պատմութիւն վառն Կոզմոն Գիտողաց», Ս. Գեանքերեզ, 1870. Կա նաև Երևանի մասին հրատարակութեան. «Երևանի այդ երկը թուրքի մարտի վերադարձում է Վարդան պատմիչին, այսինքն Վարդան Արեղային: Տես՝ Հ. Ուսկյան, Հավան-նա Վանական և յայդ գրքերը, Վիեննա, 1822, էջ 115 և հա.:

² Անդ, էջ 12, 22.

³ Անդ, էջ 22.

հազթությունը թի թուականութեան հայոց ՈՅԳՅ (— 663 + 551 = 1214), յերեք տարի անց առնուով, ավերուով են Գանձակ քաղաքը, հետո և ուրիշները: «Առին և դժարայրն մեծ վարդապետին բազում ընչիւք իլի, և տաւն զինքն զփառաւոր վարդապետն մեր Վանական՝ ծառայ՝ իւրովք աշակերտօքն»: Հայ և վրացի իշխանները շուտով ենթարկվում են թաթարներին և բարեկամ Ֆուսի նրանց. նույնպես և Գիլիկիայի հայկական իշխանությունը: Այնուհետև էլ Մաղաքիայի Պատմութեան նյութը մեծ մասամբ նույնն է, ինչ որ Գիրականիւր և Վարդանինը թաթարների մասին, բայց մանրամասնութիւնների մեջ տարբերվում է նրանցից, Բացի թաթարների վարած պատերազմական գործողութիւնների և նրանց կառավարած ավերմանքների ու կոտորածների նկարագրից՝ այստեղ դանուս ենք նաև շատ քան ներքին կյանքի վերաբերյալ, ինչպես են՝ հարկերը, ժողովրդին հասցրած նեղութիւններն ու կեղծաւմեքն այն ժամանակ, երբ հայերն արդեն ենթարկված էին թաթարներին: Եղի են նաև բարեմիտ իշխողներ, որոնցից մեկն է և Հուլավու զանը և նրա որդին, որոնց կողմն է Մաղաքիայի համակրութիւնը: «Եւ էր Արաղանն բարի տեսչեամբ և զեղեցիկ հասակաւ ի մէջ ի [— 80] եղբորց իւրոց և յաւուրս զանութեան նորա էր աստուծոյն ամենաւն իւրաց ընդ ժմնայն երկրիս»:

Գրական տեսակետով Մաղաքիայի այս գործն ավելի բարձր է, քան Վարդանի «Տիեզերական պատմութիւնը»: Պատմվածքի համար կենտրոն է ունեցել ընտանոց ազգին— թաթարների արքաները Հայաստանում և Հայաստանի սահմանակից երկրներում, միաժամանակ ուշադրութիւն է դարձրել նաև զուտ հայկական գործերին, և եթե երբեմն ավելի երկար է կանգ առել այս մասի վրա, բայց դարձյալ ընդհանրապես թաթարների հետ կապակցութեամբ ևս հորինել է տանց որեւէ մասերի բաժանելու, շարունակաբար, շատ պարզ ու հասարակ, միանգամայն և կենդանի ու հաճելի եղանակով, հաճախ իր ժամանակի խոսակցութեան լեզվով: Շատ մանրամասն և սրտառու չկերպով պատմել է Մարտ (Եզիպատոսի) Զնաւախտար սուլթանի հարձակումը Գիլիկիայի վրա, Հեթում թաղավորի օրդի Թորոսի սպանվելը, իսկ մյուս օրդու՝ Լեոնի գերվելն ու գերութիւնից ազատվելը: Այս զեպքը մեծ ազդեցութիւն է թողել ժամանակակիցների վրա և արժանացել հայոցի ժողովրդական երգին՝ «Անաղ ըզլեոնն ասեմ, որ Տաճկաց դուռն ընկել գերին»:

5. Միւրեք լայնիւմնեցի:—Օրա «Հայոց Պատմութիւնն» ևս մի ժամանակագրութիւն է, սովորական ձևով համառոտ, սկզբից—Աղամից մինչև 1289 թ.: Հեղինակն աղբյւր է 19-րդ դարում: Այս, ինչպես և մյուս ժամանակագրութիւնները գրական արժեք չունին, բայց գնահատելի են իբրև պատմութեան աղբյուրներ: Գրեթե բոլորի մեջ ևս երևում է նույն կրօնական և հայրենասիրական ոգին:

6. Ամբատ Սպարապետ:—Այս հեղինակը Հայոց Հեթում Ա. արքայի

¹ Անգ, էջ 27:

² Մաղաքի Երեզայի Պատմ. գ. ա. հետադրոց, 1870, էջ 38—47:

³ Միւրեքայի Արթուրեանցի Պատմութիւն Հայոց, Մոսկու, 1860:

հղբարյուն է. ծնված է 1208 թ., ինչպես իր աշխատության մեջ¹ ինքը գրում է. «ի Թուրին ՈՂԷ ծնաւ Սմբատ Գունդուսապալն Թարգմանոզ Գառմաթեանս: Ռուբինյանների արով Կիլիկիայում «զունգսապալ» (connétable—ախոսապետ) պատվանունով էին կոչվում սպարապետները: Գրելով Կիլիկիայի Հայոց առաջին Թագավոր Լևոն Բ-ի Թագավոր օժվելու մասին 1198 թ. և գովելով նրան՝ասում է.² «Այս սպարապետը թէ դոյ յայ Իմաստուն և զիտուն, և աշուղ ի գործ կամ ի զինուորականին, կամ ի խոսս և ի պատասխանին, յղբ և կոչէր խոստմամբ, և հանգուցանէր պարզևոց, յորոց մի ես եմ Սմբատ Սպարապետ Թարգմանոզ առոխ և պատմութեանս: Լևոնի մահվան ժամանակ՝ 1219 թ. Սմբատը եղել է տասնամեկ տարեկան պատանյակ և, ինչպես երևում է, աչքի է ընկել իր ընդունակությամբ և թագավորից պարգև է ստացել: Ուրիշ տեղեր ևս ժամանակագրության ընթացքում հիշում է իրեն այսպես՝ Կիլիկիայի վրա Հոռոմելի, այսինքն Իկոնիայի առաջինի հարձակումների ժամանակ 1226 և 1246 թվականներին՝³ Լեթում Թագավորն իր այս սպարապետ եղբորը 1248 թ. դիպառն է ուղարկում Թաթարների խոնի մոտ. «ի Թուրին ՈՂԹ [=1250 թ.] դարձայ ա իմ եղբարյուն Լեթում Թագաւորն»:⁴ Այս մասին պատմում է և Կիրակոս Գանձակեցին, ասելով թե Սմբատ զորավարը շատ մեծաբովելով Ղանից՝ «դարձաւ երեսելի փառօք, և հաւատարիմ էրովարտելոց տուեալ նմա զաւառս բազումս և բերդս յալովս, զոր յառաջ լիւալ էր Լեոնի տբայի, և զկնի մահուանն սա ի նոցունց Ալագին Սուլտանն Հոռոմոցն»:⁵ Սմբատը վախճանվում է 1275 թ.: Սգիպատացիները զորքի մեծ բազմությամբ հարձակվում են Կիլիկիայի վրա. հայ զորքերը, Լևոն Գ. Թագավորի և Սմբատ Սպարապետի զորավարությամբ, շրջապատում են Թշնամիներին և կոտորում: Սմբատը, չնայելով իր տարիքին, անձամբ արշավասույր հետապնդում է Թշնամիների փախչող զորագլուխ Ամիրային. ձիու առատիկ արագ վազելիս՝ ցաջ Սպարապետի ոտքն առնում է մի ծառի և փռավում է: Այլևս չկարողանալով շարունակել Թշնամու հալածումը՝ նա ետ է դառնում և մի քանի օրից հետո վախճանվում:⁶

Այն խառն ու խոռվահույզ ժամանակներում, երբ պետք էր միշտ պայքարաստ լինել զինքով զիմացրելու ամեն կողմերից ներխուժող Թշնամիներին, Սմբատը ոչ միայն կորովի զորավար էր հանդիսանում, այլև խոհեմ քաղաքագետ: Նա, ինչպես սեսանք, կարողացավ հեռավոր հանա-

¹ Սմբատայ Սպարապետի եղբոր Լեթոյ առաջին տբայի Հայոց Գառմաթեան Յուհաց ի Կասառնգնապալիս և Հայոց Մեծաց ըստ կարգի ժամանակաց, Մահուա, 1286, էջ 106. Լեւոնի մեջ վերնագրի վերջին բառերը եղել են՝ «նա յայտ ժամանակի ժամանակագրութիւն, հրատարակիլը՝ Ուկանց Հովհաննիսյանց Ուրեանցի՝ փոխել և ըստ կարգի ժամանակաց. ահա ռեպուսլիքան, էջ Ը»:

² Անդ. էջ 69.

³ Անդ. էջ 113 և 114.

⁴ Անդ. էջ 115.

⁵ Կիլք. Գանձ. Գառմ. Հայոց, Թիֆլիս, 1909, էջ 302.

⁶ Նա Սմբատայ Սպարապետի... Գառմ. ռեպուսլիքան, էջ 2, սբ իրիկ աղբար ինչպես է Մ. Զամչյանի Գառմ. Հայ., հատ. Գ., էջ 277—278. Իսկ այստեղ իրիկ աղբար ինչպես է ռեիլաուսկարան Ռամանոսի ժամանակակից վարդապետի ...:

պարհ անցնելով հաջորդութեամբ լուծել արտաքին քաղաքականութեան խնդիրը և բարեկամութեան դաշինք կաել թաթարական տերութեան հետ։ Բայց միայն արտաքուստ ապահովութիւնը չէր նրա հոգացութեան առարկան, հարկավոր էր հայկական երկիրը և ներքուստ բարեկարգ վիճակի մէջ դնել, ներսս Լաւրեոնացիին արդեն կատարել էր քաղաքական և գինւորական օրենքներէ հովաքուսն և թարգմանութիւն, բայց այդ օրենքները համապատասխան չէն եղել, բաւարարութեան չին տվել տեղական պահանջին հիլիկիայում։ Այստեղ հայ պետութեան մեջ արդեն ընդունված էին Արևմտյան Եվրոպայի ֆեոդալական և ուրիշ կարգերը՝ վաւերական, արքունի և ալիւ, և հայերը հենվում էին ազնիւ նրոպոցիներէ և ազնիւ մոտիկ ֆրանկ իշխանութիւններէ վրա ընդդէմ հաբեան մահմեդական պետութեաններէ, զոն թե հույներէ վրա։ Ուստի Սմբատը ֆրանսերէնից հայերէն թարգմանում է Անտիօքի ֆրանկ իշխանութեան մեջ գործածված օրինադրերը՝ «Անսիգք Անտիօքայ» (Les assises d'Antioche). որի բնագիրը չի գտնված։ Թարգմանութեան առաջաբանի մեջ գրում է. «Եւ արդ վասն գի սովորութեամբ ալս Անսիգքիս կու գնայր աղգս մեր և դարպասս Լայոց, և սովորեալս ինչ կու գայր մեզ վասն սղիտութեան և վասնգութիւնց ողոց, և պղնդական ինչ վասն հարցանելոյ անդ գմեմամեմ դատաստանսն, և ես ուժգին տենչմամբ և բազում աշխատութեամբ զտի զսայ և հալեցայ ի փոխելն. և երբ փոխելի ես՝ յուղարկելի դարձեալ ի յԱնտաքոյ դարպասն, որ գէմըղղիմեցին և հաստատեցին իրենց ձեռնադրերոցն և վկայութեամբն, ու ստոյգ է և ըզորդ բան բանիս՝ Բացի սրանից՝ Սմբատ Սպարապետը 1285 թ. կազմել է և մի համառոտ ազգային օրինադրերը՝ «Յաղագս դատաստանաց Թաթարաց», որի մեջ մտնում են օրենքներ ու կանոններ աշխարհականների և եկեղեցականների համար։ Նա օգտվել է Միլիթար Գոշի Դատաստանադրերից, բայց վերամշակելով սրա հոգովները և հարմարեցնելով հիլիկիայի պայմաններին ու ֆեոդալական հասարակարգին ու սովորութիւններին՝ Դատարանայութիւն է հիլիկիայի հայ պետականութեան։ Գրեցի զսա,—ասում է նա,—վասն հաստատութեան սրբոյ եկեղեցւոյ, և վասն աշխարհի դատաւորաց և թաթարաց, և զսիրտ բանիցն տուեալ եղի համառոտաբար»։

Մնում են Սմբատ Սպարապետից նաև քրոջն ու քեռային դրած նամակները և, որ գլխավորն է, նրա «Պատմութիւնը», որ հիշվեց վերևում։ Այս մի ժամանակագրութիւն է, սկսած հայոց Ն (400+551=951) թվականից։ Մինչև հայոց ՇՁԾ (—585+551=1136) թվականը բովանդակութեամբ նույնն է, ինչ Մատթեոս Ուտայեցու գործինը և մեծ մասամբ շատ համառոտ ու կրճատուկներով քաղվածք է նրանից, երբեմն նույնիսկ բառացի, հան, հարկավ, այնպիսի հազորդուկներ ևս, որոնք ուրիշ աղբյուրներից

¹ Գ. Ջաբրէնեւան, Հայկ. Թարգմանութիւնց Յալեանց, Վենետիկ, 1880, էջ 108 և հաւն.

² Խ. Սմբատեւան, Հին հայ իւրավանքի պատմութիւնը, հատր Ա, Երևան, 1939, էջ 80—85.

³ Գ. Ջաբրէնեւան, Հայկ. հ. գալը. պատմ., Վենետիկ, 1897, էջ 774.

են ծագում: Սկսած ՇԽԱ (=541-551-1092) Թվականից առանձին ուշադրութիւն է դարձրած Կիրիկիայի Ռուբինյան իշխանութեանը, մանաւանդ ՇԶԷ (=1197) Թվականից հետո: Հայոց ՁԼԵ (735-551-1286) Թվականից մինչև 1331 Թվականը և հետո եղածները, բնականաբար, մի անծանօթ շարունակողի գործն հն: Այս հասկածը, ինչպես մասամբ նաև Սմբատի գործի իր ժամանակակից մասը, բնականաբար շատ կարճ հաղորդումներ են և ունեն տարեցտարի նշանակված հիշատակարանի բնույթ: Ձեռնարկով դրան՝ պատմաբաններն այդտեղ կգտնեն թանկագին տեղեկութիւններ իրենց ճիշտ թվականներով:

Սմբատ Սպարապետի գործերը շատ կարևոր են հայոց լեզվի դարգացման ուսումնասիրութեան տեսակետով: Նա իր այլոտաութիւնները հորինել է աֆն լեզվով, որով խոսում էր ինքն ուրիշների հետ: Դա այլևս ոչ գրաբարն է, ոչ գրաբարախոսն կենդանի լեզուն, այլ Կիրիկիայի խոսակցական բարբառը:

7. Ատտիպմնստ Օրբէլյան:—Այս հեղինակի կենսագրութիւնն իմանում ենք հենց իր գրքից¹ Նա գրում է Սիսական տան, այսինքն Սյունիքի պատմութիւնը, խոսում է Հայաստանի այս նահանգի իշխանների և եպիսկոպոսների մասին: Վերջում աֆնտեղ իշխել են Օրբէլյանները, —ասում է նա,— և ինքն էլ եղել է աֆնտեղի եպիսկոպոսը, ուստի պատմում է ոչ միայն իր կենսագրութիւնը, այլև մի մեծ գլուխ առանձնապես նվիրում է Օրբէլյան առնմին², բացի այն, որ ուրիշ տեղեր էլ հիշատակում է նրանց և իր մասին:

Այս տոհմի ծագման զրույցը բոլորովին նման է Մամիկոնյանների ծագման պատմութիւնը: Նրանց նախնին, մենաստանի մի արքայազն, ըստ Սահփանոսի, իր ընտանիքով ու մարդկանցով փախում է իր ազգայինների ձեռք, տեղավորվելով Վրաստանում՝ մեծ պատվի է արժանանում: Նրանք բնակվում են Օրբեթ բերդում և դրա համար կոչվում են Օրբեուլե, այսինքն Օրբեթեցիք: Այդ արքայազնի սերնդի մարդիկը դառնում են Վրաստանի սպասալարներ և աեր շատ կալվածներով, Բայց Գեորգի թագավորը 1177 թ. կոտորել է տալիս նրանց. ազատվում են միայն երկու եղբայրներ: Նրանցից մեկը՝ Իվանն թամար թագուհու օրով վերագտնում է Վրաստան և ստանում է Օրբեթ կոչվածը: Նրանից ծագում են վրացոց Օրբեները: Երկրորդ եղբայրը՝ Նիկիում՝ ծառայելով պարսիկների ձեռք՝ կալված է ստանում Երջիսի բերդը և շահուկ ավանը: Նա ստանանում է մի ճահկեցի հայ ազնվականի դուստրի հետ: Նրանից ծագում են հայ Օրբէլյանները:

Թամար թագուհու օրով Ջաջարե և Իվան եղբայրները հայ Օրբէլյանների նախնի Նիկիումի որդի Լիպարիտին կալված են տալիս Հրաշկարերդ Վայոց Ջորում, այլև կալվածներ Կայնում, Գեղաբերդում, Կոստայքում, ապա և ամբողջ Սյունիքն իր բերդերով: Այսպես կազմվում է Սյունիքի Օրբէլյան մեծ իշխանութիւնը, որի կենտրոնն էր Արփա գոսպը:

¹ Գամալթիւն Նահանգին Սիսակա. արքայու Սահփանոսի Օրբէլեան արքայի հազար Սիսակա, Թիֆլիս, 1210, գլ. ԼԱ, էջ 477—497.

² Անդ. Գ. ԳԶ, էջ 358—424.

Լիպարիտի որդի և հաջորդ ժեհ և արքայաշուք իշխան Սմբատի որով
ազնիւի ևս գործունււմ է Օրբելյան իշխանությունը, որ ենթարկւում է թա-
թարների զերիշխանությանը և ապահով մնում Սմբատին հաջորդում է
իր հղբայր Տարսայիճը, որ վախճանւում է 1290 թ.։ Սրան էլ հաջորդում
է իր որդին՝ Ելիկում։ Այս իշխանները բարեկամական կապ պահելով թա-
թար բռնակալների հետ՝ կարողանում են նրանց բռնություններից զերծ
պահել իրենց իշխանության ներքո գտնված ընդարձակ երկիրը։

Տարսայիճի որդին էր Ստեփաննոսը, որին իր հորեղբայր Սմբատն՝ ան-
գովակ լինելով՝ որդեգրում և կրթել է առլիս՝ թի հրահանգս ընթերցման և
երաժշտութեան։ Նա շուտով դառնում է պոփր և սարկավադ։ Հայրը նրան
քահանա է ձեռնադրել առլիս, իսկ մանկական տիօք կորգեալ կղերիկոս։—
ասում է նա իր համար. «վարժեցայ ի կրթարանի աստուածեղէն տառից...
և տեսա խնկութեամբ նստայ յաթու վարդապետական։ Քահանա ձեռնա-
գրվելուց հինգ տարի հետո։ 1285 թ., հայրը եպիսկոպոսների ժողովի որոշ-
մամբ ուղարկում է նրան թի թագաւորութիւնն Հայոց ի Կիլիկիոս բաժնուլ՝
ձեռնադրութիւն մետրապօլիտութեան ի վերայ աթոռոյ Սիւնեացի։ Այդ-
պես էլ լինում է. նորոգվում է Տաթևի մետրապօլիտական աթոռը, նա, եր-
կար մագառելով ըմբոսա եպիսկոպոսների դեմ, մեծ նեղությամբ միացնում
է իր ձեռքի տակ Տաթևի և Նորավանքի (Վայոց Ձորում) առաջնորդու-
թյունները։ Նորոգում է Տաթևի վանքը և իր բաժին հայրենի կալվածները
նվիրում է վանքերին, նյութապես և բարոյապես հովանավորելով հայ լուսա-
ւորության կենտրոններին։ Ինքն և իր հղբայրները համաձայն ու սիրով
կառավարում են երկիրը, ինքը՝ հոգևոր աթոռը, հղբայրները՝ աշխարհա-
կան իշխանությունը, պահելով դաշխարհս զայս ի խաղաղութեան և զվանա-
րայս ի շինութեան։ Եւ դի յայսմ ժամանակի ամենայն աշխարհ աւերեալ
և ապականեալ էր. և վանորայք խփանեալ ի պաշտամանէ, և ամենեքեան
առհասարակ դիմեալ ի աէրութիւն սորա (Ելիկումի), ասա զհանգիստ առեալ
գետեղէին... և էր տեսանել շնորհօքն աստուծոյ դստնս զայս իբր դա-
պանն Նոյեան ի մէջ աշխարհակործան արեացն։¹ Այն բառերն ձգվում էր
թի Բաղաս մինչև ցԱյրարատ և թի դրանէն Բարկուշատայ մինչև ցառ-
մանն Բջնայ։² Ստեփաննոսը մեծ անուն և գիրք է ձեռք բերում արևելյան
եպիսկոպոսների մեջ, որոնց և ղեկավար առաջնորդ է հանդիսանում ընդ-
դեմ արևմտյան եպիսկոպոսների և Գրիգոր Անավարդեցի կաթողիկոսի նո-
բաձնություններին։³ Նա վախճանվում է 1305 թ.։ Կոստանյանց «ИЗ ВРМ.
ЛИТ. XIII—XIV в.в.», Москва, 1914, էջ 6, մահվան թվականը դնում է
1309 թ.։

Ստեփաննոս Օրբելյանը մի կրօնասեր և ավանդադար անձ է, միաժա-
մանակ և հայրենասեր, գործունյա, հետաքրքիր, հմուտ ու լուրջ, զարգաց-
մամբ ու հասկացողությամբ բարձր քան շատերը ժամանակակիցներից,
հագացող երկրի շինության և լուսավորության։ Լինելով ուսումնասեր՝ նա

¹ Անդ. էջ 437—439, 431.

² Անդ. էջ 437, 476.

³ Անդ. դ. 4Ը, 4Թ, էջ 447—467.

ձեռք է բերել և իր համար ուրիշ տեղերում տրամադրել է ավել մե շարք ժառանգիրներ, իր այս հասկումը յուր շնորհիմ նրա գրած Պատմությունը տարբերվում է մեր շատ պատմագիրների գրվածքներից, նրկար ժամանակից ի վեր, ասում է նա.¹—«Եւսայր յիս ասարփումն Բաղձանաց և խորհէի... ընձեռել գրով ըստ իմում կարի զպայապատութիւն նախարարութեան և զմեծ նախագահութիւն բարձր իշխանութեանս Սիւնեաց, և զնախագահութիւն վանական և աստուածածնաւոր Թորոս Վարդապետութեանս այսմ... զի ի նաւգետաւ աւուրս և ի վերջին ժամանակս տեսաւ ժամնախիւ բարձեալ և ջնջեալ զիշատակ տասմ գեղեցիկ և մեծապետ Թորոս աւերակաւոր, մարմնակաւն ընտելն սպառնալ և ի մոռացոնս անկեայ. և հոգեւորն ոչ ընդհատ քան զնա մերձ ի սպառնմնս: Ուրիշների պատմությունները մեք տեսել ենք,—գրում է նա,—«Ջուլիցն տեսաք՝ զՄոսիկոնեանն և զՏարոնոյն զԲագրատունեացն, զՎասպուրականացն, որք յետոյ թագաւորեցին, զՎրացն, զԱղվանիցն».² Իսկ Սիսական իշխաններինը չկա: «Յաղով երկօք որոնեալ,—յարմանակում է նա,—ոչ գտաք յատմջնոցն զիշատակ սոցա ընդ գրով արկեալ, և զկնի եկելոցս թողեալ արձան գովելի: Թէ ոչ էին գրեալ, և կամ թէ ի քաղում աւերմանց և հինահարութեանց կորուսեալ էր՝ ոչ գտեսաւ: Վերջում էլ նա կրկնելով գրում է. «Բազում խոյզ քննութեան ի մէջ առեալ՝ անգեկացայ յաշխարհս հեռաւորս և մոտաւորս. ի վաւերայս և յարկեղս կտակաւորանաց. այլ և ի գիտունս և ի տեղեկա հնազեւ պատմութեանց, և ոչ ինչ գտաք իշխատակ գրուցարանութեանց ուրոյն այսմ աշխարհի և կամ անգեկութիւն իրացա: Դրո համար և ինքը հոգ է առնում զբնիւն Սիսական աշխարհի իշխանների և եպիսկոպոսների գործերի մասին. «զի Թաւրիցն զպատիւ և զբարձ իշխանաց և հայրապետաց և իշխանաց և զամենայն կարգ սահմանի նոցա: Այդ էր զգահանջում Օրբելյան մեծ իշխանության զպատիւը. աշխարհին պետք էր իմացնել և հիշատակ թողնել ոչ միայն Օրբելյանների մասին, այլ և թե ինչպիսի մեծ իշխանության երկրի տեր են եղել նրանք, և թե ինքն Ստեփաննոսն ինչպիսի մեծ աթոռի վրա էր նստած: Նրա Պատմությունը, ուրեմն, արդունք է առհասարակութեան, որ ընդհանուր մի գիծ էր հին դարերում իշխողների համար:

Պետք էր հորինել առանձին առհասարակ պատմություն Սիսականի. բայց ինչ աղբյուրներից, Այստեղ արդեն Ստեփաննոս Օրբելյանը ներկայանում է իբրև մի գիտակ մեծ: Հին ժամանակի պատմութեան համար առանձին զգուշություն է ցուցաբերում նա. մի կողմ է թողնում առավաճաշնչյան նախնական զառամվածքները, որով սկսել են ուրիշները, նույնիսկ Մովսես Խորենացին. հարկ չկա դրան. ամենքն էլ, ամեն առմեկ էլ, Աղամից են ժաղում որդեցորդի: Նա չի ցանկանում, որ Սյունիքի իշխանական առհմը սկզբից մինչև վերջն անվանեն տնուն ծննդաբանութեամբ ուռնալ տանի. դրո համար հարկ կլինի շատ քան հերյուրել. «Փափագելի է մեզ,—գրում է նա,—այժմ թողուլ զամենայն մոտախաղաղութիւն վէպս հնոցն, և բուռն հարուլ միայն զերջանկաւէս բարեբաւասութեանց և նախաւորութեանց

¹ Անգ. գլ. Ա. էջ 8—10.

² Անգ. էջ 17 և հա.

վահափառ անբաժնի Սիւնի և ցեղին Սիսակայ. քանզի երկը աշխատութեանց յորովք են և շահ օգնութեան և ոչ մի ինչ. յորմէ ի բաց տարեալ զձգտումն մասաց՝ պիտանիքն միայն ի մէջ անցեալ արձանասցին մեզս։¹

Նա օգտվում է գրավոր աղբյուրներից, ամենից առաջ հին պատմագիրների հիշատակութիւններից Սյունի տոհմի մասին. «Այդ հանգէս արեալ ամենայն պատմագրաց Հայոց, և զոր դուռք՝ հաւաքեցոց ի նոցանէ ամենայն ճշդիւ, նաև սակաւ ինչ ի Պետրոսի՝ Սիւնեաց հայկոկոսի ճառիցն, որ վասն Բաբկայ՝ Սիւնեաց տեառնաւ, Մանոթ Լեղիսականից քաղած պատմութիւններն այժմ, իհարկեւ, առանձին արժեք չունեն, քանի որ ունենց բուն աղբյուրները, ինչպես են՝ Մովսէս Խորենացի, Աղաթանգոս, Զեհնոր հայկոկոս Տարոնացի, որ է Զեհնոր Գլակւ Բայց կան, սակայն, անձանթ, այսինքն մեզ չհասած աղբյուրներ ևս, ինչպես վերոհիշյալ Պետրոս հայկոկոսը, որի մասին խոսվել է սույն աշխատութեան առաջին հատորի մեջ. Բայց որ կտրեալն է, նա մեծ չափերով օգտվել է թղթերից, կաթողիկոսական շրջաբերականներից, հրովարտականներից, եկեղեցիների կալվածական թղթերից, արձանագրութիւններից, գրքերի հիշատակարաններից, որոնց բոլորը պատմական վավերագիր աղբյուրներ են, որով և Սահականոսի Պատմութիւնն առանձին արժեք է ստանում հին մասի մեջ ևս, որ հեղինակին ժամանակակից չէ. Եվ նա այդպես վարվում է իրեն հակացող հեղինակի ընդ այլ ինչ ի հին նամակաց թաղաւորաց Հայոց և իշխանաց Սիւնեաց, նաև ի կաթողիկոսաց Հայոց և յայկոկոսաց Սիւնեաց, որ մնացեալ էին ի վաղ ժամանակաց յամուրս քարանձաւին և որ ի սուրբ ուխտս հայրապետանոցիս Տաթևու, և յարձանագրութեանց եկեղեցեաց և ի յիշատակարանաց գրոց. Աստ և ժողովրդեան ղթիւ առաւրց և զթուական ժամանակաց իշխանաց և հայկոկոսաց, և իւրաքանչիւր գործոց և բանից, շինութեանց և աւերմանց, նաև կարգի և սահմանի և պատուոյ սուրբ աթոռայ և առատատուր պարգևաց ի սուրբ եկեղեցիս զոր ժողովեալ սևադեղով՝ եղաք ի մի պարութեայիս սակաւ ինչ տեղեկութիւն, զոր հնար էր ի մէնջ և կտրւ.՝ Այս միևնույնը կրկնում է նա Պատմութիւնն ավարտելիս,² ավելացնելով նաև բանավոր աղբյուրները. «էր ինչ և որ յաւանդութեանց ստուգադէտ արանց որում վկայէին իրեն և տեղիքն, զհետ մտեալ ամենայն ճշդիւ ստուգութեան, ի բաց ձգեալ և գունայնաթոյգ զբարանութիւնն, զի մի առդակացին լսողքս։

Արդարև նա իր Պատմութեան մեջ դնում է բովանդատ շատ ժողովրդական գրույցներ, վաճառի ծագման ու ճշմարտությանը վրա ասված հրաշապատումներ և այլ ավանդութիւններ, և իրեն իր գործի օրդի՝ հավասում է հրաշալիքների, բայց գիտեւ, որ դրանք պատմութիւն չեն, այլ բերում է միայն, որպեսզի Սյունիքի մասին, որքան կարելի է, շատ ծանոթութիւններ տաւ Այդ բաների համար,—ասում է նա զիմեյսվ ընթերցողին,—ոչ աւելաթոյգ զիս ծանցես. այլ պատշաճ և ի զէպ մերսւս մեռնարկութեան [վարդ-

¹ Անդ, էջ 16

² Անդ, էջ 10.

³ Անդ, 29, էջ 508.

ցիս]․ զի զՍիսական աշխարհի սկսաք ճառել զվէպս, վասն որոյ հարկ է ամենայնի․ զեղեայսն ի սմա զորեմ և հրաշս ցուցանել ձեզս։¹ Ավանդություններն և ավանդակոն բանայուսության զբառումն ևս կազմում է հարցասեր Ստեփաննոսի Պատմության արժանիքներն մի կողմը․ զբանցով վառ դուշնով պատկերաւորում է մեզ աեղական ազգային կյանքը։

Եվ այս ամեն հաղորդումները․—լինեն զբաժնը հիշատակություններից հանած, թե ավանդությունից զբի առած,—նա առլիս է մեզ զարդ ու թեւ թեւ ռոնով, կամ հենց հիշատակութեանների լեզվով և անիոսիոսի, և մարդ ախորժանքով կարողում է նրա Պատմությունը բազմազան պատմական տեղեկություններից զբավվելով։

Իսկ իբրև աւայտ զբող՝ նա Սիսականի պատմությունն սկսելուց առաջ դնում է այդ նահանգի աշխարհագրությունը,² որ հազվադեպ մի դործ է մեր հին պատմագիրների մեջ․ Վուցմունքն սահմանաց աշխարհիս Սիսականաց, և թէ զինչ ունի զարարտութիւն ի պէտս մարդկան, և որքանութիւն գաւառացի և անառիկ բերդիցս, Գլուխն էլ վերջացնում է այսպէս․ «Եւ արգ՝ այս աշխարհն աեղեկութիւն քեզ բերոց և զարարտութեանց և սահմանաց և բերդից և գաւառաց Սիսական աշխարհիս։ Յավաք, աղճատոված է այդ գլուխը․ ալակաւորւմ են անգեկություններն այդ նահանգի սահմանների և բերքի ու զարարտության մասին։ Այդպիսով մենք չենք կարողանում մանրամասն ու հիշտ որոշել Օրբելյան իշխոսության ներքո գտնված երկրի սահմաններն ու մեծութիւնը։ Պատմության վերջում³ էլ գրել է մի ընդարձակ ցուցակ տասներկու գտնաւորների իրենց բազմաթիւ գլուխներով և եկեղեցական հարկի քանակով։ Յավաք, չեն բերված աշխարհիկ իշխոսությանը արված հարկերը։

Աշխարհագրությունից հետո՝ Պատմությունն սկսում է Սիսակից, ըստ Մովսէս Խորենացու, և այնուհետև ժամանակաբանական կարգով բերում է, ինչ որ գտնի է Սյունիքի իշխոսների և եպիսկոպոսների մասին։ Առանձնապէս պատմության նյութ են դառնում այն նահանգի վանքերը, նրանց կալվածները, հատկապէս մեծ վանքեր Տաթևն ու Նորավանքը, եկեղեցիների շինարարությունը, վանտալորների և իշխոսների ջանքերն իրենց վանքերը ծաղկած պահելու, նշանավոր վարդապետներն և վարդապետաբանը։ Դրում է նույնպէս այդ կողմի եպիսկոպոսների հարաբերությունները Հայոց և Աղվանից կաթողիկոսների հետ, իշխոսներին⁴ մյուս հայ և օտար իշխանների և թագավորների հետ։ Վերջապէս 10-րդ դարի վերջերում, Սյունիքի Սմբատ իշխանի օրով, Բաղաց գավառում կազմվում է այդ կողմերի թագավորութիւնը, որ երկար մաքաւելով թուրքերի կրկնվող հարձակումների դեմ՝ ընկնում է 1170 թ․։ Բաղաց վերջին ժառանգը, Խաչենցի Հասանը, որին օրգեգրել էր Դրիգոր թագավորը, քաջված է Խաչնի գավառը, և վերջանում է Սիսական տունի թագավորութիւնը Սյունիքում։ Նրա վերջին Տապրոդներից մեկը, Համտուն անունով, կրոնավորելով Նորավանքում՝

¹ Անդ, ԻԱ, էջ 79.

² Անդ, Գ, էջ 18—16.

³ Անդ, ՀԳ, էջ 500—505.

նով թուլանում էր հայկական իշխանութիւնը: Լոկ հայ կամ «Հայոց թագավոր» անունն անգամ այն դարերում հայկական ազգային միութեան մի ազգակ էր: Ըստ Մատթեոս Ուռուսեցու,¹ նրա օրով, երբ չկար Հայոց թագավորութիւնը, Կապանի թագավորներն էին հիշատակվում պատարագի ժամանակ, և այսպես Միջագետքի Ուռուս քաղաքում, այն էլ այն թագավորները, որոնք արդեն մի փոքր զավառի կամ մի երկու ընդդիմը և էին իշխում, Հայերին, որտեղ էլ լինեին, հարկավոր էր, թեկուզ միութարութեան համար, մի հայ թագավոր, քանի որ սեփական թագավոր չունենալը համարվում էր ազգային ամոթ ու նախատինք այլազգիներին առաջ:

Բ Ա Ն Ա Ս Տ Ե Ղ Մ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՍՅՆՓԱՆՆՈՍ ՕՐԲԵԼՅԱՆ

1. «Ողբ ի գիւտաց Կաթուղիկէի».— Թաթարների ժողովրդական օրով, 19-րդ դարի վերջին քաղաքացի սկսում է ծագել բանաստեղծութիւնը. իշխում է չափածո խոսքը: Մոտ երեք դար շարունակ զարգանում է մի բանաստեղծութիւն, որ հին հայ դրականութեան պարծանքներից մեկն է: Հետզհետեւ երևան են գալիս մի քանի քնարական տեսակներ հարուստ բովանդակությամբ ու գեղեցիկ ձևով. Նրանցից առաջինն է Ստեփաննոս Օրբելյանի «Ողբը»:² Ստեփաննոսի ժամանակակիցներն են Խաչատուր Կեչառեցի, Ֆրիկ, Հովհաննէս Երզնկացի և Կոստանդին Երզնկացի. վերջինս թերևս կրտսեր ժամանակակիցը:

Եթե Ստեփաննոսի Պատմութիւնը, ինչպես տեսանք, արտացոլում է Օրբելյան իշխանների և իրեն՝ Ստեփաննոսի տոհմային պահանջի, ապա նրա այս քնարական ընթերցանքը, որ նա հարինել է 1300 թվականին,³ իր մեջ անդրադարձել է հեղինակի և նրա ժամանակի հայ հայրենասիրական ոգին ու խոկերը: Այս տեսակետով պետք է մատչել նրա այս բանաստեղծութիւնը, որի բուն վերնագիրն է. «Բան բարանական ոգետլ դիմառնաբար ի դիմաց Վաղարշապատու Ս. Կաթուղիկէին. Ողբ աւաղականք և ձայն աշխարականք լեալ անհուն հեծեծանոց տաւրման աշխարհիս Հայոց և բնաւին սպառնայ հայրապետութեան և թագաւորութեան համազունդ իշխանութեան, շարեալ չափաւան բերմամբ հոմերական արհեստիս ի Ստեփաննոսէ Սիւնեաց աղբուլէ ի խնդրոյ շնորհազարդ վարդապետի Խաչատուրոյ Կեչառեցի»:⁴ Ով որ էլ եղել է այս վերնագրին գրողը,— ընթերցանի հեղինակը, թէ՛ հավանորեն ուրիշ ոքմին,— նա բնորոշել է դրա բովանդակութիւնը ոչ ամբողջ էական կողմով, Դա լոկ ողբ չէ: Քերթվածի վերջում

¹ Մատթ. Ուռ. Ժամանակագր. Վաղարշ, 1898, էջ 331.

² Ստեփաննոս Օրբելյանի «Ողբ ի ս. Կաթուղիկէն», բնագիրը առաջաբանով և ծանոթութիւններով հրատարակեց Կարապետ Կոստանյանց, Քիֆլիս, 1935.

³ Անդ, էջ 11.

⁴ Անդ, էջ 88 և հոս.

կա մի «Եկեղատեղի բանի բառ անուան ոգոպինա: Ութ տնից հորինված մի «Եկեղատեղի» անա է սա (ամեն մի տունը ութ տոպիկից և տարբեր հանգե-
րով), որի աների առաջին տոպիկը կազմում են «Սանփանոս» (և ոչ «Սան-
փաննոս») գլխակապը: Տներին մեկի մեջ անվանելով հիշյալ Խաչատրին
բարբառակապեա հոգով լինելու, Անյաղթ հետա[որ] շնորհոց ծաղկեալ, բանի-
բուն և շատերից զգովորանեալ, տառ և է, թե նա «Արարատտան տանէն
եկեալ»¹ «գիւթով մեծաւ» հարկադրել է իրեն գրելու իր ջերթվածը՝ «ի
յայա հանդէս բանից մղեալ»: Այս ցույց է աւելի, որ Օրբելյանի բանա-
ստեղծութիւնն արդարեւ է ոչ լոկ անձնական խոհերի, այլ նաւ պէս խոր-
հել է նա և Արարատեան տանը ծանոթ նշանավոր վարդապետը, Խաչա-
տուր Կեչառեցիին, անպայման և ուրիշներն արեւելյան վարդապետներին
ի՞նչ է եղել այդ խոհն ու խոհը, և ինչի՞ արտահայտութիւն է այդ:

2. «Ուրբէ» պատմեղան ելիմք նկատմամբ արեւմտյան հայաւայտ և քե-
ւմ: — Օրբելյանն իր Պատմութեան վերջին գլուխներից մեկի մեջ² մեծ
զայրույթով գրում է, որ Լեոն Թազավորի մահից հետո՝ Կոստանդին կա-
թողիկոսի վրա գնելով բարոյաւ բազումս գրադաս բանից՝ գրելու են
նրան կաթողիկոսութիւնից և բանասերութիւն են չորս տարի: Այս լինում է
1289 թ.: Նրա փոխանակ կաթողիկոս են գնում Սանփաննոս անունով մե-
կին: Այդ ժամանակներում Եգիպտոսի սուլթանը տիրում է Ֆրանկների
իշխանութեան վերջին քաղաքներին և քրիստոնյաների մեծ կոտորածներ
անում: Պաղեստինն ամբողջ նորից ընկնում է մահմեդական լծի տակ: Հեր-
թը հասնում է Հայոց հայրապետական աթոռանիստ Հոռոմեային: Մի ամիս
պաշարելուց հետո՝ 1292 թ. առնում են և այս բերդը, կողոպտում, և կա-
թողիկոսին իր եպիսկոպոսներով և այլ մարդկանցով գերեվարում Եգիպ-
տոս, ուր նա մի տարի բանասերված Մեալով՝ մեռնում է բանտի մեջ:
Եվ այսպէս՝ մոտ 140 տարի հետո Հռոմէլան, Հայոց նշանավոր կաթողի-
կոսների և գրողների նստավայրը, զաղարում է Հայոց կաթողիկոսի աթո-
ռավայր լինելուց: Կաթողիկոս է ձեռնադրվում 1293 թ. Գրիգոր Անավար-
զեցին, որ հարկած ունի ներքուստներ, մի գրվառ, Թուղթ ու բազմաթիվ
շարակեաներ³: Նա նստում է Կիլիկիայի Միս քաղաքում: Կիլիկիայի Հայոց
Թազավորութիւնը մեռակ է մնում և շրջապատված մահմեդական իշխա-
նութիւններով: Մէջ է գալիս ավելի զորեղ կերպով հին քաղաքակառութիւնը
կրօնական զիջումներով օգնութեան թիկունք ակնկալել արդեն հեռու ըն-
կած քրիստոնյաներից: Գրիգոր կաթողիկոսը, որ զփռէր և զլեզու և զգլու-
թութիւն լստին և յոյն ազգին, բռնում է Հոռոմեայի հետ միարանելու ըն-
թացքը: «Նա սկսաւ, — ասում է Օրբելյանը, — առ սակաւ ստեղծա զամենայն
աւանդութիւնս Հոռոմոց եկեղեցւոյն սպրդեալ մուծանել ի մերս եկեղեցի. և
ի մերոյս ի բաց քեցել մի մի: Առաջանում է զգործութիւն և խոռովութիւն.
«Իսկ մեծ հանապաղ աղեցաւ և լերդախոց լինելով ի վերայ այս բանա-
յնի՝ հաշեալ մաշէաք ձփական խորհրդովք ի տուէ և ի գրչերէ: Եվ հետե-
վանքը լինում է այն, որ նա արեւելյան եպիսկոպոսների և իշխանների հա-

¹ Անդ, ԿԸ. ԳԹ. էջ 468—467.

² Ձ ա բ բ է ն ա լ յ ա ն, Հայկ. հին գրք. պատմ., Վնեաթի, 1907, էջ 779.

վանությամբ ու ասորագորությամբ գրուած է վերեւում հիշված թուղթը կաթողիկոսին:

Նետատես ու խոհուն վարդապետները շատ լավ հասկանում էին, որ շրջապատող մահմեդական տերութիւններին վտանգված էր նաև Կիլիկիայի Հայոց թագավորութիւնը: Նրանք նկատում էին նաև արևմտյան հայ հազարականութեան գայթնումը դեպի հունա-հռոմեական եկեղեցիները, ինչ որ պտուտութիւն էր պատճառել տրեւյան և արևմտյան հայ եկեղեցականներին միջև, սկսած դեռ Ներսէս Լամբրոնացու և Գրիգոր Տոսեոբղոս ժամանակներից, Այս ամենի արդասիւքն է ահա պատմագիր եպիսկոպոսի քերթվածը, որ քարոզում է կաթողիկոսական աթոռը փոխադրել Արևելք, Բայց կա և ավելի կարևոր կողմը:

Ըթե Շնորհալին, որ եկեղեցիների միութեան կողմնակիցն էր, համոզված ապաստում էր երկրորդ խաչակրաց արշավանքի (1147—1149 թ.), թե ֆրանկները շուտով պիտի գան, և քրիստոնյաները տիրեն ամբողջ երկրին, և հաւածված ու ցրված քրիստոնյաները գան ժողովվեն իրենց տեղերը և ուրախ կանք վայելին,—ապա այդ հույսը չկա այլևս: Վերադառնալ էր այդ երազը, որ թրեւս երեք չէին էլ ունեցել արևելյան հայերը իրենց բնիկ երկրում: Շնորհալին, թեպետ ողորում էր Հայաստանի քաղաքական իշխանութեան կործանումը, բայց չէր մտածում Հայոց աշխարհում անկախ հայկական թագավորութիւն վերականգնելու մասին: Նա իր քերթվածի մեջ ներկայացուցիչ է հանդիսացել արևմտյան հայութեան, 12-րդ դարի կեսերին, Իսկ Օրբելյանը 13-րդ դարի վերջերում արտահայտիչ է բուն հայաստանցիների իդէալի ու տենչերի: Նա և Խոջատուր Կեչառեցին և Նրանց նման մտածող արևելցիները ամփոփելով իրենց մեջ՝ աշխատում էին մի նոր ազգային գաղափարախոսութիւն զարգացնել և դրանով առաջ բերել ազգային հասարակական շարժում, այն, որ ցրված հայերը ժողովվեն մայր հայրենիքի մեջ, և Հայաստանում, հատկապես Վաղարշապատում լինի ազգի ոչ միայն եկեղեցական, այլև քաղաքական կենտրոնը: Ի՞նչ էր այս քաղաքական ձգտման հիմքը Մեծ Հայաստանում:

3. Քաբարեկամ իշխանութիւնը 13-րդ դարում:—Զարմանալի չէ, որ թաթարների ձախերւում տիրապետութեան շրջանում, 13-րդ դարի վերջում ծագում է Մեծ Հայաստանի քաղաքական ազատութեան գաղափարը: Գեա Կերակոս Գանձակեցին հույս և ակնկալութիւն ունեւ, թե հայերը թաթարական լծից կփրկվեն: Այսպիսի քաղաքական լավատեսութեան հիմքն այն էր, որ թեպետ և հայերն, առանձնապես գլուղաքիչ, տնտեսապես շատ նեղն էին, բայց ազգայնապես դեռ բոլորովին ընկճված չէին այլազգիներից. դեռ կային հայկական իշխանութիւններ, իրենց ներքին ապառազական իրավունքներով, թեպետ թաթարների գերազույն իշխանութեանը ենթակա: Ինչը Ստեփաննոս Օրբելյանը Մյուլնյաց մեծ իշխանութեան պայազատներից մեկն էր, Խոջատուր Կեչառեցին կամ Կեչառեցին էլ բոս երևութիւն, էր հայտնի Պոռչյան տոհմից,¹ որ նշանավոր Պոռչ իշխանից առաջ կոչվում էր

¹ Յակովլեւ Վ. Տաշեան, Աւստրալիացի Ստեփան Կաթողիկոս, Վարաց Աղայանցի, Վիեննա, 1893, էջ 134 և հետ:

Հաղորդական (ճառագրական) կամ Վարդանայ (այլև Հայկազուն)։ Պահպանու-
նինների սեփականությունն է եղել Կեչառուք կամ Կեչառուս (այլև Կեչա-
ռիս) (այժմյան Մաղկաձոր կամ Դարաշիշակ) գյուղն և այնտեղի հուշակավոր
վանքը։ Փրկգոր Մարիստրոսի շինածն է այնտեղի մեծ հոյակապ եկեղեցին։
Իսկ 13-րդ դարի սկիզբներին այդ Կեչառուք գյուղն ու մենաստանը սե-
փական ստացվածքն էր Պոռչյան առևմի, և նշանավոր Պոռչ իշխանի հայրը,
ճառագի որդի Վասակը, 13-րդ դարի առաջին քառորդին շինել է ունի
այնտեղի փոքր զեղեցիկ եկեղեցին ի հիշատակ նաև իր պատրոնների,
Իվանե և Զաքարե եղբայրների¹։ Թաթարական արշավանքի երկրորդ տաս-
նամյակի սկզբում հենց նորոգում են այդ վանքը²։ Նախն և ուրիշ իշխա-
նական առևմեր։ Այսպես Զաքարյաններն, ենթարկվելով թաթարական իշ-
խանությունը, դեռ երկու պահում էին իրենց դիրքը։ Նրանք թաթարների
օրով ևս առժամանակ ժառանգական իրավունքով չէին կորցրել իրենց
դիրքը նաև Անիում։ Բայց այս քաղաքի կառավարությունը հետագայում
մոնղոլ խաների կողմից հանձնվում էր ուրիշ, սովորաբար հայ իշխաններին։

Ավելի կարևոր է հետևյալ պարագան։ Երբ թաթարները ախրում են
ամբողջ Հայաստանին, նրանց արշավանքի ավերիչ հասանքը, որ ինչպես
մերիկ մական ու վրա էր տնում երկիրը, շուտով նստում է։ Նրանց կառա-
վարիչները՝ սահմանված մեծ հարկերը ստանալու համար՝ աշխատում էին
երկիրը խաղաղ պահել, հառաակ աշխատավոր ժողովրդին ապահով և զբո-
սանել կողոպուտից և ավերմունքից։ Նրանք ձգտում էին, որքան կարելի է
շննացնելու և քաղաքավար դարձնելու աշխարհը։ Վերադառնալով էին իրենց
իսկ ձեռքով քանդված ավանները, քաղաքները, ինչպես Գանձակ, Կարին,
Բացի այդ՝ երկրի դառաչյա մասերի կառավարավոր հաղորդակցությամբ հա-
մար՝ շինել էին առաջի համապարհներ, հալածում էին ավազակներին,
Հատուկ ուշադրություն էին դարձնում առևտրական մեծ հանապարհների
ապահովության և կառավարների ազատությանը։ Հայաստանի վրայով դե-
պի Տրապիզոն էր անցնում հին առանցիկ ուղին, որ զործել էր Բագրա-
տունիների և Զաքարյանների օրով և կապում էր Արևելքն Արևմուտքի
հետ։ 13-րդ դարի վերջերում թաթար դանների ձեռնարկությամբ իրեն
վաճառաշահ մեծ կենտրոններ բարձրանում են Ատրպատականի քաղաքները՝
Սուլթանիս և Թավրիզ։ սրանցից էլ Հայաստանի վրայով էին առևտրական
համապարհները դիմում դեպի հյուսիս՝ Սև ծովի ափերն³։ և Խրիմ (Կա-
ֆա, որդի Թեոդոսի քաղաքը) և դեպի Արևմուտք՝ Փոքր Հայաստանի—
Իզմիրի սուլթանության— և Կիլիկիայի հայ թագավորության երկրով,
որ բարեկամ և գաշտակից էր թաթարներին։ Առևտրական կապիտալի
շնարհիվ զարգանում են նաև մեր երկրի քաղաքական կյանքն ու արդյու-

¹ Գեղեցիկ Վ. Մ. Արշիշեն, Այս-բառ Բաշիշեն Հայաստանայ, Վանսիկ,
1900, էջ 266—269։

² К. Костанян, Из армянской литературы XIII—XIV вв. Оттисы из Сбор-
ника, посвященного А. Н. Веселовскому, Москва, 1914, էջ 3։

³ Мюмандян Я. А., О торговле и городах Армении. Эривань, 1930, էջ 103
և հետ. „Развитие международной торговли в могольскую эпоху и участие в ней
городов Армянского нагорья“.

նագործությունը, Կորին, Երզնկա և այլ քաղաքներն առանձնապես կարե-
վոր առևտրական կենտրոններ են դառնում:

Առևտրին ինչպես և երկրի կառավարութան մեջ, ընտկանաբար, մեծ
դեր էին խաղում և հայերը թե հին իշխանական տոհմերից և թե նորերու
ընտանիքներից, Աստվանում են և նոր մեծ կապիտալիստներ, որոնք իրենց
հարստությունը ձեռք էին բերում թե հին հայտնի միջոցներով և թե
այնով, որ վերակացու և հսկող էին դառնում տերության դանձարանք
մոնոպոլիզացիայի ու առաքելության Սյապիսի մեծ կապիտալիստներից պետք է
հիշատակել Պարոն Ստադրինին, որի մասին տեղեկութայններ են ապրիս
արձանագրությունները, սկսած 1263 թվականից մինչև 1291 թ., իսկ 1295
թվին արձանագրություններից մեկի մեջ հիշվում է նաև թոռ Բեսութան
«Ստադրին» եղել է մեկն Սնիթի այն երեք պատրոններից, որոնք «Երիցցուն»
բաժինը՝ վերացրել են տաղածինները՝ միջոցով: Այդ իշխանը, ուրեմն,
եղել է և վարչական անձ. ըստ արձանագրությունների, նա կարգադրու-
թյուններ է տրել հողային սեփականութայնների ու հորկների, կալվածնե-
րի առ ու ծախքի և փոխանակութայն մասին: Ինքը պնել և ուրիշներին
ավել է կալվածներ, ի միջի այլոց 1264 թվականին,—ինչպես Երևանի Կ-
թողիկե եկեղեցու արձանագրությունից իմացվել է,—նա դնել է իր հողով
ու ջրով և Երևան քաղաքը, որ 13—14-րդ դարերում հայտնի է եղել ոչ
միայն իր այգիներով, այլև իր խանութներով իբրև վաճառաշահ մի վայր:

Ենթերիվ վարչության խաղաղասեր քաղաքականության և համեմա-
տական ըստեկարգության, չնայելով չափազանց ծանր հորկերին, Հոյոց
երկրի տնտեսական կյանքը սկսում էր փոքր ինչ աշխուժանալ: Երկրի
մոնոպոլիզացիայի ամենամեծ մասով հայ էր. ընկած դրությունից բարձրանում
էին քաղաքները: Ավեր էր Վաղարշապատը, բայց դեռ կանգուն հայաբնակ
կենտրոններ էին Դվին, Սնի, Կարս, Կորին և այլն. հոն հայ ընտկանու-
թյուն են ունեցել Մեծ Հայաստանի մի քանի նահանգները, ինչպես և
Կիրիկիայի հայկական թագավորությունը և ուրիշ կողմեր:

Հայաստանի քաղաք սկսած Հույոցու դանից (1256—1265 թ.) կապ-
ված է եղել պարսկական մոնղոլների իշխանության հետ. «Իլդանները դո-
վեյի եռանդով ջանում էին նմանել Պարսկաստանի հին իշխողներին, որոնք
հովանավորում էին գրառությունն ու գրականությունը:՝ Սրանից հայերին,
սակայն, այն մասնիկն էր միայն հասնում, որ նրանք ընդհանրապես համ-
բերաբար էին դեպի այլազգիներն ու այլակրոնները: Այդ համբերության

1 Ընթերցե՛ք Պատմ. և Գրակ. Ինստիտուտի Տեղեկագիր, Ա. գիրք, Երևան, 1938, էջ 166 և
հա. Գ. Ղաֆազարյան, «Երևանի կաթողիկեի և Կարապետ հուշարձանի վիճակա-
նորոգման գործընթացները Այս հոդվածից են առնվում և թարգմանվում են հայերեն
Ստադրինի վերաբերյալ:

2 «Տաղմա», «Թաղմա» անվան էր քաղաքներից տանվող առևտրի և արդյունաբե-
րության հորիք. իսկ այդ հորիք հավաքողները հայվում էին «տաղմաճի» կամ «թաղմա-
ղաճի»: «Թաղմա» բառի ազգ գործնական են նաև «թաղ» և «թաղա» և Օրբելի, Անվա ավե-
րակները, էջ 61, Ծան. Թարգմանյի:

3 Станли Лев-Пуль, Мусульманские династии. пер. В. Бартольд, С.-Пет.
1899, էջ 181:

և երկրի խաղաղության հետ՝ բնականաբար լինում է նաև կուլտուրական առաջադիմությունը. մասնավորապես որ թաթարները մինչև մահմեդականության ընդունելը շատ չէին խառնվում Հայաստանի ներքին դորձերին. չկար ընդհանրապես կրոնական հալածանք, հարկից ազատ էին Մուսուլ և Նուբյանիկ հարստանում էին հոգեւորականները, եկեղեցիներն ու վանքերը, որոնք և ազգային լուսավորության ու կուլտուրայի կրողներն էին։ Անգամ թաթարական առաջին ավերիչ արշավանքների ժամանակ և քիչ հետո արդեն հռոնդուն կերպով սկսում էին նորոգել ավերված վանքերը՝ հեշտառու և ուրիշները, ինչպես Վանական վարդապետն էր անում. կառուցում էին և նորերը, վարդապետները հավաքում էին աշակերտներ, կազմում էին գրադարաններ, շինում էին կոմուրջներ, ջրմուղներ և նմանները։ Մի քանի իշխանական տներ, կարողանալով թաթարների հետ բարեկամական հարաբերություն հասնել, հովանավորում էին վանքերին ու գիտնական վարդապետներին։ Եվ այսպիսով Հայաստանում կանգ չի առնում լուսավորության գործը, առաջ են գալիս գրողներ ու միայն հին սերնդից, այլև թաթարների օրով ծնված նոր սերնդից։ Նրանք պահպանում և զարգացնում են հայ կուլտուրական ժառանգությունը։ Առանձնապես հայտնի են դառնում հին Տաթևի վանքը, և ապա Նորավանքն ու Գայլեծորի վանքը Վայոց Ձոր գավառում։

Այս վերջինը կոչվում էր և Աղբերաց վանքը. դրա շինել տվողն ու հովանավորն էր Խաղբակյան Պառլ իշխանի որդին՝ Էսչի, սրա պապը՝ Վասակ, ինչպես ասվեց վերևում, շին էր պահում հեշտառուքի վանքը, որ ըստ 1248 թվականի մի վիժակալ տրձանագրության, նորոգում են թաթարների ավերածությունների օրերում։ Գայլեծորի վանքը հռչակվում է իր զարդացով իբրև «երկրորդ Աթենք»։ Այնտեղ ուսուցիչ էր Ներսես Մշեցի (մեռ. 1284 կամ 1290 թ.) վարդապետը, որ աշակերտել էր Վարդան Արեւիկեցուն, գիտեր և հունարեն և հունական գրականությունը։ Նա սկզբում գործել էր Տարոնի Առաքելաց վանքում, հետո հաստատվել Գայլեծորի վանքում։ Նրա աշակերտներից մեկն և նրա հովորդող էր Եսայի Նչեցին (մեռ. 1338 թ.), Ասատուի Նիչ գյուղից. շատ հեղինակավոր մի վարդապետ, ժամանակի համբավավոր գիտնականներից մեկը, որին անվանում են «Ենամեն փրխափայա», «Այլաղթ հոեաորը»։ Նրանից Մուսուլ և Գրական աշխատություններ—Ս. Գրքի մեկնություններ, թղթեր, «Վիհաբանություն», «Մեկնութիւն քերականի»։ Նա իր երկարամյա գործունեության ընթացքում Գլաձորի վանքում պատրաստել է բազմաթիվ աշակերտներ, թվով մինչև 363, ինչպես հաջվում են։ Այդ վանքում, ինչպես նաև մյուսների մեջ, բացի Ս. Գրքի ու կրոնական գիտությունների հմուտությունից, ուսուցանում էին նաև քերականություն և փրխափայություն, Արիստոտելի, Պորփիրի, Դիոնիս Թրակացու և ուրիշների մեկնություններով։ Նրանք ժողովում էին և ձեռագիրներ, զբաղվում էին ձեռագիրների տրամադրությամբ՝ գրքեր բազմապատկելու համար. երբեմն և ծաղիկ գրքերով ու մանրանկարներով զարդարում էին իրենց տրամադրած ձեռագիրները։ Եսայի Նչեցու աշակերտներից իբրև ծաղկաբար և մանրանկարիչ, միաժամանակ և իբրև գիտնական վարդապետ, հայտնի է Միքիթա Սասունցի

(1201—1237 թ.)¹ Սա աշակերտել էր Նախ Ներսես Մշեցուն, հետո Նսայի Նշեցուն. ապա ուսուցիչ է եղել Մեծոփա վանքում և պատրաստել բազմաթիվ աշակերտներ: Պարտպել է և զրազանությամբ՝ հորինելով ճառեր, մեկնություններ և այլ գրվածքներ:

Արդարև լավագույն կացութիւններ 13-րդ դարի վերջին զուգորդին շատ հարափոփոխ էր. թաթար իշխանները հաճախ զենքի ուժով միմյանց դեմ էին ելնում. նրանցից շատերը հենվում էին մահադադականների վրա և հակված էին մահմեդականության կողմը և նույնիսկ երբեմն հալածանքներ էին հանում քրիստոնյաների դեմ. բայց կային նաև դժներ, որոնք բարեմիտ էին դեպի քրիստոնյաները. զի սրանց մեջ էին տեսնում իրենց թիկունքը: Այսպիսիներից էին Հուլավուզ դանը, որի համար Ստ. Օրբելյանը (էջ 419) գրում է. «Մեծ և բարեպաշտ արքայն աշխարհակալ, յոյսն և անկախութիւնն քրիստոնէիցն». նրա որդին՝ Ապապա, «այր հեզ և բարի և խաղաղարար. և սա սիրող քրիստոնէիցն»: Ապապայի մահից հետո (1262 թ.), ինչպես գրում է Ստեփաննոս Օրբելյանը,² «նստի Թաղուտուն՝ եղբորորդի նորին՝ դոն մեծնայն աշխարհի. որ և Ահմադ անուանեաց զինքն. և խորհեցաւ զազել զօրէնս քրիստոնէութեան և առնել մըրյաժն զամենայն ազգս: Նա իր զանը հաստատուն դարձնելու համար՝ 1286 թ. «զնաց անուռն զօրօք ի նորասան ի վերայ Արղունին՝ որդւոյ Ապապայ դանին, զի սպանցէ զժառանգ թագաւորութեանն. և կալեալ դնա դարձաւ այսրէն: Իսկ Աստուածմ քրիստոնէից յայնմ զիւրի դարձուց զսիրտ մեծամեծացն աւ Արղունն, զոր հանեալ ի բանալի կապանացն՝ թագաւորեցուցին և սուր ի վերայ եղեալ կոտորեցին զամենայն թշնամիս նորա: Հասեալ զկնի սատակեցին զԱհմադն և զհամախոս իւր՝ զՀոսան Մանլի շիւն, զՍաւիդ զիւանն, զԱլիսախն և զայլս բազումս:

Սա էր ընդ նոսա թագաւորն Դեմետրէ, զոր սիրեաց Արղունն, և ետ նմա զամենայն աշխարհս Հայոց՝ պոռնն Ասպիւհան (Ալազն ի վանքի որդին էր) և պոռնն Շահանշահան [= Ջուզարեի] և զԳազցին և զՕրդիսն Սաղուն Աթաբեկին: Սա ինքն էր յոյժ սիրող քրիստոնէից և եկեղեցեաց: Էր ընդ նոսա և Տարսայիճն [= Ստեփաննոսի հայրը], զոր յոյժ մեծարեաց և սիրեաց Արղունն: Ապա դարձաւ Դեմետրէ մեծաւ խնդութեամբ և ամենայն ազաւօք: Եւ մեծամեծն Վրաց և Հայոց ընդ նմա. Սա հեկալ ի Շարուր՝ զնաց նմա ընդ առաջ Տարսայիճն մեծամեծ պատուով, և արքունական ընծայիւք մեծարեաց զթագաւորն: Սա նա առեալ տարաւ ընդ իւր զնա յերկիրն Աստղեան՝ յԱյրարատ. և բազում թախանձանք բռնադատեաց զնա, և եղ Աթաբեկ ի վերայ ամենայն տէրութեան իւրոյ մինչև ի Տփլիս և յԱնի և ի Կարս... Սա յայնմ հետէ ունէր Տարսայիճն զաթաբեկութիւն աշխարհիս Հայոց և բազում զիւրութիւն և ողորմութիւն առնէր նեղեալ ազգիս Հայոց: Նա Տփլիս գնալով՝ այնտեղի արքունի զիւլանի հարկաւորութիւն դադարեց հանում է 150-ից միլիոն հայկական վանքեր և ապառաւ է հարկից:

¹ К. Костанянц, Из армянской литературы XIII—XIV в. в. Оттиск из Сборника, посвященного А. Н. Веселовскому. Москва, 1914, էջ 8—9.

² Ստ. Օրբ. Պատմ. Նահանգին Միտակն, էջ 426 և հետև.

Թվում է, թե արդեն առաջացել էր հայկական մարզերի քաղաքական միությունը մեկ հայ իշխանի ձեռի առկ, և վերականգնվում էր Ձաքորյան արքայազնության շրջանը։ Բայց ցավոք, երկուր չի տևում այն, Դեմետրի թագավորը սպանվում է 1289 թ., և հաջորդ ասորին վախճանվում է Տար-
օայիճը։ Վերանում է Հայաստանի քաղաքական միությունը մի հայ իշխա-
նի կառավարությամբ, և հայ իշխանները մտած են իրարուց անջատ։ Բայց
դրանով չի մեղմում Հայաստանի քաղաքական միության դադարաբեր, դու-
ցն և ավելի ես ծավալվում է այն, անշուշտ ոչ ժողովրդի բոլոր խավերի
մեջ, այլ նշանավոր իշխանների ու վարդապետների։

Այլ գրություն է ստեղծվում, երբ թաթարների մեծամասնությունը
Արդունի որդի Ղազան դանի (1296—1304) օրով և նրա հրամանով ընդու-
նում են մահմեդականութուն և հետզհետե սկսում են, իբրև մոլեռանդ
մահմեդականներ, ավելի ու ավելի նեղություն պատճառել հայերին, և հա-
յերի ընդհանուր դրությունն ավելի ու ավելի վաթաթառնում է 14-րդ դա-
սի կեսերին և հետո։ Հայերն այն ժամանակ արգեն հուսախաբ են լինում
իրենց քաղաքական խղճերի մեջ, բայց 13-րդ դարի վերջերում, և նույնիսկ
Ղազան դանի օրով, որ բարեհաճ էր դեպի հայերը, դեռ կենդանի է եղել
Հայաստանի քաղաքական անկախության դադարաբեր, որ և անդրադարձել
մեր բանաստեղծության մեջ։ Տեսնենք այժմ այդ։

4. Օրբելյանի ռոմանսը ձև էր ինքնավաճի։—Այս քերթվածի հիմն-
կան դադարների համեմատ էլ ամրագրությամբ բնութագրված և համարված է նրա
նյութը (սյուժետը) և ընդհանուր հոբինվածքը։ Ինչպես միտումնավոր վի-
պական բանաստեղծության մեջ անուղղակի արվում է որևէ բարոյական
ուսում, նույնպես և այս քերթվածի հեղինակն իր հիմնական դադարաբեր
քաղաքական է և իր գլխավորներն արտադրական է իբրև «Արքայունի» անձ-
նավորված կաթողիկոսի բերանով։ Սա քերթվածի կենտրոնն է։

Ձայն բարձրագույն և ահագին

Նման օդոցդ որոտացին։

Կանչին ահա և սաստկացին

Գայ ի դաշաճեց Արարատին։

Այսպես է սկսել Օրբելյանն իր ռոմանսը։ Ձայնը լսվում է մահն ահա և հա-
վիրում է՝

Երթալ ի գուժ աղաղակին։

Հսողներն այդ ձայնի վրա դառնում են մահաբեր քնից, խուճն կորավան
կապած իրար ետևից դիմում են դեպի «Արամալվինեան առանձն, լցնում
Արարատյան գաղաթ, հասնում Հայոց Նոր Քաղաքը—Վաղարշապատ։ Եվ Բնչ
են տեսնում։

Տեսին ի նմա դառալունին...

Ձմայրն լուսոյ Հայկաջ դարմին,

Մերկ, խոյաառակ ի ըթթոնին,

Ձանձաթ արկեալ գըռըճ խաւարին,

Հերքն ճողհալ որպէս կնախն,
Ստինքն ցամաք դերդ ըսկընդկին.¹
Ջկուրծքն բախէր քարամբ ուժգին,
Առաք տրեանց իջնէին.
Մսխիր կուտէր նման բլրին,
Յանէր ձեռամբն ի ստղաթին:
Նրամք կանանց ճշող ջայլից
Շաւրջանակի զնա պարէին.
Դասք երգողաց կանգնեալ կային,
Ջգամբանական փողս անէին.
Աւաղական ողբովք լային
Ջգալարտփողսն հնչէին.
Յէսքն շիւան մեծ քարշէին,
Յէսքն դվարսիցըն փեռէին:

Եկողները հարցնում են ողբացող Արքայունուն.

Այս Տվ, այս Տվ ի բազմոցին
Նման մեծի արքայունայն.
Այս ի՞նչ, այս թիչ սուգ ժնհաբին...

Նա, մեծ թագուհին, սրտի խորքից հոգոց հանելով պատասխանում է.

Այս ես, այս ես էջք Միածնին...
Իսկ այս՝ որ շուրջ զինն պարեն՝
Մն իմ դատերքն որ նախ ելին...
Եկեղեցիք Հայաստանին.
Ժողովեցաք ի միասին
Լնուլ ողբովք դաշխարհ բնաւին:

Ուրեմն Արքայունուն, այսինքն «Կաթողիկէին» [գլխավորաբար] շրջապատող լաւկան կանանց երամբ պատկերացնում է Հայաստանի «Կաթողիկէին» — մայր եկեղեցու գլխաւոր եկեղեցիներն ու վանքերը, որ մեծ մասամբ նույնպէս ամայացած էին: Եվ Արքայունին բացատրելով իր սուգի պատճառը՝ ասում է եկողներին.

Երբեմն էի որպէս զերկին,
Հիմ հաւասար եմ գահին.
Երբեմն արփի տրեւածին,
Այժմ խաւար անհնարին...
Երբեմն հարսն տաազատին,
Մածեալ գրկօքն իմ փեսային,
Այժմ եմ սեղեխ օտարոտին,
Անպէս նման հոսեալ ջրին:

¹ Սկզբիկ — ամուլ կամ երեխա չունեցող օրրեայրի կին:

Խաչատուր Կեչառեցին, անշուշտ, վշտահար սրտով պատմել է Օրբել-
լյանին Վաղարշապատի Կաթողիկեի տխուր դրությունը, որ և անդրադարձ-
վել է «Ողբի» մեջ.

Այժմ անդիտան նման աղբին,
Եղեալ կոխան չորքոտանւոյն...
... Սկիւթացի հօրանք թուրքին,
Կամ խայտառակ մանկունք նոցին,
Որք միշտ կոխան... տունէին,
Տեղիք չարեացն, որք զործէին...
Փոխան բուրժանցըն նարդոսի
Աղբք և աւերք... կուտին...
Չորանք այծից... բռնին:

Կնդանակի՝ Կաթողիկեն լքված, անուշադրության է մատնված հզել,
մի ամայի անշնն դաշտի մեջ, Ավեր է հզել և Վաղարշապատ մայրաքաղա-
քը, և շուրջը միայն խաչնորոտի տեղ: Այդ դրությունից է, որ «այրի»
«Արքայունէն», այսինքն ի բաց լքված հեկեղեցին, հչալով ողբում է: Եվ նա
բացատրում է իր ցավալից վիճակի պատճառը, այն է՝ Հայաստանի քաղա-
քական անկախության անկումը և այլադիմեքի տիրակալությունը, երկրի
ազնվածքը, իշխանների դուրս ջշվելը, կորչելը... Եվ քերթողը Արքայունե-
րեանով երկտը կռնդ է առնում Արշակունի, Բագրատունի, Արծրունի և
նույնիսկ Սիւսական թագավորությունների և նրանց կործանման վրա, և
վերջը հարում է.

Ահա սոցա այսպէս անցին.
Բնաւին ի բաց հղձեալ դնացին.
Որպէս զստուհիւրք այլ չերին.
Նման երազոյ կործեց թուին,
Որպէս ծաղիկք ամառայնոյն
Արևակէզ թարշածեցին.
Որպէս սաղաթթց վարսեալ ծառին
Խորշակահար ցամաքեցին...
Արդ ոչ ևս է, ոչ երեին,
Անէացեալք նման նանրին:

Ի՞նչ է հզել հայկական քաղաքական անկախության անկման հետե-
վանքը: Հայ իշխանությունները, — շարունակում է ողբացող Արքայունին, —
անցան ոչնչացան, և

Միայն այրի գիւ տառ թողին,
Որպէս գոչինչ ի բաց լքին:

Իսկ ի՞նչ է մատնում Արքայունին, որ նույն է ի՞նչ գաղափար է քարա-
ղում հեղինակը նրա բեքանով: Նա շարունակում է տեսել.

Արդ մենացեւ յանվայր [— անշէն] դաշտին
Զերդ զգազան անապատին,
Զաշուերս ասեմ հողկադադին,
Ջաշն արձակեմ ողորմագին,
«Ու՛ր էք, որդիքդ իմ սրբածին,
Եկայք առ մայրըս ձեր նախկին,
Որպէս օրէնն է զաւակին,
Տանել խնամ ձեր ծնողին»:

Ահա թե ինչ է քարոզում նա — վերագործ դեպի մայր երկիրը, հոգալ սրտ համար, Վերագործ մօն ամենքի, որոնք իրենց օտարական են համարել չափաց աշխարհից դուրս և միշտ կարոտով նայել դեպի իրենց մայր երկիրը, Ռայց առկովին առհասարակ ուշադիր չեն այդ կոչի ձայնին. և այրի թագուհու վիճակը մնում է նույնը, որ վերցում տեսանք. նա որոնակու է այլազգիներէից:

Տեսէ՛ք զիմ փառքն զառօջին,
Տեսէ՛ք զվերջին նախառս անձին,
Թէ ուր էի, 'ս ուր ընկեցին,
Յերկնից յերկիր դիս իջուցին,
Քորք անդնորց զիս ծածկեցին...
Ու՛ր են փեսայքս իմ առօջին,
Չայրապետաց ջուկքն որ անցին,
Ու՛ր թագաւորքն իմ են նախկին,
Ու՛ր և ազառքն ընդ սեպուհին,
Ու՛ր են իշխանք զաւարիւրին,
Նախորարաց կոյաքն որ կային,
Ու՛ր զօրութիւնք բիւր բանակին,
Քուսնեալ ամբոխքն անթուխին,
Ու՛ր բարունիքն օր յիւ կային...

Եվ մի մեծ շարք ճարտասանակա՛ն հարցումներով հիշեցվում է չափասանի անցյալ փառքն ու ճոխութիւնը, որ, — ասում է, —

Նման հողմոյ յիս ընչեցին
Ու անհետ ի բաց անցեալ զնացին:

Եվ իրեն մնում է լուր ու վախ տալ իր գլխին և դիմում է եկողներին, որ նրանք էլ վախ տան:

Փոխան բուրմանցըն նաբդոսի
Ազբք և աւիշք ի քեզ կուտին...
Փոխան զնմանց պարարակին
Հօրանք այժից ի քեզ բուռին.
Ա՛յ վա՛յ քեզ վա՛յ որ չվճարին,
Վա՛յ քո փեսայքն առօջին...
Վա՛յ զքո երէցն Աբրահուհին.

Վե՛յ դժո՛ կրտսեր Բաղրատունին.
Վե՛յ դժո՛ Սիւնին և զԱբծրունին.
Վե՛յ զՄոսիկունին և զԱղուանին,
Վե՛ զԵթրեկուն և զՎանանդին.
Վե՛յ զՏաթևոյն և զՄոփացին...

Այսպէս սաստիկ ողբ ու կոծ. բայց՝ ժինչև Բրբ, նմ Արքայունին զերջը դիմում է իր շնախածին զոսաբներին (Հայաստանի եկեղեցիներին-վանքներին), և նրանց, որ եկել էին նրա կոչին՝ և իր մոտ էին, խոսքն ուղղում է նաև այն ժամանակվա ընդ որ նշանավոր վանքներին ու հայկական կենտրոններին, և հայաբնակ վայրերին, որ են՝ Դվին, Անի, Վախիք՝ և Աղուանք ընդ Վերային, Ամարաս վանք, Արաղի Թաղեոս առաքյալի վանք:

«Հաղթատ, Բջին՝ և Ամատունին,
Որ յԱրագած ես յԱնբերդին.
Բազումն և Կարս ընդ Բասենոյն,
Կարին քաղաք բարձր հային,
Վասպուրական առնող Վանին,
Տարօն, Սասունք և Մոփային,
Եւ այլ աշխարհ հայաստանին՝
Միջագետաց և Հաւսմին,
Կիւլիկիայ, Կոզմ Ուորին,
Պատուհաւ զլիովքը՝ մեր նախկին»¹

Նա խոսքն ուղղելով այս ամենքին՝ ասում է.

Թողումք զոգրանքըս ցաւազին,
ԱւնՍմք աւարա լալեաց բանին.
Յուսահատիւ չէ յարա բնաւին:

¹ Բնագիրն է՝ «Զորս և առ իս ժողովեցին»-և նրանց որ ինչ մոտ ժողովեցին «Ժողովեցին» բայն այստեղ հաշմանի մ-բղ զեմքով չէ, այլ եղակի 1-ին զեմքով: Վերջի «ն» առաջ հաջ է:

² Տղված է «Կիւլիկիայ կողմ ստորին», իբր Կիւլիկիան կոչվելու լինելը «կողմ ստորին» Ուղղում եմ ինչպէս զբժան է վերեւում: Այսպէս՝ «Կողմ Ստորին», «Աշխարհ Ստորին» կոչվում է նին Կամագանի և հետագայի մփրատեցի կոչված աշխարհը, ներսն Շնորհալու: «Միջերկրայն առվանած երկրամաս», որ, ինչպէս Շնորհալու կենսագրութան մեջ ասանք, ընկնում էր Կիւլիկիայից արեւելք և մփրատից արեւմուտք և Հրաբխ-արեւմուտք. որ և մի-ժամանակ Անտիոքի Գրեանի իշխանութան ներքն է եղել: Այստեղ էին Սն լեռները, Կարմիր վանք և Սոփա ու հասկլու կաթողիկոսական «թառնեկանները»: Սրան է ակնարկում Օրբելլանը, երբ Վասպին Կողմի համար գրում է «պատուհաւ զլիովքը մեր նախկին», այսինքն նախկին կաթողիկոսներով, որ են՝ Յրեգոր Վայոտեբ, Յրեգոր Պաւլադանի, Ներսէս Շնորհալու և ուրիշները: Քիչ առաջ էլ «Ողբեր մի» Օրբելլանը կաթողիկոսի բերանով ասում է. «Փեսայ [«կաթողիկոսը»] այրի Թաղեւ [չիս կաթողիկոս] հայածեցաւ յԱշխարհ Ստորին, Ներսէս Շնորհալու: «Ստորին» Ողբեր մեջ էլ Անտիոքին զիմեւաց հետա՝ աւելած է. «Արդ՝ ի Ստորին Կողմ աշխարհի Ջոր խոսեցաք»՝ շատացի. Բայց բանը մեր փոփոխեցի, Յիւս արեւս վերադարձից, Առ Մեծըն լայն, աւաւ Թորգոմի: Օրբելլանի Պատմութան մեջ (գլխի հԸ, էջ 430) Մեծ Հայքը կոչվում է Վերին Աշխարհ Արեւելիցս

Պեաք է զարթնել ինքնամոռացութեան քնիք.

Ձարթնուլ ի քնոյ պրտզուկնին:

Վախճան կլինի հայերի կրած բազմայա չարքիքն, կնորոզվի կյանքն,
— առում է Աբջառահին:

Նա [= ահա] նորոգուժըն մեզ կրկին,
Որ բնաւ չյիշեմք զփառան առաջին.
Կանգնէ [Աստված] զաթոռ թաւաւորին,
Սւ զգաւազան պաարիւրքին,
Ամենեցունց ըստ իւր կարգին,
Ուզգէ զգահոյս տիրակնին [= տերութեան].
Նոր զարգարէ փառօքնն հին,
Ուս առաւել քան զոր էին.
Տալ մեզ գոչել ձայնիւ ուժգին.
Եվերջինս է մեծ քան դառաջինս:

Ահա Օրբելյանի քերթվածի նյութն ու գլխավոր գաղափորը: Հայրենասիրությունը նրա երկի մեջ ավելի խորացած է, դարձած մի կոնկրետ ձգտում: Այդ ալիս ոչ թե լոկ ողբ էր, ոչ թե տարագիր ժողովրդին հավաքելու և փրկելու մի տարտամ իղձ և աղ-թք էր, որ երգել էր դեռ Հովհաննես (Եսայանէս) Ստրկավազ Վարդապետը. ոչ թե մի երազ արևմտյան ազգերի ձեռով փրկվելու արևելյան քրիստոնեութեան հետ, այլ քարոզվում էր վերջ տալ ողբանքին, խնամ ասնել սեփական երկրին, ձգտել բնիկ երկրում աւսնալու եկեղեցական կենտրոնը. և Այրարատյան դաշտում, իր նախկին վայրում, վերանորոգելու Հայաց թագավորական դահլը: Այս արգեն մի նոր ու մեծ, պարզ ու որոշ գործացում էր մեր հայրենասիրական երգի մեջ արձարված գաղափորը— սիրով կապվել բուն հայկական երկրի հետ և կլինի շնորհաւոր:

Ճ. Ուրիշ ձեռագիր կոչվում:— Վերևում բերված բովանդակութեանից և հատվածներից կարելի է տեսնել, որ Օրբելյանի բանաստեղծութեան ձևն ըստ ընդհանուր կառուցվածքի հարմար ու փոփոխվել է մտածված. ըստ ոճի կամ մանրամասների արտահայտության, սակայն, բավական ազատ է, չունի պերճութեան. հայ թագավորութեանների մասին պատմող կտորների մեջ նույնիսկ պարզախի է հնչում: Բայց զրվածքն ընդհանրապես չոր ու ցամաք չէ, ինչպես զուցե թվա ռմանց: Դա ազդում է, որովհետև շնչում է մի անկեղծ ջերմ զգացմունք, որ կենդանութուն է տալիս ամբողջին, և որովհետև իր էական գաղափարով մտածել է թելադրում ընթերցողին: Դրանցով այդ երկը հաճույք է պատճառել իր ժամանակին, պատճառում է և մեզ իսկ:

Օրբելյանի քերթվածի ձևական թերութունը պարզ ու հասարակ ոճի մեջ չէ, — քանի որ այսպիսի ձևով էլ բանաստեղծութեանը կարող է դեղեցիկ լինել: — այլ պակաս ինքնաբերականության մեջ, Դա մասամբ նմանողութեան է Ներսես Շնորհալու ընդհանուր Ողբին: Ավելիորդ է այստեղ դնել այդ երկուսի մանրամասն համեմատությունը, նրկուսի մեջ էլ ընարված է դի-

մանուկներն ձեռք, Ծղկախան իբրև ողբացող ալիքի կին կամ ախիկն, Ղաղաղ-
շաղաթի Կաթուղիկին՝ իբրև նույնպիսի Թաղուհի, Երկուսն էլ ուրիշներին
կոչում են ի ողբակցության: Երկուսի մեջ էլ հին լավ օրերի և ժամանա-
կակից աղետալից վիճակի հանդիպողություն, որ սակայն Ն. Շնորհալուց
առաջ էլ աբել է ողբացող Աբրահամիկս Լասափիկացիին: Երկուսի մեջ էլ դրա
համար կիրառված են ուրախ բառով ճարտասանական հարցումներ: Կան
նաև մի քանի նման պոետիկներ և այլ թեթև նամակաթյուններ, որ երկ-
ուրեքական են, օրինակ՝ սպառնող կնոջ նկարագրի մեջ Շնորհալին ունի՝
«Բարաժը քեզիմ կուրծքս սրած, Օրբելյանը՝ Ձկուրքըն բախէր քարմը
ուսդին: Անցնել և այլևս չերևալ սովերի պես կամ երազի պես. կամ «Որ-
պէս ձողիկ մամբային» (Են.). «Որպէս ձողիկը մամբայնոյն» (Օրբ.):
Բայց այդ ամենը, բացի զուցե բարաճանթյունից, կարող են համեմատ լի-
նել նյութի նմանության պոետական և միայնացից անկախ ևս ծագած լի-
նել իրական կյանքից: Բացի այդ՝ շատ ճարտասանական և բանաստեղծա-
կան պոետիկաբանություններ այն ժամանակներում եղել են ընդհանուր
տեղիներ և սովորական դարձվածներ. ինչպես՝ Կաթուղիկին անվանել են
մայր եկեղեցի, իսկ մյուս եկեղեցիները՝ նրա դուստրներ: Սրանից էլ կա-
րող է բխած լինել Ղաղաղշաղաթի Կաթուղիկի բարաճանկան պոետիկա-
բան: Իբրև մի կին, շրջապատված իր դուստրներով—եկեղեցիներով, վառ-
քերով: Բայց այս ամեն ձևական նամակաթյունները երկուրդական են, քանի
որ Օրբելյանի երկի ընդհանուր հորինվածքն ու նրա զարգացումը հնդի-
նակի իրեն (զուցե Խաչատուր Կեչուհեցու հետ խորհրդակցությամբ) ստեղ-
ծածն են և նյութին ու թեմային համար ու վայելույ մատնված ու զուրկ
բերված: Եվ որ զլիարժեք է, ինչպես վերևում ասվեց, նա արատհայախ է
դարձել արևելյան հայության որոշ խավերի:

ԽԱՅԱՑՈՒՄ ԿԵՉՈՒԽԵՑԻ

1. Ողբ վառձ իշխեմաց:—Այս զրոգի մասին չունինք ուրիշ կենսագրա-
կան տեղեկություններ, բացի վերևում հիշվածներից, որ իմանում ենք Օր-
բելյանից, որոնցից և երևում է, որ նա մի հեղինակ է, որ պատկառելի
գիտնական է եղել, Կեչուհեցու կամ Կեչուհիս վառձի առաջնորդ կամ միա-
բան, ուստի և ըստ ժամանակի սովորության կոչվել է Կեչուհեցի կամ
Կեչուհեցի: Դուցե և այդպես անվանվել է իր ծննդնիցով: Պատի որ, ինչ-
պես տեսանք, Կեչուհեցու զրոգելով է Օրբելյանը գրել իր «Ողբը», ապա
ողտտել է, որ նա ինքն էլ հայրենասիրական ոգով ազդրված լինել: Այն-
չանք հիշում է Կեչուհեցու «Ողբը» վասն աւերած առան արևելեան»¹ և
քերում է արանից ութ տող: Այդ, ըստ երևույթին, նույնն է, ինչ որ մի
ուրիշ ձեռագիրի մեջ կա «Ողբ Խաչատուր Կեչուհեցուն վասն իշխեմաց
վերնադրով»² որովհետև որո մեջ կան մեր բանաստեղծ բանասերի իր մեծ

¹ Ղ. Ալիշան, «Որբություն», էջ 268 ա. 18—25.

² Հայաստանի Պատմ. Զեյթունյան (Մատենադարան), զբաղվող թիվ 433 (Գանձարան),
էջ 681—682: Այս «Ողբը» արագորությունը շնորհակալությամբ առաքա Մատ. գիտ. տիպո-
գրից Լ. Խաչիկյանից:

աշխատութեան մեջ առած ութ առդերը, Այս «Ողբը» կազմված է երկու մասից. երկուսն էլ արվեստի տեսանկետից աննշան բաներ են, բայց արժեք ունեն իրենց՝ պատմական բովանդակությամբ:

Ինչպես վերևում տեսանք, Մյունխի Տաբայիճ իշխանը, որ ընդարձակ սահմաններով Հայաստանի կառավարիչ էր, մեռել է 1290 թ., և զրանից հետո Արենկյան Հայաստանի վիճակն սկսել է վատանալ: Ղազան դանի իշխանութեան սկզբում (1295 թ.), նրա դուրմար Նավբուզը, որ այսօր առեցրող էր քրիստոնէից և թշնամի եկեղեցեաց, հրամայում է բառհասարակ քանկել զամենայն եկեղեցիս, և կողոպտել զամենայն այր քրիստոնեա և, թլփառել զքահանայս: Երանցին բողոսմ եկեղեցիս. խողխողեցին բազում քահանայս. կոտորեցին բազում քրիստոնեայս. և որք ի սրոյն մեացին՝ կողոպտեցին զամենայն ինչս. գերեցին բազում կանայս և մանկախոս: Եվ այդպէս վարվել են, մինչև որ Կիլիկիայի Հայոց Թադավոր Հեթումի միջնորդութեամբ՝ Ղազան դանը հրամայել է զազարեցնել քրիստոնյաների հալածանքը, և չլինէր խողաղութիւն մեզ և ամենայն աշխարհիս Հայաց, զբոսմ է Սոսփանոս Օրբելյանը՝ Խաչատուր Կնչառեցու «Ողբին» մեջ պատկերացված է ահա Արենկյան Հայաստանի այս ախուր դրութիւնը 1295 թվականին, և երևում է, որ նա այն միջոցին էլ հորինել է իր քերթվածը, ինչպես Ֆրիկն իբ նշանավոր մի բանաստեղծութիւնը, որ կոտանենք հետո: Նա ողբում է մեջ բերելով երկրի ըստ եկեղեցական հայացքի ընկած դրութիւնը:

Ջերկիրս արեամբ, մեղաք ներկեցաք...

Ջեկեղեցեաց դրուներս փակեցաք...

Չառադանին խորհուրդն ուրացաք...

Ջխաչն և զազորդդն զայբացուցաք,

Ջեկեղեցին սուրբ քամակեցաք.

Մաղր ու նախատ բազմաց մեք եղաք.

Յերկաթ ու ի նեզ զընդան մեք մըտաք,

Յողքատութիւնս ար ժամանեցաք...

Ի ձեռն չար ազգի գրաւեցաք.

Բըթիլի չուսինք ցաւիս ար գիպաք...

Ինչպէս է այդպէս:—Որովհետեւ այլևս չկան հին հայ իշխանները, — մտածում է քերթողը, Եվ նա իր քերթվածի երկրորդ մասի մեջ մեկ մեկ թվում է իր շրջանի նշանավոր իշխաններին.

Մեռան իշխանքն մեր ցանկալի,

Ու իրեանց որդիքն աղայ հասակի.

Սուզըն աիրեաց մեզ Իսրայէլի...

Սադոն, սիրած մեծ Ազատ դանի,

Գոված, ընտիր յամէն հանգիսի,

Չաչերըդ բաց, զինչ Դամակոսի,

Տես բզգաւառս ի յերերմանի,

Ջեկեղեցիքս ի մեծ վըտմնի,

1 Ս. Օրբելեան, Պատմ. Նախնային Միապետ, Թիֆլիս, 1910, էջ 471—473:

Ու քառամայրս ի տարտարոսի,
 Զեռնութիւն բուղայն յարեան հալուի,
 Զիւքեան նըման պատկերն ի մոխրի.
 Զբըթայն շիշխեմ յիշիլ զվրացի,
 Զառլաս երեան զհեմհարէի,
 Որ դեռ քըրտունքն ի վայր կու վաթի՝
 Միրաբն քաղած, աւ դեռ կենդանի.
 Պարոն Պրոսպրն զբըզ հեմեւի,
 Որ զերկաթի զուռն առնէր փոշի,
 Այնու քաղաւկ էր նոր Սիսնի,
 Հիմն հաստատ Հայոց հաւասար...

Նա ալապիս գովելով Շիրում է և Պրոշի ողբիներին, Տարսայե՛ն իշխա-
 նին և ուրիշներին. վերջը բացականշում է արամուկթյամբ լի.

Աւագ, թէ գորն առեմ ի լուի,
 Զայն հին ու նորքն ի դերեզմանի.
 Վա՛յ զմեացորդքս սուտ կենդանի,
 Մակար չէմք ծընեալ յայտարհի,
 Արդ զերեցած ու խիստ արժանի,
 Մեր զերազարձքն չեն ի միջի.
 Աւզնեմ մեզ ի նեղութեան մերում,
 Աստուած, ազաչեմք։—

Ալապիս աղթքով վերջացնում է նաև առաջին մասը։

Նրա երկի արժեքը միայն այն չէ, որ նա ազգովի է ժամանակի իրա-
 կանությունից, այլ ավելի այն, որ ողբելով Հայաստանի թշվառ դրու-
 թյունը՝ երկբարդ մասի մեջ կտրոտով հիշում է հին նշանավոր իշխաննե-
 րին, որմք սկոբինքն առնե՛ն էին, զգաւբաւոր ի պատերազմիս, զպա-
 տուեցան ի դուռն արքունիս կամ, ինչպես մեկի համար գրում է միջնա-
 դարի համար մի անպասելի հոմեմատությամբ,

Հանց ուժընդակ էր ինքն յատենի,
 Պան Պրիստոսի նըշանն [—խոյն] ի բեմբի։

Պերթողը խիստ ցավում է, որ ալիւս չկան նրանք. եթե լինեին
 այնպիսի իշխաններ, մեր երկիրն արյունով չէր ներկվիլ, թվում է, թե
 նույն տարիներին հենց մեր այս քերթողի մտքում ծագել է Հայաստանի
 կենտրոնում հայկական քաղաքական իշխանությունը վերականգնելու գա-
 ղափարը, որ քիչ հետո երգել է Սահմաննու Օրբելյանը հենց այս քերթողի
 հարգարանքով. Պետք էր հայերին ուսուցանել, թե ինչ էր հարկավոր իրենց
 փրկության համար։

2. «Պատմութիւն Աղեփտեագրի Մովսէսեանցոյ»։—Քաջառուր կնշառեցին
 զբազանության համար ուրիշ կողմից էլ ռքող դեր կատարել է, թաթար-
 ների իշխանության օրով, 13-րդ դարի երկրորդ կեսին, ինչպես տեսանք,
 կանգ չի առել հայկական քաղաքների բարգաւաճումը. նրանց բնակիչ-

ներն էլ ունենին իրենց գրական պահանջը: Բացի գուտանական երգերից, որոնք զվարճացնում էին փարթամ քաղաքացիներին նրանց ուրախության խնջույքների միջոցին, ծագում է նաև քերական ընթերցանությամբ զբիւրի կտրիքը: Սրբերի վարձերը, Վեսյամուսուրքի մեջ մտած և ուրիշ վկայաբանություններն այլևս չէին զոհացնում ընթերցասերներին: Հարկավոր էին, այսպես ասած, զբոսուցիկ կամ զվարճական վեպեր ևս, որոնցով նրանք զբաղվեին իրենց պարապ. ժամերին: Մեր գորության առաջին դարում արդեն գեղեցիկ լեզվով թարգմանված էր Կալիսթենեսին վերադրված Աղեքսանդրի պատմությունը,¹ որ սիրված է եղել հայերի մեջ: Միջնադարում ասպետական ուսմանների մի առանձին ցիկլ են կազմել Ծրանսիայում նաև Ալեքսանդրի վեպերը, որոնք մշակված են հնության տված-դատյունների և ֆեոդալական սովորույթների խառնուրդով: Ինչպես երկվում է, մեզանում ևս 13-րդ դարի վերջերում պահանջ է եղել այդ գրքի համար, որ Խաչատուր վարդապետն անձամբ արտագրել է այն՝ «սրբապետ» [—մաքուր գրելով] ի գրոց հնոցը:²

Բայց նա իբրև լոկ գրքիչ չէ հանդես եկել, այլ նաև իբրև քերթող այն պատմության համակմանների վերջում գրել է քերթվածներ, որոնց մեջ նույն նյութը ժամանակի կենդանի խոսակցական լեզվով պատմում է նմանողությամբ, կամ հորինում, հարմարում է ստանալովոր նմանողական պատմությունները, որոնք կոչվում են «կաֆայք», այսինքն հանգավոր տառնավորներ: Սրանց մեջ, օակայն, չի առնվում համակմանների բովանդակությունն ամբողջապես, այլ այս կամ այն կետը, որ բաժանանում է հեղինակի ուշադրությանը, որից և ազդվում է նա: Ուստի այդ ստանավորները միասին չեն կազմում մի կապակցված պատմվածք: Այս ձևով, սակայն, նա թարմացրել և ավելի ևս հետաքրքիր ու գրավիչ է դարձրել Աղեքսանդրի առասպելախառն Պատմությունը: Հետո ուրիշները, — ինչպես նույն Պոռյան տոհմից Ջաքարիա Եղիսկոպոսը Գնունյաց, որ կոչվում է Գնունցի, ինչպես և արա ուսուցիչ Դրիգորիա Աթմադբերին, — նույնպես հարինել են համանման քերթվածներ, որոնք հետագայում խառնվել են միմյանց և ազավաղվել են, կրելով նորանոր խմբագրություններ հավելումներով ու կրճատումներով: Այդ գրքի սերն ու պահանջն այնքան մեծացել է, որ ծաղկագրվել ու նկարագրագրվել էլ է: Ջաքարիա Եղիսկոպոսն էլ եղել է դրա նկարող ու ծաղկագրող: «Ջաքարիա Եղիսկոպոս՝ գեոդա և նկարողս Աղեքսանդրի գրոցը, գրում է նա իր համար: Ուրիշներն էլ նույնն արել են, այնպես որ կան ձեռագրերն, որոնց ամեն երկու երեսին կա մի նկար պատմված գեղեցիկ վրա՝ Գերթվածներ գրված կան նաև նկարների տակին կամ շուրջը և վերաբերում են երեքնե նկարներին:

Ինչու է այսպես սիրվել այս գրքը: Դա միակն է եղել իր տեսակի

¹ Պատմութիւն Աղեքսանդրի Մակեդոնացւոյ, Վենետիկ, 1642:

² Յաշահ Յակովլեւս, Ուսումնադրութիւնք Ստան Կալիսթենեսի Վարդապետի Աղեքսանդրի, Վիեննա, 1868, էջ 86 և հաջ. 113 և հաջ.: Տեղեկությունների մի մասն առնւում են այս գրքից: Մերագրեալն ոչ ուղղել ըստ այս բառի նոր նշանակության, այլ՝ մտքուր պահել, արտագրել:

³ Անդ. էջ 113.

մեջ և ժողովրդականացած, իբրև Գաղմաթյուն Ալեքսանդր Մակեդոնացու, որի անձնավորությունը և՛ արևելյան, և՛ արևմտյան շատ ժողովուրդների հիացմունքի առարկա է եղել: Բայց կա և հետևյալ հանգամանքը: Այն ժամանակի պարզամիտ մարդիկն ընդհանրապես շատ հեշտ հավատում էին ամեն տեսակի հրաշալիքներով լի պատմվածքների, որոնք զրգուռում էին նրանց երևակայությունը և դուր էին գալիս նրանց: Հիշենք միայն, թե ինչեր է պատմելիս եղել Հեթում թագավորն առ Մանգու զանն արած հեռավոր ճանապարհորդութիւնից վերադառնալիս. «Բազում իբր զարմանալիս և անձանօթս պատմէր ինչ զարբարոս ազգացն, զոր անհալ էր և լուեալ: Ասեն թէ կայ այնպարհ մի անդր քան զՂաթայիքն, ուր կանայք են ի ձև մարդոյ բանականաց, և արքն ի կերպարանս շանց, և են անբաժն, յեծք և մոգեղք... Կայ կզգի մի աւագուա, յորում բուսանի ծառերէն ոսկր ինչ պատուական... և ի հատանելն այլ բուսանի ի տեղին ըստ նմանութեան եղջերուացա՞: Սրանց նման բաներ են և Սուտ Կալիսթենեսի ֆանտաստիկ պատմածները, թե Ալեքսանդրը հեռավոր երկիրներում ինչ հրեշափոր էակներ է տեսել: ԵՏեսաք շնագլուխ և անգլուխ մարդիկ. որք զայնց ցնեխի թ լաճոց և զքերթման... Եւ էին յայնմ անտառին մարդիկ, որ տնկածոյք կռէին, և ունէին մեծութիւնս առ մարդ կանգունս քսան և չորս, և երկայնապարանոցք էին, և ձեռք և մտուռի սղոցածէք... Ապա անդուստ գնացեալ՝ եկաք ի դաւարկուտ իմն վայր, ուր կային մարդիկ վայրենիք մման ճոկայից, մեծութեամբ իբր զառաջինսն, լաճոց բոլորակէ, բաւք, յեկէ. և ունէին երեսու որպէս գառիւծու... Հերս ունէին կանգունս չորս և լայնութիւնն իբրև աշտէի, և եկին առ մեզ մաշկեայ պարեգատովք, հզօրք յոյժ, պատրաստք պատերազմ առ ի՞ առանց տիգաց և նետիցա: Տեսնու՞մ են և երեք-չքանի գազաններ, կրիայի չափ լվեր, մարդակեր մարդիկ, թաւ իբրև աշտ, որ շան պէս հաջում են. հրաշալի ծառեր, ձկներ, քորք հուրք ոչ լինէին եփեալք, այլ ցուրտ ջուրք ազբերացա, հինգ ոտանի գազաններ, Վինգ աշօք և այլք վեցալք և վեցոտանիք, երկայնութեամբ իբրև կանգունս երեսունս: Վնդլուխ մարդիկ. գլուխ ոչ ունէին բնաւ, այլ ի լանջն ունէին գաշ և զբերանն, և այլն»:

Դժվար թե ինքը Կեչուեցին հավատացած լինի ամեն այսպիսի, իբրև ըստ ի տեսնեք, շաղկապի բաների, բայց այսպիսի կտորներն էլ է նա վերածել քերթվածի.

Ա՛յ իմ հրաշագործ Աստուած՝
Արարիչ ազգաց ամենի,
Ու գործանալի քոյ զործ՝
Ձինչ պատմեն երամք տեսողի.
Ըզրուսանովի ոչխարս
Ձք տեսաք ի Հունդուստանի.
Բայց զայս արնկածոյ մարդիկ՝

¹ Կեչուեցու Գաղմաթյուն Հոյսց, էջ 356.

² Գաղմաթյուն Ալեքսանդրի Մակեդոնացու, Վենետիկ, 1843, հատ. ՄԾԸ. ՄԹ., էջ 196, 193 և հալ.

Ձենք տեսել յառակս ամենի՝
 Այս են հրակայքն վայրենի
 Որ են սրսեր ի յանտառի,
 Լանջք բոլոր թաք շիկմամբի,
 Երեսս ունել իբր առիւծի,
 Հերս ունէին չորից կանգնի՝
 Ու լայնութիւն զինչ աշտէի.
 Պարեգաւորք մայկեղինի՝
 Պատրաստեցան ի կռիւ յայտնի.
 Ըս խաբէ ածին յանկարծակի
 Երկուց կողմանց վտանգելի:
 Տեսողացս է հիւանալի,
 Եւ ի մէջ է ձեզ պատմելի...¹

3. Կնչառեցու կարծիքն Ալեքսանդրի կյանքի և Պատմաբայն մտօնի:—
 Կա մի ուրիշ պարագա ևս, որով այս գիրքն արժանացել է մեր այս
 Գերթողի առանձին ուշադրութեանը: Առաջարանի մեջ՝ «Նախադրութիւն
 շարադրութեանց գրոց աշխարհակալին»՝ նա հայտնում է, թե «Աստուածա-
 զան ինչիբր հարանց հոգևորաց և հոմիցիական համբակաց և համակամ և մշտաշարժ
 սիրով ստիպել է» իրեն «արտաճանել... գաղխարհակալ իմաստունն, որ տիպ
 և զաղալիար եղև նշմարիտ երկնաւոր քաղաքորիմ՝ և կրօնաւոր անտուժոյմ
 միայն Յիսուսի Բրիտանիոյ: որովհետև թեպէս և Արիստոտելը գրել է այն
 վիպասանութեանը, «ասկայն արդիւնքն շահաւէտ ոչ տրամադրեցաւ ի տար-
 մալուկ մտաց նորայն, այսինքն նա իր պատմածները չի նմանեցրել Գրիս-
 տոսի անօրինակներին, որ և ինքն այն առում է բացուտ ուսնաց բանա-
 սիրացաւ Վերջն ավելացնում է, թե Ալեքսանդրի կյանքը պատմում է բո-
 ղուտ և յօրինակ ամենայն թագաւորաց և իշխոսաց... և քաջահմուտ արանց
 պատերազմոցաց .դ. [= չորս] են արտադրամունք՝ պիտութիւն, արիւթիւն,
 համբաւ և դատաստան: Այսպէս և ըստ այսմ օրինակի վրայ է արքայից
 և զօրապետաց իմաստուն և հանճարեղս լինել... Իսկ արդար զաստատանաւ՝
 որ է մասն քառից խոհեմութեանց ըստ իմաստունի Պաւսանի, որ գրեալ է
 ի Տիմէակն տրամարանութեանն որ իսկապէս ի սա տեսնի լաւարախա
 յաջողութիւն առ ասացեալ իրացս յայտարարութիւնքն:

Բերնէ նախաբանի բուն մասը, որի մեջ բացատրում է, թե ինչպէս
 Ալեքսանդրի կյանքը «տիպ և զաղալիար» կամ «պիտութիւն» է Գրիստոսի
 կյանքի, «Աստուծոյ նախաճառմէ զձնունդ նորա [= Ալեքսանդրի], որ եղև
 շարժմամբ և նշանօք՝ բերելով վնկտրազրութիւն ազնիւագն աստուծոյն որ
 եղև ի Բիթղաէմ աստղն դուշակմամբ և գալստեամբ Արարացւոց: Իսկ
 յազթութեամբն խուժաղութ ազգաց՝ յայտ ասնէ զյաղթութիւն Տեառն խա-
 չիւ ի վերայ խաւարաւէր իշխանին: Նաև քակտումն Մուրայ և Մայդանայ՝
 գաւերման դժոխոց բերէ զյիշխողակ, Իսկ զըմպանակն մահաբեր արքեալ
 նմա՝ արայայայտէ զճաշակուն լիզոյն և քաջախոյն վտան յառաջանալակ
 պաղոյ նախաստեղծին: Իսկ վրայակն որ տնկաւ ի ծով և աստղն զօր վի-

¹ Աւանդած է Հ. Տալանի գրքից՝ «Մուսուլմանութեան Պատմ. Գաղափարներ», էջ 126»

բաղոյց արժուին՝ ցուցանէ զաւանգաւմ հոգւոյ հղօրին՝ որ ի ծոց ծնողի նորա։ Եւ գլանթն հրացեալ ի շուր՝ ազդէր զնսնծմանալ լուսաւորացն. իսկ շամանգազն՝ զխաւարն աշխարհաւորած, որ ընդ բուսմբ անեալ շշափէր իբրեւ գհանդերձ։ Նմանապէս ամք կենաց նորա ԼԳ [—38]. նուեցանիւ չափեալ զժամանակ՝ հլանելոյ յաշխարհէ աստուածն բանիւ։ Վերջն ավելացնում է, թե ամբողջ համեմատությունը լիովին կդառնա գրքիս վերջում։

Գրեթէ բոլոր ձեռագիրներն ունին բարառնություններին տնմիջապես կից վերջաբանական մի հասկած, որի խորագիրն է. «Եթէ ամենայն կհանք վառուց յաղթութեան և արիութեան, նաեւ վախճանն նշանօք առ տէրն մեր, զոր բերեմք մարգարէութեամբ։ Կամ ըստ ուրիշ ձեռագրի՝ «Եթէ որպէս առ Տէրն մեր Յիսուս Քրիստոս վերաբերի Աղեքսանդրոսը՝՝ Սրանից մի կտոր ապագրված է։

Սաշատուրը ջանում է համոզել, որ եթէ Եվային խարոզ թշնամու ասածը, «Կամ առ Մովսէսիւ օմն օրինակ եղև անառն չարչարանաց... նաև պոռնիկին Ովսէի և մեղանչելն Դաւթի ունի անսութիւն մարգարէութեան, նաև պատկերն Աթենայ, ապա Տրչափ ևս առաւել այլա այս սքանչելի Աղեքսանդրոս Մակեդոնացի տիպ և զազափար եղև երկնակալ թագաւորին մերոյ Յիսուսի Քրիստոսի, զոր Աստուծոյ և աստուած օգնական պարգեւք յայս անսմեք։ Ապա բերում է 18 բողոքատություն Քրիստոսի և Ալեքսանդրի կյանքի։ Կաթաներից մեկի վերջին տողերի մեջ էլ նա գրում է.

Բաշ առիւծ էր [Աղեքսանդր] հեծելի...

Կարողութեամբ Սամսոնի,

Եւ օրինակ էր Քրիստոսի։

Սաշատուր Կելտեցու այդ վարժուցքը, որի դեմ 19-րդ դարում անգամ ծառացել են Եվրոպայում նստած կաթոլիկ վարդապետները, հետագրքեր է նաեւ այնու, թե մինչև ուր է հասել մեղնում միջնադարյան սքոլաստիկ մասնողությունը. մեր վարդապետները քրիստոնեական աստուածարդեհության, այսպես ասած «անօրինականներին» սիմբոլիկ պատկերները անսել են ոչ միայն Հին Կառնարանի մեջ, այլև Աղեքսանդրի Պատմության։ Այդ մի շատ պայծառ իլլուստրացիա—լուսաբանումն է այդ ուղղության, դրա համար և կանչ տաւք այդ մասին։ Բայց միայն այդքանը չէ Կելտեցու զործի պատմական նշանակությունը, այլ զա միաժամանակ ցույց է տալիս, որ նույնիսկ սքոլաստիկ վարդապետն ազատախոհ է եղել. նա, որ ծանոթ է Պլատոնի, դուցե և ուրիշ փիլիսոփայութեան երկերին, առանց քաղվելու ապատ մեկնություններ է տալիս «համարտով աշխատելով», այսինքն համարտով իր ասածները ճշմարտությանը, չմտածելով անգամ, թե գրանով պրոֆանացիայի—սրբապղծության է ենթարկում իր կրօնի խորհուրդները, Եվ այդ անում է նա «աստվածապան հոգեւոր հայրերին ու համաշխարհ համարակներին խնդրելով» «յօզուտ ոմանց բանասիրաց»։ Այսպիսի

¹ Տալ և Ն. Ուսու. Մ. Կու, էջ 87, 100—103, 116.

² Պատմ. Աղեքս. Մովսէս. էջ 196, ծանոթութեան մեջ։

ազատամտությունն, ուրեմն, լոկ անհատական չէր, այլ հասուն էր եղել
սրոյ մասվորական խմբի:

Ամենքը, հարկավ, այդպես չեն մտածելիս եղել: Կեչառեցիս գիտե,
որ իրեն մեղադրողներ էլ կլինեն այդ բանի համար. ուստի Ալեքսանդրի
կյանքն իրրև ետիպ և գողտփորն Թրխատոսի ներկայացնելուց հետո՝ «Յի-
շատակարանն» մեջ գրում է. «Եւ արդ զայս այսպէս համեմատեալ՝ մի
սաղաւնիմ յամանց, զի զպատճառն վերագոյն հասեցաւ. այլ ընթեռնելով
զսա յիշման արժանի լիցի ի ձէնջ Խաչատուր Կեչառեցիս. զի ի յարմա-
րում սակաւ բանիցս և ի գրչութիւն գրոցս հաւատով աշխատեցայ. նաև
զի [այլ ընթերցված՝ «նա զի»] հեթանոսական գրեալքն անմիաբան են և
անվայելիչ՝ ի վերայ յաղկապեալ բանիւք որակեցեալ, և ներքոյ լի սնտի
կործնեք և խաբէութեամբ:՝ Շատ հետաքրքիր է և այս հիշատակարանը:
Որ այս, այսինքն Ալեքսանդրի և Թրխատոսի կյանքն այսպես համեմատե-
ցի,—ասում է նա, զրա համար թող չմեղադրվեմ ոմանցից. որովհետև պա-
ճասը վերահամ հայանցիս—Իսկ վերևում ասել էր, թե «ստոված» զան հո-
ռետր հայրերը՝ ստիպել են նրան այդ մեկնությունները գրելու: Դրանք
երևի Կեչառեցի միաբաններ են եղել:—Չմեղադրեք ինձ,—ասում է նա,—
այլ ընդհանրապէս,—շարունակում է նա,—այս որ կարգաւ, ինձ հիշման
արժանի արեք. «Որովհետև սակավ խոսքերս (այսինքն իր բազմաթիւ-
թյունները) հորինելու և այս գիրքը (Ալեքսանդրի Պատմությունն) արա-
դրելու համար հավատով նեղություն կրեցի, մանավանդ որ հեթանոսական
գրվածքները (Ալեքսանդրի Պատմության) «անմիաբան» են, իրար չըմբռնող,
հակասական են և անվայելիչ: անվայել, անհարմար են՝ դրոյց կապակց-
ված խոսքերով սրակալոր են, այսինքն գեղեցիկ են հորինված. և ներսից
լի են սնտի կործնիչներով ու խաբուսկամբ: Կեչառեցի՝ թեև Կեչառեցի-
արել է իր 18 բազմաթիւությունները, բայց նա չի ընդունել ամեն ինչ, որ
պատմված է Սուա-Վախութեանի գրքի մեջ, «Ալեքսանդրի Պատմության»
կործ ու գեղեցիկ ցնահատությունն ըստ ձեռի և ըստ բովանդակության՝
մի անհրաժեշտ հիմք է Կեչառեցու և իր պես մտածողների զարգացման
ասիւնանը որոշելու համար: Նրանք այնքան էլ խիստ պարզամիտ և դու-
րահամալտ չեն եղել, որ այն գրքի շողովողի մտքներն ընդունեին: Հարկա-
վոր էր նրանցից գտաւ Ալեքսանդրի լավագոյն բարեմասնությունները:
Դրա համար ահա նեղություն է կրել Կեչառեցին իր մեկնությունն անելիս:

4. Կաճառներ և այլ բերքավածքներ:—«Ալեքսանդրի Պատմության»
համար հորինված կաճառների մասին գեռ չեն կատարված բավարար բանա-
սիրական աշխատանքներ, որոնցով պարզված լինեին նրանց ազնաւասնները
և որովմե լինել, թե որճնք են Կեչառեցու գրածները, որոնք՝ Ձերկիւնը,
Դրեգոր Աղթամարցունը, կամ ուրիշներին: Երկու քառյակի նույնությունը
Ձերկիւ բանքերի հետ՝ ցույց կարկի ներքեւում: Բացի այդ պետք է նկատի
ունենալ, որ Կեչառեցու գրվածքներից սակավութիւնը պատուիրկներ միայն
կան ապագրված. չեն հրատարակված նրա այլ բանաստեղծությունները
ևս: Ուստի հնարավոր չէ այժմ արհասարակ լինովին լուսարանել նրա քեր-

՝ 2-րդ է, Աւստ, էջ 88 և հա.

թողական գեմքը, պարզել նաև, թե նա ինչպես է մշակել իր քստ բովանդակության նմանողական կաճանքերը, որքան և ինչպիսի ինքնուրույնության է մտցրել նրանց մեջ՝ համեմատությամբ Ալեքսանդրի Պամուկյանն։ Այդ պատճառով այստեղ կրեմենք նրա տնտեսով եղած երկերից բավարար համվածներ, որոնցից կերևա նրա արվեստը։

Նա հաճախ հորինում է բարոտոսությամբ (պրոսոպոպոյիա), այսինքն կամ խոսքն ուղղելով ռեխոս կամ վախճանված հերոսներին, կամ նրանց բերանից խոսելով՝ «Ալեքսանդրի Պամուկյանն այն հառվածի համար, որի մեջ պատմվում է Ալեքսանդրի ու Դարեհի ճակատամարտն և Դարեհի հաղթվելն ու փախչելը, սպագորված կա հետևյալը.

Ձեմյն արար, ձեմյն աբար,

Փող քընարին ձեմյն արար . . .

Հաներ պթաբըզ քս ճահար,

Ի երկվարըզ քո հեծար,

Համրոխդ ի հանդէս տարար,

Չորոց զօրավիզ եղար.

Ի Դարեհի հանդէպ հասար,

Ճակարն բոլոր տնցար.

Փոթորակի պէս խոռնեցար,

Արծըւարար դու բարձրացար . . .

Ճակարս առ ճակար եղին,

Խռոնեցան յանդուզն ու ահագին,

Դիակօք զվարըն լըցին.

Խաւարաւ արեն ի յերկին,

Խաւամբօթ մեծ հանդիսին

Աղեքսանդրու և Դարեհիս,

Սուսերամերկ կարուանիս

Աճաղարեալք ոտտի գընդիս.

Դիւթաւ արեան ծովիս,

Ճախր և ճակարս ի մէջ դաշարիս.

Կէսք վեմյ տսեն յաղարիսիս,

Կէսք վեմյ տսեն յաղարիսիս

Դարեհ, դարձաւ ալամդ ի չար.

Բազդըզ նենգեց քեզ չարաչար.

Դարձիւր ի հեա՝ ւ արա քեզ ճար.

Հան արտառուս տնձրեալար.

Թանդ ի վերուստ է անհընար,

Խափանեցաւ խորհուրդդ անկար.¹

Եթե Կեչառեցաւ այս վիպական հասկությունների մեջ առանձին շնորհքի երևում, ընդհակառակն, ազդու և ճաշակավոր են նրա սղորներն ու բարոյա-

¹ Սխառն, Համագրութիւն Հայկական Գիշերկիսյ և Հեան Մեծագործ, Կոտայքի ի Կ. Ղեւոնդեայ Վ. Մ. Ալիւան, Վեհեթիկ, 1885, էջ 289, Ժառ. 1—400.

է՛ չարիս, ես քեզ Քնն աւամս,
Երբ չուներս զոք աչ մաւանոր,
Ոչ զավլի, աչ երգում ունիս,
Ձի քո սիրտըն է նենգաւոր...

Այս և նախորդ քառյակը կան նաև Ֆրիկի «Լնդդէմ Ֆաւաթին» բանաստեղծութեան մեջ՝ և համեմտորեն այստեղից են տեսել և Ալեքսանդրի Պատմութեանը:

Երբ չարիսն ու ֆաւաթ են մի,
Միացեր, ես ճւժ գանգաւորս,
Այս իմ սընուցած ծառայք
Ձըթողին սակաւ մի հանգչիմ,
Տոլմթն ի քամի նըման,
Որ յերկրէ յերկիր վաւորիմ,
Աստուած գիտէ թ' ուր մեռնիմ,
Կամ ես ճւժ ձեռք ախ թողվիմ¹

Վերջին տողերը հմմտ. Ֆրիկի հետևյալ տողերի հետ.²

Ոչ գիտեմ թ' ուր մեռնիմ,
Ոչ ոք չուներ ուր թաղէ զիս:

Գեղաստեղծին սիրում է երգել կյանքի ունայնութիւնը, ուրիշ քերթված-
ների մեջ՝ երբեք բաղձաթիւ մտերով, որոնք դասավորված են այբբե-
նական կարգով ըստ իրենց սկզբի տառի. Այդպիսիներէից է, օրինակ,
«Այս կեանքս է երազ նման» տաղով սկսված շարքը,³ որ լի է բարոյակը-
թական խրատներով. բերենք զրանից հետևյալներն իրրև օրինակ.

Ճանապարհ մերիմ գնայ.
Որ շտիրէ տանջանքն անվախճան.
Մի խաւրիւ անտոխ սիրով,
Որ խաւար բերէ հոգեկան,
Յիմար գինին չէ՛ բարի,
Նայ է ամեն մեղաց բանալի.
Նըման այնոր մի լինիր,
Որ չափէ դժգոհին ի սարի:
Շատ ապրելուն չէ պարծանք.
Պատասխանն իրաւ կու պիտի, և այլն⁴

¹ Ֆրիկ, Բանաստեղծութիւններ, Երևան, 1961, էջ 216 և հմ.

² Յ. Տալալեան. Ստ. Կար. Վարդ. Աղաթ. 110 և հմ, «Էխանգին տառաւած է գեղ», հաւ Գ. Գոստ. Գր. Աղթ., էջ 181.

³ Անդ. էջ 22, «Գեղեցիկի պատկերքս ու հեր» տաղով սկսվող բանքի մեջ.

⁴ Էրեւմ է Արշաւուր իր «Այբարտառ» աշխատութեան մեջ, էջ 259 և հմ, Գեղաստեղծ և Գեղաստեղծ. մտքն զբոլիս, բերելով այս տաղին տաղը.

⁵ Անտոք տառում եմ Հայաստանի Պետ. Լեզուաբարոսն (Մատենադարան) 1417 թվո-
կանին գրված № 5936 Լեզուագրից, էջ 70. Սկզբից պակաս է, մի թերթ հանած լինելով. հայտն

Այս տաղից տարբեր է նույն սկիզբն ունեցող հետևյալ գեղեցիկ քերթ-
վածի մարդկային կյանքի ունայնության մասին.¹

Այս կեանքս է յերազ նման,
Զինչ զարթնու՝ լինի փոշիման.
Ի քունդ գինքն իշխան գիտէ,
Երբ զարթնու՝ աղքատ է 'ւ անբան.
Թէ քաղցիլ է՝ հաց տեսնու,
Լըրջանայ՝ կարօտ 'ւ անպիտան.
Այսպէս Աշէքստանգր եղև,
Որ ժըտաւ ի նեղ գերեզման:

Աշխարհի երերուն կյանքի պատկերն ու ոչնչությունն է երգել Գեղա-
սեցիին նաև հետևյալ սիրուն կափայով.²

Այս կեանքս է ի ծով նման,³
Որ մարդիկ ի ներս կու լողան.
Մարմինս է ի նաւ նման,
Հոգիս է զանձ անմահական.
Միտքս է նաւավար ճարտար,
Որ հանէ զցամաքն յերևան.
Աւաղ թէ կտորի այս նուս,
Մեք ի վար ժընամք փոշիման:

Աշխարհիս ունայնությունն ու մահն է ողբում նա երազի և մեռնող հոր
պատկերով ու խրատական բովանդակությամբ նաև հետևյալ անսխալ քերթ-
վածի մեջ, որ բերում ենք ամբողջությամբ.⁴

ՈՂԲ ԱՊԱՇԽԱՐԻՍԻԹԵԱՆ
ԱՅԱՅԻՆԻ Ի ԽԱՅԱՐԻՍԻԹԵԱՆ ԳԵՂԱՍԵՑԻԻՆ

Եղբարք, ձեզ խըրտա մի տաւ,
Մի կենաք դուք շատ խոր ի քուն.
Զարթիք և արթուն կացէք,
Խիստ ի մտ եմք յօրն ի մահուն:

Աշխարհս է յերազ նման,
Զինչ լինի մէկ մ' անուշ ի քուն.
Սա ի քուն լինելն ի ներս՝
Գանձ զբառաւ անթիւ և անհուն.
Խընդալուն թընծայր ի սիրուն՝
Սա ուրախ էր զանձին սիրուն:

այրենական կորսով սկզբից սկսած (սԱյս կեանքս է երազ նման) կա Պ 7706 և հետագայի մեջ,
էջ 183 ա:

¹ Գ. Պատմ. Գր. Աղթ., էջ 185. Տ = 2, 1 = 2, Աւստ.Թ., էջ 187, Կեղևոսի Գեղասեցիին է՝

² Գ. Կատ. Աղթ., էջ 118. Եւ և Տ = 2, 1 = 2, Ս. Կալ. Աւստ.Թ., էջ 119 և հա:

³ Պատմ. Գեղասեցիին, Պ 7030 և հա. էջ 188 աւելի Աշխարհըն է ի ծով նման:

⁴ Աւստ. Կալ. Գեղ. Գեղ. Գեղասեցիին էջ 70 և հա:

Եւ հանց համարէր յիւր միտքն,
 Թէ լինիմ իշխան ձեռնառան:
 Երբ որ ի քընոյն զարթեաւ
 Եւ տեսաւ որ էր սուտ ի քուն,
 Յոյժամ փոշիման դարձաւ:
 Ի վերայ իւր շատ խընդալուսն,¹
 Յորժամ հրամայէ տառաւծ,
 Որ խընդիւր զան մարդուն հոգւոյն,
 Պաշտի մի դարդար չի տան,
 Որ տեսնու դորդիքն իւր սիրուն:
 Ջայերն ոգորմուկ ածէ
 Եւ նայի ի դէմ սիրելուն:
 Ի ճարկէ հարակ ընկնի,
 Չի դըռնու ճնար զերծանելուն:
 Հառայէ սըտէն ի վեր
 Ու կոչէ զմայր արդեկներուն:
 Ու հանց պատասխան տայ իւրն:
 Որ նուաղի ի խեղճ յասելուն:
 «Պո կէս մարմընոյդ եմ եւ,
 Որ կանցնիմ ի ներք հողուն:
 Տըզոյժ, ձեր ծընողքն եմ ես,
 Որ կերթամ 'ւ այլ ոչ դամ ի տուն:
 Հիմիկ դուք ձեզ պէտ արէք,
 Թողէք զշաբն գնացէք հեռ բարուն:
 Զարին տանցոյ յերուք,
 Որ չլինիք բաժին գեղենուն:
 Բարեացըն սիրոյ յերուք,
 Գործեցէք 'ւ արէք ձեզ անուն:
 Գրեմս՝ քանի որ ապրիք,
 Վերջք մահ է ձեզի դալունս:

Զեռագիրներէ մեջ կան Խաչատուր Կեչառեցու անունով և ուրիշ բանա-
 տեղծութիւններ, այսպեօք, օրինակ՝ հետևյալները հայրենի չափով. «Տաղ
 ի Խաչատուր Կեչառեցուէ՝ Ես եմ կորուսեալ ոչխար, մոլորեալ ի սուրբ քո
 հաւէն»,² որ ունի կրօնական խրատական բովանդակութիւն, աղօթաբան:
 Նաև «Խաչատուր Կեչառեցույ տապ [էտլ] տող ոգէշտ և պիտանի՝ Թէ
 մարդ ես և միտ ունիս՝ ես տամ ձեզ (քեզ) խրատ մի քանի»,³

Բացի այսպիսի ոգէշտէ, խրատական քերթվածներէն՝ դտնում ենք
 նաև «Վարդու պիւղիլիւ ի մի վեպ»⁴ նուսխիսկ խառն թուրքերէն տնով. «Ի՛

¹ Վերջին 18 տպագրած և Վարդուր մատուցիւր, 1018, էջ 380, իւր Ֆրիկի:

² Վերջում հիշվում է 888 ձև., էջ 89 բ.

³ Պետ. Զեռագրատուն, № 7709 ձև., էջ 149 բ. վերջին երկուսը հիշում է և Ալիշանը:
 Մյուրաբան մեջ, էջ 252 և հաւ.

⁴ Պետ. Զեռագրատուն, № 1836 ձև., էջ 33 բ. տալում եմ անձամբ:

ճաշատուր վարդապետէն ասացեալ հեշտահեւէն: Սկսում է տապան. «Յոր-
ժամ եղև գարուն, եկ պիւլպիւն ալգին. Տեսեալ ըզթուփ վարդին ունայն ի
նքմին, Տըրպոնցաւ դառնագին, Արատասէր ուժգին. զի ոչ եղիւ անգէն
ըղիւր սիրելին»: [Հաջորդում է մի թուրքերէն առն. և շարունակությունը
հայերեն]: «Ասէ ցաղեգործն. «Եղբայր սիրելի, ձեր է վարդըս պայծառ, զոր
ասանէ թողի. Միթէ տեսեալ ես զու. տուր պատասխանի, թէ ո՞վ տարաւ զնա
արոր զիս գերին»: և յայն հասկածելի է, թե այս ասողը հեշտահեցունը լինի»:

Ե. «Բարաւոնութիւն Իսմէն Աղեքսանդրի»: — Մակեդոնացի աշխարհակալի
պատմութեան վերջում զրված են հեշտահեցու չորս բարաւոնություններ,
որոնցից հետո գրեթե բոլոր ձեռագիրներն մեջ կա այս հիշատակարանը.
«Որք լսէք զաղիողորմ բարաւոնութիւնս՝ զյարմարող սորա զճաշատուր
հեշտահեցիս յիշեցէք ի Գրիստոսա:՝ Դրանից հետո կա մի հինգերորդ բարաւ-
ոնություն ևս խրատեղան ըզմանդակությամբ, որ ոչ անհիմն կերպով հեշտա-
ցունը չի համարվում: Առաջին չորս բարաւոնությունները ողբեր են՝ Ալեք-
սանդրի, նրա մոր, նրա կնիք և նրա նախարարներն բերանից ասված: Դրանք
մեր աշխարհիկ պերճախոսության լավագույն օրինակներից են, չորսն էլ
խակեղան գեղեցիկ հորինվածքներ, որոնց մեջ փայլում է հեղինակի ճարտա-
ստանական արվեստը: Իզուր չէ, որ Ստեփաննոս Օրբելյանը հեշտահեցուն
անվանել է «անյաղթ հետոսը շնորհօք ծաղկեալ», «հոգևով լցեալ», «զովա-
րանեալ», այլն «շնորհապարդ»: Լեզուն հին հայերեն (զրաբար) է, և ոչ թե
ժամանակի այն խոսակցական լեզուն, միջին հայերենը, որով հորինված են
հեշտահեցու կաթոնները: Այն դարում միջին հայերենը գործածում էին բանա-
սանդիւթյան համար, իսկ ձուներ և այլն հորինում էին զրաբար, ինչպես,
օրինակ, Հովհաննես Սրգկեացին, որ մեծ հաջողությամբ և՛ զրաբար է գրում, և՛
միջին հայերեն: Նույն հաջողությունն այս երկու լեզվի նկատմամբ ունի նաև
ճաշատուր հեշտահեցին:

Բարաւոնությունների նյութի համար՝ հեղինակը ընտելանաբար օգտվել
է «Ալեքսանդրի Պատմությունից»: Սրա թարգմանությունից ազդված է նաև
լեզվի նկատմամբ, և այս շատ հասկանալի է, քանի որ նա շատ զբաղվել է
այդ գրքով և կաթոնները հորինելիս էլ նմանել է դրան:

Բարաւոնությունների մեջ դտնում ենք մի երկու հեթանոսական հա-
կացություններ և աստվածների հիշատակություն. ըայց վերջինս ոչ իբրև
մի ձև պատկերավորության համար, ինչպես հաճախ վարվել են կեղծ-դասե-
կան գրողները և նույնիսկ մեր հայտնի բանաստեղծները՝ Այդ մասամբ
հետևանք էր հին հունական դրականության ծառեթությանը, որ սկսվել էր
արդեն 11-րդ դարում: Դրիգոր Մաղիստորսը շատ սիրում է այդ կիրա-
ւությունը, երբեմն «Պերճանալու», այսինքն պարծանքով բան ծախելու նպո-

¹ Թ. Տալեան, Ուսուես. Ստ. Գալ, էջ 107:

² Այսպես, օրինակ, երբ Հովհ. Հովհաննիսյանը գրում է՝

Նոր մտապ մուտա մղեան երեսիս
Առջին աղաւ ինձ երեցեմ,
Նա գեղեցիկութան իբր պառկերիս
Նրկը պաղեցաւ ինձ պառկեր աղմո:

առկով, Այսպիսի զպերճանքիցն, սակայն, հետու է Կեչառեցիին. նա մի երկու հուլյն հեթանոսական անուաններ մեջ է բերում սակավաթիվ անգամներ, այն էլ մեծ մասամբ հետևելով Ալեքսանդրի Պատմությանը: Շատ բնական է հնչում, որինքու, լսել Մովսեսի Կաթողիկոսի հերոսի կամ նրա մոր բերանից իրենց աստվածների անունները, եվ այս բարձրացում է մեր հետորի հասկացու-թյունն իր արվեստի մասին. նա ողբացողներին իրենց խոսքն ասել է տա-լիս իրենց դարին և հավատարիքներին համեմատ, ինչպես մեր օրով վարվում են պատմական վեպերը գրողները, Բացի այդ՝ ղեկավարը ծաղկեալ հետորը բարառություններից յուրաքանչյուրի մեջ մեծ հմտութամբ զբեղ է նրանց աստղի վիճակին ու կյանքին համապատասխան բովանդակությունը:

Առաջին բարառության մեջ Ալեքսանդրի բերանով մանրամասն նկա-րագրված է ուսեղ, առույզ, բազմահաղթ երիտասարդի մահացման աղետը թի հիւանդութեանն իւրում ըմբռնելով զեղով: Նա իբրև դավաճանության դո-թունավորված լինելով, կռվում է մահվան դեմ, Կեչառեցին այնպես շնոր-հալի է հորինած, որ այդ նրա հոգևորը կարգալիս՝ մարդ խղճում է նրան, այն դժբախտ հերոսին: Ձեռքը էի կամ յհրապիս հասի տառապանք, ասում է նա, որ կարծում էին, թե Ամոնից կամ Արամազդից սերված լինելով՝ ան-մահ պիտի լիներ, «և այժմ յիմարեալ՝ անողորմալի ի մահուանէ, որ յաղթէ յաղթողացն: Նա մտաբերում է իր արքաները՝ սկսած արքուն հասակից, և վերջը տվոյալով՝ ասում է. «Արդ որ այսքան հզոր և յաղթական փառաց հասաւ, արդ այժմ կամ տարաբերեալ ձգիմար կտակօց ի մահինս մնալան և մահահրաւէր: Տեսակս իմ ցանկալի՝ սևացեալ թիւացեալ քան զքարինս եթովպական. հասակս իմ պանծալի՝ գթոտեալ ի վայելչալի պերճութեանց. գլուխս իմ ընդգրկեալ ձեռեալ իբրև զհասկ՝ որ հասուն է մանգաղօ մահու. ճակատս իմ լիալիւր և մաքուր՝ ձրարեալ և պատեալ ի վարչաժակս զեղոց. աչերսս իմ ծովածաւալ սպառնանկատ և քաղցրահայեաց՝ կաշկանդեալ և խփեալ մածմածս՝ իբր խըրդանց և ջիջիկանաց. վարս և հեր գլխոյ իմոյ փետեալ ցամաքեալ իբր զմանուշակ դարձայնոյ յերիս առուքս սպառնելով: Այսպես և բերանն ու լեզուն, ձեռքերն ու մեջքը և ոտներն ինչպիսի են եղել և են: Նա, ինչպես համախ անում են մեանդները, վերջը մտաբերում է իր պատմությունը, երբ Ստադիրացու (Արիստոտելի) մոտ ուսում էր առնում, փիլիսոփայություն սովորում, ամեն ինչի մասին խոկալով և զիտու-թյունների ու արվեստների մեջ խորանալով. «չորժամ ծաւալեալ ի ծաղիկ բուրաստանաց իմաստութեանն, ի զիտութիւն գոյից և ի ծանոթութիւն աստուածայնոց և մարդկային իրողութեանց... Իսկ այժմ յիմարեալ անաս-նաբոր, ոչ կարել զիտել զգիրագն. բայց զայս միայն՝ զի բաղկացեալ ի քաւից տարերց ի նոյն իսկ լուծանիմ. զի քնքն միայն է անժամ որ ամե-նից տիրէ:—Ահա հին հեթանոս իմաստասերի եզրակացությունը մարդու և նրա մահվան մասին. նա բաղկացած է չորս տարրերից, մահանալիս լուծ-վում է նույն տարրերին: Չկա նրա համար անմահություն. միայն ինքն աստված է անժամ:

Երկրորդ բարառության մեջ ողբագին խոսում է աշխարհակալի մայրը. «Լուցէ՛ք զիս, մեք ժանկագունից միամբը զաւակաց... զի ոգիս թեաւ և շունչս ել արտաքս. իսկ մարմին թշուառականիս աստապելաբար

ըրջի, դիակեր լինելով տառաւնեալ կենաց իմոց: Արեւն իմ էանց և սպառնաց լուսինն լրացնել, պարզ զօրութեամբ ինձ թօթափեցան, և խաւարեցան տեսարանս ի հալեցուածէն: Նա մոտաբերում է իր հղացումն Ամոնից, ըստ եզրագրական մարզարեւի ասելուն: Կիշում է իր որդու սխրադորժուցանները և ավելացնում: «Այն ես կարծէի զիս մայր կայսեր և ինքնակալի, այժմ մեանելոյ մայր... Մեռանիմ ընդ իմ մեռելոյդ, կորնչիմ ընդ կորուսելոյդ: Նուազիմ ընդ ոգևորիդ...»: Ճոր ցածում է, որ որդին հեռացել է Մակեդոնիայից, և ինքն այլևս չի տեսել նրան: «Մահեցար իբր արուսեակ, և ցնդեցար նման մրկի: Գոչեցեր ամպօք իբր ռոհած, և տկարացար զինչ սարդի ոստայն, ծաղկեցար իբր զգարուն, և խորշակահար եղեր թարշամեալ, որ բազումք յինէն զարհուրէին, այժմ ես ի բազմաց կորնչիմ»:

Նա կին է, որ գեեկորույս մայր՝ զրկված և աճող, և իբրև կին և մայր էլ վերջացնում է իր ողբը: «Ուրեմն յաղթեցին ինձ անէծք մօրն Դարեհի կամ ծնողին Պաւլոսի արքային հնդկաց, որ ես այս թշուառութեան հանգիպեցայ: Կատարվել է Ալեքսանդրի կողմից սպանվածների մայրերի անեծքը, որ ավել են Ալեքսանդրի մորը»:

Շատ ավելի թշուառ է Ալեքսանդրի մահկամարդ կինը՝ Հոռոսիան, Դարեհի դուստրը, որ սրտառուչ կերպով ուղղում է իր հիշուցանները երկու կողմից: «Դարեհ չէ ի միջի հայրն իմ հռչակաւոր, և Ալեքսանդրէ բարձաւ ի միջոյ... սունն ե հօր իմոյ քայքայեալ ցրուեցան, և ապարանք առն իմոյ մեծագէտ աստուծոցն: Իսկ ես հոսայ իբրև զխոր, կոխան եղէ իբրև զհոգ անպիտան... Այդպէս առես զիս յաւանդ ի ձեռանէ հօր իմոյ, աէ՛ր իմ Ալեքսանդրէ, զի և աւուր միոյ տեսչեան երեսաց քոց ոչ եղէ արժանի: Թրտեր զիս ոշխոյ և թագուհի, և քոյին սոսկալի սիրոյդ ես ոչ եղէ արժանի, որը է ի ծնողաց, արդ այրի եղէ ի զլիւր: Կարօտիմ մահնիդ, զերկս արկանեմ տաղանիդ, խոնարհիմ քո գարշապարիդ, յանձն առնեմ զոգիս քուս ոգևորչ: Աս էլ իր ողբը հեծեծալով վերջացնում է իբրև հին արեւելյան Թագավորի մի ամուսին: «Ձի որպէս հանգերձեալ ես յաստուածոցն խառնիլ երամս, այսպէս և զիս արա գերեզմանակից և մահակից: զի կին կայսեր ոչ պարա և պատշաճ է զուգել ընդ ուժեքն»:

Թողնում ենք նախարարների ողբն ու կոծը, որի ժամանակ խոսքերի փոխանակութիւն է լինում նրանց և Ալեքսանդրի միջև:

Խաչատուր Կեչաւեցու գրիչը թախչ ու թափ է աւել այս ողբերը հորինելիս: Մոդկալից ու չքեղ է նրա ռեք պատկերավոր արտահայտութիւններով, միանգամայն և թեթև, պարզ ու հասկելի, նա կարողացել է թափանցել իր բարաւոնութիւններն ասողների հոգեկան վիճակի մեջ և իր հոգով անց կացնելով նրանց զգացմունքը՝ առլ մեզ այն՝ նրանց վիճակի համապատասխան լիրիկով: Նրանք կարծես նա բանաստեղծութիւն է հորինում երկատող աներով՝

Տուն հօր իմոյ քայքայեալ ցրուեցան,

Աս ապարանք առն իմոյ մեծագէտ աստուծոցն...

Այսպէս վարվել են նշանավոր հետադարձները. և դրանով էլ մեծ ազդեցութիւն են գործել ունկնդիրների վրա: Կեչաւեցին էլ իր այս երկերով

Հանդիսանում է իբրև այլի ընկնող մի հանսոր, և կարճում եմ, որ նա իբրև քերթող էլ ալելիի պատվավոր տեղ կբռնեք մեր հին գրահանության մեջ, եթե ունենայինք նրա բոլոր երկերը: Բայց և ախպես նշանավոր հոհաորները միշտ նմից բանասանդծ են, քան ճարտասան:

Տես երկրորդ հավելում՝ Երաճանաթյունների հետևանքներ:

3 1 1 4

1. Գրականություն: — Վերջերս շատ խոսվեց, թե Ֆրիկի նման բանաստեղծ ենք ունեցել և չենք տալու: Երբ երկերը, և նույնիսկ իր ցղիտամբ թացերի են այն, և Ֆրիկն անհայտ է մնացել, Մինչդեռ իրականությունն այն է, որ այս բանաստեղծը շատ ավելի ծանոթ է եղել հայոց հին գրականությանը և հետաքրքրվող ու պարզապես մարդկանց: Սկսած 1613 թվականից, մինչև պարսկական ժողովուրդի կամ պարսերկան հրատարակությունների մեջ: Դեռ 1876 թ. Նրուստանի հայոց վանքի «Միտան» լրագրի մեջ տպագրված են սուրբապատկերի տեսակետով կարևոր զբոսականներ՝ «Վասն թախտի և բրդի» և «Հնգրդե մալաբի» (եջ 1 չափ, երբ մեր մարդոջն): Տիգրանյան 1882 թ. տպված է վարդապետ Տեկանցի շատ ծանոթ «Հայերից ժողովածուն», որի մեջ և Ֆրիկի նշանավոր «Գնահատում» «Առաջին տարածք և յիտախ», այն ուրիշ երեք բանաստեղծությունները: Ֆրիկից հրատարակություններ եղել են և հետո՝ 1885, 1896, 1906 թվականներին, ինչպես և 1912 թ. Հայ էջերից ժողովածուի մեջ՝ վեց զբոսական: Տպվել են և թարգմանություններ Ֆրիկից՝ ֆրանսերեն և ռուսերեն լեզվով և ընդհանրապես հոգվածներ կամ ակնարկներ նրա մասին: Արդարև չանենք Ֆրիկի բոլոր կամ ուսման թվով տալերի հրատարակություն մի գրքի մեջ, բայց միայն այս սիրված ու ժողովրդական բանաստեղծի զբոսականները չեն եղել այդպիսի վիճակի մեջ: Գառնառն այն է, որ սակավ ժառանգի մեղսում հնարավորություն են ունեցել մեր հին գրականությանը տալու, և ավելի ևս ջանքեր միջոց են ունեցել մեծագործները պարսկերեն, նրանցից ժողովելու այս կամ այն բանաստեղծի երկերը և տալու: Միայն զորոտի մոռանալ և այն, որ դրանք ցրված են մեծագործների մեջ, որոնք դանդաղ են այլ և այլ մասնաշաղկապներում, այն էլ շնորհիվ դանդաղան հոգվածում: Մեր մի շարք հին հեղինակները զեռ տպում են իրենց երկերի հրատարակություն և ուսումնասիրությունը: Ֆրիկն այդ նկատմամբ ավելի բախտավոր է եղել. նրա մասին խոսվել է և գաղափարությունների մեջ:

1 Տեղեքիս զգուհն էլ Նրա մասին խոսել է Քրիստիանոս, Հայ Գրադնքի Կոմիտայան
Ընկերութեան հրովերով 1916 թ. որոս զատախառնութեան մամանակ՝ «Ընդհանուր տեսու-
թեան հայտ ընդ բանաստեղծութեան», որ է հայերը տարում ազգաբնիկ է Քրիստիանոս
Նուրի զատախառնութեանը Նա կատարել է Նաև Բացու քաղաքում. Նա 1917 թ. զորանալը,
զարեկյով Հայ Գրադնքի Ընկերութեան հրովերով, զատախոսել է Քրիստիանոս «հայտ միջ-
նախարարյան տառնիքներ է առիթայական հրատարակութեանը Նրանց միջի, որ է հեռա ազ-
գրվել է Սրեանանի Այս զատախառնութեան մամանակ խոսել է է Ֆրիդլանդ մասին:

ապրել է շատ առօրինակ և հասել է լի ձերսւթյան և վախճանովել է 14-րդ դարի առաջին կամ երկրորդ առաստմայակին:

Այս թվականների մասին ահա Վերորդ հովելվածն, Վերիկի կենսագրութան շուրջը:

Ձի հիմնավորված այն կարծիքը, թե Վերիկն անուշը բանաստեղծի իսկական անունը չէ: այլ բանաստեղծական անունըն կամ կեղծ անունը: Այդ պարզապես մի անմասնական նվագականն ձև է, թերևս, ինչպես կարծել են, Ֆրեդերիկ անվան: Ղ. Ալիշանը՝ գրում է. «Բարակ զգացման և ուղիղ ժառանգ, նաև ճարտար ազդեցությամբ պետքան վանկերով՝ նորոնուն շերտող մը կայ՝ Ֆրիկ, որդի Բագվաշի եղբորորդի Դադոնայի, որուն ժամանակն որոշակի հայտ էլ: բայց այս (ԺՆ) գարես եաք այլ չէ. գրվածքն բարոյական խրատը են, սակայն սրտով սիրուն: Պակաս Վերանունն չեն Ֆրիկի հայրն ու եղբորորդը, որունց մասին ոչ մի տեղեկութուն չի հաղորդել Ալիշանը, և սերիշներն էլ չեն գտել ցամաք:

Ֆրիկն իր առաջին մեջ ընդհանրապես հիշել է իր անունը, և առաջին վերնագրերն են մեջ էլ սովորաբար կա Ֆրիկ անունը. բայց չնայելով դրան՝ որոշ չափով անորոշութուն կա այս կամ այն ոտանավորների հեղինակի վերաբերմամբ, որովհետև մի վտակ սովորութունն է եղել հեղինակի անվան փոխանակ ուրիշ անուն գնելու: Դրա դեմ բողոքելով իր մի շերթվածի վերջում գրում է մեր բանաստեղծը.

Ով դիմ անունըս խափանէ,

Չիւրըն գըրէ պարծենայոյ.

Առանէս չառնէ ինքն թողութիւն.

Անդէն գըրկի ինքն ի բարոյ:

Կարևորն այն չէ, թե Ֆրիկն աշխարհովան է եղել, այն էլ, ինչպես

¹ Ղ. Մ. Ալիշան, Յուշիքը հայրենեաց, հատ. Բ., Վահագնի, 1870, էջ 185. Այդ գոյնի վերաբերյալ չեն հաղորդում:

² Արարատ, 1028, էջ 76. տես՝ Ֆրիկի Վերանունի վերանունը, էջ 65. Վերին Ֆրեդան առաջնայ, Վճ՝ անունն և անունայն շերթվածը:

³ Ֆրեդը եղել է աշխարհովան. այդ մասին ինքն հեղինակը մի քանի հիշատակութուններ է առել իր բանաստեղծությունների վերնագրերում. այդպես, որինով՝ մի վերնագիր. «Այլ առաջ վտակ բարեգործութեան մարդկան ի Ֆրիկն աշխարհովանն առաջնայ». կամ մի ուրիշը. Վերիկն ճարտար աշխարհովանն (Ֆրիկ, Բանաստ. Մ. Միլլայան, էջ 9):

Ֆրիկն աշխարհովան լինելու մասին էլ առաջին անգամ գրված է Ֆրեդայ եղբ. չնայած անգամ հիշված հաղվածի մեջ: Նա իր կարծիքը հիմնավորել է վերևում բերված առաջին վերնագրի վրա: որ այդպես կա այդ առաջին հիշող ձեռագիրը օրինակներից միայն մեկի մեջ կարճագույն գրված, այսինքն հաղված, հաղիվ ընթերցանելի: Բայց այս հաղվածագիրը չի նկատել, որ այնպիսի գրված է ոչ թե ինչ Ֆրիկն, այլ ինչ Ֆրեդը: Այդպես է աղված նաև Ֆրիկի Բանաստ. էջ 89 նույն շերթվածի (Վճ՝ սիր, վտակն մի լույս) այլ ընթերցվածների մեջ: Երկրորդ վերնագրերն էլ, որ բերել է Մ. Միլլայանը, դարձյալ այդ առաջին շարքի ինչ ձեռագրերներից մեկի մեջ միայն կա այդպես: Տես Ֆրիկ, Բանաստ. էջ 85, Վճ՝ անունն և անունայն շերթվածի այլ ընթերցվածների մեջ: Սակայն որտեղ կա համար էլ պետք է նկատել, որ Հայաստանի Պետական Թանգարանի համար ձեռն ձեռագրերից (այդն առնված է աղված շերթվածը) ևս 1895 թ. արտագրած սակավ այդպես, Վեր. ՄԶ. վերնագիրը՝ Վերիկի ճարտար աշխարհովանն: Շատ պարզ երևում է, որ այս երկրորդ վերնագիրն առանց ոչ թե հեղինակի

ենթադրել են, անգրագետ և անուս, այլ թե նա ուսում է ստացել, երբ է մտել արդյոք հոգևորական դասի մեջ և բանաստեղծությունները կյանքի հր շրջանում և ինչպես է հորինել, նա իր համար գրում է.¹

Եիմ հորէն զայս լսեցի,
Թէ Քրիստոսի ըզգեզ կուտամ,

Այս ցույց է ապիս, որ հայրն ուղեցել է որդուն հոգևորական կոչմանը նվիրել: Այսպիսի զեպքում նրան մանկական հասակից արդեն, ըստ ժամանակի սովորության, պիտի սկսեին կրոնական կրթություն տալ, ուրեմն և գրագիտություն սովորեցնել: Մի ակզ՝ նա գրել է.

Ի մանկութենէ ի վեր
Զիս ուսման խոցըն կու մաշէ:

Այս էլ նշանակում է, որ նա մանկությունից սկսած սերել է ուսումը, և պարսպել գրանով: Եվ իսկապես, նրա բանաստեղծություններից տեսնում ենք, որ նա մեծ հանձնություն ունի Ս. Գրքի և ժամասացակ կրոնական խոդերների. մեծ հմտություն Ավետարանին, ապիս է Ս. Գրքի բովանդակության համեմատ խրատներ, ծանոթ է նաև ուրիշ երկերի, ինչպես՝ Եփեսոսի ճառեր, Վարդ սրբոց, շաբաղում է դավանաբանական քերթվածներ, աղոթելով հանդերձ, կամ Քրիստոսի անօրինականքի պատմությամբ: Եվ, վերջապես, նա մեկ մեկ հորինում է և գրաբար լեզվով, հաճախ կրճառական երկերի մեջ ընդունված սովորական դարձվածներով ու պատկերներով և բանաձևերով, ինչպես և բազմաթիվ ակնարկներով, որոնք վերաբերում են եկեղեցու ընդունած հավատի խոդերներին: Կարելի չէ տեսլ, թե այսպիսի գրվածքներն անուս մարդու են, և կամ թե այդ ամենը նա յուրացրել է եկեղեցում ժամերգության ժամանակ՝ ընթերցվածները լսելով կամ այլուր ուրիշների կարդացածներին ունկնդիր լինելով: Նա խնք կարդացել է. Երբ նա գրում է.²

Անալի դարձել եմ ի միտս ու անհամ,
Ո՛չ առնում ըզգըրոց ճաշակ և ըզհամ,—

այդ ապացույց է, որ նա առաջ գրքեր կարդացել է և վայելել նրանց

Նակի գրածն է, այլ մի ուրիշ մարդու, որ զբաղվում է իր իմացած անգեղությունը առ ընդհանրության մասին: Այս՝ այն հանգամանքը, որ լուսաբերական հիշատակությանը չարահիշակ անապիշներին միայն մեկն է մեջ կու, և որ երկու դեպքում էլ Եփեսոսի է գրված, դեռ քննելի է գրանում այդ երկու վերնագրերը, թե արդյոք անգիմակն է այդպես գրել իր համար, որ կտակտելի է: Այդ դարձյալ՝ լուսաբերական բառը եւ միայն բերված երկու անապիշներին մեջ գրված գրեթե, և ոչ թե մի քանի, ինչպես գրել է Եփեսոսի անգեղությունը առ ընդհանրության հեղինակը:

¹ Զբեկ, Բանաս., էջ 62. Յեկուս անուն յիս զթոցարն քերթվածի մեջ.

² Անտարտա՝ Ժամագրք, 1918, էջ 78. հիշված անգիմակն մեջ: Ձի ազման, թե հր անգիցի է անվան առջ. 1941 թվականի Զբեկ, Բանաստեղծությունները մագդանունի մեջ չեն երևում այդ երկու տառերը. Ըստ երևույթին Ցիբայր եղևնագրոսի մագդանուն առ ըզիմակն չի աղագրված:

³ Բանաստեղծություններ, էջ 208. Բազմազն և մի չուրն քերթվածի մեջ.

համ ա հոտը: Այս ամենով հանգեւծ՝ նրա երկերը չեն կրում հին քերթո-
ղական ուսման դրոշմ: զարդ երեւում է, որ նա չի առել վարդապետաբան-
ների մեջ ընդունված իմաստասիրական ու հոեւտրական և սքաւաստիկ
աստվածաբանական-մեկնաբանական ուսումնի իր նըրամտութիւններով: Դրա
համար և, ինչպես երեւում է, չեն համատեղել, թե նա կորողանար այնպիսի
բաներ հորինել: Մասին նա օտիպված է եղել դրելու:¹

Տէր կենդանի է և օրհնեալ,
Որ չէ այլոց բանքս ասացած,
Ջինչ ըզձողիկ եմ ժողովել,
Գան զմարգարիս պայծառ շարած,
Թէպէտ յերկար բան կու խաւսի,
Ֆրերին ասել է ի մտտոց:

Ուրիշ տեղեր նա իր բանքեր հորինելու շնորհքն աստուծոյ է համա-
րում: օրինակ, նա ասում է՝

Գոհանամք յողորմածէն...
Որ դանարժանս արժանացայց,
Որ հանց դոհար բան ի շար կու գայ:

Երեւում է, որ Խաղբիլ են նրա պարզաբան գրվածքները, մանաւորնդ
այսպիսի կրօնականները՝ «Բան մեկնութեան», «Ասացումք ի տնօրէնու-
թիւն փրկչին», ասելով թե նա ինչ զիտե, Յրբ է ուսում առել, որ այդ-
պիսի բաներ է հորինում: Դրա համար և նա շատ նուրբ կերպով հեղինակ
է այնպիսիներին իր ըի ծնունդ սուրբ կուսինս քերթվածի մեջ:²

Ֆրերն ինչ հոգ է կամ մոխրի,
Որ հանց զոհար բան շարէ նա,
Ոչ է ծառայ վարդապետի,
Ոչ կարգացել է օր մի նա,
Ոչ՞ ի հօրէ առեալ միբթ,
Ոչ աստուծոյ տուած նորա,
Նա Յրբ կարէ հանց բան ասել,
Ով որ կարգայ՝ օրհնէ ըզնա:

Այս տողերը սխալ բացատրելով³ եզրակացրել են, թե Ֆրերին իբր չի

¹ Ֆրեր, Բանաստ., էջ 78, «Երբ քեզ խրատ էր պարտաւորեալս ազգով սկսած մեծ
բանաստեղծութեան մեջ, բովանդակութեանը գրգռիչ է առած»:

² Անդ, էջ 50:

³ Ֆրեր, Բանաստ., էջ 137, 150:

⁴ Անդ, էջ 136:

⁵ Բանագրի մեջ աղմուկ է բթել, առնում եմ ըստ իմաստին այլ բնութեցվածք տալու
նորա համար ազգի սկզբի ազգի բանաստեղծ եմ տալ ըստ ամբողջի իմաստին, այսպիսի
անկապ եւ անմիտ է համար զրա համարեց ազգի: Եթե տալու, այսինքն շնորհքն աստուծոյ
է արժան, ապա այլեւ կարելի չէր գրել, թե հոն Յրբ կարէ հանց բան ասել:

⁶ Արարեալ, 1916, էջ 78 և հոն, բայց հազվածքներն այս ստեղծի մեջ չեն: Բանաստեղծ
անհեղինակ հանգեւծ՝ առին է այդ օրիւ բացատրութեանը:

ծառայել վարդապետի, հետևաբար ուսում չի տաել, նա մի օր էլ չի կարգացել, հետևաբար և անգրագիտ է եղել. իբրև հայրն էլ միջոց չի ունեցել, որ իր որդուն զոլորոց տար ու կարդացներ: Այդ տողերը, սակայն, հեզնաթյամբ են ասված. պետք է հակառակ իմաստով հասկանալ. Ժողովրդական ինքզինքն ինքի շատ հոգալի հաստատական ու զրբական խոսքերն ասվում են բացասական ու հարցական ձևով: Այսպես՝ բանաստեղծը երբ ասում է՝ «Ֆրիկն ինչ հոգ է կամ մոխիր», նա ոչ թե իրեն նվաստացնում է իրոք ինչպես որդի զեպչում,¹ այլ հեզնելով պատասխանում իրեն բամբասող-ներին՝ ասելով իսկապես, թե ֆրիկը հոգ ու մոխիր հա՛ չէ, նա կարող է զոհար բաներ շարել. նա ուսում է առել վարդապետի մոտ, շատ կարդացել է, հորից էլ մերսթ—կրթութուն² է ստացել, Աստված էլ շնորհ է տվել նրան. հետևաբար նա կարող էր այնպիսի գրանց հորինել. որ «վարդա» օրհնի նրան:

Ուշագիշտ պիտի լինել, որ խնդիրն այստեղ սովորական գրել-կարդալու կամ ուսում առնելու մասին չէ, այլ հեզնելիկ ոտանավորներ, այն էլ ըստ ձևի և բառ բովանդակության զգուշոր բաները հորինելու: Այս բանաստեղծական շնորհքը նա, հարկավ, վարդապետների մոտ չէր սովորել, և չէր էլ կարող նրանցից սովորել այն, որ բնատուր էր: Բայց աղագիտ չէին հասկանում այն ժամանակի սեռյալատիկները. նրանք կարծում էին, թե այն էլ պիտեք էր զարդացում—վարդապետաբանում ուստե լինել:

Ժամանակակից բանաստեղծ Կոստանդին Նրզնկացին իր մի քերթվածի սկզբում գրում է. «Միմանք չարախոսն զինչն վասն նախանձու, թե որպէս խոսի սա այսպիսի բան [խոսքը ոտանավորների մասին է], զի վարդապետի չէ աշակերտել, և ապա՝ բացատրում է. «Եւ յլ է աշակերտներին աշխատին և այլ է շնորհն ի հոգւոյն, եվ ինքը բանաստեղծը պատմում է, թե երբ տասնութինգ տարեկան ժամանակ վանքում ուսումնառնելիս է եղել («ի վանքն յուսումն էի»), իր մեջ զգացել է բանաստեղծելու. «տառավածառները շնորհքը: Այսպես և ֆրիկը, որ հաղթող է իր գզուար բաներով, անպայման ուսումնառել է որևէ վանքում կամ մի քանիստի մոտ, բայց հորինել է բնատուր շնորհքով, որ «Աստուծոյ տուած նորան»:

Նա հորինել է բազմաթիվ «հայերէն» բաներ, երաժշտական անախատ ռիթմով, որ ապագայում է, թե նրա շնորհներեց մեկն էլ եղել է երաժշտական զգացումը: Նա հավասար աղոթությամբ և գրեթե հավասար թվով ոտանավորներ է հորինել մեր երկու շատ ռիթմիկ չափերով—հայրենի կերպով, որ է՝ 2+3+2 || 3+2+3 ոտքերով տողերը, և 4+4 յամբական տողերով. մի երեք բան էլ ունի 3+3+2+3 պարզ ոտքերով: Այստեղ կարեւոր չի այս ոտանավորների մասին մանրամասնել, միայն պիտի ասել, որ

¹ Ֆրիկ, Բանաստ., էջ 119. «Բան պիտեք և լուս բանաստեղծութեան մեջ՝ Ֆրիկն ինչ է և ի մոխիր, որ այն բառը նա ցանկացուաւ»:

² Մերթսթ Բանն այսպես «կրթութուն» է բացատրված («Արարտա», 1918, էջ 79):

³ Այս չափերը ժամբաման ուսումնասիրված են սբա հեղինակի մի աբիլ աշխատութեան մեջ. «Հայեր լեզվի» ազգայնագիտական, ուսումնասիրեց պրոֆ. Գ. Մ. Արեգյան, Նրեվան, 1933, էջ 267—268. «Հայերի կարգ», էջ 198—208՝ «Ամբարակ» ոտանավորներ բարդ ոտքերով և էջ 240—241՝ «Անապատայան» 11-վանկանի, երբեք ոտքը յամբ»:

Հայերի չափի մասին տես առանձնապես Մ. Արեգյանի «Ներքին ոտանավոր»:

կան աղհառուներ, բառեր հառ ու առաջ ընկած, որով խանդավառ են չափերը:

Թե բանաստեղծը միաժամանակ և երգիչ է եղել թե չէ՝ այդ չգիտենք. մեկ քերթվածի վերնագրի մեջ կա «երգիչ» բառը՝ «Վասն թախեհի և բրջի ի Ծրիկ երգչէն»։ Մեջին, սակայն, չի հիշվում Ծրիկ անունը: Իսկ վերնագիրներին համար չենք կարող ապահովագրել, թե հեղինակին են ծագում: Մի քանիսի վերնագիրներն են «Տաղ» կամ «Այլ տաղ Ծրկանն ասացեալ»։ Այլիս գործածվում է՝ «Նորին Ծրկանն ասացեալ քառուստ», կամ լսկ Նորին Ծրկանն ասացեալ»։ Այս բանը բայց չդիտի չդիտության մեջ ձգի. դա գործածվում է «Նորինելու» իմաստով նույնիսկ պատմության համար, որինակ՝ «Շաշոց պատմութիւն ասացեալ Մովսիսի Խորենացու»։

Ծրիկն իր բաները կամ բանքերը, ինչպես ավելի հարմար է կիրառել տշխարհարարում (սույն բառը գործածվում է նաև որոշ բարբառների մեջ՝ բանք» կամ բանաս, նաև բանն ձևով)՝ Նորինել է կարգաւ համար և անձամբ գրելով: Այդ երևում է նրանից, որ Նորինելու ժամանակ իր քերթվածն անվանում է բանն և հետո դրա մասին գրում է՝ «ով որ կարգայ...», կամ «որ երբ կարգայ...»։ Այսպես, որինակ, վերևում բերված վերջին ցիտատի մեջ, Մի ուրիշ քերթվածի մեջ ևս՝

Ով կարգայ դայս բաներս 'ւ ինքըն զմբարդի...

Թէ քննէք դայս բաներս ի միտ 'ւ ի հոգի...

Նւ ուսիք, որ կարգայք ի մէջ ժողովի...

Երբ բանաստեղծն իր երկը Նորինելիս խոսում է դրա կարգաւ մասին, կնշանակի նա Նորինում է գրելով: Ոչ մի հիմք չկա կարծելու, թե Ծրիկը բերանացի Նորինելիս լինել և Նորինելիս թելադրած լինել մեկին, որ գրելու կամ բերանացի Նորինել և իրար նման և այնքան մեծ ու երկաթ բանաստեղծութունները անչափ միառը պահեր և հետո մեկին թելադրել, որ գրելու: Այդ հնարավոր է միայն կարճ բանքերի ու եղանակավոր երգերի վերաբերմամբ, այլև վիպական քերթվածների, որոնց մտարբրմանն օգնում է գեղեցիկի հաջորդությանը:

Թե որք է նա սկսել բանաստեղծել, այդ չգիտենք. նա իբրև քերթող տշխատել է նաև ալիսորության ու ծնորության որերին, ինչպես հիշում է միշտը երկերի մեջ, ինչպես, որինակ՝

...Երբ գործաւ սեղ ի սպիտակ:

էջ 87

Բո սեղ ի սպիտակ գործաւ:

էջ 88, 118

զական երգեր տշխատության մէջ, Երևան, 1931, էջ 18—43. «Արտագ. ՀԽՍՀ Գեա. Հաժապարանի շինարարներ» Մ Մ 3—3, 4, 6:

՝ Ծրիկ, Բանաս., էջ 153. «...Նորինելիս քերթվածի մեջ ապահովում առջ է հանալը. «Առաւում օրհնէ դայս կարգացոյն յարժաւ երգէ զԾրիկն յիշեալ. այլ ընթերցվածով վերականգնվում է «...որ ընթերցելու յիշեալ», էջ 48, «Ծրիկ» անէ զման...» քերթվածի մեջ:

Թե ինչո՞վ, քնչ պարապմունքով է նա իր ապրուստը հայթ-այթել, այդ չի երևում նրա բանքերից: Մի քանի անգամ նա խոսում է հորատակալան հանից լինելու մասին, բայց չի պարզվում, թե որդուք անձնապես ի՞նչ մասին է խոսում, թե՛ իրբև բարոյախոս՝ ընդհանրապես, բայց իր վրա դարձնելով աւելիքն և առաջին դեմքով խոսելով, միտմամբով իր անձնականը խառնելով հեաք. այսպես, օրինակ՝ հեաեյալների մեջ.

Շատ ոլորեցի մարդու մորոյս...

Շատ պարեկեցայ ի վերայ ոսկոյս...

Էջ 98

Անյուշա իրեն, հեղինակին են վերաբերում հեաեյալ տողերը, եթե միայն հիշված «Հարգայ», վարիւնա՝ «Հարգայ» բառը անգանուն է.

Անկայ ի յոսկոյ ցընոր

Ու ըզհոգաց առնըն շինեցի...

Ասցի թէ շինեմ ես բերդ

Ու քաղաք և դարպասընի...

Շատ մի [վար. դարգակ] դառնայ, եղբւրք,

Ի Հարգայ [վար. Հարգայ.] ես շատ սի տարի.

Ասցի թ'իմ ջանքս առնեմ

Մեծութիւն առանց հրամանի...

Էջ 98

«Հարգայ» անունը փորձել են նույնացնել Կիլիկիայի «Հարգան» անգանվան հետ.¹ Բայց այդ դեռ կարելի չէ հաստատ համարել, Կարձում եմ պետք է առնել ավելի շուտ «Հարգայ» փոփոխակը և նույնացնել «Հարգան»-ը առ ավան՝ «Հարգան» անգանվան հետ, որ նշանավոր կենարուն է եղել Աղանիքում, Թաթարաց իշխանութւյան երկրում, քան թե Կիլիկիայի մի հեաավար անկյունում գանվան մի անդ, Թաթարական արապեառութւյունիցը գուրս:

Միջուր անձնակաւն բանաստեղծութւյուն է «Ողբանց փոշիմանութեան» (էջ 26 և հա.), որի միջ կան հեաեյալ հետաքրքիր տողերը.

Բռնուն եմ անել ես աշխարհի,

Որ կու վաղեմ հետ շատ շահի.

Ձինչ աւերն երես՝ հերթք նաճի,

Այլ մեծութիւն սիրա ունէի.

Ժողովեցի շատ մի բարի,

Ընդակ արի զնա Թաթարի...

Այն բաղային եմ նրմանի,

Որ փոքր որսին ոչ հաւանի.

¹ «Արարտ», 1916, էջ 86.

Ով որ մէկ դաշտն ալ մեծի,
Քաղցած կենաւ և տնօթի:
Ահա եղաւ այնչափ տաքի,
Որ տուն ու տեղն դեռ կու գտի:
Զինչ մեծամեծ վաստակ տրի,
Ամէն դարձաւ հող 'ւ ի փոշի:

Նա իր աշխատած հարստութիւնից զրկվել է թաւաքների ձեռով կամ
կողոպտովով: Կամ հարկահանութիւնով: Կիրակոս Գանձակեցին խոսելով
իր ժամանակի ծանր հարկերի մասին՝ գրում է. «Ու այդ ոչ գոյր՝ զուստեք
և զդատերսն առնուին ընդ պահանջմանն»: Որ ոչ կարէր հատուցանել դատին՝
զմանկուես նոցա առնուին ընդ պարտուցն: Արդ՝ կարծում են, թե Ծրեկի
որդին էլ նույն դժբախտութիւնն է ունեցել: Բայց այն բանասանդու-
թիւնը,¹ որի մեջ հիշատակվում է այդ, կարող է բանասիրական ջննա-
դատութիւն:

Տես Երբորդ Լավելմո՝ «Ծրեկի կենսագրութիւն շուրջը»:

Կենսագրական տեսակետից յառ հետաքրքիր է մի բանը (էջ 40),
որի սկիզբն է «Գնաց մանկութեան հաւաքին»: Բանասանդոյ խոսում է
դառնացած հողով: Նա կորցրել է ամեն ինչ, ընկել է անհուն հոգոքների մեջ,
չունի տուն ու տեղ, խոցվում է, ամբողջ օրը առնջվում է հարկի ձեռքը—

Գնաց մանկութեան հաւաքին
Ու երեկ ինձ հոգ անհոգուն.
Զըրկած եմ երկու կենօք,
Վասն այնոր չեմ ելնել ի հուն:
Գողան 'ւ անասուն ու հաւ
Գէ՛մ ունին իւրեանց տուն ու բուն.
Ոչ տուն ու ոչ տեղ ունիմ,
Կու խոցիմ զօրն ի յայն հարկուն:
[Վար՝ Կու խոցիմ ի յանհաւասանուն]:

Նա սկսել է գինու մեջ թաղել իր վիշտը: Բայց քանի ավելի գինի է
խմում, այնքան ավելի ծփանքի մեջ է ընկնում: Նա հույսը կտրել է մարդ-
կանցից, չի հավատում, թե որեւէ իշխան կօզնի իրեն, հասկանալի է՝ հարկի
պարտքը տալով: Եվ վերջը մտածում է լինել բարեկամ վանքերուն, այսինքն
վանական դառնալ, որպէսզի ծառայի աստծուն, որ տեք է մարդու սոսնձին
ու հոգուն: Ե. եթե աշխարհիս անցավոր կյանքից, տուն ու տեղից զրկված
է, զոնե անդնի կյանքի հարն անի: Գինու զործողութիւնը նա ուրիշ
հրկերի մեջ էլ հիշում է.

Գանձով զընած ես դու գերի,
Դու է՞ր խրժեա զօրքն գինի:
էջ 28. ա. 21—22

¹ Կիր. Պաճ. Պատմ. Հայոց, Թիֆլիս, 1909, էջ 360, 345.

² Մարտիրոս, 1918, էջ 83 և հա. Այստեղից է «Ծրեկի Բանասանդ», էջ 10.

³ Անդ. էջ 40 և հա. Մարտիրոսի մանկութեան հաւաքին:

Եթե բառացի հասկանանք, Ձերիկը գերի է ընկել, հարկով, Թաթար-
ների ձեռք, և փրկանքով գնվել, ազատվել է։ Թե նա ճիւղ մարի էր և ընկել
այսպիսի դժբախտութեան մեջ, այլ դժգոյս է որոշել նրա բանքերով միայն։
Այնպիսով ժամանակ նա իրեն դժբախտ է զգում մենակութեան իր։

Դու յէ՞ր կու գտար, Ձերիկ,
Երբ չունիս գունդ ուստի ու որդիք,
Էջ 85. 84

Երբ նրա ասն սպիտակ է դարձել, որդին հիշում է աշխարհի ունեյ-
նութեան մասին և մտածում։

Ահադ աս յէ՞ր կու գտար,
Այնպիսի երակ դու Ձերիկ.
Ոչ ասն ու [ոչ] տեղ ունիս,
Եւ ոչ կին, ոչ գոսար և որդիք.
Ա՛մ երբ հանց ընկեր քո բախտն
Ու թուե՛ն, աս, ի՞նչ կայ հարկից...
Էջ 113, ա. 80 և հան.

Ինչպե՛ս էլ պատելու, այսինքն աշխատանք անելու մասին է գրում.
Բայց աղքատ է, աշխատածը, երևի, գինու է աւելի, զգուշով նույնիսկ, որ
լավ բան չի անում։

Թէ՛ [«բռնի» թե] ինչէր ինձ գուրաթ և խելք ի բարի,
Որ կարի հանց կենալ, ինչ որ կու պիտի,
Է՛, աւադ, է՛, աւադ, ափսոս կու ինի,
Զի՛մ խելաց ուսն յինչէն գինին կու աւնի,
Պարտական եմ հոգով, լեզուս կու կապի,
Թէ՛ ալ շատ բաներ յառաջ հանէիս
Էջ 162, ա. 80 և հան.

Դուք է նրա վիճակը ծերութեան ժամանակ. նա իրեն բոլորովին
մենակ և անճար է զգում։

Ոչ գիտեմ թ՛ուր մեղանիմ,
Ոչ ոք չունիմ որ թողէ զիս.
Ոչ ունիմ տեղ հանգրտեան,
Ոչ խնդանքի եմ յորդիս...
Ոչ եղբայր 'ւ ոչ գոգ ունիմ,
Որ աւադէ, ափսոսայ զիս.
Ոչ քրեմ, ոչ բուսանեմ,
Զերդ գողընձ՝ անբ՛մ եմ գերիս:
Թէ ունէի ճորտ ու ծառայ,
Կամ կարեոր յասարարիս,
Սքառ ալ գիս ուրաջան,
Եւ տանցին աղքատ հոգիս:

Ձայս ի յիմ ըստէս ունիմ.
Որ չի նայել քաղցր աչք յիս.
Ինչ նրման այլ չէ ծընել,
Ինչ կու նայիմ ի վերայ բանիս:
Էջ 21—22, ա. 10—25

Նրա թշվառությանն այն աստիճանի է, որ վախենում է, թե իրեն կարգին չթաղեն իր աղքատության պատճառով.

Նդռել ու վայ ինձ այս ձերիս.
Երկու կենօքրս չ'յաջողեաց,
Այս խոց քեզ ի վերայ սրտիս
Էջ 23 և հա., — 22—23, 55—57

Է՛, Ձերիկ, պատրաստ կացիր,
Ի ձերութիւնդ չի գլորիս.
Այլ չունիս փաղ մի պահած,
Որ գլեզ թաղեն երբ մեռանիս...
Էջ 23 և հա., ա. 22—23, 57—61

Ապա աղաչում է աստուծուն, որ բարեկամ չհեռանա իրեն: Ահա թե որքան ծանր է եղել նրա վիճակը ձերության օրերին. նա սոսկում է, որ կարող է չաբժանանալ նույնիսկ կարգին թաղման, որ ամենամեծ զրգարությունն էր համարվում մինչև վերջերս մեր ժողովրդի մեջ:

Այսպիսի գովար օրերին, երբ նա մենակ էր, առնչվում էր և՛ նյութապահ, և՛ հոգեպահ, նա հայացքը բնականաբար պիտի դարձներ զեպի եղբայրանոցները, լինե՞ր սիրող վանքերուն և այնտեղ գտներ միթաբություն: Թե նա իրագ մտել է որե՞ն վանք, այդ որոշ չի երևում նրա բանաքերից. իսկ որ նա շատ փափաղել է դրան, գուցե և դարձել է որե՞ն վանքի միւրաւն, Թալով իբրև ոչխարական, այդ զգացվում է նրա բանաստեղծություններէց:

Տես պարագրաֆ 8. Էւոգեշահ բանքեր և միատրկական ձգտումս:

Այսպես ծանր ձերություն է ունեցել այս ժողովրդական բանաստեղծը, սրի երկերը սիրված են եղել և ամփոփված մի տեղ Էմբիկ գիրք՝ վերնագրով: Թեպետ և նրա մասին չկան ուրիշներից հաղորդված տեղեկություններ, բայց նրա բնագոյությունն ու գաղափարները լինվին ծանաթ են մեզ հենց նրա սեփական բանքերից: Նա եղել է գլխուսն սրտի տեր, դիտող ու խորհող, ոչ անաբեր զեպի չբնապատի իրական կյանքը, կատարված նշանավոր եղելությունները: Նա անկեղծ կերպով առնչվել է հասարակական և ազգային թշվառ դրությունից. համախ վառվել է վրեժխնդրության բոցով, այնքան շատ նա առել է ժողովրդի հարստաւարիչներին: Նա առաջնորդվել է սրտ բարոյական սկզբունքներով, հարկով, ըստ իր դարում իշխող ընդհանուր հասկացության և, ինչպես շատերն իր ժամանակին, նա էլ սողորված է եղել կրոնական ձգտումով ու միստիցիզմով: Եվ նրա երկերի հիմնական մտքերը վերաբերում են բացի անձնականից նաև ազգային, սո-

ցիտական և կրօնական խնդիրներ, կրօնականը, սակայն, հաճախ ընկերականին հետ շաղկապված:

3. Ազգային ու սոցիալական նորոգումներ:—Վերածննդի շրջանի գրականության կարևոր թեմաներից են այս երկուսը: Ազգային հարցն, ինչպես տեսել ենք, առաջին տեղն էր բռնել լատինական և ռուսական գրողների հետևանքով: Իսկ սոցիալականը ծագում էր երկու դասակարգերի տնտեսական վիճակի ծայրահեղ տարբերությունից: Մինչ աղնվականը, հոգևորականն ու փարիզամ և լատինականը հարստացում ու վայելում էին, աշխատավոր ժողովուրդը տառապում էր հետին չքավորության մեջ: Եվ այսպես թագրատունիների իշխանության ժամանակից ի վեր նաև թաթարների օրով: Սրանց դրած մեծամեծ հարկերը վերջին հազվով ծանրանում էին գյուղացի ու քաղաքացի աշխատավորության վրա: Հարկահաններն էս, լինեին այլազգի թե հայ, կեղեքում էին ժողովրդին: Գործում էր և վաշխառությունը: Եվ հետզհետե թե գյուղերում և թե քաղաքներում առաջանում էր մի կողմում՝ ընչազուրկ մասսա, որ ճորտ էր ծառայում պաշտոնատար աղնվականության ձեռին, մյուս կողմում՝ փարիզամ հարուստներ ու շահագործողներ: Այս դրությունը, որի մասին կարևոր չէ երկար կանգ առնել այստեղ, բնականաբար առաջ էր բերում դասակարգային սուր պայքար: Որի արտահայտությունը 12—13-րդ դարի համար արդեն տեսել ենք («Առաքին» հատվածի «Սոցիալական հարաբերություններն առաքինների մեջ» գլուխը): Այս երկու խնդիրներն էլ, ազգային ու սոցիալական, չէին կարող չզբաղեցնել Ֆրիկի նման մի բանաստեղծի, որ ծնվել էր առաջագիծ Միթթար Գուշի մահից մի քանի քսանուհինգ տարի հետո, ժամանակով ավելի ևս մաս էր Վարդան Արզնիցուն և ապրել էր Վարդան առաքինների սկզբնական դարգացման շրջանում: Երեք լատինների մեջ, որոնց երկուսի դրությունը թվականները շատ հավանական ճշտությամբ և մեկինը հավասար հայտնի են, առանձնապես զորեղ է հնչում Ֆրիկի ձայնն ազգային և սոցիալական հարցերի մասին:

4. «Անդղեմ փալաթին»:—Այս բանը նա հորինել է Արդուն դանի թագավորության և Օրբելյան Տաթարի իշխանի թագերկության սկզբում, երբ հույս մեծ կար ազգային վիճակի բարվաճման համար: Ուստի բանաստեղծը լավատեսությամբ է հայտարարում գալիք քաղաքական փոփոխության մասին:

Հիմիկ դեթարեց բաներս,

Որ թաթարն հպու թագաւոր:

Ջրկեց դամենայն աշխարհս,

Ու գողերն եգիր մեծուր:

Այս հյլ չի մընայ հանցեղ,

Ու ֆալաթն ոչում կարևոր [= կարեկից],

Ջարնու և ձրգէ ի վայր,

Չհամարէ պոչ ոք թագաւոր:¹

¹ Ֆրիկ, «Բանաստեղծություններ», էջ 217 և հա., «Աշխարհ», 1918, էջ 180 և հա.: Այստեղ Երկ ասցն է «Ու ֆալաթն», իսկ հարևանի մեջ՝ «Ու ֆալաթն»:

Ուրեմն վերջ կլինի զրկանք-զուլում անող թաթառկան թաղովս-
բությանը։ Նրա այս համոզմունքը հիմնված է այն տեսության վրա, թե
մարդկային բախտը հեղհեղուկ է։ Դիմելով բախտի անվիրն (չաբխ ի ֆուլաք)¹
նա ասում է։

Է՛յ չաբխ, ~~ամ~~ քեզ մնաց աւաւամ,
եբբ չունիս զոչով մոռնոր,
Ո՛չ դաւ, ս՛չ երգումն ունիս,
Ջի քս սիրտդ է խիստ նենգւոր,
Չով որ կու սիրես այսօր,
Կու դռնես ի յողի մթոռ,
Յեզուց կու ձըգես յաչից,
Հաւատես հոգոյն մոխրաւոր,
Ո՛չ մուլքն, ո՛չ ապրանքն ողակէ,
Ո՛չ հարիւր հազար ձիաւոր,
Յորժամ չառին ի յիտ քակուի.
Աւ ձըգէ ի յաչքն խուրի

Նրա համար նա իբրև լավ ազատույններ ունեւ ժամանակակից թա-
ղավորների և իշխանների արագ բարձրացումն և անկումը։

Ինչ վերաբերում է ողջիւլական հարցին, այս բանքի մեջ նա, թեպետ
գնո անհամարձակ, ֆուլաքի պատկերով, բայց արդեն դժկամակում է կյան-
քի մեջ տիրող անհավասարության և անարդարությանների դեմ, որոնց
հնթակա էր եղել և ինքը, Զալաքի, ճակատագրի կամ բախտի հին հավա-
քը, որի դեմ պայքարել էր դեռ Եղնիկ Կողբացին, հարող էր ընդունելի
լինել սոսկի համար, բայց ոչ Զերիկի պես խոհուն ու քրիստոնեւոքաբ
զոր-
գուն մարի։ Զալաքը նրա բանքի մեջ մի լոկ ճարտասանական ձև (ֆի-
գուր) է, որով նա վերացական գաղափարից ստեղծել է ըստ հին ժողովրդ-
դական հավատքի մի խոսուն ու գործուն էակ, որ իբր բայխում է մարդկանց
բախտը, և ապա մեծ աջնություններ իր մոտեմունքն արտահայտել է մի
կենդանի արամախասությամբ, որ անդի է ունենում բանաստեղծի ու վե-
րացական գաղափարի անձնավորման մեջ։

Այդ անկրթեւա էր բանաստեղծական գեղեցիկ արաւայաության
համար։ Բայց այս ձևական կողմն է։ Նրա ֆուլաքն այլևս հին կույր բախտը
չէ, բախտի կույր աստվածությունը, որ մարդկանց բայխում է պատահա-
կան վիճակներ։ Բանաստեղծը նրանից պահանջում է բարոյական սկզբունք,
այն է, որ մարդկանց բախտն ըստ արժանիքի պիտի արվիւր, արդար և
ուղիղ գաղափարով, մինչդեռ ֆուլաքը ձուռ, անարդար գոտավոր էր
Ինչի՞ով։—Մի անգամ որ մարդ անհաջողության է անդիպում, ֆուլաքն
այլևս չի ուղղում նրա գործը։ Այսպես է սկսել Զերիկն իր այս բանքը։

Է՛յ չաբխ, եբբ ձըռիս մարդոյն,
Ջօրն ի բուն փորես նորա հոր,
Յորժամ դու քակես ըզմանն
Ու չթաղուս որ դառնա յուրի

Սահուն 'ա երեբունա պահես,
Յասաբաբս ի դէլ 'ա ի զըլոր.
Կապիճ մի չարի ցուցնես,
Թէ դու լից զայդ հոգս ու ցընոր:

Այս իրեն՝ Պրիկի վիճակն է իր ձուլած բախաով, որ մինչև վերջը չի
ուղղվում: Լավ, իմաստուն, պիտուն, սուղորդ մարդիկը.—ասում է նա,—
աջողություն չունին, ազգաս ու դժբախտ են, մի կտոր հացի կորստ են
Ֆուս, նրանց տունը քանդվում է. իսկ վատ, անգետ, էիմար, անհունար
ու ձուլ մարդիկը մեծ հարստության և իշխանության են հանդիպում:

Է՛յ չարի, ըզվատի տունըն
Կու ձեփես զու ոսկով բոլոր.
Ձողէկն ի յերկիր ի ներս
Վըսարես որ ժողվէ կըսոր:
Ձայն որ խոզարած չվայլէ՝
Կու շինես ահեղ ձիուոր.
Ու զուգորդ մարդկանց տունըն
Կու քակես առանց բահաւոր:
Պալաք, թէ քեզ քուֆր ասեմ,
Նայ ասեն, թէ մարդըն մուր.
Թէ չէ ի գիտուն մարդիքն
Յերակ յէ՛ր նայիս դու խոլոր:
Ձանգէա ու զնաքազ մարդիքն
Ասարորս տանես մեծաւոր.
Ձիսաստուն մարդկանց հացըն
Կու ձըզես ի սար կամ ի ձոր:

Մեր բանաստեղծն իր քերթվածի այս մասի մեջ առհասարակ անհա-
տակաւ կյանքի մեջ տեղի ունեցող անհավասարության դեմ է դժգոհում,
և մանավանդ այն անարդարության պիս, որ մարդ ըստ արժանիքին չի
գնահատվում և աջողություն ունենում:

Նրա անունով հայտնի նույնիմաստ երկրորդ բանքի մեջ,¹ որ արվեստի
նկատմամբ թույլ է, քան առաջինը, շեշտված է դասակարգային անհավա-
սարությունը:

Թէ բուրջն ու թալենն աղէկ՝
Յաստուծայ է քեզ հրամայած,
Ձինչ յաշխարհըս մարդ որ կայ՝
Ձերդ մըշակ են քեզ կանգընած ...
Այն մարդն որ թալեն ունի
Յոչումէ իսկի չէ դրկած.
Ձորըն նա պարսպ նըստի,
Ու բարիքն ի մօտն է կուտած ...

¹ Պրիկ, Բանաստ., էջ 285 և հան.։ Վասն թալենի և բըշի ի Պրիկ երգչէս

Մէկն թագաւոր լինի,
Մէկն աղքատ ժողովին պաշտէ:

Այս իրական գրութիւնն է, աշխատող և չաշխատող դասակարգերի վիճակների մեծ տարբերութիւնը, որ միամտությամբ բացաւրվում է բոլորով կամ աստուծով: Բայց բանաստեղծը չի բավարարվում գրանշման ցանկանում է հովասարութիւն, և ձգտում է իրական անհավատարության բուն պատճառը որոնելու, բայց չի գտնում այն:

Ձայն ձայն գիտենալ կարենք,
Թէ այս է՞ր է (ի) հանց բաժանած ...
Ձայն ձայն գիտենալ կարենք,
Սա մբուքս ի հոգս եմ տնկած.
Ասեմ, թէ այս է՞ր լինի,
Որ գոմէն հաւասար չէ գուգած:

Նա դասակարգային պայքարի խնդիր չի գնում. բայց որ նա հասարակութիւնը բաժանում է երկու դասակարգի—անարժան վայելչւոյն և գրկված արժանավորներ, և որ նա դժգոհում է անարդարության դեմ, գտնելով այդ գրութիւնը ծնում, և ցանկանում է, որ հավատարութիւն լինի, այդ արդեն ըստ ինքյան դասակարգային պայքար է:

Ֆաւաք, դու (ես) ձըռին բնկեր,
'Ի ուղղորդին ես խիստ նենգաւոր.
Թէ չէ՞ ~~այս~~ հայեց ի նա,
Որ չունի հունար հոգևոր.
Անկել է յասկուն ի մէջն,
Շըփթիս, գինչ ըզթագաւոր:
Է՛յ չարի, մմ քեզ թնչ տսեմ,
Գոմ գոմէնն ես խիստ դու մոլոր ...
Մուռ է գինչ որ դու կառնես
Մ՛կ լինի հաւան քեզ ալոր:

Այսպէս ամեն ինչ ծնւում է, ֆաւաքի դասատառն ուղիղ չէ. նա ծնւում դատավոր է: Այսպէս է գիտել և անձամբ զգացել բանաստեղծն աշխարհի իրականութիւնը: Նա դժգոհ է եղած գրութիւնին, չի կարողանում հաշտվել դրա հետ: Եթէ նա միայն նրանով վերջացներ իր բանքը, թե ամեն ինչ որ անում է ֆաւաքը ծնւում է և թե ոչ ոք նրա արածին հավան չէ, այդ կնշանակեր՝ բանաստեղծութիւն մեջ անդրադարձնել իրականութիւն պատկերի: Այս էլ անշուշտ արժեքավոր և մեծ գործ կլիներ, մանավանդ որ քերթողն իր երկի մեջ ցույց է տալիս քննադատական ոգի, կանգնում է աշխատավորների թեք և պահանջում հավասարութիւն և ըստ արժանիքի վարձատրութիւն, դառնալով աշխատավորութիւն մաքի ու զգացմունքի թորգոմնը: Բայց նա այստեղ կանգ չի առնում, ավելի հեռուն է գնում:

Ֆաւաքն ինձի բարկացաւ.
— Մի հաջել, անդէտ տւեր:

Քանի ես ֆալաք եմ լինի,
Ձեմ տեսել քան ըզքեզ մոլոր.
Ձորինդ ի վերտա մըզես
Թէ ֆալաքն է յեզաւոր.
Չգիտես թ'արարչէն լինի,
Ձով կ'աժի տոնէ մեծաւոր . . .
Հազար թէ ֆալաք եմ ես,
Ձեմ կարող որ տամ քեզ կտոր,
Հրամանքն աստուծոյ լինի,
Սա տոնեմ ըզքեզ թողաւոր:

Ուրեմն ամեն ինչ տնօրինողն աստուծու կամքն է, և աչ ֆալաք ասածը: Կնշանակի՞ թանաստեղծի դժգոհությունը վերջին հաշվով վերաբերում է աստուծուն: Սակայն բանը որ հասնում է աստուծուն, այստեղ արգեն ետ է կանգնում նա, ասելով.

— Ճալաք, քեզ մեզ ժ՛վ գընէ.
Ձինչ տոնեմ՝ դամէնն է ազաւոր.
Գիտես ըզաւաւ տեղին.
Ձանարժանն ու դարժանաւոր:
Ապա մե՛զ հանցեղ թուի,
Թէ գու չես իրաւ գտաւոր,
Ձամէնն է հաշուով զուգել [Աստված],
Ու դարգիկք զանել ահաւոր:

Ուրեմն՝ մեզ է աչդես թվում, թե չէ աստված ուղիղ դատաստան է տեսում: Ապա ինչպես տնօնակա՞նով սկսել էր, նույնպես վերջացնում է իրենով, ցանկալով, որ իր դժբախտությանը վերջ լինի և հին վիճակը ետ ստացվի.

Ե՛յ չարի, մօ կերիք որայ
Ու ձգէ դքակալիդ ի յաւոր.
Կըրէ դարաթիւն յինէն
Եւ դարձո գինչ հին կայ ի նոր:

Այս է մեր թանաստեղծի այս բանքի բովանդակությունը: Այստեղ տեսնում ենք, որ ազգային և իր տնօնական չորաբաժանիկ հանգամանքների և հասարակական տնարդար ահապաստանությունների պատճառով թանաստեղծության մեջ երևում է դժգոհություն իրական տնօնավասար ստեղծակա՞ն վիճակից, և մի վայրկյան միայն թանաստեղծի մօքի մեջ շարում է երկրորդության ոգին, թե աստուած չի՞րավ դատավորն չէ՞, Բայց այս վերջինս, նրա մօքի ցուքը, արտահայտվում է դեռ շատ մեղմ, անհամարձակ, նույնիսկ երկչոտ եզանակով, և վերջը թանաստեղծը նույնիսկ համակերպում է եզած զրուսթյանը, թե աստված ամեն ինչ հաշվով է արել—տնօնողես մեիթարվում է, թե՛

Աղքատն իմաստուն լուս է,
Փոքնց հազար ունդէս գանձաւոր:

Այդպէս է և աստուծու մօտ, դի

Աստէն նա [գանձավարը] շունի հագի,
Անդէնին է գտան ու մոլոր:

Ուրեմն աչ թի մի երազիր աղպոյին դրության և սոցիալական անարդար վիճակի բարձրագոյն համար, այլ լսի մի միտթորություն անդինի կյանքով՝ ըստ ավետարանական Աղքատ Ղազարի առակի: Եվ այդպէս չէր կարող լինել 18-րդ դարում, երբ դեռ իշխում էր քրիստոնեական մեծ բարեպաշտությունը, և Զերիկն, ինչպէս նրա մյուս երկերից կտեսնենք, իր ժամանակի օրդին էր այդ նկատմամբ:

Կենսագրական տեսակետից էլ կարելի է բանաստեղծի այս բանքը, պարզ երևում է, որ նա այս հորինելու ժամանակները, 1286 թվականին, եղել է այեւր, մօտ 50—51 տարեկան. արդեն կորցրած է եղել իր սառցավածքը և աղքատության ու անհաջողությունների մեջ ընկած:

Տես երբորդ հավելված՝ «Զերիկի կենսագրության շուրջը»:

Ե. Վասն Արղունը դմիմ և Բուղայիք:— Զերիկի այս քերթվածքը նրա լավագույն գրվածքներից մեկն է: Այս մեջ տվելի պոյածու երևում են նրա բանաստեղծության էական կողմերը, նրա մի ցանի հասկացություններն ու մտածմունքն աղպոյին և սոցիալական խնդիրների մասին, միաժամանակ և հայ մտղորդի ծանր անասական և ներքին քաղաքական դրությունը, այլև որոշ կենսագրական տեղեկություններ ենք ստանում հեղինակի մասին: Այս երկն իր հիմքում մի քերթված է հեղինակի օրով կատարված մի պատմական հղելության և իր ժամանակի վրա, աչ թի ուսանավորով ժամանակագրության, այլ մի իսկական բուռն ցնորերգություն:

Պատմական դիպվածն է 1286 թ. Արղունը գանի դեմ լուրված դավադրությունը, որ չի հաջողվել. կոտորվել են դավադիրները: Հենց այս թվականին էլ ամենայն հավանականությամբ Զերիկը հորինել է իր այդ երկը:

Տես երկրորդ հավելված՝ «Զերիկի կենսագրության շուրջը»:

Օրբեյյանը, ինչպէս ասել ենք, Արղունը գանի համար հաղորդում է, թե նա Վինքն էր յոյժ սիրող քրիստոնէից և եկեղեցեաց: Այս պատմագիրը նրա մասին պարզագույն գրում է, թե «Աստուած քրիստոնէից յայնմ գիրքերի գործոյց զսիրտ մեծամեծացն առ Արղունն», որին հանում են բանասիր, թագավորեցնում և կոտորում նրա թշնամի Ահմադ գանին ու սբա կուսակիցներին: Ուրեմն համոզում էին, թե քրիստոնեական աստվածն է թագավոր կարգել հայերի բարեկամ Արղունին: Կնշանակե՛հ՝ հայերի համակրությունն ուղղված էր առ Արղունը, ինչպէս և զեպի նրա հայր Ապուղադանը և պապը՝ Լուսավոյ գանը: Ինչպէս և զեպի նրա հայր Ապուղադանը է Արղունի կողմը և ոչ 1289 թ. նրա դեմ դավադրություն ստեղծողների, որոնց պարագլուխն էր Բուղան: Նա քերթվածի սկզբում փոքր տուրով տարաբար ու իրաւ դատաւորա՝ աստուծուն՝ բացագանչում է և բացադիմում սպանված դավադիր Բուղային:

Տեսէք, թէ Բնչ դարձանք եղև
 Հեռ Բուդային և Արուսիկն,
 Բուդա, դու ծնց կամիր նենգել
 Աստուածագիր թագաւորին.
 Ձոր քրիստոնեայքն մէկն հաւար՝
 Ի յաստուծոյ կու խնդրէին,
 ՁԱՐԴԱՆ ՂԱՆՆ աստուած եղիր,
 Ո՛վ է յաղթող Արդուն Ղանին.
 Արդունն Բնչ վրնաս գործեց,
 Գիտեմ՝ որդին էր Արագին:

Արդուն զանն էր Բուդային «վեր քայել» և մահն բարեք ավել, մե-
 ծացրել այն աստիճանի, որ նա Արդունից պակաս չէր,—ասում է Ֆրիկը,—
 կամ, ինչպես Օբսկյանը գրում է, եղել էր «չինքսան», այսինքն «աւա-
 դաց աւագ»:

Դու քանց զԱրդունըն չիր [—չէիր] պակաս,
 Ի քո յահէդ խիստ կու վախին [—կու վախէին]:
 Բուդա էիր, չինքսան եղար.
 Բէկլար բէկի իր [—էիր] հեծելին.
 Ձգիտեմ, թէ զԲնչ կամիր [—կամէիր] լինել,
 Դու չիր [—չէիր] որդի Ձանկըզ-Ղանին:

Իր ասացած բարեքնորի «իոխարեն»՝ Բուդան կամեցել է Արդունին
 աղանելով ինքը դառնալ թագավոր. բայց այդ,—ասում է Ֆրիկը,—նրան
 արված չէր ի վերուստ:

Մըտիկ դրէ արեւու մէջ
 Ըսքանչիւեացն երկնաւորին,
 Տեսէ՛ք, թէ Բնչ արար աստուած
 Ըզնասուցումըն հրգորին.
 Դաւեց բզբաբէրըն յաթոռոց.
 Ձաւեց զգըլուխըն վիշապին.
 Ո՛վ կուսըն տայ թագաւորաց.
 Իւրըն բերէ կործանութիւն:

Սատանան էլ,—ասում է բանաստեղծը,—այդպես մասնեց իր ստեղ-
 ծողի նկատմամբ. բայց իր փոռքից զրկվելով վայր զլուրվեց, կործանվեց,
 անգունդն ընկավ: Այդպես էլ սատանայի գործակիցներին ասալոված

Հանց խոյտաւակ հրապարակէ,
 Ձինչ որ արար հեռ Բուդային:
 Տէրըն էգրկ երկնից ի վայր
 Ձընքաւ-Բուդին և Արուսիկն,
 Իւ մահնախն զխաւորացն,
 Ձինչ ի մէկ տեղ խորհուրդ արին:

Ազգային-նոցիալական խնդիրը շատ կարևոր տեղ ունի Ֆրիկի այս ջերթվածի մեջ։ Շարունակ դատապարտվում է բանաստեղծի գայլույթն առ դաժմագիտները և հրաժեշտ քաղաքացույթը, որ նրանք պատմվել են իրենց գործերի համար։ Նրա այս երկու հույզերը ծագում են երկու գրգիշներից։ Մեկն այն է, որ, ինչպես առասնձ, դաժմագիտները ցանկացել էին «սենսացել» սամվադիկը թագավորին։ Երբ ըստի դրսևոյանները ազատ էր. բնականաբար Ֆրիկն էլ ուրիշների հետ պիտի գայլախառն նրանց գործի համար և գու՛ լիներ, որ նրանք պատմվել են։ Նրկրորդ գրգիշն ազգային-սոցիալական է, այդ այն է, որ նա այդ դեպքից առաջ էլ սոցիալի-տեղ է դաժմագիտներին, որոնց անունները դաժմագրութայունից ու կոտորվելուց առաջ արգեն իրենց չար գործերով հրապարակի վրա են եղել և հանրաժանութ։ Մեր ջերթոգի խորին առեւութայն գլխավոր աղբյուրը, դա աշխատավորութայն թշվառ իրականությունն է, որ շարունակ մտնել է ջերթոգին։ Դա հայ ժողովրդի առաջագահին վիճակն է այն բանակալ մարդկանց ձեռին, խեղճների հառաչանքն ու հեծութայնը, զրկված որբերի և ալերների քայտն նեղութայունները, շատ մարդկանց սրտերի քանդումը և ամեն տեսակի կեղեքումները, որ աշխատավոր ժողովրդի գլխին բերում էին ոչ միայն դաժմագիտները, այլև ընդհանրապես բոլոր բնաստանները։

Ֆրիկի բնաստեղծութայններին գրեթե վերջում գրված բնաստանին մեջ բնաստանից բառի դիմաց կա բանական թառ։ Այս բառը մի քանի անգամ գործածված է ալվալ ջերթվածի մեջ, թառարական դաժմագրութայնի դաժմութայն համար կարևոր է, և պետք է թե լեզվաբանները և թե պատմաբանները որոշեն դրա ճիշտ նշանակութայնը, Նույն շրջանում քաղաքներից առեւորքի և արդյունաբերութայն համար առնվող հարկը կոչված էր բառգրամա կամ բթագրամ, իսկ այս հարկը հավաքողները՝ բառգրամի կամ բթագրամի։ Նույն կազմութայնն ունի բնաստանից բառը բնաստան բառից, որ մի անգամ գահում ենք Ֆրիկի առջին ջերթվածի մեջ։ Ըստ գործածութայն այս բառը նշանակում է՝ իշխանավոր, կառավարիչ, վերակառու, պաշտոնյա, իսկ բնաստան՝ իշխանութայն, կառավարութայն (թաթարական)։ վերակառուցութայն, գուցե և կոդապուս, կամ սրանց նման մի բան։ Բնաստանիներն, ըստ Ֆրիկի, կեղեքիչներ են։ Ինչպես հայտնի է, իշխող դասերից հողային ընդարձակ կալվածներ էին շնորհվում բարձր պաշտոնյաներին ու զինվորականներին, որոնք և ամեն կերպ չափազանց շահագործում ու հաբասակարում էին ժողովրդին։ Այդպիսիներից են եղել նաև Բուլան, որ ամեն բարիքն ստացել էր Արդուներից, այլև իր ընկերապիները (բթթաթըներին)։ Նույնը եղել են և ուրիշ կառավարիչները կամ պաշտոնյաները։ Նրանք ոչ միայն ճնշում ու կոդապուսում էին աշխատավորներին, այլև իրենց մեծ թվով նախնիներն ու իրարից հետևող սրածաղցնելու համար՝ ոտնակոխ էին անում, ավերում մշակված, շին ու մարդաբնակ երկրորդ, ձմեռն արան գնալով, ամառը քոչվորով սարերը։ Այս քոչվորութայնը՝ հարկերի ծանրութայն հետ միասին՝ հայ ժողովրդի ու Հայաստանի պատուհասն էր դարձած։ Նաաբնակ ժողովրդին տեղահան անելով՝ իրը նախորդ ու հովիվ ճշում էին այս ու այն կողմ։ Շատ բնական է, որ ժողովրդասեր Ֆրիկը գայլախառն այդպիսի կեղեքիչներին վրա և շատ գու՛ լիներ, որ բարձր և

իրաւ դատաւորն տերը խփել ոչնչացրել է Բուդային և նրա ընկերներին, որ նա անմեղ տանջվածները վրեժն տուել է: Դրա համար և մեր բանաստեղծը վերնուսմ ընթրված վերջին քառյակից հետո՝ իբրեւ հովաթաղյալ իբր գահությունն է հայտնում:

Դու ես, աէ՛ր, խնդրող վրէժից,
Ի խոր նայիս անդնդային.
Լսես ձայնի հոռոշանաց,
Եւ հեծութետնցըն տրնանկին:
Դու գրկելոց ես ողորմած,
Որբերըն քո են և այրին,
Տէ՛ր, դու տեսար յերկնից ի վայր,
Ձինչ քո ծառայքըն քարշեցին,
Գէ՛մ չի մնաց ողբիւր ու զեա,
Որ լացուցածքա չխըմեցին.
Գէ՛մ չի մնաց լեռներ ու գաջաք,
Որ վառուցիւքն չկոխեցին:
Ձըման յարան երթին [— Երթային] լալով.
Դ՛ու տառն ի քոչըն քարշէին,
Քրտան տարի դար [— ասնջանք] քարշեցաք,
Ու հաւեցաւ ռկը ու մորթին:
Լու շնչաւոր ենք մնացել,
Խելք, զգայարանք մեզ չերկին:

Ֆրիկի հիշած շքան տարինն տանում է մեզ 1260-ական թվականները, երբ 1261 թվականի հայ-վրացական ազատամարտիկան շարժումից հետո՝ սկսում է ավելի ևս ծանրանալ ժողովրդի դրուժյունը, և Ֆրիկը կարող էր վշտահար սրտով ասել՝ դարա—տառապանք, դառն ուրբ քաշեցինք:

Անհծ՛ ու վրեժխնդրութեամբ, ահա թե ինչով է բորբոքվում Ֆրիկը մասնաշինների հանդեպ: Եվ որքան մեծ է եղել ընդհանուր թշվառությունը, նույնքան և ավելի բուռն է մեր բանաստեղծի տանությունը նրանց վերաբերմամբ: Նա անուշներով հիշում է մի երեքին. որոնցից մեկի համար գրում է.

Տէրըն սասակց խուր աչօք,
Որ ցրուեցաւ առնն ու բորին.
Հանց փոխարէն արտա սառւած
Այն Գրիգորին և իւր ազգին.
Որ ամենայն մարդ վկայեաց,
Թէ օրթախին անիծեցին:

Գրիգորը Գրիգոր Լուսավորիչն է, իսկ նրա ազգը՝ հայ ազգը, «Ասա—ված», —ասում է Ֆրիկը,— Գրիգորի և նրա հայ ազգի վրեժն այնպես առավ, որ ամեն մարդ վկայեց, թե [հայերը] օրթախներին [աղավաղիւր ընկերներն] անիծեցին, այսինքն՝ հայ ժողովրդի անհեղձ կատարվեց այդ. ասա—ված նրա, ժողովրդի վրեժն առավ: Անհծ՛ կատարման այս հասկացություն—

նք, որ դարեր շարունակ իշխել է հայերի մեջ, Ֆրիկի այս քերթվածի մեջ ուրիշ դեպքերում եւ ուժեղ կերպով երևան է գալիս իսկ Գրիգոր Լուսավորչի հանդես դալը բացատրվում է այնու, որ եթե զօրթախները աջողություն ունենային զքրիստոսադիր թագավորի դեմ, մահմանականության կողմից պիտի վատնվէր Գրիգորի հովտը, հայոց եկեղեցին, Հայերը նեղության մեջ էին ոչ միայն անտեսագիտ, նկատմամբ այս աշխարհի [= բնական], — առում է Ֆրիկը, — այլև այն աշխարհի [= բնականին], այսինքն կրօնի.

Յերկու դիմաց ինք զարտեղան,
Մէկ՝ աստէնիս, մէկ՝ անդէնիս:

Բայց մենք շարունակենք տեսնել, թե ինչպիսի վրեժխնդրությամբ կըսկսվի երում է Ֆրիկի սիրտը: Մի ուրիշ բանօրէն կեղծքիչի համար նա ցանկանում է.

Հոնց խորտակէ աստուած զնա,
Որ իւր սզգովն ամէն ջնջին:

Իսկ մի երբորդի համար նա գրում է.

Տիրապան, աստուածուհաց,
Լիրը 'ւ անամօթ այն շուն Սօֆին.
Հանչաք վազէ զոնէ ի գուտն,
Մինչ որ անկնի ի մէջ գրբին:

Եվ վերջապես բերելով Ս. Գրգի խոսքերը՝ բացականում է.

Թէ երանի, որ հորկանէ
Ջորդիքն ի քարըն՝ շարկածին.
Մենք վաշ ասենք անշանց մերոց,
Թէ ժնց տեսաք ըզթշնամին:

Սրանից էլ ովքի չէր կարող լինել ասուության և վրեժխնդրության բացը հայ աշխատավոր ժողովրդի շարկանների ու թշնամու վերաբերմամբ: Մեր գրականության մեջ կան ուրիշ նման անեծքներ եւս: Դավթակ քերթողն էլ, ինչպես տեսել ենք, անեծքներ է տալիս մի իշխողի, մի տնձի սպանողներին, բայց դա հետադարձն ընտելություն ունի: Ներսես Շնորհալու զօրեղ անեծքը Սեդեհիոյ Ողբի մեջ մի քաղաքի կոտորածի համար է, որ բանաստեղծն ինքը տեսելով չէր ապրել: Իսկ Ֆրիկի խոսքերն ովքի ազդու և ուժեղ են, վերաբերում են ոչ թե միայն մի տնձի սպանման, կամ մի քաղաքի ովերման, այլ մի ամբողջ ժողովրդի շատ տասնյակ տարիներով կրած մամն տեսակի և՛ մարմնական, և՛ հոգեկան ազնապ ու տառապանքների, որ ոչ միայն զգացած է բանաստեղծը, այլև ինքն իր տնձի վրա կրել է այն:

Ույշ ամենի հետ կտր նաև բարոյական կռիվը. բովանդակ չէր, որ հարստ-աւարում էին, այլև շարաթիխ դաժողիկը ծաղրում, վիրավորում էին անմեղ խեղճերին, նրանց բարոյական զգացումներն զրկելով, ինչ որ տանել չի կարողանում բանաստեղծի զգայուն սիրտը:

Գիտեմ, կային հանցեղ մարդիկը,
Որ ի մեր շուրջն խնդային.
Երբ նստեալ ի հրապարակ,
Ամէն ըզմեզ ծիծաղէին:
Հանց բարեաւես աշուի ունինք.
Որ հոգաւ այլ զլիւրկներն.
Թող շուսանայ մարդ ի դրամ,
Եւ ոչ ի դուք մարդ ծիծաղին...

Այս չարախիճ մարդիկը հարստացած մասասխներն են, որոնց արարք-
ներից ախճան գառն ցավով լցված է մեր բանաստեղծը, որ չի հանգստա-
նում, շարունակ դրդված ու գրգռված է մնում. ուստի կրկին ու կրկին
դառնում է նա նույն խնդրին.

Ապա զայս այլ կամիմասել,
Ձինչ մասասխքն գործեցին.
Խիստ յուսացան ի յանցաւորս,
Եւ պարծեցան յիւրեանց մահն.
Թէ մենք շինենք շատ մի թուաման,
Երթանք կախենք գորքն և զայրին.
Հեռ ընկերաց ծուռ են կացել,
Եւ շատ մարդկանց տուն քակեցին...
Ձինչ որ տուել էր անէր հոգաւ,
Ձայն գահաթեմար հերիք չարին...
Հանց խար(ա)զանաւ անէրն ծեծեց,
Որ իմացան զինչ գործեցին...
Հանց ստատկեաց աստուած զնոսաւ,
Ձինչ մասասխց [—մասասխեց] չար կամէին:
Իսրայէլի գերիքն էաք,
Ձեռն ինք ընկել ի Բուզային.
Ումկ հատել էր ի սրտէ.
Թէ քնչ լինի ճար մեր բանին.
Դաւաւ և ոգորմ ինք մեացել,
Թէ քրք հասնինք մեր մուրաբին...

«Առաված այնպիս ստակեցրեց նրանց (մասասխներին), ինչպես
(տանջված մարդիկը) չար էին կամենում մասասխներին», — այսինքն՝ կա-
տարվեց ժողովրդի աված անեծքը: Հարստահարված խեղճ մարդիկը, — շա-
րունակում է քերթողը:—

Յիւրեանց բարեացքն [—բարիքներին] զրկեցան,
Դէմ աստուծոյ շատ մի լացին.
Գանդաւ ասցին ի խոր սրտէ,
Հառաչանք զայս ասացին.
«Տէ՛ր, մի հաներ զմեզ ի կենացս,
Ընչ որ մեր պարագըս զճարին»:

Այս նշանակում է, թե տանջվածներն աղոթել են, թե իրենց չսեռ-
նեն, մինչև որ իրենց «հատուցումը» լինի, այսինքն իրենց վերսն առնվի
և իրենց «չլքով տեսնեն աստուծու արդար դատաստանը և մաստայիների
դատիժը»:

Ձերկը չառ լավ գիտեր, որ Բուզայի և սրա համախառնների ջնջումով
չէր բարձրացվում հառաժարության սխառմը, դեռ չէր ոչնչանում «մասաւոր»,
դեռ մնում էր մյուս մաստայինների տմեկը: Այս ամենի րոտջնջումն էր հա-
մենում նա, ծանր և անտանելի հասարակական ու քաղաքական կարգերի
հեղաշրջումն էր տեսչում: Այս է նրան հուզում, և այս էր նրա երազի
առարկան: Դրա համար, սակայն, նա դժբախտաբար ուրիշ միջոց չի գտնում
և չի առաջարկում այս քեթիվների մեջ, բայց եթե աղայել աստուծուն և
անեծք:

Ձինչ մաստայի կայ՝ հաւատար
Ամենեքեան թող ժողովին.
Որ աղայենք ըզտէր աստուած,
Որ ցուցանէ՝ Արդուն Ղանին,
Թէ չէ՝ աղէկ այն արտասուքն,
Որ թափեցին օրթախընին:

Արդուն Ղանին աստված հասկացնի,—ասում է բանաստեղծը,—որ լավ
չէ այն արտասուքը, որ օրթախները—զավագիր ընկերակիցները թափել
են աղել: Ղանին արած այս նուրբ աղաբարությունը վերաբերում է
նաև նրա մոտ ժողովված բոլոր մաստայիներին, որանք գեռ կենդանի էին
և հովտաբերի էին Արդուն Ղանին. նրանք էլ պիտի իմանան, որ լավ բան
չէ այն չարիքը, որ բերում են ժողովրդի զլխին: Բանաստեղծը, սակայն,
անմիջապես նրանց մի երեքի անունները առնով՝ «Հոգցող անուն» աստու
հրամանով հայտնապես զգուշացնում է նրանց, որ շուտ հոգ ամենին իրենց
մասին, այսինքն՝ չարիքներ չգործեն, թե չէ՝ նրանցով կարողվեն, ժողո-
վուրդը նրանց անեծք կառ, և աստված այդ անեծքը կլսի, կկատարի:

Կա հրամայէ Հոգցող անուն՝
Թաշր Ղուջան Սաղաղալին,
Թէ չհաւ հսկէք զիւրեանց բաներդ,
Թէ չէ ի հաւ ձեզ պարապին.
Անէծքն չէ օչում բարի,
Շուտ կը բռնէ զաղամօրդին.
Աստուած յերկնից —կանջ գրել.
Խիստ կու լսէ մեղաւորին ...

1 Ձերկի տնտեսականությանը մեջ աղված է ցուցանեն էս, իսկ «Արարտ»
տմադիր, 1818, էջ 170 է ցուցանեն, որ և աղիդն է:

2 Հագցողը և համահիշ չիւմաղ, չիւմախիշ, չիւմախիւմաղ՝ բուսերն առնու
առարկաններն են, «Հագցող ամուսն և կիրառությունն» առաւելու համար՝ համեմատ
«Ալէր ամուսն Թիւսուս կիրառությունը» որ գտնում ենք Ներսես Շնորհալու մի երգի մեջ,
Թեպէ մերկը գործածել է «Թիւսուս ամուսն»: Յեն Ձերկ, Բանաստեղծ, էջ 68. «Թիւսուս» անուն,
յիս գրաքաղաքը ցերթվածի սկզբում:

Բերբվածն վերջիմ մտքը մի շատ ազգու հատված է, որ առանձին առանձն կարող է լինել մի գեղեցիկ կրոնական բանաստեղծութունը Այստեղ ար-
տացուած է Թրեկի ուղղութիւնը, ոգին և իղձը, նա զեռ կանգնած է հին
կրոնական, բիրիական գաղափարի վրա, թե ուրիշներէ հետ ինքն էլ մեղա-
վոր է. մեղանչել է և ժողովուրդը, թե աստված ատար զատման բռնակալնե-
րի ձեռով մեղքի ետմար պատժում է ժողովրդին, բայց պատժում է իր
սիրելիներին և վերահաս զժառանգութիւններով՝ լոկ փորձում է մարդ-
կանց, Այսպէս զեռ իղիւս է նախ հայացքը, ինչ որ ներսես Շնորհալու
ժամանակ:

Առաստած յերկնից աննշ դրել,

Խրատ կու լսէ մեղաւորին,

Թէպէտ որ քիչ մի կու դատէ,

Բայց կու փորձէ զիւր սիրելին:

Եվ ահա իրեն մեղավոր զգացող մեր այս բանաստեղծը, իբրև մի երկար
առնջված մարդ, երեսը գեանին դրած՝ արտասուքով թրջելով հողը՝ աղո-
թում է. նրա արարքը հովասացող մարդու. — Դրեգոր Նարեկացու խօսքով
ասած, — սրբի խորքերից բխած մի ջերմ խոսք է առ աստված. Բայց նա
միայն իր անձի փրկութիւն համար չէ աղերսում, այլն ընդհանուրի. ոչ
թե հոգեւոր փրկութիւնն է հայցում, այլ մարմնավոր ազատում մեղաւորից:

Տէ՛ր, որ զԹուան առեր կէտին,

Հաներ արձակ հող 'ւ ի գետին,

Զայս մեղաւոր նառայքս յեան

Մի տար տանել մեղաց գետին:

Ողորմութեամբբոց կու ժընձմը,

Որ վերջը աւնես դու մեր չաբին.

Աւարքս անցու հետ մասաւիս,

Եզրը չբկայ, հուս չերեին:

Յուս յերկարեց 'ւ ի յոսկը անցաւ,

Այլ չի մեաց համբերութիւն.

Տէ՛ր, վասն քո աստուածութեանդ

Ոգըն հասիր մեզ յաւանին.

Փրկեա ըզմեզ ի ասնջանաց,

Սրեկեց զերես քոյին:

«Օգնութիւն հասիր մեզ հատենին» — դատաստանին: Այս նշանակում
է՝ բարդար և իրավ դատա՝ արա մեզ համար, ինչպէս վարվեցիր Բուդայի և
ընկերակներին վերաբերմամբ, նրանց զիվանդաբանութեամբ տեսար, նախն-
պես վարվիր այժմ մեացած մասաւիներին, ընդհանրապէս ճատաստին հետ.
վերջ ասուր մեր կրած չարիքին ու ցավին և փրկիր մեզ ասնջանացից, Բայց
թե ինչ միջոցով պիտի լինի փրկութիւնը, այդ չկու: Զերեկի այս կերպով

¹ «Մեղաց գետ» — զմեթի հեղեղ գետը, որի մեջ իբր ընկնում և ջրվում են մեղա-
վորները:

աղերսն արտահայտութիւնն է հասարակ մարդու, անճարակ ժողովրդի, որ խորն դպում է իւր առաջադասքի սոսկալի ծանրութիւնը և ցանկանում է ազատվել դրանից, առկայն սրելէ զործնական միջոց չի գտնում, բայց եթէ մենքն էլ և աստուած-աստուածն էլ կանչել: Այսպէս և Յերիկը, որ բարդոր և իրաւ գաղտնար-ով սկսում է իւր այս նշանավոր ճերթվածը և նրանով վերջացնում Այդ է նրա ճերթվածի գլխավոր, հիմնական դադարաւորը: Այդ էլ մի աստիճանային հասկացութիւնն է. «Դեռ առաւ ինձ, աստուած, և իրաւ արեւ ինձ ի գաղտնասանի իմումն: Աստուծոս արդար գաղտնասան և իրավունք:

Բայց դրանով բնավ չի նշատանում նրա այս գործը, որ սերտ կապված է ժամանակի իրականութեան, իրական կյանքի հետ, անզրադորմնում է ահասարակ ամենքին մտատանջող հարցը. թե երբ պիտի դաթ-թորակն իշխանութեան վերջը: Եվ եթէ նա դրա համար մի կոնկրետ քաղաքական ծրագիր չի առկա իւր բանքի մեջ, դրա փախանակ նա այնպիսի թանձր ու մտայն գոյններով նկարել է ազգային-հասարակական ծանր վիճակը, և այնպիսի սրտամորմող զգացմունքով խոսում այդ մասին, այնպէս ստատիկ սքանկում, թե ինչու ուշանում է սպասած փոփոխութիւնը, «մասսիս» ու «մասսիսներին» վերջը, և այնպէս մեծ իդէալ և ուժգին թափով երգում է փափաքած փոփոխութիւնը, որ անչափ զրավում է և իւր հետ հափշտակում ընթերցողին: Եւ մեր պրակտիկութեան մեջ հասարակական և ազգային-քաղաքական խնդիրների առաջնակարգ ճանարեղուն է իւրը, այսպէս ասած, «զոր-զայական» կամ «դիպլոմատիկ» բանասանդն: Բայց այդ ճերթվածը չէ միայն:

Յ. «Գեղեցիկ:—Մինչ բանասանդին իւր նախորդ երկու երկերը հորինելիս 1286 թվականից ի վեր տնակութեամբ ապաստում էր բարդոր և իրաւ գաղտնարն աստուծոս վճռին, որով վերջ պիտի արվեր ժողովրդի տունջանքին, 1296 թվականին հակառակ է լինում, սաստիկ հակածունք է սկսվում հայերի դեմ: Ուստի նա այդ միջոցին հորինված «Գեղեցիկ» բանքի մեջ, բարտի գաղտնութիւնից զգուհութեան ձայն է բարձրացնում առ աստված, դառնալով արտահայտիչ այն ժամանակի հայկական ազնաւոր իրականութեան և փոխված աշխարհայացքի: Դա մի խիստ բողոք է աշխարհի ամեն անարդարութեան և անհավասարութեան դեմ, լինի այդ բնական թե ընկերական, և մանավանդ այն անարդարութեան, որ հայ ազգը կրում էր՝ դարեր շարունակ չարչարվելով իշխանների ձեռին: Նորից մեր իրականութեան մեջ հարց է արվում կտրուկ կերպով, թե ինչու է քրիստոնյա ժողովուրդն այնքան կեղծվում այլակրոններից: Ներսէս Շնորհաւոր ժամանակ արդեն եկեղեցուց անկախ և ազատ ըննադատութիւնն ու երկրայնութեան ոգին գործում էին աստուծոս բարդար և իրաւ գաղտնար լինելու մասին,—որովհետեւ ամենայն ինչ աստուծուց էր ծագած ընդունվում: Բայց մեկնաբան

¹ Այս «Գեղեցիկ» վերնագիրը ձեռագրից չէ ծագում, այլ Արքեպիսկոպոս Տ. Յակոբի գրածն է: Տես նրա «Հայեր» ժողովածուն, Թիֆլիս, 1858, էջ 143 և հետ: Ձեռագրի մեջ վերնագրին եզել է՝ «Բան ի Յերիկ գրածն», զորտե՛ս՝ «Բան ի Յերիկ գրածն»: «Յերիկ» գրքը անհետ քաղ է առկա, որ այդ վերնագրով մի ժողովածու է եզել Յերիկի ստանալների:

բանաստեղծը հակահասուս էր այդպես մտածողների դեմ՝ իր պաշտպանու-
թյան առկա առնչելով աստուծու դատաստանը, բացառելով. թե իբր մեղքի
պատճառով էին հայերի գլխին դալիս այն ամեն չաբիճանքը, նշնակի Կող-
բացուց սկսած միտմտությամբ հաշտվում էին այդ մեկնության հետ. իսկ
այժմ, երբ կրոնական ոգին համեմատաբար թուլացել էր, այդ այլևս չէր
բավարարում շուրջ վաթսուհինյա հասուն տարիքն ունեցող Ֆրիկին, նրա
հետ, հարկավ, նաև ուրիշներին, և ինքը բանաստեղծին արդեն դառ է սկը-
սում և վիճում նույնիսկ «արդար և յերաւել և ողորմած» աստուծու հետ:
Նրան զբաղեցնում է այս հարցը.

Ապա այս է՞ր օր կու լինի,
նա թէ յաւմէ՞ կայ և յայտնի:

Նույնպես և մի ուրիշ երկի՝ մեջ ինքն իրեն հարց է առնիս.

Ձայս մնց գիտենալ կարենք,
թէ այս է՞ր է(ի) հանց բաժանած:
Ձայս մնց գիտենալ կարենք,
ես մըտօքս ի հոգս եմ անկած,
Ասեմ՝ թէ այս է՞ր լինի,
Որ զամէն հուսար չէ զուգած:

Կնշանակի՝ բանաստեղծը երկար ժամանակ խորհում, ձգտում է թա-
փանցելու իրերի խորքը, դանելու աշխարհում եղած և՛ ազդեցիկն, և՛ դա-
սակարգային անհարթությունների ու չաբիճանքի իսկական ուրմառը: Ազ-
դային դժբախտությունների հիմնական պատճառ նա համարում է այն, որ
աշխարհում կան բազմաթիվ ազդեր, և ոչ թե մեկը: Եվ այդ անդից էլ,
սկսում է իր ասելիքը. 24՝ Դր սկզբում մեկ Աղամ-նվա են եղել և ամեկ
բարբառ համազգային¹, բայց զարմանալի է, շատ զարմանալի, — առում է
նա, — որ այն մի գույզից

Ո՛րքան ազդեր ծնան յերկրի.
Ուրիշ լեզու ամէն մէկի,
Որ մէկ մէկի ոչ հաւանի:

Ապա նա թվում է իր ժամանակի իրեն հայանի ժողովուրդներին,
թվով քսան, որոնք իրենց ցեղական ու լեզվական առբերությամբ ընդ-

¹ Ֆրիկ, Բանաս., էջ 287, սլոան Թախի և բրջին:

² Շատ դուրեզայթ պիտի լինել զերևու համար, թե Կոնստանտինոպոլիսի բանավարդ
աստուծու հետ, Ֆրիկն ամենից առաջ կապի՞նք առկ է առնում աստվածաբանը (Ֆրիկ,
(ժողովածու), Նրեան, 1937, էջ 114 հոգված Ա. Ղալալյանին): Իսկ մի ուրիշ՝ ավելի ետ
զարգացնելով իր նախորդի միտքը՝ զբոս է. «Ի՞նչ այս ընդաստեղծության մեջ Ֆրիկը հա-
մարձակորեն զենի կոնկրետ աստուծուն, նախ և առաջ լուրջ կոսկածի է ենթարկում և ևս
վատում Աղամ-նվայի լեզունդին» (Ֆրիկ, Բանաստեղծություններ, Նրեան, 1942, էջ 10. Ա-
ռաջարան Մ. Միրյանի): Այդպես զբոսներ իրենց մտածածը վերադարձ են Ֆրիկին. թող
կարգան նրա Բան զիտանի և լուս աստեղալ Ֆրիկն վառն արարչութեան, և այլ կրա-
նական քերթվածները:

հանրապետ իրաւը դեմ անհատական կերպով կանգնած են եղել: Այս անհատականութիւնը կրօնականի մեջ ավելի մեծ ուժով է երևան եկել: Միութեամբ Գոշի առաւելների ուսուցիչութիւնը ժամանակ արդեն տեսել ենք: Թե ինչպէս ծաղրում էին ուրիշները կրօնական ծեսերն ու սովորութիւնները. բայց հայերի և աւստրիականների, այսինքն մահմեդականների հարաբերութիւնն այն ժամանակ ընդհանրապէս բարեկամական էր: Այդպէս չէր դրութիւնը հարյուր տարի առաջ: Հայերս, որ ճշմարիտ հաճախ ունինք, տեսւմ է ներկը, տանջվում ենք այլազգիների ձեռքն: Եվ նա զնազարում է 1285 թվականի թշուառութիւնները.

Այլ կամք ի ձեռս անօրինի,
Որք կու վարեն անգին գերի.
Ո՞րքան քակեն եկեղեցի,
Բանի՞ շինեն պիղծ մըզկիթնի.
Բանի՞ կանայս տունն այրի,
Եւ ժրքան որք քրիստոնէի.
Ո՞րքան արիւն հեղան յերկրի,
Բանի՞ տունն բան խոտելի:
Ո՞րքան տանջեն զմեզ յաշխարհի,
Եւ կեղեքեն զկեանս մեր յայտնի.
Եւ դեռ ներքոյ յամենայնի,
՚Ի անառն տունն զմեզ ի վըշտի:

Ինչպէս պետք է հարգար և իրաւա տառվածն այս ամենը ներքի և այն անիրավութիւնների վրեժը հայտնի կերպով չաւանի: Եվ մի տեսակ հանգիստանութեամբ ավելացնում է՝ դիմելով տառնուն.

Գիտես, մարմին եմք մըսեղի,
Գէտ արձան չեմք ինչ պըղընձի.
Եղեգըն չեմք, կամ խոտ վայրի,
Որ խոնձ արկեալ ես կըրակի,
Բան զանգաստան վըշտերի,
Կամ մացառաց ինչ պըրակի:

«Է՛հ, ասե՛նք բարկացել ես հայ ազգի վրա, ինչպէս երբեմն հրայաների վրա, ուրեմն ինչ բարկութիւնն որ քեզից թափվի՞՝ մեր պիտի պիտի գտնուի: Այս հարցադրումները և անհատական հայ ժողովրդի ոգիներ-գական վերակը զօրեղ թափով են արտահայտված, որովհետեւ բանաստեղծը մեջ է գտնիս այն գաղափարը, որ թեթեւակի երևում էր արդեն Միութեամբ Գոշի առաւելների մեջ, թե ավելի լավ է մի անգամից մեռնել ոչնչանալ, քան թե տանջվել շարունակ:

Արդ՝ եթէ չեմք ինչ պիտանի,
Եւ կամ չունիմք գործ ինչ բարի,
Կամ քո օրտիչ եմք տառելի,

Որ չաբարաք ըստ հրամանի,
Նա դու ջընջէ՛ր զմեզ մէկ հետի,
Որ քո բարի սիրտըդ հանգչի:

Այս՝ մի հուսահատական ճիչ է, որ ինքնաշարժ կերպով թռչում է քանաստեղծի բերանից, բայց իսկույն նա զգաստանում է, որ հեզեւել է աստուծու բարի սիրտը, և ուղղում է իրեն.

Թէ այս կամօքըդ քո լինի,
Ամենակնալ աստուած բարի,
Նա մեք տանեմք, որչափ պիտի,
Եւ հաճեցնեմք ամենայնի.
Այլ որ վատուածն է՝ թող կորի,
Եւ դու կամիս՝ թող մյն լինի:

«Թող վատուածը, թույլը կորչի, թե չէ՝ մենք, եթե այս լինում է քո բարի կամքով, կդիմանանք մինն բանի. թող ամենակալ բարի աստուծուդ կամքը լինի», — ասում է բանաստեղծը՝ այլևս չհուսահատվելով իր ուղղի համար և համակերպելով աստուծու կամքին:

Շարունակության մեջ անցնում է հասարակական ու բնական տնտեսավարությաններին: «Իմ ազգը թողնենք», — ասում է նա, — բայց մի՞թե «բողոք, իբրեւ դատավորի հրաման» է,

Որ մէկն աղբի տան տարի,
Մէկն հարկւր այլ աւելի,
Մէկն ոչ ի տան հասնի,
Երկու երեք ամսոց մեռնի:

Եվ նա թվում է բնական և սոցիալական տնտեսավարությանները — մեկի վաղաժամ մահը, մյուսի բազմամյա անպեղծ կյանքը. մեկը՝ խիստ աւտոկ, մյուսը՝ սարսափելի վախկոտ. մեկը հանճարեղ ի ընե, մյուսն՝ տնայնորէք. մեկը՝ հրեշտակի պես զնգեցիկ, մյուսն՝ անհոռի ազնիւ. մեկը՝ բարեզոր, մյուսը՝ չար, սպանող, և այլն: Հապտ դասակարգային անհավասարությանները.

Մէկն ի պապանց պարոնորդի,
Մէկն ի հարանց մուրդ լինի.
Մէկին հաղար ձի և ջորի,
Մէկին ոչ ուլ մի, ոչ մտքի...
Մէկին տալու և զըրբըզի.
Մէկին շաղիկ մի չի հասնի.
Մէկին հարածն յաջողի,
Մէկին հալալը կորուսի...
Մէկին ըստիտ և զըրեհի,
Ճոխով նըստի ի պէտաւ ձի.
Մէկն է բողիկ և անվարտի,
Հետեակին տառջ փախչի.

Նա բարեկութեամբ ի հետ հասնի,
Զվիղըն կըսարէ ե շոգորմի.
Զկին և դռնդալքն առնու գծրի,
Նա հանց ասնի, որ ալ չթափի:

Սրանք ին աշխարհի ուսնանքն ե աշխատեալ են վարվում թույլներէ հետ:

Իշխան զբեր ես մէկ մէկի,
Քան հըսնասար գոյլ՝ աշխարի,
Կամ գերդ վազան նապաստակի,
Կամ քաջ տոհմ՝ ամէն հետի:

Այսպես է իրոտ ուսնող խոսքով քնութեամբ գրում Զրիկը կեդեքող և կեդեքովող դասակարգերը. աշխարհի իշխանները հոտերը պատասխող գոյլեր և աշխատներ են: Նա ասնանապես կանգ է առնում նաև հարուստների կամ բարեխաղութների և աղքատների կամ բանաստեղծների վիճակի մեծ տարբերութեան վրա: Բարեխաղութների մեջ են և հոգևորականները:

Անբախտըն գայ ամօթալի,
Հեղ և հանդարտ, առաքինի.
Քայ և կանգնի յետին տեղի,
Անշուք, անշուք և անշարդի:

Իսկ, ընդհակառակն, ահա թե ինչպիսի վիճակ ունի լուծն ի փոքին, աշխուշն՝ գիրուցի բեռը փորին՝ հաստափոր, ցնփոր, տգետ և անզոր ճահառն:

Բախտաւորն գայ ճոճկառալի,
Քայ և նըստի յառաջ բարձի.
Լուծն ի փոքին թէ շուրջ անցնի՝
Ոչ ալելու մի չի դիպնի.
Բայց վասն մէկ աւուր տունի,
Որ թէ գաւիկ, ալլա տն լինի,
Նա խաչհամբոյրն իւր շատ անկնի,
Մորթ և էրի և գողանի:

Ամեն լավ ու վատ բան, ամեն աննման անհարթութիւնները կախված են բախտից, իսկ բախտն էլ աստուծուց է արվում:

Ամէն ի բախտըն գայ կուտի,
Թէ աստուծոյ տուտալ լինի:

Հետեալաբ բանաստեղծը բախտավորի և անբախտի հակադրութեամբ ևս տարեկուսում է աստուծու հարգար և իրաւ զերբերմունքի մասին: Եթե աշխատեալ է, աստուծու վճիռն իրավ է, ապա ինչպէս աշխարհում գոյութիւն ունին աշխարհի շարքներ, անհավասարութիւններ ու զբախտութիւններ: Բանաստեղծն ուղղում է իմանալ այդ երևույթի պատճառը, բայց նա

իբ հարցերի պատասխանը չի գտնում, և երկրալսթյան մեջ Թալով՝ վերջը
նա իբ հարցերի համար բանգա գալով, գարձալ խոստովանում է, թե աս-
տուծու հրատարակած իրավա է. նա, ասածած, ամեն մեկին դիտավորու-
թյամբ, որոշ նպատակով (հետաթով) է տալիս իրենց վիճակը, ուստի և
ինչպես որ ասածած կամենում է, այնպես էլ պիտի լինի.

Ու քեզ միզալ երկնաւորի.

Տեսան աստուծոյ անեղ մեծի.

Քո դատաստանն է յիբաւի.

Նեաբով կուտաս ամեն մէկի:

Տէր, քո կամացն է աշխարհս լի,

Այսպէս լինել, զոր ասացի:

Պեզ օրհնութիւն ի մէջ ասցի,

Ամենազոր տեսնեց Յիսուսի:

Այս դեպքում էլ, ուրեմն, համակերպում է աստուծու կամքին ոչ մի-
այն նրա համար, որ վերջիվերջո իրավ է գտնում աստուծու պատասխանը,
3. Հովհաննես Երզնկացու կենսագրությամբ մտքի բաժանան աղեկաւթյուններ ունենց իր գրգռեցնորի հիշատակարաններից և ուրիշներից,² նա ծնված է շուրջ 1350 թվականին Երզնկա քաղաքում, ուստի կոչվել է Երզնկացի, Երզնկայեցի, Իր ձեռով գրած մի գրքի մեջ գրել է իրեն համար. «Նուստա և աղաքագի Յոհաննէս Երզնկայեցի, աղաւաղ բանի: Միթիթա Գոյի առակների մի մասի տրամադրության հիշատակարանի մեջ 1394 թ. նա գրում է. «Ջառարում գրիչս գրեմ. ծանօթ բանի և աղեկաւ յերզնկացի, իսկ այժմ Մոքեթրեցի, աղաչեմ շտառանալ ...»³ Հովհաննեսը, որ հայանի է նաև Պլուզ (կապուսաչուի) մականանով, ուսումնառել է Սեպուհ լեռան ս. Միքայի վանքում, բայց այնտեղի ուսումով չի բավարարուել: Նա մտնել վանքերն էլ այցելելուց հետո անցնում է հյուսիս-արևելյան Հայաստան և աղեկաւթում համբավավոր վարդան Արեւելի վարդապետին հայնո ձորի մի վանքում: Նա 1271 թ. վերադառնում է Երզնկա, և առաջ տարի հետո այստեղից գնում Կիլիկիա, ուր, իբրև մեծ հեղինակություն տր վարդապետ, լավ ընդունելություն է գտնում մամուսկի կաթողիկոսից և Հայոց թագավորից, պարագում է ուսուցչությամբ: 1284 թ. նրան գտնում ենք Տփղիս քաղաքում: 13-րդ դարի վերջերում նա հաստատվում է Արաբ-գու ս. Ասափածանի կամ Թաղեսու առաջալի վանքում, Մոքեթր գյուղի մոտ շինված, ուստի կոչվում է նաև Հովհաննես Մոքեթրեցի: Ինչպես ուրիշ աղեկաւթի՝ այստեղ էլ այս վանքի առաջնորդը, Զաքարիա անունով մի ուսուցիչներ անձ, սիրով ընդունում և պահում է նրան: Այստեղ էլ նա պարագում է նաև գրական աշխատանքով: 1316 թ. մի անգամ էլ ճանապարհորդում է ի Կիլիկիա և վերադառնալով Արաբ-գու վանքը, այնտեղ էլ երկի աղբիլ է մինչև մահը, ուր ճիշտ թվականը հայանի չէ. գտնում են մոտ 1328 թ.: Վերջին գրական աշխատություններից մեկը, եթե ոչ վերջինը, որ հիշվում է, է 1321 թ. կառարած մի թարգմանություն լատիներենից, որ նա սովորել էր, երևի, Կիլիկիայում եղած մամուսկի:

4. Երկրորդը:—Հովհաննես Երզնկացին իր մամուսկի գիտնական վարդապետի մի տիպարն է, որ պարագում էր միաժամանակ և՛ ուսուցչու-

¹ Չ. Ալիշան, Յուզիկ հայերենաց Հայոց, հատ Բ., Վանեթի, 1870, էջ 457—468, Երզնկա և Յովհաննէս Երզնկացի:

² Եղիշանի Մատ. Առաջիկա համար 2238.

թյամբ, և՛ գիտությամբ, և՛ գրականությամբ և՛, ինչպես ուրիշները, ազատ
 ժամանակին նաև գրչությամբ, այսինքն ձեռագիրներ էր արատագրում։ Նա
 ունեցել է ճարտար լեզու, և ամեն տեղ, ուր գնացել է, ճառեր է տեսել և
 հիացում պատճառել իր ճարտասանությամբ։ Ժիշտ քաղաքացիություն է արել
 և սովորեցրել։ Լինելով ուսուցիչներ՝ բազմակողմանի հմտության տեր է
 դարձել, աշխատելով իբրև մեկնիչ, առժամագեւ, քերականագետ։ Հորինել
 է ճառեր ու ներդրոցներ, այլև իբրև բանաստեղծ՝ առղեր ու շարականներ
 և այլ քերթվածներ։ Նրա աշխատություններից մի քանիսն արդյունք են
 ուրիշների գրգռման, այսպես՝ 1260 թ. Երզնկայի ս. Գրիգոր վանքի միա-
 բանության խնդրով գրել է «Կանոն» և սահման միաբանութեան նպարցը։
 կաթողիկոսի և ուրիշների գրգռմով հորինել է Դիոնիս Թրակացու Գերա-
 կանության մեկնությունը, նկատի ունենալով հին մեկնությունները։

Տվիդիսում նրանից խնդրում են, և նա գրում է «Յաղագս» երկնային
 շարժման։ Այսպես ուրիշներն էլ խնդրում են նույն նյութի վրա գրել բա-
 նաստեղծություն, և նա գրում է «Կանոն» հանգով հազար տողով ոտանավոր-
 ներ։¹ Նկարագրելով երկինքն ըստ ժամանակի հասկացություն, երբեմն և
 դիմառարար երկնքին գիտելով։ Արվեստի տեսակետից սակավթիվ գե-
 րեցիկ աղբյուր միայն կան միջին, ինչպես հետևյալը՝ «Ներբողական գովեստ»
 և բերին։

Ո՛վ սքանչելի ձեզուն յարկի այս մեծի տան,
 Ի բարձրելոյն բանէ ձգեալ որդէս խորան . . .
 Դու յարկ մեծին ձեռամբ շինեալ արքայական,
 Զահք ի բարձանց ի քեզ կախեալք անշիջական,
 Դու անթաւամ ծագկանց յուսոյ մեծ բուրաստան.
 Որք յանդաստան քո գեղեցիկ ծագկազրեցան,
 Ոչ թէ միայն քո պարանոց դարգաւորեցան,
 Այլ բովանդակ մարմին և անձն շքեղացան,
 Յոյժ մեծութիւն քո հրաշագեղ անխափական,
 Հանդերձս նուրբ և պատմունան քեզ կարգեցան,
 Ոչ թէ միայն կրկին ակունք որք ճոխացան,
 Այլ յոգնակի ակունք յուսոյ շարագրեցան,
 Եւ մարգարիտաւ յուստփայլ որք յեռեցան
 Ընդ գիշերոյ սպիտակփայլ ջահ ճախրական,
 Իսկ ի տուն բազմափայլիւն բոց կայծական,
 Եւր գիշերոյն ազոտ փայլունքն ծածկեցան։²

¹ Ցղագրման է Նոր Նախիջևանում 1703 թ. «Տեսարակ համառու» և լի իմաստաբան
 բանի։ Եւրբեալ հագնից և իմաստուն ժողովականի Յեւանդիկ Երզնկացոյ, որ և առի
 Մարմարեցի . . . և ձեռնակի առաջաբանի վերնագրին է. «Յաղագս» երկնային շարժման,
 Յեւանդիկ Երզնկացոյ շարագրելու իմաստանց բանից ի խնդրոյ բարեգոյալ և երկիւ-
 դազորդ պատանւոյ պարսն Վաղթանկոյ։ Անում է իր աշխատության ծագման պատմու-
 թյունը, Երբեքոյ մասը (էջ 21 և հպն.) ունի «Կերտագիր» «Յաղագս» որ ի սմա եղիւ ըս-
 տիցն՝ կանխաբանութեամբ. «Համառու» դնում է իր քերթվածի ըզմանգիւթյունը. Դրել է
 զի խնդրոյ բարեգոյալ իշխանին Աղայցի։

² Անդ, էջ 51.

Համախ նկարագիրն առնում է իրբն ալլաբանութուն կամ իրբն խորհրդանիշ—սխմբու որն է կրօնական հավատալիքի կամ մարդկային կյանքի մի երևույթի, ինչպես, օրինակ, հեռակայն արեգակի մասին.

Այլ և դպտոյթաւ լուսոյն ազրիւր միշտ հոսական,
Ըզգեղեցիկ ակն աշխարհի լոյս ցուցական,
Զնո ի կամարդք քո բերես ցաւ քայական,
Որ զկերակուրքն հրոյ բաշխէ բնաւից պիտան:
Սա մեզ խրատ օրսսօրէ քարոզական,
Ըզմա՛ն և զկեանք օրինակէ զէժ յանդիման,
Առաւօտուն ծագմամբ զփնուհըն մայրական,
Երեկոյին թաղմամբ ըզմուտն ի դերեզման:
Սա զօրինակ բերէ լուսոյն ահեղական,
Որ ի ծոցոյ հօրէ ծընունդ որդի և բան:
Յարևելից գեղով ծագէ փնստյական,
Աբաբաղէս ընթացս առեալ հըսկայական,
Զարեգականն արգարութեան պտտմէ ըղբան,
Զանհիւթ լուսոյն մեզ քտորդէ լոյս ևդական¹.

Հովհաննես Երզնկացուց մնում են բազմաթիվ և բազմազան բովանդակությամբ երկեր, բացի վերևում հիշվածներից նաև շատ նաոսեր, մի քանիսն ի սուրբ Լուսառարելին, որ ասել է Լուսավորչի ասելի օրը նրա անունով վանքում Մեղուհ լեռան վրա, մեկնություններ, խրատական երկեր, առանձնություններ խրատական բովանդակությամբ, այլև առգեր, շարականներ և այլն, Սրանց մեջ նա հաճախ ցուցաբերում է ջերմ սրտագին զգացումներ դեպի հայկական սրբավայրերը և անցյալը. նրա բանաստեղծությունները, ցավոք, գեա չեն հավաքված և միասին հրատարակված մի ամբողջական ժողովածուի մեջ.

Նրա անունով մնում են և բազմաթիվ իմաստական տաքեր ևս, առանձնապես հայանի են մի մեծ շարք տաքերը՝ «Մեղ Գլուգ վարդապետի տաքերու» վերնագրով².

4. Հովհաննես Գլուգի աշխարհայայտը, Մտումի իրավունքը.—Մեր այս գրողն իր տաքերով հանգիստնում է իրբն իսկական իմաստաբան քերթող, հանդիսաւ ու գիտաւն վարդապետ, լուրջ բնավորությամբ, ավելի մտածող, քան զգացող. նա իր ժամանակի աշխարհիկ ուղին շատ ուժեղ և բյուրեղականք ձևավորել է իր տաքերի մեջ, Արդարև նա դեռ երևում է բերում մի ճրիստոնեական հոսեանություն, բայց արդեն խիստ աղբյուր նախորդ շրջանի հայացքից, Աշխարհը նրա համար այլևս մի հառաչանքի հովիտ չէ, ի չարչարանքներով ու չարիքներով, այլ մի զվարթ կյանքի

¹ Անդ. էջ 54 և հա.

² Մանրամասնություններ տես Ջաջուհյան, Հայկ. հին գրք. պատմ., Վենետիկ, 1897, էջ 750—797, «Մեղուհյան» երկաթբանությունը.

³ Ձեռն ասել ունիմ վերնակի Միքիթայան Մանրամասնի № 324 թ. բ. նաոագրից հասել արապագությունը. Նույնը մեծ մասամբ աղված է Վ. Փափաջյան, Պատմություն հայոց գրականության, Թիֆլիս, 1910, վերջի նաւանքի մեջ, էջ 81:

վայր, որք, սակայն, իր մեջ ունի մի մեծ հակադրություն— մահը, եւ
որպիսի՜ գեղեցիկ պատկերավորությամբ, սեղմ ու լի բովանդակությամբ,
մի քառյակի մեջ կարողացել է արտահայտել նա այդ:

Աշխարհս է կոնաչ մարգեր,
Մենք ի մէջն ենք կօցւում ձագեր.
Գրքոգն է հղել բազմ,
Կու կըբէ մէկ մէկ դար ի վեր:
[Վարժանա՜ չընշտակնին արծիւ գարձեր,
Կու ասնին գմեղ մէկ մէկ ի վեր]:

Մարդս չի կարողանում ուրախ եւ երջանիկ զգալ իրեն, որովհետեւ
մարդկային վիճակը և կյանքն իսկ անկայուն է.

Աշխարհս ի սուտոյ նըման,
Որ ի վեր 'ւ ի վայր թաւալի.
Վերինըն ի վայր գառնայ,
Եւ վարինն ի վեր ոլորի:

Մըտիկ դու հիւսանն արահ,
Որ թաղուք 'ւ օրոցք չինն նայ.
Մէկըն գայ և մէկն երթայ,
Նայ իւր բան պակաս չի մընայ:

Այսպես ուրեմն, անունդ ու մահ միասին են շարունակ և այս երկուսի
մեջ մարդուս բախտը վեր ի վայր է թափալու: Անդգալի անցնում է կո-
նաչ երիտասարդությունը, կարծես իսկույն վրա է հասնում անբությունն
իւր երկյուզով, որ մարդուս սիրուն շինվածքն անպատելի պիտի քայքայվի:

Աշխարհս է ի ձով նըման,
Ով ուր գայ՝ անթոց չի մընայ.
Բայս ձովո ես ի նաւ մըտայ,
Գընաց նաւս, և ես չիմացայ:

Եղեր մօտեցեր է նաւս,
Վախեմ թէ քաբի դիպնայ,
Գակաի իմ աղուար շինուածս,
Ու ասխտակըս մէկմեկանայ:¹

Եվ մարդիկ կարողան կապած դնում են անդինը, ասանց կշտանալու
աշխարհից:

¹ Վարժանաի մեջ ավելացրած է այս քառյակը.

Երթամ ազնեմ գոռաւած,
Որ հանէ գիւնց մի քամի.
Այս մըթանըս ըյս մի ասի,
Ձմեղ բարե երկէր մի հանի.

Շառ թագաւորաց մեծաց
 Յիմաստնոց արանց լրեցի,
 Թ'ախնափ չըկըշտանայ մարդն
 Աստուորովս, ինչ որ մեռանի.
 Տանին դերեզման դընեն
 Եւ հաղով իւր աչքըն լրցուի.
 Ապա փոշի առնէ,
 Թէ հերիք է 'ւ այլ չի պիտի:

Ար անգամ որ մարդս անվերջ չի վայելում կյանքը և իր աշխատանքը և ծերութիւնն ու մահ կա, հետեւորար ունայն է ամեն ինչ և տնօգտւա՝ ամեն վտառով: Կյանքի այս անկայունութիւնն աւ մահն են ձգոււմ մեր իմաստաբանին հոգեւորութեան մեջ, թե չէ՝ կուգոր նա իրրեւ եկեղեցովի ձեռք անվերջ ապրել եկանալ մարգագետնում:

Այլաբան է ոչինչ նման,
 Շառ դատին, դառնաւ փոշիման.
 Հալալ ու հարամ այնն,
 Հոս թողուն 'ւ ի հոն կու գընան:

Հոգեւորութիւնը շատ բանաստեղծների տանում է դեպի հաճւայքը, բազմակտն վիճակի վայելչութիւնը, բայց այս կենսութեան հայացքը մեր գրականութեան մեջ 17-րդ դարի վերջերին է առաջ գալիս, իսկ 18-րդ դարը դեռ շատ մոտ էր հին կրոնական շրջանին: Ուստի ինչպե՞ս էլ մեր բանաստեղծի հոգեւորութեան հիմնական պատճառն այլաբարութիւնն ու կենսասիրութիւնն է, բայց նա չի համակրում է ախոր մշտով՝ չնամարձակվելով անգամ դրա պատճառը բացահայտ շեշտելու կամ աշխարհն ու կյանքը երգելու: Ուրիշներին նույն հոգեւորութիւնը տանում է դեպի ամենայնի ոչնչացումն և անասրբութիւնը. բայց մեր բանաստեղծը դեռ բարեպաշտ քրիստոնյա է. նա հաճատում է անդինի կյանքին: Ուստի նրա համար ամեն բան ոչինչ է. բացի գիտան լինելուց, գիտութիւններից ու բարի գործից, հասկապն աղքատասիրութիւնից, ինչ որ Զերիկն էլ քրոնոգում է: Այն էլ առանհառաւ արարածներն անդինի նկատմամբ:

Մանկութե, երբ ի հաց նըտտիք,
 Զէնիցէք աղքատք ձեզ ընկեր.
 Մեռնիք 'ւ ի յանդէն երթայք,
 Կու նըտտէք մէկ մ' այլ ի վեր:

Բայց բարեգործութիւնը, աղքատասիրութիւնը, որ արվում է եկեղեցիէ համար, դեռ բավական չէ. Որովհետեւ մարդ չկա, որ մեղավոր չլինի. պետք է ուրեմն զղջալ, սղալ, մեղքը լալ. Ասկայն կարժի էր արդարեւ մեր իմաստաբան Պրոգն իրագործել այդ: Ար Գրիգոր Նարեկացի 10-րդ դարում՝ համակերպվելով իր ժամանակի որոշ դասի փոխարութեութեանը՝ կարողանում էր շարունակել աղալ ու ողբալ, որովհետեւ նա խորը համոզված էր, որ աշխարհն ու կյանքը վտառ է, և միմիայն չարիք. նա մերժում էր

աշխարհը, մեռցնում մարմինը, որ միանար աստուծու հետ, և այդ էր ան-
վերջ քնարերգու մահ։ Հովհաննես Պուլզնի,— և իր պես մտածող ուրիշ-
ները,— անընդունակ էր այդպես վարվելու։ Նա չէր կորոզ ուրանալ աշ-
խարհը, մեռցնել մարմինը։ Ուստի նրա ապաշխարական երգը սառն է հնչում
և չի փրկում նրան։

Ելա՛յ ժողովեցի զիմ մեղքն
Ու զըրի առջևս ու լացի,
Յանդէնքն քարւան կ'երթար,
Շալկեցի 'ւ ի հետ զընացի.
Հրեշտակն ալ ի գէմս ելաւ,
Թ' զՈ՛ւր կ'երթաս ողորմ ու լալի.
Այդ շալակդ որ դու ունիս,
Անդէնին քեզ տեղ չի ընկնի։

Պուլզը ոչ միայն գործնականորեն չի կարողանում հեռեկա նախորդ
շրջանի միասնական ձգտումներին ապաշխարությամբ, այլ նա տեսակա-
նորեն էլ արդեն հակառակ է դրան։ Նա մարմինն գիտակցաբար առիւ է իր
իրավունքը, նա մարմին ու հոգի, այս երկուսը միմյանց համասար ընկեր-
ներ է համարում ակզբունքով, իր ժամանակի համար մի խիզախ տեսու-
թյամբ։ Բերենք նրա նշանավոր քերթվածը, որի մեջ նա պարզում է իր
տեսական ամբողջ միջնագրի մտքերն զբաղեցնող խնդրի մասին։

Երկուս ի մէկտեղ բերած,
Ձերդ զքնկեր կ'ասեն թէ՛ պահէ՛.
Ու չորս բնութիւնս օտար,
Հետ իր(ե)րաց կ'ասեն թէ՛ սազէ՛.
Ձայն չորս յիրար ժնց պահեմ,
Ամեն մէկ յինքն կու քարշէ,
Ձիս հոգս ի յայսոց միջին,
Ձերդ կըրակ ըզմո՛մ կու հալէ,
Հազրս չոր խուշկիկ առնէ,
Ձուրբս գէ՛ճ կու ցըրաացընէ,
Թամին զիս յերեք օւնի,
Կըրակին բոցըն կու վառէ՛.
Հանցեղ օրերի չարկամ
Մէկտեղ մի իսկի տեսեր է.
Հոգիս թէ ի վեր քարշէ,
Հոգըս ծանր ի վայր կու հալէ,
Վախեմ թէ հոգս լըսեմ,
Նա հոգս րանըն զըթարէ՛.
Եւ հետ հոգս մի թըռչի,
Երբ նորա տունըն հեռի է։

Բանասանդոր նույնիսկ երկրայում է։ Թե կարելի լինի իրար հետ
իրեն ընկերներ հաշտ պահել հոգին ու մարմինը, որոնք իրար հակառակ

առ չյաբկամք են, ինչպես չորս տարրները: Նա հնարավոր չի համարում
մարմինը թողնելով՝ հոգու հեռ գնալ: և ոչ քի էլ չի կարող հոգու հեռ վեր-
սլանալ, ասում է նա, քանի որ շնորհ [ահագու] տունը հեռի էս: Բացի
այդ՝ կենդանի մարդը մի թույլ էակ է՝ կազմված լինելով չորս տարրերից,
որոնք իրար անմասն են, մեկմեկու չարկամ են, միմյանց հակառակ ազ-
դեցություն ունին, և մարդս նրանց պահանջին ենթակա լինելով՝ անհրա-
ժեշտորեն պիտի կտտաբի նրանց, որ է՝ իր մարմնի կամքը, Բերենք և
հեռեցալը, որ կա իրիկ շարունակություն նախորդ քերթվածի:

Հինգ դուռն է ի բաց թողած,
Թէ՛ փակէ՛ որ դադ չի մանէ:
Ըզդողըս ես տանէս ունիմ,
Որ զդրոներս ի բաց կու պահէ:
Շաղուած ես ի չորս իրաց,
Այդ ցեղ ինչպե՞ս մտուր չի լինի:
Օղբն հոգուն լինչ նըման,
Հուրն ու ջուրն են թիստ տանելի:
Ի հակառակէ ստեղծած,
Եւ եղած ես մարդ կենդանի,
Վերնայ ողն ու հաւրն աւ ջուրն,
Եւ մարմինըդ դառնայ փոշի:

Այսպես ուրեմն, մարդուս մարմինն ունի հինգ զգայարաններ, որոնց
դռները բաց է թողած և կարելի չէ փակել և կտրվել աշխարհից. մարդս
ուզի չուզի բավարարություն պիտի տա մարմնին, որը կարելի չէ մեռցնել
հոգին փրկելու համար: Այսպիսի աշխարհայեցությամբ վերջ է տրվում հին
կրոնական քնարերգությանը, որ միստիկական բնավորություն ունի և
առաջնայում էր անվերջ ողբասուցությամբ ու մարմինը մեռցնելու ճի-
գերով: Եվ եթե այժմ էլ բանաստեղծը դեռ քաղցում է մեղքը լավ ու
սգալ: այդ ինքն անկարող է անել, դա մի երաճիկի վիճակ է, որ իրենից
շատ հեռու է: Ուստի նա անմիջապես շարունակում է.

Երենկ ես նորա ասեմ,
Որ զաշխարհս ի սուգ կ'ազդենայ:
Զիւր մեղքն ի յիշումն ածէ,
Զօրն ի բուն նըստի նա ու լայ:
Արատուքն սապոն լինի,
Սեռթիւնն ըսպիտականայ:
Թէ չէ՛ որ հարսնիցըն դայ,
Նա հանգերձ հարսին չուենենայ:

Եվ նույնիսկ այս լսցն էլ, որ երանելի մարդիկն արել են և անում
են, ըստ մեր իմաստաբանի՝ ոչ մի օգուտ չունի և ավելորդ է: Ահա թե նա
ինչպես է. արատաշատ և այդ միտքը հեռեցալ տողերի մեջ.

Մէկ մարդ մի ճուհար ունէր
 'ի ի խելաց շահել չը կարաց.
 Զինչ խելքն ի վերայ եկաւ,
 Նա զընաց ճուհարն ի ձեռաց,
 Գընաց նա ի վայր նըստաւ
 Ողորմիկ ու շտա մի իւաց.
 Նորա լացն այլ թնչ չաճէ,
 Երբ զընաց ճուհարն ի ձեռաց:

Վերջապէս՝ գիտիացող մարմինը, որ իր տան դռները ըաց ունի արտաքին աշխարհի դիմաց, ամենեւին պատասխանատու չէ մեղքի համար. հոգու «ամալը» — գործը, արարքն է այդ, և նա թող պատասխան առ.

Հողին հողվըրտողն անցաւ
 Ու զմարմինն ի հողն անխօսեց,
 Թէ՛ զգնեղքն ես ու դժւարաց,
 Յանդէնն քի երեսն ամալեցն:
 Մարմինն ի հողուն ի գուրս
 Այս խօսք՝ զհողին վճարեց,
 Թ՛ «Ես հող էի՝ և ի հող դարձայ,
 Քի ամալն է՝ ըզքեղ ըընեցն:

Այսպէս՝ մարմինն ստանում է իր իրավունքը: Մտանից հետո մի քայլ էր միայն մնում, որ բանաստեղծը մարմնի գովքն աներ, և մեր բանաստեղծությունը թողնելով իր մոայլ բնավորությունը՝ դառնար լուսաշող ու զվարթ: Բայց Պլուդից չեն մնում այսպիսի տաղեր: Առանց որեէ հիմքի նրան վերագրել են մի սիրը երգ, որի մասին կխոսվի հետո:

Թ. Ուրիշ իմաստալիտն տալիս:—Հովհաննէս Պլուդի անունով երեսն են եկել և ուրիշ տաղեր, որոնք մասամբ գեո մնում են ձեռագիրների մեջ և չեն հավաքված ի մի: Այս ասքերն ունեն ընդհանուր խրատական բովանդակութիւն և մասամբ ժողովրդական առանձների և իմաստութի ասացվածքների բանաստեղծական զարգացումն են իբրեւ փայտիկներ: Բերենք հետեւվայիները:¹

Աւագ, մեղ հայիլ պիտի
 Թայն արեն որ լոյս կու ծագէ.
 Շատ կայ ի յարև նըման,
 Ի պընչէն օձըն կու վազէ:
 Գիտուն մարդն յարև նըման,
 Խօսքըն լուս պայծառ կու ծագէ.
 'Ի անդէ՛ա մարդն օձուն նըման,
 Հանապաղ ըզմարդ կու խոցէ:
 Մարդ կա որ հազար արծէ,
 Հազար կա որ մէկ մի չարծէ:

¹ Տպված են՝ Վ. Փափուգյանի «Պատմ. հայոց գրականութեան» աշխատութեան վերջից գրված «Նմանչեքի» մէջ, էջ 82 և հետ:

Ան մարդն որ հազար արժէ,
Անգէտին մօտ փոռ մի շարժէ:

Վերջին քառյակի առաջին երկու տողը հայանի ժողովրդական առած է:

Բազան ի անտառ մորին,
Թէպէտ ըհւ, Թէպէտ բազա է.
Ճոհարն ի ծովուն միջին,
Թէպէտ քար, Թէպէտ ճոհար է.
Խելօքն ի յանգէտն ի մօտ.
Միտք արա, Թէ ինչ նըման է.
Ճըրագն ի յաօյն կուրին՝
Կու վառի, 'ւ ինքըն չի գիտէ:
Խելօքն է ի ծով նըման,
Որ քանի չափես՝ կու տանի.
Անգէտն է ի տիկ նըման,
Փառչ էւել լընուս՝ նա պատափ:

Առնենք և հետեւյալները վերեւում հիշված ձեռագրերից.

Ձորս բուն առ խորաս յինէն,
Որ դամէն աշխարհս քեզ արժէ.
Ձայլոց մեղք դու մի քըններ.
Ձգոյդ յերակ մըտօքդ անտիճէ:
Ձօսատուած մօտ ի քեզ դու ածա.
Եւ զմահուդ օրըն դու յիշէ:
Ձիւրբատա ի սիրտդ արնկէ,
Ձքեզ յամէն չարեաց այս փըրկէ:
Լաւ մարդ ես նորա տսեմ,
Որ բանայ զըրբանրն համով.
Հանցեղ լեզուն գին չունի,
Ձինչ լընուս տուն մի ճոհարով:
Լեզուն է գործիք բանի,
Արդարոց քան զհալած ոսկի.
Ձմարդոյն է մէկ փերթ ստեղծեր.
Եւ օձուն է երկու ճըղի:
Այն մարդն որ երկու խօսի,
Ձմէկըն քաղցր և զմէկըն լիզի,
Եղբայր է օձին եղբւր.
Եւ զնորա անէծքս ընդունի:

Այսպեալ և մի շարք ուրիշ իմաստակեան ասքեր, որոնք կան Պլուզի անուանով,¹ Կան ասքեր ևս, որոնք որոշ ձեռագիրներէ միջ Պլուզի անուանով

¹ Այս ասքերի մի մասը աղագրած են «Պահանքագր», 1731, էջ ԲԵԳ, ԵԹԱՆՔ
դիւանից և զգաւարց առաջնաւ տաշնաց Վերնագրով:

են, ուրիշներէ մեջ՝ առնուն, կամ երբեմն մի անգ՝ Պլուզի, մի ուրիշ անգ նույնը՝ Զրէկի անունով։¹

ԿՈՍՏԱՆԴԻՆԵ ԵՐԶՆԿԱՆՈՒ

1. Կեթսագրեցաւ։—Հովհաննէս Երզնկացուն ժամանակակից է մեր այս անվանի բանաստեղծը, որ նույնպէս, ինչպէս Հովհաննէսը, արաբագրություն է Երզնկայի և իր շրջակայքի կուլտուրական կյանքի, որ տեսնուց վերնում, Նրա կենսագրության մասին, ցավոք, զբեթե բան չգիտենք, Բայց նա բախտավոր է եղել այնու, որ նրա քերթվածները, թվով ցսաներկու, մեզ հասել են 1336 թ. Թավրիզում կառարված մի արաբագրությամբ. դրանց վրա ավելացած են ուրիշ երկուսը մի տաղբանից (ի՞նչ է ինչ քերթվածները)։² Արաբագրությունն ունի հետևյալ հիշատակարանը. «Բայց զրեցաւ սայ ի Թավրէժ ի Դաւադալի Սնշայրանս... ձեռամբ մեղադարտ և դատադատեալ ոգոյ՝ նուստտ զրչի Ամիրիս՝ ժակնուն փոխն Դաւայմաշ՝ ի Յուսսփայ որդուս՝ Միթոռի թոռն՝ ի վայելումն անձին իւրոյ... ի թվիս 222 լ [—1336] ի նստաւարթի զրէցաւ այս զիրս, ամէն։ Կոստանդնի բանքերից մեկն՝ ունի այս վերնագիրս. «Բան Կոստանդնիայ առ մեր հոգևոր եղբայրն Ամիր, հոգով ի հոգի և սրտէ ի սիրտ։ զա սկսվում է այս սոսիւրով.

Գորն Ամիր, մեր պարեանաց եղբայր և սիրելի.

Զայս սակաւ բանքս ի կարգի որ վասն ձեռ շարադրեցի,

Աղէկ մտիկ զիր ու ճանչէ՛, ուժով է բանքս և պիտանի.

Բայց յանգէտ մարդիքն ի սոտ է անպիտան, դառն և լեղի։

Բովանդակությամբ ամբողջապէս կազմված է իմաստական ասքերից, որ բանաստեղծն ուղղում է իր մտերիմ բարեկամին, Ինթադուս են, թե այս պարուն Ամիրըն նույն Ամիր Փոլինն է, որ Թավրիզում իր համար արաբգրել է Կոստանդնի քերթվածները։ Թե պարուն Ամիրն քնչ պարագաներով մեր բանաստեղծի սրտակից «սիրելիին» է եղել, այդ հարկն չէ՛ Հավանորեն նա Կոստանդնի հետ միասին մանկության ժամանակ ուսել է մի վանքում, քանի որ բանաստեղծն անվանում է նրան հոգևոր եղբայր։ Բայց մինչ Կոստանդինը դարձել է վանական, նրա ընկերը Ռաքել է աշխարհական։ Կարծում են, թե Կոստանդինը կենդանի եղած պիտի լինի դեռ 1336 թ., երբ Ամիր Փոլինն արաբգրել է նրա բանաստեղծութունները. բայց այդ կարծիքը հիմնավորված չէ։ Միայն այն ստույգ է, որ Կոստանդնի ցսաներկու քերթվածները հորինված են հիշված 1336 թվա-

¹ Տես՝ Նուսրէտ Քուչուկի Դիվանը, Փարիզ, 1904, էջ 81 և հետ. «Յարաակաւ և ալլաբանդէն երգերս, որոնց տղված են Սուս Քուչուկի անունով, և էջ 123—129, «Մանթադրություններս, որոնց մեջ նույն անունն առգրեց ինք հիշված կան Պլուզի անունով, վեցը՝ Զրէկի անունով, իսկ երկուսը՝ և՛ անանու, և՛ Պլուզի, և՛ Զրէկի անունով»։

² Կոստանդին Երզնկացի և յուր քերթվածները, ուսումնասիրությամբ հրատարակեց Հ. Մ. Գասալբյան, Վենետիկ, 1905։ Այս հրատարակության մեջ ենթադրեալք վերագրված են Կոստանդինին նաև ի՞նչ և ի՞նչ քերթվածները։

³ Անդ, ԻԱ, էջ 103։

կանից ստալ, Ապո Նրա բանքերից մեկի մեջ՝ մի ցուցմանց կա հեղինակի
աղբւած ժամանակի համար. խոսելով կյանքի ունայնության և մահւան
մասին՝ նա գրում է.

Թէ լինի հոգ փառիշտն զերդ Ղազան,
Ձեռայ՝ քանի է ինք սրտով զերդ գազան:

Այս առիւթի մեջ Ղազան գունը (1295—1304 թ.) հիշում է ախպէրի
ձեռով, որ նա մեռած պիտի լինէր այդ զրելիս: Կնշանակի՝ Կոստանդինն իր
այդ բանքը հարինել է 1304 թվականին կամ հետո, հետեւորար նա աղբիւ
է 13-րդ և 14-րդ դարերի մեջիցը: Որ մեր բանասանգան իր մի քերթվածի
մեջ անվանում է իրեն Կոստանդին Երզնկացի, այդ ցույց է տալիս, որ
նա ծննդով Երզնկայից է եղել, կամ թե մանուկ հասակից ոնովել, ուսել,
կրօնավորել ու զործել է Երզնկայի վանքերում: Ինչպես նրա բանասանգ-
նաւթյաններից իմացվում է, նա վաղ հասակից արդեն ցույց է ավել զբոսկան
չնորձ, Վանականները կեղծ բարեպաշտությամբ տան, նաւյնիսկ հալածել
են մեր քերթողին այն պատճառով, որ նա այնպիսի երգերի մտաբերով
կրօնական բանքեր է հորինել: Այլևս ուրիշ բան չդիտենք Կոստանդինի
կյանքից, բացի նրա բանասանգանթյաններից, որոնց մեջ տեսնում ենք
նրա խոհերն ու զգացումները:

2. Կրօնական և խրատական բանք. — Կոստանդինն իր բանասանգան-
կան այնպիսիներն սկսել է, անշուշտ, իր նախորդների հետեւելով, կրօ-
նական քերթվածներով: Նրա առաջին (Ա.) երկն, ըստ Ամիր Փռլինի ժաղա-
վածաւի, է մի կրօնական զրգանք, իսկապես Ա. Գրքի պատմության բա-
ղանդակությանը ստանալորով: Գո մի համոզում, բայց ճշգրտագործ պատ-
մելած է՝ հետևողությամբ Դրիզոր Մագիստրոսի և Ներսես Շնորհալուս
Իսկ երկրորդ (Բ.) քերթվածը կրօնական իմաստով խրատական բանքն է,
որ հաղաներեն նրա այս տեսակի զրգանքներից առաջինն է ժամանակով:
Դրա առաջին տունն այս է.

Ահա սկիզբն առնում բանից
և խորատ ասմ հասարակաց.
Իմաստութիւն անդ ցուցանէ՝
յով որ հոգայ աչք կայ ի բաց:
Ձինչ մարգարիտ շաքուղ յսկի՝
հանց զհեղեղի բանն ի մբառաց:
Բայց անդիւնն այլնչ թուի
զինչ մարգարիտն ի մէջ խոզաց:

Ամբողջը մի զովք է ոչ թէ աշխարհիսն կամ շերկրավոր իմաստա-
թյանն, այլ շերկնաւոր իմաստությանն կամ առաւմտային գիտությանն,
որի հիմքն է սերը:

Ով տէր չունի իր հասարակ,
որ գիտութեան հիմք է գրքան,

Նալ զգիտութիւնն տատաւածային
հըպարա հոգով իսկի չգիտաց-
Հանց տես թէ հիմն ի վերայ ջրոց
կայ անհաստատ իրք մի շինած:

Կոստանդինն երկրորդ քանքըն հորինել է ըստ երևույթին այն ժա-
մանակ, երբ իր կրօնական ուխտն է առել. նա քարոզում է չսիրել այս
աշխարհս, անցավոր բաների հետեից չգնալ, և վերջը խնդրում է աստու-
ծուց, որ իրեն բաշխե երկնավոր պարգևը:

Տէ՛րբո՞ւ վերին, ի քէն խնդրեմ,
զըթոյ ի յիս, հայր ողորմած,
նա բաշխէ՝ անաբժանիս
քո երկնային մեծ պարգևաց.
Որ արբիմ շնորհօք Հոգոյն,
կենամ անբողի երկնաւորաց.
Եւ թողում դայս անցաւորս
ես Կոստանդինս յինէն՝ ի բաց:

Այս երկու քերթովաներն էլ սովորական են իրենց բովանդակու-
թյամբ, բայց գեղեցիկ են իրենց պարզությամբ ու կենդանությամբ: Կան
ուղիեր ու տներ, որ հիշեցնում են բանաստեղծի մյուս երկերը. ինչպես,
օրինակ, երկնքի ստեղծագործության պատկերը.

Կամարակառ խորտնն երկնից
առանց սիւնի հաստաւեցուն,
Գեղեցկութիւնք վայելչապէս
գործմանալի յօրինեցան.
Մաղկեալ երկինքն աստեղիտօք՝
լուսաւորօք պարզարեցան,
ի զիշերոյ գարդ աստեղացն
և ի առնջեան արեգակն:

Ա. էջ 84

Գեղեցիկ աներից է, օրինակ, և հետեյալը.

Լըսէ՛ զեղ բան խիստ գեղեցիկ,
ծաղիկ քաղած է ի բողմաց,
Անմահութեան ողբողն է ոռոյ,
որ է յերկնից յաշխարհս իջած.
Թէ զնորոյ ճաշակն ասնուս,
կամ սէր ունիս՝ և ես ծարաւած,
Այլ չհաւանիս անցաւորիս,
թողուս դամէն աշխարհս ի բաց:

Բ. էջ 78

Արատագրո՞ւ իր անունն էլ ավելացնելով՝ այս առջը դարձրել է՝ Ես Կոստանդինս
և զԱմրառ որ քրիցի ի սեռէ ի բաց: Արատագրո՞ւ ավելացրածը դուքս Էգիւսց հետո՝ Եթ
մենէն ճառն էլ, որ թաղել է հրատառակէյը: Ընտկանաբար դարձնում եմ Եթնէնս:

Այս երկրորդ բանաբառն ինչ արդեն հոստանդինը ցույց է տալիս իր հակումն և ընդունակությունը հորինելու կարճ ու կտրուկ իմաստովեաց ասելիք, որոնք կարող են իրեն ասածները գործածել, ինչպես հետևյալ առևելք, որ կազմված է չորս այդպիսի խոսքերից.

Դանի հասնիս ի մեծութիւն՝
Խոնարհ կացիր մարդկան ու ցած:՝
Որչափ լինիս դու իմաստուն՝
շատ մի խօսիլ մէջ անգիտաց:
Աղքատին մի բարկանալ,
որ չըզատէ զքեզ աստուած:
Դո ընգերին հոր մի փորել,
Թէ չէ՝ այն քեզ կայ պատրաստած:

Բ. էջ 75

Ուրիշ գրվածքների մեջ էլ նա կերտում է իմաստական ասելիք, որ մենք կռնանք իրենց տեղում. բայց մեր բանաստեղծի առաջին գրական մեծ արժանիքը զբանց մեջ չէ, այլ այլաբանորեն հորինված կերտական երկերի մեջ:

3. Արեգակի, գործուն և լուսու բովելիք:—Սրանց մեջ տեղեն տեսնում ենք կյանքի ու բնության սիրահար շնորհալի բանաստեղծին, որ հետևող չէ ուսուցական քերթությանը, նա յուրացրել է Գրիգոր Նարեկացու այն տաղասացությունը, որ հոգևոր իմաստով, անմեղական շնչտեղով երգում է ուրախ, լուսավառ բնությունը: Կոստանդին այս կարգի քերթվածները շատ ավելի մաքուր ու ջինջ են, ուստի և ավելի զեղեցիկ են, քան իր վարպետ Գրիգոր Նարեկացու Մենդյան ու Վարդավառի տաղերն իրենց միջնությամբ և բառախաղերով: Արգարե, այլաբանությունը զեռ մեկ-մեկ աղղում է մտքի պայծառության վրա, բայց կոստանդին արվեստն ավելի զարգացած է, բանաստեղծն ընդհանրապես խուսափում է այլաբանական անհատականությունից: Նա կամ բավականապես է վերնադրի մեջ միայն հիշելով, թե իր բանքը հոգևոր է, կամ իր երկի անկախ մեկնությունն է անում՝ գնելով այն իր գրվածքի վերջում, երբեմն էլ մեկնությունը գնում է իրեն ասանձին քերթված, այնպես որ բուն բանքը մնում է իրեն մի մաքուր օրններգություն բնույթով. կամ թե այնպես է հորինում, որ կարելի է և՛ հոգևոր, և՛ մարմնավոր նշանակություն բաժանալ այն: Նա բնությունից առնում է ընդհանրապես մեղմ ու քնքուշ տեսարանները, արեգակի ծագումը՝ լուսավոր ու գունավոր, գարնանային կյանքով ու բուր-մուսքով լցված: Այս տեսակի երկերի մեջ է ևս առանձինք ավելի փայլում Կոստանդինի բանաստեղծական տաղանդը: Որովհետև նա կյանքի և բնու-թյան էությունը գտնում է լույսի ու սիրու մեջ, ուստի նրա երգերի մեջ լույսն ու սերը դարձել են մի անտակ պայտավունքի առարկա. նա ներդո-ղում է արեգակի ծագում, գարնան գալուստ, լույս ու սեր, հորինելով մեկը մյուսից զեղեցիկ քերթվածներ (Գ, Ե, Զ, ԺԱ, ԺԵ, ԺԶ), Հետևենք նրա այս երկերին այն կարգով, որով գրված են Ամիր Փոլինի ժողովա-ծուրի մեջ

4. Եթարուն։--Երբորդ քերթվածի զերնագիրն է՝ Վյա գարունս զգա-
լաւան Գրիստաթի պատմէ առակօքն։ Այլաբանական լինելը շատ պարզ է և
ինքը բանաստեղծն իր հրկի հրկրորդ մասի (վերջին չորս տները) սկզբում
գործյալ այսպեւ է հայտնում այդ մասին.

Ըզակաւ բանքս որ զըրեցի
վառն գարնան հղանակաց,
Եւ յինցի որինակաւ
ըզյարութիւն դատաստանաց...

Կնչանակի՝ գարնան նկարագիրը նա տեսւմ է իբրև օրինակ Գրիստաթի,
ինչպեւ տեսւմ են, Վերկրորդ զալստեան, և իր մեռելները հարաւթյուն
պիտի առնեն և դատաստան լինի ըստ քրիստոնեական հովաքի։ Այս հրկի
մեջ գեւ գարզացած չէ հաստանդնի արվեստը։ Պանի որ գատաստանի ժա-
մանակ արգարները պիտի ցնծան, իսկ մեղավորները պիտի լան, ուստի
բանաստեղծը գարնան նկարագիրն տեսւմ է նկատի ունենալով և՛ սընց,
և՛ նընց։ Ռայց երբեք մեղավորների մասին խոսելիս հետնում է գոր-
նան պատկերից և հետևում հանրածանոթ կրօնական պատկերացումներին,
որ կառ չաւնին գարնան հետ. ինչպեւ, օրինակ, քերթվածի առաջին տան
ներքևում ընդգծված առգերի մեջ.

Գարունն լինի ուրախութիւն
և ցընծութիւն երկրածնաց.
Կիտոց մի գոյ մեծ հարսանիք,
կեոք մի յերկաթ, ի քամի 'լ ի լաց,
Ոմանք ծաղկին զերդ բուրստանք.
Գոյն ըզգոյնով ցեղք ի ցեղաց.
Ոմանք զգնում մեծ տըրտութիւն
և շարշարիմ ըզնեւ դիտց։

Մյուս տներն մեջ երկակողմանի նկարագիրներն աւելած են պար-
տեկի և տրտաւ բուրստանի գարնանային աշխատանքից և բուսականա-
թյունից. այստեղ էլ, սակայն, մեղավորների համար բերված չորս ու տն-
պիտան, ըով պատու չովոգ ծառերը, փռչն ու հրով տյրելը, որ կրկնված
են ատրեք տներն մեջ, ինքնուրույն գյուտեր չեն, բայց հարմարվում են
գարնան եղանակին, ինչպեւ հետևյալներն մեջ.

Մուքըն ծաղիկն ի վեր փըչեն,
Թէ կան գալար ու չեն մըտած.
Ով որ քնդրի չոք 'լ ամպիլտամ,
Ոտեյ կըրոյն իմ պատրաստած.
Բուրստանքըն գարգարին,
Վարդըն փըռէ տերև շարած,
Վառն այնոր ինք թողաւար,
որ համբերէ ի մէջ փըչաց։

Կամ հետևյալ տներն մեջ.

Ահա եղև յորդար գարուն,

Եւ յամենայն ժամ իմ յայտնած.
 Ու զի նշ Ժամակ զորեք ու սերմանք,
 զիբենք ցուցին յամեն ցեղաց:
 Անա բարի սերմանաւանքն
 Եւնձեացեն զպատգ բարեաց.
 Իսկ սերմանալքն յարուրեամ
 Ժողովեցեն փուշ խոստումաց:
 Մաս մի ծագեալ զհեղեղեաց-
 Եւ ի պարգով կայ զորդութեան.
 Աւ փին մի չար և ամպիրամ,
 յիմք մեծաքեր փուշ կայ բուսած.
 Վասն այնքիկ տարբն երեղեն
 Ի մի ծառայ կայ պատրաստած,
 Որ ոչ բերե պարտաւ թաքի,
 Նայ հասանէ հասարակաց:

Բանաստեղծն այս քերթովածի մեջ գեալ շատ անվտանգ է շարժուած
 էր հորինման ժամանակ: Կարծես նա իբրեւ ժողովին փորձն է անում այսպի-
 սի մի երկ ստեղծելու, ուստի չի խիղճուում շատ հետաքննել ընդունված
 հին ձևերից, և այնպես է հորինում, որ այլաբանութիւնը թափանցիկ լինի
 և անգիտներն էլ հասկանան բուն կրօնական իմաստը, նրանք որ

Զմարմինքն են զարգարել
 զհեղեղեացէս ու խիստ պայծառ,
 Աւ չեն ի հասկանալ,
 մեռաց ճանչել բամ Ժամեղարար:

Դ. էջ 83

Բայց հայեւով քերթողի անհամարձակութիւնը՝ արդեն երեւում է նրա
 ընտիր ճաշակը և մասնութիւնը յաւրանառուի գեղեցիկ ձևերով, ասան-
 նապես զարնան հրավալից նկարագրի մէջ: Ինչ որ վերաբերում է արգար-
 ներին: Այսպէս պատկերները ոչ թե հարաւարթիւն են Ավետարանի, այլ
 ինքնաբերական գլխաւեր են և շատ թարմ ու զվարթ են, ինչպէս, օրինակ,

Ոմանք ծագելին զերգ բուրաճանք
 զայն ըզգոյնով ցեղք ի ցեղաց:
 Մասքն ծագելն ի վեր փռչին,
 Թէ կան դալար և չեն մըսան:
 Վարդըն փռուէ տերեւ շարած:

5. Վերջ յերկու զեմս:—Մեր հին բանաստեղծութիւնը զոհարներէջ
 մեկն է նրա առաջնայն օրհներգութիւնը (Ն. քերթոված, էջ 85—88),
 որի վերնագիրն է. Վերջ յերկու զեմս մասց տեղութիւնք ի հողի և ի
 մարմին: զոր առակօք խոսի այսպէս: Վերջ յերկու զեմս զորմոված ցույց է
 տալիս, որ այդ բանաստեղծութիւնը հորինված է այլաբանական նմանու-
 թյամբ, բայց այլաբանութիւնն այլևս պարզ չէ և, ինչպէս հեղինակը հայա-

նուս է, բանքը կարող է և թի մարմինն հասկացվել Պրիստոնյա հավա-
տացւոյի վսեմ ներշնչումով ստեղծված լուսաբացի մի նկարագիր է դա,
որի մեջ պատկերներն, ավելի ու ավելի հրապուրիչ, հաջորդում են մի-
մյանց, Մենք բանաստեղծի հետ առնուս ենք ընդթյան զարթոնքը, լու-
սազարդ շքեղութունն և կենդանութունն ու շարժումը, միաժամանակ և
նրա հետ դիմում ենք նրա սերն առ առավոտյան լույսը և նրա խորագոց
սրտի սքանչելիքները, որով նա գիտում է նախ կենդանիության արթուն-ան-
քուն լուսատուները և ազա բնության մյուս գեղերը:

Զարթիք ի յերազուտ,
բացէ՛ք զայերտ՝ ավ կայք ի քուն.
Տեսէ՛ք մէջ գիշերիս շանջ,
որ պահ մի յնն լի է քուն,
Անգագար ի շուրջ զալով
կան հրամանաւ մի առուծուն,
Որ բանիւ գերկինք ի վեր
կամար կապիւ ձրեա քամուն:

Բանաստեղծը զարթնում է քնից, վեր կենում. երբ երկար գիշերն
անցնում է, տեսնում է՝ լուսինը պայծառ և բազմաթիվ սաղներն՝ թի յիր
սպասուն՝ զարգարում են երկինքը, Երևում են առավոտվա նշանները,
ծագում է պայծառ լուս-աստղը Արուսյակի¹ (— Արեգակի) առաջից.

Մի առաջ ելաւ պայծառ
առջև Արուսեակին լուսոյն.
Ունէր լոյս գեղեցիկ
քան գասեղանցն — յի գերագոյն.
Ետեա ըզնա լուսին,
և հրաման տայ առեղնայն.
Հաւատար ի մայր մտան,
նուազեցան յիրենց լուսայն:

Եվ ահա գուրս է գալիս ինքն արեգակը.
Ջերեսս երկնից հրաց,
երբոր ծագեց լոյսն արևուն.
Տղայ երեւցաւ,
թողցը կոչի իրենն անուն.
Հոգի հաւասար երես շասոց
պայծառ լոյս աչերուն,
Ով սիրով մընաց լուսոյն.
Արուսեակին առաւօտուն:

Մանուկ Արեգակի ծնունդը, բնության մեծածանչ խորհուրդն և երե-
վույթը, հոգի և կենդանութուն է բերում, ամեն կյանքի ազրյուրն է:

¹ Պրիստոնեական կրեակնայ լեզվի մեջ «Արուսեակ» է կոչվում հաճախ արեգակը,
որ և իբրեւ սկիզբն նշանակում է Պրիստոն:

Ամեն բարիք պարգևւում է մարդուս Արեգակի ծագելիս: Առաջնայան լուս-
սարացին է, որ աստված, սիրով լցված, ջաղջը է նստում արտաթններին.
և վերջապես լուսածագի ժամին է բուրումն անմահության ոնուշ. հոտը, որ
հարբեցնում է հոգիները, և մահը հավիտենական կյանքի փոխում: Բանա-
ստեղծը այնպես հափշտակված է առավոտով, որ տենչում է, որ կյանք, խըն-
դաթյուն, սեր լինի իր համար առավոտյան, նույնիսկ իր մահը:

6. «ԲԵՄԻՖ յսղագո Արեգակն արդարութեամբ:—Պակաս գեղեցիկ չէ և
այս քանքը (2, էջ 88—90), որի վերնագրի մեջ հեղինակը դարձյալ գրում
է. «զոր առկօջ խօսիչ, և թե այլաբանությունը վերաբերում է Բրիտո-
սին, «որ և ծագեաց ի հօրէ միածին որդին»: Այստեղ էլ նկարագրված է
դարնան արեգակի ծագումն ու նրա սքանչելի ազդեցությունը բնության
այլ և այլ կողմերի վրա: Առաջին տեղում մեր բանաստեղծության մեջ խան-
դավառ ոգով, արագութեմից՝ լալացեով ու թափով փառաբանվում է արեգակը
կարծես մի արևապաշտից. լույս ու ջերմություն, խավարի հերքում, ձմեռ-
նային սառնամանիքի վերացում և աշխարհի ցնծություն:

Ահն գիշերս էանց,
նըշան եղև առաւօտուն.
Աստղըն պայծառ ծագեց,
աւետաւար երեկ լուսոյն.
Խաւարըն հերքեցաւ
ու ցընծացաւ աշխարհս ամէն.
Երեւել հտուն միմեանց,
որ արժանի եղեն լուսոյն:

Ձինչ որ ի բանդ կային
և ի խաւար ի խոր զընդան,
նայ լոյս ծագեց նոցայ
յարեգականն ի մեծ լուսոյն.¹
Երկիրս էր սառն ու սդող,
ու ցուրտ ձըմեռն ու հողմային,
Ահա եղև դարուն
յարեգակունն ի մեծ լուսոյն:

Սկսվում է բնության մեջ կենսաբեր շարժումը—ծել ու ծագել, ջրերի
խաղացում և ընդհանուր կենդանացում:

Երկիր կենդանացաւ,
ու լեռն ու դաշտ կանաչ բուսան.
Ծաղիկ բերին ծառերն
յարեգականն ի մեծ լուսոյն.
Ծաղկունքն գարգարին
ազգի ազգի գոյն ըզգոյնով:

¹ Հմմտ. «Ժողովուրդը որ նստել է խաւարի՝ ետև լոյս մեծ, և սրաց նստելին լոյս-
խաղկն և ի աստեղս մեծաւ՝ յայտնեցան նոցա: Ամենայն ժամ Մատթ. 7, 16:

Փրօթի վարդըն՝ կարմիր
 յարեգակն ի մեծ լուսոյն:
 Ակունքըս յարգարին
 աւ ցընծալով յառաջ խողան,
 Գեւերս սյուր կողին
 յարեգակն ի մեծ լուսոյն:
 Զինչ որ կայ արարած,
 աւ տնկողի մեռած կային,
 Ահա կենդանացան
 յարեգակն ի մեծ լուսոյն:

Բանքի այս առաջին մասն այնպես է հորինված, որ կարծես թե դրա հեղինակը մեր ժամանակի մի բանաստեղծ լինի, որ հիացած է արեգակի հրաշակերտ զարուբյամբ և երգում է այն առանց որևէ անտեղիկ մտքի: Բայց դա Պրիստոսի մենդյան մի գովք է այլաբանությամբ:

7. Խորհրդավոր Բամբուրյոմ օրինակներ:—Ինչից է բխում Կոստան-դընի այս հիացական խորհուրդաւե աստվածայն լույսի մեջ և բնության այսպիսի վեհ ըմբռնումը: Որ ունի նա, կամ այն, որ յայտն աւ սերը նրա համար մի տեսակ պայտամանքի առարկա են:—Անշուշտ այդ ծագում է ամենից առաջ բնության լուսազեղ տեսարանի ազդողություններից: Բայց այդ չէ միայն: Նա ներշնչված է նաև քրիստոնեական սիմբոլիզմից, որով Պրիստոս կոչվում է «լույս», «արեգակն-արքայ», «արդարության արեգակն»: Արա լույսն՝ «իմանալի լույս», և Պրիստոսի «մնանդն ի հօրէն» (ըստ դավանության) ասվում է նաև «ծագումն ի լուսոյ», Պրիստոս՝ «լույս ի լուսոյ», Այսպես երգվում է «Արեգակոյն և Պրիստոսի Մենդեան յարեգակներէ մեջ»:

Լսյո, ի լուսոյ ծագումն, արեգակն արդար...
 Ի ծագել լուսոյ աստուածու
 Մտգեա ի հոգիս մեր զլսյո քս իմանալի:

Կոստանդինն, ինչպես և իր «հեղեար հղբայրները», շատ անգամ երգել են Պրիստոսի համար նաև.

Ի հօրէ ծագեցար
 Լուսաւորն զարարածս,
 Արդարութեան արեգակն...
 Լսյո ի լուսոյ ծագելու ի հօրէ
 Նա լուսաւորեաց քղախեղբս,
 Մեռելոյ յանձնասւեր լուսոյն...
 Լսյո ի լուսոյ զմեզ լուսաւորեա...
 Լսյո ի լուսոյ ի հօրէ աստեղեցար...¹

Այս խորհրդանշանները, որ միջոցները, ինչպես որդին տեսել ենք, կկեզեցու մեջ մտել էին արեգակն աստված Միկրի (Միթրա) կրօնի ազդե-

¹ Երգեր, էջմուշի, 1881, էջ 587, 88, 37, 418, 80.

ցությամբ: Արդ՝ Գոստանդին Երզնկացին սույն հին նյութն է երգում, նույն լույսն ասածքը, կամ ասածքին լույսը և արդարութեան արեգակն ու նրա՝ ծագումը. բայց մինչ հոգևոր երգերի մեջ, որպեսզի ֆիզիկական լույսն և ֆիզիկական արեգակը չհասկացվին, ավելացնում էին Երմանակին և արդարեւ կամ արդարութիւն՝ բռները, Գոստանդինը մի փոփոխութեան է անում. նա այս որոշիչները դուրս է մղում և տնոում միայն-լույսն և արեգակն. նրա երգն, ուրեմն, ախպես և հորինվում, որ թվում է թէ նա փառաբանում է իսկական ֆիզիկական արեգակն և նկարագրում է լուկ առաջնայան լույսի ծագումն իր շարժումներով և ազդեցութեաններով, բայց իրապես այդպես չէ: Ֆիզիկական լույսից և արեգակից ստացած ներշնչման հետ իշխում է և հավատացյալ քրիստոնյայի զգացմունքն առ արդարութեան արեգակն և սրա ծնունդը, այնպես որ նա երգում է միաժամանակ և՛ նյութական, և՛ իմաստի լույսերը, և՛ ֆիզիկական արեգակը, և՛ արդարութեան արեգակը կամ, ինչպես ինքը հեղինակը նկատ բնորոշում է, նա ստեղծում է Երման ցերկու դէմս մտաց տեսութիւնը ի հոգին և ի մարմինն: Այլ մաս է առին նրա բանաստեղծութեանն տառնաին ուժ ու վստեմութեանը: Արդարեւ, Երման լույսն արեգակից արեգակից է գործում իր սիրտը բնութեան մեջ և երգում լույս, առավոտ, արեգակի ծագում, ուրեմն գործն, ախպես, ինչպես ինքն զգում ու հասկանում է բնութեանը, Գրա հետեւեցով և մեր բանաստեղծութեանը մեղք է բերում մի նոր անկախ գրական տեսակ—բնութեան փոփոխութեանը բնութեանը և զգացումները մի ներքին շերտով և կրօնական խորհրդավորութեամբ կամ խորհրդակցութեամբ, ինչպես ասում էին հնարը, նթն լուսն և արեգակի հին պաշտամունքը քրիստոնեական համայնքի մեջ մանկէր իրեն մի սիրտով—խորհրդանշան միայն, այժմ այդ սիրտը մեր բանաստեղծութեան մեջ դառնում է որդին ինքնուրույն երգի նյութ: Բնութեան երգն, ուրեմն, ոչ իբրև մի համարում ուրիշ մեծ երկերի, ինչպես ներսն Երման լուսն և արեգակի ողբի մեջ է, Բայց այսպես զեռ Գոստանդին քերթվածները ոչ-մեկնական մասերի մեջ:

Անգեղ մարդիկը, որոնք խելամուռ չեն կրօնական գրականութեանն ու հավատալիքներին, հնարութեամբ միայն ֆիզիկական նշանակութեամբ կհասկանան Գոստանդինի այդպիսի քերթվածները, և այդպես հասկացողներ եղել են ԹԵ Գոստանդինի և ԹԵ մեր իսկ՝ ժամանակակիցներից: Գոստանդինը, սակայն, այդպես չի մտածել, այդ երևում է ոչ միայն վերնադիրներին, այլև քերթվածների մեկնական մասերից: Ահա թէ ինչ է գրում նա վերեւում բերված արեգակնային բանքի շորորոգ տնից հետո.

Է՞ր չէք ի գործունայ
ու կամ հարցուկ լինիլ բանիս,

1 Մ. Արեգյան, հայոց հին գրականութեան պատմութեան, Ա. հատոր. Վնդանք երգ՝ համարի երկերը գրելի՝ 1266 և քաղաքակրթութեանը, պարագրաֆ 8. ԵՄԻՆԻ կրօնի ազգայնութեանը, էջ 501:

Վասն այս արեգակման
և իր պայծառ լցեալ լուսոյն.
Այս նոր ծագեց մեզ լոյս
քան զարեգակն, ու սյլ պայծառ.
Զինչ լուսաւորը կոչին՝
ձառայ կոչին այն մեծ լուսոյն:

Ինչպէս չեք դարձանում ու հարցնում, թե այս ի՞նչ արեգակ է պայծառ
լուսով (որ երգում է ինքը), ի՞նչ նոր մեծ լուսոյ է ծագել արեգակի պես ու
նրանից էլ ավելի պայծառ, այնպես որ բոլոր լուսավորները նրա ծաւան
են,—այսպես հարցնում է բանաստեղծը և անմիջապէս պատասխանում.

Ի լուսոյն ի սկզբանէ
լի լուսով շառաւիղ ծագեց,
էոյս ի լուսոյ ծնում
յարեգակն ի մեծ լուսոյն:
Այս լոյսս ի յայն լուսոյն,
որ ինքն է տէր ամէն լուսոյն,
Ու թաղաւոր կոչի,
ւ ամենուն լոյսն ի յիր լուսոյն:

Բանաստեղծն այստեղ բառախօսք չի փնտւում, այլ ընդունված բանաձևով և
շշուրով իր օրինակով խոսում է քրիստոնեական դավանանքի մասին և
բացատրում, թե իր երգած լույսը, և՛ ամեն լույս, և՛ ամենի լույսն աստված-
ծային լույսից է. (արեգակային) արեգակի մեծ լույսից, և սա էլ աստված-
ծային հայր աստուծո լույսից քի սկզբանէն ծագած մի շշուրով (ճա-
ռագաթ), ինչպես ընդունում և բացատրում էին դավանաբանութեան
մեջ. Որ բանաստեղծը լոյսն ասելով հասկանում է մտավոր, հոգևոր լույսը,
կամ քրիստոնեական կրոնի լույսը, այդ պարզ երևում է այս Զ. բանքի
վերջին հրեք տներից. ոչ քրիստոնյաները, որ չեն հավատում ճարեգական
և իր լուսոյն, —ասում է նա,—սլուծին մասըն լուսոյ յարեգականն ի մեծ
լուսոյն, իսկ ինքը Կոստանդինը փափագում է, որ լուսավորվի այս քե-
զականն ի մեծ լուսոյն, Բայց որ նա զրոււմ է, թե ամեն լույս և ամենի
լույսն աստվածային լույսից է, պետք է հասկանալ նաև ֆիզիկական արե-
գակի լույսը, քանի որ այն էլ ծագում է աստուծուց, բայց, հարկավ, ոչ
իրբն աստվածային լույսի մի մասն, իբրև նրանից ծագող մի շշուրով (ճա-
ռագաթ), այլ իբրև աստուծու ճարարած¹ լույս:

Կոստանդինի քերթվածները, առանձնապէս Եւր. ճիշտ հասկանալու հա-

¹ Դիմաժբայ տեսնել այսպէս հաշիւ ենք առնում այս խոյրի վրա, որովհետեւ անճաշ
և անճաշ կերպով հրատարակել են և սովորեցնում են. թե Կոստանդին Երզնկացիս որ
քերթվածներով իբրև հանգիստում է շշուրով (ճարարած) Այդ մտքի վրա կամ պատճառով չեն
հասկանում, կամ անամաւթյամբ ջաշմարտեցնել են ուղում մեր էին բանաստեղծներին Այդ-
պիսիներէ ասելով ճիշտի համար աստվածը զայս լույսն չունի, նա ամբիստ է, Կոստան-
դին Երզնկացիս, անգամ Դիմաժբայ նախկին շշուրով (ճարարած) են... Առանց դրան էլ մեծ է
մեր հին բանաստեղծների փառքը

մօթը՝ կանգ առնենք և հետևյալի վրա։ Լուսափայլուն, առնգական ու գորունը հեթանոսական ժամանակից ի վեր կազմած են եղել նաև մի ուրիշ հավատալիքի հետ, այն է՝ մեռելների հարուժյունը պետք է լինի գորնանի արևածագին։ Մագդեղական հարուժյունը վախճանական արշալույս է, մինչդեռ վեգայական արշալույսն ամենօրյա հարուժյուն է։ Ըստ հայ ժողովրդական հավատքի՝ արշալույսն ամեն օր կրկնվող հարուժյուն է միաժամանակ և հոգիների դատաստան, որից տարբեր է վերջին դատաստանը։ Հավատում են, թե ամեն օր արևածագին բացվում են երկնքի դռները և ինչպես հին իրանական հավատքով՝ լուսո աստվածը, որի թիռն է արեգակը, այդ դռների առաջ դատաստանի է նստում։ Իրանացիների համար առաջին դատավորն է Միթրան, առավոտյան արեգակի աստվածը, ըստ հայ ժողովրդական հավատքի՝ Քրիստոս, որ հարկավ Քրիստոնեական ժամանակում հորինակել է հեթանոսական աստվածուն։ Դատաստանից հետո արդարենք զնում են ամսահուժյան անուշակ դրախտը՝ Այս հավատալիքը մինչև մեր օրերը վեգական ժամ էր մեր ժողովրդի մեջ և արտահայտվում է նրա յուսատացի ժողովրդական աղթքների մեջ, Սրանցից հանրածանոթ է հետեվյալ հիմեր, որ անշուշտ գալիս է շատ հին ժամանակներից.

Լուսացեմի, լուսացեմի,
 Լույսն է ըսքին,
 Միսն է ծառին ...
 Երկնքի դռները բաց է.
 Ոսկի աթոռ զըրած է.
 Քրիստոս վըրան նըստած է.
 Լուսավորիչ կանգնած է,
 Ոսկե զըրիչ բըսած է.
 Մեծ ու պըստիկ զըրում են,
 Արդարները խողում են,
 Մեղավորներ լալում են:
 Լուսացեմի, լուսացեմի:

Այս հին հավատալիքն ևս իր կողմից ազդել է հոստանդին Արեգակի ու գարնան երգերի վրա։ Մեռած բնությունը վերակենդանացնող գարունը դարձել է մի խորհրդավոր օրինակ ոչ միայն Քրիստոսի ծննդյան համար, որով աշխարհն, ըստ հավատացյալների, ստացել է մի նոր հողեսը կենդանություն, — այլև Քրիստոսի բերկրող գալստյան և մեռելների հարուժյան, երբ և դատաստան պիտի լինի, Դրա համար և հոստանդինն, ինչպես տեսանք Դ. Ջերթվածի մեջ, այդ երգում է գարնան պատկերով և վերնագիրն էլ դնում է. «Այս գարունն զգալուստն Քրիստոսի պատմե առակօք»:

Նա գարնանային առավոտյան լուսաբացի պատկերով երգում է երկրի կենդանացումը Զ. Ջերթվածի մեջ, Եթե վերջինս հասկացվում է Քրիստոսի Մննդյան համար, նրա Ե. Ջերթվածի մեջ՝ բառք յերկուս դեմս, շատ

¹ Մանրամատնությանն են և աղագրից առնել: Մ. Աբեղյանի «Հայ ժողովրդական հավատքը». Dr. Manuk Abeghjan, Der armenische Volksglaube, Leipzig, 1860, էջ 18 և հա.

կտարներ հարուխանն են ակնարկում, և կարող են այսպես էլ համեցվել,
ինչպես են հետեյալները.

Հոգի հաւսար երես,
շառաց զայն իմա աչերուն,
Ով սիրով մընաց լուսոյն
Արուսակին տաւառուն:
Քաղցր է ձընունդ լուսոյն,
երանի մամ ես այն մարդոյն:
Որ բաժին ինքն ունենայ
ի յայն լուսոյն տաւառուն
Թէ դուռն կայ երկնից
զարգնաւոր մի աստուծուն,
Ի ձաղկի արեղականն
ի մեզ բացվի դուռն բարոյն:

Կամ հետեյալները.

Թէ անուշ հոտ կայ բուրի
և ի կն(=)նք փոխէ զդուռն մահուն,
Են շատոց հոգի հարած
յանուշ հոտոյն յաւառառուն,
Թէ անմահական սէր կայ
Որ հոգի մայ հոգեւորուն,
Իմ բաժին սէրն ու հոգին
խառնել ի սէրն տաւառուն:
Թէ ինձ կեանք կամ խընդութիւն
բաժին կայ ի գոռն ի Սիրուն [=աստուծոյ],
Մէկ զահու սէրն ի սրբաէ՝
Թող ինի ինձ յաւառառուն . . .

Շատ ու թափանցիկ են մանավանդ այս տողերը.

Ով կամի սիրով ինի
ինքն յարուխան որդի լուսոյն,
Թող խընդէ ի յայն Սիրոյն [=Հիսուսից],
որ ինքն յարեաւ տաւառուն,
Ի Սիրուն սէր յաւելու
սիրով զընայ տունն ի Սիրուն [=աստուծոյ],
'Ի ով Սիրոյն ինք հետեի՝
հասնի սիրոյն տաւառուն [=հարուխան տաւառոյն]:

Նվ զերջապես այս զերջին տողերը շատ զարգ կերպով ակնարկում են,
որ Կոստանդնի երդած առաքիտը խորհրդաւար վերաբերում է նաեւ հարու-
խան արեղակի ծագմանը: Այսպէս է իր համար ազդեցում մեր բանաստեղծը.

Տէ՛ր, գրթիւյ յիս ի ծառայս,
և տուր բաժին ինձ յայն հոգոյն,

Որ շատե՞րն ցանդացել,
բայց քիչ՞է հասան առաւօտուն . . .
Երեղեն՝ ի լէն, տուր ինձ
սէր ի սիրուն առաւօտուն:

Վարդ ու սոխակի այլարամեկամ սիրավեպը և սիրս գովաբանու-
թեամբ: Մեր բանաստեղծը, որ լույսի սիմբոլիզմից անցնում էր արեգակի
և լույսի երգերին, ինչպիսի վերնում բերված կատարելից կարելի է տեսնել,
լույսի հետ անհրաժեշտորեն, սեր էլ էր երգում, քանի որ քրիստոնեական
աստվածը ոչ միայն լույսն էր, այլ միանգամայն և սիրո աստված և Սէրն
էլ կոչվում էր: Նա հավատում էր, որ ինչպես աստվածային լույսից է
առնել լույսն և քանակի լույսը, նախպես և Սէրն աստվածուց է առնել
սերը: Եի Ռիբան սէր յաւելու: Աստվածային սիրուց է, որ ձագուս է արե-
գակը:

Թէ Տէրն [—աստված] ի յարարածս
հայի թաղցր ի յիր սիրուն,
Յայն պահուն է որ լինի
նըշան լուսոյն առաւօտուն:

Աստվածային լույսն, ուրեմն, աստվածու թաղցր ուժերից է, և նա թաղցր
աչքով նայում է իր սիրուց: Ահա թե ինչ հայացք ունեւ կոստանդնուլ է
սիրո, և՛ լույսի ծագման մասին: Հենց դրա համար էլ նա ինչպե՞ր երգելիս
յի մտածում և սերը: Բայց նա առանձնապես էլ երգում է սերը: Բնու-
թյան այս խոնջովաւ բանաստեղծը, որ իր ներշնչումները բնութայինից
առանալով աստվածային լույսն երգելիս առնում էր ֆիզիկական լույսն
այլաբանությամբ, չէր կարող իր կրօնական բանքերի համար չօգտվել սո-
վորական իմաստով աշխարհիկ սէրու երգերի ձևերից: Ոչ իսկպես՝ մեր
հագեցրածների հորինած բանաստեղծության մեջ առաջին անգամ,—
նրանից առաջինը ժամանակով ցորդ հայտնի չէ,—նա գիրտառում է վարդ
ու սոխակի սիրավեպը: Սիրս լուս աստված է այս այլարամեկամը:

Հայոց զրականության մեջ վարդը երևան է 7-րդ և 10-րդ դարում
որպէս բայց վարդ ու սոխակի այլարանության շնորհանուր գրականու-
թյան մեջ: Որքան կայանի է նախ երգել են պարսկ բանաստեղծները:
Մեր բանաստեղծների համար նշան շնորհանելի է եղել այս այլարանու-
թյանը, քանի որ վարդը մեզնում մասը որպէս կողմն է եղել սիրու
ևն: Ենթանաական ժամանակներում արգեն այս ձագրիկ նվիրական է
եղել սիրո աստվածուհի Աստղիկին: Ուստի մեզնում ևս այս սիրավեպը
այլարանության տակից պարզ ցայանում է զգայարանական նշանակաւ
սերը:

Արևմուտքում,—առնում ենք առանձնապես Ֆրանսիան,—այս սիր-
վեպն առաջի էր ավելի վերացական և աւազական բնավորության:
Ենչորականները սիրս մասին գրելով՝ սիրո նշանքի մեջ բնականորաւ
մտցրել էին իրենց բոլոր մտաբեր ավարտթյանները: Նրանք են եղել
գլխավորապես, որ քրիստոնեական աստվածաբանության գիմնը հաստատել

էին մի իսկական սիրային թեւոյգիւ, սիրո աստուծուն տալով Հիսուս Պրիստոսի տեղը, և այդ սիրո աստուծու փափկութեան նստածայրը հորինելով եղեմական դրախտի պատկերով, ի անուն նրա օրինադրելով մի ասանաբանյա պատգիրանք և վերջապես՝ կազմելով մի ամբողջ դավանանք ու պաշտամունք, ինչպէս և սիրահարներէ մի եկեղեցի, որ ուներ իր հավատացյալներն ու հերետախնդները, իր սրբերն ու մեղավորները, Կղերականները կուրառագական (մեծարական, քաղաքավարական) սիրո վրա զործադրում են նույնպէս իրենց վերացականութեան մոլութեանն ու իրենց դիպակոտկական ձգտումը, և նրանց ազդեցութեամբ՝ սիրո արգիստները ըսնում են երգերի ու վեպերի տեղը. դրում են սիրելու արմատ, թարգմանում են Օվիդիոսի «Միրելու Արմատը»։ Վերացականութեան և դիպակոտկական բանականների սերը երկակայութեանը մասը էր առիւթ միայն այլաբանութեան կողմից, և այլաբանութեան հանգան սիրո մասին գրող ըսլոր կղերականները։ Եվ այս միջոցը միայն չթողեց, որ չոր ու ցամաք օրինադրութեան մեջ ընկնեն և շատ ու քիչ գունավորեն վերացականութեանը։¹ Այսպիսի բնավորութեան ունի նաև Ֆրանսիական նշանավոր սիրավեպը՝ «Վարդի առմանը» (Le roman de la Rose), որի առաջին մասը գրված է 1290-ական թվականներին, իսկ երկրորդ մասը՝ մի ուրիշ հեղինակի ձեռով մոտ 1277 թվականին, ուրեմն, հավանաբար նույնպիսի մանկութեան տարիներին։ Դա սիրելու արմատ է և կուրառագական սիրո օրինակիքը։

Այսպիսի սիրավեպեր և սիրելու «արմատներն» և օրինադրեր չեն առաջ եկել մեր գրականութեան մեջ, զի մեզնում կյանքի մեջ չի եղել դրանց պահանջն ունեցող արժանիք, «կուրառագական» վերաբերմունք տիկիւնների հանդեպ, ջեն եղել և «կուրառագ» ասպետները, այն ժամանակի կիլիկյան բառով՝ «ձիավորները»։ Ընդ նույն դարում թուրքական բնապատկերներն էր Մեծ Հայաստանում, և հայ աշխարհում նույնպէս արդեն դեպի քաղաքում և անկում էր դիմում։ Ուստի մի քանի սիրավեպերը, որ մեզնում են մեր հին գրականութեանից, ոչ վերացական, ոչ էլ ուսուցական ընկալութեան ունին։ Վարդ ու սոթոկի սիրավեպն այլաբանորեն կիրառված է ոչ թի իբրն «սիրո արմատ», այլ իբրն մի սիրո ճերթված՝ բնագիտական սեր գովերգելու համար։

Արեւմտեւորում ևս, հարկավ, հորինված կան նաև հզոր սիրո ճերթվածներ, նույնիսկ 14-րդ դարում։ Բայց համեմատութեան համար բերենք այստեղ մի փոքր կտոր իտալական վերածնութեան վերջին շրջանի, 16-րդ դարի նշանավոր բանաստեղծ Տրիվտո Տասսոյից, նրա հաշակավոր «Ալատով» նրուագիմա վիպական ճերթվածի մեջ՝ զենքերի շայտակար շոխդի և արյունահեղ կոտորածների ու մահվան հետ՝ մեծ տեղ է արված նաև սիրո քնարական գովքին։ Ահա նրա «Նրա Նրա» նրա ճերթների մեջ նրան-

¹ Histoire de la Littérature française par Gustave Lanson, Paris, 1895, էջ 121 և հա.

² Տրիվտո Տասսո (1544—1596 թ.), «Ալատով» նրուագիմա։ Օգտվում եմ առաջ. Քարդուսի թղթից. «Освобожденный Иерусалим», поэма Торквато Тассо, перевод В. С. Лихачева, С.-Петербург. Տասն և վերջերս ու առաջ և վերջերս երգեր 36- համարում էջ 226 և հա., 16-րդ երգ, աթյակներ 12—17։

ճշութեան տաճարը, սիրո կախարդական աստղն իր մարդկային սիրահար
դույզով, շուրջը ծաղկոյ ու պաղոյ ծառեր, ակունակիս լճակներ իրենց մեջ
լողացող սիրտտարփ ու հրապուրիչ, մերկամարմին ցրանուշներով։ Գարնա-
նային գեղեցիկ բնություն սիրով լցված։

«Սիրավառ թռչունները
ձևում են զմրուխտ շփաբարանները,
Եվ իրենց միայն հասկանալի լեզվով
Հռուստում են իրենց խենդ ու վշտի համարն։

Այդ թևավորներից մեկը, խառնատիկ փետուրներով մի կարմրակտուց
թռչուն, մարդկային ձայնի նման հնչյուններով երգում է վարդի մասին.

«Ահա վաճը, որ պատրաստ է քայլելու.
Որքան պակաս են բացված նրա թերթերը,
Այնքան ավելի հմայք կտ նրա մեջ՝¹
Բայց ահա նա փթըթել է մեր առաջ,
Ու փրթթումից հետո իսկույն ձաղկաթափ.
Եվ այդ այլ ևս այն ծաղիկը չէ,
Որ գեղունիների սրտում նախանձ էր ընդունում,
Եվ նրանց կրակոտ պաշտոնների հայացքը գրավում.
Բավական է մեկ օր միայն,
Որ թռուածի ծաղիկը մեր կյանքի.
Ամեն տարի բնությունը նորոգվում է,
Իսկ մեր երիտասարդութունը չի վերագտնում.
Պաղենք ուրեմն վարդն առավոտյան.
Օրը կանցնի, և իրիկնադեմին աղան կըթռածի նա.
Պաղենք շուտով սիրս ծաղիկն
Ու սիրենք, քանի կարող են մեզ սիրել։
«Լոեց երգեցիկ հովքը, և իսկույն
Օգը նորից լցվեց թռչունների ճախդյունով.
Աղաջինները համբույրներ են տալիս,
Եվ ամեն ինչ բռնված է զաբային հրայրքով.
Ե՛վ կաղնին, և՛ դափնին, թփերն ու խոտեր,
Ինքը հողը, գետնի ջրերը,—
Ամեն ինչ միայն սեր է շնչում,
Ամեն ինչ անձնատուր է սիրո բուռն իշխանությանը։

Մեր Կաստանգնի բանաստեղծութեան մեջ էլ (Քերթված ԺԱ, էջ 110—
116) սերը դրված է զարնային թարմ ու գեղեցիկ բնության մեջ, բայց
առանց որևէ կախարդանքի ու հավերժահարսների։ Ամեն ինչ բնական
ձևով է, հարկավ, որոշ այլաբանութեամբ—ծաղիկներն աղջիկներ են, և
ամենագեղեցիկը վարդն է, որին նախանձում են մյուս գեղունիները։ Հավ-

¹ Հիմա. հայ գաւառական եայերն՝ «Վարդն բացում է մի ուրիշ ... Վարդն պուր-
պուրիկ ուրիշ ...».

ցերբը (թուշունները) աղալքն են, Զկա մարդկային սիրահար դույզը, դրա
փոխանակ ալլաբանորեն բլրուն ու վարդն են սիրահար, Զարգարուն բու-
րառանում սիրավառ հավքերը, գեղեցիկ հագնված և ծաղիկների անուշ
բուքմունքից հարթած, իրենց սերն են քաղցր եղանակում, Այստեղ էլ սերը
ներգարծում է բնութայն բոլոր երևույթների վրա, Թափանցում է և՛ կեն-
դանի էակներին, և՛ ծառ ու ծաղիկ, անգամ ջրերի մեջ, Ամեն ինչ լցված է
սիրով, ամեն ինչ լինում է սիրով և կենդանի ու գեղեցիկ է միայն սիրով:

Սիրով արեգակի լուսսից գեղեցկանում, բացվում, փթթում է վարդը.
նրա պայծառ տեսքից ուրախանում են երիտասարդները ու մոռանում
ամեն հոգս ու տրամուլթուն, Բայց նա ինքը վշտերի մեջ է, քանի որ վա-
ղանցիկ է իր փթթած կյանքը, Ուստի կրակի պես վառվող այգ գեղանի
սիրունին իր սիրական բլրունի առաջ բանում է իր սիրառանջ սիրալը և
հրավիրում նրան, որ համբուրի իրեն՝ վարդին՝ ու կշտանա սիրով. որով-
հետև կգան, կքաղեն իրեն, — առում է նա, — ու բլրուն ալիս չի զանիլ
նրան:

Ահա մեր Կոստանդնի սիրավեպի նյութը, որ էսպես նույնն է, ինչ
որ նրանից ավելի քան 250 տարի հետո հարինող իտալացի հռչակավոր
բանաստեղծինը: Մեր քերթվածի մեջ սերը նույնիսկ ավելի վեհ ու վսեմ
է, զի դա հեղափոխ է փափկության դրախտում, այլ, բայց կրոնական
հայացքի, բխելով Մեր աստուծուց՝ դարձած է հավերժ կենդանության
աղբյուր, մի աստվածային ստեղծագործ կենդանարար ու գեղեցկացնող
գորութիւն մարդի բնութայն համար:

Տեսնենք բնագրից համալսմանը:

Այսօր եղև պայծառ դարուն,
ցընծան ծաղկունք և յորդորին,
Հագնին ցեղք ի ցեղաց
մանդրուն հաւերն՝ ի հաւն խօսին.
Ի վերայ յերանց բարձանց
դոյն ըզդոյնով ծաղկունք փրօին,
Մածկեն զերեսս երկրի,
ըզլեան, ըզդաշտ ու զբողանին:
Մն գեղեցիկ փետուր հագել
փոքրիկ հաւերն ի ծաղկոցնին.
Ու հազար դասըս դասով՝
քաղցրաձայնն զանլուսնին.
Հարբել են յառուշ հոտոյն,
ու նստել (են) ի վրա ծաղկին.
Ի սիրու են ըստեղծած,
սէր կայ յիրենք որ կու խօսին:
Բուրաստանք է զարդարած,
ու ցեղ ու ցեղ հաւեր խօսին.
Ու ամէն հաւ սէր ունի
ու շատ հասրաթ ի յիր սըրտին.

Յանդադար քաղցրը ձայնէն
քունն է հառել ի գիշերին.

Ու ամէն հաւ յիւր զիմաց
վասն ի սիրուն քաղցրը խօսին:

Ահա թե որքան ուժեղ է արտահայտել մեր բանաստեղծը թռչունների գարնային հրայրքը—ցանկութեան ընթացքը: Մաղիկները ցնծում են: Վարդը դեռ չի բացված. մանիակի նախաձեռնութեամբ՝ ծաղիկները—հորատ-մորոտ, ձյունածաղիկ, շուշան, նռնուկաբույս, նարգիզ, մասրենի, սոսամբ ծաղիկ և ուրիշներ—հաճաքվում, խորհուրդ են տնում, որ կարեն վարդենին, ասելով՝

Որ ոչ դա՛յ վարդըն կարժիք,
ու զեղեցիկ տերև փըռին,
Եւ ի նորա պայծառ տեսումն
սրգիք մարդկան ի մեղ չհային:

Ուրեմն այստեղ փթթած վարդը գեղունիկների նախանձն է շարժում, քանի որ նա է գրավում աղանքների հայացքը:

Բլբուլը, վարդի սիրահարը, հանկարծ վեր է կենում ու ձայն տալիս ծաղիկներին, թե վարդը քնից զարթնել է իր կանաչ վրանի մեջ, Վարդը որ լսում է բլբուլի ձայնը, բաց է անում վրանի գուռը, հանում կանաչ կապան և կարմիրը հագնում: Մաղիկները թառամում են, ոմանց անրևները թափվում, ուրիշները փախչում, բարձր լեռներն են հլիւում. ոմանք ամոթից կապտում ու սուգ են տնում, մի քանիսն էլ երկյուղից դողում են ու գեղնում: Իսկ վարդը զարդարում է բուրբուռանքը. բլբուլը գալիս, նստում է նրա զիմաց և հայակապառնակով ամենատափեռ սիրտ գովքն է անում սքանչացած, ասելով՝

Թէ՛ սէ՛ր է Մոռն ու սէ՛ր Մաղիկն,
ու սէ՛ր հառն ձայնն ի Մոռն,
Սէ՛ր է վարդն ու սէ՛ր՝ բլբուլն,
սիրով նըստել (ի) վերայ վարդին.
Սիրով են զոյն ու զոյն
ու զեղեցիկ այն ծաղկընին.
Վասն սիրոյ փոքրիկ հաւերն
ի ծաղկընուն վերայ նըստինս:
Նայ բլբուլն ուրախանայ
ու բազմի (ի) վերայ վարդին.
Թէ՛ աշագար բարի գալուն
վարդին՝ ծաղկանց թաղատրինս:

Վարդն էլ խանդակաթ դժայլանքով պարզում է իր սիրտ ազդեցու-
թյունը և իրեն, և ամենի վրա.

Նայ դառնայ վարդն ի բլբուլն
ու պինդ փըռէ գիր տերևներն.

Թէ՛ ճեմա ալի եմ սիրու աւեր,
 ուսկոյ սըբաթն մէջն է դեղին,
 Թէ չըկար սէր յիմ սըբաթս
 ու ես ունի անհոգութիւնն,
 Նսւյ ես է՞ր ի կախ լինի
 զօրն ու գիշերն ի մէջ փըզին.
 Ես սիրով կամ կենդանի
 'ւ եմ զարդարել զիմ տերնին.
 Ու թէ սէրն յիսնէ զառի,
 Նսւյ գիւ տանի հողմ աւ քամին,
 Բըլբւն մի դու զարմանալ
 զպայծառ վարդիս գեղ պատկերին,
 Զի ով որ սէր չունենայ՝
 տա ինք չըկայ դեղեցկութիւնն.
 Զուրքն սիրով յիս վերանայ,
 որ յարմատոյս տա իս քամի.
 'ի ի լուսոյ արեգակուն
 ես ժողովեմ դեղեցկութիւնն,
 Ի յիմ անսւշ հոտոյս
 կենդանացան որ զնառն տան.
 'Դ ի յիմ պայծառ տեսու
 ուրախացան 'ւ ի խաղ մըտին.
 Զինչ որ յաշտարէի կայ
 հոգս ու ցընսր ու տըրամութիւն՝
 Ի յիմ զնոֆոր տեսու
 փաթտեցան երբ դիւ տեսին,
 Յով որ սէր կայ յիւ սըրտին,
 Նսւյ զիւ նորայ կամակ տանին,
 Որ քանի նայ յիւ հայի,
 Նսւյ հանդարտի սէրն ի սըրտին:
 Առնուն զիս և տանին,
 սիրով փըտին ի մըլիքսին,
 Որ ի յիմ պայծառ տեսու
 ուրախացան 'ւ ըմբեն զգինին,
 Ահայ կամ ես զարդարած
 'ւ իմ տերնիս դերդ հուր վառին.
 Ու բացել եմ զիմ սըբաթս
 մէջն ի գիւտաց որ է դեղին.
 Ար'եկ զիս համարէքէ.
 ու կըլտացիր սիրովըս հին.
 Ահա գան և զիս քաղեն
 'ւ ալ ոչ զըմնուս ի բաղնիսն:

Սիրս տյս գովքը 12-րդ դարի վերջերում կամ 14-րդի առաջին քառորդին՝ մեր հին բանաստեղծության մի աննման, մի փարթեմ փթթած ծաղիկն է, որ, թեև այլաբանութամբ, բայց տանպես զունագեղ ու վճիռ է հորինված, և այնպես պատշաճ է հարմարեցրած իրական կյանքին, որ պարզապես հասկացվում է այնպիսի բովանդակությամբ, որ Զեյնալ որ հեղինակը վերնագրեր գրել է՝ «Թանձա վարդի օրինակ»։ Պրիստոս պատմէ, բնականաբար շատ դժվար կարելի էր կրոնական այլաբանությամբ համարել այն։ Ուստի բանաստեղծն ստիպված է լինում գրելու մի առանձին քերթված (ԺԲ, էջ 119—125) այս վերնագրով. «Մեկնութիւն վարդին համառօտ»։ Վասն անգիտաց շինեցի. զի կարծէին եթէ մարմնաւորաց էր բուն վարդիս։ Ես վասն այն գրեցի։ Այս «մեկնութիւն» մեջ նա բացատրում է, թե վարդը Հիսուս է. Մանիքայէ՛լ՝ Հուդան, Ոլբուլը՝ Պրիստոսի հորւթյան փողը փչող Գարբիւլ հրեշտակը և այլն։ Հեղինակն ինքը թերևս սկզբից հենց մի կրոնական այլաբանական բանք է ցանկացել հորինել աշխարհիկ սիրու հրդի ձևով ու մատիմբերով, բայց նրա գրածն իսկապես աշխարհիկ բանք է դուրս եկել. իսկ մեկնությունը, որ հետո ավելացրել է, չի համարվում բուն գործին։

Միևնույն նյութին և այլաբանությամբ են վերաբերում նաև Կոստանդնի ԺԵ և ԺԶ (էջ 132—142) բանքերը, որոնց առաջինի վերնագրի մեջ՝ «Թան զարնան օրինակաւ խորհուրդ ի Պրիստոս. մի մարմին հասկանալը դրան, այլ հոգեորդ, զգուշացնում է հեղինակը սկզբից. թե ինչպես պետք է հասկանալ իր գի խոր ծածկեալ բանը, «ծածուկ բանը»։ Այս սիրովնակի մեջ նորաբար կոչմանից լրացվում է գաբան գեղապարզ պատկերը։ Դա Գերմին, լուսաճառանչ ու հրճվալից մի հարսանիք է մայր երկրի համար ձմեռնային մուռլ մթնոթյունից և սառած քաղցած մեռելությունից հետո, երբ հարավ հողմի փչելով վերանում է ամեն տրտմություն և կենդանացած շարժվում, ծաղկում է բնությունը։

Հեղ որոտայ տմր ցօղաբեր.

Կամբ կապի յերկինս ի վեր.

Հսկէ յերկիր ահեղ գետեր.

Հաւաք գերկիր են արբուցել...

Մովըն գլբուրդ առնու սիրով,

Խաղան գետաւնք յերկիր՝ ա ի ծով.

Ակունքս յորդոր ցան պազ ու հով,

Նւ քարէն յառաջ բրխեր

Ահեղ ցոլեն գետերս յուրով՝

Թորդ ի լերունքս ի վայր գուրով.

Գան ման ի ման ծաւալելով,

Սիրով ի ծովն երես դըբել...

Հաւերբս գան քաղցրը ձայնով,

Միժեռն ի հեռ սաղմոսելով.

Գայ արտուտիկն կարգալով.

Ձառաւօռն է բարբառել.

Ամեն կենդանի էակ, կապանքից արձակված, տեղից շարժվում է, ծնունդ և անուամբ ժողովվում են և ծաղիկները բուրաստանում. վարդը միայն գեռ չի երեւում.

Բլբուլուն հեռա շաքարբերան,
Աւետարներ մեծ յարութեան.
Վարդին հեռա կանաչ վերան,
Որ պայ բողմի գերդ հուր վառել:

Բայց վարդը ծածկվելով կանաչ կապալով՝ թաքնվում է.

Կամով ծածկի ի մէջ փըշին,
Ձերդ որ ի յամբ մըանու լուսին:

Բլբուլը աղաչում է վարդին, որ երեսը բանա, բայց վարդը, հակառակ բլբուլի հորդորներին, մերժում է նրա խնդիրը. որովհետև, իբրև մի ամսթխոտ աղջիկ, չի համարձակվում ազատ երևան դալ և երեսը ցույց տալ, քանի դեռ ժամանակը չի հասել, և անգետները բամբասում են, Վերջիվերջո նա դուրս է գալիս, նրան տեսնող ծաղիկներից ոմանք գունաթափվում ու փախչում են. իսկ գեղեցիկները շրջապատում են նրան ու զոգում նրա գեղեցկութունը, Ուրախանում է բլբուլը, մեծ հրափերք է անում. պալիս են բլբուլները (աղաները) խմբերով. մեծ խնջույք են անում նվագելով, Վարդն այժմ առանց քաղվելու բազմում է նրանց մեջ և առում բլբուլին, Թե նա այժմ որքան կուզե թող գովի իրեն: Ապա տեղի է ունենում վարդ ու սխալի մեջ մի գրույց, որով վարդը պարզում է, Թե ինչ է աղասում իրեն ախարհում—լինել գեղ, վարդաջուր, և բանաստեղծել իրեն դառնալով առում է.

Կոստանդ, ի խոր ծածկեալ ե բոն,
Ջույս որ առ մեզ տուեր նըշան.
Տուր պահութիւն աշխրոտկան
Այնմ որ կամաւ է խոնարհել:

9. ԱՅՈՑՈՒԿԱԾ քաղաքի անվանումը:—Լույսի ու սիրու, վարնան և արեգակի սիրահար քերթողի բանքերը, որոնց պատկերներն առնվում էին բնությունից և ուշադրելի երգերից, խորթ և անհաճո են երևում Սրգնկայի վառակամներին, որոնք թեպետ սիրով լսում էին Շահնաման, բայց քերթողին էին, Թե Կոստանդինը մարմնավոր բաներ է հորինում, Նային և Նախանձողներ նրա շնորհին: Բանաստեղծը շատ վշտեր է կրում ռուս եղբայրներից, որոնք չորսթուղթյամբ բամբասում էին նրան: Նա թեպետ և հպարտությամբ արհամարհում էր այնպիսիներին, որովհետև նրանք բանաստեղծ և բանաստեղծ էին, բայց լինելով դուրազացած՝ հոգով շատ վրդովվում է և կոխվ է սկսում նրանց դեմ իր երկերով: Այդ առթիվ նա հարինում է իմաստասիր Խաչի, այլև անճանաչ Բաքերգույաններ վշտահար գեղուններով իր խոցված սրտից: Այսպիսով նա ասեղծում է մի նոր տեսակի քնարերգություն—անձնական բանաստեղծություն, որի համար

նյութ են դառնում բանաստեղծի իրեն տպրած անձնական հանգամանքները, սերն ու ատելությունը, բախտն ու դժբախտությունը, ինչ որ մասամբ արդեն տեսանք Ֆրիկի բանքերի մեջ։ Անհատն ուրիշ ընդհանրությունից անջատվելով ստանում է իր տրժեքն և պայապանում ու ցուցադրում է իրեն։ Կոստանդնի անձնական բանաստեղծությունները կարևորություն ունեն և այնով, որ բխում են ոչ թե մի որևէ սոսկ անձնական պատճառից, այլ որ նա սիրում է կյանք, բնությունը, լույս ու զարուհի։ Եվ իսկապես կյանքի ու բնության ուրիշ, և սրա համար կրած թախծին ու վիշտն են կազմում նրա ստեղծագործության, ինչպես և նրա բանաստեղծական հասկանքի ու գոհացման լեզուն։ Եվ դրանով է, որ արժեքավորվում են նրա բանքերն իր անձնականի մասին, որոնց մեջ նա, իր սրտի ցավերը երգելու հետ՝ պարզում է և իր աշխարհայեցողությունը։

10. «Տեսիլք»։ Հայագրի իր բանաստեղծություն ծագումն վրա։—Ը քերթվածը (էջ 97—101) ունի այս բացատրական վերնագիրը. «Ոմանք չորաթուսն գինէն վրան նախանձու թէ որպէս խօսի սա այսպիսի բան, պի վարդապետի չէ աշակերտել. զի այլ է աշակերտելն և այլ է շնորհքն ի հոգևոյն. զոր ես պատմեմ ձեզ յազգս տեսլան իմոյ, զոր տեսի ի գորմանալի տեսիլ, մինչ ի վրանքն կայի հնգետասանամաց. զոր տեսի ալրմի արեգակնազգեստ և ի լուսով»։

Ոմանք չոր են հեռ ինձ ու նախանձով են յիմ վերայ՝
Վասն իմ գըրեալ բանիս, որ առ մարդիկ երեսնայ.
Ասեն, թէ՛ «Ո՞նց գըրէ բան քաղցրահամ ու ձեզ կարդայ,
Որ ի մեր միջիս ընդեր կամ համեմատ իւր չըկայ»։
Կայր են հազով այլաք, մըտաք յիմար են անյիմաք.
Թէ աէր ձզ է ինչոյ կամ այս շնորհիս որ առ իս կայ.
Ես եմ տման հոգէ, 'ւ յիս լըցած կայ խաղինայ.
Ջոք ես խօսիմ հազով՝ այն մեծ տիրոջն է մանունայ.
Ով զող է այս գոնձիս ու կամ նենդով ինձ լինայ՝
Աստուծոյ է հակառակ, 'ւ ինք դատաստան տընէ նորայ։

Բանաստեղծը չի բավականանում սակավ, թե իր շնորհքն առատեց է, և իր նենդ նախանձորդներն աստուծու հակառակ են գնում, նա անցեալներին այդ հոսկացնելու համար՝ դիմում է տեսլի պատկերին, մեղմ ու փափուկ մեղմ ստեղծելով մի սիրուն բանք, որի ուրիշ նմանը չկա մեր տեսլական գրականության մեջ։ Դա և՛ տեսիլ է, մի վիզական երկ, և՛ անձնական բանաստեղծություն։ Նա պատմում է, թե երբ տասնուհինգ տարեկան մանուկ էր և վրանքում ուսում էր առնում, մի գիշեր քնած ժամանակ տեսնում է, որ՝

¹ Այս վերնագրի մեջ, էջ 97, ազգած է՝ «աշխարհին», «գործանալիս առանց չկորի տի՛ նախորդի, տվածքի առանց վերջի՛ հեռ հոգի. մինչդեռ նախք չորաթուսնիս առաջբանի մեջ, էջ 11, ազգած է անտիպ աշակերտելն, չի գործանալիս, չվանքն»։

Մանուկ մի լուսեղէն, յաթոռ նըստել որպէս արքայ,
Նըստան արեգական է գեղեցիկ որ լոյս կու տայ:

Մեր մանուկ կոստանդինը, զարհուրած և առանց հարցնելու, թե ով է նա,
երկրպագում և նրանից երեք խնդիր է անում. խնդիրներից վերջինն է՝

Ասացի. «Ես եմ աղքատ՝ և յերակ բանի կորստ կեցայ,
Շնորհէ դու այո գերոյս մասն ու բաժին ինձ և զիւայ:

Տերը շնորհում է նրան այդ ընդունակութիւնը: Եվ այնուհետև նա
հանգստութիւնը կորցնում է, և հետո միայն, երբ ուսման մեջ վարժվում
է, հասկանում է իր տեսլի խորհուրդը.

Եղև յանկարծակի ինձ բան խօսիլ ով ուզենայ.
Անպէս որ ես ի յիմ խօսից շարեւրն գործացայ.
Միրով ու մեծ յուսով ես այս բանիս ի փորձ մըտայ,
Ջնդրիս փոխան տուի, և ապա ես այն հոգոյն հասայ:
Իմ բանս ի յայն լուսոյն եկել աւ իս ինձ մանանայ,
Որ իմ աշօքս ես գինջ բարձր ի յաթոռ նըստած տեսայ . . .

Բանաստեղծն, ուրեմն, իր տաղանդը համարում է առողիւժու հայա-
նությամբ իրեն պարզեցած մի շնորհք: Պրա գլխաւորութիւնը նրան ոչ
միայն ուրախութիւն է պատհասւած, այլև հպարտութիւն.

Այսօր հոգովս ուրախ եմ և ի մեծ մուրաւ հասայ,
Որ ես առանց շրթունք կու խրմեմ յայն գինուն շիշայ.
Սարխօշ եմ յայն սիրուն, և է միտքս ի հոն յուր ինջ լինայ.
Ջունիմ շատոց կարէք, ով է չարկած ու զիս որսայ:
Ես եմ մէջ աշխարհիս գերդ ըզյիմար ի յանդիշայ.
Ոմանք թուիմ խելօք, ոմանց խիստ խև ու անյիմայ,
Ոմանք չարին հետ ինձ, կըրնեն տտամ ի յիմ վերայ,
Ի ոմանց պտտեհ թուի գարիւնս հեղուլ իր կամ լինայ . . .

Այս սողերից երևում է, թե ինչպես հալածել են ավյաւնով հարած,
առեւալը բանաստեղծին. մտվոք, պակասում է այս քերթվածի վերջին
մասը՝ «Ես-գրից թերթ դուրս ընկած լինելով, Բայց առանց դրան էլ՝
մենք լավ տեսնում ենք վշտացած բանաստեղծի ազնիվ հոգին ազնիվ էլ
ներշնչամով:

11. Իմաստեղծն առիւթ — Կոստանդինը վարպետ իմաստաբան է և շա-
էլ հորինած ունի իմաստական ասքեր: Նրա գեղնն իր չարկամների դեմ
կովելու համար՝ է գլխավորապես բարոյական խրատը, իմաստալից ասաց-
վածները, որոնք բխելով բանաստեղծի իրեն անձնական կյանքից, հորին-
ված են խիստ զգայուն, թրթաւուն ու եռանդուն. Հաճախ իմաստա-խրատա-
կան ու քնարական աները փոխիւփոխ հաջորդում են միմյանց և կենդանի
ցոլացնում են հեղինակի զգացումներն ու խորհրդածութիւններն իրեն և
իր հակաակորդների վերաբերյալ. դրանք ուղղված են գլխավորապես աշար

ընկերներին դեմ¹ թիւն յազազա չաբ ընկերաց և պատրուակ կալ մուրհացուցիչ հմանց, որք հակառակին բարութեան (քերթ. Դ. էջ 80—84)։ Այդպիսի ընկերները մոտենում ու մոլորեցնում են ինչպես քաղցրախոս թշնամիներ, զուգահեռապէս գայլեր, թռչունավորող բժիշկներ։ Կայրա, չաբասիրա ու կույր առաջնորդներն նրանք, բարին ասող ու նախանձող, ազնու հիմարներ, որ մարմիններն են միայն զարգացում, չեն հաժանում իմաստաւոր ու գիտուն մարդուն, որին շեշտ են անվանում։ Բանաստեղծն ինչքան էլ աշխատում է սառնասիրտ լինել, չի կորողանում։ Ղի տա՛ն աղետներն իրեն ևն դիպչում, չեն հասկանում իր գրվածքների բուն իմաստը, չեն ըմբռնում «ձա՞ծուկ բան», բրան ձա՞ծկարար, այսինքն այլաբանութեան, ու չեն գնահատում իր գրվածքները։

Թէ մէկ մի գանձն ի մահ եղել ու գնայ ի ծովն ի վայր.
Ջուհար բերէ ի դուրս, նա՛ն աղիտան կոչեն գնա քառ . . .
Գիտունն ի յանդիտաց մէջըն՝ ծառայ է չարաչար,
Որ նըման խոմ ապիկուլ յաժան ձրգնն՝ առաջն ջուհար։

Նրա վրդովմունքն այնքան մեծ է, որ իմաստական բանքը հետզհետեւ փոխվում է մի դառն ոգրի ու երգիծանքի իր անմխիթար ժամանակի վրա ընդհանրապես։

Հազար աւաղ տա՛մ ես որ տէրն ըզմեղ յետնորդս արար
Ի յանցեալ ժամանակիս՝ որ մեղ չըկալ իրք մըխիթար.
Հովիւ չունինք՝ առաջ ու մենք ենք մուրհակ ոչխար.
Շառ գայլը են յարձակել ի վերայ մեր խիստ առհասար.
Պիտէր մեղ նաւապետ մարդ կենդանի գերդ նոյ՛ն արդար,
Որ մեղ առաջն գործէր, ծովուս լինէր եղր ու վրար . . .
Չունինք մարդ կենդանի, հոգւով մեռած ենք հաւատար . . .
Ի մէջ՝ ծովուս ծըփինք, ոչ՛ նաւ ունինք, ոչ՛ նաւավար։

Վերջը բանաստեղծն ինքն իրեն դառնալով խրատում է իրեն.

Ձուգիդ քանի՛ մաղես, է՛ն Կոստանդին, զօրն առաջար.
Հերիք արա սըրբիդ, զքեզ ի ծովուդ մէջըն տեսար.
Դարձիր ի յետ նայէ՛, ու գիտ խելոց թաղարի ու ճար,
Որ չննաս ի մէջ՝ ծովուն, 'ւ յեղր ի հանդիսա իսկի չհասար։

Այսպիսի մի առնանկան, միաժամանակ և հասարակական քննարկան երկ է և է՝ քերթվածը (էջ 91—96), սր վերնագիր ունի՝ «Յազազա առաջն առաջ առաջ խոսելոյ գրանս, աղիտան և հակառակ կալ իմաստեցոյ։ Բանաստեղծը խոստ հոգոված է առաջն և առաջն մարդկանցից, այնպես որ նա առանջվում է, կորցնում իր հանգստութեանը և բողբոջի ու հառաչի հիշեր է արձակում բարկ խոսքերով, ուսեղ և առաջնապի շեշտերով։

¹ Յես նա՛ն՝ Թերթվածնէ՛ր՝ Թ, էջ 74 և հաւ., Դ, էջ 80 և հաւ., է, էջ 91 և հաւ., Թ, էջ 108 և հաւ., Ժ, էջ 129 և հաւ., Ժէ, էջ 148 և հաւ., ԻԱ, էջ 154 և հաւ., ԻԲ, էջ 158 և հաւ.

Շերիաթ՝ կանչեմ հազար 'ա անգղ հառայ բերեմ լուսով,
ի յանգէտ մարդկան ձեռաց զհոգիս երեմ անշէջ հրքով.
Եմ յիմար դարձել ու խն ու սաւղարի՝ ի շուրջ դուրով
Եւ վտարն էջ ու անյիմայ ոմանց՝ հանեմ զհոգիս շուտով.
Ես չունիմ հանգըստութիւն, 'ա յերակ խոցիմ անգէտ խօսով . . .

Նա խիստ հարգածներով խորագանում է իրեն հալածողներին, որոնք անհոգի կենդանիներ են, չգիտեն մի աղետանի և խելոք խոսք ասել, ասելով ասում են իմաստուն մարդուն: Եվ նուստանդնի այս քերթվածը հետզհետե դառնում է լավ, բարի, իմաստուն և վատ, չար, անհոգ մարդկանց հովերժ հակամարտութեան մի հոյակապ պատկեր. և որովհետեւ բանաստեղծը նկատի ունի մի կողմից՝ ինքն իրեն և մյուս կողմից՝ իր հակառակորդներին, ուստի նրա բնորոշումները և՛ շատ սիրազեղ են ու փափուկ ոճով, ինչպէս սովորաբար հատուկ է Կոստանդնիւս, և՛ խիստ, ցտակոտ ու ասեղաբար, ամբողջը աղնիվ ձգտումով լցված, անկեղծ ու խոր զգացումով ոգլված, դառն գանգատի և հոգեռանգն շերտութեան խառնուրդով:

Ձիմաստունն ժվ է յաղթել, թող թէ հընար բերեն չարով,
կամ զուգին բանք աղտեղի և բամբասեն սուտ խօսելով.
Նայ լոյս է. և նայ խաւար, որ չկայ հընար մերձենալով,
Ձի յիրմէ փախչի հեռի ի խոր տեղիք բընակելով:

Եվ այսպէս իրար հանդիպում են մի շարք գեղեցիկ տներ իմաստուն և անմիտ մարդկանց մասին.

Իմաստունն է տուաւօտ, աւետաւոր է ցընծալով,
Իսկ անմիտն ի խաւարի կայ թանձրացել երազ քընով.
Իմաստունն արեղակն ալէս է պոյժառ և լի լուսով,
Իսկ անմիտն է խաւարի տուն և տեղի, լի ցաւով,
Իմաստունն է բուրասածնք ձաղկով լըցած զոյն ըզզոյնով,
'Ի անմիտին սիրտն է ի լի մութն ու մըլար ստանամտով,
Իմաստունն ալլատող բարի, անմահութեան ճաշակ տալով,
Իսկ անմիտն է անպտուղ, դատարկացեալ և լի փրշով:

Իմաստունն աշխարհից կույտ է, միտքն՝ առատ, իսկ անմիտը՝ ցանկութեամբ լի, ցաղցած ու ձորավ, ձալաչք. իմաստունը գնում է ճշմարտութեան ճանապարհով, իսկ անմիտն ընկած է խորթորատ ու ձով . . . Մի թուլութիւն միայն ունի իմաստունը.

Իմաստունն ոչ երկընչի թէ հարկանեն դինքըն սբրով,
Բայց յանգէտ մարդու խօսից խոցի հոգով ու մարմնով,
Ձի անգէտն և անըզպալն աստուած չունի ինք գիտելով:

Եվ խոցվում է մեր բանաստեղծը, որ 'այնպիսի մարդիկն աշխարհի սկզբից ի վեր հակառակում ու չար են կամենում իմաստուն մարդկանց և

¹ Շերիաթ - բարք:

² Սուտայ - մշամագձիկ:

հալածուած նրանց: Եվ նա ընկնում է մեծ հոռետեսութեան մեջ աշխարհի
վերաբերմամբ, գրելով՝

Բովանդակ աշխարհս է դալ
և միաբան կան մի ժողով,
Նայ գտոին ճւր կայ հանգիստ
մէջ գալենուն ինք կենալով.
Ով խելօք է և ուզէ
դինք կենդանի սրբոյ կամով՝
Թող լինի ի յաշխարհէս
ինք անծանօթ հրաժարելով . . .
Լաւ է ինձ մէջ գաղանաց
մարդակերաց բընակելով,
Քանց անմիտ 'ւ անիմաստ
որ յիս խօսի յանգէտ բանով:

Բանաստեղծն իր գրութեան ից մի ելք է որոնում և խրատելով իրեն՝
գրում է.

Կոստանդին, է՛ր կոս ազար
'ւ ի սիրտ ելնես թէ՛ղ մ' ըշատալով.
Վասն անգէտ 'ւ անմիտ ոմանց՝
դքեզ է՛ր տանջես շատ ցընորով.
Ոչ կարես հաւան պահել
դու զամէն մարդ հետ քեզ սիրով:
Թէ կամիս հանգիստ կենալ,
որ չըմտես դու զքեզ հոգով՝
Մի փառաց դու հետեւի,
մի անդանիւ անեղի ի ձով,
Զի ժովուն ոչ կայ հանգիստ,
յերակ ձգփի յալիս քամով:

Սույնպիսի անձնական եղանակով հորինել է նա և մյուս ասքերը,
ինչպես, օրինակ, Թ. քերթվածը, որի սկիզբը չունենք: Այստեղ խրատներն
իրը ուրիշի կողմից ուղղված են Կոստանդինին: Դրանցով նա երբեմն
անձնաքննութուն է անում և ինքն իրեն խրատական խոսքեր ուղղում,
հանդիմանում իր պակասութեանը, բայց այնպիսի ձևով, որ գրվածքն
տառնում է ընդհանուր խրատական բնավորութուն: Սիրում է, որ ուրիշ-
ներն իրեն գովեն, վրդովվում է «ւրիշների խոսքերից, մինչդեռ,—ասում է,—
պետք է լինել խոնարհ, անփառասեր, համբերող, մի խոսքով՝ լինել ժիժաս-
տուն և հանճարեղ մարդ կատարեալ: Իր ամենամեծ պակասութեանը նա
իր լեզուն է գտնում, իր բանաստեղծութունը, ի թանկագին խրատներով,
որ իբրև բեռ դնում է ուրիշների վրա.

Լեզուն նըման հըրոյ
բազում անդառք է հըրգեհել.

Դու լեր խալաս ոսկի,
 որ շատ կռակք ի հոգի մըտնի:
 Լեզուն հոգմըն սաստիկ,
 որ շատ խըռիւ է տարտարել:
 Դու լեր ծառ պըտղաբեր՝
 ի մէջ հրկրի արմատացել:
 Լեզուն է հեղեղատ,
 շատոց հիմունս է կործանել:
 Դու լեր վէժ հաստատուն,
 գըլուխ անգետն հիմըն շինել:
 Լեզուն է յորդ քամի,
 ծովուն խըռովութիւն բերել:
 Ի զատ կայ ի նմանէ՝
 յառակ ծովուն քոհար պահել:

Բայց կարճ է արդոյց Կոստանդինն ի զատ կենալն իր լեզվից, այսինքն հրաժարվել իր բանաստեղծութիւննից:

12. Մարմնի իրավունքը:--Մեր ցերթողն իր ասքերը հորինում է մի ներքին կովով Վոգու և մարմնի միջև: Մենք զգում ենք, որ նա, զգալով հանգերձ իր մեծութիւնը լեզվագարների դիմաց, հիգեր է անում կտրվելու աշխարհից, զսպելու իրեն, հեռանալու մարդկային անձնասիրութիւնից ու անախտութիւնից: Սակայն և տանգես՝ նա ոչ մի կերպ բավարարութիւն չի գտնում, և իզուր Թ. ցերթվածի մեջ, կործես մի բարեկամի կողմից, ինքն իրեն խրատներ է ուղղում:

Քո սիրտտ ի յաշխարհիս
 ի հասրաթէն է հուր վառել:
 Քանի որ շատ սիրես՝
 նայ շատ զըռներ է քեզ բացել:
 Մարմինտ է ցանգութեամբ
 ի յաշխարհիս սէրըն մաշել:
 Քանի որ շատ վայլես՝
 յետև կարօտ ես մընացել:
 Մարմինտ որ էր տըղայ՝
 նըման ծաղկի գեղեցկացել,
 Իսկ այժմ ահայ հասեր
 'ւ երիտասարդ ես կտառերել:
 Հիմի գայ ձերութիւնն,
 որ ինք ըղման էր գուշակել:
 Ոչ փառք այլ երևի,
 և ոչ պատկեր գեղով լըցել:

Եվ ահա հետո գալիս է մահը, և հարութիւնն գարունն իր բարդ պարզաներով: Բայց արդոյց այդ մահը և թանգենըն սարսոցնձում է Կոստանդին Նըզնկացուն, ինչպես իր ժամանակակից Ֆրիկին:—Բնով հչ:

Կոստանդինը սիրում է մարմինն ու աշխարհը, եվ նա վերջիվերջո բռնկում է և խնդիրը ըսցահայտ դնում ժ. (էջ 107—109) քերթվածի մեջ, որ մի պատասխան է նախորդ քերթվածի մեջ իբր բարեկամից արված խրատին ի դեմ: Բերենք այդ շատ հետաքրքիր բանաստեղծությունը, որի վերնագիրն է՝ «Երկնեալ պատասխանի այսպէս ի գէմ»:

Հոգով սուեր խըրատ
դու Կոստանդեայ կամաւ լըսել:
Ասէ, թէ՛ հասկացայ:
կամիմ պատասխանի առնել:

Եվ ի՞նչ է նրա պատասխանն իր խրատառու բարեկամին: Նա սրա առաջ բաց է անում իր տանջված սրտի ծածուկները, ասելով.

Մի այդչափ ի գործոց
զիս յայտնադէս յանդիմանել:
Տըկար եմ և անգոր,
մի ծանր ու մեծ բեռն գընել:
Հոգիս է խիստ յոժար
բանից իմասաւնոց լըսել:
Մարմինս է հեշտասէր,
զի յաշխարհէս է ինք ձընել:
Ի յերկուքիս միջին
մոմ եմ ի մէջ հըրոյս վառել:
Անհիմն և անհաստատ՝
եմ անհամդիստ ի շուրջ եկել:
Ի չորս հակառակէս
ուսկամ յերեք եմ մընացել:
Զի հուրն ի վեր քաշէ,
նայ հոգըս ծանդր ի վայր հակել:
Սակաւ մի ի ցըրոյն՝
բոցըն հըրոյս է հանգաբուել:
Փամիւն է յօգնութիւն
և բորքէ զհուրըս վառել:
Երկու կամաց ծառայ
զըժար է ինձ յիրաց սագիւ:
Կամ հուրն ի ծոցն առնուլ
ու անվընաս գինքըն պահել:
Կամ մարմնաւոր ոտոք
վերայ ծովուն թեթև ցայլել:
Կամ զհոգին աւազընթաց
մարդ ընդ ձեռամբն է արգիլել:

Եվ այսպես՝ նա չի կարող չսիրել աշխարհը, քանի որ «հեշտասեր մարմինն» աշխարհից է ծնված: Նրա, այդ կրոնավորի, սիրան աշխարհի

կարողով վառվում է, ինչպես կրակով: Նա չի կորող և՛ հոգուն, և՛ մարմնի
կամքին ծառայել, ինչքան էլ ցանկանում է: Հնարավոր չէ հաշտեցնել այդ
երկուսը, որ իրար հակառակ են, ինչպես չորս տարրերը, որոնցից կազմված
է մարմինը: Եվ այսպիսի հալումայն և անհանգիստ հոգեկան վիճակի մեջ
են,—ասում է նա,—ոչ միայն ինքը բանաստեղծը, այլև ուրիշ շատերը:

Ձայն եմ ես ինձ խըրտա
և յանդիմանութիւն գրքել,
Եւ գիտ բազմաց նըշան,
Վըկայ և օրինակ բերել:

Անմիտ կեղծավորները, սակայն, ուրիշի վիճակը չեն հասկանում՝ խո-
ցում են կոստանդնիւն և կսկիծ ու վերք հաացնում նրան, հարձակվում նրա
վրա: Բայց մենք շարունակենք տեսնել, թե ինչպես այդ համեստ կրոնա-
վորը վշտահար կերպով և անհամարձակ սփռում է իր սրտի ցավերը:

Ինձ չէ՛ պարտ համարձակ
նըման եղբոր ի քեզ խօսել:
Այլ ինձ երես գընել
փոխան հողոյ՝ ով որ կոխել,
Ի սըրտէ տրտասուք
ու շատ դանդաղ լալով բերել,
Ով որ սիրով սըրտի,
եղբայրութեամբ ի յիս նայել:
Ձի շատ կըսկիծ ու վէր
ի ժաղդկանէ է յիս հասել:
Իմ սիրտս է խոց զուգած,
Դառն ցուօք է գիտ տանջել,
Եմ հաղէ պարիսպ անել
ու բերդ ամուր անուն հանել:
Ձերկիր պատերապմաւ
ի յիմ վերայ եմ յարձակել:
Ես եմ առանց սըլէհ
ու մերկ եմ յանդիման կանգնել:
Հաղար զեհաց խոցեն,
ու չերևի, թէ են խոցել,
Նայ կէսք մ'ասեն՝ Դայ է
յիմար ու իւկ ժողաս կաթել:
Ու կէսք մ'ասեն, թէ Գարս
է զայսպիսոյս տըիւնն հեզել:
Նայ ես պատասխանեմ,
թէ՛ կոստանդնիւն, չէ պարտ լըսել,
Եւ ոչ քեզ հաւատալ
ամէն մարդու 'ս ի սիրտ մըտել:

Ահա թե ինչպիսի ուժգին անկեղծութամբ խոսում է բանաստեղծն իր անձնական զգացմունքների ու վիճակի մասին, իր դանդաղած ասելով անմոռադատի գույնը։ Մենք տեսնում ենք նորհալի բանաստեղծի հուզիչ գրությունը և նրա մեջ գտնում մի մարդ, որ բարձր է լինում ժամանակակից վանականներից, որ և ունի իր հաստատ համոզմունքը և չի՝ ընկնում իր հակահակորդների տուփ։

Անշուշտ, նա մենակ չի եղել իր ազատ հասկացությամբ. իր հայրենակից Հովհաննես (Յովհաննէս) Երզնկացին էլ, ինչպես տեսանք, Նուշն է տրամադատել իր իմաստական ասքերով։ Այս երկուսի այդ երկերը ոչ միայն զաղափարով նույն են, այլև ձևով, տառնաձևապես չորս տարրների պատկերով, նույնիսկ մի երկու տողերի նմանությամբ. այնպես որ, ըստ երևույթին, նրանցից մեկն աղղված է մյուսից, Բայց չնայելով այդ նմանությանը, նրանք շատ տարբեր են միմյանցից։ Մինչ Հովհաննես Երզնկացին հարինում է հանգիստ, սառն մտածմունքով, Կոստանդինը մի զգայուն բանաստեղծ է, ավելի քնարերգու, քան բարոյախոս։ Նա իր անձնական շնչերով երգում է ոչ միայն իր սեփական աղբուրները, այլև իմաստախորատական ոտանավորները։ Եթե Հովհաննես Երզնկացին ավելի մտաձեւով է մարմնին տալիս իր իրավունքը, Կոստանդինն իր խառնվածքով նույնիսկ անհնար է համարում չսիրել ու չերգել աշխարհի կյանքը, բնութայնը ու մարդկայինը։

18. «Միքու քմերբ»։—Հոգու և մարմնի խնդրի մասին այնպիսի պարզ խոստովանությունից հետո մեր բանաստեղծն այլևս չպիտի դիմեր այլաբանության և սիր պիտի երգեր նաև այ կրոնական իմաստով, Եվ հավանորեն այս շրջանից հետո են հարինված նրա սիրո երգերը, որոնցից երկուսը կարատի չեն մատնվել¹։ Դրանցից առաջինի վերջում հեղինակը, մի տեսակ իրեն արդարացնելու համար, դրել է հետևյալ հիշատակարանը.

Եղբարք մի կան հեա մեզ սիրով,
Աշխարհի բան ուղեն գրբով.
Նեայ ես վասն այն յայանի ձայնով՝
Սիրու բաներս ասցի յուով։

Այդ աշխարհի բանն ուղող «եղբայրները» քննած է եղած լինին Կոստանդինի սննդակից աշխարհականներ։ Ձնայելով որ նա «հայտնի ձայնով», այսինքն առանց այլաբանության է հորինել սիրո երգը, բայց դեռ ոչ կատարյալ վստահությամբ է անում մարմնի զովհարք. տաղի վերջում ինքն իրեն հանդիմանում է՝ համարելով այդ ունայն, սուտ, անշուշտ և անօգուտ, սխալ և անցավոր բանք և խրատում է իրեն՝ «զատնալ» (=ետ կենալ) դրանցից, որովհետև իրեն բրավոն իրը մայլ տնկաւ, այսինքն ինքը կրոնավոր է։ Երկրորդ տաղի մեջ, սակայն, նա արդեն իրրև սկզբունք է դնում, թե կին սիրողն է «հմարտութուն և անմահութուն գտնում»։

¹ Պերթված ի՞նչ, էջ 169—171. «Տող հերոյ», Պերթված ի՞նչ, էջ 171—173. «Տող սիրոյ աղնիւ»։

Ով ընկեր ի քո սիրուդ բանա ի զընտան՝
Հաղեղէթ և անմահութեանդ է նա անս:

Սեր սենեցողն է գեներալն հոգևոր մարդըն, ասում է նա. իսկ տոանց
սիրո մարդուն նա, կնոջ բերանով, անվանում է Էմմայան և անասունն:
Այսպիսի հասկացություն հայտնելուց հետո՝ բանաստեղծն այս երկրորդ
տաղի մեջ արդեն համարձակ է. նա այլևս չի զղշում իր «այլաբանի բանքի»
համար, այլ, ընդհանրապես, գրում է, թե տոանց իր սիրած էակի չկա իր
համար գեներալ մուրադով:

Այլ չըկոյ քեզ, հոստանդին, կեանք մուրադով,
Երբ ի յիւր քաղցրը տեսուն հանց կարօտ ես,
Է՞ր սուրաթ պայծառ ու պատկեր լուսատես,
Ձիւմ աչերս ի քո սիրուտ յէ՞ր կու դառնա:

Կոստանդին Երզնկացու այս երկու սիրու տաղերը մեր այս անսակի
ամենահին բանաստեղծություններն են, որ մինչև այժմ երևան են եկել, և
հենց իբրև այդպիսիք հետաքրքիր են: Մարմինը, մարմնի գեղեցկությունը
միայն չէ, որ գովվում է դրանց մեջ, այլ արտահայտվում է նաև սիրահար
երգչի հոգեկան վիճակը: Տաղերն արվեստակցած չեն, այսինքն՝ ճարտար
ձեռքով շինված չոկ օտանավորներ չեն, այլ սիրարուի են, Կոստանդին
արժանի Եսո պարզ գգացվում է, որ այդ կրոնավորը երգում է անկեղ-
ծությամբ իր սեփական ապրումները: Անշուշտ, նրա այս երգերի մեջ ես,
ինչպես առհասարակ մեր գուստնական սիրու տաղերի, մեծ աեղ է բռնում
սիրուհու մարմինը: Նա ես հավշտակված է կանացի գեղեցկությամբ, կնոջ
«պայծառ ու լուսատես պաակներով», «մորն ու շիտակչ հասակով, նա ես
սիրավառ դովքի է արժանացնում կնոջ լուսանման մանր ընդր գեմքը, սև մա-
ղերը, «շուրջ երեսին մաղերն ուր», շրթունքների ներսում «սկն ու արե-
գակ շարած» աստմեները, կարմիր երեսը, անգամ զունգզույն հագուստը,
մանր քայլվածքը,—մարմնի մի գովք, որ անպայման հնուց է գալիս, որ և
մասամբ գտնում ենք արդեն Գրիգոր Նարեկացու, ինչպես և հետագա ըն-
դր սիրո երգիչների ու գուսանների երգերի մեջ: Բայց մինչ մեր միստիկ
մեծ բանաստեղծը խորին ակնածությամբ և հոգևոր հիացումով տրոթում
ու երկրպագում է Սուրբ Կույսին, իբրև մի աստվածային անհասանելի,
անշուշտակ էակի,—մեր այս Երզնկացու համար իր սիրածը մի մարմ-
նավոր կին է, մի իսկական շարժված գեղուհի, որ գտնում է մեծ հի-
ացմունքի առարկա: Մի անգամ որ նա անսել է իր անձկալիին, այլևս սրտ
գեղեցիկ պատկերը չի հեռանում իր մաքից, և նա, այդ կրոնավորը, մեռւմ
է հարբած գրության մեջ: Երբ նրան հիմ աչքըս տեսաւ,—ասում է նա,—

Ձօրն ես ի յիւր սէրըն կենամ,
Թերակ հեռ իւր տեսուն զընամ,
Ձաչերս արեամբ հեռ իւր թանամ,
Ձիրայ հոգիս յիսնէ տարաւ:

Երբ որ անուշ հոտն յիս բուրբոց՝
Զիս ի խելաց շուտով թափեց.
Ի յայն պահուն սիրտս իմ եփեց,
Երբ իւր անսն ինձ երեւցաւ:

Ապա իր տեսած կնոջ նկարագիրն անելուց հետո՝ դարձյալ մեր առաջ
քաջ է անուամ նա իր հոգեկան վիճակը, որ ունի տարփալիի կողմից առանց
պատասխանի մնալուց:

Սա եմ կարօտ ի յիւր սիրուն,
Զինչ ծարաւած յերկիր ցողոյն,
Կամ զինչ գարնան անուշ քաժուն,
Թէ երբ հընչէ հողմըն հարաւ,
Քանի որ յիմ տեսաւ՝ զառեր,
Կենաց նարակն է ինձ հասեր,
Լացն ու հառաչն է դիս պտտեր,
Հոգու քաղիլ ու սրբտացաւ:

Թեպետ և Գրիգոր Նարեկացուց մինչև Գոստանգին Երզնկացիին երեք
գար ժամանակամիջոց է ընկել, բայց մենք, ցավոք, չունենք ոչ մի սխրու
հրդ, որ այդ երկար ժամանակաշրջանում հորինված լիներ, և նույնիսկ
չգիտենք էլ, թե արդյոք եղջիլ են ուրիշ սիրո երգիչներ ես՝ բացի գոստան-
ներից, որոնք միշտ էլ գոյութիւն են ունեցել: Սակայն քանի որ գեո չէք
մեռել կրօնական ոգին և Գոստանգիին ինքն էլ մի վանական էր, ուստի
Գրիգոր Նարեկացու Ողբերգութիւնից և Աստվածածնի երգից անցումը
Գոստանգիի սիրու երգին՝ կատարվել է: Ըստ երևույթին, ընականորեն,
Երևում է, որ այս բանաստեղծի սիրու երգերի վրա ազդեցութիւն է թա-
ղած գոստանականների հետ նաև մեր միատիկական բանաստեղծութիւնը:
Նա կիսը երգում է նման ձևերով ու հատկութիւններով, ինչպես միատիկ
երգիչն իր աստուծուն կամ իր պաշտած Ս. Կույսին: Կինը, թեև մարմնա-
վոր, ոչ աստվածային էակ, նրա համար հանգստ է գոյիս դադարաւան
պատկերով, միատիկական Սեր ու Լույս աստուծու հատկութիւններով:
Լուստ և արեգակի երգիչն իր սիրո առարկան ամենից առաջ երևակայում
է բնականորեն իրրե մի լուսատու էակ, իրրե մի արեգակ ու լուսին: Եթե
միատիկ երգիչ Գրիգոր Նարեկացին, խավարի մեջ նստած, գիժում է իր
Լույս աստուծուն և ասում, «Կամք քո յիս, և խառնը ինձ ճառագայթ»,¹
նույնպէս և մեր այս կրօնավոր տաղերգուն խառնարած սրտով՝ նստած է
կես գիշերին, և նրա տարփալին, իրրե մի լուսեղեն էակ լուսատես պա-
կերով, արեգակ ու լուսին, լույս է ծագում նրան, նրա աչքերին, և
լուսավորում նրա մտայն ու արարում հոգին:

¹ Տղված է աղնա ձեւով: Ենթա տեքստը, ուղղւած եմ Ենթ տեքստ, որ է՝ իմ աչքից:

² Գրիգորի Նարեկայ գրչից վանականի Մտահնգութիւնք, Վննակ, 1840. Ող-
բերգութիւն. Բան Կն, էջ 167:

Ի յերկրի լինչ կայ նքման քեզ օրինակ,
Դու ի յերկնից լուսեղէնքն ես նքմանակ.
Դու տեսուի՞ց ես դու լուսին պատրի թամամ,
Որ իմ սըրտիս խաւարեալ լուս կու ձագես:
... Երբ ար դուն յորդարելով մանրաքայլես,
Ասեն՝ արե ձագեցաւ ի մէջ գիշերիս...

Այսպես և ուրիշ տողերի մէջ արժոււմ է լուսի համեմատութիւն:

... Իմ աչերուս լուս ծագեցաւ:
Երբ գունդգուն ելնէ փայլէ,
Ձերկիր ի յիւր լուսայն հալէ:

Դրիգոր Նարեկացին գիմելով աստուծուն՝ գրում է.

«Միայն թագաւոր ինքնակալ զօրեղ... գալստեանդ քոյ ալն ունիմ և
աղորձութեան փրկչիդ սպասեալ յուսամ. ի յոտս քո անկանիմ, և զպար-
ջապարիդ հեաա համբուրեմ...»¹ Կոստանդնի համար ևս իր սիրած կինը
թագավոր կամ թագուհի է.

Դու սուլթան ես, պէհըսապ շատ ծառանով,
Ձեռոսայիս ձայնըն գիտեմ որ կու կանչես...
Թէ լինէր որ գքեզ տեսնի առ յիս գալով,
Եւ խընդութեամբ ի դէմ դոյի քեզ սիրով.
Ի յերկրի երես դընի քեզ կոխելով,
Ու հոգիս անդ հոնէի յօժար կամով:

Այս գետնաքորչ սարկացուժը բռնակալ սիրո (այինքն՝ սիրական
կնոջ) առաջ, ինչ որ ընդհանուր է արևելյան ժողովուրդների բանաստեղ-
ծութիւնը, անշուշտ խորին հնութիւնից ի վեր հասուկ է եղել նաև մեր
գուսանական սիրո երգերին, և արանցից օգտվել է մեր միստիկ բանա-
ստեղծը: Բայց էականն այստեղ այն է, որ այդ սիրո բռնակալութիւնը
նույն կերպ ազնվացած է երկու գեպքում էլ. որովհետև ինչպես միստիկի
համար Սեր աստուծու ծառայութիւնը սիրով՝ մի փրկութիւն է, բովանական
է որ նա ողորմութեամբ քաղցր աչքով նայե իրեն, — նույնպես և մեր այս
սիրո երգչի համար նույնպիսի ծառայութիւնն ազատութիւն է.

Դու հուքմով փատիջահ ես քու ետսիբով,
Ծասիր կամ քո ձեռոս՝ զինքն ազատես.
Ըն ապառ եղեալ եմ այսօր յերկրի վրայ,
Թէ ձեռայ սրբտի կմով զիս տեսանես:

Ինչպես ու, միստիկը շարունակ զբաղված է աստուծով և փափուգում
է տեսնել նրան, նույնպես և մեր այս երգչի հոգուն հարտան իշխում է
սերը, և նա տենչում է իր սիրելիին ժեծ կարոտով, ինչպես տեսնեք վերե-

¹ Անդ, 42, էջ 171.

վում ընթացած աների մեջ՝ Միստիկի համար՝ աստուծուց բաժանված վիճակը՝
աղաճաւ է ջառնում անվերջ ողբ ու լացի. այսպես և մեր այս երգիչը հա-
ռաչում է արտասովում է, որ իր սիրունին հետեւ է իրենից, ինչպես տեսանք
վերնում, այլ և հետևյալ սողերի մեջ.

Դու քանի հեռացել ես այս քո գերուս,
Արտասուքն ի վայր թափես ի յաշերսու:

Միքելի կնոջ ներկայութիւնն աւ տեսքը միայն արեցնում է սիրո-
ւորին. և նա միայն մի խնդիր ունի.

Բուրաստանք ծաղկով ի լի տես թէ վառես.
Որ ի յիս անմահութեան հոռ կու բուրես.
Դու ծաղկանց ես թագաւոր վարդի գունով,
Ջիս ի քո դիմացդ ի փուշն յէ՞ր կու դառես...
Այ ուրաթ սլայծաւ աւ պառկեր լուսառես,
Ջիս աշերս ի քո սիրտու յէ՞ր կու դառես.
Դու գարնան քամի, ես ծաղիկ ծարաւած,
Իմ ծարաւ սրբոյս համար հոգմը հընչեց:

Միստիկ Գրիգոր Նարեկացու բարբ ձգտումն է անվերջ սիրով անբա-
ժանելի միանալ իր աստուծուն, նույնպես և մեր այս բանաստեղծն է փա-
փազում անվաճեան սիրով, անբաժան կերպով, լինել իր օրրածի հետ. որ
նրա համար մի տաճար, մի աստվածային տուն, մի սրբութիւն է միտերիկ
աստուծու հատկութիւններով՝

Թէ սիրտ ունի՞մ սէր անվրճար,
Որ բաժնելոյ այլ չըկայ կար.
Նա իմ հագոյս եղեր տաճար...

Այսպես մեր առաջին սիրտ երգի վրա, ինչպես համեմատութիւններից
կարելի է տեսնել, խիստ ազդել է մեր միստիկական բանաստեղծութիւնը,
և այդ ազդեցութիւնը հարատեւել և հետագա բանաստեղծների սիրտ երգերի
մեջ. նման ձևերն առաջացել են, հարկով, մասամբ նաև երկուսի. Գրիգոր
Նարեկացու և Կոստանդին Երզնկացու երգած նյութերի էութիւնն նմանու-
թիւններից, մեկի համար հոգի սեր առ աստված, մյուսի համար նույնպիսի
սեր դեպի իր տենչալին, և երկուսի համար եւս հոգեհոգոր ձգտումն միա-
նալու նրա հետ, որին սիրում է ինքը. Միստիկի միացումն իր աստուծու
հետ լինում է ազոթողի մահից հետո. այդպես չէ, հարկով, մեր սիրերգուն
համար. այդ կլինի միայն այն ժամանակ, երբ նա իր սիրածի հետ խըն-
ջույքի-ուրախութիւն կնստի.

Ջնայ երբ ի խաղ տեսնում նազով,
Լուսին սուրաթ սիւն մազով,
Ես ի յիւր դէմ ելնեմ առզով,
Եւ թէ ծառայ լինի՞մ կամով,

Յայնժամ լինի լայն մեղ նըշան,
ծրբոր խըմեն չինի¹ շիշան,
նըռոն գունոզ² զգնին ուսշան,
Որ քու տեսուտ նըմանեցու:

«Մէջլիս», «ժողով» — խնջույք, ուղախոթյուն, զինի, նվազ ու երգ, լայն ու խաղ անբաժան են սիրու երգերից, — դա հարօտնիքն է, — ինչպես նույնը գանձում ենք նաև հոստանդնի Վարդ ու սոխակի սիրավեպի վերջում: Այդ ժամանակ է միայն տեսնում նա կատարյալ և անբաժան սերը: Կոստանդին երգնկացին, հարկավ, չի ունեցել այդ ուղախոթյունը. նա կոստանդին վանական էր: Բայց որ նա ունեցել է, ինչպես տեսնում են, իր քորտի հատորը, որին հ երգել է նա, այդ տնկասկած է: Նա անհույս սիրով սիրել է և երգել նրան, — անպայման ավելի մեծ թվով բանաստեղծություններին մեջ: Անհույս սիրով մինչև կյանքի վերջը սիրել և երգել է իր հայակավոր լուսարային նաև մեծանուն իտալացի բանաստեղծ Պետրարքան (1374—1374 թ.), մեր հոստանդնի կրտսեր ժամանակակիցը: Բայց ճշգրտաբերությունը այս երկուսի կյանքի մեջ, իտալացի քերթողը, որ կոստանդին էր գործել իր անհույս սիրո համար, մի փառապանք երգել, ամենքից հարգված ու գովված հենց իր քնքուշ զգացմունքով լի բազմաթիվ շնորհալի երգերի համար, մի դափնեպսակ երգի, որի կյանքի մանրամասնությունները հայտնի են և որի գրական գործերը մնացել են: Իսկ մեր հոստանդնի կյանքի մասին զբերված բան չգիտենք, բայց եթե այն, որ նա իտալացի բանաստեղծից առաջ արգեն շնորհալի կերպով երգել է սեր, և որ նա նույնպես դժբախտ է եղել, բայց ավելի ևս նաև իր սիրու երգերի համար, որոնք, ինչպես և նրա մյուս քերթվածները, մնացել են ոչ բոլորը: Նրա կյանքն իր մեջ ներկայացնում է հայ ժողովրդի ընդհանուր կյանքի պատկերը:

14. Բագինք ամենակամ մշտի, աշխտերին ունայնություն և մեկվամ մտքին: — Կոստանդնի պայանի ձայնով երգերը նրան ավելի ևս վիշտ են պատճառում, և նա իր գործով ու գաղափարներով մենակ է մնում իր ջբջանի կեղծավոր մարդկանց մեջ, որոնք հորձակվում են նրա վրա, հիմար ու խելագար անվանում նրան: Նա ոչ մի մեխիթարություն, ոչ մի սիրելի մարդ չունի. սիրելիներն անգամ խորթնում են նրանից: Նրա տի (էջ 147—149) քերթվածը, — «Բանք իստի ի ժամ արամութեան, զոր գրեցի առ լուսն (ն վա)ս(ն) օուտ եղբարց, զոր վիրաւորեցայ», — ամբողջապես դուռն արաստեղծով ողորկված անձնական վշտի մի սրտաճւղիկ հեծեծանք է: Միև կենսուրախ երգիչը մահերմական սեր էր որոնում մարդկանց մեջ. բայց չէր գտնում այն. նրա կյանքը չլուներ դիւրութիւն, քանի գնում ծանրանում էր. նա չէր վայելում հանգիստ և ուրախություն, շարունակ վիշտ ու նեղություն մեջ էր: Եվ նա խորտակվում է, ընկնում հուսահատության մեջ. մահավանդ որ վերջ չէր տեսնում իր ասնջանքներին:

¹ Ձգված է արձան ևնով շիշին, ուղղում եմ շիշին ըստ իմաստին:

² Ձգված է զգնուզ, ուղղում եմ զգունուզ ըստ իմաստին:

Ես քանի՜ հառաչ բերեմ
 Կամ ի սըրտէ կենամ ազար,
 Եւ յերակ զօրն ի դուստյ
 հոգօք մաշեմ զիս անդադար.
 Ես չունիմ հանգըստութիւն,
 'ա ուրախութեան ինձ չըկայ հար,
 Որ պահ մի հանգիստ տունուս,
 Կամ զուրանայ կեանքս զըժար:
 Զերդ ի ծով կամ տառանել,
 յերակ ծըփիմ յալիս խաւար,
 Եւ չըկայ եզր ի ծովիս,
 Կամ թէ՛ համբուս թէ՛զ կայ վըճար.
 Ոչ անիմ եւ սգնապան,
 յոյս 'ա ապաւէն ինձ կամ ետր,
 Որ ի յայս շատ ցընորէս
 լինէր խօսօք ինձ մըթիթար:
 Ոչ ունիմ մարդ սիրելի
 Ի (յընաանեաց) ինձ կամ օտար,
 Որ զըթայ սրտուհի ի յիս,
 Կամ աղիտայ զիս իր եղբայր.
 Ով սըրտով էր սիրելի՜
 Զգաւ հոռի յիտէ՜ 'ա հատր:
 Եւս օտարին ինչ մեղ զընեմ,
 Երբօր լինիմ յիրմէն աղար:

Այլևս ուրիշ միութարություն չէր մնում կյանքի ու բնության սիրով վառված հրեմտից երգչին, քայց եթե սթափվել իր արեւցությունից և տեսնել, որ «այս սուտ կենցաղս», այս «երազ» կյանքը չարժեք, որ մարդ զրա համար մտածուի լիներ. մտնալունդ որ զողի պես զալիս է ամենազոր և ամենասպան մահր, որ ոչ մի բանի մտիկ չի տալիս, զալիս հանկարծ որսում է ամեն մարդու և զերեվարում: Բանաստեղծն այսպիսով գիմում է աշխարհի աշխարհության ու մտնալուն ցավագոր երգին՝ անձնական վշտերի միութարություն. գտնելով զրա մեջ, քանի որ մահն է վախճան ամեն անհատական տանջալից կյանքի: Աշխարհն ունայն է ոչ այն պատճառով միայն, որ մահ կա, այլև որ չկա ոչ մի բարություն ու շահ, չկա սիրելի և տնկեղծ ընկեր, չկա իսկական վայելչություն, չկա կենդանի ոգի, նույնիսկ «մարդ» չկա.

Այս կեանքս է աշխարհ և ժողովանկ ենք մահու,
 Զունի մ'զ զըրունք բարութեան 'ե շահու.
 Երեզ է խաբող և խալալ՝ անցաւոր,
 Է սակաւ սիրելի և ընկեր նենգաւոր:
 Եւրցնէ՛ մեզ սիրճա զուտն ու անյ շատ նիշան,

' Խալալ—տաւաջ երկույթ:

Բայց է՛ ի հոծուկ գաղանի պէս ու շուն.
Նըստեալ է սաղի՛ սայ ի մեծ ջոժիաթ.¹
Հանել դի ոյինչ սուտ քաներն ի գիմաթ.²

Ջգինին որ բաժնէ՝ կայ ի ներս մահաւ դեզ,
Ոմանք որ խըմեն՝ արբենան ցեղ ու ցեղ.
Հոգւով են մեռած ու թուին կենդանի,
Ով որ հնք խըմել յայն գինուն շիշանի...

Եվ հոստանդինն իր ԺԴ (էջ 128—133) քերթվածի մեջ մեծ ուժով և ախրությամբ, բայց հանգիստ երգում է աշխարհի ունայնությունն ու մահվան գործած ժվերածությունները։ Նա չի վերգովում, գի կյանքը նրա համար արդեն անարժեք էր։ Մահը նրան ցած կապահոտեր, եթե նա մահով զրկվելու լիներ այն գեղեցիկ կյանքից, որ նա երազել էր լուսի շողոռներից և սիրո հրաշքից կերտված։ Նա ամեն բանի մեջ ամենասփոփ սեր էր տեսել, և իր համար սեր էր որոնել կյանքում, բայց փոխարենն առելություն էր գտել։

Ջայս ի յժվ հարցուկ լինիմ,
որ ինձ խրդաւ տար կամ կար,
Թէ գիւ է՞ր աշխարհս մէջն
հանց կու տաին թըշնամարտ.
Ջով սիրով ես ընդունիմ,
Թէ ի սըրտէ ինձ տայ խաղաւ,
նայ յեռե ինք յերեսաց
ցուցնէ գիր սէքն ու անկասար,

ԺԹ, էջ 145

Եվ մի անգամ որ կյանքի մեջ չկու սեր, հետեւաբար չկու և դեղեցկություն (սՋի ով որ սեր չունենայ՝ տու ինք չկայ դեղեցկութիւն), ապա թեկուզ ոչնչանա այն—անսեր, ապա կյանքը։ Անու թե ինչից էր ծագում նրա հանգստությունը մահվան և ունայնության մասին երգելիս.

Ես սիրով կամ կենդանի,
Կամ գորգորելի զի՛մ տերեւին.
Ու թէ սէքն յիսնէ զտարի,
նայ գիւ տանի հագմ ու քամին։

ԺԱ, էջ 116

Համանաբեն մեր այս սիրելի բանաստեղծն է 14-րդ դարի առաջին քառորդին 1304 և 1314 թվականներին ձեռագիրներին մեջ հիշատակված հոստանդինը, Երզնկայի վանքերում լուսարար եղբայր։ Կամ Վեդուր հայրը,

¹ Սաղի—հոսովակ.

² Զոժիաթ—խնջույց.

³ Չիմաթ—գին, արժեք.

ապա նույնինքը նաև ամիայնակեացա՝¹ Նա է, որ իր հոգևածիւթը կյանքի վերջին տարիներն անց է կացրել մի սառն ու մոռյլ խուցի կամ քարայրի մենավորության մեջ ախուր ու արատււմ, և անյուշտ այնտեղ էլ — շէնքերը հավիտյան խփել, երգելով վառ դուռն, լուսո, սեր:

16. Գուռամեղամ երգերի ձեռնամ ազգեցությունը:—Հասարակական և ընդհանրապես աշխարհական կյանքի ազգեցությունը մեր հին հոգևածիւթական կենսությունների—վանքերի վրա՝ քանի դնում՝ դորանում էր: Վանակա՜ն ներքից շատերը, ինչպես ասես: Ենք, 12-րդ դարի երկրորդ կեսին արդեն իսկապես անունով միայն կրոնավորներ են եղել. իսկ իրենց նիստ ու կացով, ապրուստով և հասկացություններով շատ էլ չեն տարբերվել աշխարհականներից: Այդպիսիների բերանից կրոնական երգերի հետ անբաժան են եղել նաև դուստնական սիրո տաղերը, բայց իրենք ըստ երևույթին տա՜կավին խոսելի են համարել այնպիսի բուն աշխարհական բաների հորինումը: Միայն Կոստանդինյն աշխարհիկ ոգուց դրդված՝ վերջիվերջո գոսանների սիրած նյութն էլ բանեցրել է ի պայթաղություն հետևողներին, որոնք նույնպես ընդունում էին մարմնի իրավունքը, բայց կեղծավորում էին: Մինչ այդ՝ դուստնական ուրախության և սիրո երգերի ազգեցությունը վանականների բանաստեղծության վրա՝ եղել է ավելի ևնական կողմից՝ ոտանավորի չափերով և սրու թվով մոտիմիների և պատկերների հետևողությամբ, ինչ որ ասեսում ենք արդեն Գրիգոր Նարեկացու տաղերի մեջ և, ոտանավորի նկատմամբ, նաև ներսև Շնորհալու երկերի մեջ՝ Կոստանդինյն երգնկացին էլ բնականորեն այդպես է վարվել նախ քան սիրո երգեր գրելը:

Ձարմանալի է, որ նրա բանաստեղծություններից ոչ մեկը հայրենի չափով չի, որ այնպես համախ կիրառել են Հովհաննես Երզնկացին ու մոտավանդ Թրիկը: Նրա սիրած չափն է մեծառոգ քառանյութ յամական ոտանավորը, որի սկզբում դնում է սովորաբար հստակ նույնիսկ երկավանկ անդամ՝ Սիրո բանքերից մեկը 11-ականան է՝ 3+4+6 անդամներով, ն մի երեք բանաստեղծության մեջ էլ բանեցրել է նա երկանդամ յամական ոտանավորը: Հորինում է շատ ութմիկ, ընդհանրապես ճիշտ պահելով ութմական շեշտերը, ինչպես վարվել են սովորաբար մեր հին բանաստեղծները:

Գուրվ հանդերին՝ պետք է ասել, որ Կոստանդինյն մի քանի բանքի քառառոգ տներ լառջին երեք տողերը կազմում է միանման հանգերով, իսկ չորրորդ տողը վերջացնում տարբեր հանգով, որ կրկնում է հաջորդ տների չորրորդ տողերի վերջում (aabb cccb dddb և այլն): Մի բանքի (քերթ. ԺԶ) տառջին տան չորս տողն էլ ունին նույն հանգը, որ կրկնվում է մյուս տների չորրորդ տողերի վերջում: Գուսանական երգերի նմանողությամբ են արված հանգերի այսպիսի կիրառություններն և՛, ինչ որ զրուում ենք նաև 18—19-րդ դարի աշուղական երգերի մեջ ևս:

¹ «(Թիշուլեթ) ընդ նմին (Գրիգորյան) և զհոգիս հայրն իւր զնստանդին միայնակեաց, որ բողոստ տալցինս թիւմբ զարդաբուէն: Մ. Գոստանդին, Կոստանդինյն երգնկացի, Վնեսահէկ, 1905, էջ 13 և հաջ.

² Մ. Ա. և Գ. Ե. Ե., Հայոց լեզվի տաղանթություն, Երևան, 1933, էջ 241 և հաջ.

16. Պարսկական բանաստեղծությունը մեկտեղելով արամեականությունը կտրուկումը: — Եթե կրոնական հանգամանքների հետևանքով միայն մեկական կողմից էին նմանում մեր գուսաններին, ապա այդպիսի բանաստեղծությունների բովանդակությունը խուսափում էին նաև քաղաքական տեսակետից: Սակայն մինչև այժմ դեռ չի պարզվել հայկական և իրանական դեղձերի գրականությունների հարաբերությունը: ըստ մեր և ըստ բովանդակության մեր վերածնունդի շրջանի առաջին երեք և ոչ հաջորդ դարերի ընթացքում: Բայց այդ չի նշանակում, թե մեր քերթողներն անծանոթ են մեացել պարսկական երգերին: Ապրելով իբրև հարևաններ և միևնույն տերություն մեջ, հայերը հնագույն ժամանակներից արդեն յուրացրել էին իրանական վիպական բանահյուսության շատ հատվածներ, իսկ հյուսանդին Երզնկացու ժամանակներում իրանական շրջիկ գուսանները մոռացել էին գործում և Հայաստան: Մեր այս բանաստեղծին իր ԺԴ (էջ 128 և հաջ. «Բանք յաղագս անցաւոր մեծութեան...») քերթվածի վերնագրից հետո գրել է հետևյալ ծանոթությունը. «Այլ մին [նստ]ել կայր ու Շահնամայ աւեր ձայնով. նայ եղբայրք խնդրեցին, թէ ի Շահնամայի ձայն մեզ ոտանաւոր ասայ. ես շինեցի գրանքս զայս. ի Շահնամայի ձայն կարդացէք»:

Այս հետաքրքիր ծանոթությունից իմանում ենք, որ իրանական աշխարհիկ բանաստեղծությունը 13—14-րդ դարերում թափանցած է եղել անգամ մեր վանքերը, և եղբայրները, այսինքն հոստանդին կրոնական վանականները սիրով լսելիս են եղել Շահնամայ և նույնիսկ ցանկացել են դրա «ձայնով» ոտանավոր լսել հայերեն: Շահնաման, հարկով, միայն Երզնկայի վանքերում չի ասվել, և ասվել ևս սիրով մեր աշխարհականներն են այն դարերում լսել Պարսից այդ մեծ դիցազներգությունից: Պետք է կարծել, որ Հայաստանում Շահնաման «ձայնով» ասել են պարսկերեն լեզվով: Այս մեծ քերթվածից հայերեն հին թարգմանություն, այն էլ ոտանավորով, հայտնի չէ. հատվածները անշուշտ կառավարել են հայերեն, ինչպես դեռ ևս մեր օրերում էլ պատմում են հայերեն: Կոստանդինի հաղորդածը՝ «ասել ձայնով», թի ձայն կարդալ՝ վերաբերում է ոտանավորին, քանի որ նրանից խնդրում են հորինել ոտանավոր թի Շահնամայի ձայն, այսինքն այնպիսի չափով, որ կարելի լինի Շահնամայի պես առգանել: Եվ նա հարմարում է մի քերթված 11-վանկանի տողերով. ինչպես Շահնաման է, անուպետյան ոտերով, ոչգրից ունենալով մի յամբ: Այսպիսի մի չափը, որ գործադրել է նաև Գրիգոր Նարեկացին, շատ հետո է Շահնամայի չափից, բայց կարելի է «ձայնով» ասել, թի ձայն կարդալ ինչպես Շահնաման: Կոստանդինի քերթվածի բովանդակություն է աշխարհի ունայնությունը և ոչ թե աշխարհիկ վիպական նյութ: Ուրեմն պարսկական մեծ դիցազներգությունն նմանողությունը եղել է լուկ ըստ մեր:

Տես չորրորդ հավելված՝ «Շահնամայի ձևական աղղեցությունը»:

17. Վերածնունդի գրականությանը առաջին կտուրը տեսնել է մաս երեք

¹ Գրգորի Բանաստեղծի մենդան հաղագսային հավելված ժողովածու, Երևան, 1934, էջ 127—223. «Բանամ Զուլ, հայ իրանական վեպ, գրի առավ Արտաշես Բարեգյան»:

հայրուր տարի, 11-րդ դարի առաջին տասնամյակներից մինչև 14-րդ դարի առաջին ջառքը, մինչև Կոստանդին Երզնկացին։ Այնուհետև մոտ 76 տարի գրականությունը հայտնի չէ մեզ մինչև Առաքել Սյունեցի և Բաղդեցիք— Եկեղեցաբան քանաստեղծությունը։ Եթե մի հետադարձ հայացք ձգենք այս երկուր ժամանակաշրջանի գրականության ընթացքի վրա, կտեսնենք, որ, չնայելով հայերի անբարենշող ջաղաքական վիճակին, մի իսկական ինքնուրույն վերածնունդային աշխարհիկ միտքը թափանցում է հայ հեղեղեցական գրականության մեջ։ Մեր քանաստեղծությունը՝ Գրիգոր Նարեկացու Ողբերգությունից ի վեր՝ ձեռք է բերում նոր գրական տեսակներ և բազմաթիվ նոր թեմաներ—կրոնական միասիրական զգացումներ ու մտածություններ, հայրենասիրություն, ընտելյան սեր ու երգ աշխարհի ունայնություն ու մահվան զաղափարը, անձնական հանգամանքներ, բուն ժողովրդական աշխատավոր զասի իրական կյանքն ու աշխարհայացքը, սոցիալական խնդիրներ, ժողովրդի զանազան դասերի հարաբերությունն ու դասակարգային պայքար, ժողովրդային հղած դրությունից, աշխատավորի բողոքը սոցիալական անհավասարության դեմ, երգիծանք վատ կարգերի, աղաքյին ջաղաքական ձգտումներ, կրոնական երկբայություն, ազատախոսություն և այլն։ Ահա մի նոր աշխարհայեցողություն, կրոնական կաշիւնդումից ազատություն, որ հետզհետե, թույլտ զանազա և ընդհատումներով, արտահայտված ենք զանում մեր գրականության մեջ։

Որ մեր քանաստեղծությունն այսպես շուտ, եվրոպականից շատ վաղ է թոթափել միջնադարյան ոգին, դրա պատճառը պետք է տեսնել անյուշտ ոչ միայն ցեղի ընդունակ բնավորության ու նրա այն մեծ շարժման մեջ, որ, ինչպես տեսել ենք, ունեցել է 10-րդ դարում, այլև իր հայրենիքի դրություն մեջ։ Բացի արևմտյան քրիստոնյա ազգերից, հայերը շփվում էին նաև արևելյանների հետ՝ պարսիկների և թուրքների, Թուրքիա իրանական և հայկական բանաստեղծությունների հարաբերությունը և առանձնապես իրանականի ազդեցությունը մեր վրա ըստ մեկ և ըստ բովանդակության, ինչպես վերևում ասվեց, զեռ չի ուսուցանալով, բայց թողնելով զարգ է, որ մեծ է եղել արևելյան ժողովուրդների կուլտուրական ազդեցությունը հայկական ջաղաքային և ընդհանրապես հասարակական կյանքի վրա, հետևաբար անպայման նաև զրականություն վրա։ Այս ներքին և արտաքին հանգամանքների շնորհիվ ահա մեր քանաստեղծություն մեջ լինում է մի կատարյալ հեղաշրջում. որ ընկնում է Պրովանսի մոտավորապես Դույնպիսի բանաստեղծություն հետ միաժամանակ, հարկավ, Պրովանսից անկախ, քանի որ մեր բանաստեղծությունն իր նախապատրաստությունը կյանքի մեջ ունենում է 10—11-րդ դարերում, երբ Ֆրանկների հետ հարաբերություն չունեին հայերը։ Հաջորդ 12-րդ դարի վերջում և 13-րդի սկզբում միայն, այն էլ Արևելքում ունեցած շփումով, նոր զեռ մտավոր շարժում էր սկսում առաջ զուլ Խալիֆայում և Ֆրանսիայում, ուրեմն՝ մերից բավական ուշ, Բացի այդ՝ մեր բանաստեղծությունը զարգացման ընթացքը տարբեր է լինում եվրոպականից։ Առնենք Ֆրանսիականը և սիրո քերթվածները։

Պրովանսի բանաստեղծությունն ընկնում է։ Այնտեղ, ինչպես և Հյուսիսային Ֆրանսիայում, բանաստեղծները պարագլուս են արվեստակյալ

շինծու ձևերով. միշտ միևնույն ընդհանուր գաղափարներով, կնոջ պաշա-
տուհիի ու զեղեցիկության մի գովքով միայն, այն էլ քաբացած, ավանդա-
կան դարձած ու դժվար հասկանալի խրթին արաւայտությաններով և
սասնավորի բարդ, խճճված տեսակներով: Ձկա անհատական զպացում, չկա
բնության սեր. ավելի ու ավելի լուկ դատողության մի բանաստեղծություն,
մառվոր վարժությամբ հորինված: 14-րդ դարի առաջին քառորդից, — ու-
րեմն մեր հաստանդին նըղնկացու ժամանակից, — նույնիսկ կանոն է դրվում,
թե սերը չլիա՞ք է սովորական ձևով երգել, այլ միայն այլաբանությամբ,
և թե կանանցից միայն Ս. հուլյսին և մյուս սրբուհիներին կարելի է երգել:
Ենթանց զոված կինը միայն կնոջ գաղափարն է, նրանց տարփանքը՝ մի-
այն տարփանքի գաղափարը. ամեն ինչ նրանց գլխով անցնում է իբրև
վերացական շինվածք և ոչ նրանց արտով իբրև կենդանի հուլյզ: Անու թե
ինչպես են բնորոշում Պրովանսի և Ֆրանսիական սերը բանաստեղծությունը
14 և 15-րդ դարերում:

Մեր սիրո երգը, — այս ենք առնում միայն, — բուրբուլին ուրույն և
ավելի հաջող ընթացք է ունենում, 10—11-րդ դարում արդեն լինում է
Աստվածածնի կրոնական գովքը գուստանական սիրերգի մոտիֆներով. ապա
վարդ ու սոխակի պառկերով փառաբանվում է սիրաբորբոք տարփանքը.
13-րդ դարի վերջում կամ 14-րդի սկիզբներում այդ երգն ազատվում է
այլաբանությանից, և եթե հետագայում ևս Աստվածածնի անունով են սի-
րերգում կամ վարդ ու սոխակի պառկերով կամ այլաբանությամբ ևս գրում
են, այդ ոչ թե նրա համար, որ թույլատրված չէր բացահայտ երգել սեր,
այլ որ այլաբանական ձևը դուր էր գալիս կրոնավորներին, իսկ եթե
Աստվածածնի անունով են սիրերգում, այդ այնպիսի վճիռ աշխարհիկ երգ
է լինում, որ բանաստեղծները հայանում էին, թե կուգե՞ն՝ աշխարհիկ սեր
հասկացե՞ք: Մյուս կողմից՝ բանաստեղծությունը 12-րդ դարից սկսած ձգ-
տած է ազատվել կաշկանդանքից, խրթնաբանությաններից ու օծածուկ
ձառերից, և Դանտեից մի դար առաջ արդեն մեզնում կարիք է զգացվում
կենդանի խոսակցական լեզվով գրելու: Բայց որ գլխավորն է՝ ինչքան էլ
շատ միակերպություն կա մեր սիրո երգի մեջ ևս, բայց և այնպես 15—16-րդ
դարերում մեր այդ երգը, ինչպես առհասարակ տաղասացությունը, ոչ մի-
այն չի ընկնում. այլ, ընդհանրապես, ավելի զարգանում, ուռճանում է և
սանդղվում են շատ ընտիր ու փայլուն բանաստեղծություններ: Առաջ են
գալիս վիպական քերթվածներ՝ կրոնական ու այլ բովանդակությամբ, ինչ-
պես նաև սիրավեպ առանց որևէ այլաբանության, նովելաներ և այլն:
Սրանց կողքին, շատ վաղ դարերից ի վեր, մինչև վերջը միշտ գոյություն
է ունեցել գուստանական բերանացի երգը, սիրո և սիրախոթյան տաղը,
բուրբուլին զերծ որևէ կրոնական կաշկանդանքից և այլաբանությանից:
Բարեբախտաբար գրի առնված մնացել են գուստանական շաղկերենները,
որոնք մեր քնարերգության գահար վարդերն են: Սրանց մասին էլ կոնս-
նանք այս գրքի շարունակության մեջ:

Բայց նախ քան այդ մի հայացք ձգենք մեր եկեղեցական գրականու-
թյան վրա:

¹ Histoire de la Littérature française par Gustave Lanson, Paris, 1899, էջ 84 և հաև.

1. Ավերմուսեմբերի դարերը:—Մենք թուկոխում ենք այժմ մի պատմական ընդարձակ շրջան, որ կամ ռեմանթ է, կամ սակավ ծանոթ, դի մեր պատմաբանները խուսափել են ընդհուպ մոտենալու, մեր ժողովրդի այս հինգհարյուրամյա պատմութիւնը 14-րդ դարի առաջին տասնամյակից մինչև 19-րդ դարի սկիզբները: Կարծես մի մեծ մոռում ու ախկոծ տարածութիւն են կազմում այդ դարերը, որոնք, չնայելով իրենց փոքր հանգրժաններին՝ ազնուալի հետևանքներ են ունեցել մեր ժողովրդի համար, ավելի ևս չարաչար, քան արարակաւ, սելջուկյան և թաթարական բռնատիրութիւնները: Այստեղ կարող ենք և կարևոր է միայն ընդհանուր կերպով գծել մեր երկրի ու ժողովրդի շարաքաստիկ վիճակն այս մեծ շրջանի առաջին դարերում:

Ամենից առաջ աչքի է ընկնում իշխող տոհմերի և իշխողների հարապոհումը գրութիւնը, որին ընկերակից էին հաջորդող պատերազմները, ուստի և երկրի հարատև ավերումն ու ժողովրդի ավելի ևս կեղծքուսներն ու քայքայումը: Թաթարներն ընդունում են մահմեդականութիւնը, և ընդհանրապէս այնքա քաղաքական չէին դնել քրիստոնյա հայերը: Մուսուլմանների կողմից տեղի էին ունենում սաստիկ ճնշումներ: Շուտով, 14-րդ դարի երկրորդ տասնամյակից, Պարսկաստանի մոնղոլական հարստութիւնը, որ տիրում էր նաև Հայաստանին, թուլանալով խաղալիք է դառնում զորավոր կռուվարիչների ձեռին և վերջապէս ընկնում է (1344 թ.), Առաջ են դալիս մի շարք ինքնագլուխ խանքեր՝ զանազան կողմերում: Հայաստանը փնտռում է Ատրպատականի իշխողների ձեռին: Խանքերը կարճատև տիրակալութիւններ դառնում են միմյանց և իրար հետ կռիւլով ավերում են երկիրը մինչև մեծ ավերիչ Լանկթամուրը:

Այդ ժամանակներում բարեհաջող վիճակի մեջ չէր նաև Կիլիկիայի հայկական թագավորութիւնը: Դադարել էր հայերի դաշինքը թաթարների հետ. երկրում մեծանում էին երկպառակութեանները. կաթողիկոսները հաճախ զինուկներ էին անում կաթոլիկ եկեղեցուհի, ինչ որ խռովութիւններ էր առաջ բերում: Դրսից անընդհատ հարձակում էին շրջակա մահմեդականները մասամբ այն պատճառով, որ հայերը չէին կտրվում արևմտյան սերութիւններից, թեև ոչ մի շահ չուներին նրանցից և չէին կարողանում մի ընդհանուր լիզու գտնել զոհեց Եգիպտոսի տերութիւնի հետ, որի ձեռով և վերջիվերջո 1375 թ. ընկավ այն կողմերի հայկական անկախ թագավորութիւնը:

Նույն տարիներում Հայաստանին տիրում են երկու թուրքմեն հաբատութիւնները—Ղարադղուշլի, որ է Սև ձոր (1378—1460 թ.), Կենտրոնը Թավրիզում, և Աղղուշլի, այսինքն Սպիտակ ձորի հարստութիւն (1378—1502 թ.), կենտրոնը Ամիգ (Դիարբեքիր) քաղաքը: Միաժամանակ և Զինդիգ խանի սերունդներից (Կանանց կողմից) Լանկթամուր 1380 թ. սկսում է Ջաղաթայի խանութիւնից (Տրանսօկսիանում—Բուխարայում

Սիր-Զորյա գեանից հյուսիս, արդի Ուզբեկստան երկրում) իր բաշտմանը-
նեքը Պարսկաստանի վրա, ավերում է նաև Առաքառականն ու Հայաստանը,
նրա բանակները 1387—1402 թ. մի քանի անգամ հեղեղում են Հայաստանը
և քաղաքանոց անում Արցախ, Սյունիք, Երևան, Կարբի, Բջնի, Գառնի,
Կողբ, Սուրմարի, Կողովոտ, Արենջ, Կարս, Վան, Մալաթիա և այլն, մասնում
են նաև Կիլիկիա, 1400 թ. անցնում են Անատոլիա Այստեղ իկոնիայի
(Հոմոսի) սուլթանությունը 1294 թ. Կարծանված էր թ-թարների ձեռով,
և կազմված էին մի շարք իրարուց անկախ իշխանություններ. 1209 թ. մի
թուրք ցեղապետ՝ Օսման անուանվ՝ իրեն հռչակել էր սուլթան և հեղհեռե
զորանալով ընդարձակել էր իր տերությունները Կարմիր ծովից մինչև
նեքի օսմանյան տերությունը, Լանկթամուրը 1402 թ. ջորդում է օսմա-
նյան թուրքերին ևս Անկյուրիայի մաս, և վերջապես կազմվում է նրա հըս-
կայական մեծություն տերությունը՝ կենտրոն ունենալով Սմրգանոց մայ-
րաքաղաքը:

Հանկթամուրի մահից (1406 թ.) հետո մեծ խռովություն է սկսվում
նրա ժառանգի և նվաճված տերությունների միջև. օսմանցիներն ու թուրք-
մենները վերականգնում են իրենց իշխանությունները, Ղարադուլունիների
ցեղապետը՝ Ղաթա Յուսուֆ՝ պատերազմում է Հանկթամուրի որդի Շահրու-
հի դեմ (1405—1447 թ.). ապա նույն պատերազմը շարունակում է Ղաթա
Յուսուֆի որդի Իսքանդարը (1420—1437 թ.), մինչև որ դառնում է տեղ
Ատրպատականի և Հայաստանի մեծ մասին՝ կենտրոն ունենալով Քալբիզ
քաղաքը: Իսքանդարից ապստամբում է իր եղբայր Ջհանշահը (1437—1567
թթ.), և իշխում է նաև Հայաստանի մեծ մասի վրա (Այրարատ, Սյունիք,
Վասպուրական և ուրիշ կողմեր): Մի անժամանակ համեմատաբար խաղա-
ղում է երկիրը. Ջհանշահի որդին իբրև ընդհանուր հյուսակալ Հայաստանի
և այլ երկրների՝ նստում էր Նախիջևանում՝ իր ձեռի տակ ունենալով
կառավարիչ բեգեր Երևանում, Վանում, Տփղիսում և ուրիշ տեղերում:
Բայց շուտով սկսվում են պատերազմներ Աղղուլունիների և Ղարադուլուն-
իների միջև, հաղթում են Աղղուլունիները 1469 թ. և տիրում են նաև
Առաքառականին և ամբողջ Հայաստանին ծանր լծով: Նրանց իշխանու-
թյունը, սակայն, երկար չի տևում:

Սեֆյան տոհմից Շահ Իսմայիլը (1502—1620 թ.) Շարսուրում ջարդում
է թուրքմեններին, նվաճում է ամբողջ Պարսկաստանը, մայրաքաղաք դարձ-
նում և Քալբիզը, Իշխում է Սեֆյան հարստությունը (1602—1736 թ.):
Այս նոր պարսկական տերությունը արևմուտքից սահմանակից է դառնում
օսմանյան տերության հետ. սկսվում է դարավոր պատերազմ օսմանցիների
ու պարսիկների միջև. Շահ Իսմայիլի օրով հենց օսմանյան տերությունը
կցվում են Հայաստանից Կարնո, Կամախի և Մշու գավառները: Բայց երկ-
րիս պատերազմի ընթացքում Հայաստանի զանազան մասերը հաճախ մե-
կից մյուսին են անցնում մինչև Շահ Աբաս թագավորը (1587—1628 թ.) և
հետո՝ Երեմյա էլ օսմանցիները տիրում են և ամբողջ Հայաստանին, բայց
արևելյան Հայաստանն ընդհանրապես մնում է պարսկական իշխանու-
թյանը:

Այսպես՝ այս երկու հարյուր և ավելի տարիների ընթացքում Հայաս-

ասանում իշխել են զանազան տոհմեր՝ մանդալ ու Թուրքմեն, Թուրք ու պարսիկ—որոնք ժահնգական, Թշնամի միմյանց և լավելի ևս հայերին Պատերազմները գրեթե անընդհատ էին. նույն տոհմի իշխողներն անգամ հաճախ միմյանց դեմ էին ելնում, և Հայաստանը շարունակ դառնում էր պատերազմների ասպարեզ։ Մահմեդականները, որ վայրագ անգթությամբ կոտորում էին միմյանց ևս, լավելի ևս մեծ դժգոհությամբ էին վերաբերում դեպի քրիստոնյա հայերը, որոնց իրենց Թշնամիներն էին համարում կոզոզ կոզմերը։ Ուստի սուր ու կոտորած, ավեր ու լավեր միշտ կախված են եղել անպաշտպան հայ ժողովրդի զլխին։ Ոչ միայն կանկթաժուրը, այլև ուրիշները մասնաշաղկապ կոտորածներով բնաջնջում էին ժողովրդին, գերեզմարում, մի տեղից մյուս տեղը քշում։ Բնակիչներն իրենք էլ զլխակորույս դուրս էին գալիս իրենց բնիկ երկրից, դնում փոքր Ասիա, Կ. Պոլիս, Բալկաններ և այլն ալիքի մեծ բազմություններով. քան սելջուկյան և Թաթարական արշավանքների օրով։ Ալիքի սուկալի է լինում զրությունը, երբ հին պատերազմող բնակալիների սովորությունները հրամայում են ժողովրդին գաղթել երկրից դուրս, իրենց ետևում այրելով, ավերելով ամենայն ինչ, որպեսզի հետապնդող Թշնամին միայն ամայի երկիր գտնի։ Քանզում են քաղաքները. գետնի տակն են մանում Դվինի, Անիի նման վաճառաշահ կենտրոնները. ոչնչանում է արդյունագործությունը, գրեթե դադարում տոնտուրը։ Պակասում է հողագործությունը. մշակված, բերրի դաշտերը խոպանանում և ամայի դառնում։ Չորանում, արմատախիլ են լինում այգիներն ու պարտեզները։ Փոքրանում է երկրագործ հայ ժողովրդի թիվը. նրա տեղը հետզհետե բռնում են վաչկատուն Թաթարներ, քոչվոր Թուրք ու ջուրդ ցեղեր, որոնք երկար ժամանակ դեռ չեն դառնում նստակյաց և քոչվորությամբ ավերում են շեն ու մշակված հողերը, հաճախ հափշտակում անպաշտպան քրիստոնյա ժողովրդի ձեռից այգիներն ու տները, կըրկընվում են համատարած սովերը։ Մյուս կողմից՝ սովալլուկ ու սերկ ժողովուրդը տառապում է կողոպտիչների և հարկահան կոչված հարստահարիչների ձեռքի։ Օսմանյան երկրում ժողովրդի համար մի պատուհաս է դառնում նաև զմանկաժողովա տասնը։ Այս ամենի հետ շարունակվում են կրոնական հալածանքները և՛ մուսուլման կառավարիչների, և՛ ֆանատիկ մահմեդական ամբոխի կողմից. փակում կամ քանդում են եկեղեցիները, ստիպում են մահմեդական դառնալ, և թշվառ ժողովուրդը հաճախ բռնի հավատափոխ է դառնում. տեղի են ունենում նաև բազմաթիվ նահատակություններ կրոնի համար։

Այսպես ահա հայ երկիրն ապրում է մի զրեթե անընդհատ փոթորկահույզ վիճակ և վերջիվերջո մի սոսկալի անկում, տնտեսական ու կուլտուրական։ Հայաստանի պատկերն անգամ փոփոխվում է թե ազգագրորեն, ըստ բնակչության ցեղերի, և թե նույնիսկ ըստ աշխարհագրական անունների, իսկ ժողովուրդը հետադիմում է ըստ ամենայնի։ Այսպիսի զրությունն առաջ է եկել հետզհետե, աստիճանաբար, և մեր պատմաբանները պետք է դեռ նոր պարզաբանեն այս աստիճանական անկումը բոլոր մասերում ևս։

հանապահ ոչնչացումը կամ աննշան դրուժյան վերածվելը. ինչպես, օրինակ, Սյունյաց մեծ իշխանաւթյան Օրբելյան տունի, որ սպառվել է 1438 թվականին: Ավելի ևս հարեւր է իմանալ մեր կուլտուրայի—լուսավորութեան ակութների—վանքերի վիճակը և՛ նյութական, և՛ կուլտուրական կողմից 14—17-րդ դարերում և հետագայում:

2. Ունիթոսեական գրեկեանություն և լատինաբան ազնւոյն հայեցում:—Այս ավերմունքների մեծ շրջանի առաջին դարում հայոց վանքերը քակահարաբ դեռ թուրքովին ընկած չէին: Նրանք էին, որ դեռ շարունակ հակադրում էին Կիլիկիայի իշխանների և բարձր հագնորակմանության ձգտումին՝ քաղաքական կառավարչական կրօնական գիշերներ անելու կաթոլիկ եկեղեցուն: Հոռոմե արեւելյան հայ վանականների դիմադրութեանը խորտակելու համար մի նոր միջոցի է գործում. նա պարսկական մոնղոլ հարստութեան թուլացման սկիզբներում հենց՝ 1319 թ. քաղաքիներ է ուղարկում Արեւելքը՝ Հիւնուս ևն Մարաղայի լատին եպիսկոպոսութեանը՝ կենսաբան ունեւանալով մայրաքաղաքը՝ Սուլթանիտ: Հայ վարդապետները սկզբում հետաքրքրվում են լատին եպիսկոպոս Բարթոլոմեոսի (մեռ. 1333 թ.) ոչ թե կրօնական քարոզներով, որոնցով նա հռչակված էր այն կողմերում, այլ նրա քնադատական հմտութեաններով: Այդ մասնակ դեռ ծագված դրութեան մեջ էր Վայոց գավառում Գալիեճորի (Գլաճորի) վանքը, որի մասին խոսվել է վերեւում. նրա վանահայր Յսայի Նչեցին, որ իր աշակերտների մեջ քարթեցրել էր գիտութեան սեր, թույլ է տալիս նրանցից մեկին՝ Հովհանն Բունեցուն 1324 թ. գնալ հիշված լատին եպիսկոպոսի մոտ՝ նրա նոր գիտութեանը յսելու և լատիներեն սովորելու: Քանեցին հրապարկում է կաթոլիկ քաղաքից ու զլատին աստվածաբանութեան արուեստակցալ ձեւերից, հարում է կաթոլիկ եկեղեցուն և մի քանի ընկերներով 1330 թ. հաստատվելով Նրաշիկի Ապրակաւնիս կամ Ապրաւնիսի վանքում՝ սկսում են քարոզել միացում կաթոլիկ եկեղեցու հետ: Նրանք ունենում են հետզհետեւ մեծելու ու ավելի հետևողներ Նախիջևանի և Մահալիի գավառներում. ստեղծվում է կաթոլիկ եկեղեցու հետ միասնալու հոսանքը և միացումը զործնապես կամ ավարտութեանը, որ հայտնի է լատիներեն ասելութեան թյունն անունով:

Մենիթոսները զործում էին թե քնադատից քարոզներով և թե գրովոր կերպով: Մի կողմ թողնելով և նույնիսկ արհամարհելով հայոց գրականութեանը, անարդելով ամեն ինչ, որ հայկական է—մեւ, սովորութեան և այլն, նրանք լատիներենից թարգմանում էին կաթոլիկական ոգով կրօնական գրքեր, մկնութեաններ, քարոզներ և այլն, նույնիսկ լատին ծիսաարարներ, երբեմն և ուրիշ բովանդակութեամբ գրքեր, որոնցով տարածում էին հայերի մեջ Արեւմուտքի սքոլաստիկական ուղղութեանը ու գաղափարները: Այս ունիթոսական գրականութեանը, հարկավ. գրական արժեք չունի:

Ունիթոսների նախանձախնդրութեանը լատին եկեղեցու համար այն աստիճանի է հասնում, որ եթե հնար ունենային, հայոց լիզուն կփախարիներին լատիներենով. բայց որովհետեւ այդ անել անկարելի էր, ուստի նրանք հայոց գրական լիզուն ձեւում են բառ լատիներենի. կիրառում են նորա ստեղծ հնդկական ու խոնարհման ձեւեր, նոր անասկի նախդիրներ, բառերի

լատինաձև շարադասութիւն ու համաձայնութիւն, լատիներենի հետևողութեամբ կազմված նոր բառեր և արտահայտութիւններ և այլն: Այսպիսով առաջ է գալիս մի «աւարօրինակ լեզու», մի լատինարան հայերեն, որ բացի հայոց լեզուն խանգարելուց ոչ մի բանի և ոչ ոքի պիտանի չի եղել: Այս ունիթոտական աղետա լեզուն իր գրականութեամբ հանգրծած բավական գործածութիւն է ունեցել և երկար է տևել, մինչև հռոյնիակ Միթրարյան միաբանութեան հիմնադիր Միթրար Սեբաստացին, որ և 1721 թ. առաջին անգամ Վենետիկում տպագրել է ավել Պետրոս Արագոնացի քարոզչի «Առաքինութեանց գիրքը...»: «Նորում [= յորում, Մ. Ա.] նախ քննենք զգոթանց առաքինութեանց...»: Անգլոմանցիալ [= թարգմանեալ, Մ. Ա.] ի լատինականէն ի հայ բարբառ, ի գաւառն Նախիջեանու, ի վաղնջուց ժամանակաց, Իսկ աժմ ի յոյս ամենցիալ [= ամենալ, Մ. Ա.] աշխատասիրութեամբ և սրբագրութեամբ տնտն Միթրարայ վարդապետի Սեբաստացույ Աբրայ հայր կոչեցելոյս: Այս դեռ սրբագրված լեզվով էլ Վենետիկում 1772 թ. կատարվել է դրա երկրորդ տպագրութիւնն էլ, որի մեջ հիշվում է. Թի թարգմանութիւնը եղել է 1339 թ.:¹

8. Հովհան (Տովմե) Որոտնցի և վանեկացի զարոցներ:—Ունիթոտների հայրենամերձ և ավանդուրաց անգուսպ գործունեութիւնն առաջ է բերել հեղափոխներ, խռովութիւն, և բնականաբար չի մնում առեւնց զորեղ հակազդեցութեան, որ ունենում է իր բարերար հետնանքները ոչ միայն հայոց եկեղեցու համար, այլև ընդհանրապես կուլտուրայի, լուսավորութեան և մասնավորապես գրականութեան նկատմամբ: Տաթևի, Գայլեձորի (Գլեձորի) և մի քանի ուրիշ վանքեր, որոնց մեջ դեռ շարունակվում էր հայկական ուսումը, իրենց աշակերտներին կրթում էին լինելու ոչ միայն ուսումնասիր, այլև հայրենասիր, և անաղարտ պաշտանելու հայոց լեզուն, ինչպես և ազգային եկեղեցին իր ավանդութիւններով: Նրանց աշակերտներն ահա հակառակ են ելնում ունիթոտներին և՛ բերանացի, և՛ գրավոր քարոզներով: Այսպիսիների մեջ առաջին տեղը բռնում է Հովհաննես (Յովհաննէս) Որոտնցին, Կաթիկ մակառնում (1315—1388 թ.):² Նա Օրբելյան առհմից էր, բի գաւառէն Որոտնոյ ի դեղէն Վաղանշնու՝ որքի մեծի իշխանին Իւանի, որ էր ի զարմէ առաջին իշխանացն Սիւնեաց, յորմէ Վասակն էր... յոյժ իմաստուն և գիտնական հին և նոր Կաթկարանաց, լուծիչ Աստուածաշնչի մարից և արտաբնոց:³

Գրիգոր Տաթևացին ևս իր ներբողյանի⁴ մեջ գրում է. «Գոյով նորա ազատ աշայազատ յազնէ Սիսական բնիկ Հայկազնի. Կաւառաւ Որոտնէի իշխան ազգայ, ախրելով բազմաց և փարթամ գոյիցն: Օրբելյանէրը վաղուց իրենց համարում էին Սիսական առհմի ժառանգներ, ուստի զարմա-

¹ Զորբ, «Հայկական ժառանգութեան», Վենետիկ, 1863, էջ 49:

² Այս թվականն է դնում Մ. Օրմանյանն իր «Ազգագրական» մեջ:

³ Պատմութիւն Հանդ-Քաւառայ և յաջորդաց իւրաց, արտատւ Քովմա վարդապետի Մեծաբնոյ. Փարիզ, 1860, էջ 14 և հաւ. Յովմե է Մովսէս Կաթկառնաբնոց «Ազգական» պատմութիւն Բ. հատարէն կէս:

⁴ Գրեթէ քաղաքական, Ամարան հաւոր Գրիգորի Տաթևացույ, Կ. Պոլիս, 1743, էջ 211 և հաւ. «Նախնի Գրիգորի ներապան աղբիւրբար աղետ ի թաղաւ ախիւրբարայ» վարդապետին իւրոյ Յունենու Որոտնցու:

նալի չէ, որ Որոտնեցուն այն տոհմից են դնում: Նա Գայլեանքի հռչակա-
վոր վարդապետ Սասյի Նչեցու աշակերտն էր, շատ տասնամյակներ նվիր-
վել էր ուսման, սովորել, — ինչպես գրում են, — օտար լեզուներ, հմուտ էր
գլխավորապես լատիներենին, հետևելով բունմայրն ուսմունքներին և կա-
թոլիկական զարդոցներում ընդունված մեթոդներին: Նա ուսումնասիրել էր
նաև հայերի մեջ հնուց ընդունված արտաքին գիտությունները, Փրլոնի,
Արիստոտելի, Պորփիրի և Ռերիչների երկերը, «Բազմաճանհար իմաստիք
առլցեալ, — գրում է Տաթևացին հիշված ներքոգլխի մեջ, — ընդ ոգէշունչ
մատենի՝ յարտաքինսն վարժեալ սոփեստի: Ե՛ր սմանէ ընթերցումն սուրբ
գրոց և վարժումն արտաքին կրթութեանց, տեսական իմաստից և գործնա-
կան արդեանց շարտարութեանց: Ի սմանէ յոջնանկար նորագին աստք, և
երաժշտական եղանակք... Մեկնութիւն հոգէշունչ մասնեից... և արտաբա-
ցումն արտաքին սոփեստից: Ուրիշ տեղեր Գրիգոր Տաթևացին՝ իր բնա-
նալիս ընդմիջումը Որոտնեցուն անվանում է «մեծ հետադարձ շարժում», բնա-
նալիս ընդմիջումը:

Այս շնորհալի անձը թողնում է աշխարհիկ կյանքը և հաստատվելով
Տաթևի վանքում, որ ի հնուց նշանավոր էր եղել իր վարդապետարանով,
նա նորից կազմակերպում է այն վանքի գործընթացը և ուսուցանում է այն-
սեպ բազմաթիվ աշակերտներին, աշխատելով իր ձեռքերով բոլոր ուսումը
ուսուցանելով:

Այն ժամանակներում հայտնի է պատմում Նախիջևանից ոչ շատ հեռու
Աստապատի վանքի (Կարմիր վանքի) դպրոցն էս, ուր ուսուցանում էր
«մեծ վարդապետն Մարգարէ: Ունիթոռները հենց սրա աշակերտների ժխ-
նով անկարգութեան են առաջ բերում, ուստի նրանց դեմ կոմիտե հա-
մար՝ Հովհաննես Որոտնեցուն, իր աշակերտների հետ միասին Տաթևից
հրավիրում են Ապրակունիսի վանքը, ուր նա շարունակում է ուսուցանել
մինչև կյանքի վերջը: Նա մոտիկից գործող խոյան հանգիստնալով ընդգծմ
Ներշնչակի և Նախիջևանի ունիթոռների և մեծ ժողովրդականութունն ստա-
նալով՝ արդել էր պատմում կաթոլիկութան տարածվելուն հայերի մեջ՝¹
«Ժողովեաց առ ինքն զբաղում աշակերտս յամենայն գաւառաց և լուսա-
զարդեալ պայծառացոյց զազգս Հայոց վարդապետք և քահանայիւք»։ «որ
իւրև արեգակն փայլէր ընդ ամենայն ազգս Հայոց և լուսաւորէր գամենե-
սեան գիտութեամբ», — գրում է Թովմա Մեծոփեցին՝² Հեռաքրքի է, որ
Ապրակունիսի և Աստապատի վանքերի դպրոցները մեծ հաջողութեան են
ունենում և հոչակ են վայելում ոչ միայն իրենց երկու վարդապետների
շնորհիվ, այլև Որոտնեցու աշակերտ և Ղրիմեցի Մաղաքիա վարդապետի
նյութական օժանդակութեամբ, որ, ինչպես գրում է Մեծոփեցին, էր «Ե՛ր ծովա-
հայեաց քաղաքէն Ղրիմայ» (Հովանորեն Կոֆայից, այժմյան Թեոդոսիոյից),
այոյժ մեծատան որդի, շինեաց զմանորայս Հայոց, և վասն զի գերկուց

¹ Գրեթ հարցմանց... Գրիգորի Տաթևացին, Կ. Պոլիս, ՌժՀԸ=1730, էջ 773. այլև
Ժողովրդի, Ամստերդամ, էջ 721:

² Թովմա Մեծոփեցի, Պատմ., էջ 30 և հմ.:

³ Անդ., էջ 18 և հմ., 53 և հմ.:

վարդապետաց դասատուներն՝ զՅովհաննու և զՍարգսին՝ նա պահէր ի շինու-
թեան՝ զԱղբակուհեացն և զԱստապառնան։¹

Հովհաննես Որոտնեցին առուցանում էր ոչ միայն բերանացի դաս-
վանությամբ ու քարոզներով, այլև զբովոր աշխատություններով. նա գրած
ունի դավանաբանական աշխատություններ, սեկնություններ, քարոզներ
և այլն։ Ինչպես Գալիեմոսի վանքի գլխավորը, Որոտնեցու գլխավորը
և աշխատակուս էին ուսումնասիրել ինչ գիրքափայլուն երկերը։ Նրանից
Մուս Են Արխատասի, Գորգիորի և Փլյունի գործերի սեկնություններ, որ նա
արել է։ Թանգուտ, իր աշակերտների համար, Նրա անունով կան նաև առակներ,
որոնցից է և հետևյալը.

«Ասի յառակաց, թէ դադուէսն բռնեալ կենդանի լքեթցին և մին
փողի չափ մորթ ի վերայ գլխին թողին, և այնչափ ի վերայ աղոյն և ի
վերայ ճանգիւղոյն։ Եւ թողին գնալ, Յայնժամ մարգիկն տեսեալ՝ ծիծաղելն
բարձրաձայն։ Եւ առէ աղուէսն. «Ի՞նչ մարդայ ի մէջ հարսանեաց չեմ՝ որ
կու ծիծաղե՞ք։»²

Որոտնեցին վախճանվել է 1386 թ., ըստ ուրիշների՝ 1388 թ. Աղբա-
կուհիսի վանքում և այնանգ էլ թաղվել։ Նրա մահվան առթիվ Մեծոփեցի
գրում է. «Ի սոյն առևուրս հանգեաւ [Որոտնեցին] ի Գրիտոս, և խաւարուեա
եղև աշխարհիս Հայոց։»³ Ահա թե ինչպես է անդրադարձել նրա մասին նրա
երիտասարդ ժամանակակիցը, նրա աշակերտի աշակերտը։ Եվ նա, Մեծոփե-
ցին, իրավունք ունիւր. «Զի ոչ միայն սով մարմնական տուաւ մեզ, — գրում
է նա, — այլ և սով հոգևորական։ Այդ հոգևոր սովը վերացնելու համար
Որոտնեցու աշակերտները նրա մահից հետո տեղափոխվում են դանազան
վանքեր. «Մեծն Յակոբ գնաց յերկիրն Արարատեան և բնակութիւն իւր
աւարեալ զսուրբ ուխտն Սողոմոնականից, որ 20 ամ աշակերտեալ էր Յով-
հաննու Որոտնեցու։ Եւ վարդապետն Գրիգոր գնաց աշակերտօք իւրովք ի
գաւառն Եկեղեցի յերզնկայն. և այլք աստ և անդ ցրուեալ եղեան։ Սրան-
ցից Հակոբ ու Միքիթա վարդապետները գնում են Ռշտուէիք։ Աղբակու-
հիսի վանքում Որոտնեցու ամբիոնը ժառանգում է Գրիգոր Տաթևեցին,
որի մասին կխոսվի ներքևում։»⁴

«Մարմնական սովից և իշխանավորների բռնություններից, ինչպես
և նյութական պակասությունից Ղրիմեցի Մաղաքիա վարդապետի և Հով-
հաննես Որոտնեցու մահից հետո, ստիպված է լինում բոլոր վարդապետն
Սարգիս, որ ունէր զսուրբ ուխտն Աստապատու, թողնելու իր վանքը և
դնալու «Ի վեր քաղաք սակաւ աշակերտօք ի նոյն մէջ դանուսթեան։ Նա
այնտեղ է անց կացնում գաւառու սովոյն դաւանութեան, ապա անցնում

¹ Անդ, էջ 16 և հաւ.

² Պեւ. Մատենադարան, Զեւ. Մ 57 (նոր համար), 91 (հին համար)։ Ժողովածու
Հովհ. Որոտնեցու երկերից, Հաճախեց, գիրք պարագմանց, առակներ (160-րդ էջից)։
Առակներից հետո (էջ 173) հիշատակւորան. գրելը՝ Ռըստակէս Սերասապի. հավաքած է «Ի
յուսուրբ բանից անսն իւրեանց և վարժապետին Յովհաննու Որոտնեցու։ Առակների
մի մասը կա՝ վարդապետ, առակների մէջ։ — Հաղարկեց ՀՅՍԹ Գիւ. Անդ. Գրականության
Ինստիտուտի գիւ. աշխատակից Վիգեն Խեչուճյան։

³ Անդ, էջ 16.

⁴ Անդ, էջ 83.

4. Գրիգոր Խաթեցի Մեքենց:—Այդ վանքերում ավանդված առարկաների մեջ եղել է և գրչության արվեստը, որով գրքեր արտադրելով՝ բազմացնում էին: Այս նկատմամբ կարելի է չհիշել այստեղ Գրիգոր Մեքենցին, շուրջի հաստատրիմ առն Սասնաձոր ձերի, զորով ի քաղաքէն Խլաթայ, յաշակերասացն մեծին Սարգսի՝ հոգեւոր հարազատ և համշիրակ: Նա յի նստում Սարգսի վանքում (Սուխարու ուխտ), այլ Բղնուշայաց երկրի Արծկե քաղաքի՝ Յրայնա կոչված վանքում: Նա պարապում է գրչությամբ. «Տիւն և գիշեր գիրս գրէր, և զամենայն աղքատս կերակրէր... և զամենայն վարդապետս և կարգաւորս ի նոյն յորդորէր... Նւ 50 տմ գիրս գրեաց ախ և գիշեր անհանգիստ աքնաւթեամբս»¹

Նա ներկայանում է և իբրև գրական աշխատող. «Բազում երգս զանձուց և տաղից յիշատակ թողեալ ինքեան»: Գրել է թղթեր զմտալոյն մարդկանց ուղղած: Նրանից մնում է Յերշտակաբան աղետիցն, որ ռասանովորով հոբինսած մի պատմություն է Հայաստանի 1386—1422 թ. թշվառությունների, որոնց ժամանակակից և ականատես է եղել ինքը՝ Բացի այդ՝ նա շուրջից ժամանակաց պատմութիւնս ի լոյս տնէր ի հորցանելն և ի պատասխանատուութիւնս, և զգիրս սրբոց մարտիրոսաց և վկայիցն ու կոչի Յայմատուրց՝ սակաւարան և անվթար շարագրեալ ի սրբոց հնոց և նորոց վարդապետացն՝ ի լոյս էնծա: Իր կազմած Յայմատուրքն ի մեջ նա ավելացրել է նաև իր օրով նահատակվածների պատմությունը: Այս անխոնջ աշխատավորին իրեն էլ 1425 թ. ավելի քան 75 տարեկան հասակում չարաչարելով նահատակում են արքայ Մարգարէ—ասում է Մեծոփեցին և ապա պատմում ուրիշ երեք վարդապետների նահատակության մասին ևս: Ոչ միայն գրասիրության, այլև ուսումնասիրության մի արդար է եղել այս վարդապետը: Նրա Գրիգոր Տաթևացին 1409 թ. Տաթևի վանքից Մեծոփա վանքն է անդափոխվում և դասավանդում է ավելի քան 80 հոգու. Գրիգոր Խաթեցին, չնայելով իր անցած տարիքին, մտա վաթսուհամայն հասակին, Արծկեի վանքից զալով այնտեղ՝ ունկնդիր է լինում հաշակավոր գիտնականի դասախոսություններին»²

5. Գրիգոր Տաթևացի:—Տաթևյան վարդապետարանի բարձրագույն ուսումը և ժողովրդականությունը պահվում և ավելի ևս մեծանում է շնորհիվ Գրիգոր Տաթևացու, որ մի ավանդապետ, դործունյա և բազմազես ուսուցիչ է եղել: Ըստ Առաքել Սյունեցու՝ նա շինթերցման էր պարապող, աշակերտաց էր մարդոց... ձածուկ բանից բացառապաշտ: Եի գիշերի խոկմամբ դիմաստս զրոց հաւաքէր, և տուրնջեան աշակերտացն պատմէր: Արտաքուստ էլ նա գեղեցիկ է եղել, այնպես որ երբ ամեն կողմից աշակերտելու էին գալիս նրա մոտ, —ասում է Առաքել Սյունեցին,³—«նախ ի տեսն ուրա-

¹ Թւում է Մեծոփեցի, Գոմաւ, էջ 62 և հմտ.

² Յերշտակաբան աղետից Գրիգորի Խաթեցու պատմական վկայանութիւն, Վարդապետ, 1897. հրատ. Գր. Խաթեցու, արտատպություն Արարատի ուսուցչից, 1897, էջ 176—182.

³ Թւում է Մեծոփեցի, Գոմաւ, էջ 63.

⁴ Առաքել վարդապետի տաղեալ Ներբողեան ու քաղ հանդերս. Գրիգոր Տաթևացի. Զգլու է Գր. Տաթևացու Գործերիցի Ամբարն հատորի վերջում, էջ 716 և հմտ.

խառնային, և ապա խառնված ցնձային: Նախ ի պատկերին գեղեցկութիւնն խնդային, և ապա ընդ բարբառոյն համեղութիւնն դուարճանային:

Նրա հայրն արճիշեցի էր, մայրը՝ փառապետ, ինքը ծնված էր մոտ 1446 թ.¹ Հայոց Զարուհի, ուր բնակվում էին ծնողները: Երկար տարիներ, ըստ Մեծօրհնցու՝ 28 տարի, աշակերտել էր՝ նա Հովհաննես Որոտնեցուն, որից և ստացել էր վարդապետական իշխանությունը: Երկնայում, իսկ ծայրագույն վարդապետական զավագունը՝ 1387 թ. Աղարկունիսում: Որոտնեցին, վախճանվելուց առաջ (1388 թ.), — ասում է Մեծօրհնցին,² — «կոչեաց զմեծ վարդապետն [Գրիգոր] և զընկերակիցսն նորա, որհնեաց զնոսա... և եղ զԳրիգոր ամենեցուն զլուխ և ուսուցիչ»: Ինչպես երևում է, Գրիգորն արդեն հայտնի է եղել իր գիտությամբ, և նրա հոգևոր եղբայրներն էլ ցանկացել են, որ նա լինի Որոտնեցու ժառանգը: «Եւ յաջորդեաց յաթոռ սորա [Յովհաննէս] քրիստոսածառլ աղբիւրն և անժուռ արեգակն՝ երկրորդ լուսաւորէն Գրիգորիոս վարդապետն Տաթևացի հաւանութեան և կամօք մեծ վարդապետին Սարգսի...»³ և համբերակ և կղբոց իւրոց՝ Յակոբայ Սահմասաւանիցն Արարատեան գաւառին և Գէորգայ Երզնկացոյ, և ամենայն աշակերտաց գնդին և ուրիշներ, որոնք, ինչպես տեսել ենք, գնում են զանազան վանքեր:

Գրիգորը, սակայն, երկար չի մնում Աղբակունիսի վանքում. երևի նույն պարագային — սովոր, անտեսական պակասությունը, որ ստիպում են Սարգիս վարդապետին հեռանալու Ատաղաստից, նույն ժամանակում հարկադրում են և Գրիգորին թողնելու Աղբակունիսը և իր աշակերտների հետ զնալու Տաթև, «ի տունն Օրբելեանց առ իշխանն Սարաս»՝ որդի Իւանէի՝ Թոռն Բաղթէի: Սմբատ իշխանը, որ Հովհաննես Որոտնեցու եղբայրն էր, հավանորեն կանչել էր նրան՝ իր մոտ իր վանքում ուսուցանելու: Այդպես էլ անում է Գրիգորը: Տաթևի վանքում ժողովում է ամեն կողմերից բազմաթիվ աշակերտներ և ամեն եղանակով պարագում նրանց հետ 1390—1409 թ.:

Ըստ Գայլեծորի վանքի ավանդության, ինչպես Որոտնեցին՝ Տաթևացին ևս հմուտ էր ոչ միայն հին եկեղեցական և հայկական զբաղմունքայուններին, այլ ուսումնասիրել էր նաև հունական փիլիսոփաների գործերը, ինչ որ Արեւուտքում ևս անում էին, և ծանոթ էր ունիթոոնների մեջ ընդունված գրականությանը: Հավանորեն, ինչպես կարծում են, նա գիտեր նաև լատիներեն լեզուն: Իր դպրոցում նա սովորեցնում էր իր իմացածը, այն է՝ հայոց գրականությունը, Հին և Նոր Կտակարանների մեկնությունը, սուրբ հայրերի զրվածքները, զգիրս արտաքին իմաստասիրացն, լուսնմուսնք արտաքին գրոց,⁴ որ են Պղատոնի, Արիստոտելի, Փլինիի և Պորփիրի զրվածքները և նրանց բացատրությունը: Բացի այդ՝ աշակերտներին վար-

¹ Մ. Օբմանյան, Աղագոսում էլ 1381. Թվականները բերվում են մեծ մասամբ ըստ Օրմանյանի հայեցակետի:

² Թ. Մեծօրհնցի, Գաղաթիւն, էջ 17, 32 և հ., 86:

³ Ատաղաստի վանքի ուսուցիչը, որ հետո, ինչպես տեսել ենք, անգլոփոխվում է Զատարաստ վանքը:

⁴ Թ. Մեծօրհնցի, Գաղ., էջ 81, 84:

մեցնում էին նաև երաժշտության, հասաւասցության և գրչության արվեստներին:

Գրիգորի համբավի վրա ամեն կողմից հաւաքւում են նրա մոտ աշակերտներ, ոչ միայն Սյունիքի զանազան տեղիերից, այլև Եկեղիքից, Արարատից, Զուղայից, Աստաղատից, Շախախուց, Կապանից, Գանձասարից, Փայտակարանից, Թավրիզից և այլն: Գալիս են նաև Արեւելի կողմերից: Ինչպես արգեն տեսել ենք, Սարգիս վարդապետի մահից հետո՝ նրա աշակերտներին սովորեցնում էր Վարդան վարդապետը, որ մի յորս տարի հետո վախճանւում է: Եւ որքան Մնացեալ աշակերտաց նորա,—գրում է Մեծոփեցին,—թողեալ զնացաք ի գաւառն Սիւնեաց առ մեծն Գրիգոր վարդապետն ամենայն Հայոց... Որ և նա ուրախացեալ յոյժ՝ սիրով ընկալաւ զմեզ իբրև զորդիս իւր սիրելի հոգևոր և բաղձալի. զի հայր նորա էր զաւառէն Գալլերունեաց ի քաղաքէն Արեւիշտ: Եւ երկուստեան եղբարք, աշակերաք մեծին Սարգսի, մեք էաք որ յետ մահուան նորա զնացաք յաշակերտութիւն նորաք, շարունակում է Մեծոփեցին, հիշելով իր ընկերների անունները՝ վերջին տեղում հարելով ևս եւ անարժան թովմա: Տաթևացին ժողովում է իր աշակերտներից շատերին և վաթսուինք ավելի քահանաներ, ինչպես և Արեւելի կողմից եկած առանձնեկու կրօնավորներին և սկսում է եռուցանել զգիրս արաքին ի մաստափրացն, ապա և ուրիշ գրվածքներ: Նա իբր զործը կատարում էր զժպար ժամանակում, երբ շոյ գոյր անդորրութիւն և ոչ հանգիստ խաղաղութեան վասն անօրինաց շարութեան: Բռնաւորն Յուսուփ, տէրն Թաւրիզու, էտո զմրոտն ի Սմբատայ իշխանէ, վասն բարեխօսութեան նոցա եկն. և նա ոչ լուաւ աղաչանաց վարդապետին: Այդ Յուսուփը Ղարա-Ղոյունլի Ղարա-Յուսուփն է, որ Հանկ-թառքի մահից հետո վերականգնել էր իր տերութիւնը (1403—1420 թ.). Այն ժամանակ Գրիգոր Տաթևացին, չի հաւանում և անօրինաց, ունենլով իր աշակերտներին, 1403 թ. տեղափոխւում է Արեւելի գավառը, Մեծոփա վանքը. վանահայր Հովհաննես վարդապետը սիրով ընդունում է նրանց: Հավանքւում են զանազան կողմերից շատ ունկնդիրներ ևս, և ավելի քան ութսուց եւ քսու, և Տաթևացին մի ավելի տարի պարապում է նրանց հետ, մեկնելով Ս. Գրգի հետ ևս զգիրս գրչութեան երկոքեան վարդապետացն Գէորգայ Համբարձումեայ և Արիստակէսին: Այստեղ էլ, սակայն, նա չի կարողանում հանգիստ կատարել իր ուսուցչական գործը. նրա աշակերտները մի տարի հետո՝ Եղաղտագողի առնում են նրան, այսինքն փախցնում են, գնում Արարատյան գավառը, քառ մեծ վարդապետն Յակոբ Սաղմոսավանից՝ հոգևոր հորազատն իւր: Եւ մեք ամենեքին վարդապետք և աշակերտք զնացաք առ նա, ավելացնում է Մեծոփեցին, Հետները զնում են և ուրիշները, որոնց թվում և Մեծոփա վանահայրը՝ Հովհաննես: Հայտնի չէ, թե որքան է թիւում Տաթևացին Սաղմոսավանքում: Տաթևից գալիս են նրա աշակերտները և քնոդդին, եպիսկոպոս Առաքել Սյունեցին, և վերագործնում են նրան Տաթևի վանքը, քայց նա այլևս երկար չի ապրում. հիվանդանալով շուտով վախճանւում է 1410 թ., քստ ուրիշների՝ 1414 թ. վահանին:¹

¹ Թովմա Մեծոփեցի. Գաւառութիւն, էջ 84, 81 և հ., 88 և հան.

Ահա իր ժամանակի մեծ վարդապետը, որ շնայելով գծվարություններին՝ եռանդով անվճատ շարունակում է իր ուսուցչական գործունեությունը, պարագլխով բազմաթիվ աշակերտների հետ, որոնք իրենց վարժապետի հետ աստանդուկ էին, փոխելով Հայաստանի այս կողմից այն կողմը։ Մեծոփեցին, ցավոք, չի հաշվում, թե ինչպես և ում ոգնությամբ էին ապրում և այն ուսումնասիրների բազմաթյունները։ Անշուշտ օգնում էին առանձին աշակերտներ, վերևում տեսանք Վանականի որդի ճգնազգյաց Մաղաքի վարդապետի նյութական օժանդակությունը վանական զորոցներին։ Մի նույնպիսի ոգնություն հիշում է և Գրիգոր Տաթևացին իր Վանական հասարակական վերջում գրված Վերջապետարանի մեջ (էջ 731)։ Նա իր ուսուցիչ Հովհաննես Որոտանցուն և ուրիշներին հիշելուց հետո՝ ասում է.

Եւ զՎարդապետ միայնական,
Որ նա եղև մեզ ոգնական,
Հոգալ ըզդէտըս մարմնական
Աշակերտաց մերոց լրբման,
Երջման ի աէր լիցի արժան:

Մերև վանահայրերն էլ էին հոգում նրանց մարմնական կարիքները։ Բայց անշուշտ այդ չէր այնքան նեղություն պատճառում այն սակավազան ժողովանց, որքան իշխողների կեղեքումը և խռովհույզ վիճակը, որ արդեն էր լինում նրանց իրենց սիրած ուսումով պարագլխու Գրիգոր Տաթևացին էլ ոչ թե նյութական պակասություն էր մտահոգված, այլ, ինչպես ինքը գրում է՝ իրենց ակամա կրած չարչարանքներով, իրենց սարկահան ծառայություններ և որ իրենք իսկապես սարկացած են եղել խառնաբառ տերերի ձեռքին։ Նա խնդրում է, որ Ս. Գրիգորի բարեխոսությունները աստված ազատի իրենց՝ բայթարարակալէն՝ յըստ հոգւոյ գերողէն և յըստ մարմնոյ նորին արբանեկաց չարաչար տանջողաց։

Գրիգոր Տաթևացու համբավը մեծ է եղել ոչ միայն նրա սրբակոչություն և ուսուցչական գործունեություն համար, այլև նրա բազմաթիվ գրական աշխատությունների, Գրանցից այսպեղ կհիշենք միայն երեք մեծ հատորները, որոնք տպագրված են դեռ 18-րդ դարում։

Նրա «Հաբցմանց գիրքը»¹ երկուսն են՝ մեծ և փոքր։ Վերջինիս վերնագիրն է՝ «Հաբցմունք Գեորգ վարդապետի և լուծմունք Գրիգորի նորին հարազատին»։² Այս Գիրքը վարդապետը վերևում հիշված Գեորգ Երզնկացին է, Հովհաննես Որոտանցու աշակերտներից մեկը, որ նույնպես պարագլու է գրականությունը՝ գրելով լուծմունք և մեկնություն։ Տաթևացին մանրամասն պատասխանել է նրա 14 հարցումներին՝ շարժազայնությամբ ամփոփել Հայկազեան սեպից հարիւրից կրկնակի քառից և վեցեակ վեցիցը, որ է՝ 836+551=1387 թ.։

¹ Գիրք Գարգաթեան որ կոչի Ամարան հատոր, արքեպիսկոպոս Գրիգորի Տաթևացւոյ, Վ. Գալիս, Թաթև ԹՎ. (1380+551=1741), էջ 431, Ս. Գրիգորի Գարգաթ վերջում։

² Գիրք Հաբցմունք, Գրիգորի Տաթևացւոյ, Վ. Գալիս, ի թվին Հաբց ԹՎԼԸ (=1378+551=1729)։

³ Զգուշացման է Կաթարի վերջում, էջ 773-789.

Մենք «Հաղթման» գիրքը, ինչպես հեղինակը հայտնում է վերջում գրված Յիշատակարանին մեջ, ավարտել է, քի շրջազայտութեան Հայկական աստուծոյ Պեճ թուին, որ է՝ 846+551=1397 թվականին, Գրել է քի խնդրոյ ուսման բանասիրի Աստմի, քաղաք միջոցում և փախստամբ ի անդին: Սկզբի Յեռաշարանին մեջ (էջ 4 և հա) հայտնում է, թի գրել է քի խնդրոյ ուրումն աշակերտի Աստմի, այլև թի իր աշակերտներն էլ շատ տնգամ աղաչել են իրեն զգնողիս ուսան լուծանել: Բացի այդ՝ ավելացնում է նա, «Զի աշխատութիւն իմ մի միայն լիցի ներկայիս լսելոյ, հոգ տարայ և յանոցն գրչաւ աւանդել: Ուրեմն չի բաժանանալ ընդանցի դասախոսելով, իր դասախոսածն ավանդել է և գրավոր: Դա հարց ու պատասխանով հորինված մի դասագիրք է իսկական այն բոլոր խնդիրների մասին, որ հետաքրքրելիս են եղել այն ժամանակի հարցասերներին: Յիշատակարանին մեջ (էջ 772) հայտնում է, թի «է՛ ինչի մամ հաւաքեալ ի լուսաւոր բանից վարդապետաց սրբոց ըստ գրոյն կամ իմացութեան: Օգտվում է և արտաքին իմաստունների կարծիքներից: Կա բան էլ, որ իրենից է գրել: «Զոր և ես զօրէն մշակաց բազմահաւաք պտղոց. կամ փռնի մի անուշահոտ բազմերանց ծաղկանց, կամ չնչին թւչոյ դիտարիս մեղաւ, կամ որդէս զլուսայս արւոյն տառապեալ գոյիւ աղերս [=պարզ] ընծայեցի ի գանձանակ նորութեան ձեռք մեծութեան, իմաստասէր և ճշմարտասէր հեղեցոյ Հայաստանեայց և ընթերցասէր մասցա:

Եռաշարանին մեջ խոսում է իր կիրառած տրամաբանական ժեթոյի մասին: Դրանից առաջ, գրքի սկզբում, գրել է տմբողջ աշխատութեան մեծ ցանկը—քառասուն զուէի, վերջից քառասունմեկերորդը՝ «Հաղթման» Դեղորակայ: Այդ ցանկի գլխավորութեանն էր արդեն իմացվում է գրելվածի ամբողջ բովանդակութեանը—գլխաւոր բանք: Հետո էլ ամբողջը բաժանում է տասն հատորի, և ամեն հատորի սկզբում գտնւմ է նույն հատորի ցանկը՝ պլակներ թաժանած, և ապա ամեն մի պրակն ունենում է իրեն մի մաս, որի վերնագրի մեջ հայտնում է: Թի «մեծ ցանկին որ կեանքն է համապատասխանում, օրինակ՝ «զուէի Դ ի մեծ ցանկէն և առաջին պրակ երկրորդ հատորիս. վասն թիւութեան հերձուածողաց: Եվ վերջապէս՝ անհրաժեշտ է համարել այդ մեծ գրքի ամեն մի վերին լուսանցքում էլ գնել հատորը, պրակը, բովանդակութեանը. օրինակ, «Հատոր Բ. պրակ Ա. վասն հերձուածողաց: Այսպէս ամեն միջոցներ ձեռք է տնել, որպեսզի, ասում է նա, դիմելով ընթերցողին, զգիւրաւ գտնա զամենայն գոր և խնդրեսցիս ասանց շփոթելոյ ի կարգի իւրեանց: Այս ամենը, հարկով, մի լուի արտաքին ձև է. բայց այդ միայն վկայում է, թի որքան,—մեր ժամանակի համար անգամ նախանշելի,—մեծ հոգացողութեամբ է վերաբերվել նա զնպի իր ընթերցողները. և որքան մեծ արժեք է տվել նա իր գործադրած նյութի բաշխմանը և դասավորութեանը:

Այստեղից և ընդհանրապէս «Հաղթման» գրքին բովանդակութեանից երևում է, որ շատ կարգապահ, շատ մտածած մարդ է եղել Գրիգորը, լավ ծանոթ տրամաբանութեանը, կշռադատող և համեմատող, դասավորող, տեսակավորող և ուսանողների գլուխութեան համար խորհող նույն ոգին երևւում է և նյութի բացադրութեան կամ շարահղութեան մեջ: Զգտելով հար-

ցաւեանքին ըստ կարելոյն լիակատար պատասխանել, բերում է նաեւ խնդրի մասին զանազան վկայութիւններ ու պատճառներ, բազմաթիւ կարծիքներ ու լուսաբանութիւններ, և որպէսզի ընթերցողի համար զիտ-թում առաջ չդա, սովորաբար դիմում է թվարկութեան — առաջին, երկրորդ և այլն, թվարկութիւնները հասցնելով երբեմն մինչև 30-ի, և ավելի ևս: Որպէսզի իր գործը թերի և անբավարար չլինի, նա բերում է նաև հակառակորդների կարծիքները և ընդդէմ պատասխանները: Օրինակ՝ տասներորդ հատորի մեջ շատ երկար խոսելով «Վասն հանդերձեալ տշխարհին», մերժում է կաթոլիկների ընդունած «քավարան» ասածը, և նույն հատորի ԺԳ. պրակ դնում է. «Վկայութիւնը հակառակաց և պատասխանիք նոցին» (էջ 695), այսպէս սկսելով. «Այլ և տեսցուք զվկայութիւնս հակառակաց և յարմարեցուք զպատասխանին, զի առեռն պատրաստ լիցի»:

«Հարցմանց գրքի» խնդիրները, բնականաբար, ամենամեծ մասով կրոնական են, «Ընդդէմ նոցա որք զբաթոն և զհարկն ասեն», այսինքն ճակատագրի համառոտ ընդունողների դեմ. «Ընդդէմ հրէից», «Ընդդէմ արիոսեանց», «Ընդդէմ հոգեմարտիցն», «Ընդդէմ նեստորի և երկաթեակացն», «Աստուածաբանութիւն ըստ Դիոնիսիոսի» և այլն: Պատմ է և հրեշտակների ու դեերի, մեղքերի և առաքինութիւնների, մարդու հոգու և բազմաթիւ ուրիշ նյութերի մասին: Հետաքրքիր է «մեծ ցանկի» ԺԵ. «Գլուխը՝ կոս հինգերորդ հատորը. «Վասն կաթոլիկեան մարդոյն», որի մեջ բերում է ոչ միայն մարդակազմութեան, այլ և բնախոսութեան վերաբերյալ գիտելիքներ, տալով ժամանակին հետաքրքրող հարցերի պատասխանները: Օրինակ՝ Ս. Գրքի մեջ պատմվում է, թե մարդը հողից է ստեղծվել. ուստի առաջին հարցումն է. «Վասն է՞ր մարդն ի հողոյ ստեղծուաւ: «Պատասխանի՝ Ասեմք վասն բազում պատճառի: Նախ՝ որպէս ասացաւ ի վերոյ, հոգն ռնի դալլ Կ [= երեք] տարեքն խառնեալ. յորժամ ի հողոյ ասէ՝ [Ս. Գրք] իմանալի է զդ [զշորս] տարերս: Ուրեմն՝ մարդն իսկապէս չորս տարեքներից է կազմված և ոչ թե միայն հողից: Ապա բերում է թվարկութեամբ ինչ ուրիշ պատճառներ ևս հողից ստեղծվելու, օրինակ՝ «Ինչեքորդ՝ զի մայր մեր հողն է, և սեղան, և՛ տեղիք, և՛ զերեզման. թէպէտ և այլ տարերքն են մեզ ազգականք, այլ մեք ի մօրէ՝ ծնանիմք»:

Կան դատողութիւններ և ապացոյցներ, որոնք շատ միամիտ են. բայց չպետք է մոռանալ, որ հեղինակն ապրել է 14-րդ դարում: Այսու հանդերձ՝ նա հեղել է մեծ մասեղող, ուժեղ տրամաբանող, և նրա երկերի մեջ կան նաև իր ժամանակի համար շատ լուսավոր մտքեր ևս: Այսպէս, օրինակ, ճակատագրի համառոտ հերքելիս՝ իրեն մի երբորդ հիմք դնում է հետևյալը (էջ 8 և հ.). «Երբորդ՝ եթէ զոր ինչ ասէաք և հշմարիտ էր, յայնժամ բանս մեր ոչ հետեւէր իրացն, այլ իրն բանիցն հետեւէր. որ է՝ յայտնապէս սուտ. զի միացականն ոչ միացականին ոչ հետեւի: Այլ անզրադարձաւ [= ուրիշ կերպ պատասխանելով, այլ կերպ ասած], զի հեաքն՝ ընթացից ոտիցն հետեւին, և ոչ ոտքն հետօցն. և ստուերն՝ մարմնոյ, և ոչ մարմինն՝ ստուերին»:

¹ Գրք Գ Բ 8 = Բ Կ 5 Գ, Գրք հարցմանց, էջ ԺԲ = 229:

«Ապա ուրիշն յայտ է, զի բանն զիրն և՛ կորէ հշմարտիւ. այլ իրն զբանն հշմարտէ, յորժամ գոյ կամ և՛ գոյ...» Այսպէս ուրիշն՝ «բանըս, խոսքը, մասնութիւնն է հետեւում իրականութեանը, ոչ թե իրականութիւնը՝ խոսքին, որ մասնութեան արտահայտութիւնն է։

Այնքորդ չէ այտեղ դիմել կաթոլիկ և հայկական աստվածաբանութիւններին հմուտ անձի կործինը։¹ «Տաթևացի անկասկած պետք է դասել ժամանակին զիտնականներուն շարքը, Հորցմանց գիրքը, թե ոճով և թե պարունակութեամբ համահամար կերպարան և արժեք ունի միջին դարու հայկայ լատին աստվածաբաններուն, թովմաս Ակուինացիի, Ալբերտուս Սուարեսիի, և Սկոդտու ծրինացիի (Thomas Aquinatis,² Albertus Sueviensis,³ Scotus Erigena⁴) գործերուն հետ, հանդիսակցիտ աստվածութիւններով և համանման թերութիւններով, Ասկե կհետեցնենք թե ոչ միայն լատիներենի հմտութեամբ, այլև լատիններուն ընդունած ձևերով ուղած է մաքուր լատին գեմ, Միշնէ իսկ կրնանք ավելցնել, թե Հորցմանց գիրքին միջին բացատրութիւններ կրնան լուսարարել Սկոյասիկայաններուն լատիններն զարգացնողներուն համեմատութեամբ։ Սրանից, սակայն, չպետք է հետեցնել, թե Տաթևացի լատինարան հայերենով գրած լինի. նա հորինում է մաքուր հայերենով։ Բայց զարմանք չէ, որ այդպէս զրելով հանդերձ՝ նա մեկ մեկ գործածած լինի օտարաբանութիւններ, հատկապէս երբ իր կաթոլիկ հակաակորդներ կործինեն է մեջ բերում։

Գրիգոր Տաթևացու երկրորդ մեծ աշխատութիւնն է «Գործողիքը»-ը, երկու մեծ հատոր. առաջինը՝ «Ձմերան հատոր»,⁵ երկրորդը՝ «Ամառան հատոր»։⁶ Այս երկրորդի վերջում (էջ 720 և հտ.) կը հեղինակի հիշատակաբանը, որից իմացվում է, որ նա քարոզների գիրքը կազմել է «ի ստորասուզեալ ժամանակի ի թուարեութեան մեծի յաթն հարիւր յիսուն և վեցերորդի ամիս (856+551=1407)»։ «Ձմերան հատոր»-ն, ասում է, պարունակում է ժի՛ (=160) քարոզ, և «Ամարան հատորը»՝ շՁԴ (=184), նա հայտնում է, որ քարոզների մեջ կան այնպիսիները, որոնք իրենք չեն, այլ ուրիշներից են առնված. ուստի վերնագրերների մեջ դրված են «նորին» և «այսլմէս», «զի յապակացին ի միմեանց, և մի զողացեալ թուեացին տխմարաց մասցն»։ Ուրիշներից որոնք քարոզները բովանկան թիվ են կազմում, հեղինակների անունները չի հիշում սովորաբար։ Առաջին հատորի (էջ 15) երկրորդ քարոզն է «Ծոռմեծի Յոհաննու Որոտնեցայ տիեզերայոյս բարունապետի...»։

Այստեղ, հարկավ, չպիտի խոսենք քարոզների բովանդակութեան մասին, որ շատ բազմազան է, ընդհանրապէս քարոյակերթական և ուսուցական

¹ Մ. Օրմանյան. Ազգայնագրութիւն, էջ 3039.

² 18-րդ դարի անկից պիտի և մեծ աստվածաբանը։

³ 15-րդ դարի քրիստոնէական և աստվածաբան։

⁴ 9-րդ դարում, քրիստոնէական հիմնադրողներից մեկը։

⁵ Գրիգոր Գործողութեան, որ կոչի Ձմերան հատոր, արարեալ... Գրիգորի Տաթևացի, Գ. Պալեո, Թուրք ՌՁԺ (=1400+551=1740)։

⁶ Գրիգոր Գործողութեան, որ կոչի Ամարան հատոր, արարեալ... Գրիգորի Տաթևացի, Գ. Պալեո, Թուրք ՌՁԴ (=1400+551=1741)։

ուղղութիւնը: Խոստով է, օրինակ, սիրո, խոհեմութիւն, արիւթիւն և գործի, հեղգների, երկրագործների մասին, այլև ընդ, հալալ ամուսնութիւն, զվասն արգար վաճառաց և կոտոր, եկեղեցու խորհուրդների և այլն և այլն: Մեծ տեղ են բռնում նաև սրբերի ու սուրբի վերաբերյալները:

Տաթևացու Վարդգէս, որ իբրև տեսակ, փոխանակել է հին ճառերն և շնորհաբաններն, յուսնի վերջիններին պարհ ու պահանջած և եռանդովից ձեռք, ընդհանրապես սառն ու ցամաք է: Այսպէս ու հասարակ, խոսված լեզվին մոտ, բայց ոչ միջին հայերենով, Իշխող տոնն է հանգիստ սովորեցնող ուսուցչի, որ առիթ է լուրջ բացատրութիւններ. ազատ չէ սեռյալաստիկ ձևերից: Թվարկութիւններին և մեկնութիւններին, որոնք իր ժամանակի մարդկանց համար անհրաժեշտ ու հաճելի են եղել: Առաջել Սյունիքին չափազանց գովելով իր «մեծ վարդապետ» Գրիգորին՝ անվանում է նրան «մեծ հոգեւոր», զբաղ հոգեւոր, հեղեղաբար լեզուի տեր: Անշուշտ, նա իր բերանացի քարոզների մեջ ազգային հոգեւորական շնորհք է ցույց տվել: Զանգարանների մեջ, Հովհաննես Որոտնեցու թողման ժամանակ տասն նրա ներքոյանն՝ իսկապես հարուստ է ճարասանական ձևերով— հարցում, բացառանքութիւն, կրկնութիւն նման կազմութիւնը խոսքերի և այլն. կոն նաև պատկերավոր և առատորեն արաստութիւններ առանց ճոռածութիւն, տրամագին զգացմունքով և անկեղծ սիրով ի մի գեղեցիկ ներքոյան, Սուրբ Գրքից առած նմանութիւններով մի երախտագիտական գովեստ արժանաւոր գործի:

Բայց ինչպէս էլ լինի, այս շրջանի վարդապետների գրավոր երկերը մեծ մասամբ ունեն ոչ թե գրական-գեղարվեստական արժեք, այլ ընդհանրապես կուլտուրական, կարելի չէ, հարկավ, մեր ժամանակի չափանիշով վերաբերվել նրանց գիտական գրվածքներին ու գործունեութիւնը: Առասպելներն ու դրույցները, սին դաստիարակութիւններն անպա՛վ պարզում են այն դարու սգին ու հասկացութիւնները, կյանքն ու բարքերը, էլ չենք տեսնում կոն նաև բազմաթիւ փայլուն մտքեր ու դաստիարակութիւններ, որոնք այն ժամանակի համար ակնբախ են: Չպետք է մոռանալ, որ այն մարգիկը աջնել և հորինել են գործնական նպատակի համար—պարտասել, ըստ իրենց ժամանակի հասկացութիւն, գիտուն աշակերտներ, որ ընդունակ լինեին մաքառելու և ազգային անկման առաջն տունելու:

Նույնպէս գործնական նպատակի համար է հորինել Գրիգոր Տաթևացին իր ուրիշ աշխատութիւններն ևս, այսինքն՝ զԱրիստոտելի զբոս լուծմունն, զՍտորագրութեանցն, զՊէրիպլեզիսին, և զԱռաքինութեանցն. նաև զՊորփիրին զպարտապանց լուծմունցն զԱղմոսի քաղութոյն, զԱռաքելաց քաղութոյն, և զԺամատարութեանն, և զԺողովողին... զՅորայ լուծմունքն, զՅոհաննու աւետարանի քաղութուն զԼուծմունցն Արիստոտելիս և Գէորգեայ գրչութեանն... զՊաղատուն Մատթէոսի աւետարանին, և զՅսուսայ քաղութուն, և զՈսկեգործին, և այլն:՝

1 Քարազգիքը, Ամբաստան, էջ 711 և հաճ. հեղինակ Գրիգորի ներքոյանն ուղեր-դարձը սկիզբ է թողում տեղեկատւութիւն վարդապետին իւրոյ Բեհնեմ Որոտնեցու (չլուծ ձգել):

2 Տես՝ Գիւրգէ Կարգման, էջ 721, «Յիշատակարան աղբյուր Գրգորայ»:

ի վերայ մեր... եհաս մեզ ի յօգնականութիւն... և մեք ի լիառն ելանէաք...
եկն եհաս առ մեզ... Որ և ես ի ներս կային (էջ 21—22)։ Նա անձամբ
եղև է և Վանի մէծ կոտորածի մեջ։ Եզոր տեսաք այժօք և լուաք ականճօք
մերովքա։ Բայց ձվ կորէ պատմել զթիւ գերեացն և զսպանուին անմեղա-
քնն... զի լցաւ աշխարհ ամենայն գերութեամբ Հայոց. մեռան քահանայք
և աշխարհապետք, հաւատացեալք և անհաւատք... Աւաղ և եղուկ ամենայն
Հայոց՝ զի աւերեցաւ ամենայն երկիրս. զի յԱրեւիշտ մինչև ի տունն
Վրաց. և մինչև ի Կուր գետն Աղուանից շողախեցաւ արեամբ անմեղաց
երկիր ամենայն չարչարանօք, սպանմամբ և գերութեամբ։ Եւ յետ գնալոյ
նորա յաշխարհէս մերմէ եկն սով սաստիկ յաշխարհս մեր և տարածեցաւ
յամենայն անգիր... Ձի աշխարհմ պատմել զպատմութիւնս մեր զոր տեսաք
այժօք և լուաք ականճօք. զի ջնջեցաւ մարդկութիւնս, մանաւանդ Հայկա-
ղեան գաւառիս (էջ 30 և հտն)։

Ապա պատմում է, թե 1395 թ. Լանկթամուրը Միջագետքից դարձյաւ
արշավում է Հայաստանի վրա, սրով ու հրով և գերութեամբ ավերում եր-
դրեալ, Բասեն, Արարատյան գաղաղը, Սուրմառի, Կողբ և այլն։ Դրան էլ
հաջորդում է սովը։ Կոիվ է լինում Ձաղաթայի և Յուսուփի (Թուրքման
Ղարա Յուսուփի) միջև, որ փոխում է Ձաղաթայի ձեռից։ Երրորդ անգամ
էլ Լանկթամուրը 1401 թվին արշավում է մեր աշխարհի վրա, 1403 թ. ան-
գութ կոտորածներ անում Սեբաստիայում, հաղթում է Իլդրումին [=սուլ-
թան Բայազիդին], վերագառնալով ավերում, գերում մինչև Վրաստան և
ետ գնում իր քաղաքը։

Այնուհետև Մեծօփեցին ավելի ու ավելի մանրամասն գրում է Լանկ-
թամուրի հաջորդ Ծահ-Ռուհի (1405—1447 թ.) և Ղարա Ղոյունլի Ղարա
Յուսուփի, սրա որդի Աջանդարի (1420—1437) և սրա եղբայր Զահան-շահի
օրով կոտորված գեղջերի մասին։ Ծարունակ պատերազմներ, հարատե
նայն ավերածնունդներ, կոպտութիւններ, յատկապէս խաղաղութիւնն այս-
կամ այն ջրջաններում, այն էլ մեծ հարկապահանջութեամբ նեղում են մերկ,
ընչպիսիք ժողովրդին։ Պատմագիրն իր պատմած եղելութիւններին ոչ
միայն փամանակակից է, այլև ականատես և անձամբ կրել է յատկապէս
թուրքները։ Եւ այս կսկիծ դառնութեան անհատելի է ընդ գրով արկանել,
զայս աղէտ տարակուսանաց նեղութեանս։ Բայց սակաւ մի ձեռնօթութիւն
տամ յետ մեզ եկելոցդ զի լալով լայք զկորուստ ազգիս Հայոց, զի անձամբ
ի ներս կայաք (էջ 91), և տպաւորեալ կորով է՝ սրտաճմրիկ նկարագրում
է երկրի թշուառութիւնը։ Եւ այս եօթն ամբ են որ ի ներքոյ դառն պա-
տուհասի կամք. զի սուրն կորոյս, սոփն սպան, դերին պակասեաց, զազանք
կերան դմարգիկ, թռչունք կերան զվատաակ... (էջ 95)։ Վերջին գեղքը
որ պատմում է, Ծածուկտէ քաղաքի, ապա և Տփղիսի տուումն ու կործանումն
է 1440 թ. Ղարա Ղոյունլի Զահան-շահի ձեռով։

Ինչքան ըստ երևույթին անշուշտ է Մեծօփեցու այս պատմական գործը,
բայց նա դրանով շատ պայծառ տալիս է մեզ իր չարաքաստիկ ժա-
մանակի թշուառութիւնների տխուր պատկերը 1396—1440 թ., երկրի ան-
կումն ավելի քան Լանկթամուրի ձեռով՝ նրանից հետո իշխող թաթարների,
թուրքմենների ու քրդերի վայրագ արարքներով։ Հարատե իշխում է մի

մղձովանջային գրուեթյուն, որ յատ զգայուն սրտով և կենդանի ցուցադրում է մեր այս սլառամեղիքը, որովհետև ինքն էլ ուրիշների հետ անձամբ ապրել է յառ բան: Պատկերը լրիվ է, քանի որ նա միաժամանակ խոսում է նաև վանքերի և նշանավոր վարդապետների—Հովհան Որոտանցու, Գրիգոր Տաթևացու և նրանց աշակերտների անդուլ գործունեության մասին՝ Հայաստանում յուսավորության ու գիտության ճրագը գոնե՝ վառ պահելու այդ աղետալից գորում: Այդ մենք տեսել ենք արդեն:

Մեծօփեցու երկրորդ աշխատության նյութն է կաթողիկոսական տաճարը 1441 թ. Միս քաղաքից Վաղարշապատ տեղափոխելը և Կիրակոս կաթողիկոսի աթոռակալությունն ու անկումը հաջորդ երկու տարուս: Սկզբում անուններով հիշում է այն նշանավոր վարդապետներին, որոնք զանազան վանքերից համալսվելով եկեղեցական ժողով են անում: Ենե այլ բազում վանորայք և կրոնաւոր սուրբ հորք և պատուական երիցունք աւելի քան զերեք հարիւր տնէինս և բազում միայնակեացք. և ազատք և որդիք աղաւթաց ձեռնաւորք և տանուէրք. և անթիւ և անհամար բազմութիւն ժողովրդեան՝ բոլանց և կանանց: Մի խումբ հետավոր վարդապետներ և եպիսկոպոսներ զբաւոր թղթով իրենց համաձայնությունն են տալիս աթոռի տեղափոխության համար: Այա Մեծօփեցին մի առ մի թվում է այն պատճառները, որոնց հետևանքն է եղել կաթողիկոսական աթոռի տեղափոխությունը, որ կատարվում է Հայոց եկեղեցու ժողովան առաջն անգամ: Այդ վերաբերում է Հայոց եկեղեցու պատմությանը՝ Այստեղ այն միայն պետք է շեղուել, որ այդ խնդիրն, ինչպես տեսել ենք, մեր բանաստեղծության մեջ արծարծված էր դեռ 1300 թ. Ստեփաննոս Օրբելյանի «Ողբի» մեջ և այժմ, մոտ դար ու կես հետո, իրագործվում էր Գրիգոր Տաթևացու և ուրիշների աշակերտների—լավագույն հոգևորականների՝ ձեռով, որոնցից մեկն և այդ գործին նախաձեռնողներից ու ձեռնարկողներիցն էր ինքը Քովսէա Մեծօփեցին:

Բայց նրանք եկեղեցական դասի մի փոքր մասն էին կազմում, այն էլ ոչ մահնքը լավագույններից: Այն կողմում կար կրոնավորների, վանականների սովոր մեծամասնությունը, նրանք, այսպես ասած, աշխարհական վանականներն էին, որոնք վանքերից ոգավում էին միայն իրենց վայելչությունների և հաճույքների համար, իսկ իրենց կենցաղով չէին տարբերվում աշխարհականներից և երբեմն ամեն տեսակ արատներով ապականված և ավելի ևս ընկած քան աշխարհականները:

Քովսէա Մեծօփեցին իր Պատմության մեջ հանդես է բերել 14—15-րդ դարերի անձնվիրությամբ աշխատող լավագույն վարդապետներին, իսկ այստեղ, նրա այս փոքրիկ երկի մեջ մենք տեսնում ենք եկեղեցական դասի վառվար կողմերը 15-րդ դարում, նրա բարոյակալ քաջայումար, զեղծունեները, խարզավանքներ, կառառակերություն, ժողովրդա և անկարգ ու վաճառ, հեշտասեր ու ցուր կենցաղ և այլն: Անառակութեամբ և արրեցութեամբ և

¹ Քովսէա Մեծօփեցու: «Յիշատակաբանը», հրատարակելի համալրումով հարդեա հաստանայն, Թիֆլիզ, 1893:

² Տես Անդ, էջ 7—48. Կ. Կոստանյանցի առաջաբանը. «Մ. Էջմիածնի վերանորոգությունը Ժն դարում»:

դիդծ վարուք շրջէին, և ինքեանք կապող և արձակող նստէին Հայոց (էջ 56),—և այսպէս իրենք կաթողկոսները:

Վանական կրօնավորներին տնկումը սկիզբն էր տուել շատ վաղուց. ներսես Ծնորհալու գրվածքների մէջ արդեն այդ տեսանքը, Այդ գրութունը երբեմն զորանալով, երբեմն թուլանալով հարատեւ էր, և 15—16-րդ դարերում արդեն, կարելի է ասել, ծայրահեղութիւն էր հասել: Թեպետ կոյն, անշուշտ, և սրբակրօններ, բայց նրանք փոքրաթիւ են եղել և հետզհետեւ կորցրել են իրենց ազդեցութիւնը: Այդ է պատճառը, որ էջմիածինը 1441 թ. դառնալով եկեղեցական կենտրոն, երկու հարյուր տարի շարունակ, մինչև 1640-ական թվականները, չի կարողացել դառնալ նաև կուլտուրական կենտրոն և առաջ բերել գրականութիւն:

ԱՌԱՔԻՆ ՍՅՈՒՆՆԵՐԻ

1. Կենսագրական:—Տաթևյան դպրոցի առաջնակարգ եկեղեցական բանաստեղծն է Առաքել Սյունեցին, որի կենսագրութիւն մասին շատ բան չգիտենք, նա Գրիգոր Տաթևացու քննորդին էր և աշակերտել էր նրան, ինչպէս պետք է եզրակացնել նրա հետևյալ տողերից.

Ձմեծ վարդապետն իմ գառնաց,

Գրիգոր անուն պատճառ բարեաց,

Երէք յաղթա ձեր առ աստուած...

Ձիւմ մեծ բարունապետն յոյժ իմաստասէր

ՁԳրիգոր մեծ ճշմարկեաց ազնուէք առ թէր...

Ձմեծ վարդապետն իմ հանճարեղ

Առաքելն արքեպիսկոպոս էր, «Սիւնեաց վերադիտող», այսինքն գրված խափոր տեսուչ, առաջնորդ, որ նստում էր Տաթևի վանքում: Նա բնակա-նարար հովանավորում և օժանդակում էր իր առաջնորդարան վանքի ծաղկմանը, ինչպէս տեսել ենք, նա անձամբ ուրիշների հետ գնում էր Սողոմոսվանք՝ Գրիգոր Տաթևացուն իր աշակերտներով վերադարձնելու Տաթև, որտեղից նա այլազգիների պատճառով ստիպված հեռացել էր: Թովմա Մեծոփեցին, որ Տաթևում լսում էր Գրիգորին, շատ գովում է Առաքելին. «Եւ էր սուրբ ուխտին առաջնորդ հեղահոգին և ընտրեալն յորովայնէ՝ առբր եպիսկոպոսն տէր Առաքել և մեծ իմաստասերն, քուերորդին մեծ վարժապետին, որ ունէր զմիացն իրրև զհրեղիսաց. և էր սիրող ամենայն տա-լիսութեանց»: Ուրիշ անգամ այս պատմադիրը նրան անվանում է «իմաստասեր եպիսկոպոսն և վարդապետն Տէր Առաքել»:

Գրիգոր Տաթևացին էլ 1407 թ. գովեստով է խոսում Առաքելի մասին, գրելով թե իր գրքով¹ հիշատակում լինի՝

¹ Առաքել Սիւնեցի, «Աղամդիբք», Ղենեթիկ, 1907, էջ 229, 271, 282 (հիշատակարանների մէջ)։

² Թովմա Մեծոփեցի, Պատմութիւն, էջ 51, 52.

³ Գր. Տաթևացի, Գիրք քարոզութեան, Ամարան հասար, վերջին հիշատակարան, էջ 721.

Նախ քանորդւոյն իմոյ ըստ մարմնի,
Մըմընդամիտ երգարտնի,
Առաքելոյ առաքինի,
Եւ Սիւնակուն զբլիւոյ արհի:

Վերջին տողից էլ իմանաւ ենք, որ Առաքելը եղել է Սյունիքի առաքինի, որ է՝ զլիակաւոր առաջին եպիսկոպոսը, արքեպիսկոպոսն ու առաջնորդը (զլուիքը):

2. Երկերը:— Բացի առաջնորդական զորեքերից և զբովանալթյունից՝ նա ամենայն հասկանականությամբ ունեցել է նաև ուսուցչական գործունեություն, և իր աշակերտներին համար հորինել է «Մեկնութիւն կամ համառոտ լուծմունք Սահմանաց՝ զբոցն Դաւթի Անյաղթին, և Քերականութեան մեկնութիւնն կամ Քերականութեան լուծմունքն»։ Եվ իզուր չէ, որ Մեծոփեցին նրան իմաստասէր և անվանում:

Բացի այս երկուտից՝ Առաքել Սյունեցին ունի նաև բազմաթիվ ուրիշ բանակ գրվածքներ, մեծ մասամբ քարոզներ և ներբողներ,¹ բայց նա ավելի չափածա գրող է։ Մի «Ճննդամիտ երգասաց, արգասավոր բանաստեղծ»։ Տաղարաններ և զանաւորանների մեջ կան բազմաթիվ տաղեր, որոնց հեղինակն զրգում է Առաքել Սյունեցին կամ «Տէր Առաքել» կամ «Տէր Առաքելու», ինչպես նա ինքն իրեն անվանել է իր գրվածքների մեջ։ Բայց կան շատ այնպիսի տաղեր էլ, որոնց հեղինակը հիշվում է լոկ «Առաքել» անունով, և այդպիսիները կարող են նաև Առաքել Բաղրշնչունը լինել։ Համարձակ կամ համոզմունքն Առաքել Սյունեցունը համարում են մոտ հիսուն տաղ և մի մեծ տաղաբաղյալական քերթված «Վառն երկաստան կենդանակերպիցն ... ասացեալ ի յԱռաքել վարդապետէն, միջին կա նաև այս տողը։ «Տէր Առաքել զրեցի դայա բանն՝ Այստեղ քննության չենք առնիլ նրա այս երկերը։ այլ միայն նրա մի մեծ քերթվածը, որ հայանի է «Աղաժգիրքն անուշնով»։ Առաքել Սյունեցին, ըստ երևույթին, ունի նաև աշխարհիկ ողբով բանաստեղծություններ, անգամ՝ սիրու երգեր, բայց տաղերին զրոգը մեծ տեղ չունի այնպիսիք։²

¹ «Բազմադէպ», 1913, մարտ, էջ 97—101. Մ. Գառաւադեանի «Մասնադասութիւնք Առաքել Սիւնեցւոյն—Այստեղ հիշված են 18 արձակ գրվածքներ, որոնց վրա զետեղ է ավելացնել նաև վերահսկ հիշված ներբողային, որ նա տեսել է Գրիգոր Տաթևացու մանկանութիւնը»։

² Տղաբաղյալ է 1703 թ. Նոր-Նախիջևանում, Հովհաննէս Երզնկացու «Ճաղագր երկնային շարժմանն» խոսքում է «Տեսարակ համառոտ և լի... վերնագրով»։ Աշխատության ետևում, էջ 63—73։

³ Ռուսերեն թարգմանված «Հայոց բանաստեղծութիւն ծագագրին մեջ» (Антология армянской поэзии, под ред. С. С. Арутюняна и В. Я. Кирпичникова, Москва, 1940), էջ 260—261 «Աղաժք» (перевод М. Кузмина) վերնագրով, Առաքել Սյունեցու անունով աղված են 10 քառյակներ, որոնց շատ զեղեցիկ սիրու երգի տներ են։ Ոչ մի կերպ նախադաս չհաղվ ինչ գտնել զրանց հայերեն բնագիրը։ Այդ ծագագրում հայ խմբագիրն էլ չկարողացավ հայտնել. թե սրանից են թարգմանել մեծ ինքնուրույն լուծմունքն և ինքնուրույն ծագագրով հայտնել Տէր Առաքելի ամենազեղեցիկ զորեքերից մեկը պիտի լիքն առանց նկատի առնելու այս աշխատության մեջ։

8. Աղամզիբի Գ:—Առաջելի Աղամզրբի երբորդ աղագրությանը՝
կազմված է երեք գրքերից, որոնք ոչ թե նախն երկի մասերն են, այլ մեկն
մեկը մի ասանձին գործ է. բայց երեքն էլ վերաբերում են նախն նյառ-
թին, որոյին մարդկանց—Աղամ-Եվայի սեղանյաման ըստ Ո. Գրքի: Ամենից
առաջ 1401 թվականի սկզբին հարինված է երբորդ (Գ) գիրքը, ինչպե-
սինքն հեղինակը հայանում է այդ գրքի ճիշտապես բաննորին սեղ: Այդ մի
փորձ է մի նոր գրական տեսակի: Առաջին դուրսը ութվանկանի քառասու-
նուհաւանգ աներով (թվով 30), դրամաիկական ձևով մի հարինված է,
սենսաբանությանն եր Աղամի և Եվայի, և կամ խոսքերի փոխանակություն
այս երկուսի միջև: Դրախտից արտաքսվելուց հետո է. նախ՝ ինչպես մի
տեսարանի մեջ հանգես է գալիս Աղամը, հետո՝ Եվան: Դիմում են խորդ
բանասերկուն. թե ինչու նա նախանձում է մարդուն, կնոջը դարձնելով իր
չարիքի ընկեր՝ դրկել է նրանց անձու փառքից, անմահ կյանքից, ինքն
էլ այինչ չօգտվելով պիտի ժամանդի անեծքն ու անշիջ հուրը: Բանասե-
րուի վրա հարձակվելուց հետո՝ հիշում են իրենց կորցրած վիճակը:

Աղամ ասէ.

Ձերդ զարեգակն էի մարմնով,
Ճառագայթեալ պայծառ հոգով.
Աստուածաբիղ ձգկեալ լուսով,
Ընդ հրեշտակաց պարակցելով:

Եւս ասէ.

Եւ որպէս հարսնս գորդարեալ,
Եւ յառաջստ լուսոյ բազմեալ.
Որպէս դրչեալ փառք հրճուեալ,
Նարանջոյ ճառագայթեալ:

Աղամը սեղանությամբ հանդիմանում է Եվային. սա մեքքը ձգում է
իրեն խորդի վրա.

Եւս ասէ.

Ինձ վայել է՝ դոր դուն տառ,
Պաճառ չարեաց եղէ եւ քեզ.
Բայց դու ահանջ գիր որ լըսես,
Ձիւ հէնց խորեաց՝ գիրնչ եւ ըղձեզ:

Աղամ ասէ.

Եւ ի սիրոյ քս յաղթեցայ,
Վասն այն ի քէն հէնց խորեցայ.
Ով որ կընոջն ան հաւատայ,
Այսպէս չարիք լինին նմա:

¹ Առաջելի Սեւեհի, Աղամզրբի, հրատարակեց Մ. Պատարյան, Վենետիկ, 1807, երեք գիրք՝ Ա, Բ, Գ, ձեռագիրների բողոքաբանությամբ. հին աղագրությանների մեջ 1731 թ. և 1795 թ. պահպանված է մի գիրքը:

² Անդ. էջ 231. «Ի յաթ հարիւր Հայոց Թուական և յիշնորդ ժամեւ Նոր ամ. էջ 232. «Ի յաթ հարիւր Հայոց Թուական և յիշնորդ սկսեալ Նոր ամ.:

Եւս առէ.

Ես վառն քո չար չկամեցայ,
Վասն ալ փառաց դայն խորհեցայ.
Քո ինձ լըսելն ես չշահեցայ,
Այլ դքեղ քոն դիս առակ տեսայ:

Աղամբ շարունակում է իբր հանդիմանական խոփերը: Եվման բրգա-
բացնում է իրեն.

Եւս առէ.

Ինձ լըսեցեր վառն փառաց,
Հանդիպեցար անարգանաց.
Համբերեցուք չարչարանաց,
Քանզի կերաք մեք հեա իբաց:

Հեռա երկսւսն էլ զղջագին ողբում են իրենց վիճակը.

Աղամ առէ.

Ահա բանամ դքերանս ցաւօք,
Աղաղակեմ հաւաչանօք.
Սաստիկ զոչեմ դուն բրտասուօք,
Քանզի ի հուրն անկայ աղզօք:

Եւս առէ.

Կըսկըծեցաւ սիրտս ի փորին,
Ընդ ճաշակել զառնն պղին.
Մորմօքեցաւ առ իս հոգին,
Ընդ բարբառել թիւնաւորին:

Աղամ առէ.

Հառաչելով դանձն իմ բախեմ,
Քոչմամբ ըզսիրտըս պատառեմ,
Ճիչ բառնալով աղաղակեմ,
Մինչև ի հոգ զարձեալ ներհեմ:

Եւս առէ.

Քուներս հատեալ է ինձ յաչաց,
Ի սասակագին հառաչանաց.
Երկունք մահու դիս պաշտբաց,
Ձի ինձ անշէջ հուրն է վառած:

Աղամ առէ.

Լալով իմ սիրտս ոչ հանդարտի
Որքան ողբամ՝ հոգիս մաշի.
Հեղձամղձուկ լինիմ յերկրի.
Յետո ի հուրն անշէջ ելի:

Եւստասէ.

Ինչ հուր վառեալ կայ ի սրբաբն,
Եւ մարմոքէ միշտ ըզհոգիս.
Մուկ ե ձրծուժք այս մըրքըկիս
Չթողու հանգչել ինչ յաշխարհիս:

Աղամասէ.

Ես որպէս մոմ հալեալ դողամ,
Հառաչանք զանձն իմ ողբամ.
Թ՛ յորժամ մտտնիմ ի դառաստան.
Աստուծոյ թնչ առաջ պատասխան:

Եւստասէ.

Դու որ յինչն եղեր խորած,
Այդքան ողբաւ առեկուտած,
Ես որ պատահու եղէ չարեաց,
Ինչ թէ քանի՞ հուր կայ վառած:

Վերջը երկուսն էլ մեղքը ձգում են աստուծու վրա. ասելով, որ եթե
նա ծառն ու պատուիր կամ օձը սաեղծած չլիներ, կամ իրենց պապիւրն
ազած եւ անձնիշխան թողած չլիներ, ապա

Չէ՛ք խորեալ որպէս անբան,
Կամ մերկացեալ զփառս անվախճան:

Շարունակութեան մեջ իշխում է ռուսավորով մեկնաբանութիւնը
հեղինակի կողմից, թե ինչպէս նախամարդերն աշխարհի փորձանքի պիտի
հանդիպէին. նա մեղադրում է նախնիներին, որ օձին են լսել և ոչ աս-
տուծուն. նրանք պատասխանում են, թե իրենց հանցանքը մի խրատ պիտի
լինի մարդկանց համար: Աղամը դարձեալ սղբում է, որ կորցրել է իր նախ-
կին վիճակը. Հեղինակն իր կողմից դիմում է բանասերկութիւն և օձին՝ ուժեղ
խոսքերով բնորոշելով նրանց. դեհը պատասխանելով՝ արգարացնում են
իրենց: Ապա նա մի գլուխ նվիրում է «բարեխոսութեանը» և վերջին գլուխը
(Ժ), դարձեալ բովանդակում օձին և բանասերկութեան, թէ որպէս պատրեաց զնախ-
նիսն: Այս է ահա այս բնութագրիչ Բ—Ժ գլուխների բովանդակութիւնը:

Մեջը կան սակավութիւն գեղեցիկ տներ. բայց այնքան մեծ տեղ են
բռնում մեկնութիւնն ու դատողութիւնները ժամանակին հետաքրքրող
էրոսական հարցերի մասին, որ ամբողջութիւնը դառնում է ձևով անկա-
տար մի երկարաբան գործ: Հեղինակը չի կորոզացել մինչև վերջը պահել
սկզբնական հղացման ձևը. գործող անձերին—Աղամ, Նվա, Բանասերկու,
Ժ, աստված—հետզհետե քնն հանելով՝ նրանց բերանով հայանել կարևոր
համարած նյութը: Այդ, երևի, անհնաբին է եղել այն շրջանում, երբ իշ-
խում էր սքոլաստիկական մեկնաբանութիւնը, որը բանեցնելը համարվում
էր ամեն հեղինակի համար մի անհրաժեշտ պահանջ ու պարտաւոր,
մանաւ-
նաւոր որ Աստուծոյ իր այս աշխատութիւնը հրինել է Դրիգոր Տաթևացու

հրամանով աւ ծրագրով և շնա ուղղեաց ըզկարգ բռնին ըսա իւրաքանչիւր
պատշաճին», ասում է նա երկրորդ հիշատակարանի մեջ:¹

Բայց և այնպես Տէր Աւագիկի այս բանաստեղծութիւն մեջ արդէ չա-
փով կա մի նորութիւն, որ ըստ Էրնայթին հաճելի է եղել մամանակա-
կիցներին:

4. Աղափղիբք Բա—Առաջին գիրքը բովարտութիւն չի տվի բնա-
ստեղծ հեղինակին իրեն. ուստի նա 1403 թվի սկզբներին գրել է մի ուրիշ
«Աղափղիբք», ըստ ազգագրածին՝ Աւր,² ըստ գրութիւն մամանակի՝ երկ-
րորդը՝

Ի յաւթ հարիւր Հայոց թվական,
Երեսուն 'ւ երկու մտնալ նոր տմ,
Յօրհրդաւոր բանըս գրեցան՝
Ի խրախուժիւն սըրտից մարդկան:

Այս գիրքն էլ նախորդի պես չի է նման թերութիւններով և ավելի
ևս մեծ չափերով, որովհետև մարդիկ ծավալն էլ ավելի մեծ է. բայց ա-
ղայման մեծ են սրտ և անուղիւսթիւնները: Այս անգամ Աւագելը գրել է
մի գեղեցիկ վիպական բանաստեղծութիւն, մի գրական տեսակ, որ վա-
ղուց արդեն սիրելի էր հայ ընթերցողներին: Նա հարկնել է մի կրօնական
քերթոված՝ նյաւթ առնելով Ս. Գրքից Նախնիների մեղանշումը—զրախտի
կորուստը, ինչ որ շատ ուշ դարձած է բանաստեղծութիւն անարկա ալլ
ազգերի մեջ: Այս քերթովածն իր վիպական մասով մի սիրուն նորութիւն
էր մեր կրօնական բանաստեղծութիւն մեջ, մի ուշագրավ ընթերցանա-
թիւն գրվածք, որ բովարտութիւն է ավել ոչ միայն մամանակակից-
ներին, այլև նետագա դարերում, անգամ 19-րդ դարում, ինչպես երևում է
այն հանգամանքից, որ դա երկու անգամ ազգագրվել է 18-րդ դարում՝ 1731
և 1799 թվականներին: Այժմ էլ դրա որոշ մասերը կարգացվում են հա-
մարձում:

Պատմվածքը հաշակավոր է. Աստվածաշնչի պարզ գրույցը հախոցրած,
հինգանցրած է՝ ստեղծելով արտաքինի 'և ներքինի—հոգեկան կոզմի հա-

¹ Անդ, էջ 224. Եւրենք և հետեյալ անքը.

Վերագրեալն իմ ըստ հարց,
Եւ ազգակից հիսթս մարեայ,
Նա հըբմեաց ինչ գըրելոյ
Պատմաւորաց ըստ իսրէրդոյ,
Առաջ գըրել ինչ ըստ հարգի
Յազգաւ նախնեաց յիշատակի,
Վասն Արամայ և Եւայի,
Ի զէմս անին և բանաբկուիս
Բարեւնապեա յայտ պանծայի,
Մով իմաստից, ծաւալց շնորհի
Ի նայն շնորհի մասն ինչ տակ,
Չորանաւորաց շարադրեցի...

Աղա 16 գեղեցիկ աներով պովարանում է նա Գր. Յոթեացուն:

² Անդ, էջ 225.

մաք թաքմ մանրամասնությաններ, նոր յառիճներ, միջոգեղեր աւ նկարագիրներ:

Սկզբում, Ա գլխի մեջ, պատմում է աղբարդության մասին, իսկ Բ գլխի մեջ խոսում է աշտան գեղարդութեան նախնեացն և դրախտին: Մի նոր հայացում, որ չկա Ս. Գրքի մեջ: Ամբողջապես լույս աւ փայլ է, հաղիկ աւ բարձունք: անմահության հաս. բերկրանք աւ ցնծության: Եվ երջանիկ է Ադամ իր փառքով:

Անդ լոյս սիրոյն ճառագայթէր.
Եւ խընդութեամբ փառքն փայլէր.
Ուրախութիւն յորդաւոյնէր
Եւ հրեւանաց ձայնն հընչէր:

Այս գլուխը (20 տուն) զբմեջի չքեղ նկարագիրներից մեկն է. համաար գեղեցիկ են գրեթե բոլոր տները:

Էր փառք զրախան անպատմելի,
Զքնադասան և սըխրալի,
Ծաղկունքն առյր փայլըս փայլի՝
Արեգական նման և լուսնի:
Գէմքն Ազաժայ փառք ծաղկեալ,
Եւ որպէս լոյս ճառագայթեալ.
Յովմունք լուսոյ անտի հասեալ
Եւ որպէս հուր փայտատկեալ...
... Բուրէր և հոտ անմահութեան,
Բերկրեալ խաւար ինքն ընդ ինքեան:
Ադամ ծաղիկ էր նորածին:

Լուսարողորջ պարնանային,
Փըթթեալ փառք ի մէջ դրախտին՝
Ծափըս ծափի առյր ի շըրտին...
Ոտքն ճեմս առեալ զարէր,
Ի մէջ ծաղկանցն որ վառ վառէր
Զեռքն ծափըս հարկանէր,
Զի խընդութեանցն ոչ հանաբարէր:
Ծառքն և ծաղկունքն որ ի դրախտին՝
Զերդ զարեգակըն փայլէին,
Յանուշահոտ բարձանց նոցին՝
Որպէս թըմբեալ լինէր նախնին:
Մարտիրոս անմահ էր՝ ւ. անթառամ,
Փառք ծաղկեալ էր պանաղան.
Սըրաիւ ցընծայր խըրախանական,
Բերկրեալ ի փոս աբջուանկան...
Անդ հոգ դրախտին փայլըս փայլէր,
Պի ի ջրոյն ցովմունք լուսոյ հոսէր,
Օդք զանմահից հոտըն բուրէր,
Հուրըն վառեալ ճառագայթէր:

Ամեն ինչ լուսավոր ու ժայլուն էր. բայց միակերպ չէր ասածու և մարդու, ծառերի ու ձաղկանների լույսը,—ասում է բանաստեղծը.

Անդ կերպ լուսոյն էր զանազան,
Յեղ մ' անեղին, ցեղ մ' հղակոն,
Այլ ապա դառնաին, այլ ապա մարդկոն,
Եւսք և ձաղկանցն այլ դանադան:

Բանաստեղծը տեսնելիքի հետ չի մոռանում նաև լսելիքը. հաստեղծիքն ու հաշակելիքը.

Անդ ոչինչ չէր զոյն ձաղկանցն հըրհուէր,
Ականջն ի ձայն դուարթնոցն դմայէր,
Որնկունք յանոյշ հոտոյն թըմբորէր,
Բերանըն միզա քաղցը հաշակէր:

Այդմի փուքն ու հրճմանքն ավելի մեծ էր և յայնու, որ նա, աստուծո՛ւ պաշկերը, ձաղկում էր աստվածային լուսով, իսկ

Աստուծո՛ւ ընդ փուք մարդոյն հանգչէր
Նա յիւր պաշկերն ուրախանէր:

Կան միայն աստված ու հրեշտակներ և երկու նախնիները, Կան և Սաղայելն իր դեերով, որոնք արդեն երկնքից կործանված են անդունդ և ընկած են իրենց սկզբնական փառքից: Գեղադարձ գրքաւոր, նախնիների բնակարանը, ու նրանց դրախտային վայելչությունը գրգռում է չար Սաղայելի նախանձը և այս դառնում է մի մոռիվ, մի դրդիչ քերթվածի մեջ գործողությունն առաջ բերելու: Եվ բանաստեղծը բնական ձևով անցնում է ավամն բանաստեղծին և օձին և խարմանն (Գ. գլ. 130 տուն): Այստեղ երևում է Պերթողի շնորհքը տեսարաններ ու դրություններ, հագեղան վիճակներ ստեղծելու, գործողությունն ընդարձակելու և գործող անձերին խոսեցնելու իրար հետ և բնութագրելու ավելի իրենց ասած խոսքերով:

Ամենից առաջ հանդես է գալիս Սաղայելը, չչարն առաջինն, իր դեմքի հետ (աներ 1—51): Նա Այդմի դառնության երջանկությունը տեսնելով՝ նախանձից արագում է: Բայց ավելի լավ է՝ բերենք Գերթողի առդերը.

Չայս ամենայն տեսալ չարին՝
Հեղձամղձուկ լինէր յանձին,
Նա մորմոքէր կըսկըծագին՝
Պիղծ Սաղայէլ չարն առաջին:
Ուրպէս ըզհուր վառեալ հնոցին՝
Նա բորբոքէր զչարն ի հոդին.
Նա դիզանայր ձուխ նախանձին,
Կայր խաւարեալ բոլորովին:
Ողբայր սաստիկ հասալագին,
Նա մտխանօք մաշէր զհոդին.
Չար նախանձողն որ տա նախնին՝
Հանգիստ չունէր ամենին:

Ձագն գառնութեան իւրոյ մանկին
Փըսիւէր զգաստքն անգընդային,
Սպասնմամբ ցասնոյր չար բանակին,
'Ի ի բարկութիւն շարժէր զնոսին:

Ժողովովում են նրա մոտ խովորային դասերը, որ իմանան, թե ինչ
է կամենում իրենց պատը: Եւ նա

Ասէ «Բերէ՛ք զարկածք չարին
Առ հասարակ տաննէսին,
Արկէ՛ք ի ըսկս հրահալոցին,
Տեսցուք, թէ զինչ ծնան իցին:

Սողայիկ հաղաւանները բերում են պարի արկածները, այսինքն
չար փորձանքները, մտնն տեսակ մեղքերի պատճանքները, ինչ որ աղա-
ղայում լինելու էին, լցնում են անյիջ հրաւիր բովի (քուրայի) մեջ ու բոր-
բքում և իրենց խոսքերն ասում, ճիշտ ինչպես նախը, ըստ միջնադարյան
սնկավառքի, իբր չար ոգու գորութեամբ մտնում էին կախարդները: Եվ
ի՛նչ են ասում չար ոգիները Սողայիկին: Մենք Աղամի ծնունդներին չար
կանենք, — ասում են նրանք, — իսկ նրան, այդ առաջին մարդուն, դու պիտի
խորատկես: Դու հակառակ կանգնեցիր Աւարին, և մենք քեզ հետեւելով՝
անձառ փռուքից արտաքովեցինք, իսկ այս հողափինք մեզ հակառակ՝ պիտի
զնա և քնակովի Հզորի մոտ: Այդ դեպքում մենք էլ չենք կարող հաղթել
նրան: Այժմ է ժամանակը նրա կորուստը հնարելու: Մենք քեզ շատ բա-
րասեցինք, թե ինչպէս հակառակ բան չի մտածում: Դու շատ գորք ունես:

«Այնպէս մեծ չար խորհեա զոցին,
Որ յաւիտեան ոչ ապաքին,
Ձի վիշաք չարեաց հողեղինին
Յիւր արարիչըն հասանին:

Մինչ այդ Բանսարկուի բարձր վառվում է և

Հալեալ ծընու զպատկեր չարին,
Որպէս և որթն յանապատին:

Այդ ժամանակ ահա Բանսարկուի մաքում ծնվում է իր անելիքը:

«Ուրախ լերուք, ասէր ցնոսին,
Առ իմացայ գկորուստ մարդին:

Եվ նա բացառում է, թե իրենք անհնազանդութեան պատճառով են
արտաքովի երկնքից, այնպես պիտի անել, որ Արամն էլ չհնազանդի ա-
սուծուն և արտաքովի զբախից:

«Եւս Աղամայ յաղթեմ, ասէր,
Բայց զուք կցէք այլոցըն ասէր,
Բայց թէ յաղթեմք հողեղինին,
Այն որ հընարք է մեր չարին:

Այլ հնարեսցուք զանհրճաբերն՝
Մինչև ի մահ զալ Անմահինս:

Եվ բռնաստեղծը թվում է բազմաթիվ չարիքներ, մեղքեր, որ չար
ոգիները պատրաստում են մարդու համար:

Ասեն. «Բերե՛ք զանպակ գինին,
Ըղգառն և զմրուրն խաւարային.
Քաս բրունեսցուք նախաստեղծին,
Ձի նա արբոցէ դմեն իւր մեծինս:
Բերին գիւտողոյն գառնալի,
Ձողկոյղըն չար ուրպէս լեղի.
Արկին ի հրնմանըս թիւնալի,
Ձի բարկութեան բաժակ լիցի...
Սըրածառութեամբ զայն կոխէին,
Եւ բարկութեամբըն ճըմլէին.
Ի վիշապաց գինի հանին՝
Քառնեալ թիւնօք մահաբերին,
Ձսըբամբոսութիւն խօից չարին.
Ձմըբուր մաղձից թիւնաւորին,
Ձի որ ըմպէ զնա կամային,
Այլ հնարք չըկայ թէ բըժըշկին:

Պեսպես սկսվում ենք մեջ լցնում են այն գինին, որ զանազան
մեղքերի որակ ունենալ, — «Ո՞րք գինի յիմարութեան», ««Ո՞րք գինի մոռացու-
թեան», ««Ո՞րք գինի խաբէութեան», զոգութեան, ազատութեան և ամեն տե-
սակ մեղքերի գինին» Այսպիսի չարիքներ նյութիւնուց հետո՝ Ստոյանը
մտնում է օձի մեջ, որ սկզբից հենց ռի ունենալ Աղամի դեմ, որովհետեւ սա
նրա մեռնելը օձն էր գրել, իսկ այս մեռնելն այն կենդանին իր համար
պարսպ էր համարում: Բանասերկու՝ որ մտնում է նրա մեջ, իր թույնով
լցնում է նրան, որ առաջ թունավոր չէր:

Գուրիս է թունալի օձը Եվայի մոտ կանգնում ու խորում նրան (մենք
52—72).

Ասէ. «Ուրախ լիք և բերկրեալ,
Դեպ աւետիս առաւ 'ւ Աղ—մայս:

Նա նենգութեամբ մեռնում է նախնիների հնազանդ բարեկամը և ոչ
անգետ, ինչպես անասունները, այլ իբրեւ իմաստուն, որ գիտե ձեռնակ
բաները, լինելիքները. գիտե, որ մարդկանց համար մի ուրիշ մեծ վտառք
կա. որ Ստեղծողը ձեռնակել է, չի հայտնել նրանց. Եվման հավատում է, թե
նա ամեն բան գիտե: Իսկ օձը շարունակում է շոգոքորթելով:

«Դու իմ գրչիս ևս անմիջիկան,
'Ի ևս քո ձառայ հնազանդութեան.
Որքան դու մէր լինիս ու իշխան,
Այսքան քոտօք ևս ճոխանամ...

«Բայց երբ հասնիս տխրւմ փռառց,
Հրաշափայլիս իբրեւ զաստուած.
Ի յանճառ կեանս հըրհուանաց՝
Յիշեալ թէ նա զայս բարբառեաց»:

Ուրեմն նա, որպեսզի հովասացնի Եվային, թե իր ասելիքը ստուշդ է, այնպեւ է անացնում, թե իբր ինքն իր (օձի) «զախ համար էլ է մատ-
նում, Բայց նախ քան զազանիքը հայանելը՝ մի պայման է գնում, որ Եվան
այն չափի Աղամին, Աղամը չիմանա այն»:

«Ձի նա հրպարտ է, բարկանայ,
Եւ անկատար բանքս մընայ.
Բայց դաւ հնազանդ ես, հաւատած,
Ձի դու լիցիս ասէր Աղամայ»:

Այսպեաւ նա խորամանկությամբ զրգուում է Եվայի անձնասիրությանը:
Ապա պահի լուսւմ է, մինչև որ կոխաբղիւով խելքահան է անում նրան,
և ասում, թե՝ ինչպէս ստեղծեցիր նախնանքի է և պատվիրել. «Մի ուտեք
յամէն ծառաց, Եվան հիմաբանում, դառնում է օձի խոսակցիցը և ասնց
Աղամին հարցնելու՝ պատասխանում է»:

«Մտոսց գրախաիդ որ այսքը կան՝
Մեզ ուտելոյ հրաման ասւան,
Բայց ի ծառայն չար գիտութեան,
Ասաց չուտել, զի մահ կու տան»:

Խորխուսով սերտխանում է Ձորը. նա արդեն գիտեւ զազանիքը և տ-
սում է, թե Տերն այդպեաւ պատվիրելով՝ խորել է նրանց, և որպեսզի իր
ասածը հաստատի, ավելացնում է, որ եթե այն ծառը բարեքի պատճառ
չլիներ, ինչպէս պիտի ասալձած ստեղծեր այն. Դրա պատգան ուտողը ոչ թե
կ'մահնի, այլ կ'ասալձածանա»:

«Թէ դուք ուտէք՝ ոչք ձեր բանան,
Իբրեւ զաստուած լինիք բնութեան.
Ահա ձեզ մայս մեծ աւետեաց,
Որ ի յակնաջըս ձեր հընչեաց,
Ձանճառ խորհուրդ զոր Տէր ծածկեաց,
Ես յայանեցի ձեզ սիրելեաց»:

Այստեղ վերջացնում է օձն իր տակիքն ու դերը: Բանաստեղծը գտու-
նում է Եվային և շատ կենդանի պատկերացնում է նրա վիճակը պատույն
ուտելուց առաջ, ուտելիս և հետո (տներ 73—86): Նա, թեթեւաբան Եվան,
ցնծում է փռուածությամբ. կարծես մի նոր արև ծագած լինել իր գլխին:
Նա արդեն մոռացել էր աստուծոյ պատվիրելը և մինչև անգամ խեթ սրտով
էր վերաբերում նրան, որ արգելել էր պատույն ուտել. զի երկնքից ընկած
չար փայտին, այսինքն Սաղայիլը, — ասում է բանաստեղծը. — նրա խելքն
տակ էր, միաքը խավարեցրել, Ուրախությանից թնչ էր անում նա»:

Խաղալը մարմնով գինչ ղիւտեալ,
Հիմա առնելով պարէր յերկար,
Վազէր ի ծառն անասնաբուր:

Պտուղն առնում է մեաւ, բայց զողում է մարմնով. զի զեւ կտակածուծ է, թե մի գուցե կորուսած լինի: Պտուղը դնում է բերանի մօտ, բերանը չի բացվում, բերանի պահպանները—շրթունքներն ու տառնները փակվում, արգելում են:

Իսկ չոր լեզուն որ բարբառէր՝
Ի ներսկուսէ զփակեալս ըսնէր...
Բացեալ զբերանըն դըմնային՝
Ծածեաց ըզթիւնքն օձի լեզուին,
Զմզձնն մահու որ ի սլաղին՝
Նա կլանէր ըսյորովին:

Եվ հանկարծ պատահում է սպասածի հակառակը.

Թանկարծ լինէր ի հիացման,
Ետեւ զոր ոչ կարծէր յինքեան.
Խլեցին պլուսայն պատմուհան,
Լինէր խաւար զիշերանման:

Նա սկսում է մորմօքուլ, կսկծալ, հառաչելով ազազակել. սաստիկ զօռում, գոչում է ինչպես անբան, բարձրաձայն ճշում է մտեգնած.

Նա արտասուալ սաստիկ հոսէր,
Լալով միշտ գանձն իւր հեղեղէր,
Որպէս սգաւոր զհեքսըն փետէր,
Եւ արեամբ դանձն իւր շողախէր:
Որպէս մուկայ ինչ կատաղէր,
Որ և ըզմիս բազկին ուտէր.
Պռնըն հառեալ, հանգիստ՝ չուներ,
Յազազակէն ոչ զազարէր:
Յերկինս հայել՝ աչքն մըթնէր,
Դիտել զերկիր՝ միշտ խաւարէր.
Յեւ և յառաջ տարակուսէր,
Թա՛յ և յահեակ միշտ երեւէր:

Եվայի դառն զիպվածի նմանը ոչ եղել է և ոչ էլ կլինի,—ասում է Քերթոզը.—ամեն անասն զմեզակ ցով երեսում էր նրա մեջ: Նա այնքան կակիծ ունեցաւ, որքան ունենում են մարդիկ, երբ մեռնում են և զմոքում ամենիցում անվերջ:

Հերթը հասնում է Աղամի խաբվելուն (տե՛ս 87—180)՝ Ս. Գրքի այս կարճ խոսքը՝ «Եւ ետ առն իւրում քնդ իւր, և կերան»՝ բանաստեղծն ընդարձակել, զարձարել է առն և կնոջ հարաբերութիւնները մի սիրուն պատկեր, որի մեջ Եվան, որ արդեն ճաշակել է բարու և չարի գիտութեան ծառի պտուղը, հանդես է գալիս ոչ իրրեւ մի պարզամիտ էակ, այլ արդեն ճանա-

չաւմ է իր չաբն ու բաբին, իր մարդու թույլ կողմը: և թե ինչպէս պիտի
ազգեւի նրա վրա: որ անթարկելի իր կնոջը և հետեի նրան: Ազամը միամիտ
ու թույլ է, նա սիրում է նվային: սկզբում աստանգում է: բայց նվան,
ինչպէս ասում են, լեզու է թափում, մինչև որ

հարբաւեցաւ միտքն Աշամայ....
Եւ չքն ընդ այսքն գընացին:
Եթող դաստաւած և ոչ ըզկին:

Պեսք է կարգաւ այս հաւաքման՝ բանաստեղծի թեթև ներդնումն և
Աշամ—նվայի խոսքերի գեղեցիկ տողերը վայելելու համար: Այստեղ կրե-
քենք սակավթիվ աներ միմյն:

Եկն առ Աշամ որպէս օտար,
Մերկ, խայտառակ անասնորար,
Աշամ անունաւ զնա դարձանայր,
Թէ զԲնչ եղև այդըմ պատճառ:
Ասաց. թէ՛ «ԶԲ կու լու գու. կԲն.
ԶԲ հառաչես ողորմագին.
Այդ Բնչ չարիք որ քեզ եկին,
Ո՛ւր է քո լոյս պատմուհանին...»
Ասէ, թէ՛ «Զիս չարքն խաբեաց.
Պըտղով ծառայն, դար Տէրն յայտնեաց.
Ասի ձեռոց իմ չարացած,
Եւ մերկացայ յանճառ փառաց:
Բայց թէ գու. սէր անիս քնդ իս,
Փռաթով լսէ՛ քո կողակցին.
Աս կեր և դու զպըտուղս ընդ իս,
Զի Բնամ ընդ քեզ ես ի դարձախս:
Թէ կայր քո սէր ընդ իս նախկին՝
Այն սէրն այսօր երեսացին.
Վառն սիրոյ քո արարչին
Յիշեա և դմեր սէրն առաջին:
Բայց թէ չլըսես ամենեկն,
Թորժամ ևհաս ցաւս իմ անձին,
Սուտ է քո սէրն այն առաջին,
Զի ոչ հագաս վառն իմ դարձին:
Թէ անասնոց լինէր այս չար,
Դեռ մեզ պիտէր զնաին հոգալ:
Ես քո մարմին՝ աշտպէս խոցեալ,
Դու աշտպէս կաս անհոգացեալ...
Ես որ պիտայ այս փորձաւթեան՝
Մեռեալ ի հող դառնամ անձամբ,
Հոգիս առնջի անանց մահաւամբ,
Թող դու մընամս յայդ խնդու թեանս:

Պատասխանեալ Աղամ Նըմին,
 Խանդաղառեալ ի սէր նորին.
 Տարակուսեալ մարմաքէին
 Ոչ գիտեալով բզզեց ցաւին:
 «Եթէ մեղադրեմ դու ինձ, ճով կ'ին»,
 Ես նոյն սիրովն եմ առաջին.
 Բայց թէ ուտեմ զղառուզ ծաւին՝
 Ես քեզ նըման պատահաւորմ...
 Ուրախեցաւ կ'ինն ի հագին,
 Զի ես սիրով զպատասխանին.
 Հընար զըսաւ թըլուսու հոգին՝
 Սիրով խաբել զմարդն առաջին...

Նա զանազան ձևերով ֆանուս է համոզել մարդին, որ հեանի իրեն.

«Թէ դու սիրով ուտես վասն իմ՝
 Իմ նենգութեան մեղքն ցրնջի՛ն»:

Վերջիվերջոյ Աղամը՝ Եվթային ազատելու համար՝ ինքն էլ աւտուս է պատուը և նույն վիճակն ունենուած, ինչ որ կ'ինքն, նա ազադակերով, ողբում ու վախ է առիթ իրեն:

Հաջորդ Գ գլուխը (12 առևն) ամբողջապես Աղամի ողբն ու սուգն է, որ անուս է նա՝ կոնխատեսելով իր և իր սերունդներին աղաղան՝ դրախտից զրկվելու, մահը, զմոլեքը և այլն: Այդ ողբի մեջ մի գլուխ (Ե, 28 առևն) նվիրված է Վլասն հոգեվարին և ճանապարհի հոգույն և պատերազմի դիպաց և կոյանին հոգուցն: Հոգեվարի մասին խոսուած է և Գրիգոր Տաթևացին: Մարգուս մահվան ժամանակ՝ հոգին երբ բաժանվում է մարմնից, գեղի երկինք է գիմուս իր հրեշտակի հետից՝ ազնալ ի կայանս հոգւոցն: Նա զմկարին և անհաս ճանապարհին՝ սորսափած ու ապշած վիճակի մեջ է ընկնում. դարհաւում է գների բազմութունից, բոր դառն և դժտն կեբպարանօց ըսելի վնին ի վերայ հոգւոյն և պատերազմին ընդ նա: «Զմահնայն մեղս իւրեանց անասնեն և առաջի բերեն դեքն մանր քննութեամբ, զոր գործեալ են և գոր մոռացեալ: Տաթևացին աղղվել է Անուսի տեսիլից, որ գրել է Աթանասը:¹ Այս երկուսից էլ ներշնչվել է և Առաքել Այուսեցին: Նյութի հոգուց, ուրեմ, ինքնուրույն զէ, բայց նա բանաստեղծել է Աղամի բերանից իրեն՝ Աղամի և նրա սերունդներին համար և զզոքմունքի ու պատկերի բազմական ուժեղ մանրամասնութուններով, որոնց մեջ նա անկախ և ինքնուրույն է:²

¹ Գրիգոր Գարեգնութեան, Ձմեռան համար, Գ. Պաթ, ԲժՁԹ (—1189 + 551—1740), էջ 230—235:

² Վարդ Երեմե հարանց, համար առաջին, Վնեսեէ, 1855. էջ 17—80. Վարդ երանելւոյն Անուսի Եղիգոսացւոյ միտայակեցի, Թուզթ Աթանասի:

³ Համեմատելու համար գնում ենք այստեղ Անուսի տեսիլը (էջ 61): Միտայակաց Անուսը ազգային զինքն յափշտակեալ մօտցն, և... անտանէր գինքն իրրեւ որտա՞քայ ինքեան եղեալ և իբրեւ յօգս գինքն առաջնորդեալ յամանց: Եւ տեսնէ զամանա զա-

Առաջելը թանձր գույններով նկարում է մի տեսարան, որով խիստ
պիտի սարսուռյա կրոնամորա ընթերցողները և Աղամի հետ սանին.

Վա՛յ իմ աւուր հոգեվորին,
Վա՛յ որ տանալ զհոգիս տանին.
Վա՛յ ուղղութեան ճանապարհին,
Վա՛յ որ չգիտեմ, թէ ուր տանին.

Խառնիթուան երևում են գետերի գնդերը, ահեղ պեմքերով, բերանները
բաց արած, մեռելի բնակաց նամակը, այսինքն մատայնը բռնած: Ուղեկից
հրեշտակը թռչել է առիս, և նրանք պատում են հոգու շուրջը, կառաղում
նրա վրա, տանջելով նրան՝ զանազան կերպերով կոժում են նրա
հետ,

Պէտէւս գիմօք կերպարանին,
Ձարահասկէ և դմնային.
Մըմընալով միշտ կառաղին,
Ու պատռուել ջանան զհոգին...

Դէմքն այլակերպէ և տեղին,
Ձարհուրական կերպարանին.
Հուր ցւանայ յաբնաց նոցին,
Ու պաշարէ զգետեմ հոգին...

Ինչ և աննորին գմեհայ, որք հային յագ և կամէին արգելալ զնա զի անցել Իսկ
որք մարանչէին ընդ նառա, առաջնորդէին Անտոնի, և պահանջէին նոցա ըստ ի սոցանէ և
տակէն, թէ տեսցա՞մք մի գուգէ պարտապան է մեզ. քանզի կամէին տակ իմ բան ի նորա
մնեղանէն և արգելալին դնառա Իսկ որք առաջնորդէին Անտոնի, տակէն ցնառա, եթէ գնե՞րն-
դեան նորա տէր ի բաց ընչեաց. այլ յարմէնակ եղև միտմանկեաց և խոստացառա. տատու-
եայ ինքնահաթիւն ունիմ ինչպիսի ձեզ համարա: Յայնմամ նոցա մարտառա եղևն և յան-
դիմանել ինչ ոչ կարացին, քանզի պատեհառա ինքն և տնարդի եղև նմա ճանապարհն:
Դարձաւ ցիլ հետա (էջ 68). Վե. ի վեր հայեցաւ և ետես զմե երկայն առաջնառա չորա-
տեմիլ և տեղին, քանզի հայր և հուսանէր մինչև յամպ, և ելանէին ոմանց իբրև թուա-
ցեաց, և նորա տարածեալ գմեհան և զոմանա արգելալ և ոմանք ի վերայցան զնա թուա-
ցեալ ք և անցեալը՝ այնուհետև աներկիւղ և անկող վերացեալք: Ու ի վերայ այսպիսեաց և
երկայնե կրնէր պատմուեան, և ի վայր անկեցոյն ի նմանէ ուրախ լինէր: Ու անչէն վաղ-
վաղակէ ևայն եղև առ Անտոն և առ. իմա որ եղև: Ու բացան նորա միտքն և գիտաց զի
հոգւոյն էին անցը ճանապարհին, և երկայնն որ կայր, նա է որ զլորի ընդ բարեա հաւա-
տացեաց, և որ զպատապարաց են նմա՝ դնառա ունի և արգելալ և շատ անցանել: Իսկ որք
այն հուսանեցան նմա, ոչ կարէ բժրանել, այլ ի վերայ քան զնա գտնց տանն:

Ազգիւրդ չի լինիլ այսպիսի բերել նաև Սերապիսնի պատմածն Աբրա Մարգարի հոգու
մտնին, երբ այս հոգեմուտը վախճանվում է. մինչ ես ի վեր հայեցայ՝ արքայի և տեղի հոգի
նորա ի հառա հրեշտակեաց պիտանի պարսպաճառա պատեալ, և տանէին զնա գուպց հրեշ-
տակեաց փոսոց յերկինս ազգաօրից և երգովք ընդ վերին լուսաւոր ազան: Ու տեղի պննիչ
աղաք. տեղի և պարտաթիւնն ստատոյի զի հային Մային և արգելալին զնա մամ մի: Ու
յուսայ ձայն յերկինց որ տեղի. ի բաց հացէք յերեսաց լուսայ, արգից խաւարին Յայնմամ
ևայն երարմ մի ան ի գիւտն, աղաղակեաց և առէ. փոխերոց, որդից ստատոյի, և ամա-
թայից եղբերուց, զի այլոք այլ արդար չի: Ու իբրև անց վերացաւ. հոգի նորա ընդ ամե-
նայն փարհաթիւնն ստատոյի, տեղի իբրև անց լրեպէն ի վերայ նորա, և աներեւթ եղև
յիննն: Վարց ա. Հարանց, հառա, երկու, Վհհհա, 1885, էջ 206.

Զառնիւ գոչեն յոյժ սասակագին,
 Որպէս հայթիմունք յորոտ ամպին.
 Եւ ճրչել ձայնից նային
 Սարսափէի հոգւոցն նուաղին...
 Հոտ գորշութեանց յոյժ զազրագին
 Որ ի գիւտց դասէն բուրբին...
 Շուրջանակի պատեն զհոգին,
 Ըստ վեց շարժմանցն որ յանձին,
 Ի վեր, ի վար, յաջ 'ւ ահեկին,
 Յետ և յառաջ մըրցեալ կըսուին...
 Ի խաւարեալ ոգոց միջին
 Խաւարային դիմօք յայտնին.
 Հոգին տալեալ միտքն ցընդին,
 Միջբեկեալ յուսահատին:
 Եւ գոչանջեն գոյմօք նաջին.
 Եւ յայ, այո, աչք մեր տեսին
 Զարկածք յարեաց մերաց ի գմին
 Ի սկըզբանէ մինչ ի վերջինս:

Նրանք ջանում են հափշտակել հոգին. բայց երբ հրեշտակն ասում է՝ «Ի ձեզ սաստէ Տէրս՝ ցրվում»,

Այս այգոյս խորտակված, նվաղած հոգին հրեշտակը հանում է հոգիների կայանը, ուր հոգիները՝ նայելով իրենց գործած մեղքերին՝ դառնում ամբարշտած պահվում են հառաչանքով և լաց ու կոծով մինչև դառաստանի օրը, վե՛յ տալով իրենց տաղուց, երբ հարութայան և դառաստան պիտի լինի:

Որանից հետո բանաստեղծն երկու տոանձին գլուխներով (Զ, 37 տուն, Է, 56 տուն) գրում է «Վասն ահեղ դառաստանին ջննութեանցն և «Վասն ասնջանաց դժոխոցն, որսնք երկուսն էլ մեր քերթնակների սիրած նյաւթերից են և նորանոր կողմերից և ինքնատիպ մաքերով ու պաակներներով մշակված են Առաքելի ձեռով: Ազամարքի այս վերջին երեք գլուխները (Ե, Զ, Է) շատ հաճելի են եղել մեր հներին, ուստի դրանք մի ջանքի ուրիշ համվածների հետ, իբրև անկախ քերթվածների, տանված են ծաղկաքաղ ծաղկածունների մեջ:

Դժոխքի տանջանքների նկարագրով և տանջվողների ողբով՝ վերջանում է և Ազամի ողբը.

Այս ողբ երգոց նախաստեղծին,
 Որ գէժ բնութեանը բարբառին.
 Այս գոյժ ողբոց միշտ կատարին
 Յանցեալն, ներկայս և յապասնին:

Այսպես է վերջացնում բանաստեղծն այդ գլուխը, միանգամայն և Ազամի «տեսիլը»: Մենք զգում ենք, որ գործող տնձր, Ազամ, մեղանչեալց հետո, զեւ տառաւա՛ն չհանդիպած, իր զլեթն վայ տալով, ինչպես մի կար-

հասեալ երազի մեջ տեսնուած է շատ երկար ու դառն բաներ, և՛ աստուծուն իր զննով, և՛ հոգեվաբը, և՛ վերջին դատաստանը, և՛ դժբաքը, Թանաստեղծը, ցավոք, սաբաթամ ու ոչ պայծառ և հորինուած Ադամի այս բաները, մեկ մեկ էլ իր անձը, դեմքը խառնուած է վիպական պատմութեան մեջ և ավելորդ կրկնութիւններով ձիգ դարձնուած այն: Արվեստի պակասութիւնն է այդ: Ավելի մեծ պակասութիւնն է այն, որ դժոխքի ահալից հետո, մոռանալով որ ինքը վեպ է հորինուած, նա երեք գլուխ (Ը, Թ, Ժ, էջ 56—77) նվիրում է մեկնաբանութեան և իր անսովորունքներն է բացատրուած իրեն հետաքրքրող նյութերի մասին (Էվասն չարին թէ ուսումը ունի զսկիզբն կամ զժնշէ է, Էվասն ցանկալոյ բարոյն, Էվասն մարդոյն թէ օրդէս է պատկեր աստուծոյ...): Պատմութեան շնն վերաբերում հաւ ժիւ և ԺԴ գլուխներն (էջ 82—102) իբրեւ մեկնութիւններ: Այս հինգ գլուխները երբ անշուովուս են, Թանաս ԺԱ, ԺԴ, ԺԵ գլուխների մեջ պատմութեան է ճերթված զործողութեան շարունակութիւնը, Էվասն՝ յետ յանցման Ադամայ՝ հարցափորձելոյն աստուծոյ, որ ասաց, թէ Ռէր եւս:

Յեա սղբալոյն տեսն Ադամայ

Հարցաքննել դայ ըզնոսա.

Ձրդղիացեալ տեսն մեղայ,

Եւ ջընջեսցին յանցանք նոցա:

Տէրն տէ.

Ռէր ես, Ադամ, մարդս տաղին.

Ռէր է քո փառքն հրաշալին.

Փառք եղի զճեղ ի դաւաթին,

Եկեալ չգի ընդ նոյն տեղին:

Ադամ տէ.

Հուայ ըզմայն գնալոյ քոյին,

Որ հեռանաս վասն իմ յանցին.

Երկեայ միայն կեալ ի դաւաթին.

Եկեալ թագեայ առ թգնին, և այլա:

Տիրոջ, Ադամի, Եվայի մէջէ տեղի է աւնենում մի արամաթոսութիւն, որի հիմքը Ս. Գրքից է, բայց շատ սիրուն զարգացրել է Բանաստեղծը, Նրանք բնական շնն տեսն և մեղքը նույնիսկ աստուծու վրա են ձգում: Եվ աստեղծ գնում է իր հայտնի վերաբ Ադամի, Եվայի և ուրիշ վերաբերմամբ: Այս ԺԱ գլխի բնական շարունակութիւնն է ԺԴ և հետո՝ ԺԵ գլուխն (Էվասն աստուծոսանք փորձաւելոյն նախնեացն ի զգմանէ ծագեալ պանծ փառացն, Էվասն զղջմամբ ողբալոյն Եւայի): Ադամն ու Եվան դաւաթից արագացված են, զղջում են իրենց հանցանքի համար, և ցավ ի սիրտ հիշում են դաւաթի վայելչութիւնները. ողբում են իրենց ողորմելի վիճակը և միտքաբերում են, որ վերջը պիտի փրկվեն: Այս գլուխները գեղեցիկներն են. բանաստեղծը մի երկրորդ անգամ Ադամի բնականով սքանչելացած նկարագրում է նրանց կորցրած դաւաթի շքեղութիւնը և ավար-

առաջ վիճակաւ յերթումը, բայց ոչ Վլադիմիրը, նա դրամ է էլի 11 գլուխներ, Վլադիմիրը [այսինքն՝ կնոջ] և այլն, որոնք սքանչելիաւ մեկնութիւններ են, որոնցով Աստուծոյ Ոյաւնեցին իր սրամտութեանն է ուղեցել ցոյց առաջ Մի գլխի մեկ (ԺԸ) բնութագրում է կանանց ոչ լավ կողմից, առաջաբանի մէջ գրուածքներով այսպէս.

Թէ հանգիպիս գոռ մօտ ի կին,
Չայս բանքը մի կարգաւ նորին.
Որ յանարգին զգրքադ սորին,
Կամ բանքս ելնէ յայտց նոցին,
Կամ զի կողն աւեր է անըզայ,
Ինքն բոս ինքեան բան չիմանայ,
Վասն այն կընոջն ինչոք չբկայ,
Ձինչ որ լընէ՝ չուտ հաւատայ.

Եվ այսպէս մարդի 36 առանձին գոգնա մայքան մեծ տեղ է բանում Վլադիմիրին այս երկրորդ մասի մեջ, որ մարդիկ կոչվել է նաև «Գոգնա-գիրք»:

Աստուծոյ չի բովանդակեցել երկու Վլադիմիրներով, որոնց մասին խոսվեց վերևում. նա նաև 1403 թվականին, ինչպէս էիլաւանդարանից (էջ 270) իմացվում է, գրել է մի երրորդ (ըստ աղագրութեան Բաբկերդի) Վլադիմիրը առանձին (Թ+Ծ) վանկանի աղագրով սկզբից մինչև վերջը գէր իմանալով, Բովանդակութեանը նաև ինչ է, ինչ որ նախորդ երկուսինը: Գրվածքն աղբյի սեղմ է, վիճակաւ մասը շատ չնչին է, աղբյի ուղագրութեանն է գործարած մեկնութեանը, թե ինչ է թարգմանող ունի Աղամի մեղանալումը, Կան, Կարկով, նաև սակավթիվ գեղեցիկ աներ:

Աստուծոյ ունի և մի չարքորդ հասար Աղամիրին, որ զեռ չի աղագրվում: Այդ կոչել են «Երախտագիրք», գրված է Ժ+Ժ+Ծ վանկանի աղագրով, և մարդիկ նաև հանգրգանքով, «Հեղինակին նպատակն եղած է այս աշխարհի բնակիչներն իր հետ առնելով՝ փնտրելու հիշել այն անձանցի քաղաքը աւելից արագութեամբ էր Աղամի»:

6. Հորիմվածի բերութեան 68 և գրուած արժեքը:—Վլադիմիրին գեղարկանաւան կողմից թուլութեանը ծագում է զխաղաղութեան այն հանգամանքից, որ հեղինակը կրկին նպատակ է դրել՝ 1. ոտանավորով բանաստեղծարեն պատմել Ս. Գրքի գրույցը, 2. ոտանավորով հորինել հին մեկնաբանների կարծիքները Ս. Գրքի գրույցի մասին և իրենցից էլ, որքան կարելի է, շատ բան ավելացնել ուրիշների առանձինքի վրա: Այդ վերաբերում է «Մարդկային խորհրդին», որով բացատրել են Աղամ—Եվայի գրույցը:

Նա իր մեկնութեաններն առնում է ոչ միայն հաւանքով գլուխների մէջ այն էլ երբեմն ընդհանրաւոր պատմութեան, այլ մեկ մեկ նաև պատմութեան՝ ընթացքով: Ինչպէս էլ կոչ առնաւորներով են գրված այդ կտորները, այժմ դրանք, բացի թերևս աւելավթիվ քաղաքներից, գրական արժեք

¹ Երախտագիրք, ՎՆԵ-ի, 1918, մաս, էջ 69 Մ. Պատարանի Երախտագիրքին Ստեփան Սիւնեցւոյ կողմից մեկ:

յաւնենաւ Առաքելի աշխատութեան այդ մասը մեզ համար հետաքրքիր է այնու, թե որքան զորեղ է եղել այն դարաւ՝ աքալաստիկական բացառութեամբ, և որքան չնչնահովաս են եղել այն ժամանակի գիտնականներն անգամ, որոնք իրենց եղիմանականութիւնն ցույց են տվել պարծանքով, բազմաթիւ այնպիսի համահմատութիւններ անելով և խորհուրդներն ու խորհրդավորութիւններն պահելով, որոնց վրա լմիայն դարձանու կարող է արդի մարդը։ Այդ նկատմամբ այսօրեղ բազմապէս է միայն հիշատակել Վեդամզիբը Աւթի իմ գլուխը (էջ 189 և հետ.)։ Բանաստեղծ Առաքելին կաշկանդել է Գրիգոր Տաթևացու ազգեցութեանը և կարծես նա արցում է իր քեռու հետ, ռասնավարներով մեկնութիւններ անելով երբեմն նաւայն խնդիրների մասին, ինչ որ Տաթևացին բացառել է իր աշխատութիւնների մէջ։ Ե՛վ ընտկան է այդ, քանի որ Տաթևացին է առն ավել նրան Աղամի և Եմայի մասին գրելու և նույնիսկ «ուզղել է ըզկարգ բանին» առաջին գրքի (ըստ աղագրվածին՝ Գ. գրքի) վերաբերմամբ։ Որ Առաքելը երեք գիրք է հարինել նույն նյութի մասին, այդ ցույց է աւելի, որ իր գրվածքներն ըստ երևույթին բավարարութիւն չեն տվել նրա գեղարվեստական զգացմանը, անյուշա՝ հենց այն սառն մեկնաբանական դատողութիւնների պատճառով, նրա երեք Աղամզրքերը թողնում են այն աղագրութիւնը, թե դրանք առանձին փորձեր են մի մեծ քերթվածի համար, ինչպես մի մեծ կոմպոզիցիայի համար կառարված նախնականներ, որոնց հիման վրա պետք է գեղարվեստական ստեղծեր իր իսկական երկը։ Բայց բանաստեղծն այդ չի արել, և նրա այդ երկերը փառքի են իբրեւորք անշուք և անկախ, բայց և չափազանց նման բաներ։

Եթե առաջին Աղամզրքի մեկնաբանական մասերն (վերջի գլուխները և վերևում հիշված՝ Ը, Թ, Ժ, ԺԲ, ԺԳ, 56—77, 82—102) առաջնորդեն ի մի առանձին հավելում, — և դժբար չէր այդ անկը, և հեղինակը Բ և Գ (ըստ աղագրվածին) Աղամզրքերի վիզական գեղեցիկ կոդիքներն ուղազարծած լինէր Ա Աղամզրքի մեջ, ապա կաւենայինք մի հասակի իսկական գեղեցիկ վիզական քերթված, փոխանակ երեքի։ Այնպես էլ, սակայն, ինչպես կտ, Առաջին Աղամզրքը (ըստ գրութեան ժամանակի՝ երկրորդը), մեր երբորդ կրանական բանաստեղծական մեծ երկն է, որ ունի իր ըստ-

¹ Առաքել Սիւնցի, Աղամզրք, Վանեսիկ, 1907, էջ 386.

... և համայնք ինչ գրել-
 Ջոտանաւորքս ըստ խորհրդար
 Առաջ գրել ինչ ըստ կարգի,
 Յազարս նախնեացն յիշատակի,
 Վասն Աղամայ և Սայի,
 Ի գէժս անին և բանաբարելի,
 Բարանապետ յոյժ պանծալի,
 Մով իմաստից Թառաւ շնորհի,
 Ի նայն շնորհէ մասն ինչ տարի,
 Ջոտանաւորքս շարագեցի

Մի քիչ վերևում էլ Գրիգոր Տաթևացու համար տաւա է.
 Ձի նա ուզեաց ըզկարգ բանին,
 Ըստ իւրաքանչիւր պաշտման

մաթիվ առանձին գեղեցկութիւնները Առաջին երկուսը՝ Գրիգոր Նաթեկացու Ողբերգութիւնը և Ներսէս Շնորհալու Ողբերգութիւնը (ՎՅիսուս որդին) ընտրեցան թիւաներ են։ Իսկ Առաքելի դարձը մի առարկայական բանաստեղծութիւն է։ Այդ էր ժամանակի պահանջը։ Կրօնական ոգին չէր ձեռած, բայց ստոծ էր. մարդկանց հարկավոր էին կրօնական բանաստեղծական գրվածներ, ոչ թէ նրանց վրա տղթելու և իրենց մեղքերն ողբալու համար, այլ զվարճությամբ կարգալու և սովորելու։

ԱՌՍԳԵԼ ԲԱՂԻՇԵՑԻ՝

«Ողբ մայրաքաղաքին Ստեփոյւ և վաճառական ֆրանկաց ազգին և ազատիլ դաշխարհն Հայոց Առաքել վարդապետէ ասացեալ, ազված է ՎԱճԱՐԻՄ, 1801, էջ 217. Վենետիկ վաճառ, Տաղարան թիվ 529, բաղադատած ուրիշ ձեռագրի մը հետ»։

Աթուռն էլիմաթին տեղադրութիւնը հետո՝ չի դադարում քաղաքական խնկախօսութիւն մասին երազն ու երգը, որ սկսւած 1801-ի Նույնիսկ մեր ժողովրդի մանկագրութեւնը ուրեքին, երբ 1453 թ. օսմանյան Սուլթան Մուսթաֆա II ահաւում է Կ. Պոլիս, կոտորում քրիստոնյաներին, այդ գեղքը ցնցող տրամական աղավաղութիւն է թողնում արևելյան քրիստոնյաների վրա... Վերջին քրիստոնեական պետութիւնը, որ արևելյան քրիստոնյաների հետնորդն էր, հույսն ու աղավաղումը, ընկնում է։ Արևելքն ու մարդը 1801-ի մահապաշտներին ձեռին։

Այդ ցնցող աղավաղութիւնն առկա, ահա, Առաքելը, ինչպէս ճերթվածից իմանում ենք, նույն 1453 թվին ողբում է այդ եղելութիւնը։ Քերթվածը շատ մեծ է. 4+4+4+4 աղբերով, սկզբի մասի բաւար աղբերը (թվով 83) վերջացնում է «Ստեփոյւ անուսով»։

Արդ մահաւան աղբը և աղինք

ոգրան ըղձիկ, քաղաք Ստեփոյւ.

Երկրորդ մասի (80 տող) մահապաշտին տողը՝ «Բիւզանդիան անուսով»։

Այլի կոչեմ դեպ յանուանէ,

ընախք քաղաք Բիւզանդիա,

Որ անօրէնք պաշարիցին

և արաբին ըղձիկ դադա.

Երրորդ մասը, 62 տող, բաւարը իմ հանգով, բացի վերջին 6 տողը, որ ի հանգով է։

Կծի պատճառն այն է, որ քրիստոնեութիւնն կենտրոնը դառնում է շարադրածաց հանդադարուն։ Հիացմունքով խոսում է Կ. Պոլիսի հին քրիստոնեական դուռի մասին, չհիշելով դավաճանական վեճերն ու հալածանքները հույների կողմից, որ այդ ժամանակ չկային, այլ միայն ընդհանուր քրիստոնեական և կաթոլիկական տեսակետով մոռնալով քաղաքին։

¹ Տես՝ Զաքէ, Պատմ. հայերեն գրքեր, Բ. Նոր մոսկուպութիւն, Վենետիկ, 1878, էջ 280.

Դու ժաբդաբիւ աեսակ դանձուց
հագնորաց, դու Ըսաբմայոյ,
Հանկարծակի կողապահցար
յանորինաց դու Ըսաբմայոյ:

Երկրորդ մասի մեջ զովում է Բյուզանդիայի նախկին փառքը և ողորմելի դաժնալը և հեթանոսների ժամանակ ծագրելի դառնալը. միակերպ հինը և արդեն լիւրը, և վերջը նորոգման հույսը:

Վերջը գրում է.

Արդ ովն ոճիմ կառարածին,
Թէ նորոգիս Բիւզանդիա,
Եւ ազատիս յանորինաց բանութենէ,
Բիւզանդիա:

Ինչպե՞ս պիտի ազատվի նորոգվում է խաչակրական արշավանքների գաղափարը, «Ֆրանկաց ազգն», որ արեւմտյան քրիստոնյաները պիտի չարժին, միաբան,

«Գոյցին ծովով և ցամաքով որպեւ զաստեղս, որ ոչ թուինս:
Նախ Սաաթուլ քաղաքը կանին, ապա
«Ելցին յերկիրն Արևելից և կոստորին զամենեսին,
Որպէս առիւծ մըրընչելով ի յանորէնս համարեակինս:
Կանին Երուսաղեմ.

«Անթիւ լինի զօրք ֆըրանկին որպէս

զաւագ յեղըր ծովինս,

«Աւցին զՀոռոց աշխարհն ամէն.

մինչև ի Մըսըր հասանին,

«Բազին զգիւաց ընակարան, զանորինաց ուխտառեղինս:

Կանին Շահաստան, Դավրեթ, Խորասան, ամենքին կղերեն,

Եղեսիս ողբի նմանողութիւնը երեսմ է: Իսկ Հայոց ազգին ինչ:

«Ազգըս Հայոց պայծառանայ,

զի յալազեացն ազատեսցին,

Բերկրեալ ցնծան ամենեքեան

որպէս յաւուրս Լուսաւորչինս:

Հետո պատմում է Տրդատի ու Գրիգորի զնալը Հասմ և մի տարի ամսեղ մեալը և շղայինքը Կոստանդինուսի հետ, Հայոց ազգը Ֆրանկի հետ դաշինք կապեց,

«Սիրով դաշինս հասաւորցին՝

զազգըս Հայոց ընդ ֆրանկին:

Զորս հարիւր մարդ ի հան թողին

յԱրշակունեաց Պահլավանին,

Զի մընասցին և աճեցին,
 ֆրանկ ընդ Հայս միարանին,
 Արդ առաջնորդք նաքս լինին
 արիական ֆրանկ ազգին,
 Ասցին զգաւաւն Արարաւան,
 որ է տեղիք Լուսաւարչին.
 Թագաւորին յեջմիտին
 Վաղարշապատ սուրբ քաղաքին.
 Հեղինակն իրեն համար վերջը գրում է.
 զնա տնարժան ամենայնի
 որ վարդապետ տնունս կոչի...
 Եւ առասցին աէր օղորմի
 ինձ Բագժամեղ Աւաքիի:

Դա չի կարող Սյունեցին լինել, որ այդ ժամանակ կենդանի չէր լինի:

Ողբի կարևոր նպատակն է մարգարեական տեսող քաջութեան լքվածներին և հաւատալի քաղաքակաւն ազատութեան վերաբերմամբ, կենեւըսնը Վաղարշապատ, որ չունի Շնորհալին:

Բանաստեղծութեանը, որ իր գաղափարով կարևոր և ուժեղ է, այնքան թույլ է իր միակերպ ձևով. բայց ժամանակակիցների համար տնայալատ արժեքավոր, նրանց հարկավոր է բովանդակութեանը, որ է կենդանի, հաւատից չնչով ու հավատքով, թե հնուց սուրբ հայրապետներէն մարգարեութեան կա ֆրանկաց ազգի գալու համար, այն էլ իրր Տրդատի զոլքից (աղաւանդից) արեւմուտքում Ձեռքած հայերի առաջնորդութեամբ:

Այդ հավատը Ձեռք է մինչև օրս, այժմ էլ նախորդ իմպերիալիստական պատերազմից հայ ժողովրդի և Հայաստանի մեծ ավերմանը ժամանակ դեռ կենդանի Ձեռք է հայտն ու հավատը, թե Հայաստանը, ինչպես առաջնակալ ֆենիքսը, մեծերների միջից կվերակենդանանա և կաճի:¹

¹ Աւագի Բագիւնցու աղբիւրն և նրա մասին աղանձաւոր խոսքերը հետազոտելու համար գրած Հայկական ՍՍՌ Պետական Գրադարանի հրատարակած «Հայ լեզու և գիտական գրականութեան համառոտ քննարկագրութեան» գրքից Հով. Պետրոսյան, Երևան, 1941, էջ 163—164.

Լ Ր Ա Յ Ո Ի Մ

ՏԱՂԱՍԱՑՈՒԹՅՈՒՆ՝

1. Մկրտիչ Նազարը—Մինչև 14-րդ դարը մեր բանաստեղծություններն ունի ձեռք բերած իր գլխավոր թեմաները՝ հրոնական-միասիրտական զգացումն ու մտածությունը, հայրենասիրությունը, բնություն ու սեր, աշխարհի ունայնությունը ու մահ և խրատական երգեր, այսինքն՝ ջնարկագրության գրեթե բոլոր խնդիրները։ Մի տեսակ ինքնուրույն վերածնությունը բրիտանականի և հեթանոսականի միացումով։

Հաջորդ դարերում այդ միևնույն անսպառ նյութերի մասին միայնավոր արվեստավոր և ուժեղ ու նորանոր կողմերով պետք է երգեր հորինվեին։ Բայց մեր կյանքը թաթառաց լծի առկա ճնշված էր, երբ քաղաքական ազատությունը ոչնչացված էր և խավարած էին լուսավորության կենտրոնները թե՛ կենտրոնական Հայաստանում և թե՛ Արևելքում ու Արևմուտքում։ Բնականաբար այս աղետալից շրջանում չէր կարող զարգանալ այդ վերածնությունը ոգին։ Չարմանալ միայն կորելի է, թե այդ հարստահարությունների ու կեղեքումների, այդ անվերջ պատերազմների ու ավերումների շրջանում հնչողն ի մեանում բոլորովին բանաստեղծությունը և դեռ մինչև անգամ երևան են գալիս մի շարք բանաստեղծներ, որոնք իսկապես զարգացում են մեր բանաստեղծությունը։ Դժբախտաբար, այդ բանաստեղծներից շատ բան չի մնացած, շատ բան էլ դեռ ձեռագրերի մեջ է և եթե ապագայում են՝ ցրվի են, ուստի այժմ ինչպե՞ս չենք կարող մեր բանաստեղծության պարզագույն ճիշտ պատկերը տալ։ Մենք խոսենք միայն մի ժամանակ մասին, որոնց երկերն ավելի են հայտնի։

Դրանց մեջ առաջին տեղը, ըստ ժամանակի, ունի Մկրտիչ Նազարը՝ ծնված Բաղնշ քաղաքի մոտ, Պոս գյուղում։ 1430 թ. ձեռնագրվել է եպիսկոպոս և այնուհետև եղել է առաջնորդ Ամիր քաղաքի։ Մեռած պիտի լինի 1470—1480 թվերի մեջ։ Եղել է ձախկող կամ նկարիչ, միաժամանակ և բանաստեղծ։ Նա կյանքը նվիրած է եղել իր հոգի բարոյությունն այն նեղ ժամանակներում, Ամիրի բռնակալներից ստանալով որոշ պարգևություններ և իրավունքներ հին եկեղեցիները նորոգելու և նորերը շինելու։ 1440-ական թվականներին, երբ մուսուլմանական մահադական ամբարձր քանդում է նրա մեծ ջրանցքով շինած գեղեցիկ կաթոլիկեն, նա սրտի ցավից հեռանում է Ուլիզից՝ ապաքինելով Կ. Պոլիս և ապա Կաֆա (Թեոդոսիա)։ Բայց հետո նրան դարձյալ հետ են բերում իր վիճակը, ուր նա ոչ միայն բարեկարգություն է մտցնում, այլև Շահնշահի ավերմունքների ժամանակ (1480 թ.), իբրև միևնույն ժամանակ հավիվ է հանդիսանում իր հոգի համար, խնամք ասնելով աղ-

* Այս բաժինը կազմում է երրորդ լիակի վերջին մասը, եմբ.

քառաներին, գերիներին պնելով և ամեն տեսակ զոհաւթյուն հասցնելով կո-
րոսյայներին:

Մկրտիչ նազաշք թեպետ ունի մի-երկու երգեր վարդ ու բլրուշի մա-
սին, ինչպես և ուրիշները, աւ ծագիկներով այլաբանական երգեր, բայց
զարուհին աւ սերը, զվարթ բնություն երգելը չէ նրան հասուկ. նա շատ
լուրջ կրոնավոր է և շատ տոգորված է իր առաջնորդական վսեմ կոչմամբ,
ուստի և իր բանաստեղծության մեջ ևս մի նպատակ ունի՝ միթիթ-րեւ, սո-
վորեցնել, կրթել և այլն. նա սովորեցնում է կրոնական ոգով քրիստոնեա-
կան բարոյականությունը:

Նրա խրատական ուսանավորները, մասամբ ունենալով մի քանի գե-
ղեցիկ ներշնչման կտորներ, ընդամենապես շատ զոգոյն, թույլ ու միակերպ
են, թեպետ դրանց մեջ էլ երևում է զոհիվ վարդապետն իր բարոյական
հասկացողությամբ և անկեղծ զգացումով: Այստեղ նա ամեն չարիքի աղ-
բայւրը, աշխարհի սկզբից ի վեր, անձնական փորձից սովորած, համարում է
մարդկանց երկու կիթքը՝ ազատություն (շէտան ազատութեան) և ռեակտ-
ություն (եթրապ խռով չկենալու և ռի չպահելու):

Ի սկզբանէ մինչ ի վախճան

Ամէն ֆլաս ոք գործեցան,

Ազատութիւնն եղև պատճառ,

Որ ի բարեացն զրկեցան:

Ազան դայլ է պատասոյ

Եւ ծարւի սրբան մարդկան...

Կթուղիկոսն շատացան

Անօրինացն բնութեան,

Եղիսկողոս օրհնեն անբան,—

Ամէնն վասն ազատութեան:

Եղիսկողոսը դկանսն անցան,

Որ պոռնկաց կուտան հրաման,

Կաշու անեն կարմիր գեկան,—

Ամէնն վասն ազատութեան:

Վարդապետեաք ոք նար ելան,

Բանին եղևն վաճառական,

Եւ քարոզեն զհաճոյս մարդկան,—

Ամէնն վասն ազատութեան:

Հարեղանին զվանքն ուրացան,

Եւ ի գիւղօրայքն ի շարջ կուգան.

Սաղմոս ասելն մոռացան,—

Ամէնն վասն ազատութեան:

Երեցաներն յիրար կուտան.

Ի՛ր վերաւցին և դաւազան,

Փետեն մորաւ, կտարեն բերան,—

Ամէնն վասն ազատութեան:

Ազատութեան հետ միասին այլաբերի չաբիքներէ պատճառն է ռիա-
կալութեանը, վրեժխնդրութեան ոգին: Եվ, բնականաբար, Նազալը չափա-
վորութեան հետ քարոզում է և քրիստոնեական ներդաժանութեան, խաղա-
ղասեր ու անհիշատար ոգին: Որովհետեւ մարդը, ինչքան էլ ազնիւ և
պահեղ պահի, թեկուզ կուսութեամբ անց կացնի կյանքը ու սաստիկ
բարբոսութիւններէ պահի և իմաստութեան աղբյուրը լինի,—բռնաժամ
չունի ի Բրիտանիոյ: Ընդհանրապէս, հաշտ ու ներդաժան ոգով, չաբիք
բարի անելով՝

Թէ ի յառակս զժողովոյ ծանր մեղք ընկղմեալ ես,

Թէ խոնարհիս քո ընկերին, յերկնից խորանն վեր ելանես:

Եվ բանաստեղծը մեկ մեկ թվում է իմ վաթիւր գործերը, որ գործ-
վել են ու գործվում են ազատութեանը,—ազատութեան, հասարակար-
գութեան, ընտանեկան երկպառակութեան և այլն: Առաջինը, արշա-
նհանքութեան, ավերակներու գերութեան: Նախնապէս իմացն է պատճա-
ղաբանը և մեր եկեղեցու անկման. կաթողիկոսները շատանում են (ըստ ժա-
մանակակից թոմաս Մեմմինգհոմի՝ մի քանի տարւոյ մէջ վեց կաթողիկոս են
գոյնացել և վեցն էլ թունավորված մեռնում), եկեղեցականների անկարգու-
թեանը մեծանում, բարբոս միայն ազատութեան համար: Միքայիլ Նազալի
այն կտորները, որ ժամանակի այս ընկած գրութեանն են վերաբերում,
իսկապես շատ կծու և դուրս են, և դրանք մեր բանաստեղծութեան մեջ
առաջին բաժնի մեծ գեղեցիկ դարձմանն են ազդեցողութեան հա-
մար: Եւ Նազալի իրեն իսկական բանաստեղծ, թեպէտ գործալու խրատական
ոգով, հանգստի է գալիս չորս քերթովմի մեջ, որոնք ձևով շատ տնայնիկ են,
բայց լի են գործի և համակող զգացմանքով: Նա դրանք մեջ գրել է իբ-
րապէս կյանքն ու սիրտը, և քնարականութեամբ գործադրել խրատական
բանաստեղծութեանը: Բացի այդ՝ փայլուն ձևի փոխանակ, որ պահանջում
է, նա երկու քերթովմի մեջ մտցրել է երկաթափայլութեանը, որ շատ կեն-
դանոցնում է զրկման ընթացքը: Նյութի անսահմանից նուրբիկ նորո-
թեան ու թարմութեան ենք դանում այդ բանաստեղծութեաններէ մեջ:

Առաջին անգամ նրա մեջ գտնում ենք առաջինութեան մեծ վիշտն
ու թշուառութեանը պատկերացում, որ մեր ժողովրդի սրտի ախուր լարերից
մեկն է եղել անհասկնալի ժամանակներից սկսած մինչև օրս, և որ բանա-
ստեղծն զգացել է իբրև հոգու խորքով:

Ձգարիպին հալն գիտեմ, որ վաճ կուսում...

Ձգարիպութեան յարժամ յիշեմ քան զուր գաղամ:

Գանդիստութեան երգերը, անշուշտ, Նազալից մզկի վաղ են
ծաղիլ մեղանում, քանի որ նրանից առաջ զժողովոյ ճակատագրերը շատ
տնայնիկ և հայեցողիկ ոչ միայն խմբերով գաղթել՝ բռնի և հոգաբարձ
կարգով հայրենիքից, այլև ժամանակավոր կերպով գիծել օտարութեան՝
ընտանիքի աղքատութեամբ ճարձու և բանակալների հարկաւանութեանը բաժն-
կանութեան տարու համար:

Պանդեմոնի մեծ և Նազաշի՝ իրեն նման մարդիկ, Դրպնց՝ այդ օտար
երկիր թափառողների բոլորի վիճակը շատ խզճուլի է, և այդ այնպես
ուժեղ կերպով պատկերացնում է մեզ բանաստեղծը իր երկու հրդի մեջ,
որ նրան կարելի է համարել մեր առաջին մեծ պանդեմոնի երգիչը:

Ղարբիպին կեանքն է լուրի ողբերգական,
Դասն ու լեզի, լի արամութեամբ ի նեղ զընդունա...

Անճղ զղարիպն ասեմ, որ յոտար երկիր հանդիպի,
Այնքն արտասուօք ի լի, յերեսէն ի վայր կութաճի,
Յարժամ ի մեջլիս նստի, յանկուկած սրտիկն արունի,
Զայնքն ի բալորն ածէ, կարևոր և գոթ նա չաւնի:

Առաջին մեծ ցավը սրանեղութեանն է, որ ունի իր սիրելիներէն
զրկված պանդեմոնը: Եւ, որ նրան ճանաչող ու հասկացող չկա, չունի
կարեկից ասպնջտկան: Ժողովրդի մեծ մարդկանց մեջ, ինչպես մի բանասում,
նա խորատկում, նվաստանում է հոգեպես:

Որ թէ լինի պարոնարդի և աննման,
Հանած վառած ասեմ նմա մարդական...

Ղարբիպին խելքն է կորեր, միտքն է մալար,
Եւ թէ լինի քան զՍողոմոն մառք ճարար,
Որ թէ խօսէ բան մի քանի անգին ճոհար,
Սասանն նմա թէ լուս կացիք, անգէ՛տ յիմար:

Միայն ցնական կարոտը չէ սրեմն, որ նրան հիշել է տալիս իր սիրե-
լիներին, ու ցնականում է առան դասնալ, այլև այն, որ նա ապրել է
ուզում, ապրել մարդկանց մեջ, այդ է, որ նրա կյանքը դառնացնում է,
հասցը լեզի դարձնում, սիրտը փորում գալտերեցնում:

Հագք, մի ասեր դարիպ,
Թէ չէ՛ իմ սիրտս կարունի,
Ղարբիպն ի յոտար երկիր
Դեմ խիստ դիմար կալիսի:

Այս դեռ նյութական պակաս չունեցող պանդեմոնն է. իսկ աղքատ
պանդեմոնը և նրա անհանդիստ մտածանքութեանն, անքուն գիշեր-
ների հոգսը թե՛ Վաղդիւն եւ Քնչ լինիմ գերիս, երբ լուսանայ: Եվ բանա-
ստեղծը նկարում է մեզ քաղցած զարբիպի շատ ողորմելի վիճակը, երբ նա
սերես ի քայն փողոցներն է դուրս գալիս մի կտոր հաց սուրբալու: Չտանքը
նրա առջը դուռը փակում են ու մի կաթ ջուր էլ չեն տալիս: Եւ նա նստում,
լալիս է: Բայց պեռք է ապրել, ճար չկա: Նա գնում փոխ է ուզում: Եւ ոչ
չի տալիս: Եվ նա ստիպված գնում մտնում է մի առանձն՝ քաղվելով սի առան
տիրուն գինչ ի շանէն խիստ վախելով, բայց գործալ գուրս են հրում

անարգելով, և նա եւ է դառնում արտոււմ և արտասովելով, Եվ վերջապէս
ամաչելով մտնում է մի տուն, ուր հազար բարեքով լի սեղան է դրած:

Նա հազար գէշ ասեն նաւ անարգելով:

Ապա թէ ասն կտոր մի հաց արանջելով...

Բայց որքան թշուառ ու ողորմելի է, երբ այսպիսի դարիպը հիվանդա-
նում է փողոցում՝ անտեր, մեն մենակ, և մեռնում ու թաղվում է: Շատ
թանձր գույնով է նկարում բանաստեղծն այս ողբալի անտարանը, այս
մեռնող պանդխտի հոգեկան ու ֆիզիկական տանջանքները և մարգկանց
անգթությունը դեպի իրենց նմանը:

Եւ կայր անկեալ մէջ փողոցին անտիրական...

Միծաղելով ռիւն տարան յեղեր հողին...

Բովական չէ, որ բանաստեղծը հոգու խորին կարեկցությամբ լցված
նկարագրում է այդ թշուառությունը, այլև նա չի մոռանում վերջում կա-
րեկցություն քարոզելու իրրև վաղապետ և նույնիսկ աղոթելու ամեն դա-
րիպներին համար, որ աստված օգնե նրանց և հասցնե իրենց փափագին: Մի
քերթվածի մէջ, որ երկաթոստություն է պանդխտի և իր բարեկամի մէջ՝
պանդուխտն իր վշտաւար սիրան է բաց անում, նմանեցնելով իրեն երամից
դառնած ու մոլորված մի երեբուն թռչունի, որ հանգիստ կգտնի միայն
այն փամանակ, երբ երամին կհասնի: Նրա համար այնքան սոսկալի է պան-
դխտությունը, որ նույնիսկ շարժւոյ բառը լսել չի ուզում: Բանաստեղծն
աշխատում է փորձել սփոփել պանդխտին, թե հոգ չսւնի, մեկ [օր] աստված
նրան էլ կդարձնի հայրենիք: Բայց պանդուխտն ամենևին չի միթեթարվում,
և վերջիվերջս բանաստեղծին ուրիշ բան չի օնում, բայց եթե ասել:

Ամէնքս եմք դարիպ, եղբարք, հայրենի մարդ իսկի չունի,

Հաւասար գնալու եմք, դի այն կեանքն է սեղ հայրենի...

Այս միևնույն գործնական, խրատական մտքից է ձագում նաև Մկրտիչ
Նազալի հայացքն ու երգն աշխարհի ունայնության մասին, որ բովական
մոտ է Կ. Նրգնկացուն, թեպետ ոչ այնպես փայլուն ու գունագեղ: Բայց ոչ
պակաս ներքին ուժով և ինքնահասուկ շնորհքով: Նա էս աշխարհի ունայ-
նությունը անհնում է նրա անհաստատության մէջ, Աշխարհը մարդու բարեք
չի տալիս: Եթե մի օր ուրախություն է ապրիս, հետո դալիս է մշտական
դառնությունը: մարդս միմիայն խաբուսիկ հուսանելով է ապրում, և իզուր
հանգիստ, ուրախություն ու հաւատություն որոնելով՝ աշխարհի հոգանելով
ու մեծ աշխատանքներով աստաղդում, և դեռ ոչինչ չստացած՝ մեկ օր էլ
հանկարծ գալիս է մահը և պարկուռ դատարկ հանէ և առնէ ողորմ ու
լուծ: Եվ ազահության դեմ երգող վարդապետի համար՝ խրատական եղբա-
րացությունը պիտի լինի հորդորը՝ չսիրել աշխարհը ազնիւ, քան կարևոր
է, չփորձել նրան և ապրել անասունի նման, չցանկալ հարստություն
ու մեծություն, այլ բարին գործելով բովականաւ կերակրով ու հանգեքով:

աբովհեանս «աւելին» քեզ ցուէ՛ր լինի՛ս: Ունայնության երգն, ուրեմն, նա-
զանի գրչի տակ դաւնում է մի խրատ, շատ զգացված ու խորը գիտակցված,
մի բացատրության, թէ չղեւք է ազան լինել, որովհետեւ ազանության
մեջ ոչ մի խորհուրդ չկա, քանի որ մարդն ինքը չի վայելում իր մեծ աշ-
խատանքները:

Բայց դու գոյս գիտացիր թէ յի՛նչ կու գառիս,
երբ թողուս օտարաց 'ւ ի հող մասնես:

Անշուշտ, նազալը չի ցարգում անգործության և ոչ էլ աշխարհաբա-
ցության, ինչպէս միաթիջ նորեկացին. այլ միայն անցավորի համար, որ
մարդ ինքը չի վայելիլու, չաշխատել անասունի նման և չմոռանալ հոգեպար-
հովիտանկանը. նա միայն չափավորության է ցարգում:

Աշխարհս տուն է լի դանձով,
Փաշթամութեամբ և մեծութեամբ.
Այլ և սեղան է բարելի,
Որ ամենայն ոք ցանկանան.
Որք իմաստուն են, հաւատով
Ըզնափառութիւն տանուն, զնան:
Եր. 18

Ինչքան էլ աշխարհն ունայն է համարում, և մարդկանց աշխարհի մեջ
մի մամանակավոր էյուր միայն, բայց և այնպէս նա չի աղւաճարհում աշ-
խարհը, սուտի և բաղրսովին անաւորեր չի համակերպում մահվան առաջ.—

Ճանապարհ հեռաւոր սանիս գնալու.
Ծաւր չունիմ, հար չունիս փրկիլ ի մահու:—

Կուզված բացակայում է նա մահվան համար, գիմեւով ինքն իրեն, և ազա-
նկարագրում իր իսկ աննշն աղբելու մահվան բաղբին:

Թրժամ մահ քեզ տիրէ 'ւ օրն հասանի,
Նւ հոգիդ ի մարմնսյդ ելեալ բոժանի,
Նա հայիս տաւ և անդ ազորմ ու լալի,
Ոչ օգնէ քեզ եղբայր և ոչ սիրելի:
Շուրջ ամեն ազորմուկ զայնեդ աւ նայիս,
Հեա թափես արտասուք աւ հեա շաւարիս.
Ոչ օգնէ մեծութիւն 'ւ ոչ բէր աշխարհիս,
Զինչ բարի գործեցեր՝ նա գոյն տի տանիս:
Եր. 6—7

Մահը և աղբելու աշխատանքն ավելի գորեղ կերպով երգել է նազալը
«Ողբ վասն մեռելի» քերթվածի մեջ, գրված 1409 թ. Մերտին 'քաղաքի
կառարածի մասին ժամապաշտից, որ վարդապետն ինքն իր աչքով տեսել է.

Այօք տեսայ դառն կակիժ ողորմագին.

Լալով լացի և ողբացի արատաւագին,

Դառն արատաւօք զոգրս տապի նոր մեծկին...

Այդ ողբը մի ժամանակ մեծ ժողովրդականութիւնն է գտել՝ երգվելով նորաւի ննջեցելոց հուշարկավորութեան ժամանակ և մինչև անգամ մեկ է Մարտոցի մեջ, ուստի և փոփոխութեան է ենթարկված, մեջն ավելացրած են աներ, որ ուրիշ օրինակներու մէջն: Բանաստեղծին, բնականորեն, ոչ մի հասակի մարդու մահն այնպես ցած չի պատճառում, որքան անմեղ երեխաների, նորաւի մանուկների ու երիտասարդների, որոնք այնքան հեռու են մահից, և նա, ճերտութեան հասակում, շատ սրտառու է, խորին հուզմունքով նկարագրում է այդ մահը, որ ամենից արատավելի է.

Լացէ՛ք այսօր և ողբացէ՛ք ամենեքեան,

Դառն արատաւօք հառաչեցէ՛ք դուք միտքան.

Ջիւ հանց կակիժ այլ չէ տեսեր մարդ բանական,

Որ ստեր ու ձոր և ծառ ու ճեղ ամէն կուլան:

Աղէկ մանուկ տղարդ պատկեր արենման,

Յունքն կամար. աչքն կանթեղ էր յանդիման,

Յամէն անձամբ և հասակօք ինքն աննման,

Ամէն մարդոց էր սիրելի և սիրական...

Մանուկ անկեալ և թաւալէր ողորմագին,

Ժանդի հասեալ էր օր մահու բուռն տեսնին,

Հայէր ողորմ յաջ և ի ձախ, քակտէր հողին,

Մար չուներ, ոչ օգնական յայնմ տեսնին:

Յայնմամ ելաց. լալով ասաց. «Բնձ խղացէ՛ք,

Նւ զենէհար ի մահուանէն դիս թափեցէ՛ք,

Նւ ի ձեռաց սուրբ հրեշտակին տղատեցէ՛ք,

Ջի դեռ մանուկ եմ. զենէհար, դիս զենեցէ՛ք»:

Այս մեանողը ազիւղորմ կերպով հոր երեսին է նայում, աղաչելով, որ օգնի իրեն. թշվառ հայրը պատասխանում է հառաչելով՝ Թե պատարաստ է հագին աւուր ողորմ փոխանակ, բայց ոչ մի բան չունի փրկելու նրան, և յաջողուն ուրիշ բան չի մտած, բայց և՛ ի իր «կանաչ արեն մանկութեան»:

Գեղեցիկ դայն երեսաց թաւամեցաւ,

Նւ ծովային աչքն ի լուսոյ պակասեցաւ,

Վայնալուչ զօրեղ բողբոլէն թուացաւ,

Լաբ արծաթոյ սկիւ մանեակէն մանրեցաւ:

Եվ մեանողն իր վերջին հրաժեշտը տալով և իր համար պատարագի հոգ ամենելով ընկնում է գողան ու դժվար ճանապարհը, որ նա չի կամենում զնալ, որովհետեւ զեռ ժամանակը չէ. դեռ սրտում փոփոխներ ունի, որ նա անկատար հեալ զերեպման է տանում: Այս մահը և նարեկացու մահը արդեն որքան տարբեր են. վերջինս ամենեկին չի հուզում և չի ցածում,

Թե կյանքից զրկվելու է, այլ միմիայն իր հոգու փրկութեան համար է հոգում, մեռնելիս անգամ միմիայն ապաշխարելու և ազոթելու վրա մտածելով. իսկ այստեղ էականն է այս գոտն ցաղը աշխարհը թողնելու համար. փրկութեանն արդեն ձևական է դարձել. «Ջենեհար ինձ պատարագ գրէ՛ք Պաշար,» «սուրբ ազոթիւք զիս յիշեցէ՛ք դուք միաբան, պատարագը հաշտեցուցե՛ք զստուածն բան, որ զի՛մ հոգիս արքայութեան առնէ՛ արժան»:

2. Քերտված:—Մահման այս երգը, որ մեր քնարերգութեան ամենագլխավոր բնածներից մեկն է. իր ձևով և բովանդակութեամբ կատարելութեան է ևսակ Վերորէի տաղին մեջ (եջն էջեր, եր. 76, 1 տ.): Թե մի է այդ տաղի հեղինակ Քերտեան, որ դարում է աղբիւ և ունենք որդոյն նրանից Յոցած ուրիշ քերթիւմներ ևս, այդ հայտնի չէ, Լսաւ Ն. Պոռուրյանի (Les Trouvères Armenien, եր. 163)՝ նա աղբած պիտի լինի 15-րդ դարու վերջերում: Այսպիսի երգիչը չէր կորոյ ուրիշ տաղեր ևս հորինած չլինել: Բայց դժբախտաբար մինչև այժմ բան հայտնի չէ: Այդ տաղի մեջ նա հանդիսանում է իսկական արվեստավոր երգիչ: Նշուած Մկրտիչ Նազարի նույն երիտասարդի մահն է, և նկարագրի մեջ էլ մեկ-մեկ նույնը: Բայց մինչև նազար ինքն է երգում և մեռնող մանուկին ու իր հորն է խօսել տալիս, այստեղ բանաստեղծը գերեզմանից դուրս է կանչում նոր թողված մեռելին և նրան խօսել տալիս իր մասին: Բանաստեղծը քնարերգութեան չի հորինում, այլ վեպ. սեղմ, խորացրած գործողութեամբ ու նկարագրով, որ խիստ սրտառու է ազդեցութեան է թողնում, երբ բանաստեղծն իր սեղանկան զգացումն արտահայտում է «վայ անձն իմ, եղուկ, հազար վայ» բացակայութեանն ստեղծելով, որ կրկնում է ամեն էլում իր պատմածի և թե մեռելի՛ ամեն մի անից հետո և ուժեղ ցնցում ընթերցողին, մտածմունքի մեջ մղելով, չնայելով ինքը բանաստեղծը և նույնիսկ գերեզմանից խոսող մեռելը շատ մեղմ ու հանգիստ են պատմում: Բանաստեղծն իր տմբոյջ էութեամբ զգացել է մահման սոսկումը, որ շատ մեծ է և մեծ է հուզիչ կացութեանն ստեղծել և կյանքի ու մահվան պոռնկ հակադրութեանն ստեղծելով: Հենց սկզբից մարդու Ֆիզիկականի համար ստանում ենք մի սարսուռ գերեզմանի տակ, որի մեջ հոտում է գեղեցիկ ու խիստ նազելի մանուկը.

Երէկ հողվեցօքն անցի, հոտ տաի զքեմբս կափուցի,
Բայ՛ մ' երկուք յառաջ՝ զնացի, նեղ ու խոր զնդան մի տեսի.

Վայ անձն իմ, եղուկ, հազար վայ:

Մանուկ մի պառկած տեսի գեղեցիկ ու խիստ նազելի,

Հորցուկ ես նորո եղայ՝ թ' ի՞նչ կանես, այդ քեզ չէ տեղի.

Վայ անձն իմ...

Դարձաւ ու ճուղաղ ետուր թէ՛ կանգնեց, կտրիճ գովելի,

Նս ալլ քան ըզքեղ էի գեղեցիկ ու ալլ ցանկալի.

Վայ անձն իմ...

Մեռելի տաղին խոսքերից մենք խորն զգում և տեսնում ենք մարդու դառն հակառակորդ, որ ոչինչ է ինքը, և այսօրվա զվարթ ու փարթաւ մարմինը վաղը մի զգվելի գեղ է. և իդուր կափուցանում է քեմբը ու

հետո փախչում, քանի որ ինքը մեռելի ընկերն է, բայց երբ մահուկն
ակում է պամակ իր անցած կյանքը, իր հոգևոր քաղաքումները, նրա
ամեն մի խոսքը մուրհի պես հարվածում է մեզ, որովհետև մենք տեսնում
ենք զաղցը և լավ բաների կարծանումը, առնում ենք կյանքի և մահվան
անհուն ասարեքությունը և մարդու կատարյալ անզորությունը։ Մի կյանք,
որ ճշի, ուրախ ու լիառատ, անհոգ ու անույզ է, մի մարմին, որ ուժեղ ու
զեղեցիկ, առույզ և շնորհալից է, մի մարդ, որ ամենքի համար ցանկալի
ու հիանալի է, շրջապատված սիրելի ազգակամներով ու բարեկամներով, մի
խոսքով՝ ամեն բարեմասնություններով լի, մի կատարյալ բախտավոր մարդ,
որ մահվան մասին երեք էլ չի մտածում և իր բարի գործով չի պա-
րաստվել աղետի համար, որովհետև մահն իրենից շատ հեռու է երեւո-
յել, այլ միայն կերել, անուշ խմել է, ճարտար խոսել, այս մարդը հանկարծ
ցավից բռնվում է։ Նա սկզբում զարմանում է, որ հիվանդացել է, բայց
շուտով ընկնում է անկողին, թուլանում ու կորկամում է։ Ողորմագին աւ-
ղում է, որ ոգնն իրեն, բայց չեն կարողանում ոգնել, մարմինը թուլանում
է, լուսառու և ցանկալի աչքերը կուրանում են, զորավոր բազուկը աշտարժ
է թուլ, զարմանալի ճարտարախոս լեզուն կաղվում է և վերջիվերջո ասում
է մահուկը։

Հոգին ի մաքմեոյս ելաւ, ու մընաց մարմինս գորշելի,

Այն իմ սիրելիքն ամէն ողբալով լային դէմ ինձի։

Վաչ անձն իմ, եղբւկ, հապար վաչ։

Բայց այդ չէ միայն մարդուս ոչնչութիւնը։ Իսնք մեռելին և տես-
նենք նրա սիրտի վիճակը, որ անխուսափելի ճակատագրականություն է,

Այն իմ ըոյր 'ւ եղբայր՝ որ իւրեանց էի ցանկալի,

Շաւառվ ինձ պատանք բերին՝ թէ՛չ հանէք որ, խիստ չնոտիս։

Միքելինքն իսկ, ուրեմն շուտ դեն են շարտում իրենց սիրեցյալին, որ
արդեն գորշելի է։ Դրանից էլ ավելի դառնություն չի կարող լինել։

Կուսառնդին Սրկնկացու մեջ արդեն, որ նույնպես երգում է զեղեցիկի
մահը, կա այդ դարշութիւնը, բայց նուրբ. այնտեղ մահը զեղեցիկ մարդ-
կանց միայն «քաշէ զբերսին դոյնն, որ է զերդ ծաղիկ», այլ զեղեցիկ
երեխն սուրբովն, որոնք ոչ աչք ունին, ոչ լեզու կամ բերան, դարձել են
փոշի և օսկերք են ցամաք, այն անձն, որ պայծառ էր, զոն զձիւն ըսպի-
տակա։ Մկրտիչ Նաղաշի մեջ «աւաղ զայն աղուր մանկտիքն, որ դարձան
ի հազ և ի փոշի»։ Իսկ Քերովքի մեջ զեղեցիկությունը դարձանք է վերածվում,
մի զգվելի ոչնչություն, որից թրթռում է բանաստեղծի վշտահար սիրտը։

Բայց այդ չէ միայն նրանք ինչպես դիմում կողոպտում են նրան՝
կարծես ապրողներու համար, թե չլիտի սիրել աշխարհի փառքն ու հա-
ջըսությունը, խելով զարգարանքներն ու հաղուստը, ու իրենցից շատ հե-
ռու խոր ու գեճ զնգանի մեջ հոգով ծածկում և ասում, թե «անշարժ
եղիցի»։

Ահա թե քնչ է պակաս մարդու համար, թող նա քիմքը չկապուցանի

և չշտապիր հետու փախչել: Միջնադարյան հավատացյալի համար, սովորյալ, մեղավան արհամարքըն ավելի երկարատևում է հանդերձյալի տեսարանով, մահով չի ոչնչանում մարդը, մեղավոր մարդը,

Երեստ ռեդրմելի է մարդ, որ մեղօքն ի հոգն իջանի.
Երթայ նա անլոյս խուար, տարտարոս 'ւ ի հուր դեհենի.
Ոչ սուրբ բարեխոս լինի, ոչ եղբայր եղբորն օգնելի:

Մկրտիչ Նազալի մեջ գոնե այն միտմիտ հավատը կար, թե պատա-
բազը, Յնացողների աղօթքը կօգնի մեռելին. այստեղ այդ ամենը անաբեհք
է. միակ բարեխոսը Յնացել է Աստվածածինը, որին դիմում է նաև Նազալը,
և միակ միջոցը սեղական բարի գործն է կենդանության ժամանակ, բայց
այդ էլ չի անում մարդ, հարուստ մարդը՝ որովհետև չի հավատում իր
մեղավան, և իր գործն այնպես չի բռնում, որ մեռնելիս չշտապիր:

Մըսքին Քերովբե անխել բառք է պաղ ու խոսք է քամի,
Թէ խիտ իմաստուն ես դու, նայ արա ճարակ դու քեզի.
Քանի յաշխարհիս կացեր՝ չես գործեղ դու գործ մի բարի,
Ըզփառս աշխարհիս սիրե, որ կսրուստ է քեզ 'ւ ամենի:
Վայ տնձն իմ, եղուկ, հազար վայ:

3. Հովհաննես Թլխուբանցի՝—Մինչ Քերովբեի առդի մեջ ավելի մար-
դուս ոչնչությունն ենք տեսնում, քան սարսափը մահից՝ Հովհաննես Թլ-
խուբանցու մեղավան երգերի մեջ՝ ընդհակառակն: Այս բանաստեղծը, որի
կենսագրությունից միայն այսքանը գիտենք, որ 1489—1526 թ. եղել է
Սսի կաթողիկոս, իր ամբողջ էությունը դրոշմում ու սարսափում է մահից,
որովհետև ամենամեծ չարիքը, որ կա մարդու համար, դա մահն է.

Է՛, մահ, քանի ըզքեզ յիշեմ՝
Կու դողում և կու սարսափիմ.
Չկայ քան ըզքեզ լեղի,
'Ի ամենայն լեղւոյն լեղի ես:
Լեղի՛, 'ւ ամենայն լեղւոյ՝
Միթէ դու ի քեզ նման ես.
Դժոխք քան քեզ լեղի,
Եւ յետոյ դայն ալ դու բերես:
(Եր. 48)

Նա այնքան առում է մահը, որ նույնիսկ բորբոքում, գայլանում է
աստուծո դեմ. որ քեն պահելով մարդոց դեմ՝ մի հանցանքի համար մահ է
սահեղենի:

Է՛, մահ, դու քէն ունիս,
'Ի Ազատայ որդին կու հանես.
Կամ մեղաց հարուած ես դու,
Ի մահու պաղէն մնեալ ես:

* Ահա՛ն ագու.

* Գ. Կասանյանց, Հովհաննես Թլխուբանցին և յուր առդերը, Թիֆլիս, 1893.

Մահվան ճեղքած պատկերացմամբ և անասաբանի աշխարհի անցա-
վորության մասին իր հասկացողությամբ Թլկուբանցին չի տարբերվում
նախորդներից. միայն որովհետև նա խիստ ատուկ և աղքատվում է մահից,
ուստի և հանգիստ երգել չի կարողանում այդ նյութերը, այլ ընդհանրապես,
նույնիսկ յոթանասուն տարեկան հասակում մի բուռն և ուժգին թափով
պատկերացնում է մահվան ոչ միայն դառնությունը, այլև ամենահույժ
ուժի՛ր, որ ոչ մի մարդու, ոչ օրի ու մարգարի, ոչ ուժեղի ու թագավորի
մտիկ չի տալիս, այլ ամենքին հավասար ընկնում, հավաքում է իր բուռն
մեջ ու խորտակում, և ինչպես Գերբվերի տաղի մեջ, գեղեցկությանը անու-
շահոտ մի գարշելի բռնի դարձնում.

Թէ հագիդ է վեց զրաւ,
Նեա նետես 'ա ի թափ անցրեսս,
Տանիս զնա ի բանտ ամեսս,
Դէմ դաւանն ցար մի ձգեսս,
Արծիւ ես, յերազ թայէս,
Լախաձիգ զթեգ տարածեսս,
Ձինչ աշխարհս հզօր մանուկս,
Ի թևիդ ծայրն ձրարեսս:
Հաղար երաւել նորա,
Ձոր բարի գործով գտանեսս.
Հեղեղ բոցեղէն տարերս,
Ձոր ի մէջ մեղացն ըմբռնեսս:
(Եբ. 47)

Թլկուբանցու այս անհանգստությունն ու սարսափը նրա զայրութիւն,
ատելությունն ու դարշանքը մահից՝ ծագում են նրա ընդհանուր խառնված-
քից, որի էական դիմ է կեանքախրաքյունը: Նա ոչ միայն ապրելու տենչ
ունի, այլև գեղեցիկ, ուրախ ու զվարթ ապրելու, և կուգոր հավիտյան այդ-
պես ապրել՝ միայն սիրելու և գեղեցկությունը գիտելու համար: Բայց
դրան խանգարում է մահը, ոչ միայն նրանով, որ զրկում է սիրելուց ու
գեղեցկությունը տեսնելուց, այլև նրանով, որ, ժամանակի հայացքով, աղ-
պիսի կյանքն ու սերն ընդհանրապես, այս աշխարհի համար վտանգավոր
էր, իսկ այն աշխարհը մարդուս բերողը մահն է: Եթե չլինե՛ր մահը, մարդ
այդ վտանգից ազատ կլինե՛ր և կսիրե՛ր ու վայելչությամբ կապրե՛ր ընդ-
միշտ՝ առանց որե՛ն վրդովմունքի: Բայց այն միտքը, թե մահ կա, ինչպես
մի թույն միշտ կաթում է նրա վայելչասիրության մեջ, — ահա թե ինչու
մահն ամենից մեծ չարիքն է.

Թէ չէր մահուն օրն սւ դժօխքն
Սւ կամ սարապի դառաւատանին,
Նա այս աղէկ էր զինչ տառց
Քն Հովհաննէս Թլկուբանցին:
(Եբ. 38)

Այսպէս է վերջացնում նա իր կենսաւրաթ սիրո երգերից մեկը (տես
և եր. 28, 30—31, 37, 49—50)։ Այսպէս է հաճախ վերջացնում, երբեմն և
սկսում սիրո երգերը (ահա նաև «Հայ էջեր», եր. 32)։

Բանաստեղծը փորձում է արդարացնել իրեն, թե սերը մարդկային
բնության մի պահանջ է, որի համար մեղադրել կարելի չէ իրեն, քանի
որ Աշխարհ սկսած (եր. 27—33) մարդիկ միշտ հղթվել են նրանից (եր.
33—34) և սուս է, թե կրօնավորներն առդգա են։

Ինչ մեղադիր յէ՞ր կու լինիք,
Հորիւր տարւոյ կարեղանին,
Որ ճերմակն է դարձեր դեղին,
Յարէ զկօրաիկ պատարագին
Ու գընդ ուզէ աւջն խաչին (եր. 32)։
Սէրն կուտանի դո՞մօթն երեսէն
Ի հարեղայէն և ի վարդապետէն,
Ծրէց, սարկաւազ կու ձգէ ի կարգէն,
Տանի դիւելքն ի գլխուն, դաժօթն երեսէն (եր. 34)։
Թէ վարդապետն պէ՞նդ տեսնու,
Մոռնայ դուստտն ու շատ դրունք (եր. 16)։
... Զմիակիցին խելքն տանիս,
Որ կացեր է զօրն տնարատ (եր. 25)։

Ընդ վերջապէս ստեղծած կնքը ստեղծել է սիրո համար (զուստեղծիբ
դիմին ի կողէն վասն Ադամայ սիրոյն համար) (եր. 27), և նրան սիրում
են ոչ միայն մարդիկ, այլ ինքն աստված է սիրում, քանի որ զեղեցիկ
կիսն արարչության պսակն է։

Պարծանք ու վաճ ջո մնողին,
Փռոք ու պատիւ ջո Արարչին (եր. 22)։

Բայց այս մտածութիւններն ամենևին չեն հանգստացնում բանա-
ստեղծին, որովհետեւ սերը դաբձյալ մնում է իբրև մի մեղանշանութիւն
(«Ով որ մեղաց հաշակն տանու՝ այլ Առաւելոյ չի տար խաբար») (եր. 28),
աւրաթ և նա տանջվում է երկվութեան մեջ, ու նրա սիրո և արաւելութեան
երգերը, մահվան հիշատակով, վերջում մեծ մասամբ դառնում են և զղջման
երգեր։

Բացէն տանձ, ճարակ չկայ,
Մահու մեղաց ներքեւ ես ես,
Հայիմ ի քեզ, հայիմ ի նա,
Որ ի հողոյ ստեղծեր զքեզ,
(Եր. 20)

Բայց ինչքան էլ մահը թունավորում է նրա հոգին, ինչքան էլ մահ-
վան երգերի մեջ նա երգում է անցավորութիւնը, բայց և այնպէս Թլկու-
րանցին հոգեւոր չէ. աշխարհը նրա համար ոչ միայն ոչինչ չէ, այլ, բնա-

հազարավան, ամենալույ բանն է, և նույնիսկ Աղամա ամամհուսթյան դրախտից լույս, որ աղիսի վայելելու ներք գարունն է պայծառ, այդի ու պարանդ, դալառ ու լեռները վարդաբույսն են կտնայ գգնասաներով ու ծաղիկներով, երբ շնչում է անսւշ քամին, թռչուններն անուշ երգում, քաղցր գալթս է սոթապիկ ձայնը, և մարդ նստում է վարդենիների մոտ, ծառի թանձր ստվերում, առջինն ունենալով արագ վազող խոտովուն չուրը, ~~ու~~ **թին** ընկերի վզով ձգած՝ սիրով խմում է անուշ գինին և ուրախությամբ անուսւ մա մի ախաղիսի բան է, ասում է Քլուրաբանցին, որ դրանից լույս բան չկա, և մարդ նույնիսկ Աղամա դրախտի հետ չի դիտել այս կյանքը, եթե միայն չլինեք մահը (սճաղ գարնանն, եր. 35)։

Այս աշխարհասիրությանն արդեն այն չէ, ինչ որ հոստանդին ներգնկացին ունեք իր գարնան և արեգակի, լուսս և սիրո փառաբանական երգերի մեջ, որտեղ ամեն ինչ մի կրոնական հրեմանք էր աստվածային ընդթյան գեղեցկության ու հավիտենականության առաջ, Այստեղ արդեն մարմինն է իշխում իր թանձրացած, երկրավոր, ցանկական պահանջով։ մարդը երկնային ուրախներից իջել է իրական աշխարհը և իրական կյանքի վայելքը։ Իսկ այդ վայելքի մեջ էական տեղը մեր Քլուրաբանցու համար ընդթյանը չէ [գրավում] իր գեղեցկություններով և խոբհրդավոր ուժերով, որ մարդուն մի հոգևոր վայելչություն է ընծայում, այլ ինքը, մարդու մարմինը, բնությանը նրա, այդ մարմնի համար միայն մի գեղեցիկ զոստավայր է, մի կտնայ պարանդ, ուր կարելի է ծառի ստվերում նստել, վայելք քաշել, խնդում անել։ Այդ պատճառով Քլուրաբանցին, գոնե ինձ ձանաթ երգերի մեջ, չունի բնության երգեր, ինչպես Կոստանդինը։ Նրա Վարանառ ասողը նույնիսկ (եր. 35) մի արախությանն ասող է, և գարունը նրա համար միայն արախության ամենալույ ժամանակն է, որովհետև

Գարնանային ամիսն երբ գայ,
Հասար ծաղկի ձոր ու գալթը,
Գնանքդ յորդոր գնացք առնուն,
Ի լիսներուն թափին ի վայր։

Այդ ժամանակ, բնության այդ պարթումի հետ՝ պարթում է մարդու մեջ արախության և սիրո բնական հույզը—

Գէնա բահուր, այլի բահուր,
Այլի կուտան սիրոյ խաբար։

Այս պատճառով, սերելի կինը բանաստեղծին ներկայանում է դրեթէ [միայն] իր գեղեցիկ մարմնով, որ հափշտակում է նրան և որին մեծ սիրով նվիրում է տաղեր։ Գեղեցիկ մարմնի նկարագրի համար, Նաբեկացու ժամանակից սկսած, ուրեմն 10-րդ դարուց, կազմված է եղել որոշ մե ու հաջակ, որով թվում են, ինչպես անում է Նաբեկացին, հասակը, անք և ունքը, այտերը, ձեռքերը, բերանն ու շրթունքը, լեզուն ու ձայնը, ձամերը կամ վարսերը, ձոցը, ժպիտը, պատմունքները, գույնն (քամար), քայլվածքը, կնքվածքն ու շարժվածքը, Դրա հետ միասին առաջ են գալիս այ միայն

արտաքինի նկարագրի համար ընդհանուր պատկերներ և նմանություններ երկնային լուսատուներին, բույսերով ու անասնով, որ բանեցնում են երգիչները, այլ և գեղեցկության մի ընդհանուր իդեալական պատկեր, որի մեջ առանձին բանաստեղծները շատ քիչ փոփոխություն են մտցնում նախելով իրենց ճաշակին կամ սիրած կնոջը և կամ իրենց հակումներին, ավելի կամ պակաս տեղ ուղղով մաքնին, երգչի անհատականությունը երևում է, գլխավորապես, ոչ այդ նկարագրով, այլ իր արժանազանությամբ, որ նա զուգու է իր երգի մեջ, Թեպետ և մինչև Թվուրաւնցին հայտնի են միայն երկու երգիչ՝ Նարեկացի, Կոստանդին, որ ունեն այդ նկարագրերը, և Թվուրաւնցին առաջինն է, որի երգերի մեջ մեծ տեղ է բռնում արտաքինը, բայց և այնպես այդ երեքի համեմատությունից հենց պարզ երևում է վերևում գրածի ճշտությունը, Շատ բան Թվուրաւնցու մեջ ընդհանուր տեղիք է, Թեպետ և առանձնահատուկ ուժով արահայտված:

Այդ գեղեցկության իդեալն, անշուշտ, մեր հին երգիչներին է գալիս և 10-րդ դարում տղան գրեթե միողջ պատրաստ է. Թե արարական ազգեցություն կա դրա մեջ Թե չէ՝ այդ չգիտեմ, բայց քանի որ 10-րդ դարում է, նոր պարսկական չկա: Երգը երգի ազգեցությունն անաղյուստ երևում է, բայց այդ ճաշակը շատ հեռու է հին հրեականից:

Կոստանդինին, քանի որ նրան հետաքրքրում է ավելի ներքինը, գրավում է գեղեցիկ պատկերը իր մի քանի էական գծերով, իր ժողովուրդի հասկացող և մանավանդ պայծառ գեղեցիկ և ուրբուն սև մազերով: Թվուրաւնցուն, ընդհանրապես, մաքնի բոլոր մասերի հետ՝ ամենից առաջ հաճախում են ձուլվելով աչքերը, Թուխ ու մեծ (եր. 29, 37, 25, 31, 33, 36, 39, «Հայ էլիք», 32). որ արեգակի նման փայլում են:

Արևմտյան շողող կը ստա,

Յորժամ սիրով դաշերդ անեա (եր. 29):

Մի պատկեր և նմանություն, որ նույնիսկ Վահագնի երգի մեջ ենք գտնում՝ «Այլուքն» էին տրեգականք, որ և Նարեկացու մեջ նմանեցրած է ձովի:

Այլքն ձով ի ձով ձիթաղախա,

Մաւաւնաւր յառաւօտուն

Երկու փայլական և տրեգական նման:

Այս բոլորի հետ՝ այս գեղատեսիլ պատկերը ներքին գրեթե ոչ մի արժեք չունի, բայց ի՞նչ այն, որ տանուլ ջողցը եղանակ ձայնով զրույց տնում և բնական գեղեցկությունը բավական չէ, արվեստով էլ գեղեցկանում է և ձեռքեցում, ու դրանով ավելի զրավիչ դառնում ու հաճախում մարդկանց Թունավորելու համար: Այդ է Թվուրաւնցու երգի կինն իր Թանձրացած մարմնով, որ բանաստեղծի համար ամեն ինչ է:

Նինն ջողցրիկ զրոյց ունի,

Յոյթաւ ի հեա առնէ գալար,

Յանկարժ գթիւնքն ի մարդ Թափէ,

Որպէս զակնառ բունէ անճար:

Յուշն քաշէ, գալն ղեղէ,
Խենէշանայ քան դեւիար,
Միշտ պահուկն ձեռնէ,
Ձմարգիկ կու ձգէ ի քարն ի վայր (եր. 27),
Պագ մի յերեսէդ կ'սծէ գեորասան,
Ձկաղաշ ու գնմէն ախու շնդոտան,
Երկու վարսդ է գին Ձինի և Խութան,
Պալլար, Սամպոյ է Եկրի Յաղպան (եր. 34):

Այսպիսի մարմին երգողի ու գնահատողի համար, քնականաբար, սերն ալիս մի ներքին մաքրակամ ուժ չէ, ևսգեկան գաղանի ցածերի ու վշտի լողըւը, այլ ֆիզիկական հուզի մի ըսնկում միայն գեղեցիկ կնոջ տեսքից, իսկ ախլիս ըսնկում, որ նրան հափշտակում, վառում է և սղառում. և այսպես ամեն անգամ, երբ նրան երևում է գեղեցիկ պատկերը՝ Բանաստեղծն աչք մամռնով գրոշնում է մի աչք, սեռնաժ գեղեցիկ սիրելիին կամ բարեկամին, ինչպես անվանում է նրան երգիչը, նրա մարմնին և մարմնի ըտրո մտերին, և նրանից խելքում աղ լինելով՝ ասելովում է ինքն նա մարմնով, Դրա համար և նրա երգի մեջ մարմնի նկարագրի հետ տեսնում ենք և երգչի իրեն մարմնի խորտակումը, որ ունենում է սիրո առարկայից՝

Կնոջ տեսքից նա, մանավանդ երբ հանկարծ է պատահում, և այս մտտիվ սովորականն է, ավելոծվում է (եր. 25), նրա մարմնով սարսափ է անցնում, ամբողջ մարմնով գողում, շունչը կտրվում է, սիրար մարում և ուշագնաց լինում («Հայ էջեր», 8. 32)։

Հանգոյն այլովդ տեսիլ գորուխտ,
Տղադիոն ակն ու ջուհար
Ինձ անկասկած ի գէժ ելու,
Շունչս քաղեցաւ,
Զթողիբ յիս Կամբերութիւն (32),
Բանի տեսնիմ՝ կուսարսափմ,
Սրտիկս ի սիրելիս կանցնու կրծիցս (եր. 32),
Թէ վարդապետն զձեզ տեսնու...
Ամեն անձամբ ի զող ելնու (եր. 36),
Յանկարծակի մէկ մի տեսայ,
Քուլցայ անկայ ի տեսնէն...
Երբ իմ աչերս ի քեզ դիպաւ...
Զարուերեցայ ի տեսնէն... («Հայ էջեր», 32):

Սերը նրա համար խալտրած սրտի լուսառու էակը չէ, ինչպես Կոստանդին համար. Քլկւբանցու սիրո արեղակը, ինչպես էլ փայլուն է, երեւում է դալիս իր տրոզ, խորամկնոզ ուժով, որին ոչինչ չի գիմանում. նա երգչի սիրաբ անվախճան կրակ է լցնում (եր. 31) և այրում, վառում է նրան.

Գո սէրն ի յիս դիպաւ, ստոյգ կայրիմ ես (36),
 Ես զքեզ տեսայ նման լուսոյ,
 Զէս արեգակն որ նոր կելնու,
 Սիրտս այրեցաւ բարկ կրակով,
 Ես Բնայի խն կապելու (49):
 Զինքն ճօճար՝ զէս գուռի ճեղ,
 Հրով այրէր զերկիր ման...
 Երբ իմ աչքերս ի քեզ դիպաւ,
 Նա վառեցայ զէս մոմեղէն (շէմ, էջեր, 32):
 Ես եմ ափ մի հոգ, դուն հրեղէն ես,
 Քանի գիմ այրած սիրտն արիւնեա (39):
 Գո սէրն զիս մոմ արար,
 Դու ինձ պողպատ ու կայծքար ես (38):
 Արև նման շողշող կըտաս,
 Ռարժամ սիրով զաչերդ անես...
 Դու զվէմերն խորտակես,
 Դու զլերուքն հալ հանես,
 Զով դու սիրես, նազար առնես.
 Անանց կրակով դանձնիկն այրես...
 Ճօճան վզովդ բերդեր քակես (29):
 Զեզ թնչ դադար ես զիմանամ,
 Որ դուք հալէք, հանէք լերուք,
 Սիրով քակէք բարձր բերդեր.
 'Ի ի գիլ հանէք վէմք ու սարուք (37):

Բնական է, որ այսպիսի սիրտ առարկան չափաի ներկայաւոր իբրև
 Թագավոր, որ ծառայություն ու սարկություն է պահանջում, կամ իբրև
 ազատություն բերող սիրողի (ինչպես կոստանզնի հոմար), այլ իբրև մի
 պահի, որ զո՛ւ է, մատաղ է (եր. 30) պահանջում, ինչպես սիրտ հին անողոք
 աստվածուհիները. նա սպանում է, կյանքից կտրում է (եր. 34),—

Դու ինձ լեր դառաւոր, արծա դառաւորան,
 Սիրով մի սպաներ, ճէլլէտ էֆենտի.

Եվ այս վերջին տողը նա կրկնում է ամեն ամս հոմար:

Դու գիշեր և ցերեկ մէջ իմ սրտին ես,
 Անմահ ու անզրոգ զօրինա հեղեր ես...
 Զարկա՞ն զայդ չէր անէր՝ զինչ որ դուն կանես.
 Անթուր՝ առանձնակ զօրինա հեղեր ես (38):

Այսպիսի սերն արդեն մի հիվանդություն է, որ, ինչպես ասում են,
 ասաջանում է կախարդվելուց միայն, և զբովելով գրանով բանձաթի ամ-
 բողջ էությունը, գիշեր ու ցերեկ զբանով զբողջնելով միայն՝ տանում է
 ինքնամոռացման ու խելացնորության և դարձնում է նրան քնից կտրված
 մի խելագար:

Յոբանգ որ կընստիմ զիս կըմոռնամ ես.
Մբթէ զիս դեղեցիր, կամ կտնայող ես.
Զքո ծով ծով աչեղդ դեղով ԵԹր ես (39).
Սէբն հանէ զմարդն ի խելաց
Որ այլ ըսկի չկա խաբար,
Իմաստութիւնն խափանի,
Եւ հանց դառնայ քան զդիւարհար (27, 40, 32):

Մարդ որ սիրոյ կուհանդիպի,
Նա քան զկրակ կույի՛նի վառ,
Այլ ոչ աղօթք ի միս կուգայ,
Ոչ յայսմաւորք կարդայ ու ճառ (26, 36).
Սէբն կուտանի զմօթն երեսէն
Ի հաբեղայէն և ի վարդապետէն... (34).
Ով որ մեղաց հաշտկն աւնու,
Այլ աստուծոյ չի տար խաբար (28):

Եվ այսպիսի հիվանդին՝ բժշկողը միայն իր սիրոյ տալարկան կարող է լինել, որի կողքին նստելով և նրա երեսին նայելով միայն կհանգարանի.—

Հանցեղ նեռով զիս խոցեցիր,
Որ այլ չունեմ բժշկաբար (25).
Հիւանդ եմ ես, ողջանամ, երբ նստիս ինձ յաջ (33).
Նիստ որ հայիմ յերեսդ ի վայր. (31).
Աբի ինձ դեզ արա, իմ ճարն դու ես (38):

Իր սիրոյ այս ամբողջ նկարագրի, իր այս հոգեկան վիճակի հետ, Թլկուբանցին սեղ չի տալիս զհոգեհաւ ներքին արժանիքը, որ ինքը չունի ոչ մի քնքշութեան դեպի իր բարեկամը: Մի տեղ միայն նա գրում է.

է՛ր մեղր ու կարագ և կեղևած ճուղ,
Դեզ ծուռ նայողին յաչքն հազար փուշ,
Միբող մի սպաներ, ճէլէտ էֆենտի (34):

Բայց այստեղ ևս ոչ թե սիրելիի մասին է հոգ տանում, այլ իր «զոհ-հին» համոզել է ուզում իր անկեղծութեան մասին, ինչպես և ուրիշ տեղ՝

Թէ զիս յիշես, թէ չիշես,
Ես կուսիրեմ սրտով զքեզ (29):

Բայց այդ սիրելին երևի անպատասխան է թողնում, որ երգիչը մի տեղ հանգիմանում է նրան՝

Աշխաբհա խօբաւիկ գէւ դու մհնակ չիս,
Աւառուբա շաա իկէ 'ւ այլ տի գայ քանց քեզ (39):

«Հայ էջերիս մեջ աղված է «Տաղ Յովանէսի վառն սիրսյ», որի վեր-

շում հեղինակն ինքն իրեն կոչում է «Էն Յովհաննէս»¹ Այդ տաղն տնայա-
ման Թլկուբանցունն է, ոչ միայն «Էն Յովհաննէս» անվան համար, այլ «Տո-
նովանդ իր ոգով և արամազդուքյամբ ու բովանդակությամբ»:

Այս մեծ աժն ու խորությունն առաջանում է նրանից, որ երգիչը
թողնում է իր բարեկամի մարմինը մի կողմ, և միայն սիրո մեղ տրդեն
ձանթ ազդեցությունն է վեր հանում իր բոլոր կողմերով: Այսպես վար-
վում է նա, որսովհետեւ այստեղ ոչ թե իր հրճվանքը, բախտավոր սերն է
երգում, այլ սիրո ցավը, որովհետեւ, ասում է նա,

Պաղցր լեզուով խոսոտեցայ...

Կերակրեցաք ի մի սեղան, ու խմեցաք ի մի կթխայ,

Մէկտեղ ելաք, մէկտեղ նստաք, ան ժամանակն ձեր է հիմայ.

Ո՛ր է դաւլը, ձեր է երդումն, որ բանեցաք զտատուած վկայ,

Ի վար անկաք, օտարացաք, չարկաք եղև մեղ մահանայ:

Այսպիսի վիճակը բնականաբար կտրիք չի զգում բարեկամին գովելու,
այլ միայն իր վիշաք երգելու, եվ երգում է նա «արիւն արցունքով»:

4. Քրիզոր Աղրամարցի.²—Հովհաննէս Թլկուբանցուց կրտսեր, բայց
երիտասարդ ժամանակ նրան ժամանակակից է մեր երկրորդ սիրերգող կա-
թողիկոսը, Դրիգոր Աղթամարցի, ծնված 16-րդ դարի վերջերում: 1616 թ.
տրդեն ունի բանաստեղծություններ, իսկ 1669 թ. զեռ կենդանի է հիշվում:

Սա իր աշխարհայեցողությամբ և երգի վերջում դրած ազայտվանքով
շատ չի տարբերվում Թլկուբանցուց. նույն հայացքն ունի ունայնության
և մահվան մասին, ինչ որ նախորդները, նույնպես երգելով «նվիրված սիրո»,
գեղեցիկության և աշխարհային վայելքների ու մահվան, ինչպես Թլկուբան-
ցին, միայն ավելի գեղեցիկ ձևով, բառն ավելի լավ է մաքուր ու խորացրած
բովանդակությամբ: Ժողովրդական ձևով մի երգի մեջ բողոքում է մահվան
դիմ, որ գալիս, բռնի և անազորույն կերպով զրկում է մարդուս աշխարհի
վայելչությունից:

Եամէն առաւօտ և լոյս

Պիւլպիւն էր նստեր յայգւոյս,

Պաղցրիկ ձայնէր վրայ վարդոյս,—

Կասեն, թ'արեկ ել այգւոյս:

Աշխարհը նրա համար մի աւրախարար տեղի է, մի նորասունկ,
գործառային ծաղիկաւ այգի, շրջապատած ցանկապատով, անով, ավազա-
նով. անուշ ջրերով, ծաղիկներով, կարմիր ու սպիտակ վարդերով. մարդն
ուզում է վայելել այդ ուրախարար տեղը, կյանք աւ լույս տեսնել, այդ
այգուս զտուղն ուտել, վարդի հոտն առնել, զինին խմել:—

¹ Թլկուբանցին իր տղերի մեջ կոչում է իրեն «Թլկուբանցի» (29), «Էն Յով-
հաննէս Թլկուբանցի» (30, 31, 32, 33, 37, 44, 46, 50, 56), «Եովհաննէս» (39), «Էն Յով-
հաննէս» (43), «Եովհաննէս Թլկուբանցի» (46, 47), իսկ երկու տղերի մեջ (5, 35) հեղինակ
չի հիշում:

² Գ. Գառաւայանց, Գրիգորիս Աղթամարցին և յայտագրեր, Քիֆիս, 1898

Պաղեմ փռւնջ մի վարդ աղւառյա,
Գնեմ մէջ կարաբի դինւոյս,
Ուրախանամ այս հոռոյս:

Ահա թե ինչ է մտածուած մարդս միշտ, բայց և ինչ են նրան տասում՝
դուքս արի քո այդ աղւառը: Մարդը բողոքում է.

Ձեռն ելնե՛ր ես այս աղւառյա,
Այս իմ նորատունկ աղւառյա,
Յայս աւրախարար տեղւոյս,
Եւ այս նորաշէն տներուս...
Դեռ չեմ տեսեր կեանք և լոյս...
Ինչպէս ելնեմ ես աղւառյա:

Բայց ավանդ, երիտասարդ կյանքը ստիպւած պիտի զրկվի այդ վայել-
քից և նրա համար աշխարհը կործանվի.—

Ծաղկունքն վերացան յաղւառյա.
Վարդն թափաւ իմ աղւառյա.
Ժանկն քակեցաւ յաղւառյա,
Ահա որ ելայ աղւառյա:

Բայց մարդուս այս դառն ճակատագիրը, թեպետ Աղթամարցուն ևս
միշտ ապագաովի է ապրիս Քլկուրաճնոյ նման, բայց չի խանգարում գա-
ղուն և առանձնապէս սեր երգելու հոգեզմայլ տրեհցությամբ (Կոստանյառի,
Նոր ժողովածու, Բ. պրակ, եր. 18).

Գարունն է բացուեր, վարդ ի պաղչանին.
Քաղցր եղանակն պիւլպիւլն ու դուժերն.
Սիրով են վառեալ ի կարմիր թփին,
Կանաչ ու կարմիր տերև կու հագնին:
Գինով եմ, գինով, հարբեր եմ սիրով,
Գինով եմ, գինով, ցերեկս արեով.
Գինով եմ, գինով, գիշերս երազով:

Սիլ նա իր տրեհցման ու երազանքի առարկան երգում է մի ճրեղուն
խանդով, զուխերի հարստությամբ և թարմությամբ, որոնց մեջ շատ
բան, հարկով, նախորդ բանաստեղծներից, ուրեմն և Վերջ երգոց-ից է առած
էրբեւ սովորական ձևեր, բայց իր անկեղծ ավյունով այնպիսի զեղ ու փայլ
աւելած նրանց, որ շլացնում է ընթերցողներին, ինչպէս և Աղթամարցին
ինքը շուրջած է հղել իր զեղուհու ճառարանագրած պատկերից: Իսկույն
երևան է գալիս կրթողու բնավորությունը, որ վառված է, հափշտակված է
մի ճոխ անձից և ուզում է նկարել՝ այն, ըթե նա նկարիչ լիներ, կառներ
վրձինն ու ներկով կհաներ այդ, որ միշտ իր աչքի առաջն է.—

Եթե յաւոց մարմնոյս ծանկիտ,
Մտաց աչք ինձ երևիս (80),

Բայց նա խոսքերով է օգուում նկարել, և բոտերը բովանդակութունս չեն տալիս նրան՝ այդ պատկերն իր ուղած ներությամբ դժելու և միշտ նորանոր գույներէ, նորանոր ձևերէ է դիմում՝ օգնության կանչելով բազմաթիվ ծառեր ու ծաղիկներ, հրեղեններ ու թռչուններ, բուրավետ խնկեր ու ակներ, բնության երևույթներ ու լուսատուներ, նմանություններ յայս կուտակությունը, ծնված սիրողաց սրտից. վերջիվերջո դարձյալ գոհացում չի տալիս նրան, որովհետև իր գեղունիքն աստվածաման է՝ նա ոչ միայն մորմնով կոտարայալ է, այլև վերնային է իր հոգով։—

Վերնոց վեհագոյն և տշխորհի գորդ,

Ուշիմ և խոհեմ անօրինակ մարդ... (63)։

Տիպ և գազափար Տեառն Աստուծո հս,

Պատկերով պատուական, ջան զՄիքայելի հս,

Ի մէջ հողէդինացս հրեղէն հս (63)։

Դու սքանչելագործ, ջան Զօրաւար խաչ (64)։

Մաքուր պատկերով նման հրեշտակի... (67)։

Սակալի վարսաւոր սքսվրէ (76)։

Գեղունու այս ներքին մասի հետ, որ տառջին անգամն է երևում մեր բանաստեղծության մեջ, մենք տեսնում ենք Աղթամարցու ընքուշ գորովական վերաբերմունքը դեպի իր սիրո տիրուհին, որին նվիրում է իր երգը, մի վերաբերմունք, որ չունի թվուրանցին։

Պատկեր հս ջո Ստեղծողին չաղկապել ի ջառանխութ

Տիպն իւր գոյացոյց զքեզ, նկարեաց 'ւ եւան յարգանդէ.

Ձիւնդ օրինակ տամ քեզ յանշնչից և յանգագայէ,

Յայս իմ ալրեցած սրտէս գոյս ընծայ ընկալ ընդունէ։

(Ծբ. 77)

Ուրիշ տեղեր ընքուշ հոգատարությամբ երգում է.

Օբնուութիւն Փրկչին ի քեզ իջանի,

Կամօքն Աստուծոյ կենտս կենդանի.

Գունդ չար ալսօքն ի քէն հաւածի,

Ձերդ գորեզակն փայլես ի յերկրի (64)։

Միշտ կանաչ կենտս ջան զնշդարենի...

Բազուի լոյս տչաց ջո թշնամայն։

Բեզ միշտ հովանի բունն հայրական,

Միքայել հրեշտակն քեզ պահապան,

Աղթարհիս կենտս անփորձ 'ւ անսասան,

Անմեզ 'ւ անարտա և անաղակուն (եր. 69)։

Ի յամէն զիմաց բղխէ քեզ բարին,

Եւ քեզ հովանի նշան սուրբ խաչին,

Պա հապան լիցի աջն հայրենին,

Եւ փրկէ զքեզ ի չար վտանգէ։

(Պատմ. Բ. պրակ. եր. 18)

Այս քննութեան հետ երևում է նաև մաքուր և ազնիվ տարփանքը
զեպի զեղուհին. որ ինքն ևս մի էրեւում է, հետո Թիկուրանցու հեշտալից
բարբոսութիւնը, արկի մոտ հաստանդինն. Սակայն Աղթամաբցու սերը դու
համար պակաս ուժեղ և կարողանալի չէ, նա էլ պակաս չի աչքովում, հաւ-
սում ու մայրում և նորմովի (58) տեսնելու նրան. նրա սերն ի ղղթայում,
իշխում է նրան իր ուժով:—

- Հանց սխաւթով իջնուս քան զխան,
Դրիր զգերիս զքնիւ ու զնաան (59):

Բայց նա տանջւո՞նք բերում է մեայն իր բացակայութեամբ:—

Ունեբդ է քաշած քան զթափած թուր,
Թարթափդ քո թեք քան զնշտար սուր.
Սպանենես զերիս օրն հազար բիւր...
Ոսկի ի Հնդկաց, ահն պատուական,
Շուրջ դո՞ւ և փնտրեմ զքեզ անխափան.
Ես եմ քեզ խնդրող և վաճառական
Ի բազում մասց նախնի 'ւ անդումն:
Նայեաց մէկ ընդ իս աչքդ մէստան,
Կամ քաղցրիկ խօսէ կամ տաւր պառտախան...
Ով որ դու նայիս և առնուս նաւար,
Լինի քան զմո՞ւ պողպատ է թէ քո,
Միւրով լափեցիր ու արիր սիրտս խոց,
Կուտապիմ 'ւ աչրիմ որպէս զնոց.
Սրտէս կութափի յոլով հուր ու բոց,
Զայդ տառապանքի՞ն պապեբդ քո ինձ ցոյց,
Գո մէջդ է բարակ քան զուռի վարոց.
Սպիտակ տառաւունք, մարգարտէ շարոց.
Դու քաղցրատեսիլ և պտուղ նաւթ.
Այդ շիրին լեզուէդ տաւր երկու զրուց,
Գան զյաւաք և զեղն երես ես շիտակ.
Ունեբդ է կամար որպէս զաղեղնակ,
Այնբդ է պայծառ որպէս զփովակ,
Հարդ եղայ ի ներս, եղայ անճարակ,
Թարթափդ է խանչար՝ ինքն պապապա զուտ,
Այտով զիս հարիր 'ւ արիր խուրդ ու մուրտ,
Ամպի պես անիւ ինձ սասանիկ կարկուտ,
Թէ ես մեռանիմ քեզ շահ չէ, օգուտ (57, 59):
Վտակ նշանայ և զեւս Բորչանան,
Սելովմայ աղբիւր և փուր ես յուզման,
Անկեալ եմ հիւանդ մերձ ու քո դրան,
Սպասեմ նախապա եւ առաջութեան...
Ելանես գնաւ, ես լինիմ յառաջ,
Կամ խօսք ընդ իս կամ նախք ի յաջ,
Գիշեր և ցերեկ եմ ես երերուն,

Ոչ կենամ ի դուրս, ոչ օգիմ ի տուն...
Զարկած է վրադ քեզ կարմիր վրան,
Բազմիս ահաւոր 'չ ես քեզ յանգիման,
Սիրտս փափագի ե կայ ի գագման,
Աչերս է կորստ տեսայդ ահման,
Զիմորդ բաժանիմ ի քէն կենդանի,
Առանց քո տեսուի շունչս կուքագի (62—64),

Իսկ իր սիրտ ներկայությամբ, սիրունու տեսքը ոչ միայն չի ջախջախում նրան, այլ, ընդհակառակը, նրա սիրտը լցնում է մի անուշ բերկրալից երջանկությամբ, նրան հանգստացնում ու լուսավորում է և հոգով փաթթածացնում (62)։

Պայծառ արուսեակ ի յառաւոտու,
Նս եմ քեզ փափագ, ի յիսնէ ես հեռու.
Իմ յուշան ծաղիկ, կարմիր վարդն գու...
Լինի՛ր թէ աչուերս քեզ արժանանայ,
Իմ սուն իմ սրտի 'չ իմ ուբախութիւն,
Իմ շուենչ ու հոգի 'չ իմ կենդանութիւն...
Բերկրութեան բաժակ, ոչ աղի յայթ,
Նս եմ ծարաւեալ, արբճ ինձ մի կաթ... (67—68),
Նոր զարուն եղև, և նոր առաւօտ...
Նոր ձայն արձակեց, նոր նստաւ ի մօտ...
Հեռացաւ ու զնաց յիսնէն արամութիւն,
Եկն եհատ այսօր ինձ ուրախութիւն.
Այլ փափագ չունիմ, իմ փափագս դաւն... (69),
Գեղեցիկագիկ, քաղցրաբարբառ
Սէր քո ունի խորհուրդ ահնաւ,
Իմանայի արև պայծառ,
Լուսաւորեալ միտս իմ խաւար...
Երեւցան ծաղկունք յերկրի,
Նսցուք ընդ քեզ ի պարտիզի.
Երգեցից սէ'ր քեզ, քերկլի,
Սիրտ իմ ի օէր քո առջարի...
Բնակեալ ես դու յիմում սրտիս,
Ծրարեալ ունիմ զքեզ ի հոգիս...
Թէ տեսնեմ զքեզ կովի,
Լուսաւորի միտս իմ մթին,
Նս տամ համբոյր շրթանց քոյին,
Նս վերանամ ես ի յագին (80),

Ազթամարցին իր սերը բուռն ուժով երգել է երկու անգամ. նախ՝ վարդ ու սոխակի աշխարհնությամբ, մի սիրավեպով, երկրորդը՝ զրոծ 1523 թ., օրի մեջ տան մոտի՞ն է, ինչ որ մյուս երգերի մեջ. այն է՝ միշտ սիրո բացակայությունից և հրճմանք նրա ներկայությամբ։ Այդուհետ է. վարդը

չկա աչքում, սոխակը տեսնեցիս որում է վարդը՝ նրան գովելով և վա-
խենալով նրա վիճակի համար, որ փորձանք պատահած չլինի։ Նա անխնամ
է աչքն, որ չի՝ առնել վարդը։ Միգուցե այդեզործն է արել այդ, կամ ծա-
ղիկները քնն պահելով՝ վրեժ են առել։ Մտդիկները պատասխանում են,
թե տեղեկություն չունեն վարդի մասին։ Սոխակը թուշուններին է հարցնում
վարդի մասին, թուշուններն էլ բան չգիտեն. սոխակի ցավը մեծանում է։
Այգեզործը մխրթալում է նրան, թե վարդը չի կորել, կգա։ Սոխակը ուրա-
խացած օրհնում է Եղիշին, և նամակ գրելով վարդին՝ իր վշտահար սերն է
հայանում և խնդրում է տեսակցություն։ Վարդը ժողովում է ծաղիկներին
ու ամենքի առաջ կարգալով նամակը, ինքն էլ նամակով պատասխանում
է, թե սոխակը քիչ համբերե, և ժամագիր է լինում պարտեզում։ Սոխակն
աբախությամբ սպասում է։ Գարունը բացվում է, բացվում է և վարդը։

Երբոր արեն ի խոյն եկեալ ժամանեաց,
Ամալն ի վերուստ ցօղով յանկարծ որոտաց.
Բուսան ծաղկունք յերկրի հագարք հաղաբաց.
Վարդն չէր ի միջի, պլպուլն որոնեաց...
Յետոյ տեսաւ կանաչ դտերեն վարդին,
Այլ պատուական պայծառ օրպէս զաստջին,
Վարդն էր վարագորով ի մէջ գահոյին,
Մտդկունքն հաւասար երկրպագեցին [43],

Պլպուլն ուրախացած փռւք է տալիս ասուածուն, որ իր անքով տես-
նում է վարդը թփերի մէջ։

Երկրորդ Վարնան ապրըս մի տեսակ շարունակություն է աստջինին։
Երբ հեռացած պլպուլը գալիս է Եղիշին, ծաղիկները այժաւույս են առ-
լիս վարդին՝ թե գալիս է իր սոխակ սիրելին։ Սոխակը կանչում է զու-
րիին (տառաւակին), որ միասին տեսնեն վարդի ելքը։ Նրանք վրան են խփում
պարտիզում, վարդի կանաչ թփի դիմաց, վարդը քնած է կոկոսնում, սոխակը
սկսում է երգել դաղիներ։

Գիշեր ցերեկ կամ էրէրուն,
Եւ ես կ'այրիմ ի դէմ վարդուն.
Թէ Բրբ ելնէ ինքն ի քնուն,
Քանի՜ կանչեմ զոր իւր սիրուն... (46)։

Մտդիկները նախանձելով ասում են, թե բավական է անժա-
մանակ երգի, թող սոխակը ելնի զնա իրենց պարտեզից։ Սոխակը պա-
տասխանելով իր սերն է գովում և սիրաբ Բանում։ Վարդը նրան քաջա-
լիրում է, որ աշագործություն չդարձնե նախանձողներին և իր երգը շարունակի։
Մտդիկները գործալով ասում են — Վանի՜ կանչես, մէկ պահ լսէ՛ս։ Սոխակը
պատասխանում է.

Ասաց, թէ ուրն կանազէ,
Որ վրայ վարդին աղբ կէլ,

Սիրտս վկայ հետ իւրն հերթ,
Քանի՛ խոցէք. ասէք թէ երթ,
Հողմն յարժէ զվարդին թերթ,
Նա ի զողման դառնայ իմ լերթ...
Աղագակեմ արտասուելի,
Յայգւոյս չերթամ ես այլ տեղի: [49]

Այդ միջոցին վարդը հեզհեան կւարձուում է, անմահության հոտ բուրում, պլպուլը սիրով արբենում և ուրախանում. վարդը տեսնելով, պլպուլն անուշ երգում է.

Ծիծաղեցաւ ինքն մէկ պահ,
Պայծառացաւ արդն քան զշահ.

և կարժիբ գոչնով վառում է, իսկ սոխակը

Հոտոյն եղև խև ու արբած (49 և հա.):

Վարդը, սակայն, մահկնաց է, ազատ չէ իր սիրո համար. թուլունները կտտակելով ծաղրում են սոխակին. թե Վարդն չի նայեր ինքն երակն: Նա թանջվում է, զանգատվում է վարդին, կասկածում է, թե մի գուցե վարդն իրեն չի սիրում, և համառացնում է վարդին իր սիրո անկեղծության մասին: Վարդը քաջալերում է նրան, որ երգի և իր՝ վարդի ահն ու երկուզը վերացնի.

Ջկանաչ փարաէս ետ կուրանամ,
Ջքեղ որ տեսնում, ուրախանամ,
Այլ ի քեզնէ ոչ հեռանամ (50):

Պլպուլը զարթնում է կես գիշերին, վարդը փթթում է առավոտյան, սոխակը հափշտակվում է և մահելով վարդի վրանը՝ սիրո գրավական համբույր է ուղում: Վարդը, սակայն, սիրելով հանդերձ՝ դեռ թնաթիկ է, նա միայն գովում է սոխակին, ուղարկելով դարձյալ ուրիշ ծաղիկների մաս: Համոտաբեր զուարթ միթթարում է սոխակին և համոզում վարդին, որ պլպուլին ընտրի և ոչ ուրիշ թուլունների: Բայց վարդը պատասխանն ուշացնում է.

Եղև պլպուլն թնաթափ,
Թէ երբ թծեմ զվարդն ի յափ.
Քանի՛ ֆիրդան կանչեմ անշափ,
Ի գէմ վարդին հարկանեմ ծափ.
Ի ձեռ սրաին դուք ուէր չսնիք,
Վառն այն գիւմ ձայնըս չընդունիք:
Վարդըն կ'ասէ. «Ի՛նչեք հերիք,
Ես կուկանչեմ, ունեմ կարիք» (52 և հա.):

Այս վեպի մեջ գործողությունը սիրավեպի մի սքեմա է. բայց դրա գեղեցկութունը գործողություն մեջ չէ, այլ սիրո գեղգեզանքի մեջ, որ բարձրանում է ցոլաթուրմ պարտիզում, գեղադարձ բուրմունքի մեջ, սիրտ-

տարիք արտի տյն խոսվածուքի նվազումները, անհանգիստ որոնումները ու սպասումները մեջ, երբ ուրիշ հետք է կամ անպատասխան, և այն դեպ հրեմանքի մեջ, երբ հույսը զորանում է:

Ե. Քուչակ նմեռացնի:—Վառա խոսակցանիս գլուղում թաղված են Քուչակ աղղ և իր մեծ պառ Նառապետ, որ մականուն աղղ Քուչակ ասիւնը անոնց գերեզմաններն ու խառատեղի են սեղացիները համար: Թու Քուչակը, տանուս բարի մասկան, իր ստացած մի տվնարանի հիշատակարանի մեջ, գրված 1637 թվին, հիշում է իրեն և իր մեծ պառին: «Մեծ պառն ասելով անպայման պետք է հասկանալ պառի հայրը կամ պառի պառը, և իրավամբ եղբայրացնում է Կոստանյանը, թե այն ժամանակ 1637 թվից չորս հինգ անոնց դեպի հետ գնալով՝ կռեսնենք, որ Քուչակ Նառապետն աղղի է 16-րդ դարու սկզբներում: Այդ հաղվով Նառապետ Քուչակը ժամանակակից է դառնում Աղթամարացուն: Քուչակի եղբերի առաջին հրատարակող Տեկանց «Հայերգի» մեջ հիշում է նրա երգի համար, թե տրինակված է Թև (1582) թ Սեբաստիա և Նույն օրինակեն հասած է կրկին Թև (1746) թվին Պետրոս երես:

Թե ճվ է եղել այդ Նառապետ Քուչակը և ինչ կյանք է ունեցել՝ այդ մասին էլ ուրիշ ոչ մի բան չգիտենք. Նա «վարդապետ» աղղ է եղել և իր արվեստի համար անպայման թափառել է շատ կողմեր: Եվ վերջապես նրա անունով հրատարակված երգերի նրանք լինելը միայն Տեկանցի վկայությունից գիտենք, որ ասում է, թե Այս ծովական գիշերս ի բունն երգը՝ Նառապետ Քուչակին է, անուշա մեռացիներին առնելով այդ անգեղութունը: Կոստանյանը ընդ ժողովածուի է Գ. պրակի եր. 44-ում բերում է մի տաղաշար 1632 թ. գրած մի տաղարանից «Հայերենի կարգուն վերնագրով»: Նրա մեջ որոշ երգեր նույնանում են «Հայերգի» երգերի հետ: Զոպանյանն էլ Վենետիկի մի տաղարանից, գրված 1642 թվին, բերում է տաղեր, որոնցից մի մասը ևս կա Կոստանյանցի 1682 թվի տաղարանի մեջ, մասամբ նաև «Հայերգի» մեջ և, վերջապես, Պարիզի աղագլխի գրադարանի մի տաղարանի մեջ կան տաղեր, որ կան նաև Վենետիկի վերոհիշյալ տաղարանի մեջ, ինչպես և «Հայերգի» մեջ: Տաղերը բոլորը անանուն են: Երկու երգ միայն Կոստանյանցի Գ. պրակի եր. 37, 38 («Սա ան հաւերուն»... «Բանիկ մի»...), 1617 թվին Կոստանյանցի գրված տաղարանի մեջ գրված են Ֆրիկին վերագրած տաղաշարքի մեջ, որոնք կան նաև Վենետիկի տաղաշարքի մեջ, առաջինը նաև «Հայերգի» մեջ:

Քոստականները կամ անանուն են, կամ վերաբերում են Հովհաննես Պրուզին ու Ֆրիկին:¹

Այնու ժողովրդական երգերը շատ նման են Քուչակի երգերին իրենց դարձվածներով ու մեծով, երբեմն ամբողջ բովանդակությամբ և մեծով ու չափով: Պետք է կարծել կամ Քուչակն ոգավել է այդ երգերից, կամ նա երկուսն ապրել է այնտեղ, որ նրա երգերն այդտեղ ժողովրդականացել են,

¹ «Նառապետ Քուչակի գիշերը», Փարիզ, 1903.

² Իսկապես այդ երգով սկզբնական տաղաշարը:

³ Նառապետ Քուչակի գիշերի մեջ բոլորը, լինեն անանուն, թե Պրուզի կամ Ֆրիկի անունով, թե Քուչակի, գրված են իրեն Քուչակի երգեր:

և նա կյանքի վերջում միայն հաստատվել է Խառակոնիսում: Այն կար-
ձեթը (Les trouvers Arménien), թե Խառակոնիսի Քուչակի, Պարիզի Ազ-
գաթին գրադարանում գտած մի առաջին իր շնորհով ու ոճով բարբառովին տար-
բերվում է Քուչակ Նահապետի երգերից, անշուշտ այն է աղագուցում, որ
Խառակոնիսում երկու Քուչակ են աղբյուր, դա թող Քուչակի երգն է: Քուչա-
կի առեղծվածը հիշված հրաաբարակությամբ մթնել է. պետք է Պարիզի ու
Ֆրիկի առեղծվածը շնորհի և անանունները միայն Քուչակին վերագրել: Եվ
որտեղ երգերը մեծ մասամբ անանուն են, բացի մի երկուսից:

Կասառնյանցի Բ. պարզ, եր. 60 երգի վերջում—«Ես Քուչակն եմ
Վանեցի, ի գեղէն Խառակոնիսայ, լցեր եմ հարիւր տարին, էլ չի դար-
ժացիկս ի վերայ, և իսկապես երգն աղագուցված է չափով ու բովանդա-
կությամբ: Եվ այդ երգը Քուչակինը չէ, այլ մի սարկավազի. Քուչակն
ուրեմն աչազ է, լուկ երգող և հեղինակ: Արդյոք նույնը չէ՞ և այս գեղա-
ցում:

Ի՞նչ են այդ սիրո երգերը, Դրանց «Հայրենի կարգու» վերնագրերը,
երգի մեջ հիշված «Հայերէն տեղւոյ, Հայրեն, Հայրեն տառն, Հայերէն
կառն», «Հայրին տառն», «Հայերէն տառն բառերը աղագուցում են Հայերէն»
բառի: Ժողովրդական երգի մեջ հիշվում է աղագուցիս Հայերէն տեղւոյ,
իսկպես Ալինա երգերի մեջ Եանառնի տեղւոյ: Դա կապված է եղել, անշուշտ,
որոշ եղանակի և տեսակի հետ:

Եվ իսկապես, մինչդեռ սովորական աղագուցությունն իր էական
բնավորությամբ նման է ասորական և ուրիշ երգերի աղագուցության և
շատ հավանական է ասորերենից անցել է Հայերենին՝ առանձնահատուկ ձև
ստանալով, և նույնիսկ շարականների աղագուցությունը Քուչակը գտնում
ենք սերիշ աղբերի մեջ, այդ երգերի աղագուցությունը միայն Հայերենին
է հասուել, յամբ-անապետայան մի ասանավոր, որ կապվում է 4 տողերից
կամ 8 կիսատողերից, շեշտ ունենալով 2, 5, 7, 10, 12, 15 վանկերի վրա, որոն-
ցից 2 և 13 վանկերի շեշտերը կարող են աղագուցություն ունենալ, իսկ ձևա-
ցած շեշտերը, եթե ասանավորը չի աղագուցված, անպայման հաստատուն
են: Հանգը աղագուցվում է լինում, բայց կարող են կիսատողերը ևս հանգ
կապել, որով ասանավորը վերածվում է աթյակների:—

Կարմիր վարդ կանանց թփով,

Կանանց թափ կարմիր խնձորով,

Քանի լամ ու զքեզ ուզեմ,

Չարթըրընեմ ոգոց հանելով:

Թէ դու կու տրես արտավոյ,

Ինձ տա—ես եմ կարողով:

Թէ չես ի տրել արտավոյ

Սուրբ Սարգիս և Աստուած քեզ խոսով:

Հնագույն գործածությունն այս աղագուցության գտնում ենք Նա-
րեկացու տողերի մեջ, որոնք անհանգ են գեոս Այնուհեռու նույն չափը

¹ «Հայերէն բառեր, Հայերէն տառն ու ասուկ» (Ֆրիկ):

բանեցրել են ն. Շնորհալի, Մկրտիչ Նաղաչ, Գրեգոր Աղթամարցի և ուրիշ շատերը: Հնազաւայն ժողովրդական երգը՝ 18-րդ դարուց մեւազ զինոնն առեմ, որ առնկանց դաւան ընկել գեղին այդ չափով է: Նոր ժողովրդական երգերի մեջ այդ չափը [կա] միայն Ակնա երգերի մեջ, որոնց բովանդակու- թյամբ և ձևով էլ նման են Քուչակի երգերին: Միջին դարում անշուշտ կարող է երգչինների մեջ հիշողությունն պահպան լինել այդ չափի բնիկ հայերեն լինելու մասին:

Ինչ է եղել այդ չափով հորինված նախքան Նաղեկացին. հոգևոր երգը շարականոցի մեջ այս չափով չէ. անպայման այնպե՛րիկ երգերն են հորինված եղել այս չափով, որ Նաղեկացին գարծ է տնում երկու տաղի համար, նույնպէս և Շնորհալին, իսկ 13-րդ դարուց, երբ աշխարհիկ ոգին դարձնում է՝ դա դառնում է սիրելի չափերից մեկը մեր բանաստեղծների և երգչինների համար, մեծ մասամբ դարձյալ աշխարհիկ նյութի համար: Կնդանակն 10-րդ դարից առաջ և հետո աշխարհիկ երգը, ուրեմն զլիակաւապես սիրո երգը, հետագայում նաև պանդխտի երգը, հորինվելիս է եղել այդ չափով: Նվ քանի որ այդ չափը բանեցրել են հա- տարակ երգչինները կամ ժողովրդի մարդիկ, ուստի դա մնացել է ժողովրդա- կան տարրական ձևի մեջ, իբրև երկու կիսաաղերից կազմված քառյակ- ներ, որին հետագայում փոխանակել է մեր արդի քառյակը: Նվ իբրև այդ- պիսին՝ շատ հորմար է եկել իմաստական-խորատական հորինվածքի համար, և ապա անգլեանե, նույնպիսի մի քանի ավելի մեծ քերթվածները համար գարծանվել, որանց աները, մեծ մասամբ, դարձյալ անշուշտ կարող են առնվել:

Քանի որ այդ չափը բնիկ հայերեն է, բնականաբար և այդ չափով հորինված սիրո երգերի մեջ մենք պիտի գտնենք մեր ժողովրդի իսկական սիրո երգը. դրանից է առաջանում այն, որ մինչ մեր մյուս քնարերգու- ների մեջ անհատական բնույթը և օտար ազդեցությունն ավելի է երևում, մինչ նրանց զրկվածներին և ժողովրդականի մեջ համեմատաբար պակաս նմանություն կա.— «Հայերենի կարգով» երգերը կան իբրև ժողովրդական երգեր, դրանց մարդկության մեջ մի անհատական բնույթը պակասում է, և սր գլխավորն է՝ օտար ազդեցությունը նույնպէս: Ընդհանուր բնույթը և երգչուհ անհատիկ մեկ է: Դրա պատճառն այն է, որ դրանց հեղինակը, իսկապես հեղինակները, հին ժողովրդական երգերն են առել մշակել—ինչ-

¹ Աղթամարցի, եր. 72, 76 (սիրո), 83 (խրատական), 85 (խրատական), 88 (մահ, առա- ջին կիսաաղ): Մ. Նաղաչ, եր. 2 (սահմանություն), եր. 29 (առաջին կիսաաղ, ժողովանց), եր. 28 (պարպիկ): Նույն չափով Գրեգորյան (ժողովրդական), Բ. եր. 55, 60 (մանկի Քուչակի երգ Պառակտիցի), Գ. պրակ, եր. 28 (Պառակտիցի), եր. 30 (Վասն կանանց): 28 (Յրեկի, խրատական), 40 (Յրեկի Վասն սղարմութեան), 44 (Հեռերկնի կարգու), սիրո: Ա. պրակ, եր. 38 (Մարտիրոս Ղըմիսյան, Վասն քաղաքի Սմառն), եր. 68 (խրա- տական խոյրերի նման Նույն), 14-րդ էջեր, եր. 12 (աղբ իշխանաց, սղր): եր. 12 (Տաղ Վարդանանց, խառնված), եր. 32 (պարձյալ հայերեն, Ունախութեան զբայ, Նովառի Գիսապի), եր. 35 (Յրեկ, Վասն սղարմութեան), եր. 39 (Յրեկ, Ընդհմ Գալարի), եր. 42 (Յրեկ Ա. համար խրատական), եր. 55 (առաջին կիսաաղ), եր. 62 (առաջին կիսա- աղ): եր. 76 (աղբ Քերթիքի), եր. 85 (մահ), եր. 87 (մահ), Մանան, եր. 274—275 (Պ- ղայնի է մահ տակու առաջ Նույն, 272 (Սով. սղր ժողովում և...):

դեռ այժմ անուժ է Հովհաննես Թումանյանը.—և նորից ես է դարձեր ժողովրդին։

Քե դրանք մի բանաստեղծի չեն՝ երեւում է և նրանից, որ կան քառյակներ, որոնք կնոջ կողմից են ասված, ինչ որ դանում ենք և ժողովրդական երգերում (ԻԳ, ԼԶ, ԽԷ, ԾԷ, ԾԹ, ՅԷ, ՂԵ, ԶԺ, ԶԾԲ, ԶԷԱ, ԼԷ, Խ, ԽԷ, ԻԹ, ԶԳ.)։

Դրանք իսկական ժողովրդական երգեր չեն, ուրեմն, այլ ժողովրդականը՝ մշակութային կրթած դրագեանների ձեռով, և դրա համար մասած ասարանների մեջ։

Քե երբ է սկսվել այդ մշակութայինը՝ այդ մասին հաստատ բան կարելի չէ ասել։ Պետք է սպասել հին ձեռագրերի, Սալախի դժվար է կտրել, Քե Կոստանդին Նըզկեացունց առաջ, ուրեմն 14-րդ դարուց առաջ, որն է եկեղեցական, նույնիսկ աշխարհական երգիչ, ձեռք առնել մշակելու այդ Դրանց ազատ բնավորութայինը պահանջում է, որ սիրո երգն ինքն ես ազատված լինելու այլաբանական կաշկանդումից և մեղանշական համարվելուց։ Արդ՝ այդ ժամանակը Թվուրապուրու և Աղթամարցու շրջանն է, 15—16-րդ դարերի մեջ, ուրեմն մոտավորապես այն ժամանակ, երբ աղբիւ է Գուշակ նահապետը։ Կարող էին նույն բանն ասել նաև աշխարհական երգիչները,— և անպայման մասամբ այդպես էլ է։—Բայց զբաղած աշխարհական երգիչ այդ դարերից առաջ դժվար թե լինելու, որ այդ ժամը հոգևորականներից անկախ անել և այնպիսի ազատ մասնութային ունենալու, որ հոգևոր սրբութայինը սիրո երգի վերածելու, ինչպես ԼԷ, ԼԸ (եր. 50), Դա 15—16-րդ դարուց առաջ սրբապետութային պիտի համարվե՞ր՝ գրի առնելու և մշակելու, և սերը կրօնականից բարձր դասվելու։

Ինչ է այս սիրո երգերի արժանիքը.—նույնը, ինչ որ մեր ժողովրդական երգերին, միայն ավելի մեծ աստիճանով, որովհետև դրանք մշակված են։ Նախ ձեռի կողմից այդ երգերը լինելով քառյակներ,—կամ շատ—շատ՝ զարգացած 2—4 տողով, ուրեմն վեցյակներ կամ ությակներ (ինչպես հատուկ է մեր ժողովրդական երգին),—իրենց փաթերիկ ձավալի մեջ, ինչպես և ժողովրդական քառյակները, ահա չեն տալիս ոչ զգացմունքի և ոչ մտքի ընդարձակվելուն ու հաղորդելուն, այլ, ընդհանրապես, միայն մի միտք ու մի զգացում են արատհայում—սեղմ ու հակիրճ, բայց այնպես բյուրեղացած ու փայլուն, որ երբեմն նույնիսկ շաղկապիչ են իրենց նուրբ, սուր ու համարձակ դարձվածքներով, երևակայութան հանկարծական վառ ու շքեղ Թռիչքներով։ Խոսքի գյուտերն ու պատկերները երբեմն մեղ զվարճացնում են, երբեմն հիացում պատճառում, երբեմն էլ ժպիտ պատճառում իրենց սրամտութամբ և միամիտ չաբանեցումով (170), և միշտ հրապուրիչ են իրենց սրտաբուխ Թարմութամբ և ինքնատիպ և մեղ ընտանի զգայնութամբ և միշտ համապատասխան արտահայտած գաղափարին ու զգացման։ Նկարագիրն անուժ է շատ ճշիռ ու կենդանի, միանգամայն և զգացված, աչքիվ և ուժեղ, ինչպես ԻԵ, ԻԸ (եր. 48)։ Բայց, որ գլխավորն է, բանաստեղծն իր երգի մեջ արտաքին գեղեցնութան նկարագիրն անելիս, սովորաբար, ոչ թե լուրջ նմանութայինների է գրմում, ինչպես Թվուրապուրուն ու Աղթամարցին, այլ, ինչպես լինում է և ժողովրդական երգի մեջ,

ամեն ինչ դնում է շարժումն զորոնդության մեջ, և եթե լուկ Նկարագրին է անում՝ մասնաժամանակում ընդարձակում է նմանության տարակույսի մի գործողությամբ՝ կամ վիճակով. համար. 2 (եր. 44), ՃՄՁ (եր. 75), Նույնպես վարվում է նաև հոգեկան վիճակի Նկարագրի համար, ինչպես հետևյալի մեջ (Դ. եր. 44). մենք տեսնում ենք, թե ինչպես սիրահարը կարոտակեց ման է դալիս և հանկարծ պատահում է իր յարին և սրբի պաշտոնն անցնում է՝ Բանաստեղծն այդ հոգեկան վիճակը հայտնում է մի լուկ նմանությամբ, բայց ախպես կենդանի և ուժեղ, որ այլևս ոչ մի պակաս չի մնում. կամ տեսեք, թե ինչպես հետևյալի մեջ, իսկը Նարեկյան պատկերով, հանում է իր սրբի անձկությունը և ամբողջ մարմնով տանջվելը սիրո ցավից.—

Սրտիկս է խալկին եղբր, զօրն ըզքո զուստն կու եփէ.
Անձիկս է չոր փայտ եղբր ու զկրակն ի վառ կու պահէ.
Տեսեր եմ որ միան եփի Նա զկրակն դադրեցունէ.
Թողեր միան զիւր ոսկորն, դեռ ի կրակն փայտ կու ձգէ.
(Ըջ Եր. 56)

Կամ հետևյալի մեջ ազեղ ունքերի ուժիչ.—

... Անձերի է կամար կապեր ու կիւրթայ ի Մարբն թալան,
Շատ առ շատ զերի բերէ, շատ խօնալ ու շատ պղտրկան.
Գերիս ալ ի հետ բերիւ ձգեցիւր ի ծով ի դընդան,
(Եր. 78, 79)

Այսպիսի երևակայությամբ և արատհայտության ուժով է հենց, որ մեր սիրերգերի այս հեղաթիւի կարգը՝ մեր նույն տեսակի երգերի մեջ առաջին տեղն են բռնում, և զրանց երգիչը՝ Նուրադեան՝ մեր երկրավոր սիրո երգի մեծ վարպետն է, ինչպես Նարեկացիին՝ երկնավոր սիրո, երկուսն էլ բխած նույն ցեղի միևնույն հանճարից և միևնույն ոգուց, և ռզմասի որքան նմանությամբ, սիրահարմայն և մեծ տարբերությամբ—մինչ Նարեկացին իր ամեն սրանին մեջ պատկերներն մի հորդահոս ու պղտոր հեղեղով՝ արատհայտում է մի զապափար ու մի զզապուժ երկնային սիրո, կազմելով նույն նյութի համար բազմաթանկ գրգռանքներ, —նույնն անում է Պուշկինը երկրավոր սիրո ընդարձակ վեպից առնելով ամեն քառյակի մեջ մի զապափար ու մի զզապուժ, բայց արատհայտելով մի պատկերով, մի կարճ խոսքով, միայն ախպես թափանցող, հզոր և միանգամայն պարզ ու վճիռ. Նարեկացու սերը զղջման և անձնազոհության, աշխարհի ոչնչացման բուռն առդարումն էր միտաբանական մղձավանջից, մասյլ անձկությամբ, մինչ Պուշկինը կապված է երկրին, զվարթ ու լուսավոր, հեշտայից ու բուրավետ երկրին. դրա համար՝ մինչ Նարեկացու հեծկտացող թառանջների հետ մենք գտնվում ու սարսում ենք, մեզ վրա զգալով միջնադարյան ճգնավորի ավայտանքները մութը խուցում, այստեղ մենք միայն դուռ բանում ենք ջնջուժ ու հանելիք երազանքներով, սրտիս խոսքերով, և սրտի խորքից դուրս թափած սիրո հուռանքը նույնիսկ, առանց տառապանքի

¹ Գրաք ջուր պղծի, կապալ արեկնու

նչերով բանաճառու մեզ վրա՝ մեզ օրօրում է պատանեկեան մի թեթև ու ջաղջր ավազով և տանում այն պարզ ու զեղջուկ կյանքը, այն ժպտուն բնության զեղեցիկ ծաղը, սրից ծագել են այդ աշխիվ երգերը սկզբնապես՝

Գարնանային գրոսանքը, լուսավոր պարանգը, առավոտյան ցող-թաթախ ու կանաչ, ռուշաբույր ծաղիկներով, գունազարդ և ծագկած ձառերի սավերներով, պարտեզի միջով անցնող առվակը իր կանաչ ևզրներով (ԴՆ), թռչնիկների սիրս երգը և ծառերի սավերում նստած խմելը (ՃԺԳ), ձառ-կից իջնող ջրերը, գրոսանքը սաբերում և սիրելիի համար ծաղիկ ցաղելը (ԽԳ) և այնտեղ հենց քնելը կաքափների, թռչունների երգի տակ՝

Այս գիշեր լերանց բարձանց

Ծաղկունանց ի մէջն եմ ի քուն,

Իմ եարն ի վերև գլխուս կու խմէ,

Ես անհոգ ի քուն (ՃԿՁ),—

կամ լուսնկա խաղաղ պարզ գիշերները (49) և այլն։ Այս ամենը մի հնչառակից գլուխություն է ընծայում։ Մենք տեսնում ենք այս լեռնային թաղմ բնությունը, այս աղբի ու օտը, այս գրոսանքը, այս շառերէն երգն ու ուրախությունը, որ ամառ են հենց այդ երգի ստեղծողները այգիներում։ Դա մի երիտասարդական անհագ ու խաղաղ կյանք է, որ բոլորովին հեռու է միստիք ամենջողից ոգուց և բոլորովին հեռու մեր ազգային դարավոր տառապանքից, Կարծես այդ երգիչները և իրենց հասարակությունը, ինչպես մանուկները, աչ մի ուրիշ ցավ չեն ունեցել, բացի իրենց սիրտ վշտից, կարծես զբաղված մեր բանաստեղծությունը վրեժ է առնում դարավոր օղբերից։

Այս երգերի գրավորությունը գլխավորապես հենց նրա մեջ է, որ մեր ժողովրդի հարազատ սգին ենք տեսնում այնտեղ, այն էլ կենդանի կյանքից նկարած, բազմապատ վիճակների մեջ, տիրաճար աղան ու աղջիկը, սիրող ամուսինները, աղջկա անվան կոտորվելը (115), աղջկա անվան համար հոգացող մայրը, որ արգելք է լինում սիրաճարների տեսակցությանը, փողով աղջիկ գնելը (167), բռնի ամուսնությունը (12 գ, 34), ընտանեկան կյանքը, պանդխտի վիշտը և այլն, բոլորը բազմազան ձևերով պատկերացված են այս երգերի մեջ, որ և ապացույց են այդ երգերի ժողովրդական ծագումն ունենալուն, որովհետև միտքս ժողովրդական երգը այսօրն իրապես կյանք է ցուցնում իր մեջ։ Այստեղ առաջին անգամ, առականից հետո, մեր գլուխացու, մասամբ և քաղաքացու մաքուր ձայնն ենք լսում, առանց արեւ գիտման կամ այլաբանության, ինչպես առական-բի մեջ։

Մաքի ու գաղափարների խորության և հարստություն և կազմակերպված աշխարհայեցողություն որոնել այս երգերի մեջ կարելի չէ, ինչպես ամեն նույնպիսի ժողովրդական երգերի մեջ, քանի որ դրանց հեղինակների հոգին ևս խորը չէ, և իրենց առօրյա կյանքից, իրենց վայրկյանի ամոթմունքներից ու զգացմաններից շատ հեռու չեն գնում։ Այդ երգերը սիրով օգտորված թաշտիկի անուշ ու դաժն մի-մի կարճ ճովաղյուն են միայն, մերթ ուրախ ու դուռ, հաճախ ախուր ու գժգժ, երբեմն տիրո գովա-

ստանց ու հրճվանք, դառնալու առ լաց, հաճախ տեսնանք ու կորուստ և սրտի
այրոց ու հառաչ, որովհետեւ ինչքան էլ սերն աշխարհի ամենաքաղցր բանն
է, Վրան զսէրն այլ քաղցրիկ պատուի ի յաշխարհս չհաւատամ թէ լինի՞ք
(63), բայց դա միաժամանակ ունի և իր դառնութիւնները, ամենամեծ
դառնութիւնները, որովհետեւ հուշերից ամենազորեղն ու ամենապահանջ-
կառն է. նա պատահական է ուղուս և ամեն մի չնչին բանից վերջովւում և
ցաւի է շինուս իր համար և ասանջվում նուրիսիկ մայն ժամանակ, երբ եր-
ջանիկ է: Դրանից է առաջանում սիրո երգի էական ախուր ու լուսազին
գիծն ընդհանրապես բոլոր նույնպիսի երգերի մէջ. սիրո երգը մի սիրո
էլիզիս է, մի ողբերգութիւն սիրո բանտի մէջ շղթայվածի:

Վերադառնալու մի սիրո բոլոր քաղցրութիւններն ու դառնութիւններն՝
մեզ հետեւ կտաներ, այստեղ միայն մի քանի կետեր մտանալիչ կանենք.

1. 12—14—48. Թե ինչպես սկսվում է սերը, և սկզբից հենց կաշկամ-
ղուս սիրահարին, որ առանց սիրածին չի կարող ապրել. և անիծում է միայն
բաժանողին:

2. Աղջիկը նազերով դբավում է աղային (17, 18). սա սրտառույզ
կերպով աշխատում է ողորդել անձնատուր չնդող աղջկան (119, 22). աղան
հեռանում է, բայց սերը բորբոքվում է և վերադառնում է (126, 143, 185).

Աղջիկն առողջ է անձաւայելի է և պահանջում է հովասաթէ իրեն
տրժանի լինելու (57, 59, 11), և աղջիկն ընկնում է անասաթ (90): Տղան սպասում է սարերն ընկնել և մեռնել և դրանով պատիժն
առնել (10, 111), հովասաթով, որ աղջիկը պիտի ողբա իրեն, և մայն ինչ-
պէս (51):

3. Սիրուն խանգարողներ կան, բայց աղան հարատեւում է (106, 103),
աղջիկը համբերութիւն է քաղցում (18, 11), աղան ուղում է համբերել,
բայց գժմար (180):

4. Տեսակցութիւն միայն գիշերը, որովհետեւ բաժնասանքը մեծ է
(88, 64, 63), սղան ուղում է հեռանալ հայտնի սիրելու համար (182, 34):

5. Տղան հանգիպում է և աղջիկը խոստանում է գիշերն ընդունել
(168), աղան գնում է, և աղջիկը խնդում և ցանկանում է, որ գիշերն եր-
կարի (171, 41), բայց մոլլան աղան է առլիս (117) և լույսը բացվում է,
և պիտէ է հեռանալ (137):

Ահա Ռոմեոն և Ջուլիետայի տեսակցութիւնը. ամենից սրտերի ան-
սակցութիւնը: Եվ մեր սիրո երգերը, որոնց թրթիւնն ու գեղգեղանքը թե-
պես միշտ սիրո ցանկութիւնից է ծագում, միշտ մի մտաբան ու անբխի
զգացմանցով լի, բացի մի երկու քառյակից, երբեք բանառակ, հայրստ ու
պապայի: Տեսնեք, թե մի սխալ, անպատշաճ խոսքի համար ինչպես վիր-
ւորվել է գեղուհին և ինչպես սիրահարը մոռնում է զրո համար և ասանջ-
վելով զղջում է իր ասածի համար և աշխատում հավատացնել իր սիրո
մաքրութիւնն ու անկեղծութիւնը (73):

Այսպիսի մաքրութիւնը, բնականաբար, ծագում է ցեղի իրեն ողորդ,
որ և քրիստոնեական դարավոր կրթութեամբ ավելի զաված էր:

Այ իմ նշենի ծաղիկ,
 Դեղնեցար ու դարձար ի նուշ,
 Բերանդ է փռքրիկ, անուշ,
 Պակնեց է ամբուս ու նուշ,
 Լէյն օրն ի մօրէդ ծնար,
 Դուն լայիր՝ աւազն խնդային,
 Հանց մաքուր ել ի յաշարհէս,
 Թ' երկիր լայ նա՝ դու ծիծաղիս (54):

Ահա թե ինչ է խրատում սիրահարն իր սիրահանին:

16-րդ դարում սիրո երգն, ուրեմն, բուն ժողովրդական ազբյուրին դիմելով այսպես աղնվանում է և կատարելապես աշխարհականանում. բայց դրանք ժողովրդական լինելով՝ չունին ոչ մի ավանդիկ, թե ինչպես հին կրօնական ոգին այս վիճակին է հասնում:

Քուչակի երգերի մեջ միայն մաքուր խախտանքը նուրբ ու քնքուշ, փառաբանվում է երգը, գինին և ուրախութիւնը:

Այսու էր, եղաւ դարուն,
 Ա՛հ, քանի կենանք մենք ի տուն.
 Նկէք որ պաղչան մտնումք
 Ու խմենք հեռ ծառ շքերուն.
 Պլպուչն ի վարդին սիրուն
 Համբերէ՝ զինչ մանչն ի գինուն.
 Նստեր ի վերայ ճղին՝
 Սաղմսէ ինքն տունէ տուն (55):

Ուրիշ տեղ (78) իր յարին հյուրասիրող կինն ասում է.

Նշնցկուն հարիֆնի բերեմ,
 Որ ամէնն ի քեզ նմանի,
 Ծովերդ քեզ զինի տնեմ,
 Ու նավերդ ի առստօքանի:

Կամ տեսնում է իր յարին խախտանք տնելիս (74):

... Նստեր է ծառին շէին,
 Կը խմէ զիւր լուրջ ապիկին.
 Կխմէ ու հայերէն կ'ասէ թէ
 Ի՛նչ անուշ է սէրն ու գինին (74):
 ... Նա տեսայ իմ ետրն տլ ի հաց.
 Կթխակ ի գինով լեցած՝
 Իմ ետրն տոջեն է դըրած.
 Եթմ եմր, խըմէ՝ իմ դիտց,
 Որ ելնէ հողիս քո գիմաց (59):
 Այ իմ նշենի ծաղիկ,
 Ծաղկեցար ու դարձար ի նուշ

Բերանդ է աղուշ մաշուշ,
Պրակքներդ է ամբուռ ու նուշ...
Ձորախդ որ արհիդ ունիս,
Դու իմէ՛ որ ասեմ՝ անձաշ.
Պագնեմ զայդ բերնիդ բոլորն,
Որ գինւոյն հոտ գայ անուշ (55):

Այստեղ, այս «հայերէն կարգի» երգերի մէջ միայն մենք տեսնում ենք հանդարտ ու մեղմ երգոված խրախճանքը, որի մեջ հավասար փոփոխութեամբ են երգ, կին ու գինի, Ռայց երգը ինչքան ազնիվ է, չունի այն բռնան ավյունը և զվարթ հափշտակութիւնը, որ հասուկ է այդ կարգի երգերին, էական տեղն այստեղ բռնում է սերը, գինին ու երգը միայն նրա անբաժան զորգորանքն են:

6. Աշխարհիկ երգ, օւրախութիւն:—Ուկայն մենք ունեցել ենք և բուն խրախճանքի երգեր:

Ներսէս Շնորհալիւն Հայաստանի տնցած փոռքը ողբալիս գրում էր հարսանկան ուրախութիւն համար.

Ո՛ւր պարարակ եղն ամսին,
Ջիւարդ ի քեզ աչ գնանին,
Եւ կամ մատառաւկերն քամակիմ
Ձի ոչ բաշխեն գամոյշ գիմիմ.
Ուր բարեկամք զուարճակիցք...
Ուր զաղցբահամ երաժշտի
Կամ գեղգեղումն եղանակի...
Ուր են ազատքն ի տաճարի
Կամ տեսնորդիքն ի ծաղկոցի...
Մանկունք զս զուարճալի
Նըման նորոգ բուրստանի,
Դատերք զս պանճաւի
Յերգ և ի բնար միշտ ի խաղի (12—16):

Այս խրախճանքի երգերից զժրախառարս ոչինչ չի ձեռք բեր, Գյանքն ինչքան էլ ավերածութիւնների պատճառով զստն լինեք, բայց ունեք և իր սուրախութիւն պահանջը, և աշխարհականների մէջ տնայալան շարունակվել են ուրախութիւն երգերը, որ հիշում է Եղիշեն: Գրանավորները, սակայն, զժվար թէ շատ վաղ սկսեին մշակել ուրախութիւն երգը, որի մէջ փառարանվելին սիւսածամանակ կին ու գինի, պար ու նվագ, սիրով կեր ու խուսէր ընտելան ծոցում: Դրա համար պետք էր, որ մտածութիւնը բոլորովին ազատվեր միատիջեական մղձալմանից և մարմինն ոչ միայն սիրո կողմից, այլև կերութեամբ՝ արվեր կատարյալ ազատութիւն. Թիկուրանցի († 1525) նույնիսկ, որ հոգով սիրում է, ինչպես տեսանք, ուրախութիւնը բնութիւնն զրկում, «Ջթնն բոլոր վզին, սիրով խմէր զանուշ գինին», այդ լով է համարում, եթէ չլինեք մահվան օրն ու զօրեքը և դառնաւանքի առաջափը: Նա նույնիսկ արքայութիւնն զեմ զրկած մի առգում խրատում

է—«Թէ սէր ունիս հետ Աստուծոյ, դու զգի՛նին ու բազմ տա՛ն. գի՛նին է մայր տաննայն չարեաց... Քան զգի՛նին յետն հացէն երկու երեք՝ այլն տնչա՛ն է: Այսպիսի հայացքի տերը, բնականաբար, ինչքան էլ սեր երգեր, չէր կարող խրախճանքի երգ հորինել, և եթէ երգելու լիներ՝ պիտի գիմեր տյաբանութիւնս:

Ընդհանուր պատկերի մեջ, բնականորեն, ամենից ավելի գրավում են աչքերը, որոնց համար զանազան նմանութեաններ է բերում.—«Օ. կու մեջն մինա արած աչկիրդ ակնակապ թաս էս (ԺԸ, 93, բ.), կամ՝ աչկիրդ կարմիր վարդ, նուր բացարած տուխտս (ԺԶ, 88 դ.):

Պոշ ու քիլուիւ.—բոյէմեղ չուրս մատն ալելի ցղիլ է դոշդ ու թի-կուլեղա (Դ, 55, բ.)

Ռանդդ շաքարիս (ԺԶ 88 ա.)

«Ռանդդ փռանդի տալաս էս (ԺԸ, 93, բ.)

«Փու տերն բողն ինչ կոնէ, քու հուտն ոհհան իս չինիս

«Աշխարքն ծով, դուն մէջն նավ, ման իս դալի, լանդ իս
տնուս (Ժփալ) (ԼԵ, 130, դ.)

«Ղուբբան իմ ծուցիդ նուանը» (ԼՁ, 141, բ.)

«Լիզուդ ոսկե դալամի պես»։ (ԽԱ, 151, գ.)

«Մեկիդ՝ հաղիղեմեն (գործիք՝ պղնձե թել քայելու) քաշած
սիրմա մազթուղի (տրծաթյա) նման է»... (Լ. 127, դ.)

«Երբիք հարուր ու վաթսուս ու վից ամեն անգամդ դարձրի՜ս
(Դ. 55, գ.)»

— Հաճախ Սայաթ-Նովան յուր յարին նմանեցնում է ծաղիկների և հա-
կապես վարդի, սակայն վարդի և սոխակի այլաբանությունն չի անուշ, այլ
լուկ նմանությունը։ այլաբանական երգ չունի Սայաթ-Նովան. ամենից գեղե-
ցիկ համեմատությունները յուր և յուր յարի վիճակի համեմատությունն է
(ժ. 79)։

Ուստի դու քսո, դարիւր բլլբուլ,

Դու մի լաց 'լի, ես իմ լալու։

Դու վարթ պըտո՜ւ, ես գողալիս,—

Դու մի լաց 'լի, ես իմ լալու։

Արի, բլլբուլ, խոսի բոսըն,

Օխնըվի քու էկած սարըն.

Դի վարթն էրից, ինձ իմ յարըն,—

Դու մի լաց 'լի, ես իմ լալու...

Բնությունն առհասարակ զրեթե տեղ չունի. միայն յարի ման գալը
պարբերում (ԻԲ. 154)։ Սայաթ-Նովայի սիրած նմանություններն են նաեւ
թանկագին քարեր և մետաղներ։ «Անգին ակն վընդ յարած՝ անբան օսկու
առխտ իս, գողալս»... (ԻԱ, 102, ա.)

«Սկանգարի Ջուլդարի թողած քաղաքի իս, անգին լալ իս,

Դանգն դանգի միչեն հանած, հիդըտշած մսխալ մսխալ իս» (ԻԱ
102, գ.)

— Հազուապես և դարդը նույնպես գողասանքի առարկա է։

... Թե խամ հաքնիս, Թե դար հաքնիս,

Կու շինիս դոմաշ, նազանի...

Բարակ միչքիդ թիրմա չալն՝ նման է օսկե քամարին.

Հալամե անիսն չ'է կանգնում, մաթ շինեցիք նադըքքերին,

Դուն կրակ, հաքածդ կրակ, վճար մե կրակին գիմանամ:

Հինգու դալամքարու վրեն ծածկիլ իս՝ մարմաշ, նազանի:

Դասամադիդ թիլի մեչն մե շադա մարջան է քաշած (ԻԵ, 112)։

Չնայելով Սայաթ-Նովան ժամանակի բոլոր թանկագին բաներով գո-
վում է յուր գոգալին, բայց և այնպես հաճախ բառ չի գտնում գովելու:

«Թուր, քիզ ինչձի թորիփ տնիմ՝ աշխարհում բան չմտց.

Կրակն ծովեմեն գուս էկած՝ ուռչ, ջիյիրան իս ինձ մամա,
(ԺԸ, 98, գ.)

«Ղուամալ տսիմ՝ շուրեղեն է կու. մաշվի,

Սալբի տսիմ՝ ախրը մին օր կու առավի,

Ջիյիրան ասիմ՝ շառ մալթ քիզիդ կու յաշվի (համեմատվել),

Բաս վիւնց թորիփ անիմ՝ միրա (երկին) իս, զոգալ:

Թե մանուշակ տսիմ՝ սորեմեն կուսին,

Թե ջալայիր տսիմ՝ քարեմեն կուսին,

Թե վուր լուսին տսիմ՝ աարբեմեն կուսին,—

Արեգագի նման՝ փարա (լույս բոլորակ) իս, զոգալ:

(ԺԶ, 88, բ. գ.)

Ներքին գեղեցկությունը շատ քիչ է ուղեորության նյութ գտնում
Սայաթ-Նովայի համար, ինչպես առհասարակ մեր ժողովրդական հրգերի
համար: Բնաստեղծը բավականապես է մի քանի ընդհանուր ակնարկ-
ներով. «Դու խոմ էն գլխեն գոված իս, ես քիզ նուրմիկ գովիմ արի»
(Գ, 55, գ.), բայց դեռ արտաքինն է գովում: Կամ՝ «Դուսն էն գլխեն իմաս-
տուն իս, խելդ հիմարին բար մի տնի» (Ը, 66, ա.), կամ ազգն է գովում
«առկզ ասկերում գոված» (Ը, 66, բ.),—«բոսկիրդ քաղցր քաղցր է, լիզուդ
շաքար ու նարթ է» (ԺԳ, 84, գ., ԺԷ, 80, բ., ԺԸ, 93, բ.):

Ինչպես կնոջ պատկերի մեջ անհատականություն չկա, նայնպես և
հաճախ զգացումներն արտահայտությունների մեջ առերեսություն չկա.
զգացումները միեւնույն ձևով կամ ֆորմուլով են արտահայտվում: Հեյրան
լինել (Թ, 69, բ.), ալովել սրբուց, «էրած խորված ման իմ զալի, մի տիզ
չկա մար ունենում» (ԺԳ, 81, գ.), «Սիրտս էրից՝ ջիյիրանի նման մտն գալը»,
կամ՝ «վախում իմ թե՛ ինձ էլ էրիս՝ անհունզնչի հուր իս, ախպեր», «Հուր
իս էշխով կրակած» (ԺԱ, 75, ա. բ.), «Կրակ նըրգած վառ իս էլի» (ԺԱ,
76, ե.), «Ինձ հուրյան, բիրյան աբիր» (76, գ.):

Սայաթ-Նովան կնոջ պաշտամունք ունի և սեր է գովում, և սերը եր-
գում է կանխանման ձևերով, բայց դուռտ անձնական շփոթերով: Այդ սերը
մի իդեալական զաղտվար չէ, այլ մի իրական նյութական զվարճություն,
բայց ոչ ֆիզիկական կրքի զվարճություն, հեթանոսական սեր—Սայաթ-
Նովայի միտքը հեռու է այդ բանից, երկրավոր զգայականությունից: Նվ
այդ սերն անարտառ մաքուր է:

Սերն օրեօր է հաստատ լինի (Ը, 66, գ.), և մարդ մի հատիկ յոր
ունենա: Այդպիսի սեր ունենալու համար պետք է երկուսն իրար հավասար
լինեն (ԺԳ, 81, ա.): Այդպիսի յարն անգին է, որից ոչ մի բանով բա-
ժանվել ու հեռանալ չի լինի, ոչ մարգարտով ու ալմաստով, ոչ ժահով, ոչ
ահով և ոչ շահի հրամանով (Թ, 80):

Նրա անձնական զգացումը երեւում է դժբախտ սիրո մեջ, երբ յարը

նազ է անում (ԺԷ, 60, և, Թ. 69, ր.) և հետացնում է յարին (Ը, 66, գ.) ուրիշին յսելով. երբ նրա յարն իրենից նեղացած է և աշխատում է սիրան առնել (ԻԸ, 119) և հավատացնել, որ ինքը հանցանք չունի (Ը, 66, ր. և. 58, ա.)։ Այս ժամանակ կանխում ու լաց է լինում անհատական կերպով (Զ, 62, և. ԻԴ, 111, և, ԺԸ, 93, գ.) կամ մահ է ցանկանում (ԻԲ, 106, և, ԺԱ, 103, և.), որովհետեւ առանց սիրեկանի՝

«... ինչ կոնիմ սոյրաթն ու սաղն,
Ջեռնեման վեր կոծիմ չանգիրն մեկ-մեկ,
Ջուռքի ուշկ ու միտկըս իրար շաղեցիր,
Փանմես կու հիռացնիմ հանգիրն մեկ-մեկ»։

«Առանց քիզ ինչ կոնիմ աշխարհիս մայլն...
Կու հաքնիմ մաղեղեն, կու հաքնիմ շալրն,
Կերթում ու ման զու քամ վանքիրն մեկ-մեկ,
Իբլքամ մե մարթ ոտսս զա՝ վուր ինձ խրատն.
Գոզալ, քու էշխեմեն սիրաքու ազատէ»։ (Է, 64)։

Յարից խոստում և հաստատուն երգում է ուղում՝ հաստատ երգում խոստանալով (ԻԵ. 112, և.)։ Այսպիսի երգերի մեջ պակաս չեն հնչյուններ, որոնք իրոք մի փափուկ բանաստեղծի սրտից են բղխում ու մեզ տանում ի ցավ և ի խնդություներ։

Նա թափառել է ուղում իրրե աշուղ, երբ սիրեկանը մերժում է իրեն (Ը, 67, և. Ժ.)։ Աղաչում, խնդրում է դթալ իրեն (Զ, 61, գ. ր.), ասելով՝ որ պակսի՝ յարին կպակսի (Ը, 67, և.)։

Նվ իսկապես Սայաթ-Նովան դժբախտ է յուր սիրո մեջ. «Ինչով չ'էլավ, չուստ էկամ մե լավ յարին, Սայաթ-Նովա» (ԺԳ. 82, և.)։ Նա դժբախտ է, որ յուր սիրածն ուրիշին է պատկանում։

19-րդ ԴԱՐԻ ՍԿՋԻ ԳՐԱԲԱՐ ԲԱՆԱՍՏԵՂՄՈՒԹՅՈՒՆԸ

1. XIX դարի սկզբի միջբարյալ քաղաքային կյանքը և նրանց ճանաչողությունը։—Վերածնություն առաջին շրջանի մարդիկը, հազիվ գրիչ-կարգալու և գրոց լիզվի ուսումը սովորած, առանց արտաքին ծանոթությունների, մի ջանք կցկուտր ճարտասանական, արամաբանական և պատմական աեղեկություններ ստացած մի սերունդ, անշուշտ չէին կարող ոչ միայն բանաստեղծություն, այլև ընդհանրապես արժեքավոր գրականություն առաջացնել. մասնավորապես որ վերածնություն գործը նպաստավոր պայմանների մեջ չէր բուսն երկրում և շարունակ ընդհանրում էր. նվ եթե այդ մարդիկն արտադրեին էլ գրական երկեր, դրանք պիտի լինեին մեր հին նմանագությամբ պատմագրություն ու քնարերգություն։ Ուսումնառ գրագիտությունը եկեղեցականացնում էր, և բնականորեն գրականության մշակություն էլ նրանք պիտի անեին. բայց հողևորականը յուր կոչմամբ արդեն ընդունակ չէ բազմակողմանի գրականության և ստանդարտպես բանաստեղծություն

առաջ բերելու: Այդ շրջանի մարդկանց միտքն զբաղված է գլխավորապես կորցրած ժառանգությունները հետ բերելով: Գեղեցկի վրա ոչ մտածելու ժամանակ ասեմին և ոչ հնարավորություն: Գեղեցկի բավականությունը նրանք տալիս էին հին երգարաններ արտադրելով կամ տպագրելով, կամ, երբեմն տաղեր հորինելով: որոնք շատ ավելի ստոր են, քան իրենց նախնական օրինակները:

Այս նոր երգերի ու տաղերի նյութն ևս կազմում են, հարկավ, վարդն ու սոխակը, կամ խնջույքի ուրախությունը, բայց ամենից առաջ՝ կրոնական-բարոյական և սոցիալական ծածուկները: Ժամանակի ոգին էր այդպես. կրոնական ջերմեամանությունը մեծ էր, ուստի և պահանջ էր դրացվում ոչ միայն նոր կրոնական տաղերի ու գտնաբերի, այլև նոր աղոթքների: Նույնիսկ ժողովրդական երգիչները, որոնց մեջ գլխավոր տեղը բռնում է Սայաթ-Նովան 18-րդ դարու իրկորդ կեսում, կրում են իրենց մեջ ժամանակի այդ ոգին:

Սակայն միայն ընտրելով թյուրքական ու աղոթքներով չի բավականանում մեր վերածնունդի միտքը: 17-րդ դարում արդեն ձգտում է երևում նաև վիպական բանաստեղծություն և առաջ բերելու: Բայց դարձյալ կրոնական-եկեղեցական բովանդակությամբ: Ուստի վեպի նյութ են Ս. Գրքի և ուրիշ կրոնական պատմություններ, որոնք ուսանավորի են վերածվում, ինչպես եղել է և մեր հին գրականության մեջ: Նվ ինչպես սիրո ու կրոնական տաղերը, նույնպես և այս բանաստեղծությունը շատ կոնվենցիոնել է, չունի կենդանի երակից: չոր ու ցամաք պատմվածքներ, և միայն ոտոնավորով հետևակ գրվածք:

Տեր Կոմիտաս բանաստեղծություն մասին գաղափար կազմելու համար բավական է հիշատակել այստեղ Կ. Պոլսեցի Տեր Կոմիտաս բանաստեղծի ընտանիքը: Ի դրեք առաջնություն, որ տպված է Կ. Պոլսում 1704 թվին: Հեղինակն ինքը գրքի վերջում ասում է: Թե մի պատմագիրք է տեսել, որի մեջ գրված է եղել, թե 536 թ. Հուստինիանոս կայսրի օրով հեղինակում Արարիկը՝ կիսատրկավազ սրբուհույ եկեղեցու շուրջ գարձանալի ֆիլիսոֆոս և վարդապետ տաղաչափութեանց ոտանավոր է դարձրել «Գործք առաքելացի»: Ինքն էլ իմանալով, որ Հայոց մեջ չկա այսպիսի բան՝ յուր կողմից տաղաչափում է այդ գիրքը, հետևելով ներսես Շնորհալու «Յիսուս որդի» երկին: Բայց Քար Յիսուս որդին, Քար սրա աշխատությունը. այնտեղ ստեղծագործություն կա և ջերմ զգացում, որով համակվում է ընթերցողը. իսկ այստեղ սառն, մեղմնայական տաղաչափություն միայն «Գործք առաքելացի» բառերի:

«Ջրանն առաջին զոր արարի
Սակս փրկութեան ամենայնի,
Ո՛ր, Թէսփիլէ այր բարի
Աշակերտ բանին հյաժարի:
Ջոր սկսու Յիսուս ասեւել
Սե ապա մեզ ուսուցանել
Մինչև յորքն պատուիրելոյ
Սրբոց աստեղացի իւրոյ:

ի ձեռն հոգւոյն վկայեալ
Ընտրեալ զսոսա և զերացեալ
Որոց եցոյց զինքն կենդանի
Յետ չարչարանացն և խաչի
Բազում արուեստս նոցա ցուցեալ
Յաւուրս քառասուն նոցա երեւեալ:

Եվ այսպէս մինչև վերջը:

Աստուծոցի Արքանեամ վարդապետ: — Ավելի լավ վերահի մեջ չէ գրականութիւնը և՛ 18-րդ դարու վերջում և՛ 19-րդի սկզբում: Հայրենասիրական գաղափարը, որի վերջին դարու բանաստեղծութեան գլխավոր շարժիչն է, դեռ չի դադարեցրել կրօնական-եկեղեցականից: Այդ ներկայանում է կամ դեռ ողորդ ձեռով, ինչպէս մեր հին գրականութեան մեջ է եղել. կամ թե, ինչպէս դարձեալ հաճախ հնումը հղել է, կենտրոնացած է էջմիածնի յուրջը, որի անունը ժողովրդականացնելու և սիրելի դարձնելու համար գրում են ներբողականեր ու տաղեր: Թե ինչ աստիճանի դաժառ ու սնանկ է գրականութիւնը այս մասին, այդ կարելի է տեսնել 1807 թվին Կ. Պոլսում տպւած «Ներքողեան արույն Աթոռոյն էջմիածնի» գրքուկից, որ «որինն է նվիրակ Աստաբաղի Արքանեամ վարդապետը «Զինի Աստուծոյ՝ օրհնեալ ազգիս Հայոց հոգևոր հայրն և մայրն՝ են երկաթին սոքա. աշխնքն իռաւարտին հոգւոյ մերոց սուրբն Գրիգոր. որ ամս հնգետասան ի բովս չարչարանաց՝ որպէս ոսկի մաքրեցաւ. և Աստուածակերտ աթոռս սուրբ էջմիածնի... Սոքա են յետ Աստուծոյ երախտաւորք մեր և բիւր բարեաց պատճառք. զորս պարտիմք ճանաչել. և առաւել սիրոյ արժանի համարել ըստ առաքելոյն: Թեո. ի. 12. 13. զնորհս բարերարութեանցն մի՛ մոռանալ ըստ Սիրաքայ, ԻԹ. 20. Եւ յամենայնի դստցանէ զօհանաւ. ի հաւատս սոցա հաստատուն Թաւն և այլն: Մարդ սպասում է, թե էջմիածնի համար մի կենդանի ներքող գտնի, որի մեջ ցույց տրվի նրա նշանակութիւնը հայ կյանքի մեջ, նրա կատարած գործը և տեղը, գտնուած է մի ահազին կուտակութիւն Սուրբ Գրքի վկայութիւններէ, որ ծայրահեղ աստիճանի սքոլաստիկ մեկնութիւններով հարմարեցրած են էջմիածնի վրա:

«Վասն զի՝ որպէս ասէ Արիստոտէլ գլուխն ճեմականաց դասուն, ի սեռս իւրաքանչիւր իրաց՝ մին է առաջին և զովելի քան դամենայնսն, Զօրօրնալ՝ ի յիննեակ դասակարգութիւնս հրեշտակաց՝ առաջին և զովելի են Սերօրէքն. ի տասն երկինս՝ հրեղէն երկինքն. ի մէջ լուսաւորաց՝ արեգակն. ի չորս տարերս՝ հուրն. ի մէջ հոգոց՝ հարաւայինն. ի յօթն հրաւելիս՝ ոսկին. ի մէջ ականց՝ ադամանդն. ի մէջ ձաղկանց՝ վարդն. ի քաղցրահամ ուտելիս՝ մեղրն. ի կերակուրս՝ հացն. ի հեղուկ նիւթս՝ բաղասանն. ի լերինս՝ Սիօն. ի քաղաքս՝ սուրբ Նրուսահէմ. ի տասն սեռականագույն սկսս՝ զոյացութիւնն. ի յառաքելութիւնս՝ սէրն. և ի յաղօթս Աստուածուսոյ աղօթքն (Զորոց ամենեցուն զգովութեան պատճառս՝ ամս ի մեկնութեան Հայր մերին. ի գլուխն եօթներորդ. յօրինեալն ի մէնջ.) Արդ՝ որպէս ի սեռս իւրաքանչիւր էակի՝ մին է զլուսն ամենայնի, առաջին և զովելի քան զամենայն, ըստ որում կարգու ցուցաք. ըստ այսմ արինակի՝ ի վանորայս և ի յեկեղեցիս

հայկազեանս ազգի՝ և ամենազովելի և առաջին՝ գլուխ և ժայր ամենեցուն՝ Քրիստոսաւհի՞ն և Աստուածակերտ Աթոս մեր՝ Սուրբ էջմիածին, Եւ սոյն այս ցուցանի՝ ըստ առան ստորոգութեանցն Արիստոսէի (Եր. 16)։—Եվ ապա վարդապետը Արիստոսէի առան ստորոգութիւններով ապացուցանում է, թե ինչպէս էջմիածինը զովիլի է Քրիստոսաւհի՞ն, ըստ քառասնութեան, ըստ առնչութեան, ըստ որակութեան, ըստ երբին, ըստ ուրին և այլն։

Բայց այդ դեռ բավական չէ։ Գովելի է էջմիածինը նաև նրա համար, որ յոթն սեղան ունի. իսկ սեղանների յոթն թվի մեջ մեծ խորհուրդ կա, և ի՞նչ է այդ խորհրդավորութիւնը, Վեպի դի Եթն են մուրաբան տասնեկէ։ Երկրորդ՝ դի Եթնապետ Նոյ առ Զրնգեպետ, յամենայն սուրբ անասնոց Եթն Եթն եւոյն ընդ իւր ի տապան... Երրորդ՝ դի թիւն Եթնեակ ի թուարանից կոյս կոչի... Չորրորդ՝ դի Եթն էին բնտիւր և գեղեցիկ հասկըն՝ որ ը միանգամ ելանէին ի միում փնճի, ի նշանակ լինութեան Եթն տմաց, զոր Փարաւոն հաւս և Յովսէփ մեկնեաց... Հինգերորդ՝ դի Եթն էին հրազարանքն ոսկիածոյլ Աշտանակին, զոր արար Մովսէս... Վեցերորդ՝ դի Եթն էին զիսակէ գլխոյն քաջին Սամփասին... և այսպես մի աւագին շարք, ամբողջ վաթսուս երես, որոնց մեջ էջմիածինի անունը բարձրացնելու համար բացատրում է յոթն թվի խորհրդավորութիւնը, Նույնպիսի մի շարքով (61 երես) զովաքանելով էջմիածինի ճիշդ կաթողիկէն, յորո սյունը, ցույց է տալիս հինգի և չորսի խորհրդավորութիւնը, և վերջապես գովում է էջմիածին անունը, և մինչև անգամ գումարում է տասերի թվական նշանակութիւնը և եզրակացնում. «էջմիածին՝ խորհրդաւոր անուն, որոյ տառն ըստ համարողական հաշուի բաղկացուցանեն զթիւ ՌԵՂԸ. Եւ աստի հազար հինգ հարիւրն՝ (որ է երիցս հինգ), զամենասուրբ Երրորդութեանն և զհնգից զքառսութեանց կատարեալ կենդանւոյ ցուցանէ խորհուրդս. Եւ իննուս որ է իննիցս առան՝ զՔրիստոսի բնակելոյն ինն ամիս ի յորովոյն սրբոյ Գուսին, և զիննեակ հրեշտակաց, և զաստիճանաւորացն եկեղեցւոյ՝ նշանակէ՝ խորհուրդս. Այլ և՛ ցուցանէ զառան երկինս և զառանաբանեայ օրէնս, զտաան խորանս, և զտաան ստորագութիւնս, զառան եղանակս ձայնից, զտաան հոգովս անուան, և զտաան զօրութիւնս հոգւոյն և այլն։

Անս թե ինչպէս և ինչպիսի միջոցներով են մի դար տառջ աշխատել բարձրացնել էջմիածնի անունը և կովել տարւ ջարդգիյների դմ։ Ինչ որ ասես՝ կա այդ ներդրոյանի մեջ, բայց էջմիածինը չկա։ Արարամ վարդապետը, որ յուր ժամանակի գիտնականներից մեկն է եղել, մինչև անգամ առդեր է հորինում էջմիածնի համար և եղանակներն էլ նշանակում, թե ինչպէս պիտի երգեն։ Նույնիսկ աղթքներ էլ է գրում ուղղված էջմիածնին, և այս ամենը Աստուածաշնչի խոսքերը ժողովելով և հարմարեցնելով էջմիածնի վրա։ Գա զգիտնականն ախրացութեան մի արդյունք էր, որ զրանից ազնիւ բան չէր կարող արտադրել Քրիստոս Մօրն Հաւատոյ։ Դժբախտաբար այդ անմտութիւններն էին գրովում ժամանակի հասկացողներին։

Գրիգոր Գալաթիոյի պատմութիւնը։—Նույնպիսի մի ախրացութեան արդյունք է և Գալաթիոյի Գալաթիոյի պատմութիւնը Գրիգոր Գալի ճերգաւորնը, տպ. Գ. Պիլիս,

1808 թվին Այդ մարզն եղել է ժամանակի ակտնավոր երգիչը, ծանոթ արևելյան եղանակներին և երաժշտության, և անդամաժան գործնական նպատակի համար հրատարակել է յուր երգարանը, որի հրեսին շարադրեցեալն է գրույթ, քայք ունի և մի երկրորդ մաս, որի երգերն իրենը շնն Այստեղ ամենայն ինչ կա, և թուրքերն ու հունարեն երգեր իրենց թարգմանություններով, և՛ աղթքներ, և՛ երաժշտության մասին։ Յուր հորինածն առաջին մասն է, որի տաղերի մեծ մասի համար նշանակած է թե ինչ եղանակով պիտի երգվին։ եղանակները թուրքական կամ արաբական են։

Մի կողմ թողնելով աղթական երգերը՝ ընդհանուր առ Ս. Հոգին Աստուածն, ընկալան երկնաւորն, ընկալան երանութեանն և այլն, ինչպէս և բարոյակրթական երգերը՝ ընդ խրատութենն կայմաները, մենք այստեղ տեսնում ենք, որ առաջապէս զգիրը սիրամար է բնութեան, դարձան, վարդի ու երգնակի (սոխակի), որոնց և վերաբերում են տաղերի խաղը մասը։ Բայց նա բնութեան երգերով հանգիստ բնութեան չի տեսնում, նրա երգած երկինքը երկինք չէ, այլ միջնադարյան երևակայություն երկինքը։ Ահա թե ինչպէս է սկսվում նրա ընդհանուր վերայ երկնին։

Ի յոչնչէ կացելոց.

Համահեղեւոյ գոյացելոց.

Նախաբակիզն՝ հանրիցնոցին.

Ի յԱստուծոյ գոյ թեւելոց.

Կոմարտես՝ մեծ յըջանակ.

Յոյժ տննըման՝ լայն ընդարձակ։

Եվ այսպէս, մինչև տների սկզբի տառերը կազմեն զի Գրիգորէն, Երկինքը բանաստեղծի համար է դեռ մի գեղատալայան, մի բարեհաճական տեղ ցնծութեան յորում բարիքն երանութեանն, մաքից ու խնդից վեր մի լուսավոր տեղ, մի ամսիւն խորանայուն, լայն՝ ընդարձակ, ուր սրբերի հույներն են կենում և տեղի է լուսնի և արևի Դա կրօնական հայացքով երկինքն է, շէրին Երուսաղեմը, որ և մի ուրիշ երգով զարձալ գովում է Գաղատայայանը։ Շատ հասկանալի է, որ այսպիսի երկինքը չափաի տեսնելու բանաստեղծը և այդպիսի բնութեանից ոչ մի տպավորություն չստանալով՝ նրա երգն էլ բնութեան տրամադրութեան չափաի զարթեցնի։

Այսպէս և գեղեցկապատիւ յերեսս երկնի կարի ցանկալի, արծաթանման բոցաճառանչ յոյժ զարմանալիս աստղերը նյութ են դառնում ոռանաւորի ոչ իրենց թողած տպավորութեամբ, այլ իրենց մասին հաշտ ավանդութեաներով, հավատալիքներով ու անաղագիտութեաներով։ Այսպէս և օղբ, երկիրը, ձովը գովում է Գաղատայայան առանձին երգերով, նա միայն ֆիզիկական և կրօնական աշխարհագրութեան է գրում և ոչ թե բանաստեղծութեան։

Մենք թվով երգեր ունի նվիրած և վարդին ու երգնակին, որ սրան էլ հրապարակում են ինչպէս մեր միջնադարյան երգիչներին, բայց ոչ մեկի մեջ չի երևում այն եսանդն ու կորովը, արաւհայտութեան այն ուժը, որ սննդն Հով-

հաննետ Թվուբանցին կամ Գրիգոր Աղթամարցին. չկա ոչ մի նոր գեղեցիկ գյուտ խոսքի, Այստեղ էլ անշուշտ վարդն ու սոխակն իրենց սիրո տխրամթամբ և ուրախությամբ անրաժան են գտնան ծաղկային, դեղեցիկ եղանակից, Այստեղ էլ վարդը բացվում է ու բուրբուռ փայլելով, գարունը ծաղկում է. դաշտերը դարձարկում և ուրախանում են, գետերը հասում, քամին փչում, Թռչունները կարկաչում քաղցրանալով և վարդը կարծես է գոռում, որ «գարմանառիպ» սիրահար սոխակը երկն իրեն և կանչում է նրան,— և այս է ամենը, ինչ որ Գրիգոր գպիրը հեղեղում է իր սիրո երգերի մեջ, Եվ այս ամենը հորինված են հների փշրանքներով՝ միայն մի բարի նպատակով, որ հայերեն բառեր լինին հայտնի եղանակներն ասելու համար, Հետևյալները Գապասախայանի լավագույն երգերն են.

Ի ՎԱՐԴԷ ՅԵՐԳՆԱԿՆ

Արի, սէր իմ, արի երգեա ցնծալի.
Եղանակաւ՝ միշտ քաղցրամայն բողձալի.
Ահա եհաս դարուն ծաղկեալ՝ սխրալի.
Սիրտ վշտալի՝
Ես վիրալի
Վարտենալ.
Եմ սգալի՝
Միշտ խղճալի
Հնկեցեալ.

Ողբերգական երգով եկ ձայն արձակեա.
Ինձ լալագին եղանակաւ ձայնակցեա,
Ձայն գովելի՝ երգ ցանկալի դու երգեա.
Սիրտ վշտալի և այլն:

Լալով, ողբով, աղաղակաւ արտասուեմ.
Չքնաղ ձայնիդ՝ քոյին ահա ըստասեմ.
Նովաւ յաւէտ՝ գովանալով հանդարտեմ.

Սիրտ վշտալի և այլն:
(Սորա ձայնն է՝ ողբերգական՝ լուր սէր իմ,
Պիւ կիտէրիմ՝ պիւ արտումս պագարմ),

ԱՌ ԵՐԳՆԱԿՆ

Արի երգնակ դու ցանկալի,
Շքեղաձայն դարձանալի.
Գեղեցիկ ես Թռչնոց համայնց,
Երգեա սիրով միշտ ցնծալի.

Գովելի, գովելի, գովելի, գովելի լի լի:

Սիրով ցընձա աստաստեալով
Քաղցրիկ ձայնիւ երգակցելով.

$\mathcal{P}_{\text{max}}(t) \leq \mathcal{P}_{\text{max}}(t_0) + \mathcal{P}_{\text{max}}(t_1)$

For the first time, the

$\mathbb{P}_m \mathbb{P}_n \mathbb{P}_l \leq \mathbb{P}_m \mathbb{P}_n$.

Կեօթախւճ պիտի դօն՝ չէ յիշմանայ:

Խնթճյանը բանաստեղծին ապստեղ միևնույն վարդապետն է աշխարհում:

գրությունն գրողն է, Զնայելով որ նա բնության գեղեցիկություններն է նկարագրում և գտնում, ուրեքն աշխարհական նյութ է բանեցնում, բայց կրօնական նպատակի համար նման հին առաքնաբանները բնությամբ Աստուծո զոյությունն էին ուզում ապացուցանել, հնախոս կրօնավորն այս գրվածքում շարունակ զգու է ապրիս Աստուծո ժաար բնության մեջ և բնության գտնուար չառ է ապրիս և գտնուած փառաբանություն Աստուծու Վարդապետը քնա՞վ չի ուրանում ինքն իրեն. ուստի կարևոր է համարում մի երկրորդ երդ ևս գրել, որի մեջ խրատներ է կարգում բյուզանդացիներին արծաթախրության, անձնասիրության, աշխտհասիրության ու փառասիրության մասին: Եվ այսպես նա սուղոչափում է մի շնախրդանքից ու երկու սերգից: Կաղճված բանաստեղծություն, մոտ երեք հազար տող, քառյակներով տների բաժանված, բոլորը 10-վանկանի տողեր՝ միայն իմ հանգով: Նա նորոգում է Շնորհալու ժամանակի հաշակը հանգերի վերաբերութեամբ, որ նույնիակ հոմիլաս քահանային դուր չէր եկել:

Ինճիճյանը հարկավ ըստաստեղծություն չէ անում: Այս ահագին զանգված տողերի մեջ շատ քիչ քառյակներ են պատահում, որոնք զգացում անին. բանաստեղծության փախանակ նորաստեղծությունն է բանում. ասանց զործողության միակերպ ստոն նկերագիր է: Բնությունը չի կենդանացնում ընթերցողին, որովհետև ինքը հեղինակն էլ, թեպետ ազգված է երևում Բյուզանդիանի գեղեցիկ տեսարաններից, ուր Զով, լուս, եղիտ, գայտ ու անտառ միացած են, բայց չի կենդանացնում յուր երևակայության մեջ այդ բնությունը: Եվ հետևանքը այն է լինում, որ հեղինակն յուր աշխատության այս ժաար մեջ ևս՝ ավելի յուր տեղագրական և հնագրական հատությունն է ցույց առլիս, քան թե բնության առաջորած արամագրությունը: Առաջին երգն ամբողջ մի ոտանավորով աշխտհագրություն է. իսկ երկրորդ երգը մի հասարակ խրատ: Ժամանակի պահանջն է այդպես. ոտանավոր շինել մի նյութ, որի համար ոտանավոր պետք չէ: Այսպես է, օրինակ, և Մկրտիչ Ավգերյանի (1762—1854), մեծ բառարան կազմողի բժան զործեական (1812 թ.), որ է զբաբար ոտանավորով մի սկրթութիւն չորս բաբոյական առաքնութեանց վրայ, և կամ Ման. Զախթախյանի սկրութեան աստուածասիրութեան խրատականը (1819 թ.).

Բայց չնայելով այս ամենին՝ Ինճիճյանի զրվածքը յուր ժամանակին յուր տեսակի մեջ մի նորություն է և մի քայլ առաջ է առնում մեր բանաստեղծությունը: Նորությունը նյութի ընտրությունն է. այն՝ որ Ինճիճյանը ցույց է ապրիս, թե բացի կրօնականից, խրատորէն երգերից, էջմիածնի ներբողյանից և զարնտն վարդ ու սոխակից՝ ոտանավորի նյութ կարելի է դարձնել և բնությունը, երգել բնության տեսարանները, կամ, ինչպես ինքն է ասում, կենդանագրել Արարչի այդ գեղեցիկորդ զործը. «կրկին նորոգել բնութեան ստեղծութեան»: Նա յուր երկի սկզբում, ինչպես հանրն ասում էին, դիմում է եղաբարթուն ոգուն, որ սովորեցնե իրեն եզգու նիւթական յաննիւթ գոլ բանին: Երգուլ, բայց զժախտաբար զվարթուն ոգին ոգնության չէ հասնում և Ինճիճյանի միայն նպատակն է գովելի անում:

Այս շրջանում անարժեք ոտանավորներ են շինում և մյուս Մխիթա-

րյան քերթողները՝ Ավետիքյան, Ջախջախյան, Թումանյան և Նուշինսկ Բազ-
առուներն, որոնց բանաստեղծությունները բավական ուշ, 1863 և 1863 թ.թ.
ամփոփված են հրկու հատորի մեջ՝ «Տաղը Մխիթարեան վարդապետաց»,
Երրորդ հատորը, հրատար. 1864 թ., յուր մեջ՝ ունի Եղվարդ Հյուսիսյանի
(1799—1876) տաղերը, որ սակայն ես նկատի չունիմ՝ ձեռի առկ չունենալով։

Գաբրիել Ավետիքյանը։—Գաբրիել Ավետիքյանի (1751—1837) վեց երգե-
րից իսկական բանաստեղծություն չունի ըստ ըստ է միայն «Մերն սրբոյն
Ալեքսիանոսի եղբերակը», և հենց այդ պատճառով կտակածն է թվում
թե արդյոք որդեկորույս մոր այդ սրտառուչ ողբը մի թարգմանություն
կամ նմանություն չէ՞ որևէ եվրոպացի բանաստեղծի։ Մյուս երգերը՝ Տըր-
դատի, Շուշուհի, Գարեգին Օրվանձայանի, Վարդանի ու Վահանի վրա զբա-
ղված են, բոլորը կրոնական բովանդակությամբ։

Մամեսել Ջախջախյան։—Ավետիքյանի ոտանավորներից շատ ավելի
բարձր չեն Մանուկ Ջախջախյանի (1770—1835) քերթվածները։ Այդ ոտա-
նավորների արժեքը մեծապես համար հարկավոր է իմանալ թե ինչպես են
հորինվել դրանց մեծ մասը։ Մխիթարյանների այս մեծ սիրնդի մեջ մի
առարկունակ զբաղմունք սովորություն է եղել. նրանք զվարճացել են սուգե-
րով ու հանգիստով և ոտանավոր գրելով՝ իրար հետ հանձներ են արել։
Ջախջախյան ինչպե՞ս զբաղմունք մասն աշխատանքներով՝ բառարան գրե-
լով, թարգմանություններ անելով և այլն, մեկ մեկ էլ պետք են զգացել
հանգստանալու և իրենց հանգստությունը գտել են քերթողության մեջ։
Քայքայ քերթողություն լինել տեսակի։ Ինչպես հին աշուղները իրար հետ բա-
սանելիս՝ միմյանց տեսողվածներ էին առաջարկում հանգեր ու ոտեր տա-
լով, և մրցակիցը պետք է յուր ոտիս պատասխանը տաք առաջարկված
հանգերով ու ոտերով, հիշտ նույն ձևով իրար հետ մրցում են և Մխիթար-
յան ընկեր քերթողները, իրենց բառով ասած, նրանք հորինում են բանա-
հանգ և բանավարդն ոտանավորներ։ Վերջում տալիս բանաստեղծին նախ
ինչ հանգերն հանգական բառերը, և ըստ այնմ պահանջների պատկեր, կամ
թե քերթողն ինքնին՝ այլոյ ուրուք տալիս յանգավոր բայիւք և չափովք
յօրինեսցէ ինչ կամ դարձուցէ նմին պատասխանի, այս ազգ քերթածաց
կոչիլ բռնեմեմք։ Նյութը և հանգն ու չափն ուրեմն տալիս են քերթողին
և պատվիրում նրան, որ բանաստեղծն և նա բանաստեղծում է բանահան-
գերն։ Քայքայ այս գեղ քիչ է. այստեղ քերթողն երևի աղատ է դու արված
հանգական բառերը պատասխանելու մեջ. քայքայ եթե որով առեալ ինչ կա-
ղաւ զմայրայանք յայնսն՝ անփոփոխ նովին յիւրումն անասերիւք պահեսցի
տալի, տալ յայնժամ և բռնեմեմք։ Ահա թե ինչով են զվարճանում այս
քերթողները. նրանք բանագրոս հանգերն են շարժում։

Այսպես Առան Սիսակյանը, այսինքն Արսեն Բազառուհին 1825 թվին
առաջարկում է Վահրամ Ռուբինյանին, այսինքն Ջախջախյանին (Մխիթար-
յան քերթողներն աշուղներին պես իրենց կեղծ անուններն ունին) գրել մի
բանահանգ և բանավարդն ոտանավոր հենց իրեն Ջախջախյանի այդ տեսակի
քերթողության վրա, ընդամենը չորս տուն 15-վանկանի տողերով. առաջին
տուն հանգերը պիտի կազմեն լոյմալիք, ճեմիք, խիք, կապիք բառերը, հրկ-
րորդին՝ քորքորք, կամար, չար, անգաղար, երրորդին՝ մպտտակ, ախոր-

ծակ, օրիմակ, ժամանակ. իսկ չորրորդինը՝ կեցեաց, հիւսեաց, քարեաց, ի բաց:
Եվ Ձախջախյանը գրոււմ է այդ ոտանավորը (Տաղք. Բ. 89): Ձարմանալ
պետք է, թե ինչպե՞ս նա այսպիսի բռնազրոտությամբ դեռ կարողանում է
իմաստ գնել յուր ոտանավորի մեջ: Բազրատուներն ինքն էլ ապա նույն
հանգերով պատասխան է գրում Ձախջախյանի ոտանավորին (Տաղք. Ա.
143): Եվ այդ դեռ բավական չէ, Ձախջախյանը նորից ուրիշ ոտանավորով,
նույն հանգերով պատասխանում է Բազրատուներին. և սիրահարովելով այդ
հանգերին՝ դարձյալ ուրիշ երկու ոտանավոր էլ է գրում «Ծուռով խաբիմք»
և «Ծամենայնի խոհեմութիւն»: Եվ այդ անում է նա մեծ սիրով և պար-
ծանքով.

*Եթէ դիպուած բռնադրօսիկ ինձ կարկառէ նպատակ,
Իմ մեղուորէն ճախրէ զնովաւ. քերթողական ախորժակ—*

Ձախջախյանը վարպետն է այս կարգի ոտանավորներին. ունի մոտ
հիսուն այսպիսի քերթված. նրա ոտանավորներին մեջ բազմաթիւ են
և այնպիսիները, որոնք միևնույն հանգերով են կազմված, ինչպէս՝
19 քերթված միևնույն մեհեանգ-զանավանգ, երթեկեկ տաբեկ և այլն
հանգերով (Բ. 68—82):

Ասիլ չի ուղիւ, որ այսպիսի ոտանավորները լուկ մեքենայական ար-
դունք են մի տեսակ սրամտության. բանաստեղծություն որոնել այդտեղ
կարելի չէ. քերթողին տրվում է հանգ և ասվում է զովիւր հույներին և նա
գրում է «Գովեստ յունաց» (Բ. 62):

*Ջելլեական դարմիցն քզպերի
Առնում զովիւ նիւթ ոչ քտտիրջ:
Վարժեաց ուսմամբ մեծըն Սողոմ
Ջազգ սովորեալ յանգործ զօգոմ.
Ջորսըդ ձրկտնց և զխեչափառ
Իմաստութեամբ լից յուտափառ.
Եւ որք վարժեալ քաղել զՇօրտ,
Ջարեաական ուսան զօրտ: Եվ այլն:*

Բայց նույն քերթողը նույն հանգերով և հակառակն է գրում՝ «Պար-
ուս Ծունաց»:

*Ազգ պանծալի երբեմն քերն,
Ամենայնիւ կաւ արգ քտտիրջ.
Եւ զոր ուսոյց Թաղէս, Սողոմ,
Եզպիտական էր այն զօգոմ:
Արհաստ քո արդ է զխեչափառ
Կամ ձուկն որսալ յունայն ի վտռ.
Հեռի ի քէն նախնին որստ,
Թութ քաղեսջիւր տնկեա եօրտ: Եվ այլն:*

Այս նույն բանաստեղծը գրչոււմ է յաւր վերջին գրվածքի վրա և նորոյն հանգերով գրոււմ է Ձեզիլ ընդ պարսաւին Յունացաւ:

Թէ ազգն Հիւլէն երբեմն ըզգօն և զինուք պիւրն
Այդ յիշատակից յամենայն բարեաց բոտեքց,
Մի գարմանար, ծնցի կրկին Հիկուրդ Սեղոմ,
Թողցեն դարձեալ համակեալ կուս ի գնդոմ:
Ի նըւադիւ լուսնոյն ծիւրի և խելափառ,
Եւ պատարի յարժամ լուսինն է յուռալուռ,
Եւ երբ թխպին երկինք հողմուտ յամպրոպ յօրտո,
Եւ գեղեցիկն ի դաշտ տապաստ դընի հօրոտ: Եվ այլն:

Ինչ կտրելի է ասել այս տղայամիտ խաղերի համար, որ անոււմ են վենետկյան քերթողներն իրենց հասուն տարիքոււմ, և որ սահմանված են միայն ընկերներին զվարճացնելու համար:

Ահա անո գոր ինձ հաւար յանց ի վրեր:
Խնդրուածոյդ մի անլսող զիս դու ասեր:
Թէ քաղցրասցի երգս անպաճոյճ քան ըզհանուրց:
Յետ կարգալոյս արկ ի մախադդ և կամ քուրճ:

Եվ իսկապես, գլուրճ ձգելուս բաներ են դրանք: Եվ բանաստեղծներն իրենք ևս, նույն ինքն Ջախիթիյանը մեծ բան չեն հասարոււմ այս տաղերը:

Գիտեմք անշուշտ նիւթեալս աւելի չէ ինչ ակորճ յօրինակ,
Եւ թ զիտէ վարձահատե՛յց լիցի ներող ժամանակ:
Ոչ շուք անձանց այլ դիւրութիւն. միայն խնդրե՛ք մեր կենաց.
Ոչ թէ պըսակ գոր բազմն ագաւ հէգ քերթողին ոչ հիւսանաց.
Բանդեալն եմոս թէ միմեջէ մկն ունիցի ինչ բարեաց.
Իմ, Սիսակեան, լուր նըւադիս. թէ չախորժես կաց ի բաց:

Այս բանտեալ եռոսները, շղթայադառն տաղերը, շատ բան չեն տալիս մեր մտքին, և ոչինչ մեր զգացուածին: Այդ տաղերի մեջ Մխիթարյան քերթողները գրադվոււմ են իրենց առանձին խնդրներով, ընկերակաւն կյանքի մասն զեղքերով. ոտանավորով գովոււմ են միմյանց, կարծես մի տեսակ սիրահարված են մեկմեկու և իրար կրթել ու խորտել են ուզում: Նրանք փակված իրենց վառակաւն պատերի մեջ՝ իրենցից, իրենց գրական աշխատանքներից, իրենց քառախաղերից դուրս ոչինչ չեն զրեթե չեն տեսնում: Եվ այս ամենը երգվում է ներդաշնակ, երաժշտական ոտքերով, լիաճիւղուն հանգերով, մի խոսքով հիանալի տաղաչափությամբ, բայց ավանդ, միայն այդքան: Մտքը ցավում է որ այդ գեղեցիկ տողերը, լիքը հանգերը չունին լի և հարուստ բովանդակութիւն. որ այդ ներդաշնակ տողերից չի կազմվում և ներդաշնակ միութիւն հորինվածքի. այլ միայն կցկտոււմ հաճախ անհարկ շարվածքներ են առաջ գալիս, լավագոյն դեպքում հասնում անպաճոյճ, իմաստալից խոսքերով, որոնց վրա գոնե մեծ մեկ հանգը չոււմ է կարգացողի ձանրացած միտքը:

Բարոյական գաղափարները, որ Ջանջուխյանը դնում է յուր քրոն-
հանգստեան և ոչ թրեմեանդ՝ աստանովորների մեջ, յաստ սովորական վարդա-
պետական քարոզներ են, բայց ընդհանուր բնավորությամբ։ Աստված
յուր գերազույն իմաստությամբ մարդկանց վիճակը պէս պէս է ստեղծել,
որպեսզի հնարավոր լինի աշխարհում ապրել, ուստի մարդ չպիտի դժգոհի
յուր վիճակից. որովհետեւ

Եթէ անցնիւր ոսկի թագից էր արժանի,
ի քոյդ փառախ կամ յագորիս յո տարժանի,
Կամ թէ գեղջուկ քո պէս մեծ տնայտ քարտէզ
Ո՛ր բան յայնժամ ըզքոյդ հեշտին բըրէր պարտէզ։

Մի հին գաղափար, որ զբաղեցրել է մեր վարդապետներին, այն է
թե աշխարհում անպետք բան չկա. աստվածային տեսլությամբ, որ չպետք
է ուրանալ, ամենայն ինչ որոշ նպատակի համար է ստեղծված.

Ոչ թո՛ւք անպէտք ե ոչ երաշտ,
Ոչ աւիւծուց աչ վագերց վաշտ...
Ոչ անպիտուն տեսցես դու գիծ,
Եթէ յաչացդ տուցես զրիծ...

Աշխարհի մեջ ամենաբարձր բանը, որ արժանի է երգչի կիթառին՝ է
առաքինությունը միջնադարյան քրիստոնեական կրօնական իմաստով։
Առաքինի է նա, որ ճարտարագետ ընդոտնէ զընդդիմակից մարմին հետաք,
որին չեն զրավում աշխարհի փառք ու պատիվը, նախաքինը, ոչ քաջու-
թյան անունը, ոչ աշխարհի սերը, որ հաղթում է կրքերին և որի ուշ ու
միտքը միշտ Աստուծուն է ուղղված.

Երբ նստի յառուակ, և կամ կողմանի ի ճաղկեայ պարտէզ
Շիթք շիւղք ամենայն զԱստուած նկարեն իրրև ի քարտէզ,

Ունեցածով զոհանալ, հոգ չտանել աշխարհում գանձ ժողովելու, որ
մարդու համար ցեց է։ Թեպետև ուսումնականներին չեն հարգում մեր ազգի
մեջ, բայց միշտ պետք է աշխատել, աշխատությունն ամեն բանի կհաղթե.

Վաստակք չբռնող՝ իմ ժառանգ յաւերժակից պայազատ,
Անմահութիւն քանդակեալ նահատակիս ի ճակատ։—

Ահա Միխիլայան կուսակիցն ի իր ժամանակները յուր մենավոր կյանքի
մեջ, Ամեն բանում խոհեմություն է հարկավոր և քաջ մտածողություն.

Թէ ոչ կըրէ ակըն զիտող,
Ինչ ոչ արժէ ձիգ յայնալիճ.
Թէ ոչ ըզժամ գլխէ որսող,
Չարժեն և խուռն հաւք ի ճահիճ։

Այս նյութերի վրա պիտի ավելացնել և այն, որ տաղերգության

առարկա են դառնում Զօխյախյանի համար նաև կրոնական բաներ—Աստ-
վածածնի ձնունդ. Փրկչի ծնունդ, սրբեր և այլն, ապա բուն Մխիթարյան
ընտանեկան. կյանքի գեղեցիկ, ազդերձներ, ձոներ՝ ուղղված այցելուներին.
իրենց տասնամյա պատիվն հոգևոր տիրոջը, ամբողջակներին, նորընծա-
ներին, ի հանդէս ընդունելութեան վարդապետական գաւազանի երկուց
նորընծայ վարդապետաց, ի հանդէս սքեմատութեան, ի հանդէս ուխ-
տադրութեան և այլն. բոլորը միայն Մխիթարյաններին, այն էլ միայն
ժամանակակից Մխիթարյաններին հետաքրքրող բաներ, դուռ Մխիթարյան
հայրենասիրությամբ զբոված:

Ընդհանուր հայ ազգայինը, հայ ազգային վիճակը, խնդիրները չեն
հետաքրքրում Զօխյախյանին, եթէ այդ խնդիրներին մեջ չուղենանք գնեւի
լեզվի այն երկար գովեալը—Ի վերայ լեզուի բան, որի մեջ սակայն հայ
լեզվի մասին չէ խոսվում, այլ ընդհանրապես լեզվի, նույնպէս ի պար-
տաւորապէս նախնեաց երգիծաբանութեան մեջ մարգ սպասում է գանեւ
գովեստ հայ նախնիներէ, բայց այդ խոյսը, բոլորը ար հանգով կազմված
քերթվածի մեջ այն միտքն է հայտնվում, թէ ամենայն բան, որով ներկա
գործ պարճենում է, յուր սկիզբն ունի հին դարի մեջ, և միայն ի միջի
այլոց հետևյալ միամիտ ազգային սնտաւության տողերն են մեջ գալիս.

Երբ Յոյնն ի դաւա՝ մեր ցրտահար

Ընդ վարասուն ցիւռ և իշեար,

Եւ կամ արասյր զանգոր ճագար,

Եւ բուռ քաղէր կաղին և խար,

Հայկ նախահալ գիրապարար

Յառաք ցորեան և ի յաշար,

Ջնոնոյր թիկունք յիւր ի քովթար

Եւ ի սամոյրն ի յոսկեկար...

Բամբիշն Հայոց էր ի ժանուար,

Աշխոյժ մանկտին քաջ ձիավար...

Բանաստեղծության նյութ դաւանում են և գրքերի տպագրությունը,
ի միջի այլոց Խորենացու տպագրությունն ևս ողևորել է այս քերթողին.
և պե՛տք է խոստովանել, թեպէս և դարձյալ քոնահանգ, բայց լավ-
գույն տողերն է ներշնչել նրան:

Երգել խնդրես դանչուք Խորնի

Որ առ ինև պերճ քան զԱնի,

Որ զԱրամեան դարմ և համբաւ

Պայծառացայց ի շուք անբաւ:

Այն հնչեմ կելկէր ի փող

Քերթողահոր ի սում ներբող,

Որ գիմս երգէ գիւցաղուն Հայկ

Տոհմիս որդւոց արև և ալգ:

Որ ինձ վիպէ զքաջն Արամ

Հիւսեալ նմին հիւսք անթաւամ:

Բարենշան մեզ այս աստի.
Որ յիւր եգիս բազուկ բերի,
Զսարայն կանգնել տրեան արգար
Ի տիպ այսց գործոց տիպար,
Յալ յընթերցում տղզին Հայոց
Զորս են ի փառս և զոր ի խոց,
Զոր նայն սուլեաց քաղցր ի յառաջ,
Եւ կնքեաց յողբ ու ի թառաջ:

Պեւք է կարծել թե Խորենացու Ողբը գոնե պիտի աղգեր քերթողին,
և նա այստեղ պիտի բարձրանար ընդհանուր ազգային վիճակին և իսկա-
կան հայրենասեր դառնար. բայց ոչ, նա ողբում է միայն Հայոց ձեռագիր-
ներէ կարուսար, մեացածն անտարբեր է նրա համար:

Ինձ զի՞ պիտին կսթողքդ և սիւն,
Զոր հար վառնեաց ներկեաց արեւն.
Ինձ առի՞մէ՞ խոյր քո և բարձ,
Զոր աջ անգուլթ վաղուց երթորձ...

Կամ նույն հանդերձ և նույն խնդրի մասին գրած երկրորդ բանա-
սանդուկն յայն մեջ.

Ոյ դամբարանկս և ոյ զսիւն
Ողբամ յարտօսր ողջամբ արիւն:
Զոր բողդ Յոնեաց՝ բողդն և երարձ,
Զթագ աղգիս զգահն և զբարձ:

Եվ այսպես, Մնասկած ավազ և Աստված ժողովք, ուրեմն Մնասուծով
մխիթարվիւն: Եվ այս Մնասուծով մխիթարվիւնք այն աստիճանի դեռ
իշխում է, որ տեղ է գտել նույնիսկ սգավոր Ուրի Հրաշափունիս պատկերի
տակ, որ երևի առաջին անգամ այս մեծ Մխիթարյաններից ժողոված և
գնանդով է Խորենացու այս 1828 թվի ապագրութայն վերջում: Ահա թե
ինչպես է հնչում Ձախջախյանի այդ ռոմանտիկը՝ Վերձանագիր առ ողին
եղերեբգակ ընդ կործանումն Հայկազեան դահուս:

Ողիդ ղսեմ, զթագն և զբարձ
Թէ ինձ ողբօս զոր բողդն երթորձ,
Մի լար. բաղդին բարձն են անդարձ:
Թէ զբարձ:ւան քրդօս դու խանձ,
Լաց, մո և զիմ արտօսր անսանձ:
Ո՛հ, լամ ըզմեղ հեռ և նախանձ:

Մինչ Խորենացու քրտից արյուն է կաթում, երբ հիշում է գահի ան-
կուժը, 19-րդ դարու ուսայլ վարդապետը, Հոսնասանի ազատության օրե-
րում նրա ողբի սակ ասում է. «Մի լար. բաղդին բարձն են անդարձ»: Բայց
և նույն վարդապետը լալիս է և լացի հրավիրում, որ այդ անկման
պատճառն են եղել «հեռ և նախանձ»: Եվ ուրիշ բան էլ ողջասել կարելի

չէր մի կրօնավորից, որի համար բանաստեղծութիւն գլխավոր նյութը ընդհանուր բարոյական խրատն է կազմում: Անա թի ինչ է առում նա այս մասին մի բռնաւանգ, բայց գեղեցիկ ստղերով հարուստ քերթվածի մեջ՝
«Մուսայն առ Արամեան քերթողս».

Նիւթ քերթածաց նախ նդիցի ձեզ Արամազդ,
Գործք եղևսեանց և ուղղութիւնք հանճարիմաստ.
Յոտումն ախտից և կրթութիւնք մասաց հրահանգս...

Անշուշտ, անմարմին վերացական բարոյականը չէ, որ երգի նյութը դառնալով պիտի կարողանար զանհաջեցեղական ի վերամեանց ջնջել արատն, ինչպես ցանկանում է Ջախջախյանը վերոհիշյալ երգի մեջ, այլ բուն ազգային կյանքը, մարդու թրթռուն սիրաւ: Եվ այն, ինչ որ Ջախջախյանը խրատներ կորզալով ուղղում է հայ բանաստեղծներին, դառնով իսկապես յուր և յուր ընկերների երկերն է բնորոշում.

Առ թիւ շարժիք դուք գերկուղէշ ոստ և նոճի
Առ սիւք հողմաց, քի բամբիցդ յերգ՝ սիրտ ոչ ճօճի,
Կամ թէ քերդոյն ամհացեալ գերդ սէզ ափեծ,
Բաշ ծածանէ՝ ձեռնէ գծեա, քայց սիրտն ե հիւծ.
Կամ թէ սրավար առտ անց սարայ իրիկ թալան,
Ջրոյն մտռմալ և ոչ գիտէ Ռար իցէ չուն...
Են և քերդոք երկայնութիւնք քան զՄասիս,
Յօրաց ճախբիկ թէն աշնուս՝ խոնջեալ կտսիս:

Մեր սիրտը չի հոճում այդ բերկայնաթոյն բանաստեղծութիւնից, ու խոնջացած ետ ենք կասում, որովհետեւ զրկածքի սիրտն է հիւծն և որովհետեւ բանաստեղծը յուր բռնայն մոռանում է, բայց բույնը ոչ այն վերի տողերի իմաստով: Բանաստեղծութիւն բույնը ժողովուրդն ու իրական կյանքն է, որ չունի Ջախջախյանը: Նրա ամբողջ բանաստեղծութիւն մեջ միայն թի սուրբ Վարդանաւաճ բռնահանդում, գրված 1828 թվին, հետեւ ժյու տողերն եմ պտում ժամանակակից կյանքի մասին.

Նքստի մշակ ընդ հովանեաւ ի բարտի
Լալ դիւր վաստակ ձեռնէ զլալիս զոր պարտի.
Հայի ի քերտն յամարայնի՝ չի գորում:
Ոչ իւր մընայ մեղուացն անմեղ գունդ պարտն:
Ջուտ իւր խրէ Մար յուղկահար շոյա ի քայլ.
Ոչ թէ ըզմին որպէս ներող քան զայն գայլ:

Անա թի Բնջը պիտի լիներ մեր բանաստեղծութիւն բռնայն, որ վերջում միայն գտել է Ջախջախյանը, բայց դժբախտաբար այն ժամանակ, երբ արգեն ուղ էր: Բայց նա մեր ապագա բանաստեղծութիւն այդ նյութը գտել է կիստա. նա շատ չափավոր է յուր տենչանքներին մեջ, Վարդանանց դործքը գովելով Եղիշիի նմանողութիւնը: Նա խնդրում է.

Սժւր Վարդանանք, զայս երգ ձօնէ իմ զուտան
Ընդ փռանջ ձողկանց որ յարենէ ձեր բուստն.
Վարձ ոչ հայցեմ զան Պահլավաց հաւասար,
Ոչ գԱրձբունեաց զոր հիմարկեաց Սանասար...
Դարձցի մողթեմ անգրէն Մասիս և Մարանգ,
Կանգնել ձեզ սուրբ տաճար ի կորդ ի մարմանդ...

Եվ այս հասկանալի է ժի բանաստեղծի համար, որ մի քիչ վերհուս
Մուսային Այբրաամ հրավիրելով՝ խնդրում է

Ոչ գԱրձեան երգաձայնել ինձ բաղդ յոյր
Ջըղջահաղթ նախադասակ կամ Պարոյր,
Եւ ոչ զորին վիշաղայաղթ զոս Տիգրան,
Շամգրեւի ըզթօք ի նիզակին սուր ճիւղան.
Այլ Վարդանանց արեան զոր հեղ զոս Սասան,
Լեր զբուռցօք բարձրաձայնիւք վիպաօսն...
Ո՛վ երջանիկ սրբոյ զորուն զերդաստան,
Ի զա զանձա ի դա ողորմ Հայաստան.
Ոչ թէ ի Հայկ ոչ ի Տիգրան կամ յԱրայ,
Ոչ և բերբի դաշտ զոր ցահեաց քեզ Շարայ:

Հեռու ուրեմն ամենայն ինչ որ աշխարհական է. հեռու հայրենի աշ-
խարհ և քաղաքական կյանք, և դեռ սրբեր աւ սրբեր միայն:

Վերջում հիշենք և այս, որ 1789, 1804 և 1816 թվերին գրված երեք
քերթվածներ կան,— առաջ յաղթութեան ի հանդէս անասաբաթեան
Որոտեանց, Ողբերգեան ի Թառեր Մխիթարեանց, Վի Ննգախօսչոյ մահ
Խոսքովոյ Մեծի յաւարտ ողբերգութեանն հոգեբերդ, Վի Թառերական
ողբերգութեան Երուսաղէմ Հայոց արքայի: Սրանցից հայանի էր լինում,
որ 18-րդ դարու վերջերսում արդեն Մխիթարեանց [կողմից] հայերեն ներ-
կայացումներ են արված, և երևի Զախիթյանը հայերեն, իհարկե, գրա-
բար, պիտենք է գրել զառամական բովանդակութեամբ: Նույնպէս Թոմա-
հայանի քերթվածների մեջ կան երկու երգ Վերջերգութենէ սրբոյն Արղիւ-
մանի, գրած 1802 թվին:

Աղիտ Թովմեյումէ — Եղիա Թոմաշյանի (1777—1848) մեծ վառարկը
մեր գրականության համար է՝ Հոմերոսի Իլիականի և Ոդիսականի Թարգ-
մանութեանը, իբրև ինքնուրույն բանաստեղծ սակավթիվ քերթվածներ
ունի և շատ անշոյն է: Թեպեան Զախիթյանի չափ բանաստեղծի չի
կազմում: Այդպիսիներն ընդամենն երկու են թվով՝ Վերական իւր ողբ
հնգերցւոյն Հայաստանեայց, մի հին նյութ, որ սա էլ դնում է յուր բանա-
գրոս հանգերի մեջ, ապա ՎԱ Հայաստան խորխոյս ի պարտութիւն Տուղ-
րիւյ ի Մանազկերտ: Այս վերջին նյութը նույն հանգերով և հանգերի
նույն դասավորութեամբ երգել է նույն 1828 թվին և Արսեն Բաղրատու-
նին, երևի մրցելով Թոմաշյանի հետ: Տուղբի յայդ պարտութեանը Մա-
նազկերտի մաս, որ ոչ մի առանձին նշանակութեան չի ունեցել թուրքերի
հաւաքագրութեան շարժման համար և քննվ չի ազդել Հայաստանի բախտի

վրա, անկափ օգնություն է տալ երկուսին ևս անշուշտ ժխայն տյն պատճառով, որ Վրոն-հանգ և Բոնակարգն ոտանավոր են գրում, տախնճն նյութն և հանգերը ավողը պատվիրել է նրանց ոգևորվել այդ նյութով և խաղաղ-նել այդ դեպքը, եմ պապենս վարվել են մեր քերթողները, Բաղրատունու քերթվածը՝ Վալաստան առ խուժաստան ի Մանագկերտն անպայման շատ ավելի բարձր է լուսն Թոմոնյանինը, յուր թափով և ուժգնությամբ, որ առաջանում է սակայն օչ թե նյութից, այլ գորեղ խոսքերից, Բերենք մի մի հասված երկսից ևս:

Գլուխ տարւոյդ հաս նաւասարդ,
Վառենց հայկազն ի զէն ի գորդ.
Հաստահարուստ իբրև բարտի,
Ճօճեա դուէզդ որովէս պարտի:
Թագիդ, բարէ, հեռս գարուն.
Դու յարքայից անց ի պարուն:
Գո երկնաճեմ սար ի Մասիս.
Ահ արկանել ազգաց կոսիս.
Ձի ցնծասցէ քաջն իմ Արամ,
Եւ մանկըտոյն նորուն երամ:
Օ՛ր լիասցին իբրև Շարայ,
Իցի՛ւ աուէզք կանգնեն զԱրայ.
Ձի գող մեղուդ ճուղրիլն բոռ,
Քաղաստ մեղուացն անկցի ի գոռ:
Եւ գօւ ըզթագդ աօցես, Թորգոմ,
Ճանանչ հասցէ չիջեալըդ մոմ.
Դու բարձրասցիս գեղով նոճի,
Որ ի գեղիւս անուշ ճօճի, եմ այլն:

Իսկ Բաղրատունին գրում է.

Ի գալ տմայն մեր նաւասարդ
Ջգեցան աղինք զինուց ըզգորդ,
Բարձրացաւ բախտ մեր գերդ բարտի,
Գունդ թշնամեաց մերոց պարտի.
Իբր տյեհմանց հոյլք ի գարուն
Խայտան Հայաց կոյսք ի պարուն,
Եւ ի բոլորըս քո, Մասիս,
Որ հովանի ոչ պակասիս,
Քունեալ կաքաւ կայթէ Արամ
Որդւովք իւրովք երամ երամ.
Առաւաթիւն գոյ քեզ, Շարայ,
Ձիք Շամիրամ Դեժբախտ Արայ.
Հալածենցան իբրև ըզբոռ
Ի Եռեխ ցասման մարտկացըս գոռ:

Նիստ կեր դմեղըր քո, Թորգոմ,
Ձեռն տատեղաց վառեա ցեղ մոմ:
Ի բաց կացցէ շիրմաց նոճի,
Որ ի մոռենշ տխուր ճոճի: Եվ այլն:

Թոմաճյանի մյուս ստանալորներն են «Ի սուրբ Դաւիթ մարգարէն»,
«Ի հարսանիս մեծաց պայազատաց բարերարաց ազգիս», «Առ ազնուազարմ
պատանի Յ. Գաբրիէն Տատեան», — «որ ուսումնական յաղթանակաւ ար-
քաւնի հրովարտակիւն դարձ տունէր ի Փարիզոյ ի հայրենիս անդր ընդ Վե-
նետիկ անցեալ յայց վանացոյ:— Այս վերնագիրներն արդէն ցույց են տա-
լիս արժեքն այդ բանաստեղծութիւնների, որոնք քառասնական թվական-
ների ծնունդ են: Ավելի աչքի է ընկնում 1843 թվին պրած «Տաղերգու-
թիւն ի մեծն Մխիթար Աբբայ: Հոմերոսի Ոդիսականի թարգմանչին վա-
յել էր այսպէս նմանողությամբ այսպէս սկսել յուր այդ տաղերգը.

Ինձ, երկին, գԱյրն երգեա, որ յազգէ հոգածին
Վերտեսալ հրայացաւ որպէս մարդ երկնային.
Ինքն ողջոյն լուսազգեսց իբր արփի գերակայ,
Եւ զերկրորդն զխաւար փարատեաց Թորգոմայ:
Ինձ դարձեալ վայն ասա. այրն անյանց զի՞ գի
Բազմազէմ լըլկանօք տանջեցաւ յաշխարհի.
Բայց և ճեաղ դիւր ձգեաց ի նորոգ գերդաստան,
Բերկրեցաւ ծնընդովք, բերկրեցի և յապալն:

Սպասում ենք մի նոր Ոդիսականի, բայց բարեբախտաբար կարճ է
կտրոււմ Թոմաճյանը. մի երկու խոսքով նկարագրում է Հայաստան դրախտը,
Ադամ, Ջրհեղեղ, Նոյ, Հայկ:

Ճեռք սորա քաջագունք, որ ի վէպս հրաշտնան.
Ձի թէպէտ փաքոյ յածու, գործ ցացին աննրման:

Եվ ապա Արամին, Տիգրանին ու Վահագնին հիշելուց հետո՝

Մի այլ շատ, իմ քընար, զիմ ըղձաջն յուշ տանր,
Ձի մի երգ քո յապալն ցաւ տեցեա կարեւիւր:

Հայաստանի վիճակը թշվառ է. ամէր այգի, ամէր տունք է նա.

... Հարուածեալ տաւն Հայկալ դիւցադին,
Ա՛հ իսպառ խըրթնացաւ, հետքն անգամ չերկին:

Հայաստանը մի կույրերի աշխարհ է, ուր մարդիկ

Ձեռն ի ծնօտ գերարտօսոյ յորդ հեղուն ի յարկին,
Ձախ յողորմ այր ընդ այր կողկողին, ձի է լոյս.
Այսպէս ազգն իմ նըստեր և անյայտ...
Գու՞թ հարաւ Արարչին. «մինչև ցՅՐը այդ խաւար
Թախճութեամբ պաշարէ զԱրամեանն ըզգաւառն:
Ձախ հնչեաց առառածեան, «Հեպտ լոյս եղիցիս.
Նա եղև լոյս արէի Մբխիթարոյ արփենի:

Մխիթարն ուրեմն է Լայաւատունի լուսավորիչ արեւակը և նրա մնունքները միմյանց հետ մրցում են հայերի մեջ թիմաստից հրազըն վատելու համար.

Ոմն յիմաստ աստուածեան, ոմն ի վարժաւ քնական,
Կէսք յաշխոյժ Պառնասին, կէսք ի գիր հայկաբան,

Այդ ոտանավորն յուր շողախոծ խնդրով, թնայեա թույլ արտահայտութեամբ, ավելի մեծ նշանակութեան ունի քան Մխիթարյան ճերթողների մյուս բազմաթիվ ոտանավորները. սրա մեջ դոնե ազգի լուսավորութեան հոգն է տարվում. Բայց Թոմաճեանը դրանով ոչ մի տոմսձին նշանակութեան չի ստանում մեր բանաստեղծութեան համար, որովհետեւ նրանից առաջ, ինչպես կռեսնենք, ուրիշները նույնն արդեն երգել են ավելի գեղեցիկ և ուժեղ կերպով. Մխիթարյան վարդապետն ուշացել է և նա յուր «Արփենի Մխիթարի» տաղերգութեամբ 1843 թվին, ժխայն թույլ արձագանք է առաջն ուրիշների երգածին և սրբացնում Մխիթարին. Թոմաճեանը ոչ նյութի և ոչ ձևի ստեղծող է, նա չէր կարող ուղղութեան տալ մեր գրականութեանը:

Արսեն Բաղրատունի: Նուշիսկ Արսեն Բաղրատունին (1790—1866), Մխիթարյանների այս համբավյալ ճերթողը, յուր սովորահաւոր տաղերով, կուրիւի է առել՝ «չ մի շարժում չի մտնում մեր բանաստեղծութեան մեջ» Ըս կրկին անգամ համբերութեան ունեցաւ սրա, ինչպես և մյուսների տաղերը ծայրե ծայր կարդալու, շատ տաղեր նույնիսկ կրկին ու կրկին տնգած, և ցավում եմ, որ չգտա արժանի այն գովեստին, որ առիւս են նրան իրենք գինեակեցիք առաջ և այժմ՝ համարելով նրան մեծ բանաստեղծ, առաւելեցի և լատին ճերթողաց տրժանավոր անձն՝ իր լեզվով, մտքով ու սրտով, այնպես որ թէ լոկ ազգային՝ այլ նոր ժամանակաց ընդհանուր ժառանգութեան ասպարեղին մէջ ալ, իրավմամբ և զաւովով նշանավոր տեղ մը կրնա զբաղել: Եղիֆայի ճերթողական և իսկաշնորհ հանճար, վառվռուն միտք և բացարձակութեան, դարդարուն գեղեցիկ լեզու. մը Անկարելի է կարգալ նոյնքը սոխակին, Գանգաւ Պառնասայ և Դաստատան Ապողոնի, Յաղթանակ արգարոց, Դաշտիկն յաւար, ու անոնց նման տաղերը և շխտտովանիլ թէ ասանք արտադրողը սովորական զուր և հանճար մըն է ու նախնի ճերթվածոց այնտեղի՞ն ու եւանդով կըթված միտք:

Բայց դժբախտաբար այսպես չէ. Արդար և Բաղրատունին անխոնջ պտրտալով մարդ է եղել, լավ իմացել է մեր գրաւարը և հին ու նոր օտար լեզուներ. շատ կարգացել է Աստվածաշունչ, ինչպես և Հոմերոս և ուրիշ դրոցադներգութեաններ, մեր հին ժառանգութեանը. ուսումնասիրել է առաւ բանաստեղծութեաններ, որոնցից և թարգմանել է բավական բան. նա արագորել է ինքնուրույն շատ բան,—բայց այս ամենով հանգերմ նա մեր գրականութեան համար ծառայել է ոչ յուր ինքնուրույն բանաստեղծութեամբ. Նո է՝ և կեան իրըն թարգմանիչ, հայկաբան, ճերականութեան գրող. Իսկ իրըն բանաստեղծ ոչ միայն արժանի չէ այն գովեստին, որ առիւս են նրան, այլ և չի կարող յուր ժամանակի առաջնակարգ հայ բանաստեղծների շարքը գտնվելու նա առաջին տեղն է բռնում միայն Մխիթա-

վորյալ են աշատեղ. և Հովատքը պատմիրոււմ է գրանց զնալ Բարձրյալի մոտ և հորցնել թե արդոք մտնում ծնվածը նմ է, որ պիտի գաւ Նվ ահա այդ արտասուքն ու մողթանքները սեպղեպատ խորով, թեքը բաց են առնւմ, զլիւթկոր, աչքերը խոնարհած հասնում են Ոլիմպոս, պատում են Միլեոնեփառի բարձր դահլ, լաց ու կոծով փարում են նրա ծնկներին և առւմ նրան ինչ որ պատմիրել էր Հովատքը:

Խանարեհաց բարձրեալն ի վերին գահուն զօնկն իւր անմուտր
Անժըպիտ դիմք զաղերսըն լսել, սակայն հեզարար:
Աւ ապա ի վեր ըզգլուխ իւր անեղ և զուլուն կամար,
Ի շարժել յօնից սասանեալ դողաց Ոլիմպեայ կատար:
Եւ ո՞ հանգստէր ի լուր պատգամաց յեզունն ազդարար.
Հայեցաւ յերկիր, ձախ ետ որստման ի սոյն յայս աիդար:

Ճիշտ ինչպես ամպրոպային Զևսը Ոլիմպոսի զլիւին. Նա Հովատքի դեսպաններին բացառում է թե նորածինն յուր որդին է և ապա կանչելով հրեշտակների բանակը՝ հրամայում է, որ զնան պաշտեն յուր որդուն.

Եւ ընդ բարբառոյն որսաաց երկին շանթից ի փայլակ,
Հօգւոց անմահից ծառանեալ յերեք սաստիկն բունակ,
Եւ երկրպագեալ տէրունեան օտից զընան յանդաստակ,
Գլուխ օսկեվարս լուսաթե թըւչին արի պատանեակը:

Հրեշտակներն իմաց են առլիս և հովիկներին, որոնք նույնպես գալիս են երկրպագելու նորածին արքային:

Այս միևնույն նյութը, ինչպես և մոգերի երկրպագության մասին քերթվածը՝ ա՛յ յայտնութիւն Տեսա՛ն Նա վերածած ունի նաև բեմական ձևի, բաժանված չորս փոքրիկ տարվածների. երեք Միլիթարյանների աշակերտական թաւորոնում խաղալու համար: Դրանք առաջին հայ օրատորիաներն են, կրոնական թաւորերգություններ, որոնց ներկայացման համար առանձին բեմական հարմարություն չի պահանջվում: Բազմատունին այստեղ էլ ներշնչված է անշուշտ Մետաստազիոյից, որը նույնպես ունի բովանդատ թվով օրատորիաներ: Գործողությունը իհարկէ շատ պարզ է, չկա դրամատիկական զարգացում և ոչ բնավորությունների ուսումնասիրություն. դրանց, ինչպես պետք էր, փոխանակում է կրոնական-բարոյական աշխարհայեցողությունը, որով երեք մոգերի տեղ հանդես են գալիս անձնավորյալ Հովատք, Հուլյա և Սեւ, և ապա իշխում է աստվածային հրաշխիքն ու սքանչողութիւնը՝ ազգ հրաշխիքի վրա: Բայց դժբախտաբար սառն է հնչում Բագրատունու քնարերգությունը, և ժանապանդ միջի երգերը չունին այն ցնծագին խանդավառ հափշտակությունը, որ անհրաժեշտ է:

Ինչպես էլ լինի, Բագրատունին յուր այս կրոնական դրամաներով մի մեծ նորություն է մտցնում մեր զրականության մեջ, մի բոլորովին նոր տեսակ, որ մինչ այդ զոյություն չի ունեցել մեղսում: Արդարեւ, ինչպես տեսանք, Զախնախյանի և Թոմաեյանի ոտանավորների մեջ հիշվում են 1789, 1803 և 1804 թվերի համար «Միլիթարյանց թատր», կամ «Թատե-

բական ողբերգութիւնն, բայց Բագրատունու այս օրոտորիաները, զբոված 1812 և 1813 թվերին, ինձ ծանոթ հնագույն զբովածներն են իրենց դրամատիկական ձևով, թեպետև քառասուն տարի հետո միայն հրատարակված, ուստի և ոչ մի ազդեցութիւն չթողած մեր գրականութեան վրա:

Բագրատունու Վերսնական տաղերը պէտք է հասկանալ կրօնավորների և կրօնավորութեան վերաբերյալ, Դրանք նվիրված են նորընծա կրօնավորչայններին, այս կամ այն ձևով հեռանալով յայն, որ կամ նրա սքեմ ընդունելուն, նորընծա բարեկամների առաջին պատուրդին, Մխիթարյան Աթոռակալին ընտրութեանը, ռժմանը և այլն.— բոլորն էլ ըստ ավելի պատշաճի հորինված ոտանավորներ. Մխիթարյան ընտանիքի մեջ տեղի ունեցող դեպքերին հանդիսավորութեան տալու համար: Տաղերիս նյութից հենց կտրելի է գուշակել, թե ինչպիսի գաղափար պիտի արժեքավի դրանց մեջ: Դա հոգու և մարմնի, երկնքի և երկրի միջնադրոյան կոիֆն է: Պետք է կովել ոչխարի բռնակով սիրո դեմ, որ մարդուս հոգին շղթայակալ, ճշուն է դեպի խավար անդունդը. պետք է հաղթել այդ կորստաբեր սերին և մաշեցնել սատանային, որ մարդուս թշնամին է: Եվ այդ նորընծա կրօնավորողները, նորոգվելով անունով ու գործով, իբր քաջ զինվորներ մարտնչում են չար թշնամի հրեղեն սպառազենների դեմ. և այդ նրանք կարողանում են տանել, որովհետև կատարելով ամենամեծ գործը, այսինքն իրենք իրենց ինքնակամ նվիրելով Աստուծուն իբրև զօր, գաղնում են հրեղեն հրեյտակներ և սարգենի պսակներով ոլանում են դեպի երկինք. մտնում փրկչի տունը՝ երկնային կամարը, որ հովիտյան պիտի ապրեն: Վրոնավորը նման է փյունիկի, որ ինքն իրեն ողջակեցելով՝ հրաշալի կերպով կրկին նորոգվում է հովիտնեկուն կյանքի համար:

Այս է ահա այդ կրօնական տաղերի նյութը, որ անհրաժեշտորեն շարունակ հեղեղում է քերթողը, քանի որ բոլորը միանման դեպքերից առթված բաներ են: Դա մի շատ հին նյութ է, որ շատ ավելի գեղեցիկ կերպով երգել է Գովհատա կաթուղիկոսը՝ Հոփսիմյանց մի Անձինքի մեջ, որի խորութիւնն էլ չունին Բագրատունու այս տաղերը: Հոփսիմյանք իրենց նվիրելով Թրիստոսի սիրուն՝ դառնում են Հայաստանի փրկութեան պատճառ. բայց և մեր բանաստեղծն անկեղծ սրտով ուրախանում է յուր նորընծաների ձեռնագրութիւնների համար, ուրախանում է նրա կարծիքով և «հարսն անարատ Հայաստան», որովհետև

Արդէն սուրբն սանդարամետք ի խաւար,
Նխած զմասն տրին աղածք Բելիար,
Զի յաջորդէ Յեսու զՄովսէս յամս յամայր
Քակել զամուրս, թափել ժանիսն ընդ աւար:

Աթոռակալին նվիրված քերթվածների մեջ մեր քերթողը մեծ թեթևութեամբ չափազանցութեան մեջ է ընկնում, ուժգին տողերով զովելով նրան իբրև Աստուծու ընտրածի, և գուռ մխիթարյան տեղական դեպքը խոշորացնելով իբրև մի համադրային բան.

Զարթիր, զարթիր, տուն Սիսակայ, զարթո՛ւ և տար նուագածու-
Հայրենի մեր աշխարհին սուրբ թագաւոր զձաւ իշխան,
Առէ՛ք տաւիդ կընդընդոց փող և բաժրիւրն Գողթան,
Գողթան շրոինգն յարուսցէ զբլուրս և զանտառ
Յսողթող երգոց ձայնիւ զոչնչ մըրցական
Ըզրաշարժ միտս իմաստնոյն՝ ըզսիրան ի տէր սիրոյն ի վառ:

Այդ նոր առաջնորդը, թագաւորը, որ հաղկւյսլ կոչուած ունի Վի-
տապեա Սիւնեաց, է մի արեգակ, որին երկուս է ախեղերը, որովհետեւ
նա ձմեռվա կապանքը քանդուած է և այլն:

Ո՞վ է սա նոր արքայ եկեալ ի Սիւնիս,
Մեծաւք լեւանցըն Սիսակայ հարցանեն:
Ընտրեալն է դա եթերին նորապրակ տէր երկրիս,
Գայ ի պարտեզ քո սիրելի շունչ հարաւայ ի հրախոս:
Հոյլ վարդից և շուշանաց և համապարտ ցիր նըկարէն
Փըթթեանդ տախտ տէրունեան զարչապարտց լուսեղէն:

Ահա թե ինչպէս բարձրացնել զիտե Բաղրաստունու Մուսան յուր մե-
ծավորին, եվ ինչի՞ համար, որովհետեւ

Յաւուրց Մուշեայ պակասեցին հարց որդւոց,
Գակասեցին ի տուն Հայկայ պետք հարանց,
Մինչև յարեաւ Մըխիթար, մինչև յարեաւ զէտն Ալունց,
Որ այդ յերկնից պատգամէն յատեալ ի մեր յոյժ լալունս,
Զի՞ յամէ մեզ, ասէին, աթոռակալ ժառանգ մանկանց:

Եվ այժմ այդ ուղեցած աթոռակալն ընտրվում և սեղան է:

Միտթարյանց այս սովորութիւնը, որ կարծեմ է. Պոլսից է ծագել,
անցնում է հոս է. Պոլսի վրայով Հայոց եկեղեցու մեջ և երկուր ժամանակ,
կարելի է տեսլ մինչև մի տասն ու հինգ տարի տառջ, էջմիածնում և օ
պարտք էին համարում գրաբար ճոճուան ստանալուր ուղեբձնեղով շնորհա-
վորել կաթողիկոսի գալուտար, զծուճը, նոր տարին և այլն: Իբրեւ ճառ-
րեքգութիւն չեն հարկավ, այլ միայն մտածված հանգիստ ու ուրախ, որոնց
մեջ սակավութիւլ տղերք միայն ունին զպացմունքի շնչոտ: Դրանց կտառ-
րելուտիղը կարելի է համարել ահա Բաղրաստունու այս ջերթվածները,
որոնց մեջ փայլուն արտաքին, զարգարուն լեղու, փարթած ասացվածներ՝
արքան ասես՝ կտ, բայց ի զուր կլինի որոնել զպացմունքի ուսեղութիւն,
եթե չասեմ զպացմունք. իսկ իմաստ ու զաղափարի նկատմամբ զատարկու-
թիւն է իշխում:

Նույնպիսի չնչնութիւն են ներկայացնում զաղափարներով և ճառ-
րայական տաղերը: Աշխարհումս խաղաղ կյանք տառնը չկա, այլ միայն
ցավ ու աղետ, թախիծ ու տաղնաղ.

Գանձեալ կան ջեզ աղէտը ցաւոց դարան,
Սրտի ժառց երեքուկան

Բնայորդոր ձմեռն ալեաց խաւածն
Փոթորկայոյց ծով դառնութեան:

Այխարհս մի ծով է և մարդս նրա վրա մի նավ, որ լիքների ձեռին
խաղալիք է դորմած, դիվաշունչ հոգմբ առնում առնում է դեպի նավարե-
կություն,—մի հին գաղափար և նույնիսկ նմանություն, որ սակայն Բազ-
բառունին մանրամասնության մեջ նորոգում է: Նույնպիսի մի նորոգած
ձեռով երգում է նա վերջին դառաստանը, որ մեր հին բանաստեղծների
սիրած առարկան է եղել և որի ժամանակ երեսւմ է որ վերջին հաղորդ-
թյունը ոչ թե անօրինն ունի, այլ արդարը:

Բազբառունուս ճկնցադակնս կոչած առգեբը, որոնք թվով ամենից
շաան են և լի գովեստի արժանացած, նյութով շատ ավելի բարձր չեն:
Դրանք ժառամբ ուղղված են յուր ընկերներին. մեկի մեջ յուր սերն է
հայտնում, մյուսի մեջ յուր շնորհակալությունը ստացած պարգևի համար.
կամ թե լացով ճանապարհ դնում յուր ընկերին. մի չորրորդի մեջ դան-
գաւովում, որ յուր սրտի հասար ընկերն իրեն նման է չի գրում: Կան և
կազանդի շնորհավորություններ իրենց հոգեւոր թիրոջը կամ Ան կարգա-
կիցն ճանապարհորդ ի Լնչիկէս հաւաքողի բազմից, իսկ թե ինչ է այդ
օգուտը՝ չի իմացվում. այդ կարգակիցն արիւթթյամբ ծովեր է անցնում,
որտեւ ունենալով ազգի սերը:

Հայկ կառաւոյց հայրենեաց

Զքեզ որդի դաւանեաց.

Պարթևն արթուն և ցանկալին քո Ուսուկ.

Միխթորայ գորավարձ՝ քեզ հարկանեն փողոց հըռակ.

Տես արգէն, աես ի տըխուր դէմս հայրենեաց

Քաղցր շողեւ ըղժըպիտ որդեգորով քո գըգաւանաց:

Կան և ուղերձներ նվիրված Աղեքսանդր Ռաֆայել Դարամյանին՝ նրա
գալուստը կամ ծնունդը շնորհավորելու համար, որովհետեւ նա գլորոց է
բացել: Մի ճերթված Ռուսաց Աղեքսանդր Բ. կայսեր այցելության առթիվ.
ուրիշները Լեոն ԺԲ պապի Ուրբանյան գլորոցի սաների հետ ճաշկերույթի
առթիվ, և այլն: Եվ վերջապես բոնահանգ խաղեր Զախլախյանի հետ, և
հազդին թվով ոտանավորներ նվիրված Տյուպան ընտանիքի որևէ դուս-
տանանկան գեղջի, ինչպես ծնվում է մի երեխա, պետք է ոտանավոր գրել.
մեռնում է մեկը՝ դարձյալ ոտանավոր է հարկավոր. հիվանդությունից
առողջանում է մի ուրիշը՝ ինչպէս կորելի է ոտանավորով խնդակցություն
չհայտնել. հաղա երբ հարսանիք է լինում, իհարկե պետք է հարսին գո-
վել... Բազբառունին այդ բազմաթիվ առգերի մեջ դառնում է Տյուպան-
ների ասնու քհրթրդը, և յուր՝ նրանցից վայելած բարեքների համար
գրաբար հանգերով ու ուղերձով վարձակառուսաց է լինում: Դրանք գրչի
վարձություններ են միայն երբեմն ձեռք ու երկար տողերով, և սահմանված
են միայն մասնավոր մարդկանց սրտերը շախելու համար:

Նրա ճկնցադակն առգերի մեջ շատ գովում են Քաղաքիկն յաւար,
կեղեք մշակի, որ մի ութվանկանի զուգահանգ ոտանավոր է մեծավերջ

և չափի պատճառով հենց աշխուժ եռանդով է ընթանում։ Բովանդակութ-
յունը մի շատ հասարակ բան է։ Երիտասարդ որդին ձերուներ հոր հետ,
բախից հախճճած, դախս բնակվում են բնությամբ հաջուտ մի մայրի
դաշտում։ Մշակում են։ Հինգերորդ տարվա վերջը մշակությունը ապրիս է
յուր արգունավետ պտուղը։ Այդ մասունակ հայրը մեռնում է, և որդին
մեն անակ է մնում ու ստում է։

Այն ինչ արդարն յինէն դնաց,
վհեն յաթերէ զմնզս իմ յիշեաց.
Յիւրմէ դընդէն ես տաղատակ
Առնուլ վրէժ տրագ տրագ:

Իսկ թե ինչ է արել որդին, ինչ մեղք է գործել նա, որի համար
Աստված վրեժ է առնում, հայտնի չէ այդ։ Անշուշտ մի մեղք գործել է,
որ տաղատակավորները երեք կողմից վրա են ապրիս, ազերում են արա ու
այգին, արքում երկրին և իրեն մշակին էլ ճաննակ զանիս ու ի քարշ ընդ
երկրում վարեն զիս զարչն։ Եվ նա այնուհետև մի միթթարություն ու-
նի,—էիշելով յուր անցյալ աշխատեցը ողբուլ։

Նախարանն այնպես է, որ մարդ սպասում է մի դառնագին զորեղ
ողբի, մի զգացմունքների բուռն դեղման։

Մեղսմանէ, հար ինձ քընար
Երգել ձայնիս ողբերգութար...
Լացցեն նուազ լերանց փաղաբը,
Մըւընյեսցեն ձարք և անառք.
Երեսք մարգաց հարցնն դուռնկ,
Արասը հեղցնն սողեալ տուռք.
Ետեքմահարանց պար գեղեցիկ
Ձեռն ի ձեռքի նըստցիկ լըռիկ.
Ձի մեր դաշտիկն յաւար եղև,
Յոյս վաստակոցս ել ի գերն:

Բայց այդ նյութն ազնիվ վիպական-նկարագրական է քան քնարական։
Բնության նկարագրները շատ ընդհանուր են և ամեն անգի. մշակություն
և ազերմունքի նկարագրերը նույնիսկ համալսած չէ տարված, և վերջը բա-
նասանգի թափը թուլանում է և ստուն է հնչում այն մասը, երբ հեծեծա-
գին ողբը պիտի լիներ։ Գուցե կարելի է այլաբանություն համարել այս
քերթվածը և Հյուսսասանի պատկերը տեսնել մեջը, բայց այդ կրիներ ձգ-
վողված բացատրություն։

Նյութով շատ ազնիվ ստոր բան է և մյուս զովված քերթվածը ըն-
ման ուղեակրի եզերք հովուի, սրի գեղեցիկ մասը հենց սկզբն է։

Այլք գեղեցիկ ցողագին
Լացէք զմահ սոխակին,
Վա՛յ և եղճեկ ինձ հիքիս,
Սուգ և ի յիմ սիրելիս.

Զամենեսին մի խառար
 Դընէ յարասը աշտաղար:
 Մի գիւս, մի գիւս ըսփոփէք:
 Մի գիւս սըրահիդ տայք երբէք:
 Զի սէր սոխակն իմ լըսեաց
 Ման իմ սիրուն երգասաց,
 Զի սէր հաւիկն իմ ժեռու
 Ման իմ սիրուն աշտարասաւ:
 Նըզով ի սև օրն և ժամ
 Յոր գիւր տարմին լիք երամ,
 Օրն և աեղին սև նըզով՝
 Ուր աեօի գնա մոռ երգով:

Եվ այս բոլորն ինչձե համար: Մի արեւելցի հովիվ մի անգամ սրինգ է փչում: Լսում է մի սոխակ նրա նվագը, մտանում է և ինքն էլ երգում է: Հովիվի խնդրի վրա այդ սոխակը նախ նստում է նրա ուսին, և ապա

Անդուստ աճեալ ըղթներն
 Ի ծայր սրնդիս գայր նըսաէր:
 Նլիալ և իմ մեղմաքայլ,
 Երգ փոխելով այլ և այլ
 Եկի 'ւ ի տուն իմ մըտի:

Հովիվի կինը սրնդի ծայրից ընդունում է սոխակին, փոփոխելով զնում է վանդակում, ուր երգելով նա զվարճացնում է հովիվին և յուր ընտանիքին:

Սակայն ի սեաւ մանգաղէ
 Ժպիրհ մահուն մի ապրէ:

Մի ամառ այդ սոխակը սասկում է և կարծես ոչխարը կործանվում է. կարծես այդ սոխակից էր կտրված այ միտան հովիվի, այլև աշխարհի բախտը: Եվ ողբում է ու ողբում հովիվը ու չի մխիթարվում:

Ո՛հ, մի ստիպէք երկարել,
 Օրրա ոչ բերէ զրախ թիւր...
 Ոչ բըմընի սըրահիս խոց...

Եվ այսպես մոռ երկու հարյուր տողանի մի ահագին քերթված, որի մեջ այլաբանություն էլ կարելի չէ լինում տեսնել, ուստի և ծաղրական մի բան է պատնում յուր մեծափայլուն լրջությամբը: Մաղրելի է դառնում մտնովանդ և նրանով, որ արեւելցի հովիվի բերանից լսում ենք՝ Ամինդաւ, Անակահոն, Տիրուլ, Որփեսոս, Ոսիան, Բարդ, Պառնթոս, Առյուծ լիբյան, Հիմալայք և այլն, և այլն: Եթե կլասիկական կյանքից առած ոտանավորներն ձեռք ինչպես չի մահն հիսարուս, կորդուս ենք ժողովուրդը տրիսյան, դիք և կամ դից անուններ, այդ հասկանալի է, որովհետեւ նյութն է պատհանում այդ: Բայց երբ մի արեւելցի հովիվ է ալապիսի անուններ արտասա-

նուստ և կամ նույն ինքը Բագրատունին մի ժամանակ մի վարդապետ, այդ արդեն տաղտկալի է:

Եվ Բագրատունու ամենամեծ ձառնաթուղթը մեր գրականության համար՝ այն է, որ նա այդ կեղծիքը՝ կեղծ դասական ուղղութիւնը մտցրել է մեր բանաստեղծության մեջ, Կրթված լինելով կլասիկական գրականության վրա, նա հարծում է թե աստվածները կամ դից աստվածները, որ հիշում են հին բանաստեղծները, մի բանաստեղծական պատճառք են միայն և այդ պատճառքը կարելի է և հայ կյանքի քերթվածների մեջ գործածել, նրա համար գրեթե չկա Աստված, այլ աստվածք, դիք, անմահք, Եվ այդ անմահները մի քանի քերթվածների մեջ վխտում են՝ Մուսա, Մեղրումեն, Պոլիմիա, Մենսուխեն, Պրգաս, Արամազդ, Աղոդոն, Պրմալայք, Փայթոն, Փիրոս, Արես, Պոսիդոն և այլն և այլն: Նույնպես Հելլենոս, Պրնդոս, Պառնաս և այլն և այլն: Դրանից հետո բազմաթիվ ակնարկութուններ հին կլասիկական առասպելների, Ընթերցողն անպայման պետք է ձեռի տակ ունենա մի նոտա՝ անունների ցուցարան, ապա թե ո՞ր բան չի նախանշել Բագրատունու լավագույն համարված քերթվածներից: Որովհետև, օրինակ ի՞նչ կհասկանա մարդ առանց բառարանի հետևյալ երկտողից՝

Մեզ տիտոնեան հարսն սիրած
Պարզէ զգլխով վրան ներկած:

Բառարանը միայն մեզ տեղեկացնում է, որ Տիտոն եղել է Տրոյացի իշխան, Պրիամոս թագավորի եղբայրը, օրին իր գեղեցկության պատճառով սիրում է Արքաուլայք, Ալլուրան, և անմահացնում նրան: Ճիտոնեան սիրած հարսն ուրեմն արքաուլայքն է, և փոխանակ պարզաբար տեսլու թե մեզ արքաուլայքն զգլխով պարզէ վրան ներկած, Բագրատունին վերի տողերն է կազմում: Զառնախանն յուր լավագույն քերթվածի մեջ, «Մուսայն առ Արամեան քերթողն», գրում է հետևյալը.

Բառք անապակ՝ որդէ ուսոյց նա ձեր Թարգոմ,
Բայց ոչ մուսոյց՝ մինչ լազանի լապտեր և մամ,
Կամ ի Տարոն չուել պանդուխտ կամ ի Դըւին,
Մեռելահարց՝ զի՞նչ այն բառից մեզ միտք թըւին:

Բագրատունու քերթվածները հազմապատկերում են մեզ այդ միջոցներին դիմելի վրա՝ ինչ պատճառով թեպետ և քանի քանի անգամ կարգացի նրա գոված Ան դանդառ Պառնասեան և դատաստան Աղոդոնին տողը, որի մեջ քառասուն-հիսունից ավելի դիցաբանական անուններ միայն կան,—բայց շատ քիչ բան հասկացաւ: «Աղապտեր և ժոռ» էլ վառնցի, բայց դարձյալ զո՞ր չեղաւ թե ի՞նչ կատարելապես ըմբռնել եմ այդ քերթվածի միտքը: Այն, իմացու, որ Առանք, այսինքն բանաստեղծ Բագրատունին, իրեն երևակայում է եզրիվ Բյուրակնյան լեռներում, յուր առաջավարում հաշում է զմայլելով բնութայն գեղեցկութանը: Այդ ժամանակ հանկարծ վերելից տեսնում է ի՞նչուս են

Կառքս կրկին երկամի ջառագուղով անուագործ,
Ութսուանի երկվարք ի զիւ գուղով քշափորն:

Այսինքն երկու, ոտանավորով գրած նամակներ է ստանում, որ և
առիթ են լինում այս ճերթվածը գրելու, — սասած է ծանոթության մեջ, թե
չէ ընթերցողն ինքը չէր հասկանալ: Եվ ապա դժվարաբանում եմ ասել որոշ
բան, բայց եթե այն, որ հեղինակը մեծ տենչանք ունի մեծ բանասանդ
դառնալու սրածն Պիգասի վրա նստած՝ Պինդոս բարձրանալու և մեծ բա-
նասանդանների հետ անմահության մահով մեռնելու: Բայց չէ՞ք սէք Կամե-
նայց, ուր, յանաբունչ իմ գրուինս. սակաւ բնատուր վեհ ոգի՝ աստուածա-
սանդն մեծութիւնս, ասում է ճերթողը: «Գարք Մուսայից հայկազանց փո-
խեան ի զոգ Աղբիոյ», այսինքն Վիննակի Միթիթարյան վանքը. բայց աղ-
տեղ էլ նրանք բանասանդանության համար պահանջված հարժարությունը,
հանգիստն ու պարագը չունին: Իսկ Հայաստանը հո բնով հարժարություն
չունի բանասանդաններ ճննցնելու համար. բայց մի ժամանակ այդպես չէ
եղել, մեր բուն երկրում էլ մի ժամանակ մուսանները զվարճացել են:

Ինչքան այս ճերթվածի մեջը մուծ և դանդաղ է, այնքան վերջին մասը
կենդանի է և գեղեցիկ, որովհետև խոսում է իրական կյանքը, սիրտը: Բա-
նասանդանը մաքուր պնդում է Հայաստան, բայց ինքն օտար աշխարհում է,
որ նման չէ յուր երևակայած եղբայրին:

Եւ դառն ողբաց յիշատակ. ով ցանկալի հայրենիք,
Անդ էր երբեմն հեշտասուն ջո Մուսայից ճանիւղէ...
Բիւրաւն ի ձեր ծաղկադառարճ բիւր խոթովիւք բարհամ
Խալապ ի բոյլն հոտից. հաղար երէ խուռներսմ.
Փրչէ հովուիկ նուրբ սըրինգ, հօտք ըղկընի իւր գըրղին,
Նօսի գողարիկ օրիսըգ. կըթէ զրստինքս նոցին:
Հոյլ վըտակին կարկաշոտ, անդ Երասխայ քաբալէժ
Եւ ձիածան ի ցընցուզսն՝ հերքել սաստիցն ըղվըրէժ...
Երկինք շերին կապուտակ՝ ամպք ոսկեփայլ շուրջ ի խիտ,
Շաղն ի ցօղել յախկան ի ձոց երկրին մարգարիտ...
Անդ է հոգւով իմ Մուսայն, սակայն մարմնով աստ պանդուխտ
Ի խորշ նըստի Աղբիոյ հեղախիւր ձովուց ի ճերցն ուխտ...:

Պերթվածի այս գեղեցիկ վերջը, որ և մերոջը չբերեցի, որից կար-
ծես ազդվում է Գամառ Պաթիպան յուր ժամ առիակինս երգը երգելիս, — զոնե
նմանություն կա, — է և միակ հայրենասիրական արատհայտությունը Բագ-
րատունու ճերթվածների մեջ: Այս, ուրիշ ղեղքեբում էլ հիշում է նա Հայաս-
տանի անուաններ, բայց հայրենիքը հեռվից մշուշով պատած է երևում նրան.
հայրենիքը և հայրենի հիշատակությունները երգի նյութ չեն դառնում, այլ
միայն իբրև մի արտաքին ձև օգնում են նրան, ճիշտ ինչպես և հունական
աստվածների, աշխարհագրական անգերի տնուններն և նրանց աստաճիւ-
ններն ու գրույցները:

Մի կողմ թողնելով մի քանի պատմական անձերի վրա տալերը, ինչ-
պես և լաթափականն րոնտհանգերն թի հերիսայնս, լաւէ՞ք ի ճանճս, որոնց

մասին խոսել չարժեք, — տեսնում եմ, որ Բաղդադում ևս բռնադատվել է թուրք-
նեբի նյութը մեծ անարդարությանը ևս։ Նա ազդած է եղել
մեծերով և նրա մեջքին ու արամադրվել է ընդհանրապես պրոպա-
գանդին։

Ինչո՞ք մեջ է ուերեմ Զեքթող Բագրատունու արժանիքը, երկու բանի մեջ, նախ՝ նա բնությալն սիրող է, դիտե զգու և նկարագրել բնությունը. և ապա՝ նա հասարակ ու զորգայիկ Նյութերն ևս հարուստ ու ճոխ լեզվով արասահայտելի գիտե և արել է տան Բագրատունին առաջիններից է, իսկակե ժամանակով, մեր նոր զրկանության մեջ, որ ձորողանում է իսկական բնությունալի, լինի՝ այդ ընդհանրակ նկարագրերնեով, թե կորճ պատկերների ու նշանակությունների մեջ.

Երփնելու ծաղկանց դաշտս և հովիտս
Վէտս վէտս խաղալ ձիծաղաթիւս.
Ներկարակերպ բուսոց կանաչ
Հիւսկէն օթոց սրբփոխ ընդ առանջ.
Բացեալ մարմանկէ զերբանաց զծոց
Գըգուեն դալգիս սիրեալ տնկոց.
Աղբերականց պարզիւ խոռոշ
Գոյէ՛ նզ ձործոր լերանց խոստջ.
Հեղիկ ի մարզ սողակն ընդ դար
Հաղիս կըջնն ըզզից դաւալու.
Բացաւ լերանց զեղցկադիր
Ոսկնգօտիք փայլեն ի ձիր.
Հաւերք մայրեաց խրոխտ յեթեք
Ընդ սոսաւին շարժին ըստուեր.
Պարզ և յըստակ օդ քաղցրութից
Բուրեն վարդից հառ տանուշիկ.
Մեզ Տիտոնեան հաբսըն սիրած
Պարզէ զզըլխով վըրսն ներկած
Անկտըռուսն վըրգապըստակ
Ընդ աշտուրն և ընդ երեսակ.
Շուրջնալոյս յայնց կնիքք
Հայլ հոյլ սակի սփռին իւր հերքք:

Բերեմ յի արիւնակ էլ նմանութեանն երից.

Որպէս նախ քան որ
 Ի ծախք երկմիտ աստուծոյն
 Ի խիստ հոգմոց գուշարած,
 Մինչ ուժեղանալոյն տնկասկած
 Ոստեալ վարէ ի Հանգրէն.
 Եւ կամ զօրէն եփրատէս
 Վարանալ զօր թմեռեալ
 Պանծալ զոյժ ամենի

Թուրք և կամուրջ և մայրի՝
Ըզրնուս ի մի տառ նույնալ...

Երբեմն նմանութունները համեմական ձևով ախպես ընդարձակ-
վում են, որ ինքնուրույն բնավորութուն են ստանում և մարդ գրավելով
նկարագրած տեսարանից՝ մոռանում է նույնիսկ երգի բուն նյութը։ Այս
ազդեցութուն է անշուշտ յուր ընթերցանության։ Ինչպես պատմում են,
Իլիականը նա բերան տեսիլի է եղել, Բայց ընդհանուր առմամբ Բագրա-
տունու տաղերի մեջ ավելի ճարտասանութուն կա քան բանաստեղծութուն։
ավելի սովորովի է, արվեստ ունի, քան ինքնաբուխ ստեղծագործութուն ե
զգացում։ Ուստի նրա նկարեն ու պերճ ուր յուր բոլոր սեթենթանքով հան-
դերձ՝ միակերպ է։ Համարյալ է յուր գիծաձևերով, պարզ-զուր Նվազներով
և այլն։ Նա ոչ միայն իշխան է լիզվի, այլև ստանալով, միանման հաջա-
գությամբ նրա գրչի թուփից դուրս են դալիս և՛ կարև, սրընթաց տողեր,
և՛ դանդաղ, ծանր ու մեծավայելուչ ասացվածներ երկար տողերով։ Հիշա-
րուր (նյութներն ու վաճիթը, երաժշտական շնչաբն ու հանգիստ բերե-
նափշտակում են ընթերցողին) Բայց ավագ, այդ ամենն ապարդյուն են
անցնում, որովհետև տաղերն արտաքին գեղեցկության [համեմատ] չունեն
ներքին հարստութուն, և մարդ հոգում, նույնիսկ ուստապառ է լինում։
Երբ կարդում է մի չնչին միաց լանվերջ երկարությամբ դարգացրած, մա-
նավանդ երբ հաճախ այդ չնչին միացն են բառերի և խոսքերի հեղեղի մեջ
կարչում է։ Մարդ զգում է շարունակ, որ մի սնամեջ քերթողության հետ
զործ ունի։ Իսկ այդ բավական է ամենայն բանաստեղծութուն մեղցնելու
համար։

Ով այս ամենն առաջանում է նրանից, որ Բագրատունին քնարական
բանաստեղծ չէ, քնարական ոչինչ չունի, բայց և այնպես նա յուր զեղե-
ցիկ հասակը կարգնում է քնարերգութուն անելով։ Նա աղիցադանց մար-
դարէ՛ն է, ինչպես ինքն իրեն անվանում է մի տեղ, ծնված և զիպական
բանաստեղծ և առանձնապիս զուցազնեղու լինելու։ Ով 1830 թվից հետո
նա այդ զգում է և ինքն իրեն նվիրում է միայն յուր «Հայկ գիւց-գիւնի»
դարձնելով այլևս քնարական քերթվածներ հորինելուց, և եթե դարձյալ
գրում է բավականաչափ մեծ ու փոքր քերթվածներ, դրանք, այսպես
ասած, ի պաշտոնն չլինված բաներ են, գրեթե ըլլորը նվիրված Տյուգյան
ընտանիքին։

Բագրատունու բանաստեղծության դարգագումը իհարկե «Հայկ գիւ-
ցադնի» մեջ է։ Բայց ես այդ քերթվածն յուր ժամանակին առանձին կառ-
նեմ, որովհետև դա ծնունդ է սեր 19-րդ դարու բանաստեղծության ոչ թե
առաջին, այլ երկրորդ երևանամյակի։

Գրիգոր Փեշտումյանը։— Ինճիբյանի ու Գալաթալյանի ժամա-
նակակից է Գրիգոր Փեշտումյանը († 1837), որի բանաստեղծութունը
զուտ կրոնական է։ Կենսագրութունն ինձ հայտնի չէ։ Սեղ է բնակվում
պատուելի վարժապետ Կ. Պոլսում, — և այս բանն էլ բավական է իբրեւ
վարժապետ հորինած ունի դասագրքեր՝ Բերականութուն (Կ. Պոլս
1829), Տրամաբանութուն (Երուսաղեմ 1854), Լուսաշարիդ, զոր է բացա-

արութիւն Նիկիթեան հանգանակին (Վ. Պ. 1848) և նու խիսկ Բաղդադ շաղկապեալ լիզուի, ունի և մի բանաստեղծական երկ *Եփիմառնութիւն* (Վ. Պ. 1848)։ Մահից հետո կառարժած այս ապագրութիւնները ցույց են տալիս, որ նա հարգանք ու հեղինակութիւն է վայելել յաւր աշակերտների մեջ, և խնայեալ մեծ անուն է ունեցել Փնշտիմալճյանը Գերմանացի բաղադական քարոզիչները մինչև այժմ մեծ գովեստով են խոսում նրա մասին՝ անվանելով նրան *հայ Սրապմա*,¹ որ իբր խնայեալ բաղադականութան է պարտէ եղել, ծածուկ մասնակցել է նրանց ժողովների և իբր մինչև ժառը համաարիւմ բարեկամ է եղել Ազիտարանական եկեղեցւոյ, Թեպետև երբեք արիութիւն չի ունեցել հրադարակով ինքն իրեն բողոքական խոստովանելու։—Այդ պատմութիւնը ցույց է տալիս միայն, որ Փնշտիմալճյան պատկերին քարացած մարդ չի եղել։ Հետաքրքրվել է Հայոց եկեղեցւոց զոհու հոգած բաներով, եկեղեցական վերանորոգութիւն խնդրով և շատ հետու է եղել յայր մամանակակիցների հալածախրական ոգւոց։ Լինելով շիրմ կրտսեր, նա ծարմի է եղել կենդանի ոգու և գուցե կարծել է, թէ այդ կգտնի բողոքականների ժողովներում։ Բայց որ նա բողոքականութիւն հարած լինի, այդ համեմական չէ։ Այդ մամանակ ով որ հայոց եկեղեցւոց վարդապետի կամ բողոքականների հետ հարաբերութիւն էր ունենում, թեկուզ արտաքին, համարվում էր կաթալիկ կամ բողոքական և հալածանքի ենթարկվում։ Նույն ախալ հայացքն, ինչպես երևում է, ունեցել են և մամանակի բաղադական քարոզիչները՝ բաղադական համարելով նրանց, որոնք իրենց մոտ գնացել եկել են։ Հայանի է Մատթեոս պատրիարքի նյարդային անհրոգ վերաբերմունքը դիպի կաթալիկներն ու մասնավորապես դեպի բողոքականները, իսկ արդ նա Փնշտիմալճյանի հարգողներից մեկն է եղել և նրա սարսի իղձը կատարելու համար՝ նրա մահից ութ տարի հետո, 1845 թվին Վ. Պոլսում ապագրել տալիս նրա ցցանակի մասեանը, որ է *Եփիմառնութիւն* ի չորչարանա Քրիստոսի Փրկչին մերոյն, և այս՝ այդպէս ազգիս։

Այս գրքի մեջ, բացի Փնշտիմալճյանի՝ վերոհիշյալ գլխավոր աշխատանքից, գիտեղված են իբրև մի չորբորդ մասնակ և նրա տասնուվեց մագթութեանքներն աւ Առաւմաք և աւ աւարտնարաւ։ Դրանք ազգութեան ապեր են, որ հեղինակն ազգերս է անվանում, և որոնց մեջ առանձնապէս աչքի է ընկնում այն հանգամանքը, որ նրան գրավում են ամենից ավելի հայ եկեղեցին և հայ ազգային սրբերը, ինչպես՝ Ս. Էջմիածին, Լուսավորիչ, Արար թագաւոր Հայոց, Տրդատ թագաւոր, Ս. Թադեւոսիչը, Ներսէս Շնորհալի, Վարդան Մամիկոնյան։

Փնշտիմալճյան յաւր բանաստեղծութեան վրա նայում է նախ իբրև վարժապետ։ Նա ստանաւորներ է դրում զի հրահանգութիւն մանկանց յաւր դպրոցի, որպեսքի նրանք իրենց վարժապետի օրինակներով վարժվին զի յարիւնաւան համառօտից գրութեանց։

¹ Mission und Evangelisation im Orient. 1908, հր. 78. Տեպեմալճյան համար քրտեակալ եւ իմ ազգիկը զու. Բաքնդէրյանից։

... Որք չեն վարժ ի յուսման
Գերթողական բանից չափման,
Գլբթին ի սև գէթ անազան,
Իբր ի նըկար ինչ ուրուական:

Ապա՝ նրա հայացքով բանասեղծութիւնը մի բարեպաշտական գործ է, որ մանուկներին տալիս է կրօնական հոգևոր կրթութիւն, և կարծում է, ճիշտ ինչպես Նարեկացին, թե յար աշխատանքը հոգևոր բժշկութիւն և առողջութիւն պիտի բերե ընթերցողներին:

Այս հայացքը բնականորեն թելադրել է նրան նախ՝ «աղերսներ» գրել և ապա՝ յուր «աղերսներին» մեջ բանեցնել բողոքական տաղափական ձևեր, որոնց մեջ, եր. 246, աչքի է ընկնում «Աղերս առ ս. Խայն աստուածընկալ» որ գրված է Բագրատունուց առաջ Բագրատունու «հայկական» կոչված չափով: Մի անգամ որ այդ աղերսները այգպիսի ծագում ունին, այլևս գրանից կտրելի չէ պահանջել բանաստեղծութիւն. գրանք մեծ մասամբ միակերպ հորինված բաներ են, դիմաքեր սովորական նմանութիւններով. օրինակ՝ Շնորհալու աղերսն այսպես է սկսվում.

Աղբիւր ես բորի, կենաց վտակի
Որպէս հղջերու փափագի,
Հոգիս ծարաւի:
Ճրագ լուսարփի, Արամեանս աղգի
Տոլացո ըղլոյս քո պայծառ,
Աչացս իմ սրբի:

Այսպես և Շնորհալուն կոչում է՝ ոռա ցովագանի, ծաղիկ նազելի, առողկուգալի, երկիր բերրի, պարարտ ձիթենի, լեռն կնդրկի, մառան բարելի և այլն, և այդ նմանութիւններին համապատասխան սեկ մեկ խնդրվածքներ անում նրանից:

Նման ձևով գովում է և էջմիածինը, — «Աղերս առ շնորհածին ձնագն մեր Սուրբ էջմիածին».

Լուսակերտ խորան փռոց՝
Երկնաւորին,
Կառուցեալ յԱրարտտան
Մեծի գաշտին,
Սեպական պարծանք աղգիս
Պըսակ անգին.
Դու լիբ միշտ պատասպարան
Իմոյ անձին, և այլն:

Փեշտիմալյանի երկերը ժամանակի կրօնական պահանջին բավարարութիւն տալու են սահմանված: Խրիմյան Հայրիկը պատմւմ էր, թե ժամանակակից պատրիարքներից մեկը (անունը չոռացել եմ) մի անգամ ասել է Գրիգոր պատվելիին, թե ամեն սրբերի գովեսցիր ու աղթեսցիր, մեր ս. Թագեոս Առաքյալին ինչո՞ւ չոռացել ես: Պատվելին պատասխանում է,

թե թաղեոս Առաքյալը շատ հեռու է ընկած, ուստի միտը չի եկել նա: Բայց մի քանի օրից հետո նա բերում է և Հայաստանյայց առաքյալի աղերսը, որի սկիզբն է՝ «Առաւօտ լուսաբեր Հայաստան երկրի, թագէոս առաքեալ, ընդէ՞ր կաս հնախ: Աղերսը համանություն է գտնում, եղանակ հարմարեցվում նրան և երգվում: Եվ Դրիգոր պատմելիի թաղմամբով աղերսներին այդ մեկը, որ չի տեսված նրա «Դիմառության» մեջ, յուր եղանակի պատճառով ապրում է մինչև այժմ իբրև երգ: Խրիմյան Հայրիկի սիրած տաղերից մեկը դա էր:

Փեշտիմալեյանին և նրա հոսանքով ընթացողներին տնայաջու եկեղեցուց և սրբերից շատ ավելի մեծ ոգևորության նյութ պիտի տար և ավետարանական պատմությունը, որին նվիրված է մեր այս քերթողի «Դիմառութիւնը», գրված 1820 թվականի մոտերը: Այս երկը, որի մեջ մի քանի հատվածներ դարձյալ ջերմ ազդեցիկ երկպարանք ունին, համեմատաբար ավելի բարձր է քան աղերսները: Բայց և այնպես սա ևս բանաստեղծական հղացման արդյունք չէ: Եթե Ինճիկյանը ոտանավորով աշխարհագրություն է տնում, Փեշտիմալեյանը մի բանաստեղծական կրոնադիտության գիրք է գրում Քրիստոսի տնօրենության վրա, որի մեջ ոտանավորով պատմված և մեկնված են Փրկչի չարչարանքը, խաչելությունը և այլն, հետը միացրած և Հին Կտակարանից ակնարկներ և նույնիսկ ավանդություններ: Լինելով մեր վերածնության շրջանի միմիայն ներքին հոգևոր ուղղության արտահայտիչ, առանց եվրոպական ազդեցության, նա մասնում է այնպես, ինչպես միջնադարում մտածում էր, օրինակ՝ Ներսես Շնորհալին: Այդ հասկացողությամբ պահանջվում է, որ այդպիսի նյութն ևս բանաստեղծորեն գրվի, որպեսզի տպավորություն թողնի և երեխաները հեշտ սովորեն:

Ոտիք չափեալ քերթողական,
Աս անձանձիր վերձնութեան.
Եղեալ ի ձե դիմառնական,
Առ շարժութիւն կրից հոգեկան:

Փեշտիմալեյանը նույնիսկ յուր լեզվով և ոտանավորով ևս աղգվում է Շնորհալուց: Վերջինս պես նա շատ պարզ ու վճիռ է գրում: Սիրում է և թվականի տողեր, և ամբողջ խոշոր հատվածներ միևնույն հանգով է վերջացնում: Բայց բոլոր երկը նույն հանգով չի հորինում, ինչպես վարվում են Ինճիկյանը և Հովհան Վանանդեցին՝ յուր առաջին գրվածքների մեջ: Նա մտալով համեմատաբար բարձր է յուր մտածանկարներից:

Չունենալով ոչ մի գաղափար թատերգության մասին՝ Փեշտիմալեյանը հորինում է մի տեսակ թատերական երկ: Նա ոչ թե մեկնում կամ պատմում է Քրիստոսի տնօրենությունը, այլ դրամատիկական ձևով գործող անձեր է մեջ բերում և միայն նրանց խոսել տալիս: և այս ձևը պահում է սկզբից մինչև վերջը: Դա մի բոլորովին նոր ձև էր մեր գրականության մեջ, որ յուր արտաքին նորությամբ միայն պիտի հաճելի լիներ մասնավորակիցներին: Հենց այս պատճառով և նա յուր երկը կոչում է «Դիմառնութիւն», որովհետև այստեղ մեռած անձերը, և նույնիսկ երկից, եր-

կիր. աստղ և այլն կենդանանում և խոսում են իրրև կենդանի անձեր: Այս երկը կդառնար միջնադարյան բրիստոնեական թատրերգության նման մի բան, եթե միայն հեղինակը ներկայացման մասին մտածած լիներ և քիչ ու շատ հարմարեցրած զրան: Բայց նա այդ ձևն ընտրել է միայն ավելի ես ազդու անելու համար. ուստի և ոչ թե արարվածների ու տեսարանների է բաժանում նա Վիկտորյաներին: այլ մասերի և զուխներին, որով և նրա երկը բոնում է մի տեսակ միջին տեղ զրամատկական ու վիպական ձևերի մեջ. մինչդեռ նույն ժամանակներում Բագրատունու զրվածքն, ինչպես տեսանք, արտացոլատ զրամատկական է: Եվ այս հասկանալի է. Փնտրմայնյանը հին մարդ է, երիտասարդ Բագրատունին համեմատաբար նոր, և որան ծանոթ էր զրամատկական ձևն օտար զրականություններից: Իրանց երկերն առաջին ձգտումներն են զրամատկական տեսակն առաջ բերելու մեր զրականության մեջ, և այս տեսակետից հետաքրքիր:

Այսպես, Թեղավորված անշուշտ Կապկ-Պրեքց, 'Փնտրմայնյանն առաջին արարվածի առաջին տեսարանի մեջ (հեղինակի առաջին մասի առաջին գլխի մեջ) երևան է հանում Դրիստոսին խաչի վրա, զեռ չմեռած. Կույսը խաչի առաջ ողբում է ինքն իրեն և յուր որդուն երկինք ու երկիր կանչելով իրեն սփռփելու:

Ո՛վ օր սըղոյ, օր մահաբեր,
Օր խաւարի անյոյս գիշեր,
Եհար ըզսիրտ իմ կորնվէր
Ուստիկ ցուռց սըրեւլ սուսեր:
Աշցըս լոյս հզկ ըստուեր,
Շիջաւ յանկարծ սրտիս լաղտեր.
Կար զօրութեան իմ կենսաբեր
Բարձաւ յիւէն որպէս թէ չէր...
Երկխնք, երկթր, լուռ կայք ընդէ՞ր,
Փութացուք զիս սփռփել:
Ձի բաց ի ձէնջ չուշիւմ ընկեր
Ոչ ի ստորինս և ոչ ի վեր:

Եվ հեռ բեմ են մտնում երկինքն ու երկիրն տնձնավորյալ և հաւաքեւելով Կույսին՝ հայտնում են, թե Հիսուս պիտք է խաչվի, որպեսզի մարդկային ազգն ազաւովի՝ սատանայի ձեռով անկումից:

Ձի եղիցի մահուան իւր գին
Ազատութիւն մարդկան ազգին:

Այս խոսքի վրա ներս է մտնում Բանսարկուն և ինքն իրեն որդաբացնելով՝ մարդու անկման պատճառը մարդուն իրեն է համարում: Սկզբում է մի վիճաբանություն, որի ժամանակ բեմ են դալիս և մասնակցում վեճին նաև հրեաւաններ, և վերջը Բանսարկուն ստիպված է լինում կտակածելու, թե մի գուցե այս Խաչյայը կործանե յուր իշխանությունը և ազատե յուր կապալ ողբիները դժոխքի բանտից:

Շարունակութեան մեջ տեսարանն անփոփոխ միևնույն է մնում. հույ-
սքն անդադար ողբում է, դիմելով այն ամենքին, Աստվածաշնչի այն բոլոր
անձերին, որոնք ըստ մեկնաբանների որևէ կերպով գուշակել են Քրիստոսի
մարդեղութունը, և պարմանքով հարցնում է, թե ինչպե՞ս նրանց գուշակու-
թյունները չեն կատարվում. յուր որդին անախատելով է՝ Այդ անձերը՝
Գաբրիել հրեշտակ, մոգեր, հովիթներ, Եզրիսարեթ, Ջաջարիտ, Հովնանես
Մկրտիչ, Սիմեոն ձերուհի և ուրիշներ, ինչպես և Հին Կտակարանի նա-
հապետներ, մարգարեներ և այլք, պարտք են համարում հետզհետե հանգես
գալ և մխիթարել Կույսին և հայտնել, թե այդպես էլ պետք է լինի և թե
իրենց մարգարեաթյունից ոչինչ չի վրիպիլ, իսկ քահանայապետներն ու
պպրները և հրեից ամբողջ մշակ կողմից հրեականքի մեջ են. գները սա-
կայն երկյուղով կատակում են—Պրոփետուրայն ուրեմն ոչինչ պակաս չի
թողնում, ինչ որ Քրիստոսի կյանքին է վերաբերում. երբեմն մանրամասն,
երբեմն համառոտ ակնարկներով անցնում է ամեն բան՝ Ասկայն այսպես
լինելով նույնիսկ՝ շատ հատվածների մեջ նա յուր երեսակայությամբ կեն-
դանացնում է խառն ու նկարագրերը.

Ան քեզ գոյեմ արտասուտոս,
Ե՛կ, մերձաւորդ իմ Ղազարոս.
Տես, որ գրեզ ձայնիւ յարոյց,
Ի փայտ մտնու լլուռ անխառն...
Դառն խորշակ հարաւ գրիւոյս.
Եկէզ ըզտունկըս բարերոյս.
Թառամեցաւ ձագիկն հոգւոյս.
Եղէ ես ծաւ պըտպակորոյս:

Իսկ Ղադարոսը սփոփելով նրան՝ պատմում է յուր դրությունը գերեզ-
մէի, որ միևնույն է դժոխքի մեջ.

Եհաս օրհաս կենաց Նիքոյս,
Ժամանեցի ի բանդ անլոյս...
Խուճան դիւաց անզընդասոյզ
Պըտուակէին գինե ի խոյզ.
Ըսպտունային ըզցաւս անբոյժ,
Ըզհուր անշէջ, զանձեռ որդունս.
Ուր խանչէին որպէս ըզիող
Ամբարշտաց ժողովք յայլ կոյս.
Ի ծով հըրոյ ձըծըմբոյոյզ
Ի լեզ անկեալ որպէս զհուռնաւ
Օձք և կարիճք զեղուին թոյնաւ
Որպէս ըզգետաւ առատահոս.
Գազանք հըրէջք սուր ի լեզուս
Գիշտէին ըզմեղաւորս...

Այս ամենը անմեկով՝ սաբափած մնում է Ղազարոսը. բայց երբ Քրիս-
տոս մայնում է նրան,

Յայնժամ շարժեալ զրանց զժողոց
 Ետովեցան անդունդք խորոց,
 Ձահի հարեալ զոռմարք այսոց
 Մասեան միմեանց ի հարց ի փոք-
 «Այս ի՞նչ, այս ի՞նչ», —ասին այլոց,
 «Գոչեաց առիւծ ահեղագոյ»
 Իրրե ամպրող շփոթ ամաղոց
 Զամենեանի ահիւ պակոյցս:—
 Անդ բանասերկուն տաէ նոցին,
 «Ձայս մի անգամ լուեալ է իմ
 Մինչ յանկից ի գոյ եկին
 Երկիր, երկինք, և մեք ի նմին»
 Ան այս ձայն է Արարչին,
 Որ զըզըրդեաց դամենեանս,
 Արդ կոսկածիմ եկեալ ինքնին
 Յավար առցէ զիմ առնն գանձինս:

Դեկերը խորհուրդ են տալիս Բանասերկուն հաժաքել յուր զորքը և
 պատերազմի պատրաստվելու. նա չի համաձայնում՝ քաջ իմաստով Արարչի
 զորությունը: Այն ժամանակ կատարում են զեկերը և

Գոռան, խանչեն մոլեգնաձայն,
 «Արդ զիտ հնար, ով գոռ իշխան,
 Գառնաւ յարեաց մեր կորստեանս...
 Անդ բանասերկուն գոչէ այսոց,
 «Ի գուրս արկէք զՆազարոս»
 Դեռ քոտորեայ շէտնց միջոց,
 Էարկ աղմուկ ի տաքտարոսս:

Այս խոսքի վրա մի այլանպակ գե վազում է գեղի Նազարոսը և նրան
 զուրս ձգում զերեզմանից:

Ասել չի ուզիլ, որ ընդր առնաւորությունները խրափրակներ են
 միայն և ոչ մարդիկ. նրանք ծառայում են լոկ Աստվածորդու մեծությունը
 և մարդեղության խորհուրդը բացատրելու համար: Բայց մի վեհ պատկեր
 է ներկայացնում ինքն ճերբը, այսինքն Հիսուս խաչի վրա. նա լուս առնվ-
 վում է ամենայն համբերությամբ. քիչ է խոտում և խոտում է միայն
 նրա համար, որ ցույց տալ թե որովհետև աշխարհի անկումը Բանասերկուի
 հպարտությունից ու ըմբոստացումից է ծագել. ուստի և ինքը խաչի վրա
 ամենամեծ խոնարհությամբ պիտի քարերայնի անկյալ աշխարհը. նա մեկ
 մեկ արտասանում է յուր ճեռքն խոսքերը», ինչպես «Հայր, թող դոցա,
 զի ոչ զիտեն զինչ գործեն և այլն և բացատրում, թե ինչպես արդարաւ-
 թյան օրենքի տեղ դնում է զթության օրենքը: Միեթարում է յուր մորը
 և քնքշությամբ հողում նրա մասին:

Վշտահար մայրը պահում է շարունակ նույն ողբացող վիճակը. լուրիս
 է յուր և յուր արդու վրա. զովում է որդուն. չի կաշոգանում համկանով,

Թե ինչու մտադկային ազգը չպիտի փրկվեր առանց յուր օրդու տնարգ զինակին ե տանջանքներին։ Նրա զինան ալվելի մեծանում է, երբ հիշում է յուր որդու հրաշագործութունները, նրա դառնագին հեծեծանքը, օրորմազին տեսիլն այն աստիճանի է հասնում, որ նույնիսկ օրդուն խաչի վրա մոռանալ է տալիս յուր ցավերը։ Եվ այսպեղ, այս սղաժոր մոր աղբի ու թողորի մեջ Փնշտիմալյանը մեկ մեկ իսկական քնարերգու է դառնում։

— Տեսա՞րե՞նք զիստւմ է փոխվել միայն աչի ժամանակ, երբ Հիսուս վերջին խոսքն է տրտառաւում։— Երբորդ մասի սկզբում Բրիստոս արդեն գեւրեզմանի մեջ է, նա մանում է դժոխք և կործանում չարի իշխանութիւնը։ Դժոխքում կապված հոգիները մեկ մեկ, Ադամից սկսած Հին Կտակարանի ըրուր հայտնի անձերը միմեման կերպով դիմավորում են Փրկչին, որ նրանց ամենքի հետ կարճ կամ երկար խոսքեր փոխանակելուց հետո՝ բանաւորութիւնից ազատում է նրանց։ Արդարեւորից հետո առաջ են գալիս մեղավորներն իրենց լաց ու կոծով, հուսաւորուր ազադակով։ սակայն այս շարանին վերջը լաեցնում են դեները, զոչելով։

Կարկեցարձաք, Հարեաց գումարք,

Վայրադողանջ յունք նետահարք,

Այսպեղ իսկապես վերջանում է Բրիստոսի Հարչարանքի դիմառնութիւնը, սակայն կրոնագիտութեան դասագիրքն ամբողջական անելու համար՝ հոսից գալիս են և երեք պատկերներ Հարութեան, Համբարձման և Հոգիո գալստեան համար, որոնք իրարուց անկախ բնավորութիւն ունին։

Անր այժմեան պահանջին իհարկե Փնշտիմալյանը բավարարութիւն չի տալ։ Բայց պատմութեան մեջ ամենայն բան յուր տեղում պիտի անել և աչի ժամանակ նաեւայն այժմեան անարթեքը տառնում է արեւք՝ գտնաւորով մի սղակ զեպի կտաւարելութիւնը դիմող գորգաջման չղթայի մեջ։ Այս տեսակետից դատելով՝ հասկանալի է լինում, թե ինչու ժամանակակիցները գրեթէ չեն տալ զմեծիմաստ և շպիւրհիմաստ պատմիչի տաղանջափութիւնը։ Բավական է միայն համեմատենք նրա աղերսները Ղազար Ջահեցու աղթքներին և կամ իրեն ժամանակակից Գրադասախալյան զարդի և Աստապատցի Արարամ վարդապետի աղերսներին հետ, որպեսզի համոզվենք, թե Փնշտիմալյանն ալելի անկեղծ ղղաբող է և պարզ ու մաքուր մտածող. իսկ նրա Երիմասնութեան հետ բնավ համեմատվել կարող չէ հարյուր տարի առաջ հրոտարակված Երոթք առաքելոցը Կոմիտաս քահանայի։ Նա մի աստիճան աղնվածնում է մեր վերածնութեան շրջանի կրոնական բանաստեղծութիւնը և մինչև անգամ աղղում հայրողների վրա, ինչպես Խրիմյան Հայրիկի։ Բայց և այնպես Փնշտիմալյանն յուր ամբողջ էութեամբ, ինչպես Նիկատեցի, մի անասուն քերթող է, որ հոգիով մեր իմիջնադարեան բանաստեղծների կարգին է պատկանում և մի առանձին թարմ երակ չի մտցնում մեր, թեկուզ կրոնական, բանաստեղծութեան մեջ։ Եվ այս հասկանալի է թե ինչու։

Դպրաց, լրագրութիւն, քարգմտեկտն և իմֆուրելի գրեկեւելքում։— Մեր հնի վերածնութիւնը և հնի նմանողութիւնը միայն բովական չէր

կենդանի բանաստեղծութիւնն առաջ բերելու: Եվրոպական միտքը պիտք է ներգրծել: Բայց մինչ այդ եվրոպացոց հետ ունեցած հայոց հարաբերութիւնը արտաքուստ էր, ուստի և ազգեցութիւնը անշնչու:

Եվրոպական մտքի ինկուկան ազգեցութիւնը շատ ընդհանրին ակն-վում է զաղթավայրերում և դպրոց-ւ և այս միայն 19-րդ դարու առաջին քառորդին: Արդարեւ Կ. Պոլսում 18-րդ դարու վերջերից արդեն բացվում են ժողովրդական դպրոցներ, բայց դրանք հին ձևով են կազմված եղել և ժողովրդի մեջ զրազիտութիւնն տարածելով հանդերձ՝ հային երկար ժա-մանակ չեն կարողացել ծանոթացնել եվրոպական քաղաքակրթութեան: Իրանց պատվելիները փակված են միացել մեր ներքին նեղ շրջանակի մեջ, և միւս պատկուսածքով են հայել գեղի Վենետիկից՝ համարելով նրանց կատարելութիւն և նմանողութեան աղբյուր, չմտածելով անգամ մրցել նրանց հետ: Ռուսաստանի հայերն ավելի ուշ են կենդանութեան նշան ցույց տալիս, բայց մի անգամ շարժվելուց հետո՝ գլխավոր հոգը հնչց սկզբից տանում են նոր ձևով դպրոցներ հիմնելու համար: Աղաբաբայն դպրոցն Աստրախանում (1810 թ.), Լազարյան ճեմարանն (1816 թ.) ու Ներսիսյան դպրոցը (1824 թ.) հաստատված հայ զաղթավայրերում, հետագայում Երեսն իրենց բարերար ազգեցութիւնն անհին նաև բուն երկրի հայ ժողովրդի վրա, որ 19-րդ դարու առաջին երեսնամյակում դեռ տառա-պում էր պարսկական և թուրքական գժպետութեաննոր ձեռքին:

Բաժական ժամանակ պիտի անցնէր սակայն, մինչև որ եվրոպական լիզուններ և կյանքի ծանոթութիւնը այս նոր դպրոցների միջոցով մի առողջ հոսանք մտցնէր հայ անշարժութեան մեջ և հայ միտքը դուրս դա-լով ինքնազուհ դրութիւնից՝ կտրվէր միմիայն մեր միջնադարին նմանե-լուց և ազգի հառաջագիտութեան էական պայմաններից մեկը համարել հայ կյանքի մեջ փոխադրելու ամեն ինչ որ եվրոպական է: Եվ այս ձգտումը եվրոպականին նմանելու, որ ձևվում է զաղթավայրերի դպրոցների մեջ, գնալով դորանում է և կամաց կամաց ներքին ընդունութիւն և ստանում: Առանց թուլանալու եկեղեցական-կրօնական զգացմունքի մեջ՝ մարդիկ տեսնում են, որ եկեղեցուց դուրս ուրիշ բան էլ կա. և չեն բավականանում հայ եկեղեցական անցյալով: Հայ միտքը բացվում է, և սովորում են գի-տել և ուսումնասիրել կյանքը, բաղդատութեան զննել հայի և օտարի բնե-ցածի մեջ. որովում է հայրենասիրութեան զաղափարը, որ հետզհետե ավե-լի մեծ ծավալ է ստանում: Հայրենասիրութիւնը նրանց ետանդ է ներ-շնչում հայ կյանքը մի նոր ձևով նորոգելու: Իսկ դրա միջոցներ են համար-վում նոր ուսումն ու գիտութիւնը, գիտական զրքերի թարգմանութիւնը և վերջապես լրագրութիւնը:

Լրագրութիւնը ծնունդ է առնում արդեն 18-րդ դարու վերջում: Առա-ջին ամսաթերթը, «Ազգորար» (1794—1796) լույս է տեսնում Մազրասում Հարութիւն քահանա Շմափոնյանի ձեռով, և ապա Վենետիկում հրատա-րակվում են Ինտիմյանի խմբագրութեամբ «Տարեգրութիւն» (1800—1802) և «Նորանակ Բիւզանդիան» (1803—1820), որոնք տարեթերթ են, այսինքն տարեկան մի գիրք են լույս ընծայում:

Լրագրութիւնն ազգանիշ էր, որ հայութեանը յուր նեղ շրջանակից

դիտելի դուրս դառնալու հետևանքով էր հետաքրքրվել թե իրենից դուրս, հեռավորում ինչ է կատարվում։ Անա մեղդարարին ծրագրեց։ մեղդ արարող յուրմէ իմացումն լինելուց է բնթնրցողաց ծայրաճառղ անցնել նոյնոյ ամսոյ, էթէ ի գտնադան կտելիքաց, էթէ ի գտնադան քալտետաց է էթէ ալլոց գտնադան գրոց. նաև բունց հարկաւորաց է քաղցրուլուրք, և ի վերջուսն տետրակին՝ դորոցոյց մի հետեանալ ամսոյ, զարկաւորակք ի նմա զտունն սրբոյն և զաւաւորս ծննդեան և լրման յաւնոյն։¹ Ինքնեյանի ձեռով խմբագրված տետրեր-թերթերն ևս մանրամասն տեղեկություններ են տալիս նախորդ ասորի մէջ գտնադան երկիրներում կատարված քաղաքական, եկեղեցական ու դիտական դեպքերի, դատարի մասին։ զիտելիքներ՝ բժշկական, բնագիտական և այլն։ մեղդարարին օրացույցին աշտեղ փոխանակում է քաղաքակրթութեան օգրեւոյթ փոփոխութեանց։—կարծես քաղաքաբնություն տալու համար սեր պապերի պահանջին, որ ջէին կարող աղբիւր առանց էջիմեր-դիակուն քուչաւորություններին։

¹ G. G. m., b. d. p. h. p. h. m. n. Qmmdma, p. h. n. Zm., j. p. m. p. m. p. h. n. q. h. n. n. m. IRDS, II, k. p. Bd.

մութան հորդորակներու, Արշարունյաց ընկերութեան անդամներն խոս-
վածն¹ Եվ այս շատ էր արգեն:

Այս շարժումը բնականորեն յուր հետ բերեւ ի և պահանջ մի նոր
տեսակի դրականութեան, որ չի հղել հնումը: Դասագրքերի, կրօնական,
պատմական և այլ բովանդակութեան գրքերի հետ սկսեալ են մեկ մեկ
երևան գալ և քաղաքացիական քաղաքացիական քաղաքացիական
գրականութեան: Երբ 1793 թվին արդեն Նոր Նախիջևանում տպագրուեալ է
Ֆենիկոնի Տեղեմաքը, որ մի ժամանակ Եվրոպայում ամենից ժողովրդական
և տարածված գիրքն է եղել և յուր խրատական բնավորութեամբ շատ
հարմար էր մեր գրագետներին այն ժամանակվա ճաշակին. ուստի և մի
քանի ուրիշ թարգմանութեաններ էլ է ունենում հետագայում, երկրորդ
անգամ Զախլախյանի ձեռով Վենետիկում 1826 թվին: Նույն տեղում մի
տարի առաջ տպագրուեալ է, դարձյալ Զախլախյանի թարգմանութեամբ,
Գնահերի Վաճառքը, որ բնականութեանից զուրկ մի հովվերգութեան
է և արժանացած հայերեն թարգմանութեան անդուշտ նրա համար, որ
կրօնական բնավորութեան ունի, և որ մեր բանաստեղծներն այն ժամ-
անակ շատ ավելի դրախտով, Ազատ-Եվայով էին հետաքրքրուեալ քան չա-
յսատեսով: 1824 թվին լույս է տեսնում Միլտոնի «Դաւիթ կորուսեալի»
արձակ թարգմանութեանը Հ. Ավետիսյանի ձեռքով: Հնդկաստանի հայերն
ևս անմասն չեն մնում այս թարգմանութեանների մեջ. Կալկաթայում, ուր
1821 թ. հիմնուեալ է Մարգասիրական ձեռնարանը, 1826-ին Շատուրբեկի
Ատալան է տպուեալ, իսկ Մարգասում, 1818-ին՝ Վրտեբի Հուլիոս Կեսարը,
և 1812-ին՝ Ֆլորիանի Նուսա Պոպիլիոսը, որ Տեղեմաքի հատկութեան մի
գիրք է և երկրորդ անգամ արժանանում է թարգմանվելու Ս. Հյուրմուշեղի
ձեռքով:

Այս թարգմանութեանները, զխալոբապես կրօնական-բարոյական
ուղղութեամբ վիպական հրկեր և նույնիսկ թատերերգութեաններ, դանդաղ,
բայց անընդհատ շարունակուեալ են և հետագայում, զխալոբապես Վենե-
տիցից ձեռով, որոնք ապիս են հին և ֆրանսիական կուսակներից մի քանի
կարևոր երկեր՝ դժբախտաբար գրաբար չեղելով: Եվ այդպիսով նույնիսկ
19-րդ դարու սկզբներից առաջ է գալիս գեղարվեստական թարգմանական
գրականութեան, որ գոյութեան չուներ առաջ: Դա արդեն նշան էր, որ
հայ գրական միտքը շարժուեալ էր և պիտի բաժանվեր սքոլաստիկայից և
միջնադարյան միակողմանի ու միակերպ պրոպագանդային թանաստեղծութեանից
ու մի նոր ձևապարտով ընթանար: Լարվալ գետ շատ ժամանակ պիտի
անցներ, մինչև որ հաջորդէր գեղարվեստական հատկացումը: Երբ 1826-ին
և թարգմանութեանների միջոցով աղնվանար ու բարձրանար և թոթափե-
լով հինը՝ կարողանար նմանել եվրոպականին և առաջ բերել մի նոր տե-
սակի, թեկուզ նմանողական, բանաստեղծութեան, որ արտահայտի լիներ
կյանքի, յուր մեջ ցուլացներ մեր իրականութեանը և բովանդակութեան
առարկայական ձգտումներին: Ամենից առաջ հաջող կերպով այս
բանը կարող էին անել Միխայիլայան բանաստեղծները, որոնք քիչ ու շատ

¹ Նույն, եր. 23.

մանթ էին եմբողական բանաստեղծութիւնը. բայց նրանք ժողովրդի կյանքով չէին աղբուրում, աստիճանի և իրենք ինքնուրուշան երկերի մեջ թույլ, մանկական ու բավական պարզամիտ են: Բայց և այնպէս զրանց բանաստեղծութիւնները, ինչպէս և Փեշտիմալճանինը, եթե ժամանակին ազազրկած լինեին, կարող էին որոշ չափով բովանդակութիւնը տալ ժամանակակիցներին, որոնք այդ նկատմամբ շատ էլ պահանջկոտ չէին: 19-րդ դարու առաջին երեսնամյակում սակայն, որքան դիտեմ, գրեթե ոչինչ չէ ապագրված:

1829 թվին Մոսկովում Մեզլա՛յ Արարատեան շատ բան խոստացող անվան առկ հրատարակվում է մի գիրք: Դա Լազարյան Ժամարանի ասաների բանահյուսութիւնների ժողովածուն է, որով նրանք եթե մի կողմից պարծանքով ուղղում են ցույց առն իրենց հասակագիտութիւնը՝ զերթուղութեան և ստեղծարարութեան մեջ, մյուս կողմից՝ զառհասակեցիս արձակեն զառաջին զայս փունջը բանահյուսութեանց, հրախրեալ զնոսա յայս աղբիւր լուսաւորութեան, զալ աշակցել ի ցերեւաքանդակ հախարակութիւն տղաշափութեանց:

Շատ բնորոշ է այս կոչը յուր ժամանակի հոմար, Մարգիկ կրթվում են զգրոցում, կարողում են եմբողական լեզուներով բանաստեղծութիւններ, նույնը որքանում են և հայոց մեջ ու չեն զտնում: Բայց զգրոցը տվել է նրանց ազգի պահպանութիւնը հոգայու միաքը. չեն կարող անտարբեր քնալ Զէւ բանաստեղծութիւնը, բայց պետք է ստեղծել: Ուրեմն լինչ պետք է անել: Պատասխանը շատ պարզ է և երեխայական:—Հարկավոր է հրավեր կարգալ հայ զգրոցների բանաստեղծներին, որ զարթնեն: Եվ այդ անում են Լազարյան սաներն իրենց աշակերտական շարագրութիւններով ու ճարտասանական վարժութիւններով, որոնք անշուշտ որքազրկած ու չինված են իրենց հայկաբանութիւնը ևսուցիչ Միքայել Ժայրազույն վ. Սալարթիւնցից:

Այն բազմութիւլ անուններից, որոնք զրկած են տառապնորների ասանին, և ոչ մեկն էլ ազագայում պրական շնորհք չի ցույց տվել, որքան հայտնի է. բայց և բոլոր գրածներն էլ անշուշտ բաներ են. մեծ մասամբ մտերձ, Զաւկի, Մանգլան, Նոր տարվա և այլն առթիւ ուղղված Լազարյան իշխաններին. մի սովորութիւն, որ տեսնեք, միայն այդ Լազարյան ասաների մեջ չի եղել և միայն նրանք չեն, որ իրենց երախտավորներին տվել են այնպիսի մականուններ, ինչպէս՝ աստվածազույգ, դուցապետարիւ, դուցապետարիւ, սխրափայլ զատու զուցազանց զուգարթու, դուցապետարիւ, մեծամեծարար հերոսը, արքայապետ զուցազանց վեհաշնչա անասից բարձակից և այլն: Դա ժամանակի սղորմելի ոգու արտահայտութիւնն էր:

Ուսկայն այսպէս լինելով հանդերձ՝ այդ ժողովածուն մի անկեղծութիւն է, որ ցույց է տալիս, թե լեզուն պիտի բացվի: Դրա մեջ տրգեն երեւում է. որ բոլորները ոչ միայն բարոյական խրատներ ու Աստվածաշունչ են սիրում և տաղաչափում նրա հատվածները, այլ և ոգևորվում են սեր անցալով ընդհանրապես. ունին արգեն հայրենիքի գողափար, որով պարծենում են, որովհետեւ այդ հայրենիքը պախտն է. ցույց են տալիս աստեան սեր և ուրախանում են, որ սլարսից բռնակալ լծից ազատվում է հայ ազգը: Դրանք ոգևորութիւնն են նոր նյութեր են, որ Լազարյան ասաներն

առաջարկում են մեր բանաստեղծներին մշակելու, և որոնցով այնուհետեւ լրիտի պրագմեր մեր ազգայն բանաստեղծությունը:

Եվ առաջինը, որ նույն ժամանակներում այս և նման խնդիրներ է նյութ գտնելու և բանաստեղծություն, է Հովհան Վանանդեցին: Եր քեզեւ ինքնին ինչ որ փնտրում աշխարհի ժամանակակից է և Բաղրամուշուք մի սե-
րունգ առաջ մեռած, բայց շատ կողմերով ասորերովում է նրանցից և իս-
կանին հիմնողին է դառնում մեր նոր ոգով զբաղանություն:

Հովհան Վանանդեցի: — Հովհան Միրզայան Վանանդեցին (1772 — 1840)
ծնվում է Վան քաղաքում: Ձորս տարեկան հասկում որք է մնում հորից,
աղքատ մայրը շատ նեղություն է կրում յուր բազմադամ ընտանիքը
պահելու համար և յուր ութ տարեկան որդուն տալիս է կույս անապատը
խորն փոքրավոր մի ոմե Գասպար վարդապետի: Այստեղ նա ցույց է տա-
լիս տառնչի սեր ուսման և կարգավոր երեխանց յուր վարդապետից և
սովորում, իսկ գրելը վաճի կոնդակագրից: Միտքանները տեսնելով նրա
ընդունակություններն՝ տառնչին խնամք են տանում վրան, շուտով դպրու-
թյան յուր աստիճան է ստանում: Ամիրզադե անունը փոխելով Հովհանի:
Ուսման փափաղը նրան է. Պոլիս է տանում իր քսանամյա հասակում, երբ
լավ ծանոթ էր Աստվածաշնչին, գրեթե շարական ու Նարեկ, ինքնակ մեծ
մասամբ անգիր սերտած, ինչպես սովորական էր ժամանակի համար: Այս
միջոցին նա անդրի տան է սկսում և արտադրանքը:

Մայրաքաղաքում նրան հաջողվում է մոռել բոլոր դպրատունը,
ուր ստանում է յուր ժամանակի իսկական մեծ ուսուցիչ, սովորում է քե-
րականություն, ճարտասանություն և տրամաբանություն այստեղ գերիմաստ
ուսուցիչուն Խիրաթու Յարուսթեան և մահտեսի Մանասէի կարնեցույց:
Սկզբում աղբուր է մեծ նեղություն, յուր հաջը հալածվում է ուրիշների
համար նամակներ գրելով, բայց դպրատան վերականգու Շնորհ Մկրտիչ
Միրզայան ամիրան, տեսնելով նրա ընդունակությունն ու հասակագի-
մությունը, շարաթական երեք զանկան թոշակ է նշանակում նրան, որ-
պեսզի ավելի մեծ հասնողով կարողանա պարտադիր և հետա նույնիսկ յուր
տունն է ընդունում նրան ապրելու, սեզանակից անելով իրան:

Վանանդեցին այս հասակում արդեն ցույց է տալիս բանահյուսու-
թյան շնորհ և հորինում է ճառեր կրոնական բովանդակությամբ, որոն-
ցով զվարճանում էր Շնորհ ամիրան յուր ազատ ժամերին: Այդ ճառերից
մեկը գրում է նա յուր մայր դպրատան, յուր հովանավոր ամիրայի և յուր
երկու վարժապետների վրա, կամենալով երախտահատույց լինել նրանց:
Մի անգամ ամիրան խնդրեց է տալիս Ջաքարիս պատրիարքին, և բազ-
մականները խնդրում են Հովհանին, որ իրենց խնդրելի առթիվ մի ուսա-
նավոր հորինե: Նա ճաշի միջոցին գրում է ուղած ստանավորը ու կարգում,
ամենքը համանում են և խորում պատրիարքին, որ մի գվերաառություն, այսինքն
մականաւն զնկով, պատվե Հովհանին: Ամիրայի ցանկությամբ
պատրիարքը սկանեցին կոչումը՝ որ երեք դուր չէր գալիս ամիրային,
փոխում դարձնում է Վանանդեցին ի հիշատակ Ղուկաս Վանանդեցու:

Վեց տարի սովորելուց հետո՝ Հովհան Վանանդեցին Շնորհ ամիրա-
յից վարժապետ է ուղարկվում Ջալաւնիս, ուր և ուղևորվում է 1798 թ.

ապրիլին՝ Այստեղ ժամանանում է նա, և ստանում թարի վարժապետության անելուց հետո ձեռնադրվում է քահանա և մի առանձին սրբով, հեթոկուր քահանայից, բացառում է քահանաների պարտականության հերք։ Կյանքի վերջում տասն թարի հոգապետության մասնակցով մեռնում է 1840 թ. փետրվարի 3-ին և ժամերից հարգված՝ պատվով թաղվում է։

Հովհանն Վանանդեցին ունեցել է միայն հայ ուսում։ չի մասցել ոչ մի եվրոպական լեզու, տեղյակ է եղել բացի տաճիկերենից նաև պարսկերենի և արաբերենի։ և ինչպես երևում է պարագայի և պարսից պրակտիկայում, արովհան Կենսապրին՝ ասում է թե պարսկերենից թարգմանել է ուսանալուով Բեքնաթի Եղբայր Կոչված բարոյական բանաստեղծությանը, Հին կլասիկներ չի կարդացել։ Բայց նրանց մասին, ինչպես և գրաբանության մասին, տեղեկություն ունի և մեկ մեկ գործ է ասում գրից անուններ։ Քաջ ձանթի է եղել հայ մատենագրությանը, արից և ստացել է յուր ամբողջ պարգևությունը։ Միտող լինելով գրականության, նա աշակերտական հասակից արդեն գրել է ուսանավորներ։ Բայց բանաստեղծությանը պարագայի է իսկապես Ձմյուռնիություն և հորինել է շատ բան։ Նա գործել է սակայն և իբրև վարժապետ ու պատրաստել է շատ աշակերտներ, որոնցից հետագայում նշանավոր է լինում Մանր Մանրյանը, որ հիացմունքով ու մեծ անձնություն է հռոտում յուր սիրած վարժապետի վրա։ Սա յուր աշակերտական երախտագրությանը մասին արտահայտելու համար 1853 թ. Մոսկվայում հրատարակում է Վանանդեցու Բժառնեքողական ի սուրբ Պաշին Գրիստոսի և պատմագրական առասպառնություն ի Սուրբ Նշան Վարդապետ, որ գրված է 1815—18 թվին։ Զուրի վերջում կա և ուսանավորով Ենթերող Երախտություններ ի սուրբ Նշան Վարդապետ, նա մի կես քնարական, կես վիպական ներքով է նախ նույն բովանդակության հին երկերին, չի մեկնաբանական բացատրություններով։ Նրա գլխավոր բանաստեղծական երկերն են՝ Եճաբան հանդիսիցն Հայկայ, Արամայ և Արայի, որ ժամանակով ասենից հինն է, բայց ազդեցված է 1850-ին Ձմյուռնիություն, Բերվական Հայաստանի, Կ. Պոլիս 1830 թ. և Ոսկի դար Հայաստանի, որ ապագրված է մահից մի թարի հետո, 1841 թ. Ձմյուռնիություն։

Վանանդեցին նույնպես հին դպրոցի մարդ է և յուր մեջ կրում է յուր ժամանակակիցների բոլոր պակասությունները բանաստեղծական արվեստի նկատմամբ։ Եղել է մասեող սգի, օժոված երևակայությանը և խոսքի չնդեցով, բայց նրա բնատուր շնորհքն անկիրթ ու անմշակ է մնացել, և ինքն ևս զգում է այդ, ուստի և ցավելով գրում է թե բանաստեղծում է գրիցաներգություն իսկ և տեսություն անգամ նախնի հագնեցողություններ կամ օտար ազգաց յայս վստակ յարացոյց, և ինչ ևս ի նոյն պիտանեղոյն դաժող ինչպես ժամանակ։ Այդ ժամանակ ոչ Հովհանն և ոչ Վերգիլիոսի թարգմանություններն էին հրատարակված և ոչ իսկ Ռաբալաունու տաղերը, իսկ Վիդայի Գրիստոսականը, թարգմ. Թոմաճյանի հրատ. 1832 թվին, չէր կարող ազդել Վանանդեցու երկին, քանի որ նա մեր էր և յուր երկերը հորինած արդեն։ Բանաստեղծության վիպական

ձևն ուրեմն մարդի ինքը պիտի ստեղծեր, իսկ ինքն առանց նախորդների չէր կարող բնականորեն նոր զեղեցիկ ձև առաջ բերել գրականության մեջ, Այս պատճառով նրա երկն աչքն է ընկնում հայտնի և արվեստի բացակայությանը:

Ամենամեծ թերությունը, որ ֆուտուրիստ է Վանանդեցու ախատանքին, այն է՝ որ նա ոչ մի զաղափար չունի զեղարվեստական երկի միության մասին, և իբրև հին սերնդի մարդ, կարծում է, որ եթե մի պատմական նյութ բանաստեղծական ոճով ոտանավորի վերածվի, կդառնա վիպական ընթերցանա՝ նրա «Արտիստական» մարդկային Ազատությանն է ոտանավորով զբաղ: Հորինվածքի կատարյալ բացակայություն է. նյութի մասերի հարմարում, ավելորդ բնույթ դառնալը և պակասը լրացնել չգիտես: Բայց և այնպես, թեպետ և անձանոթ արվեստի պահանջին, բնագործը զգացել է միության կարիքը և աշխատելով գործողությանը կենտրոնացնել Ս. Գրիգորի շուրջը՝ մի քանի մեծ փոփոխություն է մտցրել Ազատության զոսի պատմության մեջ. նա առաջին չէ հետևել Ազատության զոսին սկզբից մինչև վերջը, այլ ամբողջ սկզբի մասը, Խոսքովի պատերազմները, Անակի զործը, Տրգատի փոխումն ու Լիկիանի մոտ ծառայելը, պատմել է առիթս Գրիգորի դայակին, և Գրիգորն այս պատմությանները ազգեցության առկա դնում է ծառայելու Տրգատի մոտ: Այնուհետև Տրգատի քաջագործությունները պատմել է առիթս Լիկիանիսին Գիսկեպտիանոսի առաջ, և վերջապես Հոնիսիմյանց նահատակությանը հեշտապես է պատմում Ս. Գրիգորին Խոր-Վիրապում: Այս և օրանց նման փոփոխություններով գործողությունը որոշ չափով արդարանում և սեղծ է դառնում, բայց զժառանգաբար ավելի միջին մասը, Լուսավորչի գործողությունը, բաց չի թողնում, որով և Վանանդեցու ընթերցանի կեսից ավելին ավելորդ մի ձևերություն է դառնում և մի գործը երկուսի վերածվում:

Ինչքան էլ նա «Արտիստական» մեջ կապված է Թուրք Առաքելոցի պես Վանանդեցիի բանաստեղծ է. նորից հորինում է Ազատության զոսը, Ազատ զգալով իրեն մանրամասնությունների մեջ, ստեղծում է մարդկային պատկերներ ու գրություններ և երբեմն իսկական վիպական ոգով շատ հաջող կերպով կարողանում է մեջ բերել գրավիչ ու կենդանի մանրամասնություններ, արտաքին և հոգու նկարագիրներ: Իսկ այս արդեն մի խոշոր հասարակությանը է մեր վերածնության վիպական բանաստեղծության մեջ, Ահա թե ինչպես է նկարագրում Դիակեպտիանոսի վիճակը, երբ նա լուռ է Գոթաց Հուհի թագավորի մենամտաբեր հրավերը.

Դիակեպտայ յունկն հաբեալ ուխտ
այստեղև մարկուս,
Թոսկերս ողջոյն և ընդ իրանն
տնից առաւ զսարսուս,
Ի սասակաշունչն որպէս յորժամ
ստատանս առնու հողմոց՝ ուս,
Այնպէս գողայր ըստ քերմնոսաց,
իւր գալկացան դէմք համուս:
Վարանական ի հողս անկեալ՝
քունն հեշտին գայր ի խոյս,
Կասկած ընդոսս յերբոսն
զարգեանցն ի բաց մերձէր հոյս:

Ձի սեկերացն ուժայ ակաբ ի գոռ խիզախ անխրոխտոյ,
Գնատառուն միշտ փափկացեալ Արեււան չլը ողւոյն կոյո,
Գարշնից ջրաց փոխուն գլայն մայաց ձկալ՝ք աստ ե անդ-
Հնարից ինչ մարթել ի գիւտ գանձն պահել անվկանդչ:

Ապա պատմում է թե ինչպե՞ս կայսեր կոչի մը՝ զանազան կողմերից
ֆրիսանները ժողովում և ներկայանում են կայսրին.

Մարդից մարդից հաղ խմբէին իշխանորեար ի մի վայր,
Որպէս յախարհ սրինգ հովսէի խաչանց բագուրդ գառն ի մայր.

Լիկիւնեալ պատմում է Տրդատի քաջագործությանները.

Առաց, իսկոյն ե Տրդատէս կայսեր եկաց յանդիման.
Աէգ ի հասակ ճեա Պաշլաիկ, ցոյժ հրափայլէ յիւր ակուն.
— Ի՞մ է այգ գործ ի հանելեաց, ասէ, կանգնիլ ակոյսեան.
Վազիւ յայս մահ նա ձերբակալ շառագնեացի յայս ասեան:

Ապա մատրմատն նկարագրում է Տրդատի հաղթւածն ու գինեւժը և
մեծամարտի ելնելը.

Պոնտիկի միողոց գանգիւն ժամազդեցիկ ի պայքար,
Աշխոյժ յերկուց վառեալ կողմանց թնդիւն զործէ հիւարբ,
Սիրտ յոխերիժ ի ճակատուն գոն ի տեղի վազբաւբար,
Բազ ի հոգիւն գէտակն ի պսակ մենամարտիցն ուժգնակաւբ,
Ոստ երկվարք զոռ ի փոխն զափր հատանն յասպարէզ,
Եւ կարախիւն յերկուց կողմանց բաց բորբաքէ անձնակէզ.
Երկեքեանն քակ մարտի ի կուշտ տան արշաւս ի կրկէս,
Շրջանո տանսւն արձակ խաղուն, յերկար բողբիճն սոսակապէս...

Եվ երբ Տրդատը բռնում բերում է Գթաց թագավորին կայսեր առաջ,

Մոփ զժափի սիրտ ի կոյախ հովմէակուն համազասնդ,
Ի գոչ վաշից զքարոնձաւս արձագանգին տան ի թունդ...

Երբ Գիւկղեաթեանսի մարդիկը թագավորի հաքանացու են որոնում,
բանաստեղծն աթից օգտվում է գեղեցկության հետեյալ նկարագիրն անե-
լու (եր. 148).

Հովմէայ ողջոյն թնդայր սահման յաղջկանցն ի վաղ ճեպերադ,
Գեղք շաւրեալք ի հրապարակս փայլակէին կորդ ի կարդ.
Ջփղոկերեայն ուսովք ծածան վարսից խարեաշըն գիտակ,
Նոճեսարտս գանգամայօզն հարգարեք պերճ գհատակ,
Երփն գեղոց չընազացոյց դէժք շողէին արձարեուն,
Հուսնեացն երեսս ակն ալմեմանց կաթնածով ինչ յուտարուն.
Յե՛ք մրազարդք արեղնակեալ կիսաբուրդ մէտ ի քուն,
Նունակեղև ալաիցն ցոյժ հրավառեալք ի փաղփիւն,
Տաշտից խնոց ծնօաքն ի տիպ, բոյր անուշիցն հոտեան.

Ռնգունքն որպէս Լիբանանու իսկ գալաւարկա գեղազան.
Շրթանց փափկիկ կարժրալարք երփն հարեալք ի յորդան,
կաթռած մեղու լեզուին շնորհ գրոյց ըղիին քաղցլաբան:
տակից դուրս չդնան նմանները. այն էլ 13 թդ դարում մի գովման շշուկ-
հազարդ հոռուորի. Տաշյանը դրանց հետ բաղդատելու համար պիտի բերեր
այ թե կենդանոց միջին հայերենով հորինած հայերենը, այլ գոհն նրա գրա-
բար նախադասութիւնն ու վերջաբանութիւնը, և այն ժամանակ կերեար,
որ մեր այս բանաստեղծը կոկ գրաբար գրել գիտեր, ճարտասանական
գրվածքների մեջ, տնչուշտ, ավելի զեղեցիկ ոճով. Նրա ճշտագրութիւնն
մեջ գտնուած ենք նաև հետևյալ նուշխակ ոչ սովորական ձևը՝ «վայել է
արքայից և զօրապետաց իմաստուն և Խմբագրեց յիմից, մի հոշովական
կերպարութիւն, որ կա նաև բարառնութիւնից Տաշյանի ցիտած կտորի մեջ
և»՝ տալիստեղծից զորք պատերազմի՝ ծովազորը և գազանաբեկ յիմիցով:

Տորթորդ՝ իրեն մի աղացուց դնում է Տաշյանը և հետևյալը. «Ճաշտ-
ուուր ըստ բովականի գիտե յուր գրութիւնաց արժեքը, ուստի միշտ կշնա-
տողաբանել յուր գրվածները՝ սակաւ բան, հզեղեղեղեղեղ տկար տրա-
րէք յիշման զիս արժանք, աղապէս և դու տու ի մտի, ժոյլ և ծանակ հնչա-
տեցի և նման ըստատութիւնսք. և այսպէս գովարտվ կրնար բարառնու-
թիւնց համար՝ եթէ յուր գործքն էին՝ ըսել թե յիշք լսէք զաղիպարս բա-
րառնութիւնս՝ զանոնք այսպէս գովութեամբ յիշելովս:—Տաշյանի այս խոս-
քերը հերքելու կարիք չկար. զի զգովարավ կրնարաւ աւելով չի մերժում
այն, որ հնչապետի կարող էր իր բարառնութիւնները բնորոշել «աղի-
պարս» բառով: Ամեն հեղինակ էլ կարող է իր մի աշխատութիւն համար
այս կարծիքը հայտնել, մի ուրիշ աշխատութիւն համար՝ այն. Դարձյալ՝
եթե նա ըստ բովականի գիտե յուր գրութիւնաց արժեքը և ըստ իր
գիտեցածի բնորոշել էր իր ուրիշ երկերը և իրեն՝ «սակաւ», «տկար», «ծուշ»
և ծանակ բառերով, ապա նա ըստ բովականի գիտե և իր բարառնու-
թիւնների արժեքը, որոնք իրոք «աղիպարս» ողբեր են իրենց բովանդա-
կութեամբ, և նա կարող էր այդ «աղիպարս» բառով որակել այդ ողբերը:

Ավելորդ չէ նկատել և հետևյալը. Երբ հնչապետի իր 18 բարառնու-
թիւններն Ալեքսանդրի և Դրիստոսի կյանքի վերաբերմամբ՝ անվանում
է «սակաւ» բանք, կամ մի տեղ հիշատակարանի մեջ իրեն համար գործա-
ծում է «տկար» բառը,—թեպաւ չնկատմամբ իր ոտանավորների,—ինչ որ
համարտի համարելու հիմք չկա,—այդ մի հիմք չէ ասելու, թե նա «միշտ
կշնա- տողաբանել իր գրածները»: Հետաքրքիր է, թե որ զեպքում է
հնչապետի իրեն անվանում «ծուշ» և ծանակ: Երբ Ալեքսանդրը տեսնում
է այլ շատ լայն Սկզբնաղբոս գետը՝ որի վրայով ցատկել է Աքիլլեսն, ըստ
Իլիադանի, նա Աքիլլեսի առժըռ մեծ բան չի համարում, և երանի է տալիս
Աքիլլեսին, որ առժանացել է Համերոսի գովքին: Այն ժամանակ մի քեր-
թող տեսն է նրան. «Ալեքսանդր. քան զՀոմերոս... լուս ևս գրեսցուք մեք
զարտու քան, Ալեքսանդրը պատախանում է նրան «Ընդմիջ է ինձ ի Հո-
մերոսի պատմութեան Թերսիէս գոյ, քան ի Հերոս՝ Աքիլլեսն»¹—հնչապե-
տի Ալեքսանդրի Պատմութիւնն այս կտորի աւթիկ գրել է.

¹ Պատմ. Ալեքս. Մուկ., էջ 60 և հ.

Ոչ հիանայ ընդ վաղն արի
Քաջաղնաբար յափըն գետի,
Այլ զնեբրողեան Հոմերոնի,
Բաղկացեալն բան զովեստի:
Այսպէս և զհա առ ի մտի,
Ծոյլ և ծանակ Կեչառեցի:

Առաջին շաբաթի մեջ ամփոփ գրված է Կալիսթենեսի պատմածը. հետո մեր բանաստեղծն ավելացրել է վերջին երկու տողը: Խնչ է այս երկու տողի իմաստը:—Անպայման այն, որ ինքն էլ չպիտի դարմանա Ալեքսիսի ցառկելու (վաղն) վրա, այլ Հոմերոսի նեբրողի, գովեստի վրա: Ապա թե Ալեքսանդրի ծաղրն իր արարքները գովել ցանկացող քերթողի վերաբերմամբ՝ համեմատությամբ Հոմերոսի գործի՝ վերաբերում է նաև իրեն՝ Կեչառեցուն, որ ոտանավորներ է գրում Ալեքսանդրի գործերի վրա: Պարզ է, որ Կեչառեցին մեծ կարծիք չունի իր քերթվածների վերաբերմամբ. բայց այսպես «ծաղի» ու ծանակն է համարում իրեն՝ համեմատությամբ Հոմերոսի, — որին հավասարվելը երբեք չէր էլ անցել նրա մտքից:

Հիմնվեալով՝ Տաշյանը բերում է և հետևյալն իբրև ապացույց իր կարծիքի համար. «Էւով կհանչանաք դարձյալ զՊալատուր, որ այնպես շուտ յեղունչ կպտներ ճեթանասական քրվածքները: որ այսպիսի գիրք մը դրեցու համար թողություն խնդրելու պետք կտեսներ. մինչ բարանաւթյանց հեղինակը՝ հարմար կամ անհարմար՝ հեթանոսական դիցաբանության յաւելալ՝ նաև ոչ ճիշտ՝ ակնարկներով ճշխացնել կ'ուզե յուր գրչութունը... Նման բացատրութիւնը... Կեչառեցւոյ գրչն զժվարավ կրնային ելնել, Երժվարով կրնային խոսքով, հարկավ, չի ժխտում, որ Եկրնային ելնել, Բայց ուրիշ բաներ էլ տեսնենք: Նախ՝ Տաշյանը չի բերում և իր ուսումնասիրության մեջ էլ չի բերած, թե Կեչառեցին ճիշտ պէտքով ճիշտ տողերով ներդրութիւն է խնդրել Ալեքսանդրի Պատմության գիրքը գրելու համար: Այդպիսի բան չկա: Ընդհակառակն, նա, Կեչառեցին, այդ գրքին մեծ արժեք և կարեւորութիւն է տվել, որ արտագրել է անձամբ, ինչպես հիշատակարանի մեջ հայտնուել է. Գրեցի իմով ձեռագրս սակա աւգտի ինձ և այլ համբակաց, որք կամին աւգտի յԱլեքսանդրէ: Նա այնքան մեծ նշանակութիւն է տվել այդ գրքին, որ կաթմանը է հորինել, դրա համար Ալեքսանդրի գործերը համեմատել է Քրիստոսի «տնօրինականներին» հետ և այս արել է հավատարմով իր գործին:

Ապա՝ Կեչառեցին, ինչպես տեսել ենք, Ալեքսանդրի Պատմության մեջ պտել է նաև շատ սնտաի կարծիքներ ու խաբեութիւն. բայց այդ մի պատճառ չէր կարող լինել, որ նա բարանաւթյունների մեջ հեթանոսական բան չգտներ: Որ նա իր այդ գործի մեջ արել է հեթանոսական դիցաբանության ակնարկներ, այդ ցույց է տալիս նրա բարձր հասկացութիւնը գրական արվեստի մասին:

Նա, ինչպես վերեւում բնորոշեցի, «զգրասացներին իրենց խոսքն ասել

¹ «Ծաղ ու ծանակ [-խաբանեմք] հովանքեն աղետամբ գործել է հետևյալ ու ձևով:

է ասլիս իրենց դարին և հովատայիջներին համեմատ, ինչպես մեր օրով ղարվում են պատմական վեպեր գրողները: Մի բան խառնում է Տաշյանը. այլ բան է. եթե քրիստոնյա հեշտոցին իր կողմից իր անձնական ճշտութեամբ յայնչ գործածեր հեթանոսական ակնարկները.—ինչպես արել են համախ կեղծ կլասիկ գրողները, նույնիսկ մեր գրականութեան մեջ,—այլ բան է: Երբ այդ կիրառել է նա հեթանոս հերասների կողմից, նրանց քերական ընդամենը վից անգամ, այն էլ մեծ մասամբ առնելով հերոսների կյանքից այն, ինչ որ կա Ալեքսանդրի Պատմութեան մեջ: Տաշյանը չի հարող արեւ, օրինակ, թե Մովսէս Խորենացին բարեպաշտ քրիստոնյա չի եղել և հովատում էր հեթանոսական աստվածներին. բայց ահա մեր այդ Պատմագիրն իր հորինած նամակի մեջ, որ իբր Վաղարշուն է ուղղել Արշակին, արտ համար գրում է՝ «որոք անձն և պատկեր... մեր աստուածոց» (Քոր. Ա. 9): Ահա և թե ինչպես է սկսում նա մի ուրիշ թուղթ. «Երբ քանակ Յուլիանոս, ծնունդ Մաքսիմ, Արտագրայ որդի. և ճակատագրական յանձնառութեւն...» (Քոր. Գ. 15), կամ մի երրորդ թուղթ. «Մագդեղանց քաջ և բարձակից արեղական Շապուհ արքայից արքայ» (Քոր. Գ. 17): Այսպես և շատ բնական է, երբ Ալեքսանդրը մահամերձ ողբում է իրեն՝ առնելով. «Կարծես տոնալ հղիւրդ անմահ կալ մնալ իբր թէ յԱմոնէ կամ յԱրտագրայ հեղինական նուագօր ի Կրանոսէ և յԼուայէ սերեալ ողբաբանութեամբ, և այժմ յիմարեալ անողորմելի ի մահուանէ», կամ երբ ասում է. «Ուր իմ սրբնթաց իբր զՎաղարշապարս յուշկապարակոց օգտաբերի լինելով իբր զՊսէնիբոս և Պագրոս, արդ վրիպեալ կապեալ ի մետոդս մահաճաց: Այսպէս և երբ նա հիշում է իր ուսումնելն «ի մայրն իմաստութեան առ Աթենայ իսկուհւոյն»։ կամ երբ Ողորմիւրդոն ողբելով ասում է ակնարկելով իր հղացածն բեղիկապական մարդարէն աղբիւսց ինձ զգալն Ամոնայ, նույնպես և լայն զիտայ է ինձ տապարն Հեթանոսի առ ի հերձանել զզուրի ծնողին Աթենայ, կամ երբ Հոգեւորական լալով գիւնում էր Ալեքսանդրին ասելով. «Որպէս հանգրծեալ ես յաստուածոցն խառնիլ երամս, յայպէս և զիս արա քեզ գերեզմանակից և մահակից: Կեցանեցին հո յէ՞ր կարող այն հեթանոս ողբաբաններին հիշել տալ քրիստոնեական աստուծուն կամ սրբերին, կամ Ալեքսանդրին առնել տար, թե զիմ ոտները որ սրբնթաց էին ինչպես արագեանս սուրբ Սարգսի ճերմակ ձիւնը...»: Այսպէս եթե իմաստութիւն հեթանոսական ակնարկները մի բան ազդեցութիւն են, այդ ոչ թե այն է, թե բարաւնութեանների հեղինակը Կեցանեցին չի կարող լինել, այլ այն, որ մեր շնորհօք ծագեալու հետտորը հմուտ է եղել իր արվեստին:

Վերջապես բնավ արժեք չունի այն, թե բարաւնութեանների համար էլ «նախնորդական ոտանավորն են հարինել ուրիշները Կեցանեցու հետ, և կամ այն, թե մի ձեռագրի լուսանցագրութեանը... Բ. բարաւնութեան նմանողութեամբ շինված... ոտանավորը Կեցանեցու անվամբ կը հիշել հորինված: Նախ մյուս ձեռագրիների մեջ այդ չկա, իսկ մի ձեռագրի մեջ էլ այդ ոտանավորը Գրիգոր Աղթամարցուն է վերագրված: Ապա՝ որ կա փաների հեղինակների անունները իրար հետ չգիթված են, այդ ինքը Տա-

¹ Տաշյան, Ուս. Մո. Գալ. էջ 108.

շլանը լավ ցույց է ավելի Եվ երկրորդ՝ դիցուք թե մի հեռագրի լուսանցա-
գրության հազարգումը ստույգ իրականությունն է, և հեշտակցին ինքը չթ.
բարահնության նմանողությամբն մի ոտանավոր է հորինել (սեմանդուա-
թյունը Տաշյանը չի պարզում), այդ ոչինչ ու ոչինչ չի ապացուցում: Մի-
թե նորանշան մի երևութ է, որ բանաստեղծները, նույնիսկ մեծ բանա-
ստեղծները, երբեմն հորինում են թե իրենց մի երկի սեմանդությամբն և
թե նույն նյութը երկու երեք անգամ են բանեցնում. կամ առաջ հորինում
են արձակ, հետո նույնը՝ ոտանավորով:

Այսպես Բերկ. Զ. Տաշյանը ոչ մի կերպ չի ապացուցել, թե կեղծ է
բարահնությունների հիշատակարանը և դրանց հեղինակը Խաչատուր Կե-
շտակցին չէ: Մենք իրավունք չունենք մեր նշանավոր հանարին գրկելու
իր սեփականությունից: Այլ բան է, եթե փաստեր լինեին, հիմնավոր և հո-
մոգիչ:

ՆՐՐՈՐԻ ՀԱՎԱԼՎԱՆՔ

ՖԻԻԿԻ ԿԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐԱԸ

1. Թվեցեմք:—Ֆիբիկի կենսագրության միակ աղբյուրը նրա բա-
նաստեղծություններն են: Վերագրեմ ֆուլգուրն ջերթվածի մեջ՝ կան հետե-
վյալ տողերը.

Հիմիկ զըմբեց բաներս,

Որ թաթառն հղաւ թագաւոր:

Գրք է, որ բանաստեղծն աղբի է թաթառակն իշխանության օրով,
այն էլ սրա տողին շրջանում, երբ զեռ չէր մոռացվել նախորդ Զաքար-
յան իշխանության բարի հիշողությունը: Նա վերահիշյալ բանաստեղծու-
թյան մեջ մարդուս բախտի անկայանության համար իբրև օրինակ բե-
քում է հետևյալը.

Սահիպ Դիւանին տանք,

Որ մըլքեց զերկիր նա բոլոր.

Հանցեց սիսաթ¹ ունէր,

Որ չունէր ոչ ոք թագաւոր.

Ջինչ որ խանորայք կային

Յափն ունէր զինչ ըզմի խընձոր.

Ձալաքն երբ ի սիրտ ելաւ,

Նա արար զինչ հրկաւ կտոր:

Արդեն ցույց է տրված,² որ այս Սահիպ Դիւանին նույն անձն է,
որին հիշում է և Սա. Օրբելյանը՝ տակով, թե Սյունիքի իշխան Սմբատը

¹ Ֆիբիկ, բանաստեղծություններ, էջ 218 և հա. ընտրեն ֆուլգուրն տաքեալ բան
պիտանիս:

² Տրված է Երեմ. Բա-Նորայի, Կոնստ. և Կարգի Կոնստ. Կոնստ. Կոնստ.:

³ Մարտի 1918, էջ 181, 193-194. վերևում հիշված հաղվածք՝ «Մուսք. մի հա-
նգրիչ» Տիբայր Կար. Կ.

«ինքն իշխէր ամենայն իշխանութեանց աւագին» եւ այս զգուտոր նորա զնորաքն ի կնութիւն մեծ խօջային Սահիպ Դիւանին, որ ունէր ի բոլին պամենայն աշխարհս եւրոպեան Ապագայ դասին... և նա էր գիւանի գլուխ և վերակացու ամենայնին. և էր այս 1718 [— 1718 + 681 — 1269] թուինս,¹ նա անցնում է մահմեդական դարձած Ահմադ դանի կողմը և, ինչպես բերել ենք վերևում (Թաթարական իշխանությունը 13-րդ դարումն ապարգրօքի մեջ), սպանվում է այս դանի և նրա համախոհների հետ 1266 թ., երբ իշխանները թաղավորեցնում են Ապադայի որդի Արդուինս:² Հետո այսմ Ֆրիկի «Ընդդէմ Ֆուլաքին» բանաստեղծությունը քանի որ սրտ մեջ հիշատակվում է Սահիպ Դիվանի խոջայի տնկումը, հորինված է ոչ առաջ քան 1240 թվականը, հավանորեն հենց այս թվականին կատարված դեպքի թարմ ազդեցության տակ:

Այս միևնույն քերթվածի մեջ ֆալաքը բարկացած՝ ասում է հեղինակին, «Մի հաջել, անգէտ ախօրս: «Ալկոր» նշանակում է՝ սպիտակ մազեր, սպիտակած միտքը ունեցող: շուրջ 80 տարեկան, ինչպես սովորաբար ընդունում են,³ երկրորդաբար նաև՝ ծեր: Արդ՝ քանի որ Ֆրիկը 1286 թ. հիշվում է իբրև ալխոր, շուրջ 50-ամյա, հետևաբար նա ձևված պիտի լինի շուրջ 1236 թվականին: Այս հավանական է դառնում և հետևյալով:

Ներքևում քիչ հետո կտեսնենք, որ Ֆրիկի «Վլանս Արդուս դանին և Բուդային» քերթվածը հորինված է 1289 թվականից ոչ առաջ և հավանորեն առաջին թվականին: Այդ բանքի մեջ բանաստեղծը խոսում է, ինչպես տեսիլ ենք, թաթարական հարստահարիչ իշխանության—սմասսիս և սմասսոնիներին մասին, և ասում է.

Անաբքս անցաւ հետ սմասսիս,

Եղբւր յըկայ, հուս շերհին:

Այս տողերը բառացի նշանակում են՝ «որեքս անցան [—կյանքս անցաւ] այս սմասսի հետ, որի վերջը չկա, Ժայրը չի երևում: «Մասսս» բառն, ինչպես տեսել ենք, վերաբերում է թաթարական կեղծքիչ իշխանությանը: Երբ բանաստեղծն ասում է, թե որեքս անցան, կյանքս անցավ այս սմասսին հետ, այդ պարզապես նշանակում է, որ նա ծնվել է կամ, ինչպես ժողովուրդն ասում է, աչք է բացել սմասսին հետ: Արդ՝ թաթարական արշավանքն ի Հայաստան եղել է առաջին անգամ 1236 թ., հետե-

¹ Ստ. Օրբել, Պատմ. հուշ. Սիւն., Թիֆլիս, 1910, էջ 438 և հա.

² Степанн Лазарев, Мусульманские диваны. С.-Петербург. 1899, էջ 198. Ապագայ թաթարության «կարգը գրված է 1884 թ. Բայց առաջգ պիտի համարել Օրբելյանին, որ ոչ միայն ժամանակակից է, այլև մտաբի ձևով է եղել: Սթանլեյին:

³ Այսպես, որին մեկ կին զբոսնեցին Գրիգոր Յաթուգին մարդու հետևի համար վեց լիվան՝ երեխայ, մանուկ, պատանեակ, երիտասարդ. ձեռք և դաժամագիտ՝ զնիւրսը (հետ, ավելացնում է մի ուրիշ կեղծ բաժանակ, «եւ պարենալ հաւակ մարդոյ յորեքս ունի զվաթիս. Թ. աշխիւն» ի մանկութիւն, երիտասարդութիւն, յաւերթութիւն և ծերութիւն» Գառնուս և վեց (նշ) —ուրիշէ համար ասում է. «Առաջիկայ տարի և սկիզբն լինի ծերութեանս: Գրիգոր Յաթուգին, Գիւրգ հարցմանը, նստառնկուպոյին, ի Թաթն Հայոց ՌՅԻԸ [= 1178 + 681 — 1760], էջ ՄԿԵ = 885.

վարար և նա ձնվել է շուրջ 1236 թ. և 1286 թվականին հղել է շուրջ 60 տարեկան, իսկ 1289 թ. շուրջ 53 տարեկան:

Պատմական հղելու թյուրք, որով ստույգ որոշվում է Վլասն Արղուն զանին և Բուդային ջերթվածի գրություն, հետևաբար և բանաստեղծի ապրած ժամանակը, հետևյալն է: Սու. Օրբելյանի «Ողբ»-ի մասին խոսելիս, «Քաթարական իշխանությունը 13-րդ դարում» պարագրաֆի մեջ տեսանք՝ որ մահահրավանություն հարած Ահմադ զանի և ջերխատնյանների վրա հենվող Արղուն զանի կոմի մեջ 1286 թ. վրաց թագավորը և հայոց իշխան Տաթայինը Արղունի կուսակից էին, և սրա մեծով առաջ էր հեղել Հայաստանի քաղաքական միությունը: Երեք տարի հետո դավադրություն են սարքում Արղուն զանի դեմ: Ստեփանոս Օրբելյանը (էջ 430) պատմում է, թե «Սերկառական զորքն զան Արղունին, և անկու շփոթումն մեծ ի մէջ մեծամեծացն գլխաւորաց, և հանին բազում արեան ճաղագիս. զի կալուս Արղունն զմեծ զորավորն զԲուդայ Ձինքստոն, որ կոչի աւագաց աւագ կամ տէրանց տէր, և հապան զնա, զի խորհուրդ նենդութեան էին խորհեալ նմա. ընդ նմա և զամենայն համախոհս նորին՝ զՆազանն և զԹուխլուխ հաղաբաղեան, զԱրախս, զԱւանն և այլ բազումս: Այդ ժամանակ, 1289 թ., զբողոքանքով սպանում են և վրաց Դեմետր թագավորին: Դրանով չի ոչնչանում դավադրությունն Արղունի դեմ: Ինչպես հետո նույն Օրբելյանը (էջ 467 և հա.) գրում է, Արղուն զանը 1291 թ. իր սիրուն հարսին թուխսվորվելով մեռնում է: «Որ և ի մահւան նորա լինի կոտորուած բազում մեծամեծ աւագանայն՝ Խոջանին որ էր զանձապետ արքային, և Սուլտանին որ էր ի վերայ կերակրոցն և քաղելացն. և Զիւրեին և Աւաղուդանին որք էին ի վերայ գառաստանացն, և մեծ դիւանին Սաղաղալիք՝ բարերարոյ Զաին որ էր ի վերայ ամենայն հարկաց աշխարհի: Այս անգամ էլ սպանվում են Արղունի մարդիկը:

Արդ, ինչպես արդեն ցույց է տրված,¹ Ֆրիկի Վլասն Արղուն զանին և Բուդային ջերթվածը հորինված է Արղունի դեմ կազմակերպված առաջին դավադրության մասին, որ տեղի է ունեցել 1289 թ., Ապա ուրեմն այս երկը գրված պիտի լինի ոչ առաջ քան 1289 թվականը, և ոչ թե (զուցեմ վրիպակով) «ոչ առաջ քան 1282 թվականը»:² Ապա ընդունելի կարելի չէ համարել և այն, թե Ֆրիկի ավյալ ջերթվածի մեջ իբր երևում են Արղուն զանի մահվան ժամանակ կատարված դեպքերն ևս, «այն է մինչև 1291 թվականի վերջը»³ կամ թե հետևյալը, որ ասված է առանց որևէ հիմնավորման, հետևելով նախորդին. Վլասն Արղուն զանին և Բուդային ստանավորում Ֆրիկը, Բուդայի ապստամբությունից հետո, նկարագրում է մի քանի դեպքեր ևս, որոնք կատարվել են 1291 թվին: Այսպիսով Ֆրիկի

¹ Վերաբառ մասաղիբ, 1918, էջ 182 և հա. Տիբայր եպ. «Մոսկովյան մի հայ երգիչ», Այլ և Ֆրիկ, Բանաստեղծություններ, 1941, էջ 6 և հա. Մ. Միրյան, «Ֆրիկի ստեղծագործություններ»: Այս երկը-ընդ որում էր առաջինի՝ առանց իր սղորդող ցույց տալու: Ընդհանուր կարկառությունը մասամբ հիշեալ համարելով հանգեք՝ բնագծերի չեմ համարում այս երկու հղվածները էլ որևէ մանրամասնություններ:

² Վերաբառ, 1918, էջ 187.

³ Անգ. էջ 189, 193, 194.

այս ուսանավորը չէր կորուզ 1291 թվից առաջ գրված լինել, Մյուս կողմից էլ այն չէր կորուզ 1295 թվից հետո գրված լինել...¹ Աւրեմ իբր 1291 և 1295 թվականների մեջ է գրված այն, Բերված երկրորդ առաջվածի վերջին մասը, որ վերաբերում է 1295 թվականին, կորեւորություն հունի, սրովհետև թե որոնք են այն մի քանի դեպքերը, որ իբր կատարված են 1291 թ., այդ մասին ոչ մի խոսք:

- Որ Ծրիկի այս բանաստեղծությունը վերաբերում է Արղուն զանի դեմ 1289 թ. կազմակերպված դավադրությանը, այդ շատ պարզ է, Դերթվածի մեջ հիշված եղելություններն և տեսները միայն բավական են աղագուցելու այդ, Թե Ծրիկի ցերթվածի և թե Օրբելյանի Պատմության մեջ դավադրության պարագույն է Չինգսան բուզան, որ կամեցել է շենհզել Արղունին, կամ, ինչպես Օրբելյանը գրում է, Վերսուրդ Նենգու-թեան էին [էր?] խորհում նման, Ծրիկը Բուդայի համախոհներից հիշում է Արուսիին, նույնը կա նաև Օրբելյանի Պատմության մեջ, Ըստ Ծրիկի՝ դավադրությունն իմանում է Սուլթան Ալան, որին հիշում է Օրբելյանը իբրև Արղունի հավատարմներից մեկը, Վերջապես երկուսի մեջ էլ հիշվում է Արղունի բարեկամ Սադադուդին), որ Արղուն զանի կուսակից ազատականներից մեկն էր, որին ուրիշների հետ, ինչպես պատմում է Սա. Օրբելյանը, սպանում են Արղունի մահվան ժամանակ, Այս ցերթվածի մեջ նա հիշվում է իբրև դեռ կենդանի,² նույնպես դեռ կենդանի է ներկայա-նում և Արղուն զանը, Եթե այն գրված լիներ 1291 թվից հետո, Ծրիկն անպայման ավելի ևս բառեր գայրություն կխոսեր այդ թվականին կատարված եղելության մասին. բայց ոչ մի ակնբերչիկ Արղուն զանի թուանավորման և նրա կուսակիցների կոտորածի վրա: Ընդհակառակն, նա Արղուն զանի մասին խոսում է իբրև կենդանի մարդու, և գոհ է, որ նա չէր սպանվել:

Բուդան, զու ժնց կամիր [-կամեր] Նենգել:

ՉԱրղուն զանն աստուած եղիր,

Ով և յաղթող Արղուն զանի:

Այսպես չի կարող գրվել իր կուսակիցներով հանդերձ արդեն սպանված մի մարդու մասին: Կամ հետևյալը.

... Աղ-չինգ ըզուէր Աստուած,

Որ ցուցանե Արղուն զանի,

Չէ չէ՝ աղէկ այն արտասուքն,

Որ թափեցին օրթախընին:

¹ Ծրիկ, Բանաստեղծություններ, 1941, էջ 8:

Չինգուդոված կերպով առաջագրված է Ծրիկի ցերթվածի Ղուշման տեսչը (այսինքն Ղուշման տեղան աղագուս, և Ղուշման տեղան մեջ տեսչի Արղուն զանի Ղուշման արդան, որ իր հար մահվան ժամանակ նորապատմում է և 1295 թ. իր համապատասխան ինչպիսիք՝ դառնում է թաղավոր: Նույնպես մի չինգուդոված առաջագր է Վալդարան տեղան մեջ տեսչի Սա. Օրբելյանի (էջ 173) հիշած մեծ ընդարձակ թաղարին, որ պատե-րադի ժամանակ աղան է Ղուշմանի հարցը: Յեւ Վերաբերում 1918, էջ 188 և հա. Տիրաբեր կողմի վերահաս հիշված հարցումը՝ Վալդարան մի հայ կերպի:

Եթե Արղուն դռնն արդեն հաղանված լիներ, այլևս ինչևեզ պիտի բռնաստեղծը գրեր *Աղալենք* աստուածուն, որ ցուցտե՛հ նրան: Քի լավ բան չէ որթախների թափած արտասուքը: Այսպե՛ս ուրեմն, *Բնական Արղուն* դռնին և *Բուդային* քերթվածը գրված է 1291 թվականից մեռի և 1⁷⁸⁰ թ. ոչ առաջ. իսկ *կարճիքով՝ քերթվածի* ամբողջ բնավորությունից երևում է, որ դա հորինված է հենց այս 1289 թվականին կատարված հղելության անմիջական տպավորության տակ անմիջական բանկումով:

Երրորդ թվականը վերաբերում է Գեօնդաստ քերթվածին: Խախտուր Կնչուսեցու *Սղրին* մասին գրելիս՝ արդեն տեսել ենք, որ Ղադան դռնի *Թագավորության սկիզբներում՝ ստեղծի Հայտնիք* է նաև *քրիստոնյաների* դեմ ժահճողականության հարած նախորդ գործավարը. քանզի են հեղեղեցինբը, կոտորել են քահանաներին ու չառ քրիստոնյաների, չատերին կողոպտել ու գերի տարել: Այդ դրությունը, որ արտահայտված է Կնչուսեցու *Սղրին* մեջ, ավելի զորեղ կերպով երևում է *Ֆրիկի Գեօնդաստ* (*Բնական Ֆրիկի գրքոյն*) քերթվածի՝ մեջ:

Այլ կամք ի ձեռս անորինի.

Որք հուս վորեն անգին գերի.

Ո՞րքան քակեն հեղեղեցի.

Քանի շինեն պիղծ մղկիթնի:

Փանթ կանայս առնեն այրի.

Սև ծրծան որբ քրիստոնէի:

Ո՞րքան արես հեղուն յերկրի:

Եթե՛նի որ թաթարական տերապետության՝ նախորդ շրջանում հեղեղեցիներ քանդելու մասին հիշատակություն չկա, ուրեմն կարելի է հաստատ կրթագեցել, որ *Բնական Ֆրիկի* գրքոյն բնաստեղծությունը գրվել է 1295 թվից հետո: ¹ Ըստ իմ՝ այդ քերթվածը հորինված է ոչ թե 1295 թ. հետո, որ է՝ 1298 թվականին կամ ավելի ուշ, այլ հենց նույն 1295 թվականին, Խորասանից Ղադան դռնի գալու ժամանակները և Ղադանի թագավորության սկիզբներում. երբ և տեղի է ունեցել հեղեղեցիների քանդումը: Այդ հաստատվում է հետևյալով: Հենց այդ ժամանակներում էլ Կիլիկիայի Հայոց Հեթում թագավորը, որ հեղի էր Ղադանի նախորդի մոտ, և՛ հաստատ այս տագնապ չփութի, — գրում է Ուս. Օրբելյանը.² — գնում է Ղադանի մոտ և խոսում է նրա հետ այդ հայածառքի մասին: Իսկ նորա [— Ղադանը] ի չքմեղս հեղեղ ասէր. ես ոչ գիտեմ զայդ. այլ նուրազն գործեաց զմանայն: Եւ Կրմայեաց առ ժամայն գրել Կրմարտակ ընդ ամենայն աշխարհ: զի մի իշխեսցին ձեռնարկել յհեղեղեցիս և ի քրիստոնեայս: այլ խաղաղութեամբ բնակեսցէ ամենայն ոք՝ զիր (առաւ և պաշտօն համարմաղ ունելով): Եւ յայսմանէ սակաւ մի խաղաղացեալ հղեն հինգ տագնապոյն... Իսկ Ղադանն տեսել զգանութիւն յ744 (= 1295) թուին յաշունն... կացուցանէր նա ի վերայ ամենայն գորացի բոց և աշխարհաց զձեռնութեան:

¹ Ֆրիկի, *Բնաստեղծություններ*, էջ 332.

² Անդ, էջ 9 *Ֆրիկի Խաղաղագործություն*, Մ. Մկրտչյան:

³ Ս. Օրբելյան, *Գառն, Նաւ. Սիւս.*, էջ 474 և հմ.

շահն՝ այդ բարի և հզոր և յազթող ի պատերազմունս, որ էր յոյժ բարեկամ և օգնական քրիստոնէից. որ և փեսայացաւ արքայի տունով զքոյր Նորա ի կնութիւն. և ի սազրելոյ սորա լինէր խաղաղութիւն մեզ և ամենայն աշխարհիս Հայոցս. Իսկ Նազրուզը գնում է Թորասաւն, ուր և ժամանում է զավել Ղազանին, բայց իր տահմով ոչնչացվում է Թուրքուշահի ձեռով: Եւստ անհէջ զեղջիւր Եկեղեցւոյ, և թէ որպէս մեծագոյն պատահեաց զթըշնամին իւր,—գրում է Օրբելյանը,—և խնդրեաց զվրէժ քակտելոյն իւրոյ, զի քի տեկեաց իշխումաբիւ մ Սորա (Նազրուզի) ամ մի. այլ իսպառ ջնջիցաւ զգլուխն: Այս ամենն, ուրեմն, կատարվել է մի տարում՝ 1295 թվականին: Եվ Ֆրիկի Գրանգատն բանաստեղծութիւնն էլ զրված է հենց նույն թվականին հայերի այդ մեծ հալածանքի օրերին և ոչ թե հալածանքը դադարելուց հետո, զ1295 թվից հետո: Ուշագրութիւնն պիտի դարձնել, որ Ֆրիկը հորինում է բայերի ներկա ժամանակով՝ «կամք, վարեն, քակեն» և այլն. ուրեմն «կանք», «գերի են տանում», «եկեղեցիները քանդում են» և այլն: Այսպես գրում են մարդիկ, երբ գրելիս հենց կատարվում է այն հոգեւոր թիւնը, որի մասին գրում են:

Ըստ երևույթին նույն 1295 թվականի հալածանքի ժամանակ է Ֆրիկը գրել իր մի սարիշ բանքն ևս՝ «վտան անմխարանութեան քրիստոնէից», որի մէջ հիշում է եկեղեցիների հալածանքը (զեկեղեցիս հալածենք) և դիմում է աստուծուն ասելով «Եւրա մեզ եղջիւր փրկութիւն...»:

Գանի որ, ինչպէս տեսանք, մեր այս բանաստեղծը ծնված պիտի լինի շուրջ 1290 թ., հետևաբար նա 1295 թ. իր նշանավոր Գրանգատն բանքը հարինել է մոտ 50—60 տարեկան պատկանելի հասակում: Դրանից հետո էլ նա աղբել է շատ տարիներ, և հասել է լի մերության, քանի որ նա մի քանի մէջ, որի սկիզբն է «Ջանացի թէ լոյսն ելնեմ» (էջ 79), գրում է.

Ալիքս է զեղին դարձել:

Ընդունելով այսպիսի հասակը 70—75-րդ տարին, նա վախճանված պիտի լինի 14-րդ դարի առաջին տասնամյակներին:

2. Ֆրիկի օրագու գրավ դրվելու խոդիրները:—Այս բանաստեղծի կենսագրության մէջ տեսանք, որ թաթուրների իշխանության ժամանակ, երբ պահանջված հարկը չէին կարողանում վճարել, հարկի պարտքի տեղ հարկատուների զավակներին էին տուում: Կարծում են, թե Ֆրիկի որդուն էլ տարել են հոր պարտքի փոխանակ:՝ Բայց այն բանաստեղծութիւնը, որի մէջ հիշատակվում է ալդ, ինչպէս կենսագրության մէջ ասացինք, դեռ կարող է բանասիրական քննադատության: Գնենք այստեղ Ֆրիկի այդ զեղեցիկ բանքը,¹ որի մասին խոսվել է նրա կենսագրության մէջ: Մասերը նշվում են 1 և 2 թվանշաններով:

Նորիմ Ֆրկեմմ ասացեմ |

1. Գնաց մանկութեան հասարթն,

¹ Եւրոբատ 1918, էջ 88 և հա. Այստեղից էլ աւել Ֆրիկ. Բանաստեղծութիւններ, էջ 10:

² Ֆրիկ. Բան., էջ 40 և հա.

Ու երեկ ինձ հոգս անհեռուն.
 Զբրկած եմ երկու կենոց.
 Վասն այնոր չեմ ելնել ի հուն:
 Գազան 'ւ անասուն ու հաւ
 Գէ՛մ ունին իւրեանց առնն ու բուն.
 Ոչ առնն սե ոչ տեղ ունիմ,
 Կու խոցիմ զոքն ի յայն հարկուն:
 |Վարկանա՛ կու խոցիմ ի յանհաւատանուն|,
 2. Յաւել թէ գինի խմեմ,
 Եւ ձրված գինչ նաւն ի յայուն.
 Գընա, թող ի բաց գամէն,
 Ու հղիք սիրող վանքերուն:
 Յիշխան մի յաստի, եղբայր,
 Ճար չըկայ ի յաղամորդուն.
 Գընա, ծառայէ նորա,
 Որ աէր է անձին ու հոգուն:
 Գէ՛մ դայն խասիւթո գիտեմ,
 Կեանքըս չի մընա ժարըդոյն.
 Զարակ անաէնին արա,
 Որ չլինիս ի հոն դու լալուն:

Ժողովածուն կազմողը՝ Տիրոյր Էդիսկոպոս՝ Զրիկի այս բանքը հանել է երեք ձեւադրից (ա'ն'ն), որոնց մեկի մեջ միայն (x ձեւ.) եղել է սովորական վերնագրերը՝ շնորհին Զրիկանն ասացեալս, մյուս երկուսը (a' b) շնն ունեցել վերնագրի: Եւ մի չորրորդ ձեւադրի (c) մեջ դաւել է վերևում գրված բանաստեղծութան միայն առաջին (1) երկու քառյակն առննց վերնագրի, ուրեմն առնն Զրիկի անվան. իսկ հաջորդ երեք քառյակի (2 մասի 12 առիթ) փոխանակ տարբեր 14 առիթ, որոնց մեջ է և հեղինակի արդու գրով գրվելը: Բերենք և այդ ամեննուն քառքը:

1. Գնաց ժանկութեան հասրաթն,
 Ու երեկ ինձ հոգս անհուն.
 Զբրկուի եմ երկու կենոցս,
 Վասն այնոր չեմ ելնել ի հուն:
 Գազան 'ւ անասուն սե հաւ
 Գէ՛մ ունին իրենց առնն ու բուն,
 Ոչ առնն ու ոչ տեղ ունիմ,
 Կու խոցիմ ի յանհաւատուն:
 2. Կասեն թէ խմէ գինի,
 Որ լինես դու մի առն ի քուն.
 Ուսկա ի պարտուց յահուն¹
 Կու զոգամ գինչ ունն ի քամուն:

¹ Վերաբառ, 1918, էջ 81 գլուխը, իսկ Զրիկի. Բանաստ., 1918, աղված է գլուխը

Դըբի գիւմ ուղին գըրուաւ
Ուտաի հազաւոյ գընալուն.
Միթէ թաղաւսն երկնից
Նայ բերէ գիւմ որդին ի տուն:
Հաղար ցեղ թաղախիւ կածեմ
Թէ... Ներուս թէ ելնեմ ի հուն.
Ժամ ժամ ի պէպ կապ կուգաւ,
Ձի ընկնիւր իմ ջուսն ի յառուն:
Ձանցի թէ հանց բան ալնեմ
Որ էր... (թերթ ընկած և պակասավոր):

Ժողովածուն կողմոյն այս բանուն բանքիս (2) մասը, վերջին 16 առգերը, որոնց մեջ է հիշվում հեղինակի որդու գրով գրվելը, համարել է մի այլ ընթերցված. Զերկի բանքի, այսինքն վերհամ գրված հառաջին բանքի, փոխանակ սրա (2) մասի, այսինքն վերջին 12 առգերի (սկսած՝ «Յաւել թէ զինի խմած առդից») և իբրև այսպիսին էլ գծի առկա ասված է ժողովածուի մեջ, որից և օգտվում ենք մենք. Այսպես վարվելու հիմքը միայն այն է եղել, որ այս կարծեցյալ այլ ընթերցվածից առաջ եղել է Զերկի բանքի (հառաջին բանքի) սկզբի մասը՝ (1) առաջին ութ առգերը, Բայց այդ մեծ հաղթանքն իր բովանդակութեամբ կապ չունի Զերկի բանքի երկրորդ (2) մասի հետ, որ սրա այլ ընթերցվածը համարվի. Միակ նմանութիւնը որ կա երկուսի մեջ՝ է գծին խմած, բեմէ գինիս, Բացի այդ՝ ոչ մի հաստատ հիմք չկա շնչելու, թե այդ հաղթանքի հեղինակը Զերկն է. Այսպես ուրեմն, ունենալ երկու առանձին բանքեր, «Զերկի բանք» կամ հառաջին բանքը և բանուն բանքը կամ հերկորդ բանքը, որոնց սկզբի ութ առգերը նույնն են, իսկ շարունակութեամբ տարբեր:

Այլ և այլ վարկածներով կարելի է բացատրել այդ երկու բանքի հարաբերութիւնը. Եթե ընդունվի, թե այդ երկուսի էլ հեղինակը Զերկն է, ապա այդ գեղարոււմ պետք է ենթադրել. թե նա գրանցից մեկն ու մեկը հորինելուց հետո տակ է իր բանքի սկզբի (1) մասը, առաջին ութ առգը և շարունակութիւնը նոր բովանդակութեամբ հորինել, որով առաջացել են երկու տարբեր քերթվածներ՝ իրենց սկզբի մասերի նույնութեամբ. Իրենց աշխատութիւնների հետ այսպես վարվող քերթողներ էլ կան. բայց այդ դժգոյս է ընդունել Զերկի նման առատաբան և հեշտ հորինող մի բանաստեղծի համար. Նա իր մի քերթվածի ստղերն առնելու փոխանակ՝ ամենայն թեթևութեամբ նոր ստղեր կշարադրեր նոր բանքի սկզբում. Բացի այդ՝ ջանի որ հեղինակի անվան հիշատակութիւն չկա երկրորդ բանքի համար, ուտաի վերջին հաղթով ենթադրուկան է մնում դրա հեղինակի ով լինելը, հետեւաբար և Զերկի որդու գրով գրվելը, որ հիշվում է այդ անունուն բանքի մեջ.

Դարձյալ կորող է առաջ գալ և այս ենթադրութիւնը. Զերկը հորինել է երկու բանքերից առաջինը, որի վերնագրի մեջ կա Զերկ անունը, և մի ուրիշ քերթող՝ յաւաքնելով նրա քերթվածի առաջին ութ առգերը, շարունակութիւնը ինքն է հորինել, և այսպես կազմվել է բանուն բանքը:

կամ երկրորդ բանքը: Այսպիսի վերաբերմունքը մի անսովոր երևույթ չէր Ֆրիկի ապրած շրջանում, երբ ուրիշի հեղինակությունների հետ ազատ էին վարվում: Այս դեպքում, սակայն, ժխտվում է, թե Ֆրիկն իր որդուն զրով է դրել, քանի որ այդ հիշվում է բանառն բանքին մեջ:

Ծրբորդ՝ կարելի է ենթադրել, թե այդ բանառնն կամ երկրորդ բանքն առաջացել է որևէ գրչի ձեռով պատահաբար այսպես: Ֆրիկի բանքի, այսինքն վրեհի «առաջին բանքին» համեմատելի գրված է եղել մի ուրիշ բանք, երբ գրիչը Ֆրիկի բանքն արատագրելիս հասել է Յուսի թե գրիչի խմբած տողին, նա անզգուշությամբ սկսել է արատագրել հոսի ուրիշ բանքի նման տողից՝ «Կոստեն թե գրիչի խմբած, որով և առաջացել է բանառն բանքը: Այսպիսի թույլեցնել արտագրության ժամանակ սովորական են. այդ առաջանում է նույն բուհերի և նույնանման խոսքերի ազդեցությամբ: Եթե այսպես ձեռքով լինի բանառն բանքը, քանի որ զրո՝ ուրիշ ճերթվածից ձեռքով մասի մեջ է հեղինակի որդու զրով գրվելը, իսկ այդ ուրիշ ճերթվածի հեղինակի ով լինելը հայտնի չէ, ապա ուրեմն դարձյալ ենթադրու-
կան է Ֆրիկի որդու զրով գրված լինելը:

Ծրբորդ՝ կարելի է ենթադրել, թե այդ բանառն բանքը ձեռքով է այսպիսի մի կերպով: Ֆրիկի բանքը զրված է եղել որևէ ձեռագրի մի թերթի երկրորդ էջի վրա. հոսից նույն էջի ցածի մասում՝ մի ուրիշ ճերթվածի սկզբի մասը: Որևէ պատահառով պատահած էանված է այդ թերթի ցածի մասը, որի վրա եղել են Ֆրիկի բանքի երկրորդ (2) մասը և այն ուրիշ ճերթվածի սկզբի մասը: Հետագայում մի գրիչ աբստրակտ է Ֆրիկի բանքից մեացածը, որ է առաջին (1) մասը, և ապա հաջորդ թերթից առաջին էջը. որի վրա զրված է եղել այն ուրիշ ճերթվածի շարունակությունը, և այսպես մեխանիկորեն միացել են Ֆրիկի բանքի առաջին (1) մասը և մի ուրիշ ճերթվածի մեացած մասը, և առաջացել է բանառն բանքը: Այսպիսի դեպքեր պատահում են ձեռագրերների մեջ, բայց այսպիսի դեպքում էլ, քանի որ Ֆրիկի անունը հիշված չկա բանառն բանքին համար, չգիտենք թե ով է հեղինակը ենթադրական ուրիշ ճերթվածի, ապա դարձյալ չենք կարող հաստատու ասել, թե Ֆրիկի որդին է պարտքի անդ զրով գրված եղել:

Վերջապես՝ կարելի է կարծել, թե այդ երկու՝ «առաջին» և «երկրորդ» բանքերը սկզբնապես ոչ թե տարբեր բանաստեղծություններ են եղել, այլ Ֆրիկի մի գեղեցիկ ճերթվածի մասեր, որոնք պատահաբար անջատված են մեքոնիկությունից: Այդ ճերթվածը ենթադրաբար եղել է այսպես.

1. Գնաց մանկութեան հասրաթն,

Ու երեկ ինձ հոգս անիհուն.

Ձրբկած եմ երկու կենցաղ,

Վասն այնոր չեմ կենել ի հուն.

Գազան 'ւ անասուն ու հաւ

Գէւ ունին իւրեանց տուն ու բուն.

Ոչ տուն ու ոչ անդ ունիմ,

Կու խոցիմ զօրն ի յայն հարկուն.

[Վարդան¹ կու խոցիմ ի յանուանունն]:

2. Կասեն թէ խրտէ՛ր գինի,

Որ չիմիս գու պահ մի քուն:

Ուսկա ի պարտաւոյ յանուն՝

Կու գողամ գինչ ուուն ի քամուն:

Գըրի գիմ որդին գըրաւ,

Ուստի ճուղապ գընալուն:

Միթէ թաղավորն երկնից

Նայ բերէ գիմ որդին ի անուն:

Հազար ցեղ թաղաբէր կանեմ,

Թէ... ներուս թէ երեսմ ի հուն:

Ժամ ժամ ի ցէպ կապ կու գայ:

Ձի ընկնիբ իմ ջուրն ի յառուն:

Ջանցի թէ հանց բան աշնեմ,

Որ էր... (բերթ ընկած և պակասավոր):

3. Յաւել թէ գինի խմեմ,

Նա ձըփամ գինչ նաւն ի յալուն:

Գընա, թող ի բաց դամէն:

Ու եղբի սիրող վանքերուն:

Սիլխան մի յուսու, եղբայր,

Շար չըկայ ի յադամորդոյն:

Գընա, ծառայէ՛ նորա,

Որ աէր է անձին ու հողուն:

Գէմ պայն խաւիսթս գիտեմ,

Կեանքս չի մընալ մարեղոյն:

Ճարակ անախին ուրա:

Որ չիմիս ի հուն գու լալուն:

Այս անթարական մարդկան քերթվածից Ծ-րդ հասկածի դուրս
ընկնելով առաջացել է գերեմի բանաւունս կամ երկրորդ բանքը, և Ժողո-
վածուն կազմադր հայտնուած է այդ մասին գրելով՝ «Թեթ ընկած և պա-
կասավոր»: Իսկ Թրիկի բանքը կամ բառաշին բանքը առաջացել է աշա-
ղես: Գրիչն բառագրել է անթարական մարդկան քերթվածի 1. մասը:
երբ հասել է 2. մասին, որ սկսվում է հիսուն թէ գինի խմէ, նա ան-
զգուշութեամբ, գինի խմելու զուգորդութեամբ, թողել է 3. մասը և ար-
տագրել է 3. մասը, որ սկսվում է Յաւել թէ գինի խմեմ տալով: Այս-
պիսով պատահաբար ծագել է Թրիկի բանքը կամ բառաշին բանքը, որի
պակասավոր լինելը ըստ իմաստի զգալի չէ, և ուրիշներն արագորել են
նաւելը: Եթե ընդունվի աշղիսի վերականգնված մարդկան քերթվածը
խորն Թրիկի մի երկ, ապա պետք է ընդունվի նաև Թրիկի որդու գրով
գրված լինելը: Բայց ինչքան էլ հնարավոր և հավանական է այդպիսի մ-
րդկան քերթվածի գոյութեանը և նրա միջից կամ վերջից հասկածներ

¹ ԵԱԲԲԲԲԲԲ, 1918, էջ 61՝ «Կասեն»: Իսկ Թաղաւորութեան մէջ է յայտնուած:

դուրս ընկնելը: դարձյալ մի ենթադրութիւն է այդ, հետեւաբար այս դեպ-
քում էլ ենթադրական է Զեւսի Ծրիկի որդու զրազ զրգած լինելը: Այդ
ստույգ որոշելու համար՝ պետք է սպասել նոր հաժաօտի տեղեկութեան:

ՉՈՐԹՈՐԻ ՀԱՎԵԼՎԱԼՆ

ՇԱՀՆԱՄԱԿԻ ԶԵՎԱԿԱՆ ԱՋԴԻՑՈՒԹՅՈՒՆԸ

1. «Ասի ծաղմով:—Կոստանդին Եղնկացուց, ինչպես տեսել ենք,
խնդրում են հորինել մի քերթոված աշակիսի չափով, որ կարելի լինի թի
Շահնամայի ձայն ասել, կարգալս, կամ ճասել ձայնով, ինչպես Շահնա-
ման էին ասում: Եվ Կոստանդինը, նմանելով պարսկական ցիցաղներգու-
թյանը, հարմարում է մի բանք, ասելով, թե Շահնամայի ձայն կարգա-
ցեք: Անկարեւոր չէ այստեղ բացատրել, թե ինչպիսի է եղել այդ նման-
դութիւնը, և թե ինչ է նշանակում մի ոտանավոր ասել ձայնով, և որն է
Շահնամայի ձայնը, որի համեմատ պիտի ասեն Կոստանդինի հորինած
ոտանավորները:¹

Հին ժամանակ բանաստեղծութիւնը կառարում էին երեք կերպ, եր-
գում էին, թի թիւ էին ասում և թի ձայն էլ կամ ճաշիւ էին ասում:
Երգելը պարզ է, թե բանաստեղծութեան արպիսի կառարումն է: Թի
ասելը, դա թի թիւն ուսած, այսինքն՝ բերան արած՝ արտասանելն է
աւանց որեւէ եղանակի, սովորական կարգալու կամ պատմելու ձևով, որքան
կարելի է, պարզ և մեկին: Այսպես թի թիւ է ասվել, մասամբ և երգվել,
մեր հին վիպասանութիւնը կամ վիպասանքը, որ և այդ պատճառով կոչ-
վել է նաև «Թուեկիք», «Թուեկ» բառից, որ նշանակում է նաև պատմել:²
«Թիվ» են ասվել և զեռ այդպես ասվում են, և քիչ մասով միայն երգվում
մեր «Սասնա Մամբրէ», ինչպես նմանապես նաև ուրիշ աղբիւրի ժողովրդա-
կան վեպերը:

«Ձայնով ասելը», դա մի աւանմիտ տեսակի եղանակավոր ասելն է, որ
երգելու և թիվ ասելու միջին տեղն է բռնում: Եթե թիվ ասում են սովո-
րական խոսակցական կամ զրուցաբարական ձևով ու ձայնով, որոշ դեպքե-
րում նաև սովորականից էլ ցած ձայնով, «ձայնով ասելու» ժամանակ
ձայնը բարձրացնում են սովորականից ավելի: Արձակ խոսքի, պարզայն
այսպիսի արտասանութեան ժամանակ խոսքի մեջ որոշ բառերի վրա, նա-
յնով ըմբռնողականութեան ու բառերի կապակցութեան խմբերին, ուժեղ
շեշտեր են դրվում և վանկերի ժամանակը, այսինքն տեղութիւնը, երկա-
րացվում է, այնպես որ արձակ ասացվածը ստանում է մի առանձին աթիւ
ու եղանակավորութիւն: Մինչև այժմ էլ մեր «Սասնա Մամբրէ» պատմողները,
եթե չեն երգում այն հատվածները, որ ուրիշները երգում են, հաճախ ճաշ-
նով են ասում, և հայտնում են, թե այդ ինչ կտորը պետք է ձայնով

¹ Ծիրգուտի, Մանասեղի թանգարան հաղորդում էին Նովորոսի ժողովուրդ, Երևան,
1934, էջ 117—120, Բ. Արեգյանի հաղորդ: «Շահնամայի ոտանավորի չափը հայ բան-
աստեղծութեան ժանրն է»:

² Տե՛ս սույն աշխատութեան Առաջին հատոր, էջ 44 և հա՛ւ «Թուեկիք», Թուեկաց երգը:

ասել, Նույնիսկ վնասի պատճառով ընթացում, վեպի ընազրի մեջ այդ-
պիսի հասկանքների համար պարծածվում է կամ շեղվել, շեղվում (տեղում)
ասել, կամ թե չէ՝ զենքով ասել տրամաշայտությունը։¹

Ոստանավորներն էի ձայն ասելը, կամ զայնով կարող էր, դա նույն
ձայնով ասելն է, միայն այս դեպքում ասանականության շեղումում ու երկարաց-
վում են, ոստանավորի կազմության համեմատ, ութմական ուղեների ու ան-
դամների այն վանկերը, որոնք իրենց վրա պահել է կրեն ութմական շեղ-
ները։ Բացի այդ՝ ութմական ուղեները կամ անդամները մի մի փոքրիկ
դադարով անջատվում են հաջորդ ութմական ուղեներից կամ անդամներից։
Այսպիսի արվեստական արտասանումի ժամանակ վանկերը միակերպ մե-
կին են հնչում, ութմական շեղները միակերպ ուժեղ և այդ շեղները կրող
վանկերը միակերպ երկար տևողությամբ, այսպես որ ունենցողներին համար
անջատ-անջատ լսելի են լինում ասանակն ութմական ուղեները կամ ան-
դամները։ Այսպիսի արտասանումն ահա, որ կայծում է թի ձայն կամ զայն-
նով ասել կամ զայն ձայնով ձայնի, որովմե է եղել մեզնում մինչև 19-րդ դարի
կեսերը և նույնիսկ մինչև 1880-ական թվականները զբաղող ոստանավոր-
ների համար։ Այսպիսի արվեստական արտասանումով կարողացել են և
Շահնաման և զեռ կարգում են մինչև մեր օրերը։ Դրանով ուժեղ կերպով
արտասանվում է այդ վիղորտանություն չափը։

Պարսկական ոստանավորի էական հիմունքը կազմում է վանկերի եր-
կարությունն ու կարեությունը։ Շահնամայի չափի յուրաքանչյուր ուղե-
կազմված է երեք վանկերից, որոնց առաջինը կարել է և ութմական անշեղա-
կերպորզն ու երրորդը երկար են։ ութմական ուժեղ շեղում, որը անկախ է
պրոպագանդի շեղումից, այսինքն սովորական արտասանության շեղումից, գրվում
է երկրորդ վանկի վրա, երրորդ վանկը կրում է երկրորդական, թույլ շեղում։
Այս չափի յուրաքանչյուր առգը, որ 12-վանկանի է, կազմված է չորս այս-
պիսի ուղեներից, որոնց վերջինը չունի երրորդ վանկը։ Արևոտ առգը միասին
կազմում են մի տուն (բեյթ) և նույնական է։ Զայնով կարողությամբ ժա-
մանակ՝ ամեն ութմական ուղե հաջորդ ուղեից բաժանվում է մի փոքր
դադարով, որ կարող է ընկնել նաև բառամեջերում։ Շահնաման, ուրեմն,
հորինված է հետևյալ սքեմայով՝

Վանականները հաստանցնելն խնդրել են հայերեն լեզվով այնպիսի
ոստանավոր հորինել, որ կարելի լինի Շահնամայի ձայնով ասել։ Այսպիսի
չափով հայերենում իսկապես հնարավոր չէ ոստանավորներ գրել, դի հայոց
յեզուան չունի երկար և կարճ ձայնավորներ։ Մեր բանաստեղծը հայերեն
ոստանավորի ուղեներն էլ կազմում է երեք վանկից, բայց յուրաքանչյուր
ուղեի մեջ չունի երկար և զորեղ շեղված վանկի փոխանակ, երկուսով հայերենի
պրոպագանդից—առողանությունից, զնում է շեղված վանկ, որ հայերենում

¹ Մինչև այժմ էլ հայոց եկեղեցու ժամերգության ժամանակ պահվում է ու յիսուսի
հրկելը, այլ և թիվ ասելն ու ձայնով ասելը որոշ դեպքերի և ասանակն աղան ընթաց-
վածների համար։ Տե՛ս՝ Մ. Աբեղյան, Հայ ժողովրդ. առողանները Մ. Խարենցու հայոց
պատմ. մեջ, Վաղարշապատ, 1895, էջ 56—71։ Եմել, Վեպաներ, Սրբ. վեպաներ. է
թի. ասել, թույլ, թույլացնել երգը։

համեմատաբար երկար է տրտառանդոււմ, քան մյուսները և հարկւովոր ժամանակ կարելի է ավելի ևս երկարել: Այսպիսի կադուսթյամբ ոտանավորը կարելի է ազատ կերպով ռի Շահնամայի ձայնն ասել: Բայց դա, եթե բովանդակութեան համեմատ կարգանք, իսկապես հայկական անապետայան ոտանավոր է, սկզբից մի յամբական ոտըով, և արվեստական տրտառանդու մով միայն ստանում է բարձրացող-ընկնող ութմաս: Ռիթմական շնչոտները կրող երկար վանկերը նշանակելով հայերենի երկար () նշանով, իսկ ոտքերի երրորդ վանկերը (որ պարսկերենում ունի երկրորդական ութմական շնչոտ), նշանակելով հայերենի քութ (') նշանով, և ոտքերի միջի դադարները՝ ուղղանիշ գծով (|), հոստանդի հետևյալ տողերն՝ ըստ Շահնամայի՝ ձայնով առկում են այսպես.

Այսկանքնէ՛ | ունեյնէ՛ | ժառանգե՛նք | մահու,
 Ձուեքմէ՛ | զըրուշքա՛ն- | բռնեանէ՛ | շահու.
 Երեզնէ՛ | խարճե՛ն | խայա՛ն- | ցաւոր,
 է՛ ոռաւոր՝- | բելիէ՛ն | քնկերնէ՛ն- | զաւոր:

Կարելի չէ կարծել, թե հայերին հոստանդին Երզնկացու ապրած շրջանում միայն ծանոթ է եղել Ֆիրդուսու Շահնաման և նրա բանեցրած չափը, որ պարսից մեծ բանաստեղծից առաջ էլ ուրիշները գործածել են: Եվ իսկապես Գրիգոր Նարեկացին արդեն ունի այդ չափով մի տաղ (չնկեղեցւոյ), որ Շահնամայի ձայնով կարդալիս՝ ստանում է նույն բարձրացող-ընկնող ախմբը.

Երկինքն ի յերկիրս և երկիրս ի յերկինքն,
 Վայրէջք ի խոնարհ և վերելք ի բարձունս...

Ձայնով առկիս՝

Երկինքն | յերկիրս | երկիրս | յերկինքն,
 Վայրէ՛ջք | խոնարհ | վերելք | բարձունս...

Այսպես ուրեմն, 10-րդ դարուց, Ֆիրդուսու ապրած ժամանակից արդեն մեր բանաստեղծութեան մեջ գործածված կա Շահնամայի ոտանավորի չափը,¹ Բայց չենք կարող ասել, թե Գրիգոր Նարեկացին այդպես հորինել է պարսկականի ազդեցութեամբ, ինչպես հոստանդինը: Սա նմանում է Շահնամային, բայց, ցավոք, միմիայն ձևական կողմից, բովանդակութեամբ բոլորովին հեռու պարսկական հուշակավոր դիցազնեցութեանից: Նա, ինչպես ասվեց, հորինում է աշխարհի ունայնութեան և մահվան երգը, արժանի իրեն խնդրող կրօնավորներին, և ոչ թե մի աշխարհիկ բովանդակութեամբ քերթված, կամ մի ազգային հերոսական վեպ:

¹ Մանգրամանութեանի վերում հիշված «Երզնկայի ժողովուրդի մեջ, էջ 117 և հետ. Ծ. Աբգայան. Շահնամայի ոտանավորի չափը հայ բանաստեղծութեան մեջ» իսկ պարսկերենի համար տեսնել՝ *Perische Grammatik, von C. Salemann und V. Schukowsky. Berlin, 1898, 4* *Грамматика персидского языка, сост. Мирзои-Джафаров, Москва 1901.*

ԱՆԱՆՈՒՆ ՏԱՂԵՐ

Բազմաթիվ տաղեր կան, որոնց մեջ երգված են, ավելի կամ պակաս զեղեցկու թյամբ, նույն հիմնական մոտիվները կամ նյութը՝ Դրանցից՝

1. մեկն է մեռելների վիճակը հարությունից հետո, արդարենք ու մեղավորների վիճակը:

Այդպիսի զեղեցիկ տաղերից մեկն է և հետևյալը (Անահիտ, Դ. 1902, էջ 27, Վենետիկի Վ. Տաղարան 4⁵⁰ է. Բ.)

Հայրենի չափով ու զեղեցիկ պատկերներով.

Տ = զ = զն իւ

Թորմամ Գորբիէլ գոյէ,

Թառնին մեռելալքըն ի հողոյն.

Կեւքըն լուսափայլ յառնին՝

Աստեղաց նըման զոյնըզոյն.

Կէւքըն սեւեռնս յառնին,

Գլխիկոր ի խիստ ամօթոյն.

Լալի և ողորմ ու խեղճ՝

Արտասուքն նըման թախ ամպոյն:

Այնուհետև 12 սուրբ նկարագրում է արդարների հավիտենական դիւ-
հակը.

Բազմին յառաջստ լուսոյ,

Ճաշակին անմահ սեղանոյն,

Սւ կենդանաբար քամակ

Միշտ ըմպին ի ժամ ծաբաւոյն:

Ուրեմն մարմնական վայելչություն: Սուկալի տանջանքներով մեղա-
վորների դուրսընալը.

Կրակ ու ցուրտ սառնամանիք

Անչափ հառաչին և լան,

Որ զառնայ արտասուքն արիւն,

Սւ միշտ էրեբած կենայ

Ջինչ շարժի տերնն ի քաման...

2. Մի սառնիւն թեմա է հայ ազգի վիճակի պտնաւոյնը, անիշխմ
գրաւոյնը և ներքին հոռի վիճակը:

Այդ երգված է (Վիեննայի ժամբ. Ձեռ. թիվ 130, Անահիտ, 1901, էջ 259, B(6) Թւայլ բան է ձեռի կազմից, բայց զգացմունքով գրված է, պար-
զում է ազգային գրութայնը.

Ո զ բ

Կողկողազին զիմօք զազն իմ աւազեմ,

Սւ փզմկեալ ի սքաէս լալով տրտասուեմ...

Արդ ձևը են մեր իշխանք և ձևը երևին,
Նոցա պետութիւնք, որք ոչ երևին...
Ձգառուիրան օրոյն ընաւ մոռացաք,
Եւ յիսկալութեամբ գիրեարս մտանեցաք,
Գոհեցիկք և անպիտանք ազգինս տիրեցին,
Եւ զարս ազնուականս զգեանի հարին,
Եւ այնու զօրէնս մեր աւերեցին:

[Մի հին թեմա, Ղազ. փարպ.].

Տղետք և ամարդիք քահանայացան,
Լիրքք և անբարտաւանք զկարգս ստացան...
Ձոմանս ի բռնս մատենն, զոմանս տուգանեն,
Ձոմանս բրածեն թոնեն, զոմանս կաշտանեն...
Եղբայր զեղբայր մատենէ, զերէցն քահանայն...

3. Մի երրորդ մեծ թեմա է սիրը.
Նույն վերեւի Անահիտ, էջ 259, Բ.

Տաղ սիրոյ

Գիշեր ու ցօրեկ ի թո աւրտեն
Հաւաչեմ, հաւաչեմ,
Կուգեմ դանաւնդ յայտնել,
Կուտչեմ, կուտչեմ,
Այ անօրեն, միս եմ ու՝ ոսկոր եմ,
Գէմ քար չեմ, գէմ քար չեմ.
Թայլ չեմ կընար զաղաւկ աղբիւ,
Կու կանչեմ, կու կանչեմ, և այլն:

Բնական ձեռով երգված եղանակով, հասարակ մարդու հորինած:

4. Հին ժամանակից սիրված է եղել Առավոտեմնի քուզը ճեւղի ուր-
քաթ գիշերը: Թրտաւանաւ կամ երգաւ էին առգեր, ժամերգութիւնից
դուրս և լացացնաւ սգաւոր ժամավորներին: Գեղեցիկներից մեկն է Տաղ
ս. Առավոտեմնի (Անահիտ, 1901, էջ 218, Վենետիկի մ. տաղարանի, ԺԹ
թիվ, 1083 է. ա.): Ինքն Առավոտեմնիը աղատմուս է սրտառու զերպով
իւր և իւր որդու վիճակը: Գործողութեամբ, որ հաճախացած չէ.

Յորժամ նստեալ կայի ի տան,
Թանկարծ լուսյ ըզլուրն զայն,
Թէ զմիտեծինքն քո աւարտն.—
Միակ որդեակ, միակ որդեակ,
Իմ միտեծն Յիսուս որդեակ:
Իբրեւ խելաթափ դուրս ելայ,
Թանկարծ ըզլուսն յուրն աւսայ,
Մարմնովս յերկիր տարածեցայ.—
Միակ որդեակ և այլն.

Մայրն այլևս չի տեսներւմ, թե ուր տարան. նա ընկած է գետնին. . .
ասում է.

Ո՛վ Մազթաղեանցի, հասեր,
ներքո ձեռին իմոյ մատիւր,
Զգաճնուկն իմ տարան ի խնչիւ,—
Միակ որդեակ և այլն.
Կանաչք Երուսաղեմացիք.
Միթե գորդեակն իմ գուք տանիք
Զճանապարհն ինձ ցոյց տայիք.—
Միակ որդեակ և այլն.
Իսկ նոքա ի ճանապարհին
Զկաթիւքն արեան նըշան տային.
Հեռուստ տեսայ զգայլքն ի գետին.—
Միակ որդեակ և այլն.

Իսկական մայրական սրտով զգում է, թե մի գուցե իր մօտ գնալով
ավելի վիշտ պատճառէ չորշաքովոյ սրդուն: Ուստի շատ ազգու է շորունա-
կությունը.

Երբ մըտօք իմացաւ որդիս,
Եթէ մայր իմ գայ ի յետիս,
Թայնժամ խոցեաց սուրն ի սրտիս.
Միակ որդեակ և այլն.
Սրտե ի սիրտ խօսեք ասիս,
Թէ՛ «Մի գայր, մօքուր աղա՛նիս,
Զի յաւերուս ցաւն ի սրտիս».—
Միակ որդեակ և այլն.

Ուրեթե իր ցածը մոռանում է. հոգւում է որդու համար:

Առնալ տարան ի Գողգոթա,
Մերկացուցին զմարմին նորա,
Տարածեցին խնչին վերայ,—
Միակ որդեակ և այլն:

Մայրը հեռու է կանգնած, չի տեսներւմ, բայց զգում է.

Իբրեւ լուսյ զձայն քնեին,
Զսիրտ իմ բոլոր կտրտացին,
Ո՞րպիսի աչք է որ տեսին.—
Միակ որդեակ և այլն:

Եւ արագորեցի ամբողջը մօր կողմից պատժած և երգված. կրկնակ-
ներն այդ են ցույց տալիս:

Ե. Սիրու երգի մի ձև և Աստվածածնի գովքը, որ եթե սկզբում (նարե-
կացի) կրօնական է, հետո արդեն իսկական սիրո երգ է դառնում: Այդպի-

«Ինտերից մեկն է ճաղ տասցեալ ի վերայ և, Կուսին Մարիամուռն (Ան-
հրտ, 1971, էջ 210, Վիեննայի Վ. Տաղարան, թիվ 405), որ իսկապես այ-
խարհիկ սիրտ հրդ է կրոնական քողի տակ: Միակ կրոնականը «սիրով
Քրիստոսին» բառերը:

Այդ էլ հրդգած է կրկնակներով, թողնում է 17—18—19-րդ դարերի հրդի
աղավորութուն. Հեկան կրկնութուններով, ինչպես Գաղատաիայանի
մասն:

Մարուս և սուրբ աստանց քային

Փափաքիմ, սէ՛ր իմ, փափաքիմ՝

Յոյժ յոյժ կարօռով.

Գարձուցանել սիրով առ նոյն

Պաղատիմ, սէ՛ր իմ, պաղատիմ,

Ելով ի խոր թշուառութեան

Տառապիմ, սէ՛ր իմ, տառապիմ,

Յոյժ յոյժ կարօռով,

Անն ունկով նախնի սիրոյս՝

Արդ այրիմ սիրով քո այրիմ:

Այս վերջին աղը կրկնակ է:— Ձեզ տիրացուկան, գուցե և այլաղ-
գական: Այսպես կրկնված զեղբերովն են մյուս աները, որոնց մեջ հայտ-
նում է իր ծառայելու կարօռով, աղերովն սիրով, իր տարփածք խաժ-
քանալը, շնորհակալ էմա՛յն՝ կրի, ք պապակիլը. կարօռից թալկանալը,
և զարմանալը թե ինչպես է աղբում տառնց սիրածին և վերջը

Յոգև սիրով ըզնորճըս քո մեղմագին, սէ՛ր իմ, մեղմագին,

Զի զովացոյց ըստ քո առատ պարգևին, ոէ՛ր իմ, պարգևին:

Հույս ունի ունենալ իր նախնի սերը: Ամբողջպես աշխարհիկ է:

Ձեզ 10-րդ դարու:՝¹

ՎԵՏԵՐԱՐԴ ԼԱՎԵԼՎԱՆ

ԳՈՒՍԱՆԱԳԱՆ ՏԱՂԵՐ

1. Վանի Խարակոնիս գյուղացի Աշուղ Քուչակի տնունով արգեն երե-
վան են հեկն քավակա՛ն թվով և՛ հայերեն, և՛ թուրքերեն երգեր, որոնք ոչ
մի նմանութուն չունեն լոկ խոսքով նրան վերագրված տղերի հետ:

2. Այս վերջինները առանձին տիպի դուստնական ժողովրդական եր-
գեր են, մեր հին աշխարհիկ ֆնարերգութայն Թաղերգիները, ոչ թե մեկ
հեղինակի, այլ բազմաթիվ բանաստեղծների, մասամբ և բանաստեղծուհի-
ների գործեր, որոնց հորինվել և ավանդվել են բերանացի և գոյիս են մեծ
մասամբ շատ ունի հին մամանակներից, քան 16-րդ դարը: Դրանց մի
քանիսի մեջ հիշված հասուկ տնունները՝ «Մարայ թալան», Մալքեթ Խո-

¹ Հարցական Մ. Ա. Էնե է: Խմբ.

բասան, Հոռմ և ալին, պարզ ցույց են առնել, որ այդ անուններն անհեղուկ
առաջերը հորինված են 12—13-րդ դարերում. ուրիշները, թերևս, ավելի վաղ:

3. Զեւապցի տաղարանների մեջ այդ երգերը զբաղեցնում են այսպիսի
վերնագիրների տակ՝ «տաղ սիրոյ», «տաղ սիրուն», «հայերէն» կամ սղփած
ձևով՝ «հայերէն», «հայերէն սիրոյ», «հայերէն վասն սիրոյ», «հայերէն վասն
աւրախութեան» և այլն, այլն «հայերնի կտորաս», որ նշանակում է՝ «հա-
յերնի ստիքով (կտոր—ստիք, ռոտանավոր)»։ Այս տաղերն ըստ ձևադրման
«հայերէն» կոչվել են իրենց առանձին տեսակի ռոտանավորի, բանաստեղ-
ծական չափի համար, որ համարվել է հայերեն, այսինքն հայկական:

Հնապուրէն հիշատակութեանը որ ունենք այդ «հայերեն» ռոտանավորի
գործածութեան մասին, է այն, որ սղարասց կանայք, «բանաւիտ» կանայք
լաւկանք, այդ չափով, այն էլ հանդավոր «լաւկանք բանաստեղծութիւն»,
այսինքն մեծելի ողբեր, «լաւկանք» (լաւիք) են հորինելիս եղել հին ժա-
նանակներում։ Ապա՝ 10-րդ դարուց ի վեր շատ բանաստեղծներ բանեցնում
են այդ չափը զանազան բովանդակութեան ունեցող երգերի համար։ Դրա
«հայերէն» կոչման մասին, սակայն, ցարդ հայանի ամենաւերին հիշատակե-
թաւնը գտնում ենք Պրիկի տաղերի մեջ (13-րդ դար)։

4. Հայերնի չափի կազմութեանը հետևում են, Ասեն երկու տող միա-
սին և՛ ձևով, և՛ բովանդակութեամբ կազմում են մեկ միութեան, որ կոչ-
վում է «տուն» (բոյթ)։ Առաջին տողը 7-վանկանի յե—յամբ, անապետ,
յամբ (6 օ օ օ) ռաքերով, երկրորդ տողը՝ 8-վանկանի.—անապետ, յամբ,
անապետ (օ օ օ օ օ) ռաքերով։ Տան երկու տողի միջև, սակավ բացառու-
թյամբ, կա դադար, որով առաջին տողն զգալի կերպով անջատվում է երկ-
րորդից, և այդ երկուսը միասին մեկ ռիթմական միութեան կազմելով
«տեղեք»՝ մի մի առանձին ռիթմական միութեան էլ են կազմում։ Այսպի-
սով, եթե ռոտանավորները հաջող են հորինված, միութեանակ լսելի է լինում
և՛ պարզ ռաքերի, և՛ տաղերի, և՛ աների ռիթմը։

Ինչպես մեր ուրիշ չափերի մեջ, այստեղ էլ կա անշեշտ վանկերի
գործածութեան ռիթմերն շեշտելի վանկերի տեղում։ Բայց առաջին տողի
մեջ անպայման շեշտված են 5-րդ և 7-րդ վանկերը, իսկ երկրորդ տողի
մեջ՝ 3-րդ և 8-րդ վանկերը։ Բացի այդ՝ այստեղ էլ մեկ-մեկ շեշտի տեղա-
դրութեանը է լինում, առանձնապես առաջին տողի սկզբի վրա, իսկ երկ-
րորդ տողի սկզբում գործածվում է քաղաքորդ («օ») կոչված ռաքը, որով
մի շեշտ ավելի է լինում տողի սկզբում։ Տրգասկզբում զորեղ շեշտված և
երկուսը արտասանվող մեկ վանկն անցնում է երկու վանկի տեղ (եւայ, իմ
փոքրիկ զամառ)։ Բայց այսպիսի գործածութեանը հայերենների մեջ կա մի
քանի անգամ, մինչդեռ մեր հին բանաստեղծներն մոտ դա հաճախում էին
եղած շեշտերը, ինչպես միշտ, թուլանում և նույնիսկ կորչում են («երակն
իմ զլուին է վառած»։ «Որ Մարայ տէրն կու պաւն»)։

Ինչ որ չի համապատասխանում «հայերնի» կարգին այս ընդհանուր
հորինվածքին, դա առաջանում է մեծ մասամբ աղանաղմից, որ հաճախ ուղղ-
վում է վարիանտների օգնութեամբ։ Եվ ռոտանավորի ձևն ինքը, ինչպես
միշտ, օգնում է աղանաղումը նկատելու և հիմք է առնիս ուղղելու այն։

Ինչքան էլ այս չափի մեջ տունը (բնիթը) կազմում է մի մարդը՝ աւթյուն, բայց տունն անկախ իրրև մի քանաստեղծություն երևան չի գալիս հին հայրենիների մեջ, Այդդիսիներ կան նույն չափով հորինված նոր մոդոփրդական երգերի մեջ, Հայրենի չափով ամենափոքր հին բանաստեղծությունն է երկամասն քառյակը (քառասողը)։ Բայց սովորական ձևն է քառասունն սեթյակը, որ կազմված է ութ տողից կամ երկու քառյակից, հան և ավելի մեծերը։

Գույզի հանգերին՝ պետք է ասել, որ քառյակները հաճախ ըստ հանգերի նույն հորինվածքն ունեն, ինչ որ մեր արևելյան նոր մոդոփրդական քառյակները, այն է՝ 1-ին, 2-րդ և 4-րդ տողերը նույնահանգ են, իսկ 3-րդ տողը մնում է անհանգ (զերո), այսպես՝ աա 0ա։ Երբեմն բոլոր չորս տողերն էլ նույնահանգ են, կամ նույն հանգն ունեն 3-րդ և 4-րդ տողերը, իսկ առաջին և 2-րդ տողերն անհանգ են, այսպես՝ աաա կամ 0ա 0ա։ Այս վերջին երկու ձևով են հաճախ նաև ավելի մեծ տողերը։ Բայց զրանց մեջ կան շատերը, որ դադելի կազմություն ունեն, այնինչ՝ 1-ին, 2-րդ, 4-րդ, 6-րդ, 8-րդ, 10-րդ... տողերը նույնահանգ են, իսկ 3-րդ, 5-րդ, 7-րդ, 9-րդ տողերն՝ անհանգ, այսպես՝ աա 0ա 0ա 0ա 0ա...

Հանգերի վերաբերմամբ պետք է նկատի ունենալ և հետևյալը։ Հնագույն շրջանում հայերեններն անհանգ են եղել և հետագայ շրջաններում ևս զրանք ձգտել են անհանգ դառնալու։ Բացի այդ՝ կան մեծ հայերեններ, որոնք առաջացած են սկզբնապես անկախ քառյակների միացումից, ուստի և հանգերի դասավորությունը երբեմն չեղվում է վերևի ձևերից, դադելների մեջ, որինակ, փոխանակ անհանգ մնալու՝ նույն հանգն ունի չորսորդ կամ վերջընթեր տողն ևս։ Մի կողմն ենք թողնում աղճատումն ու բանաստեղծական ոգատությունն կոչվածը։¹

